*ԿԱՐԱՊԵՏ ՎԱՐԴԱՊԵՏԻ ՇԱՀՆԱԶԱՐԵԱՆՑ*

ԱՌՍՈՒՄՆ

# ԳՐԻՍՏՈՍԱԿԱՆ ՀԱՒԱՏՈՑ

ԸՍՏ ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹԵԱՆ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ

ՄԻ ՍԱՒՐԲ ԵՒ ԿԱԹՈՂԻԿԷ ԵԿԵՂԵՑՒՈՅ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ

ԱՐԱՐԵԱԼ

Ի ՊԼՏՍ ՉԱՐԳԱՑԵԼՈՅ ՀԱՄԱԿԱՆԻ ԵՒ ՕՒՄՄԱՄԲ

*ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՕԼԻՍ*

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

Ա. Ն. ՇԱՀՆԱԶԱՐԵԱՆՑ

(1869)

ԿԱՐԱՊԵՏ ՎԱՐԴԱՊԵՏԻ ՇԱՀՆԱԶԱՐԵԱՆՑ

281.6

ԻՍՈՒՄՆ

# ՔՐԻՍՏՈՍԱԿԱՆ ՀԱՒԱՏՈՑ

ԸՍՏ ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹԵԱՆ ԱԹԱՌԵԼԱԿԱՆ
ՄԻ ՍԱՀՄԱՆ ԵՒ ԿԱԹՈՂԻԿԷ ԵԿԵՂԵՑՒՈՅ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ

ԱՐԱՐԵԱԼ

Ի ՊԷՏՍ ՉԱՐԳԱՑԵԼՈՅ ՀԱՍԱԿԱՒ ԵՒ ՈՒՍՄԱՄԲ

A II 31568

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՕԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

Ա. Ն. ՇԱՀՆԱԶԱՐԵԱՆՑ

)( 1 8 6 9 )(



# ՏՊԱԳՐԵԱԼ

Ի ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ Տ. Տ. Դ. ԳԷՈՐԳԱՅ
ՎԵՇԱՓԱՌ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ի ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹԵԱՆ Ս. ԵՐՈՒՍԱՂԵՄԻ
Տ. Տ. ԵՍԱՅԵԱՅ ՍՐԲԱԶԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ

ԵՒ

Ի ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹԵԱՆ Կ. ՊՈԼՍՈՅ
Տ. Տ. ՄԿՐՏԻՉ ՍՐԲԱԶԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ ԽՐԻՄԵԱՆ

# Ա. Զ Դ

Զատումն Բրիտանական հատուց բան վարդապետութեան մի, Սուրբ, Կաթողիկէ, Առաքելական Եկեղեցոյ Հայաստանեայց, զերկասիրութիւն բարեպատարագ Կարապետ Վարդապետի Շահնազարեանց՝ տաճար ահա 'ի լոյս, Տեառն յաջողելով, 'ի յիւր խոկ մամլոյ՝ տիրաւորելոյ յԱնդրիոյ՝ 'ի Կոստանդնուպոլիս 'ի Խաչիկ յԱնան Նորին կատարեալ վարժարանիս։

Գործ արդարև բնաբեր և ընդարձակագոյն քան զամենայն հատատապատում դիրս հրատարակեալս ցայսոր յեկեղեցիս Հայաստանեայց. որ ճոխացեալ ատուածաբանական վեհամտութեամբ, և բարոյականին անատերութեամբ վարդապետութեամբ՝ արժանի է, ոչ միայն մատաղոյ արանց և գարգացելոյն ուսմամբ ուշով ընթերցման, այլ և պիտանի, օգտակար, նա մանաւանդ գրարար գիրին և պարզ ոճին՝ գիրքն ուել զատարարակ իմն է ամենայն Հայոց՝ որ ընդ տիեզերս իցեն։

պայծառացուցանէին երամ Աստուածպատանց, խումբք Աստուածամերձ ազօթականաց, պարք ինքնանուէր նահատակաց և բազմաջան գործք արանց բնարելոց, որոց որոնելոյ զոմն և զդիշեր յօրէնս և 'ի կամս Եհովային 'ի փրկութիւն անձանց և ընկերացն, զերկիրս երկին արարեալ էին և զհրեշտակս ընդ մարդիկ խառնեալ՝ ցանկալի և նախանձելի հեռաւորաց և մերձաւորաց արարեալ զգաւառն Հայրենի. այլ առա՛ջ, դի անցեալ և տեղի տուեալ 'ի բաց դնացին 'ի մէնջ զարբ այնորիկ, յորժամ փոխանակ Աստուածապաշտ թագաւորաց մերոց և իշխանաց՝ կացին հրաշէն Պարսիկ բռնաւորք, և յորժամ զանձն խաղաղութեանն փրոմէցին և կալան աշխարհատան խուռութիւնք, ասասմունք, կործանմունք, սրածութիւնք այլոմբ հանդերձ թշուառութեամբք, յորժամ տարագրեցաք 'ի Հայրենի աշխարհէ, յոր տառապիմք ցարդ ևս։

Թէև Հայաստան կոգոպտեցաւ 'ի բազարական յինքնակալութենէ իւրմէ, անկեալ ընդ լծով ստրաածնաց, թէև փրոմեցաւ երկրաւոր խաղաղութիւն որդւոց նորա անկեալ ոմանց 'ի նոցանէ 'ի հաւատոց, այլոց 'ի սուր, կիսոց 'ի գերութիւն և բազմաց պանդխտեալ յերկինս հեռաւորս խառնակեցան ընդ սլաղդիս (որպէս երբեմն ընարեալ ժողովուրդն Աստուծոյ), և կրաւանալ զգազախարս անդամ Հայրենի բարեմասնութեանցն ուստն բան աղանդոց, բան բարուց և բան վարուց նոցա կեալ, այսու ամենայնիւ մեծագոյն մասն 'ի նոցանէ և գրեթէ ազգն ողջոյն՝ հաւատարմութեամբ պահեցին զնուիրական աւանդն Աստուածատուր հաւատոյն Քրիստոնէութեան, մեր հա՛ւ չափ հոկաւակ կացեալ այլափառ մոլորեցուցչաց, որք յերկրատանեարդ գրէ և այսր գուն զործեն աղարտել զարբութիւն հաւատոյն մերոց, այլայլել զհրեշտակային կարգաւորութիւնս եկեղեցւոյ մերոյ, և ապականել զանապական աւանդութիւնս Աստուածպաշտութեան մերոյ և կրօնի, խառնել կամելով 'ի նոսա զմարդկան գիւտս, և զ'ի յետին դարս յանախութեամբ հնարեալ զայլանդակ կրօնական կարծիս, թէ և ասեմ եկեղեցին Հայաստան ո՛չ սակաւուք անչարացաւ 'ի նախնի բարեզարդութենէ իւրմէ բան արատաբանին և բան ներբնին՝ 'ի պատճառս հաղարամեայ ստանդարտանութեան իւրոյ, և առ պակասելոյ ընտիր, արթուն, փարձ, գիտնական և հոգեշնարհ հովուաց և դասախարսաց կրօնի, այլ (որպէս ասէ մի ոմն յարդիւնական վարդապետաց եկեղեցւոյ մերոյ) Աստուա-

ծայրն յատուկ նախախնամութեամբն առանց մարդկան ինչ նը-
պաստից, ուղղափառ հաւատոց նորա բոյս ոչ նեաղեցաւ, 'ի բարի
սերմանս ցորենոց որոմն ոչ խառնեցաւ (Մատթ. ԺԳ. 25)։
Զայրիս յատուկ ուսանողութեանց նորա ազատուցուկ ջուր աստ-
ուծոյ ուսմանց ոչ պղտորեաց (Սաղմ. ՃՁ. 34)։ Ի աստուա-
ծութեան և 'ի ճշմարտութեան հայն նորա կենդանական՝ մեռելա-
կան խմբոյ և հերձուած բաղխութեան չարութեանն ոչ զանգե-
ցաւ (Ա. Կորնթ. Ե. 8.)։ Յոսկի անրիծ հաւատոյն և յարդարութ
բաւականոյ բանին՝ պղինձ ժանգակոծ և կապար սեռութիւն ոչ
գտաւ։» (1)։

Եւ այս խոկ է միակ մխիթարութիւնն շնորհեալ մեզ առ 'ի
վերուստ. որով մխիթարիմք հանապազ և մխիթարիցուք յաւե-
տեան, իբր զի թէպէտ 'ի դոհ սիրոյ հաւատոյն Աստուածոյ և
պաշտելութեան Քրիստոսական կրօնի, Հայաստան աշխարհ մա-
տոյց զթագաւորութիւն իւր զաշխարհական, այլ յաւել ճոխա-
նոյ և պիտան ունել զհոգեւոր թագաւորութիւնն զՔրիստոսի Աս-
տուծոյ, թէպէտ յաւար և 'ի յափշտակութիւն թշնամեաց քրիս-
տոնէութեան եթող և ետ Հայաստան զերկիր և զերկրաւոր
բարիս իւր, այլ երկրին ուսուցաւ զյոյս և զհոգեւոր բարիս՝ նա-
խանձելի մեր և առանձնական պահեաց անկորուստ, թէպէտ և թե-
թէ շնամեացն իւրոց յանուանեալ Քրիստոնէից արեամբեալց և յոչ
քրիստոնեաց ազգաց 'ի հինգերորդ դարի և այսր ասուելոյ և
ասուելոց որ բան օրի, այլ ինքն հաւատարիմ Ամոյ Երկնաւոր
կոչմանն իւրում՝ թէպէտ երբեմն իբրև եղէգն խոնարհեցաւ ասպէ-
կրօնական նենգութեանց բռնութեանց և հալածանաց քրիստո-
նէից Աստոյ և Լեհաստանի, ասկայն անդէն և անդ ուղղեալ իբ-
րև անասան մայրի Լիբանանու զդէմ կալեալ ասպարութեամբ
խորտակեաց և խաչատակեաց հանդերձ կատարութեամբ արքայ, և նկոյ Ամոյ
անմոխիս. անպղծելի և անպատիժելի յոյսդ ոյթիս և 'ի յար-
ձակմանց ընդդէմ սանեանս երկրի հաւատոյ իւրում՝ և կարգաց
Աստուածպաշտութեան։

Իսկ արդ՝ ես յետին 'ի ժառանգորդս Հայաստանեայց աստ-
ուածպաշտական եկեղեցւոյ՝ բարոյ համարիմ զանձն իմ վիճակեալ
մասին, բան որում՝ ոչ միայն զի երկնային հրաբխուածքն ծնայ

(1) Յոմիանոս փարպեցոյ Եղբարքացոյ Ներբողեան 'ի սուրբ Լուսաւորչն
Հայոց 'ի Մեծն Գրիգորիոս։

և սակայն անախտ և անարիւն կարողութեամբ վարդապետութեան այնորիկ, այլ և ներելոյն Աստուծոյ խմբոյս տկարութեամբ վարդապետ բանին կենաց կոչեցայ 'ի նմին լինել. և յայս սակս առ 'ի բնալ բան կարի զարմանս կոչման իմոյ ձեռնարկի 'ի խնդրոյ Աստուածաբար և աստուածական բարեպաշտոյ ոմանց մերազանց 'ի գրել զառաջնակոյ գիրս 'ի փառս Աստուծոյ, 'ի զաստիարակութիւն և 'ի հոգևոր շահ Հայաստան աշխարհ. յորում եթէ իցէ ինչ արժանի յեկեղեցի Աստուծոյ կենդանւոյ ընդունելոյ, Աստուծոյ այնորիկ համարեալցին պարգևք և 'ի նորայոյն նմա ընծայեալ, եթէ ոչ' թողութիւն ընդ այլոց յոլովից սխալանաց և այսմ համարձակութեան եղիցի 'ի յաժարութենէ և 'ի փարիզմանէ բրնաղատելոյս։ Այլ և զիմ սակս ճանաչել առաջս կենաց արժանի արասցէ յեկեղեցւոյ իւրոյ գործ սպասաւորական ծառայութեամբ վճարել.... զի և ես արժանի եղէց ընդ Աստուծոյ եկեղեցւոյ սրբոյկրան մանկունսն փառաւորել զամենասուրբ երրորդութիւնն զՀայր և զՈրդի և զամենասուրբ Հոգին՝ այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն։

## ՅՕՐԻՆՈՒԱԾ ԳՐՈՑՍ

Որպէս 'ի յառաջագոյն և 'ի շարունակութենէ գրոյս ամենայն բարեմիտ անձ'ի ք տեսանէն, նոյնսոյակ իմ ոչ այլ ինչ էր' 'ի յրմնելն զայս, բայց եթէ 'ի զարուս յայսմիկ հեղեղելոյ պէս պէս ամբարշտութեամբք թումբ իմն հոգոց պատրաստել բնդդէմ աստուածութեան, ընդդէմ շնչաւորութեան, բնդդէմ միոյոյ անեղծ և թեթեւամիտ երիտասարդաց ոմանց մերազանց առ այս կամ առ այն փայլուն կրօն։ արտաքոյն քրիստոնէից, և առաւելապէս ընդդէմ վարձկան կամ արծաթագին հաւատոյ ոմանց մերազանց այլ ոչ և մերակրօնից, (որոց թիւրարեալդարար շնչին իմն է), և յայս սակս ջանացայ բան ներելոյ միջոցայն խօսիլ և լուծանել ընդարձակօրէն զառաջարկեալ խնդիրս, այսինքն է զգոյութիւն Աստուծոյ, զարարչութիւն աշխարհի, զդպրութիւն և զանօրէնութիւնս Քրիստոսի, բուն կանխաձայնութեանց մարգարէից. զանմահութիւն մարդկային հոգւոյ և զմիութիւն նորա արեամբ բանին Աստուծոյ հեղլով 'ի խաչին այլոմբ հանդերձ, և ապացուցանել զայնոսիկ բնական և յայտնակոն փորձովք և վկայութեամբք, որպէս է տեսանել յայլ և այլ երեսս գրոցս. յաւելեալ ուրեք ուրեք և զկարևոր խարհրդածութիւնս

Առաջակայ գործս. զոր արդ հրատարակեմ, է առաջին մասն որ բովանդակեալ ունի զուսումն Աստուածայայտ կրօնին առ Խրիստէ և առ Քրիստոնեաս, զկնի այսորիկ յառաջին մասին խօսելոյ եմ զայլ և այլ բաժանմունց և հերձուածոց 'ի Քրիստոնէական եկեղեցւոջ, և զտարբերութիւնս որ 'ի միջի նոցա են, և զայլ և այլ ազանդոյս որ արտաքոյ են քրիստոնէականին, ապա մի ընդարձակօրէն 'ի լրումն վարդապետաց բարեմիտ բանասիրաց մերոցն։ (1)

Զնիքոսս գործոս ոչ միայն առաջնորդ և օգնական ինձ կարոյ զհաշակատար ներածութիւնն ուղղափառ Աստուածաբանութեան, արարեալ Մակարայ վարդապետի (1) և զնաս և գրաբոչ Փիլարէթի Մեծապատիւ Մոսկվայի (2), այլ և ուրեք ուրեք թարգմանարար առեալ եղի 'ի նոցանէ զամբողջ գլուխս բանից և գյօդուածս, (ուր հիշատ միապան երևէին վարդապետութեանց մերս եկեղեցւոյ), բայց ասկոյն յամենայնի ընտրելի գտուցայ առ 'ի շինողաւ մի ինչ և ոչ ապրակոյս' քաղել նաև յաստուածաբանական գրոց երանաշնորհնախահարցն մերոյ սրբոյն Գրիգորի Լուսաւորչի (3), Մովսէսի Խորենացւոյ (5), Յովհաննու իմաստասիրի (6), Եղերմի շնորհալւոյ (7), 'ի մեծ Աշտարակ (8), յԱգթանեղեցեաց պատմութենէ (9), 'ի մեկնութենէ սրբոյն խորհրդոյ պատարագի, արարեալ Եղերմի Լամբրոնացւոյ (10), 'ի մեկնութեանց եօթն կաթողիկէ թղթոց արարեալ երանելւոյն Սարգսի շնորհալւոյ, 'ի մեկնութենէ սրբոյն Մատթէոսի աւետարանչի, արարեալ մասամբ սրբոյն Եղերմի շնորհալւոյ և մասամբ Յովհաննու Մայրաքաղաքացւոյ (11) 'ի պատմութենէ սրբոյ Վարդանայ արարեալ սրբոյն Էղիշէի վարդապետի (12) և այլոց։

---

(1) Ցիշատակեալդ այդ գործ՝ յկտաւ 'ի ձեռագիրս նորա։
(2) Տպեալ 'ի Սանկտպետերբուրգ յամի 1847։
(3) Տպեալ 'ի Մոսկվա յամի 1343։
(4) Ցանաքանչիւր տպեալ 'ի Կոստանդնուպոլիս յամի 1824։
(5) Պատմութիւն Հայոց տպեալ 'ի Վենետիկ յամի 1827։
(6) Յովհաննու իմաստասիրի Աւանդագրութիւնք, տպեալ 'ի Վենետիկ յամի 1838։
(7) Գիրք ընդհանրական, տպեալ 'ի Սանկտպետերբուրգ յամի 1788։
(8) Տպեալ 'ի Կոստանդնուպոլիս յամի 1807։
(9) Տպեալ 'ի Վենետիկ յամի 1835։
(10) Տպեալ 'ի տուրբ Էջմիածին յամի 1842։
(11) Էրկրորդն ևս տպեալ 'ի Կոստանդնուպոլիս։
(12) Տպեալ 'ի Վենետիկ։

Յամենայնի կէտ նպատակի խորհրդոց մնաց խնոյ եղեալ ըղ բացատրութիւն մեծամեծ կամ որպէս առ այլս 'ի քրիստոնէից երչի սրմնատական կամ հիմնական խնդրոց քրիստոնէական հաւատոյ, և զհաստատութիւն նոցին վկայութեամբ բանից գրոց սրբոց, և որոց 'ի վերոյ թուեցան սրդիւնական հեղինակաց Հայաստանեայց եկեղեցւոյ բանիւք. 'ի բաց թողի առ այժմ զոմանս յերկրորդական կարգի խնդրոց ոչ իրրև աւելորդս, այլ զի զայնչափ բան յանձնարարութեան ամենապատիւ Արքեպիսկոպոսն Պատրիարք հօր մերոյ տեսան Յակոբոյ արքեպիսկոպոսի, խօսեցեալ եմ յառանձին հատի 'ի սրատասխանի ընդդէմ բան աւետարանական անուանեալ տետրակի բոլորականաց, (որ ակնկալեալ ապա՛ զ նպատակ բարեպաշտի ուրումն հրատարակութեան), ամենի իրի ոչինչ խօսեցայ 'ի մասնէնս յայսմիկ յաղագս բարեխոսութեան սրբոց, յաղագս յարգութեան մասանց սրբոց, յաղագս պատկերց, յաղագս ազգթից 'ի սէտս ննջեցելոց մատուցելոց՝ այլոմբ հանդերձ, զորոց սրպէս ասացի 'ի վեր անդր՝ ընդարձակօրէն գրեալ եմ այլուր։

Այսաչափս գիրս, որպէս և 'ի խորագրոյն տեսանի, բան ս բրամ ոչ 'ի սէտս դպրոցական մանկանց յօրինեալ է, այլ 'ի սէտս կատարելոյն հասակս և ուսմամբ, յայս ասկս ճառօրէն և երկարօրէն գրեցի՝ զոր ինչ գրեցի. և եթէ արժանի ինչ եղիցի հանդերձեալ ընդունելութեան բարեմիտ և գիտնական կրօնասիրաց սիրելի ազգիս. սարսռ նուիրական համարեցայց այնուհետև հանմատակ զաղն և մուծանել 'ի ձեռ դպրոցադրոց, զի դիւրութեամբ և բան կարդի հրահանգեսցին մանկունք Լուսաւորչական եկեղեցւոյ 'ի գիտելիս հաւատոյ (1), իսկ ես ծնեալ և սնեալ և վարդապետս իսկ կացեալ յեկեղեցւոջն Աստուծոյ, ա՛րելի է ինձ յուսալ և գոհանալ աւուրս իմ 'ի սպասաւորութիւն նորս անցուցանել 'ի փառս մեծին Աստուծոյ և 'ի փրկութիւն եղբարց իմոց. ամէն։

15 Ապրիլի 1853

Կոստանդնուպոլիս Կարապետ վ. Ղանեազարեանց

---

(1) Խոստովանիս սոյս հանմատութիւն չէ անցեալ ընդ դիր վասն Կանխատեսաց մատեանս արդիանորոգ վարդապետին։

# ՈՒՍՈՒՄՆ ԿՐԻՍՏՈՍԱԿԱՆ ՀԱՒԱՏՈՑ

## ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

## ԳԼՈՒԽ Ա.

## ՅՕԳՈՒՍՏ ԱՌԱՋԻՆ

Ճանաչութիւն գոյութեան Աստուծոյ.
Ա. այս բնական ապացոյցք.

Աստուած է ինքնագոյ և ամենակատար էակ, Արարիչ երկնից և աներևութից և նախախնամող երկնի և երկրի։ Այս հանգամանքներ ունի և ընդունելութիւն ճշմարտութեան այսորիկ՝ ածեն զմեզ այն ամենայն միջոցք կամ ճանապարհք, որք պարզևեալ են մարդոյ առ 'ի գիտել և 'ի դատել 'ի ձեռն մտաց ընդհանրական։ Զորօրինակ հաւատք սրտամտական, փորձք արտաքին, փորձք ներքին, և բնութիւն անձին, ապաստիարակոյն քան զառաւել բարեպաշտ և առաքինի կենցաղ։

Հաւատք սրտամտական մատակարարեն մեզ բուռ այսմ մասին դերբեակ նշանաւոր ապացոյցս, նախ՝ թէ ազգք ամենեքին 'ի սկզբանէ հետէ յայլ և այլ ասոյնանս մտաւոր զարգացման բարեանց, այսինքն, եթէ վայրենիք, եթէ խուժք, եթէ բարբարոսք, եթէ կիսաբարբարոսք, եթէ թերակիրթք և եթէ կրթեալք ծանեան և խոստովան եղեն միշտ զգոյութիւն Աստուծոյ թէև տարբեր եղանակօք։ Վասն հնոյ ազգաց երաշխաւորեն արք գիտնականք Յունաստանի և Հռոմայեցւոյ. որպիսիք են Պղատոն, Արիստոտել, Եպիկուրոս, Սենեքա, Կիկերոն, Պղուտարքոս և այլք. յորոց մին զայս օրինակ ճառէ զգոյութենէ Աստուծոյ. «Հայեցեալ ձեր յերեսս երկրի, դատեցէք բաղարս՝ որոց ոչ են ամրութիւնք պարսպաց, ոչ հմտութիւնք, ոչ կարգք, տեսանէք զմարդիկ թափառական, անդէտ կիրառութեան դրամոց. անձանաչակ գեղեցիկ արուեստից, այլ ո՛չ բնաւ դատանէք մինչև զմի ընկերութիւն մարդկան առանց հաւատալոյ յԱստուած»։ զիա՞րդ հնար է այլապէս բացատրել զծագումն հաւատոյս, որ եկաց բնդ

զարս ամենայն, զոր միաձայն խոստովան եղեն տգէտք և իմաստունք, և որ դիմագրաւեալ յեղափոխութեանց ամենայնի, յորոց կերպարանափոխ եղև աշխարհն, և հաս մինչև առ մեզ, բայց թէ զգայուն այս երևի 'ի տրամադրութենէ մարդկային հոգւոյ, ուղղորդեալ յԱրարչէ 'ի ստեղծագործութեան անդ, որ ընդ ա-հել և ընդ սփռել մարդկան' ինքնին ևս ամենայն ընդարձակեցաւ և պահեցաւ 'ի նոսա։

Երկրորդ է կարի վաղնջական աւանդութիւն, այսինքն թէ' էր երբեմն, յորժամ Աստուած ինքնին երևեալ մարդկան խօսակից լինէր նոցա և դաստիարակէր զնոսա 'ի հաւատս։ Անտարակուսելի նշխարք աւանդութեանս' զոր պահեաց մեզ ամենայն մաքրութեամբ Աստուածախօս օրէնսդիրն Երրայեցւոց Մովսէս (Ծնն. Ա. Բ. և Գ.) զուանին առ ամենայն հին և նոր ազգս հոգազնդի։ Ասասի՞ հնար էր բղխել այսպիսի անընդհատ և համաշխարհական աւանդութեան, եթէ ոչ յանձին կայցուր խոստովանիլ, արդարև այնպիսի ինչ եղեալ է ստուգիւ. Երրորդ' շարունակութիւն հրաշագործութեանց յեկեղեցւոջ հնոյ և նորոյ կոտակարանաց, մանաւանդ առ ժամանակս հաւատաւորութեան յետնոյն։ Հարազատութիւն հրաշագործութեանցս եթէ պատմագրաբար եթէ իմաստասիրաբար գոլով ապացուցեալ, շո՞նի պէտս նորանոր վկայութեանց, այլ գեր 'ի վերոյ գոլով նոցա առաւել քան զկարողութիւն և զօրէնս բնութեան, խնդրասիրել տան անշուշտ և զգերագոյն պատճառս, որ ամենակարող զօրութեամբ իւրով իշխէ բնութեան. ուրեմն զոյ էութիւն ծայրագոյն, Արարիչ և Տէր տիեզերաց։

Փորձն կամ դիտողութիւնն արտաքին։ Երևելի աշխարհս մատակարարէ զերկուս յայտնագոյն ապացոյցս գոյութեան Աստուծոյ։ 'Նախ' տեսանի, զի ամենայն ինչ պատուական է յաշխարհի, այսինքն ծնանին, փոփոխին, և անցեալ գնան, ուրեմն պատուական է և աշխարհն ինքնին, այսինքն կարէր գոլ կամ ոչ գոլ. գոլ այսպէս կամ այլապէս։ Այսու ամենայնիւ երկիրս կոյ իրաք և սահմանեալ ձևով, այլ ո՞ որ է պատճառ նորին. յաշխարհի անդ ոչ է հնար գոլ այսմ պատճառի, այլ ըստ ապրում չիք որ, չիք և ոչինչ որ կարիցէ գոյացուցանել ինքն զինքն. ատարկեն թէ զիպուածով արարան' որք երևին և որ ոչն երևին, է շատախօսութիւն ընդունայն։ Ամին իրի հարկ է ընդունիլ անշուշտ զգոյութիւն յաւիտենական, ինքնեզ, և ամենա-

կատար էակի, յորմէ ստեղծաւ այնարիկ. որովհետև զոյ Աստուած. զեմանորինակ ապացոյցս մարթի է գտանել և յԱստուածաշնչի, զո՛. Յոր. ԺԲ. 7-11. Եկեց. Խ. 26. և առ սուրբ Հայրս եկեղեցւոյ՝ առ երանելւոյն Օգոստինոսի, առ որոյն Յովհաննու Դամասկացւոյ են։ (1)

Դարձեալ թէպէտ ամենայն ինչ, որ յաշխարհի՝ փոփոխական է, բայց և այնպէս տեսանի 'ի նմա արանշելի կարգաւորութիւն, հաստատակշռութիւն, և գեղեցկութիւն։ Սկսեալ 'ի յարմանգամ մարմնոյ անտի, որք թուային ընդ տարածութիւն երկնից, մինչև ցխոնարհի զեռունս՝ որք սողան ընդ երկիր, ամենեցուն նոցա տուեալ են բաստ անձին և ամենեմնայ կարգութիւն, որիշ ուշմանք, որիշ վերաբերութիւն առ այլ արարածս, որիշ մարմնոյն և յամենեցուն 'ի նոցանէ կարգի ամբողջական մեն արանշելագեղ և բարեշէն։ Զոր հնար այլապէս բացատրել զոյն զայս մեծաւորն ներգործնականութիւն, բայց եթէ խոստովանիլ թէ՝ է ուրեմն զոյութիւն ամենակատարեալ, որ ստեղծ զարմարհ և զարէ։ Սուրբ գիրք բազում անգամ որպէս թէ մատամբ ցուցանեն զապացոյցս զայս (Սաղմ. Ը. 18 և 44, Եկեց. Խ. 21. և հետևեալն Մատթէ. Ա. 25, 30. Գործոց. ԺԴ. 15 և 17. ԺԷ. 24 և 28. Հռոմ. Ա. 19 և 20.)։ Զարս ընդարձակիրէն և ազդուագոյն ևս մեկնեն բարեմբ սուրբ Հայրս եկեղեցւոյ, Գրիգոր Աստուածաբան (2) Մեծն Աթանաս, Գրիգոր Նիւսացի, Մեծն Բասիլեոս ևայլք (3)։

Երեքին զքաւոր կարողութիւնք հոգւոյ՝ ըստ որոց լինի գիտութիւն կամ փոքր ներքին, մատակարարեն զերբեակ ապացոյցս հշմարտութեան գոյութեան Աստուծոյ։

Դարձ՝ 'ի միտս իրարանցիր ուրուք 'ի մէնք տպաւորեալ է 'ի բնէ գաղափար գերագոյն և անասնման էութեան Աստուծոյ, որ յատաջ քան զարարածումն իրարանցական կարողութեան յերևան ելանէ ընդ աղօտ և անորոշ կերպիւ, այլ ինքնաշարժ ձգմամբ առ

---

(1) Օգոստին. յաղագս քաղաքին Աստուծոյ։ Գիրք ընդ. գլխ. 6. Դասատաստին յԱստուածաբանութեան 'ի Սլավեան թարգմանութեան. տպ. քաղ. 1834. գիրք Ա. գլխ. Գ. երես 3։

(2) Մատենագրութիւն հայոց սրբոց 'ի Ռուս թարգմ. տպ. քաղ. 1844. գլխ. Ա. երես 21 և 23։

(3) Զմիաբանութիւնս նոցա գիտ և ընթերցիր 'ի նոսին մատեանսն առ 'ի Դիոնիսիոսէ Հիւսաւեայ. գլխ. Ա.

Աստուած, և բան շատու անման բնութիւնն եւս բան զեւս, բայայայտեալ լինի որոշակի և անաղօտ։ Տեսանելի աշխարհն ոչ կարէ ազդել 'ի մեզ զայսպիսի զաղափար, բան որում ահեղնաւոր է ինքն և ամենայն որ 'ի նմա ինչք, եթէ բան գոյութեանց և եթէ բան կատարելութեանց, մեզ անհարիր է հնարել յանձանց զոյն. բան որում արծարծումն այնորիկ յաւաջագոյն է բան գիտութի զարդացումն կարողութեանց խորհելոյ, բնութելոյ և ճանաչելոյ, և բան որում ընդհանուր է առ հասարակ մարդկային սերն, յայտնեալ հեռուն անտարակոյս թէ զաղափարս այս ծրնրնդակից է մտաց մերոց, և արարդեւնալ հարկաւ 'ի նմանէ, յորմէ արարդեւեցաւ և զոյացութիւն մեր։

Երկրորդ՝ զիտեմք 'ի կամս մեր զբարոյական օրէնս, որ առանց հայելոյ 'ի բազմադիմի փոփոխութիւնսն 'ի ճանաչմանն անհատից և ամբողջ ազգաց՝ միշտ ազդեաց և ազդէ անշրնկնելի իմն զօրութեամբ յազգի մարդկան ընդհանրապէս։ Այս է ամենեցին անլրտելի ձայն խղճի մտաց, որ յետ զարդացման բանականութեան 'ի հոգւոջ մերում անուամբ զերազոյն էակին ազդէ մեզ դրարին և զգուշացուցանէ 'ի չարէն, զոմէ և զատապարտ առնէ զմեզս մեր, վարձատրէ և պատէ զարարս մեր։ Երբրին ինքնաշարժ ճանաչումն բարոյ և չարի, խնդութիւնն՝ որ զհետ գայ յորժամ զործեմք զբարի ինչ, տանջանք և ապաշաւ՝ որք զուգընթաց են միշտ չարին, տեսիլ եղեռնագործին՝ որ յանձին իսկ իւրում կրէ զտեսիլն թշուառութեանց իւրոց, և անասան հաստատութիւն բարեպաշտութեան, որով զինեալ է այր առաքինի, համոզեն խաստովանիլ զգոյութիւն իմն ամենատուր, և նոցա անուամբ խնդալոտուս առնեն զմեզ բարոյական օրինաց կամ խղճի, այնպէս զի մարդեմի ազգք անգամ զիսիրշեն զաստուծ համարիլն առաջակցութեան Աստուծոյ 'ի սիրոս մեր, որ անդուլ ուսուցանէ մեզ ըստ սրտոս մեր (1)։

Երրորդ 'ի զգայմունս մեր առաւելի բնական իմն փոխաբերջանկութեան. ողջմտութիւնն և բարոյական օրէնք բարբառեն առ մեզ, թէ հարկ է՝ զի երջանկութիւնս այս երկրի զաստուծ առաքինի կենաց և եթէ և վարձ բարեպաշտութեան, իսկ ոչ ամբարիշտք՝ ոչինչ հայեցեալ 'ի բնական ծարաւ իւրեանց երջանկութեան, արժանի են պատժոց։ Այս ամենայնիւ փորձն ա-

(1) Սենեքայ թղթ 41։

պատուցանել թէ այսպիսի իրաւարարութիւն ոչ լինի միշտ իրաց յաշխարհի սատ։ Ասոյ յայտանէ հետեւի անշուշտ ընդունել զդոյութիւն արարչական զաստուերի և փարձակաւորի, որ ստեղծն զմեզ ոսկի ցանկութեամբ և կարեաւ, որ և եթէ ոչ սատ՝ յանոյ կեանս գոնէ հատուցէ հարկաւ իւրաքանչիւր ոմեր բան գործոց իւրոց (1)։

Ասարիսի կենցաղավարութիւնն և եթ արժանի է իրաւամբ, զի համարիցի բաւական ճանապարհ առ 'ի համոզել զմարդն զբնդունելութիւն գոյութեան Աստուծոյ, բան որում առ հասարակ հոգեկան կարողութիւնք ասն բարեպաշտի ասացեալ ունին հշդիւ զբնական և զկանոնաւոր ամենի և զբնութեան։ իսկ միտք, կամք, և զգայողութիւնք այնոքիկ արարչագործեալ են, զի համարձցեն զմեզ ուղղակի և ամիլեն առ Աստուած։ Այլ՝ զարդն՝ որ ստեղծեալ բան արարչի Աստուծոյ, 'ի ձեռն բարեպաշտոն կենաց փորք առ փորք 'ի վեր երանէ առ Աստուծանմանութիւն, և տեսանել յանձին զյաջողումն կատարելութեանց ամենակատար գոյութեան՝ կարէ՞ այլ ևս տարակուսիլ ընդ զոլ նորա, մանաւանդ զի ձա 'ի ձեռն Աստուծանմանութեանս տակաւ առ տակաւ մերձենալ առ Աստուած, ընդունելոյ նմին և հաղորդ լինի անձամբ և անմիջական իմն երանեալս, կեաց 'ի նա և նովաւ, և իրրու թէ շաշափէ զնա և ճաշակէ։ Այնուհետեւ չիր այլ ևս ամենեքեան ան զի ինչ երկրայութեան. յայս տակս է՝ զի արք առաքինիք թէև անհրաժանգք և անկարօղք առ 'ի ապացուցանել զդոյութիւն Աստուծոյ 'ի ձեռն փաստից, և կամ առ 'ի հերքել զչնչակատարութիւնս անաստուածից, այլ այնպիսի հաստատութեամբ համոզեալ են և հաստատեալ 'ի գոյութիւն Աստուծոյ՝ որպէս տեսանեն ճշգրտիւ զանձինս իւրեանց, զի կեան։

## Գերբնական ապացոյցք.

Գերբնական կոչեմք զապացոյցս, որք գեր 'ի վերոյ քան զբ հաստատութիւն մարդկեղէն մտաց գոլով՝ յայտնութեամբ Աստուածեղէն հոգւոյն, գրեցան 'ի սուրբ գիրս։ Ընտ յայտնութեանս բան այսմիկ հաստատեալ զԱստուած մի և ամենակատար հոգի,

---

(1). Զայս ապացոյցս, որպէս յայտ է՝ գեր 'ի վերոյ համարէր քան զայլ ամենայն ապացոյս բնական 'ի վերայ գոյութեան Աստուծոյ։

Հոգի անեղ, յոխտենական, անմոխիսխ. Հոգի ամենատես, անհուն, իմաստուն, ամենազօր. Հոգի ամենատուրբ, ամենարարի, արդարադատ. Հոգի անհունապէս ճշմարիտ. Հոգի սիրոյ և հաւատարիմ։

---

## ՅՕԳՈՒՍԾ Բ.

### ՅԱՏԿՈՒԹԻՒՆՔ ԱՍՏՈՒԾՈՅ.

### ԳԼՈՒԽ Ա.

Աստուած է մի և ամենակատար Հոգի։

1. Աստուած է մի և ամենակատար Հոգի. զՇշմարտութիւնս զայս յայտնապէս հաստատեն աստուածային գիրք ասելով «լուր Իսրայէլ՝ Տէր Աստուած մեր Տէր մի է» (Երկր. օրին. Զ. 4) «նա է Աստուած յերկինս 'ի վեր և յերկիր 'ի խոնարհ, և չիք այլ զբաց 'ի նմանէ» (երկր. օրին. Դ. 39։) ողջամիտ ապացուցանութիւնն ևս ոչ ներել հաստատել և խոստովանիլ զերկու կամ զբազում Աստուածս. զի թէ լինէին այլ և այլ Աստուածք, յայնժամ և ոչ մին 'ի նոցանէ կարէր զոլ ամենակատարեալ, ուստի և ոչ ճշմարիտ Աստուած։

2. Ի միութենէն Աստուծոյ իմաստասիրեմք, թէ յերկինս և յերկրի միմիայն է ծայրագոյն զոյութիւն, թէ նա միայն է քաղեղծող և խնամակալ տիեզերաց, ուստի ինքն և եթ ծայրագոյն աստուածայ երկրպագութեան երկնաւորաց և երկրաւորաց։ «Դու ես նոյն ինքն Տէր Աստուած միայն, դու արարեր զերկինս և զերկինս երկնից և զամենայն կարգս նորա, և զերկիր և զամենայն կարգս նորա, . . . քեզ երկրպագեն զօրք երկնից և զքեզ փառաւորեն երկինք երկնից. փառն ի դու միայն ես Տէր Աստուած մեր» (Նեեմայ. Թ. 6) «Տեառն Աստուծոյ քում երկիր երկրպագցես և զնա միայն պաշտեսցես» (Մատթէոս Դ. 10.)։

3. Հոգի ամենակատար կոչելով զԱստուած, իմանանք զգերբարձանոյսապէս լցեալ զոլ նորա՝ Աստուածային, արարչական, բարի, և նախախնամական յատկութեամբք, այսինքն ինքնագոյ և անմահ էութիւն նորա, ամենակարողութիւն յարարչագործելն

զտիկերս . ամենատեսութիւն և արդարադատութիւն 'ի քննելն և 'ի դատելն զդաղանիս և զյայտնիս խորհրդոց և գործոց մերոց, և անհուն բարութիւն 'ի խնամելն զբանական և զանբան, զհոգևոր և զանդղոյ արարածս ամենայն . « Յաւիտենից մինչև յաւիտեանս դու ես » (Սաղմ . ՁԹ . 2) . « Այլ թագաւորին յաւիտենից անեղծի և աներևութի միոյն Աստուծոյ փառք և պատիւ յաւիտեանս յաւիտենից . ամէն » (Ա . Տիմոթ . Ա . 17) . « Որ միայն ունի զանմահութիւն , բնակեալ 'ի լոյս անմատոյց » (Ա . Տիմոթ . Զ . 16 ) . « 'Ի սկզբանէ արար Աստուած զերկինս և զերկիր » (Ծնող . Ա . 1) . « Համբարձէք 'ի բարձունս զաչս ձեր, և տեսէք՝ ո՞ հաստատեաց զայս ամենայն , ո՞ հանէ զզօրդ նոցա և զամենեսեան յանուանէ կոչէ բազում փառաւ և սաստկութեամբ զօրութեան» (Եսայ . Խ . 25) . « Աստուած մերձաւորեմ ես՝ ասէ Տէր , և ոչ Աստուած հեռաւոր . եթէ թաղիցէ մարդ ի թաղատեան, և ես ո՞չ տեսից զնա՝ ասէ Տէր : Մի՞թէ զերկինս և զերկիր ես ոչ լնում՝ ասէ Տէր (Երեմ. ԻԳ. 23): « Զի առաջի աչացն Աստուծոյ են ճանապարհք առն , և յամենայն շաւիղս նորա դիտէ (Առակ Ե. 21 ) . » Ես եմ Աստուած և չիք այլ ոք . յանձն իմ երդնում , եթէ որ ինչ ելանէ 'ի բերանոյ իմոյ՝ արդարութիւն է , և բանք իմ մի եղծցին » (Եսայ . ԽԵ . 22 և 33): « Ոչ կարեմ ես յանձնէ առնել և ոչ ինչ , այլ որպէս լսեմ՝դատեմ , և դատաստանն իմ արդար է » (Յովհ . Ե . 30 ) . « Քանզի հաստատեաց օր , յորում պարտ է դատել զաշխարհս արդարութեամբ (Գործ . ԺԷ . 31 ) . « Եղիջիր որդիք հօր ձերոյ , որ յերկինս է . զի զարևդակն իւր ծագէ 'ի վերայ չարաց և բարեաց , և ածէ անձրև 'ի վերայ արդարոց և մեղաւորաց » (Մատթ . Ե . 45) :

## ԴԱՍ . Բ .

Աստուած է հոգի , անեղ , յաւիտենական և անփոփոխ .

1 . Անեղ կամ որ նոյնն է՝ ինքնեղ խոստովանելով զԱստուած , հաւատամք թէ է նա անստեղծ , և յայս տակս և անկարելի՝ եթէ երևելի կամ աներևոյթ արարածական որ կարասցէ գոլ պատճառ և իշխող գոյութեան նորա . այլ գոլով նորա անեղ և պատճառ գոյութեան իւրոյ՝ յինքն և եթ ամփոփեալ է , ինքն սկիզբն և իշխող եղելոց ամենայն , ըստ որում յառաջ քան զնա ոչ գոյր



ՀԱՅԿ ԳԻՏՈՒԹԻՒՆՔ ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ ԱԿԱԴԵՄԻԱ

ինչ, այլ ամենայն ինչ նոքա եղև։ «Ի սկզբանէ էր բանն, և բանն էր առ Աստուած, և Աստուած էր բանն։ Նա էր 'ի սկզբանէ առ Աստուած. ամենայն ինչ նոքա եղև, և առանց նորա եղև և ոչինչ՝ որ ինչ եղեն» (Յովհ. Ա. 1. 3)։

2. Անեղութիւն գոյութեան Աստուծոյ ապացոյց է մեզ անմիջական և գյուտեանութիւն իւր, այսինքն թէ Աստուած անփոփոխն և անսկիզբն, իբր զի արարածք ամենայն՝ որք զսկիզբն կենաց ընկալան ընդ ժամանակաւ, են ժամանակաւոր. այսմ հարկաւ զհետ գայ խոստովանիլ թէ Աստուած որ էին, աստեղ կամ ոչ ընկալեալ զսկիզբն գոյութեան 'ի ժամանակի, չէ ապա և ժամանակաւոր. և եթէ ամենայն ինչ՝ որ ունի զսկիզբն, ունի և զվախճան. քան այսմ և Աստուած՝ որ չունի սկիզբն, չունի և զվախճան. կամ որ նոցանն է՝ է յաւիտենական. «Ի թող քո՝ Աստուած՝ յաւիտեանս յաւիտենից» (Եբր. Ա. 8). Անբերեալքն Աստուծոյ արարածոքս իմացեալ անասնին, այսինքն է մշանջենաւորութիւն և զօրութիւն և Աստուածութիւն նորա» (Հռոմ. Ա. 20)։

3. Անեղական և յաւիտենական յատկութիւնք գոյութեան Աստուծոյ առաջնորդեն մեզ քննողունել և զանփոփոխութիւն նորա, այսինքն՝ թէ Աստուած իբրև ամենատարդ, ամենատուր և մշանջենաւոր հոգի, որպէս էրն նախ քան զյաւիտեան, է այսոր և եղիցի յամենայն յաւիտեան։ Եւ որպէս փոփոխութիւնն կամ այլայլութիւնն յատկութիւն է եղական գոյութեանց, այնպէս անփոփոխութիւնն 'ի բնութենէ յատուկ է անեղ և յաւիտենական գոյութեան Աստուծոյ. «Նոքա կորնչին, և դու կաս և Ամենայն հագանիցին իբրև զձոր մաշեսցին և իբրև զվերարկու. գալարեսցես զնոսա իբրև զհանդերձ. դալարեսցին, բայց դու նոյն ինքն ես, և ամք քո ոչ պակասեսցին (Եբր. Ա. 19 և 12)։ «Ամենայն տուրք բարիք և ամենայն պարգև կատարեալք 'ի վերուստ են իջեալ առ 'ի հօրէն լուսոյ. յորում չիք փոփոխումն և կամ չրջելոյ ստուերք» (Յակ. Ա. 17)։

## ԳԱՍ. Գ.

Աստուած է հոգի ամենատես, անհունապէս իմաստուն և ամենազօր.

1. Աստուած է հոգի ամենատարդ՝ որ ոչ ընդ տարածու-

թեամբ անկանի և ո՛չ ընդ չափով ամիտքի՝ զոլով անհունապէս մեծ և ամենաբարի. ամեն իրի ո՛չ բռնանդակեալ ուրեք՝ է ամենաբարի, և անառեալ զոլով և անփոփոխելի յաւիտեան՝ ինքն տեսանէ և քննէ զամենայն, և չիք 'ի նմանէ զաղտնի ինչ՝ ո՛չ 'ի գիշերի, ո՛չ 'ի ցերեկի, ո՛չ 'ի խորհուրդս մտաց և ո՛չ 'ի ծածկութեան սրտի։ «Ձեր սրտագած աներևոյթի յերեսաց նորա, այլ ամենայն ինչ մերկապատեալ կայ առաջի աչաց նորա» (Եբր. Դ. 13)։ «Ամենակալ մեծանունդ Տէր՝ աչք քո բաց են յամենայն ճանապարհս որդւոց մարդկան» (Երեմիա ԼՂ. 19)։

2. Յամենատեսութենէ Աստուածեղէն հոգւոյ բղխի և անհուն խնամատարութիւն նորա, որոյ զոյութիւն յաստուածագոյն քան զլինելութիւն տիեզերաց զոլով՝ կայ մեաց անփոփոխ այժմ և յաւիտեան. և հետևապէս ո՛չ միայն տեսանէ, և դիտէ զանցեալ, զներկայ, և զհանդերձեալ միանակս երկնաւոր և երկրաւոր արարածոց, այլ տեսութենէ կատարեալ խնամատարութեամբ՝ զոր ինչ եղեն, և զոր ինչ լինելոց է. «Ամ մեզ յայտնեաց Աստուած հոգւովն իւրով, զի Հոգին զամենայն քննէ, և զխորս Աստուծոյ» (Ա. Կորնթ. Բ. 10)։ «'Ի միտ առեր զխորհուրդս իմ 'ի հեռաստանէ, զչուխս իմ և զմիանակս իմ զու քննեցեր, և զամենայն ճանապարհս իմ յաստաջագոյն տեսեր. . . . յո՞ երթայցի ես յոգւոյ քումէ, և կամ յերեսաց քոց ես յո՞ փոխեայցի. . . . խաւարն 'ի քէն ո՛չ խաւարանայ և գիշերն որպէս տիւ լուսաւոր եղիցի, և խաւար նորա որպէս և լոյս նորա. . . . զանգործս իմ տեսին աչք քո, և 'ի գիրս քո ամենեքեան գրեցան» (Սաղմ. ԼՂ. 3—16)։

3. Ամենազօր խնամատարելով զՀոգին Աստուածեղէն հաստատեալ, թէ յերկինս և յերկրի չիք էութիւն ինչ գերազոյն կամ հաստատուն նմա կարգութեամբ, և ո՛չ իսկ որ երբէք կարէ զոչ արդեալ կամ զիմաստասիրեալ խորհրդոյ կամաց և տնօրինութեանց նորա. այլ ինքն գերի 'ի վերոյ քան զամենայն զոլով, ինքնիշխան զօրութեամբ արարչագործեաց բանիւ միայն զտիեզերս համայն, զոր և անպատում խնամատարութեամբն կառավարէ, «Ասաց և եղեն, հրամայեաց և հաստատեցան։ Աստուած մեր յերկինս և յերկրի, զամենայն զոր ինչ կամեցաւ և արար։ Եկայք և տեսէք զգործս Աստուծոյ, որպէս սքանչելի են խորհրդովք քան զամենայն որդւոյ մարդկան» (Սաղմ. ԿԵ. 5)։ «Տեսէք տեսէք, զի ես եմ, և չիք այլ որ քաց յինէն. ես սպանանեմ և ես կենդանացուցանեմ, հարկանեմ և բժշկեմ, և ո՛չ ոք իցէ, որ հանիցէ 'ի ձեռաց իմոց» (Բ. Օրին. ԼԲ. 39)։

# ԳԱՍ · Դ ·

Աստուած է հոգի ամենասուրբ, ամենապարի և արդարադատ.

Աստուած է բնութեամբ և գործովք անհամեմատապես ամենասուրբ գոյութիւն, միմիայն ապրիր, յորմէ հեղանի ամենասքուր արրութիւն 'ի հոգեղէն և 'ի բանական էակս, որ և փառաւորի 'ի արրութեան նոցա։ Պատգամք իւր, խոստմունք և դատաստանք՝ մշտնջենաւորապես սուրբ են և արդար, որ և կամի՝ զի և երկրպագուք իւր պաշտեալ զինքն արրութեամբ՝ հաղորդ լիցին փայելման արքայութեան իւրոյ։ «Ո՞վ իցէ նման քեզ Աստուածդ՝ Տէր, և կամ ո՞վ նմանիցի քեզ՝ փառաւորեալդ 'ի սուրբս» (Եղից · ԺԵ · 11)։ «Եղերուք սուրբք, զի ես սուրբ եմ» (Ա · Պետր · Ա · 16)։ «Եւ չորիս կենդանեացն էին միոյ միոյ 'ի նոցանէ վեց թեւք շուրջանակի, և 'ի ներսոյն լի էին աչօք · ո՛չ հանգչէին ո՛չ գիւր և ո՛չ զգիշեր՝ ասելով · սուրբ, սուրբ, սուրբ, սուրբ, սուրբ, սուրբ, սուրբ, սուրբ, Տէր Աստուած ամենակալ, որ էն և ես և որ գալոց ես» (Յայտն · Դ · 8)։

2 · Ամենապարի կարգալով զԱստուած, քարոզեմք թէ նա միայն է բնութեամբ անեղբուկան բարի, որ յոչ գոյէ գոյացուցեալ զերկնաւորս և զերկրաւորս, լցոյց զնոսա բարեօք պարգեւօք ըստ պատշաճի, և օր ըստ օրէ հոգայ զժամանակաւոր և զյաւիտենական պիտոյս նոցա, խնամակալ է նա որոյ, թժիշկ հիւանդաց, պաշտպան անմեղաց, և քաղցր երկայնմտութեամբ յապաշխարութիւն կոչէ զմեղաւորս · և մինչդեռ բոլոր օրինադանց աշխարհն արժանի էր կորստեան, հաճեցաւ առաքել զմիածին որդին իւր, զի փրկեսցի նովաւ աշխարհ, և զի հաւատացեալքն 'ի նա ընկալցին զկեանսն յաւիտենականս։ «Զիր որ բարի, բայց մի Աստուած հայր» (Մարկ · Ժ · 18)։ «Ո՛վ արար զերկինս և զերկիր · զծով և զամենայն որ է 'ի նոսա։ Պահէ զճշմարտութիւն յաւիտեան և առնէ իրաւունս զրկելոց։ Տայ հաց քաղցելոց, եւ արձակէ զկապեալս Տէր։ Տէր բանայ զաչս կուրաց և կանգնէ զգլորեալս · Տէր սիրէ զարդարս, Տէր պահէ զպանդխտաս, զորբս և զայրիս ընդունի Տէրս» (Սաղմ · ՃԽԶ · 6—9)։ «Բարերար է Աստուած 'ի վերայ համբերողաց իւրոց, զի անձն՝ որ խնդրէ զնա, բարի է, որ համբերէ նմա ճշմարտութեամբ, և հանդիպի նա 'ի փրկութեան Տեառն» (Ողբ · 3 · 25—26) · պատիժք

չարաց, ողորմութիւն բարեաց՝ վկայեն անքաւ բարութեան նը-
բաւ. ըստ որում նպատակ այնր ամենայնի է ուղղութիւն և վայել-
լուն մեծամեծ երախտեաց իւրոց։

3։ Արդարութիւնն է մի 'ի գերագոյն յատկութեանց Աստ-
ուածային գոյութեան, յորում վայելէ անապատարար և կատա-
բելապէս, յայս տակս ասելի են նմա պիղծք և անօրէնք՝ ինքն
զոլով նախատիպ արդարութեան՝ յորմէ բազմապիսի եղանա-
կաք զմարդիկ ընդգրկել զնոցն, զի հասանիլ կարասցեն հաղոր-
դութեան արդարութեան իւրոյ։ Արդար է նաև 'ի զատաստանի,
որ իրրև ամենատես և ամենագէտ էակ՝ տեսանէ և քննէ յաչամ
կամ 'ի միտսում կենաց զերևելիս և զաներևոյթս խորհրդոց և գոր-
ծոց մարդկան, և իրրև գերագոյն և անաչառ դատաւոր զատէ
և զատապարտէ, վարձատրէ և պատուհասէ զարդարն և զմեղա-
ւորն՝ ասելոց զանապանելոց զիշխանն 'ի ժողովրդենէ, զմեծն 'ի
փոքրէ, զգիտունն 'ի յիմարէն և զհրեշտակն 'ի մարդոյ. «Ար-
դարութիւն քո արդարութիւն յաւիտենից, և օրէնք քո ճշմարիտ
են» (Սաղմ. ՃԺԸ. 142)։ «Արդար ես դու, և ուղիղ են դա-
տաստանք քո» (Սաղմ. ՃԺԸ. 137)։ «Եթէ հայր կոչիցիք
դոյն, որ առանց ակնառութեան դատի ըստ իւրաքանչիւր գոր-
ծոց, ապա երկիւղիւ զանցոյն պանդխտութեան ժամանակս գը-
նայէք» (Ա. Պետ. Ա. 17)։ «Քանզի հաստատեաց օր, յորում
պարտի դատել զաշխարհս արդարութեամբ» (Գործ. ԺԷ. 31)։

## ԴԱՍ Ե.

Խօսում է Հոգի Ճշմարտութեան, Հոգի սիրոյ և հաւատարիմ.

1. Աստուած իրրև ամենահայեաց և արդար էակ՝ է հեռաւ-
բար և անհուն ճշմարտութիւն. ամենայն պատուիրանք, պատ-
գամք, բանք և զատաստանք իւր ճշմարտութեամբ են և անմե-
ղութիւն միշտ. որպէս խոստացաւն 'ի սկզբան աշխարհի առաքել
զմիածին որդի իւր 'ի փրկութիւն մարդկան, զնոցն խոստումն 'ի
սահմանեալ ժամանակին կատարեաց. ամէն իրի և խոստմունք՝
զորս խոստացաւ. ճշմարտախօսաց 'ի տուրբ գիրս վասն վայելչու-
թեան փառացն արդարութեան, և ապառնալիք՝ զորս ապառնացաւ
ասախօսաց վասն տանջանաց անչէջ դեհենին, անտարակոյս ճշ-
մարիտ են, և կատարեցին 'ի վախճանի աշխարհս։ Ինքն զո-

լով հոգի ճշմարտութեան, պահանջէ և 'ի մէնջ հոգւով և ճշմարտութեամբ պաշտել զինքն. յայս տակս պարտիմք ապրել զբարեհանապազ, զի հոգին ճշմարտութեան իջցէ և բնակեսցի 'ի մեզ, և հալածեսցէ 'ի մէնջ զատութիւնն զքիշնամին ճշմարտութեան. «Աստուած՝ որոյ ճշմարիտ են գործք նորա, և ամենայն ճանապարհք նորա իրաւամբք» (Բ. Օրինաց. ԼԲ. 4)։ «Ես եմ ճանապարհ և ճշմարտութիւն և կեանք» (Յովհ. ԺԴ. 6)։ «Բանդի գիտեմք, եթէ Աստուծոյ դատաստանն ճշմարտութեամբ է 'ի վերայ այնոցիկ՝ որ զայնպիսիսն գործեն» (Հռոմ. Բ. 2)։ «Վասն որոյ 'ի բաց ընկեցէք զատութիւն, խօսեցարուք զճշմարտութիւն իւրաքանչիւր ընդ ընկերի իւրում» (Եփես. Դ. 25)։ «Արդ եղիջի Աստուած ճշմարիտ և ամենայն մարդ սուտ» (Հռոմ. Գ. 4)։ «Ծանիջիք զճշմարտութիւնն, և ճշմարտութիւնն ազատեսցէ զձեզ» (Յովհ. Ը. 32)։

2. Աստուած սէր է՝ ասէ առաքեալն, և ապրիւր կենդանարար սիրոյ, որ զոլով մշտնջենաւորապէս ամենակատարեալ, երանելի և անկարօտ իւիք, միմիայն առ 'ի յայտնել զանհուն սէր իւր հաճեցաւ արարչագործել զտիեզերս՝ հոգեղէն, բանական, անբան և անզգայ զոյակոր հանդերձ, զոր խնամէ ամենատար սիրով ամենայնիւ՝ և բազմացուցանելով՝ և բազմացուցանելով ըստ իւրաքանչիւր տեսի և տեսակի զարարածս ամենայն 'ի ձեռն ծննդոյ. հոգայ զպէտս ամենեցուն նոցա՝ զօրբատօրէականն և զյաւիտենականն, և առաջնորդէ զգերազանցեալս 'ի նոցանէ՝ զչիրեչտակս ասեմ և զմարդիկ, առ անվախճան վայելչութիւն բարեաց իւրոց յերկինս. չիք վսեմագոյն ապացոյց անհուն մարդասիրութեանն Աստուծոյ առաւել քան զայն, զի հաճեցաւ յայտնութեամբ 'ի ձեռն մարգարէից և առաքելոց հաստատել զեկեղեցի իւր յերկրի ատա, և 'ի մահ Խաչի տալ զմիածին իւր՝ 'ի լուծումն յանցանաց օրինազանցութեան առաջին մարդոյ, և պարգևեաց եկեղեցւոյ իւրում առաջնորդ անսխալ զհոգին ճշմարտութեան և սիրոյ. «Սիրելիք՝ սիրեսցուք զմիմեանս, զի սէր յԱստուծոյ է. և ամենայն՝ որ սիրէ, յԱստուծոյ է ծնեալ, և ճանաչէ զԱստուած. և որ ոչն սիրէ, ո՛չ ճանաչէ զԱստուած, զի Աստուած սէր է» (Ա. Յովհ. Դ. 7-8)։ «Սէր յաւիտենական սիրեցի զքեզ, վասն այնորիկ ձգեցի զքեզ 'ի զթութիւն» (Երեմ. ԼԱ. 3)։ «Եւ սիրեսցէ զքեզ և օրհնեսցէ զքեզ և բազմացուսցէ զքեզ և օրհնեսցէ զծնունդս որովայնի քո և զպտուղ երկրի քո, և զցորեան քո և զգինի քո,

և գիւղ քո, զանգեալս ագռաւոց քոց, և զհօտս ոչխարաց քոց» (Բ. Օրին. Լ. 13)։ «Զի այնպէս սիրեաց Աստուած զաշխարհս, մինչև զորդին իւր միածին եւս. զի ամենայն՝ որ հաւատայ 'ի նա, մի կորիցէ, այլ ընկալցի զկեանսն յաւիտենականս» (Յովհ. Գ. 16)։ «Արդ Աստուծոյ սիրեալք է 'ի սիրոս մեր 'ի ձեռն Հոգւոյն սրբոյ, որ տուաւ մեզ» (Հռոմ. Ե. 5)։ «Յորժամ եկիցէ նա՝ Հոգին ճշմարտութեան, առաջնորդեսցէ ձեզ ամենայն ճշմարտութեամբ» (Յովհ. ԺԶ. 12)։

3. Հաւատարիմ կոչելով զԱստուած՝ իմանամք զանշամբեմատ և զմշանջենաւոր հաստատութիւն բնութեան իւրոյ, յորում կայ Նայ 'ի սկզբանէ յաւիտենից՝ առանց փոփոխելոյ և Հնանալոյ-խորհուրդք իւր և ուխտք, խոստմունք իւր և վկայութիւնք միշտ անսպրպլելի և անաւուն են, և որպէս էրն նախ քան զյաւիտենս, է նոյնպէս այժմ և եղիցի յամենայն շրջանս դարուց և ժամանակաց. և դի չիք որ իշխող դոյութեան նորա, կամ որ յանդգնիցէ հակառակ կալ կամաց նորա. ամէն իրի որպիսի անաշառութեամբ պատուհասեալ զյանցուցեալ հրեշտակս և զնոցա մտրկացին ազգի 'ի սկզբան աշխարհի, պատուհասելոյ է նոյնպէս յաւուրն դատաստանի և զմեզաւորս ամենայն. և զոր օրինակ ուղղեցաւ նախահայրցն արդարոց Նոյի, Աբրահամու, Իսահակայ, Յակոբայ, Լայնի, ուղղեալոյ է նոյնպէս յերկրորդում գալստեան արդարոյ ամենայնի. «Հաւատարիմ է Աստուած, որով կոչեցարուք 'ի հաղորդութիւն որդւոյ նորա Յիսուսի Քրիստոսի Տեառն մերոյ» (Ա. Կորնթ. Ա. 9)։ «Հաղար ամ յաչս Տեառն որպէս օր երեկի՝ զի անց որպէս պահ մի գիշերոյ» (Սաղմ. ՁԹ. 4)։ «Յաւիտեան պահեցից նմա զգթութիւն իմ, և ուխտ իմ հաւատարիմ ընդ նմա» (ՁԹ. 4)։ «Հաւատարիմ է՝ որ կոչեացն զձեզ, որ և արասցէ զնոյն» (Ա. Թեսաղ. Ե. 24)։

## ՅՕԳՈՒԱԾ Գ.

### Վարդապետութիւն ամենատուրբ Երրորդութեան.

1. Քրիստոնէական կրօնքն ուսուցանէ թէ Աստուած է մի, կենդանի, ճշմարիտ, և ամենակատար հոգի, ըստ էութեան (1),

---

(1) Ի Յիսուս ասէ ցնա. առաջին քան զամենայն՝ լուր Իսրայէլ, Տէր Աստուած մեր՝ Տէր միթէ (Մարկ. ԺԲ. 29)։

և եռանձնեայ (1) Հայր (2) Որդի (3) և սուրբ Հոգի (4)։ Հայր (5) որ յառաջ քան զյաւիտեանս ծնանի զորդին յէութենէ իւրմէ և բղխէ զՀոգին սուրբ (6)։ Որդի՝ որ ծնանի 'ի Հօրէ յառաջ քան զյաւիտեանս և համագոյ է նմին։ Հոգի սուրբ՝ որ նախ քան զյաւիտեանս բղխի 'ի Հօրէ, համագոյ է հօր և որդւոյ։ Եռանձնեայ մի Աստուած է Արարիչ տիեզերաց, որ ստեղծ զամենայն յոչնչէ «որ ինչ յերկինս և որ ինչ յերկրի, որ երևին և որ ոչն երևին» (Կող. Ա. 16)։ «Նա է՝ որ նախասահմանէ և կրէ զամենայն բանիւ զօրութեան իւրոյ» (Եբր. Ա. 3)։ «Նա արար զհրեշտակս իւր հոգիս և զպաշտօնեայս իւր բոց հրոյ. և զհրեշտակս՝ որ ոչ պահեցին զիւրեանց իշխանութիւնն . . . 'ի դատաստան մեծի աւուրն մշանջենաւոր կապանօք պահեաց 'ի խաւարի» (Յուդ. 6)։ Նա և նախախնամող, որ հայրարար հոգայ վասն ամենայն արարածոց իւրոց, և «տայ ամենայնի կեանս և շունչ և զամենայն ինչ» (Գործ. ԺԷ. 25)։ «Նա է՝ որ զգենուցանէ զվայրի շուշանս անդամ և անուցանէ զթռչունս երկնից» (Մատթ. Զ. 26-29)։ «Նա առանձին իմն սիրով խնամ տանի մարդոյ՝ այնպէս զի և մազ մի անդամ ոչ անկանի 'ի գլխոյ նորա առանց կամաց հօրն երկնաւորի» (Ղուկ. ԺԲ. 9)։ Նա արար զհրեշտակս՝ որք «հոգիք են հարկաւորք, որ առաքին 'ի սպասաւորութիւն վասն այնոցիկ, որ ժառանգելոցն են զփրկութիւն» (Եբր. Ա. 14)։ «Յերիս անձինս Աստուածութեան չիք ոչ մեծութիւն և ոչ կրտսերութիւն, ոչ առաջնութիւն, և ոչ յետնութիւն, այլ որքան Հայրն Հայր է, ընդ նմին և որդին՝ որդի, և Հոգին սուրբ՝ Հոգի, անձամբք զանազանեալ և էութեամբ միաւորեալ, անբաժան միագոյ և համասփար»։

---

(1) Գնացէք ապաշխարեցէք՝ աշակերտեցէք զամենայն հեթանոս, մկրտեցէք զնոսա յանուն հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ (Մատթ. ԻԸ. 19)։ Երեք են՝ որք վկայեն յերկինս. Հայր, Բան, և Հոգին սուրբ, և երեքքին մի են (Ա. Յովհ. Ե. 7)։

(2) Այս են յաւիտենական կեանք, զի ծանիցեն զքեզ միայն ճշմարիտ Աստուած (Յովհ. ԺԷ. 3)։

(3) Ի սկզբանէ էր բանն, և բանն էր առ Աստուած, և Աստուած էր բանն (Յովհ. Ա. 1)։

(4) Ասէ Պետրոս. Անանիա, ընդէ՞ր եկիր սատանայ զսիրտ քո ստել քեզ Հոգւոյն սրբոյ . . . ոչ ստեցեր մարդկան, այլ Աստուծոյ (Գործ. Ե. 3—4)։

(5) ԶԱստուած ոչ որ ետես երբէք, բայց միածին որդի՝ որ է 'ի ծոց հօր, նա պատմեաց (Յովհ. Ա. 18)։

(6) Հոգին ճշմարտութեան՝ որ 'ի հօրէ ելանէ (Յովհ. ԺԵ. 26)։

2. Եկեղեցին Իսրայէլեան, 'ի ժամանակին՝ մինչդեռ հեթանոսք ամենայն խմորեալ էին մոլորութեամբ բազմաստուածութեան, ինքն ո՛չ միայն ուսուցանէր և յայտնագոյն եղանակաւ կնքէր և դաւանէր զմիութիւն Աստուծոյ, այլ և ճանաչէր և զգերագոյն զիարհուրդ երրորդութեան անձանց յԱստուած. «Ողորմութեամբ Տեառն լի եղև երկիր, և բանիւ Տեառն երկինք հաստատեցան, և հոգւով բերանոյ նորա ամենայն զօրութիւնք նոցա» (Սաղմ. ԼՌ. 6)։ «Եւ ասաց Աստուած. արասցուք մարդ ըստ պատկերի մերում և ըստ նմանութեան» (Ծնող. Ա. 26)։ «Եւ ասէ Տէր Աստուած. ահա՛ Ադամ եղև իբրև զմի 'ի մէնջ՝ գիտել զբարի և զչար» (Ծնող. Գ. 22)։] «Եւ ասէ Տէր... եկայք իջցուք և խառնակեսցուք անդ զլեզուս նոցա» (Ծնող. ԺԱ. 6-7)։ «Եւ ընդ ձեզ եմ՝ ասէ Տէր ամենակալ. և բանն՝ զոր ուխտեցի ընդ ձեզ յելանելն յերկրէն Եգիպտացւոց. և Հոգին իմ՝ որ կայ 'ի մէջի ձերում» (Անդ. Բ. 5-6). թէև ոչ բացայայտ ըստ օրինակի քրիստոնէական եկեղեցւոյ, այլ ըստ ամենիմաստ ճանապարհացն Աստուծոյ, որպէս համարեն բազումք 'ի հարց սրբոց, խորհուրդս այս ծածուկ յայնժամ տակաւին ընդ վարագուրաւ (1)։

3. Հայրն է Աստուած ծնօղ որդւոյ և բղխօղ սուրբ Հոգւոյ. ինքն ո՛չ ծնանի և ո՛չ խակ բղխի յումեքէ, ստեղծօղ և նախախնամօղ է արարածոց ամենայնի հաւասար Որդւոյ և սուրբ Հոգւոյ 'ի փրկութիւն ազգի մարդկան, առաքեայ զՈրդի իւր յաշխարհ, զի պատարագաւ նորա ջնջեսցէ զկնիք զանապարտութեան. և բղխէ զՀոգին սուրբ, զի շնորհօք իւրովք սրբեալ և զօրացուցեալ զհաւատացեալս՝ առաջնորդեսցէ նոցա ճշմարտութեամբ 'ի կենաց ստի 'ի կեանսն յաւիտենից. ինքն ո՛չ զոր դատի, այլ զամենայն դատաստան իւր ետ որդւոյ իւրում։ Անձն հօր ո՛չ է անձն որդւոյ, և ո՛չ անձն սուրբ Հոգւոյ։

4. Որդին Աստուծոյ է Աստուած՝ ստեղծօղ և նախախնամօղ արարածոց ամենայնի, հաւասար հօր և հոգւոյ, ծնեալ 'ի հօրէ նախ քան զյաւիտեանս. ինքն ո՛չ ծնանի և ո՛չ բղխէ զոր յանձանց երրորդութեան, այլ միջնորդաբար առաքէ զբղխեալն 'ի հօրէ՝ զՀոգին սուրբ. կամաւ հօր էջ և մարմնացաւ 'ի սրբոյ կու-

---

(1) Մատենագրութիւնք Հարց սրբոց ('ի Ռուս թարգ.) Հատ Գ. երես 126—127) ուր հաւաքեալ են քաղուածք և 'ի գրուածոց սրբոց Եպիփանու, Յովհաննու Դամասկացւոյ ևս և Իսիդորոսի, Պելուսիոտի և Օգոստինոսի։

ակն, իբրով Աստուածային վարդապետութեամբք, շարշարանօք և մահու խաչի փրկեաց զազգ մարդկան՝ որք հաւատացին, 'ի մեզաց, յանիծից յիշխանութենէ սատանայի և 'ի մահուանէ. եւ յերկինս նոսին մարմնովն և է բարեխօս վասն մեր. ինքն է հին, նորոգապետ, քահանայապետ և զբոլոր եկեղեցւոյ իւրոց, և եկեղեցին կամ լրութիւն հաւատացելոց է մարմին նորա, նա է դատաւոր ամենակարող, որ գաւելոց է 'ի յարութեան հաւատակաց զհաւատացեալ և զանհաւատ ազգս մարդկան, եւ և զհրեշտակս մեղուցեալս։ Է Աստուած կատարեալ և մարդ կատարեալ։ Անձրն Որդւոյ ո՛չ է անձն Հօր, և ո՛չ անձն սուրբ Հոգւոյ. այլ հաւասարդ և միասակից Հօր և սուրբ Հոգւոյ։

5. Հոգին Աստուծոյ է Աստուած, ստեղծող և նախախնամող արարածոց ամենայնի, հաւասար և համագոյ Հօր և Որդւոյ, բղխեալ 'ի Հօրէ նախ քան զյաւիտեան, ինքն ո՛չ ծնանի և ո՛չ բղխէ զոր յանձանց ամենասուրբ երրորդութեան, էջ 'ի յորդանան, վկայելով Աստուածութեան որդւոյ, իջանեցաւ 'ի մարդարէս և յառաքեալս կամ որ նոցն է 'ի հին և 'ի նոր կտակարանս, ծնանի վերստին զմկրտեալսն 'ի ջուր և 'ի հուր՝ յարդեղբութիւն Հօրն երկնաւորի և 'ի ժառանգակցութիւն Քրիստոսի. որպէս զհաւատացեալս 'ի մեզաց, զօրացուցանէ զնոսա շնորհօք իւրովք, և առաջնորդէ անեղուն և անսխալ խնամութեամբ իւրով եկեղեցւոյն Քրիստոսի։ Անձն Հոգւոյն ո՛չ է անձն Հօր կամ Որդւոյ։

## ԳԼՈՒԽ Բ.

## ՅՕԳՈՒԱԾ ԱՌԱՋԻՆ.

Զարարչութիւն տիեզերաց—երկնից և երկրի.

Հայրն Աստուած ամենակարող Բանիւ իւրով և Հոգւով իւրով արարեալ 'ի մեզ աստուս տկաս և կատարեաց զարարչութիւն երեւելի և անտեսանելի, երկնաւոր և երկրաւոր, ջրային, օդային և յամենայնի, հոգեղէն, բանական, շնչաւոր, և անշունչ էակաց ամենայնի, զորս միանգամայն արար յոչնչէ։

Յառաջնումն աստ ստեղծ Աստուած զնիւթն անկերպարան՝ յորմէ կազմեալոց էր զերկինս և զերկիր իւրեանց տարբ. և զոչս. յերկրորդումն զհաստատութիւն երկնից. յերրորդումն զհաստատութիւն ցամաք երկրի հանդերձ բուսովք, ծառովք և

ծառովք և սերմամբք, ևս և զիմաստս ջուրց՝ իսկ զծովս, զլիսն, զաղբիւրս, և զգետս. որովք պատրաստեցան բնակարանք և կենդանիք կենդանեաց։ Ի շարժարարումն զմեծ և զփոքր լուսաւորս երկնից՝ իսկ զարև, զլուսին, և զմոլորակս, զաստեղս և զայլ լուսաւորիչ մարմինս։ Ի հինգերորդումն զջրային կենդանիս և զկէտս, զձկունս, զեռունս, ևս և զթռչունս օդային, զմեծամեծս և զմանունս։ Ի վեցերորդումն զգազանս, զանասունս և զսողունս՝ որք բնակին Ի ցամաքի, և զնախահայր և զնախամայր ազգի մարդկան՝ զԱդամ և զԵւա։

## ՑՕԴՈՒԱԾ ԵՐԿՐՈՐԴ.

Անարչութիւն առաջին մարդոյ.
Գնդազանց նպատակն՝ առ որ ստեղծաւ մարդն-Եդեմ կամ դրախտ։

1. Ասուած իրրև պատկ արարչագործութեան իւրոյ արար Ի վերջոյ յաւուրն վեցերորդի և զմարդ՝ զեղեցիկ և կատարեալ քան զարարածս ամենայն, ո՛չ որպէս զայլս արարչական ամենակարող «եղիցի» բանիւ, այլ որպէս սուրբ գիրք վկայեն, կանուխ խորհրդակցութեամբ անձանց Աստուծոյ երրորդութեան. «Եւ ասաց Ասուած. արասցուք մարդ» (Ծնող. Ա. 28)։ (1) «Աճեցէք և բազմեցարուք և լցէք զերկիր և տիրեցէք զոմն և իշխեցէք» (Ծնող. Ա. 28). առ իշխանել նորա իշխան արարածոց ամենայնի յերկրի առա։ Զմարմին մարդոյն զառաջնոյ արար Տէր Ասուած ձեռամբ խրտվք Ի հողոյ երկրի, և զկիրն առաջին Ի կողից նորա՝ զոր եւ յօգնականութիւն նմա. յորս միշտաց զհոգի կենդանի բանականն և անմահ. «Եւ ստեղծ Տէր Ասուած զմարդն հող յերկրէ, և փչեաց յերեսս նորա շունչ կենդանի, և եղև մարդն հոգի կենդանի» (Ծնող. Բ. 7)։ Ադամ և Եւա ստեղծան ըստ նմանութեան և ըստ պատկերի Ասուծոյ, այսինքն որպէս ինքն սուրբ, ուղիղ և արդար, էին սոյնպէս սուրբ, ուղիղ և արդար նախահարք մեր։ Հոգի անհուն իմացական է արարիչն, այսպէս և հոգի

---

(1) Թարգմանչաց Հայոց անակիրդն ընդ միածնի որդւոյ քո և ընդ կենդանարար սուրբ հոգւոյդ և ասաց՝ արասցուք մարդ ըստ պատկերի մերում և ըստ նմանութեան, և իշխեսցէ Ի վերայ երկրի. զոր ստեղծեր Ասուածային աչով քով. և կերպարանեալ նոցին քեզ առնելով, նախակարգեցեր զնա և հաստատեցեր իշխան Ի վերայ ստեղծուածոց քոց (Մեծ մաշտոց երես 29)։

մարդոյն յաւաչքան զմեղանչելն հաստատէր մինչև 'ի բարձունս երկնից, և հաղորդ լեալ բարութեանց և կատարելութեանց Աստուծոյ՝ վայելէր գերանուրեան ծայրագոյն. «Արար Աստուած զմարդն ուղիղ» (Ժող. Է. 30)։ «Եւ արար Աստուած զմարդն 'ի պատկեր իւր» (Ծնն. Ա. 27)։

2. Ադամ և Եւա մինչդեռ էին յանմեղութեան վիճակի և 'ի հնազանդութեան Աստուծոյ, անմահ էին ըստ հոգւոյ և ըստ մարմնոյ՝ ըստ խմաստնոյն. «Աստուած զմահ ոչ արար» (Իմաստ. Ա. 13)։ Նորա իրրև ազնուագոյնք՝ յԱյրածոյ ամենայնէ ընկալան յարարչէն զանձնիշխան կամս, այսինքն զազատութիւն խորհելոյ և գործելոյ կամ ո՛չ գործելոյ զբարին. ընկալան և զմիտս, որ մինչդեռ 'ի սկզբնական անբծութեան էր՝ հաղորդէր Աստուածային լուսոյն. ընկալան և զսիրտ՝ որ յանմեղութեան անդ տաճար էր Աստուածային անապական և երանական սիրոյ, և կարող գոլով արտադրել զործս հոգևորս և Աստուածահաճոյս, վարէին կեանս անմեղս և երջանիկս, անմահան էին 'ի շարէն, իշխէին բարութեամբ արարածոց և վայելէին զբարութիւնս երկրի։ Ապրէին եկեղեցի յերկրի ամենոփեալ էր 'ի նախաստեղծ ամբոխ մարդկութեան։

Դրախտն կամ եդեմ՝ էր շատաւոր տարածութիւն գետոց 'ի Հայաստան աշխարհի. ուր բղխէին ակունք չորից գետոցն Փիսոնի (Ջորոխ), Գեհոնի (Երասխ), Տիգրիսի և Եփրատայ (Ծնն. Բ. 10—14)։ Անդ անկեալ էր Աստուած 'ի վայելս նախահօր և նախամօր մարդկութեան՝ գեղեցիկ, օգտակար, բարեհամ և պտղաբեր ծառս, և զարդարեալ զուարճալի բուսով. անդ տընկեալ ցծառն գիտութեան բարւոյ և չարի։

## ՅՕԳՈՒԱԾ ԵՐՐՈՐԴ.

Յանդիմանութիւն երեչտակաց կամ հոգեղէն երկնաւոր էակաց.

Ամենակարօրն Աստուած արարչական բանիւ իւրով ըստ օրինակի այլոց արարածոց, արար 'ի պաշտօնեայս փառաց իւրոց զկրեչտակս կամ զհոգեղէն էակս, ետ և 'ի պահպանութիւն և 'ի գործակցութիւն բարեպաշտից և երկիւղածաց յերկրի աստ. «Ո՛ր արար զկրեչտակս իւր հոգիս և զպաշտօնեայս իւր 'ի հուր կիզելոյ» (Սաղմ. ՃԳ. 4). «Ո՞չ ապարէն ամենեքեան հոգիք են հարկաւորք

որ առաքին 'ի սպասաւորութիւն վասն այնոցիկ, որ ժառանգել-
լոց են զփրկութիւն» (Եբր. Ա. 14)։ «Բանակ հրեշտակաց Տեառն
շուրջ է զերկիւղածովք իւրովք և պահէ զնոսա» (Սաղմ. ԼԴ.
3)։ Հրեշտակք անուն՝ որ նշանակէ պատգամաբեր, ոչ տուեալ
լինի հոգեղէն էակաց ըստ բնութեան նոցա, այլ ըստ պաշտա-
մանն. իբր զի 'ի ձեռն նոցա 'ի սկզբանէ հետէ արարչութեան
աշխարհի և պատուիրանաբանութեան առաջին մարդոյ 'ի հին և
'ի նոր կտակարանս յայտնէր և կատարէր Աստուած զկամս իւր
յերկրի և Ծանուցանէր զգալոցն, որպէս զյղութիւն Յովհան-
նու. Մկրտչին (Ղուկ. Ա. 13), զյղութիւն (Ղուկ. Ա. 31),
զծնունդն (Ղուկ. Բ. 10—12), զյարութիւնն (Ղուկ. ԻԳ. 23),
զհամբարձումն Քրիստոսի և զերկրորդ գալուստն (Գործ. Ա. 11)։
Հրեշտակն երևեալ Մովսէսի յանծախելի մորենւոջն՝ պատրաստ
զնա առ 'ի հանել զԻսրայէլացիս յԵգիպտոսէ (Ելից. Գ. 2).
հրեշտակն արգելու զԱբրահամ 'ի զոհելոյ զԻսահակ (Ծնն.
ԻԲ. 5—7). հրեշտակն կոչէ զԳեդէոն 'ի փրկութիւն Իսրայէլի
(Դատ. Զ. 11). հրեշտակն հարկանէ զՀերովդէսն 'ի պատիժ
անարգութեանն Դաւթի (Բ. Թագաւ. ԻԴ. 16). ևն։
Հրեշտակք են հոգեղէն, հրանման, սուրբ, անմահ և իմաստուն
զորութիւնք յերկինս. որք տեսանեն հանապազ զերեսս հօր
Աստուծոյ. լուսաւորին և անանին սուրբ լուսով նորա, և երեք-
սրբութեան փառաբանութեամբ զոհս և զդիլեր օրհնեն անդադար
ձայնիւ զԱստուած, յորոց կայուցանի եկեղեցի երկնային. «Եւ
ամենայն հրեշտակք կային շուրջ զաթոռն, անկանէին յերեսս
առաջի աթոռոյն և երկիրպագանէին Աստուծոյ՝ ասելով. Ամէն.
օրհնութիւն և փառք և իմաստութիւն և գոհութիւն և պատիւ և
զօրութիւն և շնորհք Տեառն Աստուծոյ մերոյ յաւիտեանս յա-
ւիտենից. ամէն» (Յայտն. Է. 11—12)։ «Եւ Սերովբէք կային
շուրջ զնովաւ. . . . աղաղակէին մի առ մի և ասէին. Սուրբ, սուրբ,
սուրբ, Տէր զօրութեանց. լի է ամենայն երկիր փառաւք նորա»
(Եսայ. Զ. 2—3)։

Լուսիւն և բնութիւն երկնային զօրութեանց քէ և ամենեցուն
նոյն է, այլ ըստ պաշտամանց բաժանեալ են յիններակ դասա-
կարգութիւնս՝ որ կոչին երկնային քահանայապետութիւնք, այսին-
քն հրեշտակք, իշխանութիւնք, և զօրութիւնք (Ա. Պետր. Գ. 22),
հրեշտակապետք (Յուդա. 9), աթոռք, տէրութիւնք, պետու-
թիւնք (Ղուկ. Ա. 16), Սերովբէք (Եսայ. Զ. 2), և Քերուբ-

ջէք (Ծնող. Գ. 24)։ Թիւ բազմութեան երկնային զօրաց անցանէ անդր քան զհաշիւ և զհասանելի երկրաւորաց՝ Աստուծոյ միայնոյ զոլով գիտելի (Երր. ԺԲ. 22)։ Զարարչութիւն նոցա՝ զոմանք լուէ արարածապատուական, հաւանական է դնել յաւուրն երկրորդի, յորում ստեղծան երկինք. ըստ որում յաւուրն չորրորդի 'ի սաղմոսն զասողս՝ փառաւորէին արդէն և գովէին նոքա զԱստուած (Յովբ. ԼԸ. 7)։

1. Բայց 'ի հրեշտակաց կամ 'ի բարի հոգեղէն զօրութեանց՝ զոմն և այլ շար հոգիք ըստ նմանութեան առաջնոցն արարած ամենազօրին, և կոչին սատանայ. որք մինչդեռ 'ի հնազանդութեան էին ամենակալին, վայելէին 'ի արքութեան, յիմաստութեան, 'ի բարութեան և 'ի փառս. այլ իբրև մեղան, արտաքսեցան յերանելեան զասուց երկնաբաղաքացի զուարթնոց. զրկեցան բնութեամբ և կամաւք, զդեղեցան զշարութիւն և զարդեան 'ի խաւարի զժոխոց 'ի զատաստան աւուրն մեծի. որոց յանցանաց չիք թողութիւն՝ ոչ յայսմ և ոչ 'ի միւսում աշխարհի։ «Եւ հրեշտակք, որ ոչ պահեցին զիւրեանց իշխանութիւն . . . 'ի զատաստան մեծի աւուրն մշանջենաւոր կապանաւք պահեաց 'ի խաւարի» (Յուդ. 6)։ «'Ի հրեշտակսն յանցուցեալս Աստուած ոչ խնայեաց, այլ խաւարին կապանաւք արկեալ 'ի տարտարոսն էաւ պահել 'ի զատաստան» (Բ. Պետր. Բ. 4)։ «Երթայք յինէն՝ անիծեալք, 'ի հուրն յաւիտենական, որ պատրաստեալ է սատանայի և հրեշտակաց նորա» (Մատթ. ԻԵ. 41)։

2. Սատանայն իբրև առաջին շար և անկեալ ոգի յամենայն 'ի բարի արարածոց Աստուծոյ, կերպարանեալ յօձ խորամանկ՝ պատնէշ եղև պատուիրանազանցութեան և անկման նախնեաց և նախահօր 'ի դրախտն անդ, զորս ծննդոցք իւրեանց հանդերձ (բայց 'ի սակաւուց) գրաւեալ ունէր այնուհետև ընդ մահաշունչ ծառայութեամբ իւրով մինչև ցօր փրկութեանն, զոր գործեաց Փրկաւոր խաչիւ իւրով. «Մահուն իւրով խափանեսցէ զայն, որ զիշխանութիւն մահուն ունէր, այսինքն է զսատանայ. և ազատեսցուցէ զայնոսիկ՝ որ մահուն երկիւղիւ հանապազ կէին վտարանդեալք 'ի ծառայութիւն» (Երր. Բ. 14—15)։

3. Յիսուս Փրկաւոր փորձեալ 'ի սատանայէ և յաղթեալ նմա՝ էաւ կարօղութիւն աշակերտաց իւրոց և արդոց հալածել զնոսա 'ի մարդկանէ և յաղթել փորձութեանց նոցա և մերնոցիս՝ զորս լսեն 'ի զայթակղութիւն և 'ի կործանումն հաւա-

տայերոց. որք իբրև ընտիրքեամբ հոգի շար՝ հակառակ են մեղս բարոյ. իբրև ոգի պիղծ՝ հակառակ են արդարութեան. իբրև ոգի սուրբեան՝ հակառակ են ճշմարտութեան, իբրև ոգի ապատամբ՝ հակառակ են հնազանդութեան կամաց Բարձրելոյն, և իբրև մարդասպան՝ 'ի սկզբանէ հետէ խնդրեն հանապազօր պէս պէս որոգայթիւք մոլորեցուցանել զմարդիկ. յայս ասես բոլանդակ կեանք քրիստոնէից շարունակ պատերազմ է ընդ դէմ որոգայթից սատանայի. և որ ոք կարասցէ յաղթել փորձոցին՝ ապրէ ըստ պատկն անապական կենաց. «Դուք 'ի հօրէ 'ի սատանայէ էք, և զցանկութիւնս հօրն ձերոյ կամիք առնել, զի նա մարդասպան էր 'ի սկզբանէ և 'ի ճշմարտութեան ոչ եկաց. զի ոչ գոյ ճշմարտութիւն 'ի նմա» (Յովհ. Ը. 44) «Զգեցարո՛ւք զզաւապիանութիւն Աստուծոյ. զի կարօղ լինիջիք կալ ընդ դէմ հնարից սատանայի. Զի ո՛չ է մեզ պատերազմ ընդ մարմնոյ և ընդ արեան, այլ ընդ իշխանութիւնս և ընդ պետութիւնս և ընդ աշխարհակալս խաւարիս այսորիկ, ընդ ոգիս չարութեան՝ որ 'ի ներքոյ երկնից. վասն այսորիկ առէք զզաւապիանութիւն Աստուծոյ, զի կարօղ լինիցիք 'ի դիմի հարկանել չարին յաւուրն չարութեան . . . առէք զվահանն հաւատոյ, որով կարօղ լինիջիք զամենայն նետս մեխա չարին շիջուցանել» (Եփես. Զ. 11—16)։

## ՅՕԴՈՒԱԾ ՉՈՐՐՈՐԴ.

Պատուիրանազանցութիւն մարդոյն, կամ որ նոյն է առաջին մեղք—հետեւանք պատուիրանազանցութեանս, այն է կրկնակի անիծագիր զատապարտութիւնք՝ որոյ ենթարկեցաւ մեղուցեալն, այսինքն մեռանիլ բարոյական և մարմնոյ մահուամբ-խաւարումն Աստուծոյ առ 'ի փրկել զմարդն 'ի զատապարտութենէ անիծիցն, կամ որ նոյն է՝ արբել շնորհօք զապականեալ մարդն, և փրկել զնա 'ի յաւիտենական մահուանէն՝ յաշխարհին, որ գալոց է։

Ադամ և Եւա ո՛չ ընդ երկար վայելեցին յանմեղութեան իբրեանց զերանաւէտ փափկութիւն Եդեմայ. վասն զի սկզբնաշարքն սատանայ տեսեալ զնոսա յԱստուածատիպ անմեղութեան և. 'ի փառս (յորոց զրկեալն էր ինքն), և ո՛չ կարացեալ ժուժել, այլ գործի նախանձու իբրոյ առեալ 'ի ձեռս զրանարկութիւն, մերձեցաւ առ Եւա կինն նախատեղծ 'ի կերպարանս օձի. և խոստանալով նմա զանիծամիծս՝ հանեցոյց զնա և 'ի ձեռն նորա զԱ-

զամ զմարդն առաջին՝ ապախտ առնել զարարչադիր պատուիրանաւն և ուտել 'ի պտղոյ արգիլեալ ծառոյն գիտութեան բարւոյ և չարի։

Արդարադատն Աստուած 'ի պատիժ անհնազանդութեանն կ՝արդաց անէծս ցաւագինս առ օձն փորձութեան, անէծ զերկիր, և զնախատեղծեան զատապարտեաց 'ի կրկնակի մահ, այսինքն է 'ի մահ բարոյական (ըստ որոյ զրկեցան նոքա 'ի լուսոյ շնորհաց Աստուծոյ և ապականեցան սրտիւք), և 'ի մահ մարմնոյ հանդերձ ծննդոց իւրեանց, արտաքսեալ միանգամայն և զնոսա 'ի դրախտէն «'ի ծառոյն գիտութեան բարւոյ և չարի մի՛ ուտիցէք, զի յորում աւուր ուտիցէք 'ի նմանէ՝ մահու մեռանիցիք» (Ծնող. Բ. 17). «Հող էիր և 'ի հող դարձցիս» (Ծնող. Գ. 19)։

Ադամ և Եւա՝ որք ցայն վայր վայելէին զանդորրութիւն սուրբ խղճի՝ յետ պատուիրանազանցութեանն սկսան տառապիլ խայթիւք խղճի. դյիշատակութիւն կորուսեալ երջանկութեանն՝ անհնարին երևէր միանգամ 'ի ձեռս բերել. մաշէր և տագնապեցուցանէր զնոսա, և այնուհետև անտխուր կենցաղավարութեան նոցա փոխանակեցին հոգք և մտատանջութիւնք, առողջութեանն՝ հիւանդութիւնք, և լիութեանն՝ կարօտութիւն։

Ադամ և Եւա 'ի նմին իսկ աւուր՝ յորում ճաշակեցին 'ի ծառոյն փորձութեան և օտարացան յԱստուծոյ, մեռան ըստ ամենաշքեղ բանին՝ մտօք, որ յառաջն գոլով հաստատ և հաղորդ Աստուածային լուսոյն՝ զգեցաւ այնուհետև զխաւար. մեռան կամօք, որ կորոյս զյօժարութիւն գործելոյ ինքնին զբարին և զկատարելն. մեռան սրտիւք, որոյ անկեալ 'ի բարձրութենէ երկնաւոր և անապական սիրոյ մասնատեցաւ ըստ թուոյ երկրաւոր և ապականացու պատրանաց. մեռան գործունէութեամբ, որ արտաքրէր այնուհետև զգործս և եթ մեռելոտիս (Եբր. Թ. 14). և այսպէս գերազոյնն յարարածոց մարդն փոքր ինչ խոնարհ ըստեղծեալ քան զհրեշտակս, խոտորեալ յօրինաց Արարչին, հաւասարեցաւ անասնոց. և սերմն բարոյական ապականութեան և մեղայ տարածեցաւ յամենայն սերունդս նոցա՝ որպէս թոյն մահաբեր՝ որ յարմատոյ ծառոյն ի վեր ելանիցէ յոստս և 'ի ճիւղս և 'ի պտուղս և 'ի տերևս։ «Ի միոջէ մարդոյ մեղք յաշխարհս մտին և 'ի մեղաց անտի մահ. և այնպէս յամենայն մարդիկ տարածեցաւ մահ» (Հռոմ. Ե. 12). վասն այսորիկ և ամենայն մարդ անօրէնութեամբ յղացեալ լինի և ծնանի. «մեռեալ 'ի մեղս և

'ի յանցանս » և են « արդարև որդիք բարկութեան » (Եփես. Բ. 1 և 3). թէպէտ և միոյ առաջ իցեն կեանք նոցա ։

« Թագաւորեաց յԱդամայ մահ մինչև 'ի Մովսէս և 'ի վերայ չյանցուցելոցն ըստ նմանութեան յանցուածոյն Ադամայ . . . միոյն յանցանօք բազումք մեռան . . . միոյն յանցանօք յամենայն մարդիկ զատապարտութիւն . . . անհնազանդութեամբ միոյ մարդոյ մեղաւորք բազումք եղեն » (Հռոմ. Ե. 14—19) ։

Բարերար Արարիչն տեսեալ զկոգեւոր և զմարմնաւոր թշուառութիւնս Ադամայ և Եւայի՝ գերագոյն և սիրելի արարածոց ձեռին իւրոց, գթացաւ 'ի նոսա կարեկցարար, և 'ի նմին իսկ աւուր անկման նոցա՝ խոստացաւ յարուցանել 'ի սերնդոց նոցա Փրկիչ, որոյ յանձին կալեալ զմեղս և զանէծս մարդոյ՝ ազատելոց էր զմարդկութիւնն՝ յանիծից և 'ի մահուանէ. և զայս նախատահմանութիւն բազմադիմի յայտնութեամբք և օրինակաւք կրկնեալ և հաստատեալ մարգարէութիւնն հրեշտակաւք. և զի ահագին էր անկումն, վասնորոյ և յամենայն ժամանակս այսկրութեանն, զի բարեբարեպէս ծանիցէ մարդն զկարօտութիւն և զբարեւորութիւն խոստացեալ ամենակարող Փրկչին և զհաշտութիւն միջնորդին։ « Եւ ասէ Տէր Աստուած ցօձն . . . Եղիցէ թշնամութիւն 'ի մէջ քո և 'ի մէջ կնոջդ, և 'ի մէջ զաւակի քո և 'ի մէջ զաւակի դորա, նա ապատեսցէ քում գլխոյ » (Ծնեալ. Գ. 14—15) ։ « Գառն զենեալ 'ի սկզբանէ աշխարհի » (Յայտ. ԺԳ. 8) (1) ։

## ՑՕԴՈՒԱԾ ՀԻՆԳԵՐՈՐԴ.

### Անմահութիւն մարդկային հոգւոյ.

Գնութիւն և ճանաչումն անձին ապայուցանէ զգոյութիւն և զանմահութիւն հոգւոյ մարդկան. իբր զի ծանօթութիւն անձին խօսի իւրաքանչիւր ումեք 'ի մէնք, թէ նա խորհի, և փորձէ հանապազորդեան վկայէ, թէ նիւթն զուրկ է 'ի կարողութենէ խորհելոյ. ուրեմն է 'ի մեզ գոյութիւն իմն աննիւթական։ Ճանաչումն անձին բարբառի առ մեզ, թէ ազատ եմք. այսինքն թէ կարող եմք ակամայիւ յանկարծ, կարող եմք փոփոխել, կարող եմք

(1) Խորհուրդն անճառ ծածկեալ յազգաց և յաւիտանց՝ յայտնեցաւ ի Քրիստոսի ազգատոհմն սրբոյ առ կոյսն Մարիամ։ Շարական։

բոլորովին արդելուլ զնի՛թացս գործողութեանց, խոկմանց և ցանկութեանց մերոց, և երբեմն նաև հակառակ արտաքին ասիլ-մանց. իսկ փորձն միայն, թէ ամենայն՝ որ ինչ նիւթական է, ենթակայ է անխուսափ օրինաց, և այլն. յայտնել զարձեալ նոյն հետեւութիւն։ Մինչ դնելով մասնաւորապէս ընթացից կենաց մերոց՝ տեսանեմք, զի ձեռք, ոտք և այլ անդամք և մասունք մարմնոյ մերոյ ո՛չ ճանաչեն ամենեքին զինքեանս, և ո՛չ իսկ խորհին։ Այսու ամենայնիւ է 'ի մեզ իմն՝ որ խորհի, և հետեւաբար տարբեր և որիշ իմն 'ի մարմնոյ մերմէ։ Մինչ դնելով մարմնոյ մերոյ՝ զարձեալ տեսանեմք, զի երկու են 'ի մեզ շրջանք կենսական գործողութեանց՝ բոլորովին ներհակակիր իրերաց։ 'Էսա՝ շրջան կանոնաւոր գործողութեանց՝ որում ո՛չ որ կարաց հաստատ լինել յարդ, ենթակայ է անխափան օրինաց և բոլորովին անկախ զկամաց մերոց, զոր օրինակ՝ գործողութիւնք մարսողութեան, սրտոյ տրեան, և այլն։ Եւ երկրորդ՝ շրջան ազատական գործողութեանց, յորում իրաւանչիր որ 'ի մէնջ հանդիսանաց իրրեւ լիակատար տեսչէն, զոր օրինակ՝ խոկմունք, շարժմունք, յաջորութիւնք, որոշմունք, և այլն. յորոց յայտ է, թէ կրկնակի են 'ի մեզ սկզբունք կենաց՝ բոլորովին տարբեր 'ի միմեանց, ոչ ոչ բնաւ մի։

Գտանին 'ի մարդն մասնաւոր յայտնութիւնք, որք ակնարեւ ցուցանեն, թէ հոգին մարդկեղէն է գոյութիւն բոլորովին այլ՝ քան որ ինչ է մարմինն, բաժան 'ի նմանէ և ինքնագոյ։ Գաղափի երբեմն, զի մարդն խորամուխ լեալ 'ի ներքս յանձն իւր, և զբաղեալ ծանրակշիռ խնդրովք՝ ո՛չ իմանայ ամենեքին զարտաքին տպաւորութիւնս, թէպէտ և առ հասարակ գործարանք մարմնոյն բաց իցեն. ակնարկեալ յիրս՝ տեսանէ և ոչինչ. մերձեցեալ առ նոսա և շօշափեալ՝ զգայ և ոչինչ. լուեալ զաղաղակ կամ զշնչիւն ինչ՝ կամ ո՛չ լսէ, կամ 'ի միտ առնու և ոչ ինչ, և այլն։ Գտանի զարձեալ, զի յորժամ տաւտալի 'ի խիստ ցաւոց մարմնոյն բաց իցեն մեր, հոգին յուրախութեան է. և յորժամ յաւուղջութեան է մարմինն, հոգին տաղնապի։ Գտան նաև մարդիկ, որք հզօրութեամբ կամաց խլացուցին յանձինս զկսկիծ ա-նրմբերելի հիւանդութեանց, և կարող եղեն հանդուրժեամբ գրաղիլ ծանրատաղտուկ մասուր աշխատութեամբք. օրինակք Եւ-հատակաց սրբոց՝ որք 'ի տոկալի տանջանս մարմնոյ մատնեալ խնդային, և վերաբերեին Աստուծոյ զերգս գովասանական, ա-

պատուականն, թէ հոգին մինչեւ յո՞ր ատենն, մանաւանդ օգնականութեամբ շնորհաց, կարող է զօրանալ 'ի վերայ մարմնոյ և յինքն անկարս զնմանէ . . . . իսկ արդ եթէ զոյ 'ի մեզ հոգի, եթէ հոգին է զոյութիւն անանց և տարբեր 'ի մարմնոյ, անհնարն է ասել միանգամայն կարծիք, թէ 'ի մեռանիլ մարմնոյն՝ մեռանի ընդ նմա և կենաց հոգւոյ . զի հոգին իբրև պարզ և անանցանելիոն զոյացութիւն՝ ո՛չ երբէք կարէ մեռանիլ մահուամբն, որպէս մեռանի մարմին . այսինքն է՝ 'ի ձեռն լուծման մասանց և ապականութեան : Անհնարին է ասել 'ի չէր զառնալ հոգւոյն, զի քան զոյացութեան իւրում պատկեր է Աստուծոյ . և զի կարծիքս այս բոլորովին հակառակ է ամենակատար յատկութեանց Արարչին, որոյ 'ի ձեռին են կեանք և մահ կենդանեաց ամենայնի :

Աստուած է անհուն իմաստուն . բայց և այնպէս մարդկային հոգւոյ պարզեւեալ զայնպիսի կարողութիւնս և ընդունակութիւնքս, որք այն ինչ սկսանին արծարծանիլ՝ հապա երբէք կարացեալ ժամանել առ կատարեալ զարգացումն յաստի կեանս : Բազում յանգնաւոր իմաստունս խոստովան եղեն, թէ բազում ինչ է՝ զորս ո՛չ կարացին գիտել, և ո՛չ գիտեն . գերապանծ արդարք քարոզեցին զ'ի բազմաց թերութիւնս անձանց . և ընդհանրապէս ամենայն արք ողջամիտ՝ որք խորհրդագրած եղեն գաղտնեաց մարդկութեան, ինքեանք միաբերան, թէ զհոգեւոր ծարաւ մարդոյն ոչինչ յերկրաւորացս բաւական է լցուցանել . և թէ կարողութիւնք հոգւոյ ընդունակ են անսահման կատարելութեանց . ամին իրի՞ զիա՞րդ կարելի է ոչ հաւանիլ, թէ ամենիմաստ Արարիչն՝ որ առեալ զմեզ այսորինակ կարողութեամբք և կարեւոր, չիցէ նախատեսմանեալ մեր վասն այլ իմն անհնարն կեանս յետ վախճանի ներկայիս :

Աստուած է անհուն արդարադատ . բայց և այնպէս զիարդ երեւումն արդարութեան նորա ո՛չ տեսանեմք յաստի կեանս : Բազում անգամ արք մոլիք վայելեն զամենայն բարութիւնս աշխարհային, և 'ի ձեռս բերեն զնդանոր բարեբաստութիւնս նոցանոր անարգնութեամբք . իսկ արք կամին Աստուածպաշտութեամբ կեալ 'ի Տէր՝ հալածին և տանին տառապանաց, թէ և արժանի իսկ էին 'ի հաստատումն վաստակոց իւրեանց՝ վարձուց մեծամեծաց : Կարելի՞ է ասել՝ որոյ բանականութիւնն ողջիկ է, և Աստուածգիտութիւնն առողջ, զմտաւ ածել, թէ շիտ

այլ կեանք, յորում արդարադատ երկնաւոր Դատաւորն հատուցանէ իւրաքանչիւր ոմանք ըստ արժանեաց։

Ստուած է անվախճան բարի. ո՞ր ողջամիտ անձն հաւանի բնդունիլ, թէ նա շնորհեալ մեզ զգոյութիւն, շնորհեալ մեզ զանելագ քաղց կենաց՝ զրկեսցէ զմեզ 'ի յաւիտեան 'ի գերագոյն զարգացեալ աստի սիրոյ իւրոյ, զորոյ հաղիւ հազ յայսմ կենի ձեռնհաս լինիմք ճաշակել և իմանալ զանբաւ քաղցրութիւնն. քանզի և բոմանգակ երկրաւոր կեանք մեր չէ իրաւ աւելի ինչ՝ քան եթէ առաջին ճաշակ քաղցրութեան կենաց։

Հարկ է վերջապէս 'ի միտ առնուլ, թէ ապահովագոյն միջոց՝ որ կարացուն է հասանել զմարդ առ 'ի ճանաչել և յընդունել զգոյութիւն և զանմահութիւն հոգւոյ, որպէս և զգոյութիւն Ստուծոյ, է բարեպաշտօն կեանքն։ Ոչ ներեն արդարք, զի մարմին իշխեսցէ հոգւոյ. այլ ընդհակառակն հոգին է՝ որ իշխէ և առաջնորդէ յանձինս նոցա մարմնոյն, և յայս ասէս զիւրին է նոցա զգալ զգոյութիւն այնորիկ զ'ի մարմնոյ տարբեր և առանձին զոյն, զգերաշխարհային իշձա նոցա և զնպատակն։ Արդ բարեպաշտօնք կելով յԱստուած, և իմանալով յանձինս զառաջնակցութիւն և զնեղիկ շնչումն Ստուածեղէն հոգւոյ՝ ճաշակեն յառաջագոյն զքաղցրութիւն այլոյ իմն կենաց. որ տարբեր է բոլորովին յերկրաւորէն. կենաց ասեմ, որ տիրապէս հոգեկան է և յաւիտենական... այնուհետև ո՞վ կարէ խախտել զվաստակն նոցա՝ զորս ունին յանմահութիւն հոգւոյն։

Հոգի մարդոյ ըստ Ստուածային յայտնութեանն՝ է գոյացութիւն իմացական, բանական, անբիծ և անմահ ստեղծեալ. յորժամ զկնի արարչութեան մարմնոյ նախահօրն մերոյ՝ փչեաց յերեսս նորա Ստուած 'ի շնչոյ իւրմէ. «Փչեաց յերեսս նորա շունչ կենդանի, և եղեւ մարդն հոգի կենդանի» (Ծնն. Բ. 7), որ և 'ի մեռանիլ մարդոյ մարմնով՝ հոգին մնացեալ անմահ՝ դառնայ առ Ստուած. «Եւ հոգին դարձցի առ Ստուած, որ ետ զնա» (Ժողով. ԺԲ. 7)։

# ԳԼՈՒԽ Գ.

## ԷՈՒԹԻՒՆ ԿՐՕՆԻ.

## ՅՕԳՈՒՍԱԾ ԱՌԱՋԻՆ.

*Կրօնն, կամ որ նոյն է՝ ուխտ ընդ մէջ Աստուծոյ և մարդոյ.*

Կրօնն է ընդհանրապէս ուխտ կամ դաշն ընդ մէջ Արարչի և ազատ մտաւոր արարածոց. իսկ մասնաւորապէս ուխտ հաղորդութեան ընդ մէջ Աստուծոյ և մարդոյ։ Կրօնն քան Աստուածային բանի իրրև ուխտ՝ բաժանի 'ի սկզբնական՝ մինչ ցանկումն նախահայրց մերոց. «Տէր . . . ուխտ յաւիտենից կացոյց ընդ նոսա . . . և պատուէր եւ նոցա զգոյշ լինել յամենայն շարէ և պահել զպատուիրանն ըղձալի» (Սիր. ԺԷ. 1. 9 և 11). 'ի նահապետականն, «Երևեցաւ Տէր Աստուած Աբրահամու, և ասէ ցնա. Ես եմ Աստուած քո. հանոյ լեր առաջի իմ, և լեր անարատ. և եդից զուխտ իմ ընդ իս և ընդ քեզ . . . և 'ի մէջ զաւակի քո յետ քո յազգս իւրեանց՝ յուխտ յաւիտենական լինել քեզ Աստուած և զաւակի քումդ յետ քո» (Ծնն. ԺԷ. 1 և 7). յընդօրինականն, «Ասէ Տէր ցՄովսէս. գրեա՛ զուխտս քեզ զպատգամսդ զայդոսիկ. զի ոչգոյ բանիս զնիցեմ ուխտս ընդ քեզ և ընդ Իսրայէլ» (Եելից. ԼԴ. 27). և վերջապէս 'ի Քրիստոնէականն. «Աստուածն ես պաշտման ահեղ Յիսուս. ո՞րչափ լաւագոյն ես ուխտի միջնորդ՝ որ 'ի յառաւել առեալսն օրինադրեցաւ» (Եբր. Ը. 6) (1)։

---

(1) 'Ի սորբ գիրս քառս (ուխտ) ընդհանրապէս ի կիր ածի ի տեղի կրօնի (Ինչիժեան). բայց որում առաւել ևս յարմարութեանցն բացատրել զբուն նշանակութիւն այնորիկ։ Այսու ամենայնիւ գտանին և այլ անուանք, որք ցուցանեն զայլ և այլ մասունս այնորիկ. զոր օրինակ. կրօնն կոչի Հաւատք (Գործ. Զ. 7. ԻԴ. 24. Գաղատ. Ա. 23. Հռոմ. Ա. 5.), Բարեպաշտութիւն (Ա. Տիմոթ. Բ. 10. Գ. 16. Տիտ. Ա. 1.), Պաշտօն (Եսայ. ԺԲ. 26. Հռոմ ԺԲ. 2.), Երկիւղ Տեառն կամ Երկիւղ Աստուծոյ (Առակաց. Ա. 7. Գործ. Թ. 31), Ճանաչումն Աստուծոյ (Եփես. Ա. 17.), Սէր (Մատթ. ԻԲ. 37—40. Յովհ. ԺԴ. 21—24), Օրէնք (Յովհ. Ա. 17). Ճշմարտութիւն Աստուծոյ (Յովհ. ԺԷ. 17.), Ճանապարհ կենաց, հանապարհ փրկութեան, հանապարհ Տեառն (Եբեր. ԻԱ. 8. Առակ. Ժ. 17.)։ Այս մեզ հաւատք և բարեպաշտութիւն՝ երկոքին անուանք կրօնի՝ 'ի յառաւել գործածութեան են։

# ՑՕԴՈՒԱԾ ԵՐԿՐՈՐԴ.

## Հիմն և սկիզբն կրօնի.

Աստուած է հիմն և սկիզբն կրօնի. որ իբրև ամենակատար հոգի՝ արարչագործեաց զմարդն, և բարի կամովք իւրովք հաճեցաւ զարդարել զնա (և զՀրեշտակս) բանական, ազատ և անմահ հոգւով, և տպաւորեալ 'ի հոգւոջ նորա զգիտութիւն զոյութեան իւրոյ՝ շաղկապեաց զնա ընդ իւր 'ի ձեռն կրօնի։ Յայս տակս մարդն իբրև պատկեր Աստուծոյ բերի բնականաբար առնու իբրև նախագաղափար իւր, բերի առնու մտօք իբրև առ անհուն ճշմարտութիւն, բերի առնու կամօք իբրև առ ամենակատար բարութիւն, և զգայօղութեամբ իբրև առ գերագոյն երանութիւն։ Ըստ այսոցիկ յատկութեանց մարդն բաւական է բերի և ընդունակ ծայրագոյն ուխտիս այսմիկ ընդ Աստուծոյ. «Այսր զնա՝ ասէ սուրբն Յովհաննէս Դամասկացին, բանական և ինքնիշխան... զի ընդ Աստուծոյ հաղորդութիւն արասցէ մարդն». և Առաքեալն. «Որ մերձենայ 'ի Տէր՝ մի հոգի են» (Ա. Կորնթ. Զ. 17)։

Կրօնն Աստուածային սկսաւ յաչխարհի, յորժամ այն ինչ նախաստեղծ բանական արարածքն Ադամ և Եւա գոյացան 'ի ձեռաց Ամենակալին. բանզի կրօնն է հոգի, կամ կենդանի կենաց առ հասարակ հոգեւոր արարածոց, և անբաժանելի յատկութիւն բանական և ազատ բնութեան, եթէ ոչ իսկ հոգեալ նոցա յախտս մեղութեանս։ Յայս տակս այր իբրաքանչիւր 'ի մանաւորի՝ որպէս ծնունդ ընդ ծնողին, և որպէս արարած ընդ Արարչին՝ մտանէ ընդ Աստուծոյ յուխտ կրօնական։ Աստուած շնորհեալ մարդոյն զպատկեր իւր՝ որպէս թէ ձգէ զնա առ ինքն. և մարդն պատասխանի առնէ կոչմանս՝ բնական, բայց անձնիշխան և ճանաչող վերաբերութեամբ առ Աստուած իբրև առ ծայրագոյն ճշմարտութիւն, բարութիւն և երջանկութիւն՝ ամենայն կարօղութեամբք հոգւոյ, մտաց, կամաց և զգայարանաց իւրոց։ Յայս միտս կրօնն կոչի բնական։

# ՅՕԴՈՒԱԾ ԵՐՐՈՐԴ.

## Թէ ութիւնք կրօնի.

1. Թէ ութիւնք 'ի կողմանէ Աստուծոյ։ Մարդն ըստ հաճութեան Արարչին ձգտի բնականապէս միաւորիլ ընդ նմա մտօք, կամօք և գործարանաւ. այլ սոյա գոլով լոկ և սահմանափակ կարողութիւնք՝ ոչ ճանաչէ ըստ բաւականին զանսահմանն՝ մինչև ո՛չ բայայայտեսցի այն. ո՛չ գործէ ըստ պատշաճի զհանոյս նորա, մինչև ո՛չ ցուցցեն օրէնք գործողութեան. և ո՛չ իսկ ցանկայ բաւական, մինչ ո՛չ է ծանուցեալ։ Սմին իրի Աստուած՝ որ հաճեցաւ կոչել զմարդն 'ի հաղորդութիւն ընդ իւր, հաճեցաւ նոյնպէս յայտնել զինքն նմա։ Յայտնեաց մտաց նորա զգոյութիւն իւր, իսկ զճշմարտութիւնս հաստատ. յայտնեաց կամաց նորա զկամս իւր 'ի բարոյական օրէնս կամ 'ի ճշմարտութիւնս սիրոյ. և զգայարանաց նորա, յայտնեաց զծայրագոյն բարիս իւր 'ի խոստմունս կամ 'ի ճշմարտութիւնս յուսոյ։ Վերջապէս հարկ էր անշուշտ, զի զաստիարակեսցէ Աստուած զմարդն 'ի գիտութեան կրօնի։

Աստուած յայտնեաց զինքն մարդոյն երիսակի եղանակաւ. 1. Բնական ճանապարհաւ տպաւորնալ 'ի սիրտս նորա զգաղափար գոյութեան իւրոյ. «Ոչ ընտրեցին զԱստուած ունել 'ի գիտութեան, մատնեաց զնոսա Աստուած 'ի միտս անարգութեան» (Հռոմ. Ա. 28), 'ի ձեռն երևելի աշխարհի, «Աներևոյթք նորա (Աստուծոյ) 'ի սկզբանէ աշխարհի արարածովքս իմացեալ տեսանին, այսինքն է՝ մշանջենաւորութիւն և զօրութիւն և Աստուածութիւն» (Հռոմ. Ա. 20), և 'ի ձեռն խղճի մտաց, որ իբրև ձայն Աստուծոյ խօսի մեզ գրարոյական օրինաց. «Ցուցանեն գգործս օրինացն գրեալ 'ի սիրտս իւրեանց վկայութեամբ մտաց իւրեանց» (Հռոմ. Բ. 15)։ 2. Գերբնական ճանապարհաւ. որ յետ սարարչութեան նախաշրջ մերոյ բաղում անգամ երևեալ նմա՝ ուստի զմատնս կրօնի (Ծնող. Բ. 16. Գ. 8). և ապա յընթացս դարուց բազմաց «Բազում մասամբք և բազում օրինակաւք խօսեցաւ Աստուած ընդ հարս մեր մարգարէիւք, և 'ի վերջոյ որդւովն իւրով» (Եբր. Ա. 1)։

2. Թէ ութիւնք 'ի կողմանէ մարդոյ։ Մարդն սարատաւոր է գործակցութեամբ Աստուածային շնորհաց՝ մտօք հաստատ

յԱստուած, հաւատոյ զդայմամբ յուսալ յԱստուած, և յոժարութեամբ կամաց սիրել զԱստուած։ Զթէութիւնս զայսոսիկ թուէ և Առաքեալն. «Բայց արդ մնան հաւատք, յոյս, սէր». (Ա. Կորնթ. ԺԳ. 13)։ Մարդն երբեակ կարօղութեամբքս հոգւոյ գկապակցեալ զոչն իւր ընդ Աստուծոյ ապացուցանէ առաքինի վարուք, և պահպանութեամբ Աստուածաւանդ օրինաց. զի տրաւեն պատուղ և կենաց ճշմարտութեան հաւատոյ, սիրոյ և յուսոյ։

Մարդս՝ որպէս 'ի վերս ասացաս, հոգի է և մարմին։ Հոգին ունի միտս՝ որ ձգտի յարաժամ առ ճշմարտութիւնն. ունի կամս՝ որ սիրէ զբարին. ունի և զգայողութիւն՝ որ ծարաւի է երջանկութեան. իսկ ճշմարտութիւն ամենակատար, բարութիւն ծայրագոյն և երանութիւն անվախճան է Տէր Աստուած։ Յայս սակս զոյացութիւն հոգւոյ մերոյ է այնպիսի իմն, որ ընդարշաւորեալ է հանապազ և սիրել զերազանցապէս զԱստուած և զուգիլ հոգեւորապէս ընդ Աստուծոյ. այս է Աստուածպաշտութիւն ներքին։ Իսկ մարմինն զորով պաշտօնեայ հոգւոյ՝ յայտնի առնէ զմտրհուրդս, զյոժարութիւնս և զզգայողութիւնս այնորիկ երևելապէս 'ի պաշտամունս կրօնի. այս է Աստուածպաշտութիւն արտաքին։ Եւ զի Աստուած է առաջին և մեծագոյն բարերար մեր, որ յետ շնորհելոյ մեզ զգոյութիւն, և զարդարելոյ վսեմագոյն կարողութեամբք՝ հոգայ նաև առատապէս զհոգեւոր և զմարմնաւոր այնս մեր. վասն այսորիկ հարկիմք փոխանակ երախտեաց նորս ոչ միայն ճանաչել և հաւատալ 'ի նա, այլ և եռանդուն սիրով սիրել զնա, անհուն Հեզանդութեամբ հպատակիլ օրինաց նորս, զամենայն զոյս մեր զնել 'ի նա, և փառաւորել զնա 'ի հոգիս և 'ի մարմինս մեր. (Ա. Կորնթ. Զ. 20)։

## ՅՕԴՈՒԱԾ ԶՈՐՐՈՐԴ.

### Նպատակ կրօնի.

Նպատակ կրօնին է խորհրդական և կենդանարար հաղորդութիւն մարդոյն ընդ Աստուծոյ. որ ըստ շափու հաւատոյ, յուսոյ և սիրոյ մարդոյն՝ վկայելոյն արդեամբք բարեպաշտութեան ինքանէ 'ի նա շնորհօք «Աստուածեղէն զօրութեան իւրոյ առ 'ի

կեանս և Աստուածպաշտութիւն» (Բ. Պետրոս. Ա. 3). «Յորմէ 'ի նմա իւր վասն դրնակարան հանապազորդեան» (Յովհ. ԺԴ. 23). «Այնպէս զի մարդն լիցի այնուհետև տաճար Աստուածեղէն հոգւոյ» (Ա. Կորնթ. Գ. 16), «Եկեղեցի Աստուծոյ կենդանւոյ» (Բ. Կորնթ. Զ. 16). «Լիցի մի հոգի ընդ Տեառն» (Ա. Կորնթ. Զ. 17). «Ինքն յԱստուած բնակի, և Աստուած 'ի նմա բնակի» (Ա. Յովհ. Դ. 16). «Եւ եթէ կենայ՝ Աստուծով կենայ» (Հռոմ. Զ. 10). «Եւ կենդանի է այնուհետև ո՛չ ինքն, այլ կենդանի է 'ի նմա Քրիստոս» (Գալատ. Բ. 20)։

Ի կրօնական հաղորդութենէ ասոյ աղբերանայ՝ 1. վայելչական փառաւորութիւն Աստուծոյ. իբր զի մարդն Ճշմարիտ հաւատարիմ՝ Աստուածեղէն ուխտին՝ կատարելով զկամս նորա և զաւանդեալսն ինքեանս զօրէնս, փառաւոր առնէ զնա. և ինքնին ևս բուն զեւս բերեալ յանձին իւրում զծայրագոյն կատարելութիւնս նորա՝ յորդորէ նորաք և զայլս. որպէս զի «տեսեալ զգործս մեր բարիս՝ փառաւորեսցեն զՀայր մեր՝ որ յերկինս է» (Մատթ. Ե. 16). «Յաւել 'ի նոսա զՀանձար արուեստից և զոսխս յաւիտենից կացոյց ընդ նոսա, զի պատմեսցեն զփառս նորա, և որշնեսցեն զանուն սուրբ նորա» (Սիրաք. ԺԷ. 8—9 և 7). և 2. երջանկութիւն մարդոյ. զի 'ի ձեռն միաւորութեան ընդ Աստուծոյ հասանէ մարդն առ գերագոյն վախճան իւր, որով և բնաւին ամենայն ազնուական սէրք գոյութեան իւրոյ։ Յայտնեալ յայտ է, թէ յամենայն բարութեանց՝ որոյ արժանի արար զմեզ ամենարարին մարդասէրն, առաջինն և ծայրագոյնն անառարկելոյս է կրօնն. բանզի 'ի նմա և նոքա միայն հնարաւոր է առանալ զՄեծսուն և զՀամարիտ բարութիւն և զերջանկութիւն՝ եթէ յերկրի և եթէ յերկինս։

## ՅՕԳՈՒԱԾ ՀԻՆԳԵՐՈՐԴ.

### Ճաղկապ ընդ միջ կրօնի և եկեղեցւոյ.

Մինչև ցայս վայր քննեցաք զկութիւն կրօնին՝ իբրև զուխտի ընդ միջ Աստուծոյ և ընդ միջ մարդոյ մասնաւորապէս. իսկ այժմ՝ եթէ առցուք զայն ընդարձակագոյնս, այսինքն թէ կրօնն ո՛չ է բաժին անհատից ոմանց, այլ ընդհանուր մարդկութեան. որ իբ-

բեւ բանական հոգեւոր արարածք՝ պարտական են մտանել ամենեքին 'ի կրօնական ուխտ ընդ Աստուծոյ և ընդ իրերայ, ստանալոյ զնոր իմն զգաղափար յաղագս հոգեւոր թագաւորութեան Աստուծոյ կամ եկեղեցւոյ։ Յայս միտս կրօնն համարի ուխտ ընդ մէջ Աստուծոյ և ընդ մէջ մարդոյ. իսկ եկեղեցին՝ ուխտ միաբանութեան կամ համախմբութիւնք ուխտեալ մարդկան, որոյ կապակցեալ են ընդ իրերայս յօգիս կրօնի։

Դարձեալ եկեղեցին իբրև համախմբութիւն միակրօն բանաւոր արարածոց՝ է բարոյական մարմին. իսկ կրօնն՝ որ կապէ զարարածս զայսոսիկ 'ի մի ամբողջութիւն ընդ Աստուծոյ և ընդ իրերայս, է հոգի եկեղեցւոյ. այնպէս զի կրօնն և եկեղեցին կացուցանեն անբաժանելի իմն ամբողջութիւն. ապա ուրեմն որպէս ո՛չ կարէ գոլ կրօնն առանց եկեղեցւոյ, որոյ ո՛չ գոլով բաժին անհատից ոմանց, այլ հասարակաց՝ բնականաբար համահաւասիկ զնոսա 'ի մի բարոյական մարմին, այնպէս և ո՛չ եկեղեցի առանց կրօնի. բան որում որպէս ասացաւ՝ կենդանաբար հոգի եկեղեցւոյ է կրօնն (1)։

## ՑՕԴՈՒԱԾ ՎԵՑԵՐՈՐԴ.

### Թագաւոր և շինուած եկեղեցւոյ.

Հիմնադիր և հաստատարար եկեղեցւոյ կարէ գոլ և է իրօք՝ մի և եթ Աստուածութիւնն է եռանձնեայ, (2) որ հաճեցաւ կոչել՝ ո՛չ զմի ոք 'ի մարդկանէ, այլ զամենեսեան յուխտ իւր. և այսու յօդեալ զնոսա 'ի մի միաբանութիւն հաւատոյ յայտնեալ

---

(1) Եկեղեցի բառս՝ որպէս և առ մեծագոյն մասն եւրոպացի Քրիստոնէից՝ ածանցեալ է առ մեզ առաւաղարանութեամբ իւիք 'ի Յունական էքլէկիա բառէն, որ նշանակէ համախմբութիւն կոչեցելոց 'ի կոչումն միաբանութեան։ 'Ի սաւրբ գիրս բազում ուրեք եկեղեցին նշանակէ զմիաբանութիւն մարդկան ժողովեալ 'ի գործ կրօնի (Գործ. ԺԹ. 30—39—40։ Գաղ. Ա. 13։ Ա. Կորնթ. ԺԵ. 9). և դուն ուրեք զատանար Տեառն գնիմեական, ուր ժողովին հաւատացեալք յաղագս հաստատակաց Աստուածպաշտութեան (Ա. Կորնթ. ԺԴ. 34։ Յայտնութիւն. ԺԱ. 1. Բ. 14 և 17)։

(2) Եւ նախ զայս արտաքսեսցուք, թէ զիա՞րդ չինեցաւ եկեղեցի, և վասն որո՞յ պատճառաւ. քանզի ոչ եթէ արդէն խոկ նորոգ ծանուցաւ խորհուրդ եկեղեցւոյ, և կարդ՝ որ 'ի սմա, ոչ առ ժամայիւրք են, այլ յաւիտենականք. և տեսանելիս այս իմանալիք՝ ոչ մարդկային իմացուածք, այլ հոգւոյն արրոյ յայտնութիւնք. . . քանզի իմաստութիւնն Աստուծոյ չինեաց զՀայրենի տունն՝ ոչ նորոգ, այլ զանկեալն զի՝ ակդրանէն՝ որ յԱդամայ (Յովհան իմաստասէր. նառ եկեղեցւոյ. եր. 132)։

ճշմարտութեանց իւրոց, և զարդարեաց զնոսա այնպիսի կարգութեամբք, զի կենդանագործեալքն ոչ բաժանեսցին, այլ համայնական ընկերութեամբ. և զի միաբանական ճգամբք զիմեսցեն առ զերագոյն նպատակ գոյութեան իւրեանց՝ կատարելով զպայմանս կրօնի։ Որպէսզի եթէ զմտաւ ածցուք, թէ նա կոչէ զամենայն մարդ յուխտ հաւատոց ընդ իւր 'ի ծննդեանէ անտի իւրաքանչիւր ուրուք՝ ապրիլ նոցա զայնպիսի կարգութիւնս և զկարգս, որպէս զի զիմեսցեն ամենեքին միշտ առ ինքն իւր առ վերջին նպատակ գոյութեան իւրեանց, զիրեաս հաւանիմք խոստովանիլ, թէ առաջին եկեղեցին երեւեցաւ յաշխարհի իսկ և իսկ, յորժամ առեղծաւ մարդն առաջին, և եկեղեցին անդրանիկ ամփոփեալ էր 'ի նախատեղի ճեռս մարդկութեան՝ Աղամ և Եւա (1)։

Ամենեցուն հարկ է անշուշտ ծնանել և կեալ յեկեղեցւոջ և զոլ անդամ այնորիկ առանց բաղդատութեան. քանզի այս են կամք արարչին Աստուծոյ, որ հրաւիրէ հաւատարդէս զամենայն որ մտանել յուխտ հաւատոց ընդ իւր և յուխտ հաղորդութեան ընդ իւրեանց. զոյն ստահանջէ նաեւ կազմութիւն բնութեան մարդոյ. քանզի բնութիւն ամենեցուն նոցա մի է և նոյն և հոգեւոր, յորմէ ծագի համակրութիւն միոյ առ միւսն, և բերումն ամենեցուն նոցա առ սէր փոխադարձ և առ միաբանութիւն։ Ամենայն մարդ բնութեամբ սիրասէրն է. յորմէ հետեւի բնականաբար, թէ իւրաքանչիւր որ 'ի նոցանէ պարտական է ճանաչել զանձնահաստութիւն կարգութեանց իւրոց յամենայնի, և կարօտիլ զարծակցութեան ընկերի իւրոյ, որ նոյնպէս չարժէ զնոսա առ միաբանութիւն։ Բառ կազմութեան բնութեան ոչ են ամենեքին հաւասարապէս միմեանց, այլ ընկալեալ Աստուծոյ առաւել կամ նուազ յոյժ՝ զտաղանդ և զկատարելութիւնս։ Ցայսմանէ զարձեալ 'ի յայտ գայ նոր և բնական կարեւորութիւն միաբանութեան, և փոխադարձ նպատակի և գործակցութեան իւրեանց։ Վերոյիշեալ հանգամանք համոզեն ընդհանրապէս զամենայն որ

---

(1) Այսոքիկ բիւրապատիկ բարեաց աղբիւր խորհրդածի առաքեալն. և մեզ ոչ միայն յայտնեա, այլ և 'ի հանդերձեալն յաւիտենից լինելոց է տեղի ապաշնութեան՝ ակդիսարկալ 'ի կանխութենէ լինելութեան արարածոց յանակիրդն Աստուածէն, որ նա ինքն է սկիզբն և կատարած հաւատոյ եկեղեցւոյ, և առ միմեանս միաւորութեան օրինակացն և ճշմարտութեան (Յովհաննէս իմաստասէր. հատ. եկեղեցւոյ. եր. 139)։

'ի մարդկանէ՝ մտանել 'ի յուխտ հաւատոց կամ յեկեղեցի Աստուծոյ Հիմարութի առ 'ի լնուլ զաղնուագոյն կարգիս բնութեան մերոյ։

## ՅՕԴՈՒԱԾ ԵՕԹՆԵՐՈՐԴ.

Նպատակ եկեղեցւոյ — զի՞արդ մարդ է հատանել այնմիկ.

Եթէ Աստուած հաստատեաց յերկրի զեկեղեցի՝ (որպէս և է ստուգիւ), սահմանեաց այնմ 'ի հարկէ իրրեւ ամենիմաստուն նախատահմանութիւն՝ և զվախճան։ 'Ի վերաբերութենէ եկեղեցւոյն առ կրօնն՝ տեսանի ակներեւ, թէ նպատակ երկոցուն նոցա մի և նոյն է՝ այնու և եթէ զանազանութեամբ, զի յեկեղեցւոջ իրրեւ 'ի հոգեւոր միաբանութեան՝ հարկ 'ի վերայ կայ անդամոցն փութալ հասանել վախճանի իւրեանց՝ ոչ անհատապէս, այլ միաբանեալ գործակցութեամբ։

Նպատակ կրօնին՝ որպէս ասացաւ 'ի վերոյ, է ուխտիւ միաբանութիւն մարդկան ընդ Աստուծոյ, որով փառաւորի նա 'ի բանական արարածս իւր, և երջանկանան նորին։ Ա՛ռ այս գերագոյն վախճան առաջնորդէ անդամոց իւրոց ամենեցուն՝ եկեղեցին. զոր և դաստիարակեալ հաստատէ 'ի հաւատս 'ի յոյս և 'ի սէր, կոտարէ 'ի ոգեւոր նոցա ըստ նոսա զհաստատակաց Աստուածպաշտութիւնս, և ամենայն հնարիւք նպաստէ նոցա զարգանալ և աճիլ յԱստուածպաշտութեան և յառաքինութեան։

Եկեղեցին ժամանէ 'ի նպատակ իւր երիւք եղանակաւք, եթէ նախ՝ առ 'ի առաջնորդել անդամոց իւրոց 'ի պաշտօն փառաց Աստուծոյ 'ի միաբանութիւն ընդ նմա փառն երջանկութեան նոցա յաւուր և յանուր կեանս՝ դաստիարակեալք զնոսա 'ի հաւատս հիշմարտութեան, 'ի սէր հիմարութեան և 'ի յոյս անեղկեանն. և յայս սակս հարկ է անշուշտ, զի իցէ 'ի նմա անսխալ ուսումն հաւատոց կամ Աստուածաբանութիւն։ Երկրորդ՝ եթէ առ 'ի կատարել 'ի սէրս անդամոց իւրոց զհրաշալի՝ Աստուածպաշտութիւնս 'ի ցոյց գոհութեան զերախտեացն Աստուծոյ և 'ի մեծ շինութիւն անձանց՝ կայցէ 'ի նմա քահանայապետութիւն։ Երրորդ՝ եթէ առ 'ի հրահանգել զանդամս իւր 'ի հաստատութեան և յամման բարեպաշտութեան՝ զուանիցի 'ի նմա եկեղեցական կամ հոգեւորական կառավարութիւն։

# ՅՕԳՈՒԱԾ ՈՒԹԵՐՈՐԴ.

## Յայտնութիւն.

Յայտնութիւնն է աբանչելի գործ մարդասիրութեանն Աստուծոյ. զոր որոյ հաճեցաւ հաղորդել մարդոյ 'ի սկզբանէ յաւիտեանից՝ զգաղտնածածուկ և զանհաս ճշմարտութիւնս հաւատոյ։ Ա. 'ի հանդամանաց 'ի միտ առնուլ զկարելիութիւն կամ դիւրաւորութիւն յայտնութեան՝ կարեւոր է զիտել, թէ՝ 1. Դիւրաւոր է Աստուծոյ տալ յայտնութիւն. 2. Դիւրաւոր է մարդոյ ընդունիլ զայն. 3. Դիւրաւոր են ճշմարտութիւնք, զորս հաճեցաւ Աստուած 'ի ձեռն յայտնութեան աւանդել մարդոյն։

Յ. Աստուածաստ կոչմանէ ո՛չ միայն դիւրաւոր է յայտնել մարդկան զդոյութիւն իւր և զկամս, այլ և անաւաղելի. իբր զի նա զոչով էակ ամենիմաստ՝ զիտէ զամենայն զոչէս մեր և զգաղտնիս, և զիտէ լաւագոյն եւս՝ քան որչափ մեք. զիտէ՝ առ որչա՞փ ինչ բաւական եմք, զորս շնորհեցին մեզ բնական կարողութիւնք, և յի՞մ իմիք կարօտ գտանիմք զերբնական օգնականութեան իւրոյ։ Աստուած է զոյութիւն ամենակարող և անվայրապակ, որում հնազանդին միանգամայն՝ որ ինչ են յերկինս և յերկրի. նոքաւ արարան և 'ի նմանէ խնամարկին նիւթականն և իսանալի աշխարհք. յայս ասկս ունի ընդ իշխանութեամբ իւրով զամենայն միջոցս առ կատարումն կամաց իւրոց։ Աստուած իրրև իշխան իսանալի աշխարհի, և իրրև հոգի ամենասուրբ՝ զիտէ ինքեանմբ անմիջապար ազդել 'ի հոգի մեր բնազանցապար, լցուցանել զիմաստութիւն մեր զերբնական լուսով, բանալ և ծանուցանել նմա զրանս և զիրս անտեսեալս, և խօսիլ առ նա 'ի տեսլեան կամ հնչրատպէս, եւայլն. որպէս այս ամենայն յայտ է յանցիս Մարգարէից և Առաքելոց։ Աստուած իրրև միահեծան Տէր նիւթականն աշխարհիս՝ զիտէ ազդել 'ի հոգի մեր 'ի ձեռն նիւթականն իրաց՝ գործակցութեամբ արտաքին զգայարանաց մերոց. զիտէ օրինակի ազագաւ զգեղուլ առ ժամանակ զկերպարանս մարդոյ, և երեւիլ արդարոյ ուստեք առ 'ի հաղորդել նմա զյայտնապարնութիւնս իւր, որպէս երեւեցաւն հօրն Հաւատոյ Աբրահամու. զիտէ երեւիլ զարձեալ այլ և այլ մարմնաւոր կերպարանաւք, որպէս երեւեցաւն Մովսիսի յանապատին և 'ի լեռան Սինա, յորժամ տայր զաստուածն Իսրայէլացւոց։ Աստուած է անհունապէս

արդար և բարի, իսկ մարդն չափազանցապէս կարօտ առաքինութեանց այսոցիկ. ուրեմն դիւ՞րդ հնար է ո՛չ 'ի միտ առնուլ, թէ հանդէս բարութեան և արդարութեան նորա՝ ո՛չ զլսացէ մարդոյն զօգնականութիւն իւր։

Աստուած է սրբութիւն սրբութեանց. իսկ յայտնութիւնն ո՛չ յայլ ինչ ոչինչ է, բայց եթէ վասն բարոյական սրբութեան մարդոյ։ Աստուած է գերագոյն ճշմարտութիւն. որում առելի են այժմ և յաւիտեան՝ ստութիւն և մոլութիւն։ Իսկ յայտնութիւնն յայն տակս է, որպէս զի սրբեալ մարդեացի կրօնն 'ի մոլութեանց յամենայնի։

Ա. ընդունելութիւն գերբնական յայտնութեան 'ի կողմանէ մարդոյն՝ չիք և ո՛չ մի ինչ արդեաք. ըստ որում եթէ նա բաւական եղեւ և է ուսանիլ ճշմարտութիւնս յարտարնոյ, հի՞մ յԱ. ստուծոյ միայն ոչ։ Մարդն իրրեւ 'ի հոգւոյ և 'ի մարմնոյ գոյացութիւն՝ ընդունակ է հաւասարապէս հոգեւոր և մարմնաւոր տպաւորութեանց. և յայս տակս կարող է նա ընկալնուլ նաեւ յԱ. ստուծոյ զյայտնութիւնս՝ եթէ պարզ հոգեւորապէս, եթէ 'ի ձեւրն զգալի նշանաց։

Ճշմարտութիւնք՝ զորս հաճեցաւ Աստուած յայտնութեամբ աւանդել մարդոյն, ո՛չ են անհնարինք. զորս առ 'ի բարւոք 'ի միտ առնուլ՝ քննեցուք տակաւ մի ընդարձակօրէն։ Ախանդ գերբնական յայտնութեան է օգնել անդիտութեան մարդոյն։ Ճշմարիտ յայտնութեանց երկու են տեսակք՝ ոմանք հասանելի մարդկեղէն մտաց զոլով, այլք անհաս։ Կարելիութիւն առաջնոյն անտարակուսելի է և ամենեցուն վկայեալ. իսկ երկրորդն՝ որ գերազանց է քան զհասողութիւն մարդկային մտաց, կոչի խորհուրդ։ Աստարկայ յայտնութեան է կրօնն կամ ուխտ ընդ մէջ Աստուծոյ կամ ընդ մէջ մարդոյ. ուրեմն ճշմարտութիւնք յայտնութեան խօսին զԱստուծոյ, զգերագոյն յատկութեանց նորա, զանվախճան կատարելութեանց և զվերաբերութեանց նորա առ աշխարհ և առ մարդ։ Երկրորդ՝ խօսին զմարդոյ անհատաբար կամ համայնաբար 'ի ներկայ, յանցեալ և 'ի հանդերձեալ վիճակս ուսեալ։ Երրորդ՝ խօսին զանձերեւոյթ, զանմիջական, և զիմանալի հաղորդութենէ և զմերձութենէ ընդ մէջ Աստուծոյ և ընդ մէջ հոգւոյ մարդոյ. ամին իրի՞ է՞ որ համարձակիցի ասել, թէ յամենեսին 'ի սուտ ո՛չ կայցեն մեր վասն բազում ինչ բոլորովին անհաս։

Ընդհանրապէս գաղտնիք զերկուս ընծայեցուցանեն զերեսիս-գոմին ընդ ազգս և անհաս մնաց մերոց, զմիւսն դիւրիմաց և պայծառ. իբր զի իւրաքանչիւրն յայտնեսցէ յայտ առնէ զորիշ խնամս և զորիշ հմտութիւն. որոց բովանդակութեան լիովին ոչ հաս առ կարէ զոչ միայն մարդոյ՝ առանց նոսա հասու լինելոյ ներքին յոգուածոց մեր մի 'ի նոցանէ։ Օրինակի ազգաւ. անկումն մարդոյ յայտ առնէ պարզապէս, թէ մարդն նոսա ստեղծաւ անմեղ և տուրբ, և ապա յանցուցեալ Աստուծոյ ծծեաց զիւրոյն մեղայ. որոյ ապականեալ բոլորովին զրնութիւն նորա՝ ապրածեցաւ ապա իրրև անբաժան շար 'ի նախահարոյ յամենայն ազգ մարդկան։

Գաղտնիք մարմնաւորութեան յայտ առնեն զպայծառ հմտութիւնն, թէ որդին Աստուծոյ ոչ զգաղարեալ 'ի գոլոյ Աստուած՝ հաճեցաւ եղանիլ մարդ, և յանձին իւրում միացոյց զբնութիւնս Աստուածային և զմարդկային։ Գաղտնիք փրկութեան քարոզեն զայն անսերկեան հմտութիւն, թէ մարմնացեալ Աստուածորդին մեռաւ մեղայ մերոյ 'ի խաչին, զի լցուցցէ զարդարութիւնն Աստուծոյ փոխանակ մեր, և ընկալցի մեր ասէր զամենայն «Աստուածեղէն զօրութիւնն առ 'ի կենաս և Աստուածպաշտութիւն» (Բ. Պետր. Ա. 3)։ Գաղտնիք վերատին ծննդեան և արդարութեան բացայայտ են, թէ մեք արքմբք յամենայն ազգութենէ մարմնոյ և 'ի հոգւոյ, և զարդանամք յառաքելութիւնս՝ միմիայն օգնականութեամբ արքարար շնորհաց Աստուածեղէն հոգւոյն. եւայլն։

Իմաստք խորհրդոցս ըստ զօրութեանն բովանդակապէս հասկանալի զոլով մարդոյ՝ մեզ ասկաւ 'ի մէնք անհաս, թէ զիա՞րդ կարաց իւրոյն մեղայն խանգարել զբովանդակ բնութիւն մարդոյ և ապականել զազգ մարդկան առ հասարակ. զիա՞րդ Աստուած մարդացաւ, զիա՞րդ մահ Փրկչին կարաց ազատել զմեզ 'ի մեղայ, յանէծից և 'ի մահուանէ. և զիա՞րդ Հոգին սուրբ վերատին ծնանի և նորոգէ զմեզ շնորհաբ իւրովք։ Մինչև եմք ծանուցեալ զանկմանն զգաղտնիս՝ անհնարին է մեզ հասու զոչ՝ ուստի՞ բնական և բարոյական շար, ո՞յր ազգաւ այսպէս թշուառ և եղկելի է վիճակ մարդկան յաշխարհի. մինչև եմք ծանուցեալ զգաղտնիս մարմնաւորութեան, փրկութեան և արքութեան՝ ոչ է հնար 'ի միտ առնուլ և խառնուվանիլ զամենակատար Աստուծոյ աշխարհի և զնախախնամութիւն նորա, և

զնչաստակ գոյութիւնն մարդոյ շուրջ պատելոյ յաշխարհի յայս-
քան չարեաց և 'ի թշուառութենոյ, ասացն։ 'Ի վերայ այսր ա-
մենայնի նպաստակ յայտնութեան ո՛չ միայն է, զի օգնեսցէ ան-
զգաստութեան մարդոյ 'ի գործ կրօնի, այլ զի և մշակեսցէ գբարո-
յական նորա, յուցանիցէ նմա զանեղունդն՝ ուր մոլեն զնա մո-
լութիւնք իւր, զծայրագոյն երանութիւնն՝ առ որ ածեն զնա ա-
ռաքինութիւնք իւր, միով բանիւ առաջի դնել նմա զկզբագոյն
յորդորս և զբդիռս՝ առ 'ի բարգաւաճել և 'ի պտղաբեր լինել 'ի
բարեպաշտութեան և Աստուածպաշտութեան։

Վերջապէս մարդն բան ամենայնի յարմար է և բաւական առ
ընդունելութիւն զաղանեաց յայտնութեան. բան որում որպէս
յայտնի է՝ նա բան տրամադրութեան մնաց իւրոց ընդունի ծրշ-
մարտութիւնս երկակի հանապարհս, զմանս հանաշխմամբ և
զոյլս հաւատովք, այսինքն զառաջինսն 'ի ձեռն միտքոյ և իրա-
կան համոզման, և զերկրորդսն հեղինակութեամբ և վկայու-
թեամբ Աստուծոյ. որ իբր ամենահաճարիս՝ ո՛չ երբէք կարէ
սուտ. որ և յայտնէ այնպէս, զի մարդն համոզեսցի և հաւա-
տացէ անսխալութեամբ, թէ արդարև Աստուած է՝ որ խօսի
ընդ ինքեանս։

## ՅՕԴՈՒԱԾ ԻՆՆԵՐՈՐԴ.

### Յայտնութիւնն անչուշտ կարեւոր է.

Զիր ամենեքին տեղի տարակուսանաց, թէ մարդն ունէր և
ունի արդ ևս այժմս Աստուածոյս յայտնարանութեան. բան
որում նա յարգեան միմեանցի իւրում՝ անձին կարողութեամբ
անբաւական է գրեան թէ բան ամենայնի ուղղապէս ճանաչել
զԱստուած, արժանապէս պաշտել զնա, և հաճանիլ ընդհան-
րապէս փափաքանի իւրում. յայս ասեն և շնորհեցաւ նմա առ 'ի
յԱստուծոյ յայտնեալ կրօն։ Թերութիւն բնական կրօնի և ան-
շուշտ կարեւորութիւն գերբնականին ակն յանդիման յայտնի լի-
նին, եթէ 'ի միտ առցուք՝ 1. թէ առ ապայ՝ որք ո՛չ են լուսա-
տրեալ լուսով գերբնական յայտնութեան, կրօնն գտաւ և գը-
տանի միշտ յորդորմանի միանակի. 2. թէ ոչինչ խմաստասիրութիւն
և ընդհանրապէս ոչինչ մարդկայնի հանճար 'ի սկզբանէ աշխարհի
կարաց երբէք, և ո՛չ իսկ կարող եղեւ հանել զմարդն 'ի ցաւա-

գին վիճակէ՝ առանց գերբնական գործակցութեան Աստուծոյ։

Պատերազմ կարելի է անշուշտ՝ 1. լուսաւորել զազգ մարդկան լուսով ճշմարիտ գիտութեան կրօնի, որ է սիրոյն փրկութիւն նորոգութեան, 2. հաշտեցուցանել զմարդիկ ընդ Աստուծոյ, զոր անհնազանդս միջնաբերին՝ զանց ասելով զնոսին ուխտս նորս, և 'ի ձեռն հաշտութեանս վերահաստատել զբարեխոսել, որ է միջին կիսոյ փրկութիւն նորոգութեան, 3. վերջապէս ուղղել զբարոյականն մարդոյն՝ զարձուցանելով զնա 'ի շարութենէ և 'ի մոլութենէ 'ի բարութիւն և 'ի արդարութիւն, որ է վերջին փրկութիւն նորոգութեան։ Զորս՝ կատարին երեքին թէ՝ մարդս այսոքիկ՝ մարդն անգրէն մնանէ 'ի խորհրդոցն վերանութիւն և 'ի հաղորդութիւն ընդ Աստուծոյ՝ յաղագս փառաց նորս և երջանկութեան իւրոյ. այլ մարդն ոչ է բաւական անձին կարողութեամբ առնել և ոչ զմի յոյսցանէ։

## ՅՕԴՈՒԱԾ ՏԱՍՆԵՐՈՐԴ։

Քարոզչին խնամատարեանն անհնարին է լուսաւորել զազգ մարդկան լուսով գիտութեան ճշմարիտ հաւատոյ։

Մարդկային խնամատարեան անհնարին է լուսաւորել զմարդիկ լուսով գիտութեան ճշմարիտ հաւատոյ։ Դէպս՝ զի ոչ ծանեաւ ինքն երբէք քիմիին, և ոչ իսկ ճանաչել կարող է, երբ և իցէ, զատարկայս ուսման՝ որ է Աստուած, անհնարութիւն մարդկային հոգւոյ և վերանալն նորա, բարոյական շարութիւնն, եւայլն։ Եթէ զի այնպիսի խնդիրք են ասին, որ ոչ անկանին ընդ փորձով, և յայս ասեալս յարդեան վիճակի մերում անհասանելի են մտաց մերոց, և մինչև փորք 'ի շատ տեսանելի՝ իբրև «Ընդ Հայելի օրինակաւ» (Ա. Կորնթ. ԺԳ. 12). յայս ասեալս և հանուելոյ ասանելոյ, թէ չիր մարդկային գիտութիւն բոլորովին ազատ 'ի սխալանաց և վարանումանց անհնարակելի, թէև հաստատութեամբ ունելով զբանն Աստուածային (Գործ. ԺԴ. 17։ Հռով. Ա. 20) ոչ ժխտեմք զգիտութեան հանրապետիս. այսինքն թէ՝ ձեռնհաս է մարդն հաստատ գոլ զոյգն իւր գերագոյն խնդրոյն այսոքիկ։ Սակայն իբրև մեծանուն խնամատարքս անգամ՝ եթէ առաջինքս, եթէ արդիք, չեղեն բնաւին ազատ 'ի մոլորութենանց 'ի խնդրիս կրօնի, և ամենեք խառնուեան եղեն նաև յայտնապէս

զոհաստութիւն մարդկային բնեալոց՝ նկատմամբ Աստուծոյն բնեալ-
բոց, եւ և զկարեւորութիւն վերին նպատակաց։ Երկրորդ՝ ըստ ո-
րում անթիւրեալներն և անհնազանդներն 'ի մեռելոց մարդոյ վրեայ բնդդիմ
հիմնական մարդասիրութեանց հաստատեալ, ասին իբրեւ խնամատարքս
անգամ ոչ կարացին իրրեւ անելիքաց համարձակեալ բռնաբարանել
զՁշմարտութիւնս կրօնական գաղափարաց իւրեանց, թէ և տրին
և ոչ էին իրաւք Ճշմարիտս, և զի ոչ էին նորա համարձակ լիովին
'ի միտս իւրեանց, թէ զիա՞րդ ուրեմն Ջանադիր լինէին 'ի միջի
այլոց ծառայել զնոսին։ Երրորդ՝ ըստ որում խնամատարքս՝ թէ և
համարձակք ընդ Ճշմարտութիւն կրօնական գաղափարաց իւրեանց,
այսու ամենայնիւ ոչ երեւեցուցին երբէք զգաստութեամբ հաս-
տատութիւն և զանձնուրացութիւն 'ի քարոզելն այլոց զնորանշնար
կրօնս իւրեանց, և 'ի տարածելն զնոսա թողուլ զանազանութիւն
հարցն. որպէս եղոյց պատմութիւն տարածման Քրիստոսական
կրօնի. «առ այս ո՞ բարեկամն իցէ» (Բ. Կորնթ. Բ. 16)։ Գիւ-
տեմք զբազումս 'ի նախնի խնամատարեաց, որոց տային են Պիսիա-
գորաս, Պղատոն, Իպիկուրոս, Մարկոս Անտոնինոս և այլք. որք
յորժամ 'ի հանգամանս 'ի սենեկի իւրեանց գտանէին՝ ծարդ հա-
մարձակապէս զանազանութեամբ խոժանին առանէին, և ճառա-
կեալ խօսէին զԱստուծոյ. այլ իրրեւ 'ի վերայ հասանէր ժամն՝
ուր հարկ էր հրապարակաւ յայտնել զկարծիս իւրեանց, ակա-
նէին որբանական թեան համարձակեալ խօսիլ զԱստուծոյ, և կեղծա-
ւորութեամբ քարոզել, թէ արժան է երկիր պագանել անշուն-
անգրեանց, հարկ է զոհել նոցա և անխիստ պահել զաւանդս կրա-
նի նախնեաց։ Զորրորդ՝ ըստ որում տարածանութիւն մեծ է և
հերձուած 'ի միջի խնամատարեաց և խնամատարական ամբոխ
դարուցաց, որպէս յառաջնոյն, նոյնպէս և մասնաւորապէս 'ի կրօ-
նական ասմունս նոցա. յորոց զոր ինչ բնդդէմ մեռելոց ասացք՝
միւսն հերքէ իրրեւ կեղծիս. և այսպէս անելմտեան հակասա-
կութիւն տեսէք յառաջնոյ խնամատարիկ ասան աշխարհի մինչեւ
յետերս մեր։ Զատ զի միայն մարդոյ ըստ բանական յատկու-
թեանց իւրոց, ըստ եղանակի կրթութեան, ըստ շարժու և ըստ
հանգամանաց զարգացմանն փոփոխիս միջոց, և բազում անգամ
ինքն ինքեան հակառակէ. և զոր այսօր իրրեւ ասացք Ջատագովն,
առ վաղիւն իրրեւ անելաներ թեան խոսէ։ Չինգերորդ՝ ըստ որում
'ի միջի խնամատարաց շեղեալ երբէք ասեան զերազոյն ասա 'ի որս-
շեալ զվէճ ընդ հակառակս խորհուրդսն, որով վճիռն իրր ամենաբա-

խելքի և անսխալ ընդունելի լինէր համայնից. և զի չէր աստուն այսպիսի, յայտնանէ հեռուէն բնականապէս, զի զոր ինչ կանգնէ այսոր խնամասէրն ար՝ զայն 'ի վարձեն այլք կործանեն. և ժողովուրդն սեռեալ զանհամաձայնութիւն կարծեաց 'ի նոսա՝ և ոչ միաւորեալ 'ի նոցանէ յոժարիւ զնեալ։ Ի վերջոյ բաց յընդունայնութենէ մարդկային խնամատարեան՝ սեռանի և երեւելի ինն թերութիւն. բաւ որոյ շուրեն խնամասէրք զհեղինակութիւն ինչ առ 'ի տարածանել 'ի միջի նմանեաց իւրեանց զկրօնական զաղափարս իւրեանց՝ բառնալով 'ի նոցանէ զ'ի նախնեաց առանդեալ հաւատս՝ իբրեւ զառ 'ի Աստուծոյ։ Խնամասէրք թէ և չշաւանեն երբեմն զճշմարտութիւն, այլ ո՛չ է 'ի յարդի ասուն նոցա. քանզի 'ի մարդոյ բղխի և ո՛չ Աստուածային հեղինակութենէ. յայս ասեն ոչ ոչ է՝ որ հաւատայ այնպիսեացն՝ գիտելով, թէ և աստուցիչն ինքնին մարդ է այնպիսի, որպիսի որ ունկնդիրն է. ամենի իրի և չէր երբէք հնար մարդկային խնամատարեանն բաւարել զմարդիկ զիտութեամբ ճշմարիտ հաւատոց։

## ՑՈԴՈՒԱԾ ՄԵՏԱՍԱՆԵՐՈՐԴ.

### Մարդկային խնամատարութիւնն անբաւական է հաստատուցանել զՀաւատս ընդ մարդոյ։

Ոչինչ մարդկեղէն խնամատարութիւն բաւական եղեւ ցայս վայր հարկել զանանապարհ ապահով Աստուածգիտութեան, ընդ զարգացութիւնն Աստուածային յաղագս մեզոյ մերոյ, հաստատուցանել զմարդ ընդ Աստուծոյ, և հաստատել վերատին զուխտն կործանեալ 'ի միջի նոցա։ Ուրեմն անմատութիւն էին և են արարք այնպիսեացն, որք կարծէին 'ի ձեռն բուսական մարմնոյ արթել զանձինս 'ի պղծութենէ մեզաց, զորով ծագր առնեն Հեթանոսք անդամ։ Անմիտ էր և է ընդհանուր ցոյս Հեթանոսաց. բաւ որոյ զԱստուած զցաստուցեալն 'ի վերայ ամբարշտութեանց մարդկան՝ ակն ունէին յոգւոյ՝ շարժել 'ի ձեռն նուիրաց և յատկարէս 'ի ձեռն զոհից անբան կենդանեաց, զորով արշամարհէ և Աստուածն. «Ոչ կարէր արիւն նոխազաց և ցլոց բառնալ զմեղս» (Եբր. ժ. 4)։ Եթէ զոհաստրծութիւնք Հրէից ունէին զարգիւնս և զկարողութիւն յայսմ մասին՝ յայն ասեալ էր, զի նոխազ-

զարմանալի էին նորին հանդերձեալ համաշխարհական պատարագին, որ մատչելոյն էր 'ի Գողգոթա։ Անհիտ է 'ի վերջոյ և վարդապետութիւն բնապաշտոյ (1), որք կարծեն, թէ առ հաշտութիւն մարդոյ ընդ Աստուծոյ բաւական են անկեալ ապաշաւ մարդոյ 'ի մեղայ և ուղղութիւն վարուց՝ թարց ամենեւին օգնութեան Աստուածային շնորհաց։ Աստուած ոչ երբէք կարէ ջնջել զմեղս՝ զորս գործեցաք, և անհնար առնել զհետեւանս՝ զորս թողին այնոքիկ 'ի բնութեան մերում։ Եթէ այս լինէր ես, քայց և այնպէս Միայնոյ՝ որպէս և յառաջն, բնութեամբ «արդարն որդիք բարկութեան Աստուծոյ» (Եփես. Բ. 3). վասնզի մեղքն յամենայն ժամ և յամենայնի հակառակ է ամենասուրբ և անհուն արդարադատ Գոյութեանն և վերատեսչի։ Ուղղութիւն վարուց և բարի գործք մեր ոչ բնաւ կարեն լինել արիւնաւոր կամ քաւութիւն նախկին յանցանաց 'ի զատուղական առաքելի յաւիտենական Այդարոյն. վասնզի բարեգործութիւնք՝ զոր սկիզբն արարաք գործս՝ թէ յայս ինչ օրէ կամ ժամանակէ գործել, վասն այնր միջոցի ժամանակի և եթէ բաւական են. մանաւանդ թէ են արարիչ արարողականութիւնք մեր. իսկ նախկին յանցանք և անօրէնութիւնք մեր Միան ըստ առաջնոյն յանցաւորութիւնք. ո՞ւր Միայ՝ որ առաւելն է, և այն թէ չիք ճար, եթէ ուղղութիւն վարուց և բարոյական վերածնութիւն անկեալ 'ի մեղս մարդոյն՝ յաջողիցեն անձին առանձին կարօղութեամբ։

## ՑՈԴՈՒԱԾ ԵՐԿՈՏԱՍԱՆԵՐՈՐԴ.

Եւ միանգամայն անկարող՝ առ 'ի արդել կամ վերատին մեանիլ զմարդն 'ի բարոյական ապականութենէ։

Իմաստութեան մարդկայնոյ չիք հնար արդելոյ կամ վերատին ծնանելոյ զմարդ 'ի բարոյական ապականութենէ։ Իբր զի եթէ ոչ կարաց մարդկային իմաստութիւն լուսաւորել զմարդիկ լուսով ճշմարիտ Աստուածգիտութեան, եթէ ոչ զիտաց գտանել հնարս առ 'ի հաշտեցուցանել զմարդն ընդ Աստուծոյ, չիք տարակոյս ասելն, թէ և ոչ բնաւին կարող իցէ արդել դարարոյական վիճակ մարդկային ազգի։ Իբր զի առաջին ապայման արդու-

(1) Քանաց և ոչոց։

թեան է անվրէպ՝ ճանաչել դրաբարեան օրէնս, և ուղղութեամբ ուսուցանել զնոսին մարդոյ. այլ բան ինչպէսզի զարուարս փորձոյ՝ մեծամեծ-խնամանքս անգամ 'ի բոցատրելն զրէնս զայս և 'ի բարեմարդութեանէն զայն մանաւանդ պարագայից կենաց՝ անկեալ խրեցան 'ի մեծամեծ մոլորութիւն։ Յառն ընդ չինող կանանաց բարոյականութեան նշոլելոց 'ի հին, և յաւէտ ես 'ի նոր բարոյուսոյց խնամասէրս՝ բազում անգամ ապատանի տեսանել և կանանս, որ միանգամայն ասապատիր են իրարանցն և միանգամայն բարերարութեան։

Երկրորդ պայմանն է շնչել 'ի մարդիկ բան օրինացն և գրաչաշէրութիւն զարուարս առ կատարումն օրինաց, որպէս զի հրաժարեցցին նորա յառանչին մոլութեանցն, զանգեցին առանձկութեանցն, և ազդեցցի 'ի նոսա սէր առաքինութեան. այլ զնամանաւորիկ բաղձալերութիւնս ուշ է զարթ մարդկացին մասայ զասանել առանձին հանճարով իւրով. իբր զի զուրարանք ինչ ցուցանել կարէ առ այս նպատակ. — թերեւս զնանաչումն ժամեմ բարոյական ազգաց, թերեւս զառաքինութեանն զչքնաղութիւն և զմեղութեանն զգարշութիւն, թերեւս զնայն իրաւի՝ որ փորձս խոստանայ քեզ առաքինութեան, և զարատհաս զարատանայ ընդ անարգնութեան. այսու ամենայնիւ ազնուագոյն այսորիկ խրախոյսք ուշ երբէք ազդել կարացին, և ոչ իսկ կարեն մեծագոյն մասին մարդկան ընկղմելոց 'ի հեշտութիւնս մարմնոյ, և որոց իշխեն կիրք, մինչչեւ են ուղղեալ նորա զիարս նոցա. թերեւս ցուցանիցեն, թէ առաքինութիւն է ապահովագոյն պարագայ բարեբաստութեան, և ընդհակառակն մեղութիւնն՝ շատ իրաւ կրաստանան թշուառութեանց. այլ մինչ զընդգէմն անուրանալի ճշմարտութեանս ո՞ չ ցուցանեն ընթացք գործոյ մարդկան. մինչ է ո՞ չ տեսանեմք փորձս, թէ դիտ՞ոյզ տագնապին անմեղք և բարեգործք. և շարագործք ո՞ չ յաղթանակեն և փայլեն 'ի բարեկենդանութեան։

Վերջապէս 'ի պէտս ուղղութեան մարդոյ ուշ է բաւական բացատրել նոսա միայնակ զպատուիրանս բարոյականութեան, և առաջի դնել զկարեւոր քաղաքս բարեգործութեան, հարկ է նաև շնչել 'ի նոսա այսր ազգաս և գրութիւն, յորմէ յարդեանն խանդաղատեալ միանգամի բնութեան մերոյ գրկեալ է ամենայն որ (Հռոմ. Է. 14). իբր զի ուշ մեզն ձգտեմք 'ի մեզս, այլ ծրեանութեամբ իսկ 'ի մեզս, և ծնանիմք մանաւանդ հանդերձ հա-

կամաւորութեամբ առ մեզ՝ ըստ վկայելոյ Աստուածային բանին (Աղաղ. Ծ. 7), զոր խոստովանիր և Պղատոն երևելին խնա-տասիրաց։ Հակամարութիւնս այս՝ ըստ բանից սրբոյն Պօղոսի է «Օրէնք յանդամս մեր գիտեալ հակառակ միտաց, և գերեալ զմեզ օրինաւքն մեղաց» (Հռոմ. Է. 23)։ Հակամարութիւնս այս է աստի՝ զի օրէնքն Աստուծոյ՝ որ տուեալն է 'ի բժշկութիւն մեղաց, յինքն ասիս մարդոյն պատճառս մեղաց (Հռոմ. Է. 7—10)։ Մարդն իւրովքն ոչ երբիք զօրէ քանցել և իրել յանձնել իւրմէ դրդոյս-կան միտութիւնս զայս. զի առ այս պէտս ունի միւսասեղծելոյ զգոյութիւն իւր, ընդ որ միանգամայն թափանցեալ է քան մեղաց (Յեղափ. Ա. 15։ Երեմ. ԺԳ. 23)։

Յառաջ բերեալ 'ի վերս անդր դիտաւորութիւն՝ ցուցանեն ակ-նեարեւ զթերութիւն բնական կրօնի, որ գտանի իրաւ յաղեստա-գոյն միմանցի. առ որս 'ի մարդկանէ ան գէտ են Աստուածային յայտնութեան. ամենեքեան իրի եթէ չէր որ 'ի մարդկանէ՝ որ զօրէ բաւական զմարդկութիւնն մաքրեալ լուսով դիտութեան հրչ-մարիտ կրօնի, հաշտեցուցանել զմեզաւորս ընդ Աստուծոյ և սրբել դրդոյսական նորս, մեաց ապաքէն միայն յեռին ճար. այսինքն է՝ միամտիլ և ակնարկել դերբնական ոգեկոչութեան Աստուծոյ, որում ցանկայր ասոդիա 'ի դարս ամենայն և ընկե-ցեալ ազգ մարդկան։

---

## ԳԼՈՒԽ Գ.

### ԱԿՆԿԱԼՈՒԹԻՒՆ ԳԱԼՍՏԵԱՆ ՓՐԻՍՏՈՍԻ ԻԲՐ ՄԻՄԻԱՑՆ ՓՐԿՉԻ.

### ՑՕԳՈՒԱԾ ԱՌԱՋԻՆ.

Ներածական կրօն.
Ցեղարին վարդապետութեանց այնորիկ.

Կրօնն նախապատրաստական՝ էր ճշմարտապէս Աստուածային յայտնութիւն, ըստ որոյ ակնկալութեամբ հանդերձեալ համաշխարհական Փրկչի պաշտէին Դպրութեամբ մեր ըստ հաւա-տոյ՝ սկսեալ յԱդամայ մինչև ցաւուրս Մովսիսի, զմի զԱստու-ած՝ իբրև Աքարիշ տիեզերաց, ինքնակոչ եղելոյ ամենայնի և

գերագոյն պատմաս բարութիւնն, զոր և ասացին յորդոց յոր-
ջիս անգիր առնելութեանն։ Այսմ ասացին Աստուածգիտու-
թիւնն և Աստուածպաշտութիւնն խանձարուր եկաց 'ի սկզբան
անդ Հայաստանեայց աշխարհ։

Արդարութիւնն կամ ասացին հաստատ Դաշնակցութեանն էր
ոգեշունչ ինչ, զոր միանգամ յայտնեաց Աստուած երևմանբ և
'ի ձեռն հրեշտակի՝ Դամասկոսոյ ազգի մարդկան Աբրահամայ, Ե-
նովքայ, Նոյի, Աբրահամու և այլոց արդարոց։ Բայց յայտ-
նութիւնքս բազմակի հաստատին նորա 'ի մի Աստուած՝ Ա-
բարիչ և Թնամանող երկնից և երկրի և մարդոյ, յանմեղու-
թիւն և զինքնիշխանութիւն մարդոյ. որ և նիզակ էր հաստատիչ
ճեպանաց Աստուածատուն ուխտին՝ Ճեպոյ էր անմահ և երջա-
նիկ, հաստատին Դաշնակցութեանն ոչնոքա 'ի հանգերձեալ միջնոր-
դքն ընդ Աստուած և ընդ մարդ մեզուցեալ, որ անդրէն կիրբ-
ջոյ էր զոխան խաչեալ։

Դաշնակցութիւնն ընդ այնչիսի Աստուծոյ զհետևեալ յատկութիւնս.
այսինքն՝ հաստատին նորա, թէ Աստուած բան զոյութեանն է՝
1. Մի (Ծննդ. ԺԹ. 19) և անփոփոխ. 2. Հոգեւոր, որոյ անտեսեալ
զրաղմանալ ամենայնումն մարդկանն՝ ասաց երբեմն.
«Մի՛ ճեպանչ հոգի իմ 'ի մարդկանէ յոյժմիկ յաւուրսն՝ զոսան
լինելոյ զոգս մարմնոյն» (Ծննդ. Զ. 3). 3. Ամենազօր, որ ա-
սաց Աբրահամու. «Ես եմ Աստուած (Տուողի—հզօր, կա-
ղոգ) քո. հանդերձ լի՛ր առաջի իմ» (Ծննդ. ԺԷ. 1). 4. Ամե-
նատես, որ բազում անգամ երևեալ Դաշնակցութեանն՝ խօսէր ընդ
նոսա որպէս հայր ընդ որդիս, ասայր նոցա մինչեւ մարդկան խաս-
սանեն, և առնէր բարիս (Ծննդ. ԺԸ. ԺԷ). 5. Ամենատես և
Ամենալսող, որ տեսանէ զդէպս նոցա զամենայնս, լսէ ա-
զօթիս նոցա (Ծննդ. ԺԲ. 8), հոգանէ 'ի զոհս նոցա (Ծննդ.
Ը. 21), և կամենանէ զգալոյսն՝ որ կատարելոյն էին յան-
դիման աչաց նոցա (Ծննդ. ԺԸ. 20). 6. Ամենաբարի և Ա-
զատարար, որ առատանեան փարձս հաստատեալ ընդ բարոյ, և
առանց ակնառութեան զատի զանազանութիւն (Ծննդ. Գ.
11). 7. Ճշմարիտ և Հաստատիչ, որ հոգիս կատարէ զիրա-
մանս իւր առաջի աչաց նոցա. 8. Յանձնառնակատ, որ եղ ընդ
նոսա ուխտ յանձնառնակատ (Ծննդ. ԺԷ. 7)։ Իսկ նեկամամբ
արարչութեան և նախախնամութեան աշխարհի՝ հաստատին՝ 1.
Թէ Աստուած է բարձրեալ, որ արար զերկինս և զերկիր (Ծննդ.

(Գ.Գ. 19—22). 2. Մխոյն գերագոյն Տէր արարածոց ամենայնի, որ Աստուած՝ զկնի տեղծանելոյ, Եղէ՛ զկնի ջրհեղեղի, և Ծնեալոց նոցա հանգոյն քարեցուս զմի և նոյն բան. «Աճեցէ՛ք և բազմացարո՛ւք և լցէ՛ք զերկիր, և տիրեցէ՛ք զսա» (Ծնեալ. Ա. 28. Թ. 1). 3. Խնամող և Տնօրէն տիեզերաց, որ ոչ միայն զամ՝ և երկիրս նորոգեալս մարդկան զհանդերձեալս՝ զրաս տարս կատարելոց իրաց, խնամ զհամաչափարհնական Ջրհեղեղն, զԴաւանդն Խաղաղոյ, զիրաժանումն Եռագոնաց և Գաւառաց, և այլն. 4. Բարոյական Օրէնսդիր մարդոյ՝ որ ետ Աստուծոյ և Եւայի, Եղէ՛ և զարդ նոցա, Աստուծոյ և զառաքելոյ նոցա՝ պատուիրեալս. 5. Գաւառաց և Հասարակաց, որ պատուհասեալս զԱբեղաշրջս տակաւ պատուիրեալսն ի Եռեան նոցա, և զարդի նոցա զկոյսն տակաւ եղբայրասպանութիւնն. այլ զարդարն զԷնովք զանձնաբնակն մանաւ վերացեալ յերկիր (Ծնեալ. Ե. 25).

Ուսանելոցն Հանդերձիւն զմարդն՝ 1. Պարտաւորեալ 'ի մարմնոյ՝ զոր առեալ յերկրէ Աստուած, և 'ի հոգւոյ՝ զոր փչեալ յերեսս նոցա (Ծնեալ. Բ. 7). 2. Պարտաւորեալ զերազանցն ամենայն արարածոց երկրի՝ ասելիքի Աստուծոյ (Ծնեալ. Ա. 27. Թ. 6), և կոչուցեալ առ 'ի լինել քաղաքաց և տիրոյ ամենայնի՝ որ յերկրի. (Ա. 28. Թ. 1). 3. Պարտաւորեալ անձնիշխան։ Զայն զայս անձնիշխանութիւն արարեալ կամեցեալ Աստուծոյ՝ առանձնոյց Աստուծոյ (Բ. 16. 17), Եղէ (Թ) և Պրաշանութ (Ժ. 1) արարեալս՝ արարեալ զնոսին խառնմամբ և ապառնալոք, և յետոյ արդեամբ Հաստոյց փորձս և ապահովս քան զարդոյ իրարանցիրացն։ Իսկ Ուսանելոցն քննկոյնութիւն անձանէ յԱստուծոյ զարատութիւնս, մնանիցին յոտ բնոյ Աստուծոյ, և մնասցիր յոժարութեամբ հնազանդիցին ամենայնի՝ զոր ինչ արարեալ ասիցէ ոմեան (Ժ. 6—13).

Ուսանելոցս զմարդն հանդերձիւն՝ 1. Յոտատանոյ վիճակի և յանկման, և զառաջարարեալ 'ի կրեալ բարարակս ի ծանութիւն կրաստանան արդեանոյ քանցման իւրոյ. քանզի որ ոգորեալ Աստուծոյ՝ կոչեալ զնա յոտ նոր՝ յոտ ջնարհոյ (Ծնեալ. Գ. 15). 2. Լուսիւն անմահ, որ յետ ասելոյ կենաց փոխարերի հոգւոյ յաշխարհ այլ անանցանելի։ Զգերազանցն հանդերձութիւնս զայս խառնմանիցին Ուսանելոցս՝ կոչելով զանձինս «Օտար և պանդուխտ յերկրի». որով բան բանից Աստուծոյն՝ «Զայս առնիցին, մի զարատ ինքն խնդրեսցին». . . ազնուականեսցի ինքն ցան-

կացեալ, այսինքն է երկնաւորին. վասնզի ոչ ոքեք համարձակ Աստուած կոչել նոցա Աստուած. քանզի «Պատրաստեալ նոցա քաղաք» (Ծնող. Խէ. 9; Եբր. ԺԱ. 13—16)։ Զ Աստուած կոչեցին Ղանդարեայն ոսկերչաքար՝ Աստուած հոգոյ վարձանելոյ. որպէս և այս քան մեկնելոյ Փրկչին՝ է նոր ապաստոյ հաստատոյ նոցա յանմահութիւն հոգւոյ մարդկանն. վասն զի «Աստուած ոչ է Աստուած մեռելոց, այլ կենդանեաց» (Մատթ. ԻԲ. 32). բայց յաստուածոյս՝ զանազի միւս և սակաւագոյն ապաստոյ հաստատոյ նոցա 'ի գոյութիւնն այլոց աշխարհի և յանմահութիւն մարդոյ, այսինքն է՝ «Հանոյ եղև Էնովք Աստուծոյ, և ոչ ոչ գտաւ զանձն. զի փոխեաց զնա Աստուած» (Ծնող. Է. 24). զոչմն խոսք Աստուածն յայտնագոյն ևս. «Հաւատովք Էնովք փոխեցաւ, զի մի զմահ ճաշակեսցէ, և ոչ ոչ գտանէր, յանդի փոխեաց զնա Աստուած» (Եբր. Ե. 5; Սիրաք. ԽԴ. 15) (1)։

Հաստատին Ղանդարեայն և 'ի հանդերձեալ Փրկիչն. նոքա՝ Աստուած իրաւամբ մաքուր զտանեալ փարդիսակի յետ պատուիրանապանութեան՝ զԱդամ և զԵւա, և եղեալ զնոսա ոսկերքնապատանան յանցանաց նոցա զատանոյ՝ անեղէն և անոչ խառնեցաւ. «Էրդիս թշնամութիւն 'ի մէջ քո (ծնի) և 'ի մէջ կնոջդ, և 'ի մէջ զաւակի քո և 'ի մէջ զաւակի զորս. նա ապաստակ (ջախջախեսցէ) քում զգլուխ, և դու սպասեսցես նորա զարշապարին» (Ծնող. Գ. 15)։ Որչափ և մի՛ թե թշնամի խառնեաց, այլա ամենայնիւ Ղանդարեայ զաւակս կնոջն իսնամանին դնանդերձեալ Փրկիչն, որ փրկեալոց էր զգլուխ խաղոցին նորա (ոձին), այսինքն յայտնեալոց էր սատանայի։ Բայց հաստատեալ Աստուծոյ՝ կոչեալոց զանուն կնոջ իւրոյ՝ կենդանի։ Եւ յայնմ ասելոյ է, զի ի նոր Կտակարանի հնամարիտ Մեսիոյն կոչի «Ծնեալ 'ի կնոջէ» (Գաղատ. Գ. 4), և վասնզի զգալասեան նորա զնոր «Լու-

(1) Դարձեալ Էրդայն իր խնամով մնծաւ զանազանելի գրան (Ենոք—գոմիք) 'ի բաղէ (Ենոքայ—այլ)։ Յորմէ թուելին զդերեգմանէ կամ գոյել՝ որ թագելին մարմնիք նեղեալոց, 'ի կիր առնուին միշտ գրագ Դ. գրքեր (Ծնող. ԻԴ. 4. 6. 9; Լեւիտ. ԺԻ. 2; Թուոց. ԺԱ. 34; Ցոր. Է. 26. Ժ. 20. 21. 32; Ադամ. ԽԸ. 19; Եզեկ. Լ. 12. 13. եւայլն)։ Իսկ յորմէ բառքն զանազանի՝ յոր փարիսն հոգիք յետ մահու, 'ի կիր առնուին գՇեոլ (Ադամ. ԺԷ. 10. Թ. 18. 19; Սիրաք. ԽԸ. 15; Դ. Թագ. ԺԷ. 11—22; Գ. Եզրաս. Դ. 35. 41. 42. Է. 32. եւայլն)։

ճանել զգործս աստուծոյ » (Ա. Յովհ. Գ. 8), և « Ընդունել զմիշտն ապաշխարն՝ որ է բանաստիսուն աստուծոյ » (Յայտն. Բ. 2)։ Երկրորդ անգամ խոստացաւ Աստուած Աբրահամու. « Օրհնեսցին 'ի քեզանէ յամենայն ազգք երկրի » (Ծնող. ԻԲ. 18), զոր և կրկնեաց յետոյ Իսահակայ (ԻՁ. 4), և Յակոբայ (ԻԸ. 14)։

Զիր ամենեքին ոչոչ տարակուսի, թէ Դանիէլեր խոստացեալ զաւակքն՝ (որով օրհնեալց էին ամենայն ազգք երկրի), ոչ զամենայն զգաւակունս իսրաելոց իմանային, այլ զմին և եթէ 'ի նոցանէ՝ այսինքն զՄեսիան։ Այսմ միայն պարզապէս և Յակոբ, յորմէ՝ 'ի մարգարէութեանն զգալանէն Հաշտարարին՝ Շիլո կոչէ զնա՝ « ակնկալութիւն Հեթանոսաց » (Ծնող. ԽԹ. 10)։ Վասն յետոյ այսմ և Հաշտարարն ինքնին եկեալ յաշխարհ՝ յասելն առ Հրէայս. « Աբրահամ հայր ձեր ցանկացաւ տեսանել զօր իմ, եւ տեսեալ եղեալ » (Յովհ. Ը. 56)։ Յայս ասէր և Աստուածաբան զարմացեալ առ Հրէայս զրանս իսրաելոց՝ խոսելին նոցա հանդերձակ. « Գոլ էր որդիք մարգարէիցն և ուխտին՝ զոր ուխտեաց Աստուած ընդ հարսն ձեր, և ասէ ցԱբրահամ. 'Ի զաւակի քում՝ օրհնեսցին ամենայն ազգք երկրի » (Գործ. Գ. 25)։ « Աբրահամու խոստացան ասեալքն և զաւակի նորա. և ոչ ասէ զաւակաց՝ իբրեւ բազմաց, այլ իբրեւ զմիոյ, թէ 'Ի զաւակի քում՝ որ է Քրիստոս » (Գաղ. Գ. 16)։

Զհաւատոյ Դանիէլեանցն 'Ի Բաբիլիոն հանդերձեալ՝ ապացուցանեն զարձեալ և բազմաթիւ խորհրդաւոր արարողութիւնք, յորս աստուածակերպ իմն նմանութեամբ տարուցեալ էին ամենաստիսունքն Աստուծոյ. զոր օրինակ՝ զանդ, որ զուշակիցն զմեծագոյն զանն Քրիստոսի. ասեղութիւնն ուսեալ Յակոբայ՝ զուշակիցս զմիաւորութիւն երկուց Աստուածային և մարդկային բնութեանց. ընծայումն Իսահակայ 'Ի զոհ՝ ցուցանէր զմահաշարժաւոր մահն և զյարութիւն Մեսիային. քահանայութիւն Մելքիսեդեկի՝ օրինակ էր յաւիտենական քահանայութեան Քրիստոսի. այսոքն Յովսեփայ՝ յայտ առնէին զշարշարանս Փրկչին յազգէ իւրմէ՝ չինելով ազգիւր օրհնութեան, ևն։

# ՑՈԳՈՒԱԾ ԵՐԿՐՈՐԴ.

## Ցեղերին բարոյական վարդապետութեանց Նահապետութեանց.

Բարոյական վարդապետութիւն Նահապետաց առ Աստուած վերաբերեցողութեամբ յուրեւ իմն մասնաւոր էր։ 1. Զի հաւատային նոքա յԱստուած ամենազէտ, ամենատես և արդարադատ, որում յարատեւ է ձեւ երդման նոցա (Ծնող. ԻԱ. 23. ԻԴ. 3. եւն)։ 2. Զի ցուցանէին զկատարեալ հնազանդութիւն կամաց Աստուծոյ, այնպէս զի կամքս այս էր հանապազորդաբար ուղղիչ վարուց նոցա և սկիզբն գործոց նոցա. սմին իրի և արարածապատուեն կամեցեալ նկարագրել զբարոյական պատկեր ոմանց 'ի նոցանէ՝ յայս ոճ սովորական խօսի. «Հանոյ եղեւ Աստուծոյ... եղիս ընդ առաջի Աստուծոյ... այր արդար և կատարեալ էր... և հաճոյ Աստուծոյ (Ծնող. Ե. Զ. եւայլն)։ 3. Զի ունէին զերկիւղ Աստուծոյ. այլ երկիւղ որդիական՝ բարեխառնեալ լրութեամբ յուսոյ առ Աստուած, և փոխանակ իմն սիրոյ՝ զորոյ զօրինակս տեսանեմք 'ի հայրն հաւատացելոյ յԱբրահամ և 'ի Յովսէփ։ 4. Զի դոհութիւնս երախտագէտ արտաքս մատուցանէին դրաբերութեանցն Աստուծոյ. որպէս յայտ է 'ի պատմութենէ Նոյի և Յակոբայ։ Զիր ամենեքեան երկրպագութիւն, թէ Նահապետք սնուցանէին 'ի սրտի ընդ մեծամեծ առաքինութեանցս և զայլս մանաւանդ ծնեալս յառաջնոց անտի, զորս ապրել կարէր անարատ Աստուածպաշտութիւն նոցա։

Նահապետքն սուրբ մեծաւ ևս յարդանօք յարդէին զարժանաւորութիւն մարդոյ՝ իբրեւ պատկերի Աստուծոյ, և խնամ տանէին կենաց նորա (Ծնող. Թ. 6). սիրէին հաւասարապէս զընկերս՝ որ փայլի առաւելապէս 'ի հիւրասիրութեան զորս նոցա (Ծնող. ԺԹ. 8). որբութեամբ պահէին զչարչարս ամուսնութեան (Բ. 24). ցուցանէին զէր անկեղծ և հնազանդութիւն կատարեալ առ ծնօղս, և ընդհանրապէս առ ծերունիս. սիրէին զզաւակունս, և մեծաւ խնամով դաստիարակէին զզաւակս յոգեւորութեան (Լ. 34 և 35)։

Նահապետք նկատմամբ անձանց իւրեանց փայլեցան միշտ՝ 1. Անձնուրացութեամբ. ըստ որում որպէս տեսաւ 'ի վերոյ, սկիզբն ամենայն գործոց նոցա էր կամքն Աստուածային և ամենակատար հնազանդութիւն այնորիկ՝ զերծ զոլով յոխտէ անձնասի-

թեան. ճանաչէին զարարչական տկարութիւն անձանց, և յայս տակս լծորդեալն ընդ այնմիկ հաստատ 'ի խոստացեալ Մեսիայն, և յայն՝ որ 'ի նա և ենթ, թափանցեալ յառհատական բարոյական իրազութիւնս նոցա՝ ըստ վկայելոյ Առաքելոյն, իբրեւ պատուական քան զամենայն երեւեցուցանէին զնոսա յաչս Աստուծոյ. «Հաստատեալ բան պատարագս Հարէլ բան զկայսն մատուցանէր Աստուծոյ... հաստատեալ Ենովք փոխեցաւ, զի զմահ մի ճաշակեսցէ» (Եբր. ԺԱ. 1—23). սիրէին նոքա զաշխատութիւն և զշարժարութիւն 'ի կերակուրս և յըմպելիս, և զողջախոհութիւն 'ի վարս։ Յայս էր թերեւս մի պատճառաց երկայնակեցութեան նահապետաց։

## ՅՕԴՈՒԱԾ ԵՐՐՈՐԴ.

### Յեսուիւն նահապետական Լուսամտաշնորհեան.

Մասունք հրապարակական Աստուածաշնչեան նահապետական կրոնին՝ թէպէտ և սպարդ, սյսու ամենայնիւ յայտնի առնէին լրիւ գոհագործութիւն պաշտամանն. 1. Խորհրդագործութիւնք նոցա էին մատուցմունք զոհից։ Ողջակէզքն Աբելի, Նոյի, Աբրահամու և այլոց՝ նախագուշակելով զմեծագոյն զոհատարն զՔրիստոսի, և վկայելով հաստատ Նահապետացն 'ի Փրկիչն խոստացեալ, էին անտարակոյս յաչս Աստուծոյ պաշտոն հաճոյական։ Յառաջագոյն և զկնի զոհագործութեանն կարդային Նախարարքն առ Աստուած և աղօթէին. թէպէտ՝ զորս առնէին և յայլ ժամանակս (Ծնող. ԺԲ. 8. Ե. 21)։ 2. Յառ բս Աբրահամու սահմանեցաւ խորհրդաւոր քահանայագործութիւն թլփատութեան, զոր ընդունելոյ էր ամենայն սերունդ իւր ըստ արական սեռի՝ իբրեւ զգալի նշանակ մտանելոյ նոցա 'ի միաբանութիւն հաստատելոյ։ Թլփատութիւնն իբրեւ խորհուրդ՝ նշանակէր հաւատարմութեամբ առաջնոցն՝ զանմաքրութիւն և զմեղութիւն բնութեան մարդոյ, հոգեւորութեամբ առ տնտեսութիւն Քրիստոնէութեանն՝ զբարութիւնն և զրժշկութիւն 'ի ձեռն Մեսիայի, որ ծնանելոյն էր անհայր. իսկ եղանակս գործողութեանն՝ զթլփատութիւն հոգւոյ կամ զապանութեան մարմնոյ, և զհոգեւորական ծնունդ մարդոյն (Գործ. Լ. 51։ Հռոմ. Բ. 28. 29). ուրեմն նախանշանակէր (1) զերեւելի վարդապետութիւնս վերահատուցեալ կրոնին։

(1) Գաղատիոյ Աստուածաշնչի. էջ 86. Գեանէվրուկ. 1826 ամի։

Նահապետաց՝ վասն զի վարէին տակաւին հովուական կեանս, ոչ ունէին դիւտակցեալ տաճարս, ոչ զարշելագ ժամս Աստուածպաշտութեան՝ բայց յաւուրս շաբաթու. այլ զտեղիս և զժամանակս բազում անգամ որոշէր ինքնին Աստուած երևումամբ կամ այլ բարերարութեամբք, ուր խնդրն ուղղէին սեղանք կամ զոհարանք, առ որս մերձենային ժողովուրդն ակնածութեամբ։ Զև էին որոշեալ առ ժամանակս Նահապետացն՝ և ոչ իսկ նոքիրքն (Քահանայք) 'ի կատարել զզոհաբերութիւնս. այլ զպարտականս զայսոսիկ վարէին տանուտէրք նահապետական տոհմից, հայրք գերդաստանաց, կամ ըստ առանցութեան Հրէից՝ արք անդրանկածինք (1)։

## ՑՕԴՈՒԱԾ ՉՈՐՐՈՐԴ.

Խորհրդաւորութիւնք 'ի վերայ վանմարեան նահապետական կրօնի.

Երբէք յաճեցուցեալ զաչս դնահապետական կրօնիս՝ 'ի ներքոյ և արտաքոյ տեսանելոյ զայնպիսի գերապանծութիւնս, յորոյ զրկեալ էին մարդասէրս մոլորութիւնք ժամանակակից և յապա երևեալ ազգաց. իբրև զի 'ի վարդապետութիւնս հաւատոյ, բարոյականութեան և պաշտամանց նոցա՝ ոչ զասեր ինչ անելոյս Աստուծոյ և մարդոյ. այլ ամենայնիս սուրբ, և ամենայնիս ճշմարիտ, և ամենայնիս պատկառելի, և համեմատ վասն վարձանի կրօնիս։ Եթէ արժան իցէ համեմատութիւն առնել ընդ միջ կրօնի Նահապետաց և կրօնի շրջակայ և ժամանակակից ազգաց, այսինքն Եգիպտացւոց, Բաբելոնացւոց և Ասորւոց՝ գերազանցութիւն առաջնոյն ինքնին երևի. բանզի առ յիշատակեալ ազգս տիրէր ամենայն տրեր բազմաստուածութիւն և կռապաշտութիւն, ամենայն տրեր աստուածացուցեալ էին երկնային լուսաւորք, մարդիկ, արհամարհ կենդանիք, բոյսք և քարինք։ Եթէ համեմատեսցուք զկրօնն նահապետական ընդ կրօնից անգամ՝ ժամանակս յետին, այլ կրթութեամբ յոյժ սլանծագոյն ազգաց հնոց աշխարհի, որպիսի են Ցոյնք և Հռոմայեցիք, զարձեալ ակն յանդիման երևի լիուլի վանմութիւն առաջնոյն. վասն զի բազմաստուածութիւնն, և յատկապէս Աստուածացուցումն

(1) Պատմութիւն Աստուածաշնչի. եր. 84—85)։

մարդկան և հակառակ՝ հանդերձ հոմայն սխալանք և մոլութեամբ մարմնոյ՝ էր հոգի կրօնիս աղգայս։ Եթէ համեմատեսցուք 'ի վերջոյ զվարդապետութիւն կրօնի՝ զոր ունէին Նահապետք ընդ վարդապետութեան իմաստասիրացն Յունաց և Հռոմայ, յայտնի եւ առաջինն նախադէպն յետնոյն համարի։ Ա. ոմանս 'ի փիլիսոփայից թէպէտ փայլին լուսաւոր գաղափարք 'ի վերայ Աստուծոյ և 'ի վերայ մարդոյ, և 'ի վերայ բարոյական ուղղանոյ և պարտեալ մարդոյ, բայց այնպէս խառն 'ի խառն և շփոթ այս ամենայն պէս պէս մոլորութեանց՝ մինչեւ չլինիլ հնար որոշելոյ զմին 'ի միւսմէն, մինչեւ չէ լուսաւորեալ զնոսին յայտնական հաւատք։ Ընդ հակառակն 'ի նահապետական կրօնի ամենայնն մաքուր է ճշմարիտ և սուրբ։ Ուստի՞ ապաքէն հնար էր յայտնել այսմ կրօնի, եթէ ո՛չ ՅԱստուծոյ միայնոյ։

## ՑՕԴՈՒԱԾ ՀԻՆԳԵՐՈՐԴ.

### Կրօն ընդօրինական և տեսութիւն վարդապետութեանց հաւատոյ և բարոյականութեան այնորիկ.

Զկրօնն ընդօրինական կամ ընդ օրինաց՝ ասեմ կոչեմք, զոր հանեցաւ Աստուած տալ 'ի լեռն Սինա Իսրայելացւոց յետ եւ ելից նոցա յԵգիպտոսէ 'ի ձեռն Մովսիսի, որ բովանդակեաց զայն 'ի հնգամատեանի իւրում. և զկնի մարգարէք 'ի գիրս իւրեանց յաստուկ կոչմամբն Աստուծոյ եւ քան զեւս բացայայտեցին։ Մարգարէքն Աստուծոյ՝ ամենեքեան եւ 'ի քարոզելն զԱստուածայայտ վարդապետութիւնն՝ գործէին բաղմադիմի հրաշս, գուշակէին զապագայից, որով և կնքէին զԱստուածայնութիւնն ընդօրինական կրօնին։

Կրօնն ընդօրինական վարդապետէր զԱստուծոյ պայծառ իմն եզանակաւ. նախ՝ կնքելով զճշմարտութիւն միութեան Աստուծոյ, յորժամ առ ամենայն հեթանոս տիրէր ժանտախտ բազմաստուածութեան (Բ. Օրին. Զ. 4). 2. Անմարմին և բոլորովին հոգի քարոզելով զԱստուած. այս եւս դարձեալ հակառակ համապիսակ մոլորութեան հեթանոսաց (Եսայ. Խ. 18). 3. Ինքնագոյ և անկախ (Եսայ. ԽԳ. 6). 4. Յաւիտենական և անփոփոխ (Սաղմ. ՃԱ. 26։ Եսայի. Խ. 28։ Մաղաք. Գ. 6). .5

Անսահման և ամենաբարի (Սաղմ. ՃԼԸ. 7—11։ Բ. Օրին. Դ. 39։ Երեմ. ԽԳ. 23). 6. Ամենազէտ և ամենիմաստուն (Սաղմ. ՃԼԸ. 4. Է. 10։ ՃԽԶ. 5։ Երեմ. ԽԳ. 24։ Բ. Մնաց. ԺԶ. 6։ Դանի. ԽԳ. 42). 7. Ամենուրեք հզօր և ամենակարող (Սաղմ. ԼԲ. 9։ Եսայի. Խ. 26. և 28). 8. Ամենուրեք ճշմարիտ և ամենատուր (Բ. Օրին. ԼԲ. 4։ Երեմ. Ժ. 10). 9. Ամենուրեք ամենաբարի և արդարադատ (Սաղմ. ՃԽԳ. 9. Ժ. 7). 10. Գոյութիւն ամենակատարեալ (Սաղմ. ՃԽԳ. 3։ Ա. Թագ. Բ. 2). 11. Այսարիշ և նախախնամող տիեզերաց (Երեմ. ԼԲ. 17։ Խնամա. ԺԲ. 13։ Սաղմ. ՃԻԸ. 91։ ՃԽԳ. 4. ՃԼԴ. 7. ՃԳ. 14։ Խնամա. Ը. 1). 12. Ցանկալի սանջոյ և պահապան (Սաղմ. ՂԹ. 3. ԽԵ. 1. ՃԽԶ. 1։ Դանի. Դ. 22։ Ամոս. Բ. 7)։

Երանեալ ընդ օրինակսն ուսուցանէր զմարդոյ այսպէս՝ 1. թէ մարդն ստեղծեալ է յԱստուծոյ արդար քան զանակերպ և քան նմանութեան նորա (Խնամա. Բ. 23։ Սիր. ԺԷ. 3։ Ժող. Է. 30) յանապականութիւն (Խնամա. Բ. 23), փորձ ինչ խոնարհ քան զէրեցուսն, բայց փառաւոր զանակեալ և կացուցեալ իշխան ամենայն ձեռակերտաց (Սաղմ. Ը. 6—9). զոր եղեալ Աստուծոյ 'ի զրաբարութիւն փարեալ առ 'ի կրթել զկամն նորա առ բարին, և զարգացուցանել 'ի նմա զարարչական կատարելութիւնն՝ աւանդելոյ նմա զարդ զարդոյ զարարչութեան։ 2. Մարդն զանց արարեալ զզարարութիւնս Աստուծոյ ի թոյլ զրկեցաւ քան մեծի մասին 'ի բարեմասնութենէն և 'ի կատարելութենէն իւրոյ. թէպէտ մեղայ ապրածեալ ընդ անձն նախանձաւոր մերոյ անկելոյ՝ ապականեալ զգոյութիւն նորա, այնպէս զի սերունդք նորա ամենեքին յանարգնութիւնս յղանան և 'ի մեղս ծնանին (Սաղմ. ԾՂ. 7. ԾԲ. 4). այնուհետեւ թշուառութիւնք սատանայ և մահու եղեն բաժին մարդկան 'ի վերայ երկրի (Ժող. Բ. 23—26։ Խնամա. Բ. 24)։ 3. Թէպէտ և սատանայ է անկատեալ մարդոյ, այսու ամենայնիւ ոչ զրկեցաւ յիներմիշտան կամացն, մասնաւորապէս արդ ևս «սատանայ մարդոյ է մահ և կեանք. զոր կամիցի՝ մահացէ զանազան իւր» (Սիրաք. ԾԷ. 18. 17). և թէպէտ մարմին նորա 'ի ճաշակմանէ պտղոյ ծառոյն կենաց սարսուռ մահկանացու, այլ հոգին քան զանաչելոյն Հայր անմահ. և յորժամ «զարթցի հոգին մեր յերկիր՝ որպէս և էրն, և հոգին զարթցի առ Աստուած՝ որ ետ զնա» (Ժողով. ԺԲ. 7։ Խնամա. Գ. 1—4)։

Կրօնն ընդօրինական այնպէս յայտնապարզուս բանիւք ուսուցանէր զՄեսիայէ՝ որոշելով պարզապէս զժամանակ գալստեան նորա, զտեղի ծննդեանն, զազգն՝ յորմէ ծնանելոց էր, զ'ի կուսէ հրաշալի եղծնական ծնունդն, և այլն. մինչեւ Հրէից ամենեցուն գաւանիլ զայն իբրեւ մասն հանգանակի հաւատոց իւրեանց, և մխայանիլ յայսմ հին և նոր հերձուածոց 'ի նոսա՝ Փարիսեցւոց, Սադուկեցւոց, Հերոդիանոսաց, Բարբունեանց, Խարայիմեանց, և Սամարացւոց՝ յայլ և այլ խնդիրս կրօնի զոլով միմեանց անհամաձայնք։ Յայս ասկս է, զի իբրեւ մերձեցաւ բան կանխասաձայնութեանց Մարգարէից՝ ժամանակ երեւելոյ Մեսիային, Հրէայք զրեթէ 'ի խնդիր եղանեն նմա. և տեսեալ զզերմարդկային զարս և զգործս Յովհաննու՝ սասարեն սա նա բանիւնայս և Ղեւտացիս հարցանել՝ նա՞ իցէ Քրիստոսն (Ղուկ. Գ. 15։ Յովհ. Ա. 19). և 'ի հարցանելն Հերովդիսի՝ թէ ուր ծնանիցի Քրիստոսն, պատասխանի առեալ ասեն. 'ի Բեթղեհեմ Հրէաստանի (Մատթ. Բ. 1—6)։

Կրօնն ընդօրինական նկատմամբ սա Աստուած իբրեւ հին ամենայնի՝ նախ պատուիրէր Իսրայելացւոց սիրել զԱստուած յամենայն սրտէ, յամենայն անձնէ և յամենայն զօրութենէ (Բ. Օրին. Զ. 5). և զայս պարտաւորութիւն մասնաւոր խնամով տեսանելիք մեկնեալ 'ի շրջեսին պատուիրանս Տախտակաց, յորոց յաստուածնուէն հրամայէ ճանաչել և պաշտել զճշմարիտն Աստուած, յերկրորդումն՝ հրաժարիլ 'ի սուտ Աստուածպաշտութենէ, յերրորդումն՝ ոչ եղծանել զճշմարիտ Աստուածպաշտութիւնն բանիւ անզամ, 'ի չորրորդումն՝ միտ դնել կարգի 'ի ժամանակի և 'ի գործս ճշմարիտ Աստուածպաշտութեան (Ելից. Բ. 1—12)։ Երկրորդ՝ ընդօրինաբար կրօնն ուսուցանէր մեկին և բազում անգամ զճշմարիտ Աստուածութիւնն և զճշմարիտ Աստուածպաշտութիւնն արդիւնաւորել՝ պահպանութեամբ պատուիրանաց նորա, դատաստանաց նորա և իրաւանց նորա (Բ. Օրին. Ժ. 12—13. ԺԱ. 1. Զ. 1, 13. 17. 18 և 24։ Ը. 6. 7 և 11). յորոց բոլորին ծայրին և պտղաբերին այլ և այլ բազմաթիւ դարաւորութիւնք մարդոյ առ Աստուած։

Կրօնն ընդօրինական նկատմամբ առ ընկերս՝ կանոնադրէր զեղբայրութիւն իբրեւ հին ամենայնի՝ պատուիրելով զամենայնս սիրել զընկերն իբրեւ զանձն իւր (Ղեւտ. ԺԹ. 18)։ Այլ և այլ եղանակք սիրոյ սահմանեալ են մասնաւոր խնամք 'ի վեց

Հայկական պատուիրանս տասնամեայն, յորոց հինգերորդն հրամայել սիրել և պատուել զծնողս, մանաւանդ զմերձաւորս, քան զանձամբ 'ի ծնողաց. վեցերորդն՝ ոչ մեռանել կենաց ընկերին. եօթներորդն՝ ոչ մեռանել անարատութեան վարուց նոցա. ութերորդն՝ ոչ մեռանել ատելութեան նոցա. իններորդն՝ ոչ մեռանել նոցա բանիւ անզամ. տասներորդն՝ և ոչ ցանկալ առ 'ի մեռանել նոցա (Եղից. Ի. 12—19)։ Հին Կտակարանն բարեմ սրեալ առանդէ սոյնպէս բերել սիրով և յարգանաւք առ ծերս (Ղեւտ. ԺԹ. 32), առ որբս և առ այրիս, առ պանդուխտս և առ պարտականս (Եղից. ԻԲ. 21—26։ Ղեւտ. ԺԹ. 13, 32), առ շքաւորս (Բ. Օրին. ԺԵ. 7—11), առ արծաթագինս (Եղից. ԻԱ. 1—16. 20։ Բ. Օրին. ԺԵ. 12 և 15։ ԺԶ. 13 և 14), առ խուլս և առ կոյրս (Ղեւտ. ԺԹ. 14), և բան իմիք առ թշնամիս անգամ (Ղեւտ. ԺԹ. 17 և 18։ Եղից. ԻԳ. 4 և 5)։

Կրօնն ընդօրինակեն նկատմամբ պարտականութեանց անձնիւր առն առ անձն իւր՝ 'ի Տասնաբանեայ պատուիրանս, թէև ուղղակի ինչ ոչ խօսի, այլ յայտ է, զի և առանց յատուկ պատուիրանի բնականաբար «Ոչ ոք երբէք առեալ զանձն իւր, այլ սնուցանէ և դարմանէ զնա» (Եփես. Ե. 29)։ Երկրորդ՝ եթէ մարդն ստուգիւ կատարեալ ընդ պատշաճի զպարտականութիւնս իւր նկատմամբ առ Աստուած և առ ընկերն՝ զհրամայեալսն 'ի առան պատգամաց, որոշին հարկաւ այսու և կանոնադրին իսկայական պարտականութիւնք անձնիւր առ անձն իւր. 'ի վերայ այսր ամենայնի արտաքոյ տասնարանիցն զտանին 'ի հին Կտակարանին հրահանգք յանախ՝ տուեալ յԱստուծոյ նկատմամբ անձնական պարտականութեանց իւրաքանչիւր ուստեք. որպէս և յայտմ՝ յորում առաջի գնի պատկեր բարոյական կատարելութեան. «Սուրբ եղերուք, զի ես սուրբ եմ Տէր Աստուած ձեր» (Ղեւտ. ԺԹ. 2). Եւ և կանոնք յաղագս մաքրութեան մարմնոյ և ողջախոհութեան (Եղից. ԻԲ. 16. 17։ Ղեւտ. Ի. 10). և այլն։

Ընդօրինական Կրօնն առ կատարումն պատուիրանաց՝ յորոց բանեալ ազգ առնէր, թէ պատուիրանքն են կամք Տեառն Աստուծոյ ամենակալի (Բ. Օրին. Ե. 1—5), առաջի գնէր զարքութիւն և զանեծութիւն Օրէնադրին և Տեառն արարածոյ ամենայնի. «Սուրբ եղերուք, զի ես սուրբ եմ Տէր Աստուած ձեր» (Ղեւտ. ԺԹ. 2). «Զչարաթիս եմ պահեսջիք, զի ես եմ Տէր

Աստուած ձեր » (3) . « Մի երթայցէք զհետ կռոց , և աստուածս ձուլածոյս մի առնիցէք ձեզ. ես եմ Տէր Աստուած ձեր » (4) . « Երկնչիցիս 'ի Տեառնէ Աստուծոյ քումմէ . ես եմ Տէր Աստուած քո » (14) ։ Յուշ առնէր զանբաւ բարերարութիւնս , զորս տրար Տէր Իսրայէլացւոց . « Աղգ թիւր և խստորեակ, զանոյգ Տեառն հաստատանէր այդպէս՝ ժողովուրդ յիմար և ոչ իմաստուն . ո՞չ նա է հայրն՝ որ ստացաւ զքեզ, տրար զքեզ և հաստատեաց զքեզ։ Յուշ լիցին քեզ աւուրքն յաւիտենից , խնայարուք զամսն ազգաց յազգս ։ Հարց զհարսն քո , և պատմեսցեն քեզ. ցծերս քո , և ասասցեն քեզ » (Բ. Օրին. Լ. 5—7) . և 'ի վերջոյ խոստանայր զօրհնութիւնս և բարիս մեծամեծս՝ յիսխանակ պահպանութեան պատուիրանացն Աստուծոյ , և ապստամբայր անէծս ցաւագինս և թշուառութիւնս սոսկալիս՝ որոց ապարհաս առնելոց էին զնոսքոք (Բ. Օրին. Զ. 3. 18 և 24. ԻԸ)։

## ՅՕԳՈՒՍԾ ՎԵՑԵՐՈՐԴ.

### Ցեսուրիւն ժիսական օրինաց .

Հ . Զի՞նչ էին ծիսական օրէնք (1) ։

Պ . Այն ամենայն՝ զորս սահմանեաց Աստուած իմաստուն յուսաջատեսութեամբ 'ի ձեռն Մովսիսի յԻսրայէլեան եկեղեցւոջ, ըստ որոց որոշեալ էին հնգիւ տեղիք Աստուածպաշտութեան , Տէրունական սօնք կամ տուրք աւուրք , սրբարանութիւնք , զոհք , և և բաշխանայք ։

Հ . Քանի՞ էին տեղիք Աստուածային պաշտամանց առ Իսրայէլացիս ։

Պ . Մի միայն 'ի սկզբան՝ խորանն . ապա տաճարն Սողոմոնի յԵրուսաղէմ , որ զոլով երևելի կեդրոն կրօնական միաբանութեան այսր ժողովրդեան՝ ապրում իմն եղանակաւ յիշեցուցանէր նոցա զմիութիւն Աստուծոյ՝ զոր պաշտէին . յայս ասէս և ամենայն որ 'ի նոցանէ ջերմեռանդութեամբ մեծաւ մատչէր յայն տուրբ տեղի՝ իբրև 'ի յատկացեալ և 'ի ճշմարիտ բնակարան Տեառն զօրութեանց ։ Տաճարն բաշխեալ էր 'ի ներքուստ յերիս բա-

---

(1) Յազագս դիւրնաւ 'ի միտ առնլոյ՝ հարցու պատասխանեսցուք կարգեմք գրանի մի գլուխս դրոյս ։

ժին. — Արահ՝ ուր մնանէր ամենայն Իսրայէլ. — Արքութիւն՝ ուր մնանէին քահանայք և եպիսկոպոսք. — Արքութիւն սրբութեանց՝ ուր ամի ամի անդամ մի մտանէր Քահանայապետն։ Այս զինուորական էր Տապանակն հանդերձ տախտակօք պատուիրանաց, մատեան օրինաց, սափորն ոսկի մանանայիւ հանդերձ և գաւազանն Ահարոնի։

Հ. Քանի՞ էին առ Իսրայէլացիս Տէրունական տօնք։

Պ. Զօրն շաբաթուց կամ զեռեներորդ արքին պաշտամամբ և հոգեւոր գործովք՝ 'ի յիշատակ արարչութեան աշխարհի (Ելից. Ի. 11), զՀաւատիկ կամ զՊասէք (Ելք. Ցոն բազարձակերպաց) 'ի յիշատակ ազատութեան Իսրայէլացւոց յԵգիպտոսէ (Ելից. ԺԲ. 14—18), զՊենտեկոստէ՝ 'ի յիշատակ տուչութեան օրինաց 'ի Սինա, և յաղագս հանդիսաւոր գոհանալոյ զԱստուծոյ փոխարէն ամենարարեր արմտեացն (Ղեւ. ԻԳ. 16—21), զտօն Տաղաւարաց՝ 'ի յիշատակ բարեբարութեանց Աստուծոյ առ Իսրայէլացիս յանապատի (Ղեւ. ԻԳ. 42—43), զտօն Քաւութեան պարտական պահօք և ապաշխարութեամբ, յորում մատուցանէին հանդիսաւոր զոհեամբ պատարագն վասն արքերոյ զմեղս ամենայն ժողովրդեան Իսրայէլի, որ նախատիպն էր միանգամայն և անհամեմատ պատարագին Գողգոթայի 'ի թողութիւն մեղաց ամենայն աշխարհի (Եբր. Թ. 11—25)։

Հ. Զի՞նչ էին առ Իսրայէլացիս արարողութիւնք և զոհք։

Պ. Թէ և յամենս, այլ առ հաստատակ խորհրդաւորք. յորոց առաջին հանարի թլփատութիւն մարմնոյ՝ թլփատութիւն սրտի (Բ. Օրին. Ժ. 16). այլ և այլ տեսակք զոհից, որոց ոմանք ողջակէզ, պատարագ վասն մեղաց, զոհ վասն յանցանաց, խաղաղական և այլն. խորութիւնք կերակրոց, հանդերձից, և գրաչութիւնք յաղագս մարդութեան մարմնոյ։ Զոհագործութիւնք համայն՝ իբրև առաւելք բարեացն հանդերձելոյ՝ յիշեցուցանէին անդադար ժողովրդեանն զՄեսիայէ, խորութիւնք կերակրոց և գրչաւոյ՝ առ 'ի լինել ոմանք Իսրայէլացւոց, զի մի խառնակեսցին ընդ Հեթանոս (1), և մոլորեսցին 'ի ճշմարիտ հաւատոյն (առ որս միտեալ էին յարդ). լուացմունք և մարդութիւնք՝ նպատակալ ազգակցութեան մարմնոյ և բարոյութեան հաստատակաց՝

(1) Ոսկերերան. 'ի Մատթէոն 1 գլխոյ մարգարէութեան Եսայեայ։

հզօր զօրավիդն էին նաև բարոյական հաստատութեան, հոգեկան մաքրութեան, և միանգամայն յորդոր բարեպաշտութեան (1)։

## ՅՕԴՈՒԱԾ ԵՕԹՆԵՐՈՐԴ.

Խորհրդածութիւն 'ի վերայ վանեցութեան Կրօնին՝ որ ընդ օրինաց.

Կրօնն ընդօրինական կրէ յամենայն 'ի մասունս իւր զանձնին՝ ի հնոյ բարձրագոյն իմաստութեան. ըստ որում միակ վախճան այնորիկ էր տապաստել և հաստատել յԻսրայէլացիս զՀաւատս 'ի մի և յաներևոյթն Աստուած յարարիչ և 'ի խնամակալ տիեզերաց, դատարակել զնոսա 'ի վայելուչ պաշտաման նորա, և յամենայնի լցուցանել զկամս նորա, որպէս զի պահպանեսցին 'ի նոսա, և նոքօր յազգս հաւատացեալ աշխարհի՝ հաւատք և խոստումն Աստուածային՝ որ վասն զաղտեան Փրկչին, և առնելոց զնոսա ազգ ճշմարտիւ հաւատացեալ՝ իբրև սերմն սուրբ 'ի լուսաւորութիւն միահամուռ մարդկային ազգի։ Աստ այս ուղղեալ էին օրէնք հաւատոց, յորս պարունակէր այնչափ կատարեալ ուսումն զԱստուծոյ, զմարդոյ և զՄեսիային, և օրէնք բարոյական՝ որ կանոնադրէր մարդոյ զոյնպիսի կանոնս սիրոյ առ Աստուած, առ մերձաւորն և առ անձն իւր։ Յայս հայէին տիրապէս նաև օրէնք ծխական և օրէնք քաղաքական, այնպէս զի բովանդակ կեանք Իսրայէլացւոց՝ եթէ ընտանեկանն և եթէ ընկերականն, զբաղեալ էր զոգիր Կրօնիս. այսինքն յամենայն 'ի կենցաղավարութիւնս իւրեանց պարտաւորեալ էին անընդհատ պաշտել զկամս Աստուծոյ։ Խորութեամբ հանդերձիւ և կերպարքս իւրոց, և մաքրութեամբ անձին և տան իւրոյ՝ ուշ միայն տեսանէր Իսրայէլ յանդիման աչաց զԱստուած իւր, այլ և առնէր զկամս նորա։ Իսրայէլ բնակի թէպէտ 'ի բարեբեր երկրի, այլ այն ժառանգութիւն Աստուծոյ է. ունի թէև քաղաքս պարսպաւորս և տունս վայելուչս, այլ զայն ամենայն Աստուած ետ ինքեան. իբրև անդրանիկ ծնունդ՝ արու Իսրայէլի և անասնոց նորա համարեալ է բաժին Աստուծոյ. իսկ ինքն զամենայն զկարելոյս բարիս յուսայ յԱստուծոյ և եթէ ուղղակի ասանալ։ Աստ-

---

(1) Աղեքս. Ներիլ. Պատմութիւն Հին Կտակարանի. տես գերբորդ գատողութիւնն յաջորդս չորրորդ շրջանի աշխարհի։

աստուծոյն օրհնութիւնքն սկիզբն առնու Իսրայէլ հանոյ իւրոյ, զի ուրախութիւնքս յաղագս օրհնութիւնան յառաջ վարէ, և խոնարհութիւնքս զոհութիւնքս յաւարտ հանէ, ոչ միայն զձեռն իւր 'ի ցորեան, ոչ մերձեցուցանէ 'ի բերան իւր զարմանս ինչ՝ միանչն է ընծայեալ յայնցանէ մնան ինչ Աստուծոյ, վասն զի 'ի բարեկենդանութիւն՝ մատուցանէ Աստուծոյ զողջակէզս երախտագիտութեան, և պատրաստէ զիւրաքանչիւրն՝ ոչ միայն 'ի վայելս բնաւանեաց իւրոց, այլ նաև որդւոցն և սրբոցն, եկեղեաց և Ղևտացւոցն (Բ. Օրին. ԺԲ. 4—19). Իսրայէլ ուստ և իւրոյ առաջի Տեառն՝ (16) ոչ զի յաղեսցի, այլ զի ուսցի երկիւղիլ 'ի նմանէ (Բ. Օրին. ԺԳ. 22—29)։ Տեառն ընծայէ Իսրայէլ զառաւօտն և զերեկոյն ասեր, զսկիզբն ամենայն և զարուցն։ Տօնահանդէսք նորա ամենայն՝ ասհմանեալք 'ի յիշատակ անցիցն ազատութեան և ինքնիշխանութեան իւրոց։ Համարին ոմանք կրօնականք, և յեօթներորդն ամաց և 'ի Յոբելեանն կրթէ զրարի կամս իւր 'ի ազատարարութիւն Աստուծոյ, կամ զի ուսցի լաւ ևս ազատարել։ Ոչ են կամք Իսրայէլի հարկ ամենեքին 'ի սիրոյ կամ յաղանդի ինչ. վասն զի 'ի միջի իւր բնակի տէր Աստուած իւր (Բ. Օրին. ԻԳ. 13—14։ Ղևտ. ԺԳ. 46. ԺԵ. 23)։ Սասցեալ ունի Իսրայէլ զգրաւոր օրէնս, այլ զառաջ ասեալն Աստուած. ունի զիշխանս և զպատարս, այլ զոչ ասա քնարել և կայացուցանել Աստուած, և իբր 'ի բարեսէր Աստուած է՝ որ արարչ դշխարակութիւնս 'ի անդի նոցա։ Աստուած է թագաւոր իւրաքանչիւր Իսրայէլի, որում միայն արժան է հարկս հարկանել (Եսայ. Լ. 13 և 14)։ Աստուած է 'ի միջի Իսրայէլի զերազոյն օրէնսդիր, որ հաստատեաց զմիտն մի յարիւնաց անտի արդարական անուամբ իւրով (Ղևտ. ԺԹ. ԻԹ.)։ Ելոյն ինքն է և զերազոյն դատաւոր, որ կամ իւրովքն կամ 'ի ձեռն պաշտօնելոյ իւրոց որոշէ և անօրինէ զերկրայնական իրաւութիւնս (Թուոց. ԻԱ. 1—11։ Բ. Օրին. ԺԷ. 8—12)։ Աստուած է ծայրագոյն զօրավար Իսրայէլի 'ի մարտս պատերազմաց, որ անօրինէ ընդդէմ պրոց տալ պատերազմ, յոյ խնայել և զոչ բնաջինջ առնել յերկրէ. և ինքն մարտակից զոլով 'ի պատերազմունս որդւոցն Իսրայէլի՝ հաճի ընդունիլ և զնման յաւարէ նոցա, ասէն. (Թուոց. ԼԴ. 38—44)։

Ուստի՞ առ ընկալաս Մովսէս զգրութիւնս կրօնական այսպէս խմաստուն, զոր աստանդեաց Ժողովրդեանն Իսրայէլի. թէ երեսս'ի

սահմանակից կամ 'ի ժամանակակից ազգացն. այլ այսմ անմարթ է զոլ. իբր զի առ նոսա ազգք ամենայն ընկղմեալ էին ընդհանրապէս 'ի թանձր կուապաշտութեան, և պաշտէին զանզիս. միմիայն Մովսէս էր՝ որ քարոզէր զմի Աստուած ամենակատար հոգի, և արգելոյր զամենայնի զերկրպագութիւն կրելոյ՝ 'ի ժամանակին, յորում՝ ազգք ամենայն զնային զամենայն կենդանութեան արտիոյ իրեանց, և ընկղմեալ էին յամբարշտութիւնս զամենայն վարդապետութեանցն՝ զորս վարդապետէին զուրուական աստուածոց իրեանց. միմիայն Մովսէս էր՝ որ ծանոյց աշխարհի զյաւէտ մարդոյ կանոնս բարոյականս, և 'ի կիր արկ հնարս լիցուս առ 'ի հաստատել զայնս 'ի ժողովրդեան իւրում։ Ըստ խառնուածոյ ինչ հոգեկաց իմաստնոց անդամ հնութեանսայ՝ աւանդեալ Մովսէս Իսրայէլացւոց զնշան բոլորտիին տարրեր յայլ ամենայն կրանէից՝ որք միանգամ 'ի վերս երեւեցան յաշխարհի (1) սահմանեալ ծիրանին արարողութիւնս ըստ ամենայնի նորս և անծանօթս այլոց յազգաց, և արար զՀրէշս ժողովուրդ բոլորտիին ինքնուրոյն և տարբեր յազգաց այլոց, որ աղանդի համարէր զայն՝ որ ինչ առ այլազգիս համարիւր սուրբ, և ներելի զայն՝ որ ինչ առ նոսա էր անհաներելի (2)։

Եթէ հարցանիցեմք ինչ Մովսիսի զծագմանէ Կրօնին հնոց ուխտի և Մարգարէից՝ որոց յաջորդեալ նմա կարգաւ շարունակեցին զմեծ գործ նորա, եթէ հարցանիցեմք Իսրայէլացւոց ամենեցուն՝ որք տեսին և լուան զՄովսիսէ և զՄարգարէիցն, մի և եթէ պատասխանին՝ զոր առաջի դնեն մեզ ամենեքին. այսինքն թէ վարդապետութիւնք հաստատ ընդհանրապէս, և դրութիւն Կրօնին հնոց ուխտի որդւոյն կատարեալ, նոյնչափ ևս զանազանեալ 'ի դրութենէ Կրօնից ամենայնէ՝ յայտնեալ և տուեալ են ուղղակի յԱստուծոյ. թէ Մովսէս և այլ Մարգարէք էին պատգամաւորք և եթէ, և գործի յայտնութեանց նորա, այս պատասխանին արժանի է յիրաւի ամենայն մտաւորութեան՝ եթէ՝ ըստ նիւթոյն և եթէ՝ ըստ նպատակին, և միանգամայն վայելուչ Աստուծոյ։

---

(1) Ստրաբոն. աշխարհ. գիրք ԺԶ։
(2) Տակիտ. Պատմ. գիրք Ե. գլուխ Դ։

## ՑՕԴԻԱԾ ՈՒԹԵՐՈՐԴ.

### Մարգարէք.

Հ. Ո՞րոշիսի ոք էին Մարգարէք։

Պ. Այր արդար, կանխագէտ, հրաշագործ, լցեալ Հոգւով սրբով, և Աստուածային կոչմամբն առաքեալ առ ժողովուրդն ընտրեալ՝ քարոզել զկամս Եհովային, խնդրամուտ առնել զնոսա ապաշաւոյ, յանդիմանել սիրիցարել և զաստիարակել զնոսա ընդհանրապէս 'ի ճշմարիտ հաւատս Աստուծոյ և խոստացեալ Մեսիային՝ անձերկիւղ համարձակութեամբ։ Մարգարէք կոչեցեալ 'ի պաշտօն վարդապետութեան Բանին Աստուծոյ՝ թողութիւն խակ և խակ զրնտանիս և զինչս իւրեանց, և շրջեալ քաղաքէ 'ի քաղաք, գիւղէ 'ի գիւղ և տանէ 'ի տուն՝ ընդունին հոգեւոր սիրութեամբ զՀրէշտակսն, և 'ի վկայութիւն ճշմարտութեան բանիցն՝ զոր քարոզէին, քաղցրմբ 'ի նոցանէ նահատակեցան սէր սէր մահուամբք։

## ՑՕԴԻԱԾ ԻՆՆԵՐՈՐԴ.

### Մարգարէութիւնք՝ որք որոշեն զժամանակ յայտնութեան Մեսիայի.

Հ. Ա՞ռ ինչ ակնարկէր մարգարէութիւն նոցա։

Պ. Ամէն յանդիմանութեան ապաշաւոյ Աստուածային առաքելութեան նոցա՝ էր կանխագիտութիւնն կամ յայտնութիւն ապագայից, զոր ունէին. քան զոր մարգարէականին նոքա ըստ 'ի վերուստ եղեալ յայտնութեանն զնոխատեսութեանց և զգուշացից, զոր յետ ժամանակաց կրելոց էին թագաւորութիւնք Յուդայ և Իսրայէլի, պետութիւնք Ասորեստանեայց, Եգիպտացւոց, Բաբելոնի, Պարսից, Յունաց, Մոգաբացւոց, և այլն, և քաղաքքն Տիւրոս, Նինուէ, և այլն. այլ առաւել քան զոր յիշեցաքն 'ի վերոյ՝ կանխատեսութիւն նոցա հայէր 'ի խոստացեալն Աստուծոյ Մեսիային՝ իբրև 'ի սկիզբն, 'ի միջոց և 'ի նպատակ բոլորովին տեսութեանց հնոյ ուխտի։ 'Ի բազմաթիւ գուշակութեանց նոցա ասուի 'ի մէջ թերեալ ըզ-

ասկաս և եթէ՝ իրրև զանձոյի և ակնարկու ապացոյցս Աստուածայնութեան Քրիստոսական Կրօնի։

## ՅՕԳՈՒԱԾ ՏՕՄՆԵՐՈՐԴ.

Քարոզարէութիւն Դանիէլի յապագայ եօթանասուն եօթներորդացն.

Հ. Զի՞արդ մարգարէացաւ Դանիէլ զգալանեն Մեսիայի։

Պ. Մերձ 'ի կատարումն գերութեան Բաբելոնի՝ մինչդեռ յաւուր միում Ջերմեռանդն աղօթիւք խոստովան լինէր Դանիէլ զմեղս Իսրայէլի առաջի Աստուծոյն՝ պատգամելով ողորմել բազմութեան սրոյ, և այլ առնել ժողովրդեանն, երևեցաւ նմա Հրեշտակ Տեառն, և ասաց. «Դանիէ՛լ այժմ եկի խելամուտ առնել զքեզ. 'ի սկզբան աղօթից քոց եկ պատգամ, և ես եկի պատմել քեզ... 'ի միտ ա՛ռ զառեսիլդ. եօթանասուն եօթներորդք համատարածեցան 'ի վերայ ժողովրդեան քո և 'ի վերայ քաղաքին սրբոյ՝ 'ի վախճանել մեղաց, և 'ի կնքել անօրէնութեանց. և 'ի ջնջել անիրաւութեանց, և 'ի բերել սիրարշաւութեանց, և 'ի դալ յաւիտենական արդարութեան, և 'ի կնքել տեսլեան և մարգարէի, և յօծանել Սրբութեան սրբութեանց...»

Հ. Մեկնեա զիմաստ եօթանասուն եօթներորդացն։

Պ. Եօթանասուն եօթներորդքն նշանակեն անուանակոչս զ490 ամս, որ էր միջոց սահմանեալ յԱստուծոյ յաղագս գալստեան Մեսիային՝ յորմէ անտի յայտնելոյ Դանիէլի Հրեշտակապետին զառեսիլն, զոր հաշուեալ 'ի ժամանակէ անտի՝ յորում եւ Արտաշէս երկայնաձեռակ երկրորդ զհրամարտակ նորոգութեան Երուսաղէմի, մինչ ցժամանակ յայտնութեան Մեսիայի բոլորեալ անուանեմք զամս 490. զոմանս զի եօթներորդքն պատշաճին 'ի հին Կտակարանի սովորարար ամաց առաւել քան թէ աւուրց և գիշերաց (Գեն. ԽԹ. 8)։

Հ. Զի՞նչ գործելոյ էր Մեսիային (Օծեալն)։

Պ. Ջնջելոյ էր զմեղս և զանօրէնութիւնս հաւատացելոյ, քաւելոյ էր զամբարշաւութիւնս նոցա՝ բերելով յերկիր մաքրութեան իւրով զարդարութիւն յաւիտենական, որով կատարելոյ էին անոնք և մարգարէութիւնք. և զայս ամենայն գործել կարէր միմիայն անեղծելոյ Մեսիային, և ո՛չ այլ ոք 'ի մարդկանէ կամ

'ի Հրեշտակաց (Եսայ. ԿԱ. 1։ Զաք. Գ. 8։ Մաղաք. Գ. և Դ.)։ Բայց ակնարկէ և բան առաքելոյն Պետրոսի. «Զմա ամենայն Մարգարէքն վկայեն՝ թողութիւն մեզաց առնուլ անուամբ նորա ամենայն հաւատացելոց 'ի նա» (Գործ. Ժ. 43)։

Հ. Զի՞նչ խնամս ընծայեցուցանէ Արքութիւն արքութեանցն։

Պ. Ներքինական առնամբ զամենասուրբ մասն տանջարին Երուսաղէմի ընդ վարագուրաւ, ուր բնակէր տիրապէս Աստուած. իսկ խորհրդական առնամբ զԱնոսիոյն. քանզի նա միայն է՝ որ 'ի հին Կտակարանի կոչի Սուրբ սրբոց կամ Աստենաւորք (Եսայի. ԺԲ. 6։ Սաղմ. ՃԵ. 10)։ Զնեանէ զուշակեալ էր, թէ ըստ մարմնաւորութեան իւրոյ ածցի Հոգւով սրբով (Եսայ. ԿԱ. 1։ Սաղմ. ԽԳ. 8) 'ի նա հանդիպիլ Հոգի Աստուծոյ, և լցուցէ զնա ամենայն շնորհօք իւրովք (Եսայի. ԺԱ. 2 և 3)։ Զոր կոչեսցի Էմմանուէլ (Մատթ. Ա. 23), այսինքն է՝ Աստուած ընդ մեզ. և 'ի նմա՝ ըստ Առաքելոյն, ճշմարտաբար բնակեցաւ լրութիւն Աստուածութեան մարմնաւորապէս (Կոլ. Բ. 9)։

Հ. Ո՞ւմ պատուանի Քրիստոս (Օծեալ) անուն։

Պ. Թէ և 'ի հին Կտակարանի այս անուն ընծայի Քահանայից և Մարգարէից երբեմն, այլ յատկապէս Աստուծոյին միայնակ վերապահեալ էր 'ի Հրէից։ «Զի՞ միրուս՝ եթէ զոր չեմ Քրիստոսն՝» հարցանէին Փարիսեցիքն ցՅովհաննէս (Յովհ. Ա. 25), զոր 'ի սկզբանն Անուխս հաստատէին։ «Գիտեմ՝ զի Մեսիա գայ՝ անուանեալն Քրիստոս» (Յովհ. Դ. 25)՝ ասայ առ Փրկիչն՝ կինն Սամարացի։ «Դու ես Քրիստոս» (Մարկ. Ը. 2)՝ ասայ նմա և Առաքեալն Պետրոս՝ դաւանել կամեցեալ զնա խոստացեալ Մեսիա։

Հ. Զի՞նչ նշանակէ յաւելուածս՝ «և 'ի շինելն Երուսաղէմ միջնեալ ցօծեալն առաջնորդ եօթնեներորդք եօթն»։

Պ. Զ49 ամայ շրջանն՝ յորում Հրէայք ըստ զօրութեան երկրորդ հրամարտակի (1) Արտաշիսի շինեցին վերստին զտաճարն և զԵրուսաղէմ միանգամայն՝ կրեալով թաղում հակառակութիւնս ըստ վկայելոյ Եզրասայ և Փարիսեցոյ՝ 'ի շրջակայ ազգայ. որպէս և զարձանօր ասէին Հրէայք ցՓրկիչն զտաճարին. «Զքառասուն և զվեց ամ շինեցաւ տաճարս» (Յովհ. Բ.

---

(1) Արտաշէս նոր զՀրամարտակն զայն յանուն Նէհէմայ (Նէհէմ. Բ. 1) 'ի քառասն տարի ամի թագաւորութեան իւրոյ՝ 453 ամաւք նախ քան զծնունդն Քրիստոսի։

20) ։ Պակասութիւն երից ամացն ցուցանէ յաղագս սատիկ ընդդիմութեան թշնամեացն՝ զմիջոց պարապոյ ժամանակին ։ յորում արդիւնաւոր ծառայ շինութիւն տաճարին ։

Հ. Մեկնեսա և զնշանակաւ « եօթներորդն վաթսուն երկու »՝ ցուցեալն 'ի Մարգարէէն ։

Պ. Զեօթներորդս եօթն՝ այսինքն զ49 ամս հանեալ յեօթանասուն եօթներորդացն յաղագս շինութեան Երուսաղէմի և տաճարին, ասայ այլ ևս եօթներորդ վաթսուն երկու՝ այսինքն 483 ամի. որոյ 'ի սկզբանէն յայտնեցաւ մերութեամբ յաչխարհի ծնեալ առաջնորդն, և յեօթանասներորդ եօթներորդումն քան Մարգարէին « Բարձաւ օծութիւնն, և իրաւունք ոչ եղեն 'ի նմա (Երուսաղէմ). ուր անիրաւութեամբ սպանաւ Քրիստոս անպարտականն մահու, և պատարագաւ՝ անձին իւրոյ զադարեցոյց զանգանս և զպատարագս, և երարձ զքաղաքս և զնուէրս Հրէից » (Դան. Թ։ Եր. Ժ. 4—10) ։

Հ. Ո՞վ է առաջնորդն, որ պատերազմաւ ապստամբելոց էր զբաղարն և զարբութիւնն Հրէից, և աւերութեամբ պղծելոց էր զտաճարն Երուսաղէմի ։

Պ. Տիտոս կայսր. որոյ պաշարեալ զԵրուսաղէմ վաղվաղակի, այսինքն 40 ամսոր զկնի մահու Փրկչին՝ կործանեաց զայն. միանգամայն հիմն 'ի վեր տապալեաց զտաճարն, և երարձ զթագաւորութիւն Հրէից՝ տարագիր արարեալ զնոսա ընդ աշխարհս ամենայն, որով պղծեցաւ արքութիւն նոցա, և կատարեցաւ իսկութեամբ մարգարէութիւն Դանիէլի ։

## ԵՕԹՆԱԿԱՆ ՁՈՐՐՈՐԴ.

Մարգարէութիւնք Անգեայ և Մաղաքիայ յաղագս գերազանցելոյ փառաց երկրորդ տաճարին առաւել քան զառաջինն գալստեամբ Քրիստոսի.

Հ. Զի՞նչ մարգարէացաւ Անգեայ յաղագս գալստեան Մեսիային ։

Պ. Սուրբն Անգեայ երևեցաւ 'ի ժամանակին, յորում դարձ արարեալ Հրէից 'ի գերութենէ՝ առաջնորդ ինքեանց ունելով զԶորոբաբէլ, թէպէտև ձեռն արկեալ էին 'ի շինութիւն տաճարին, այլ կրեալ զսատիկ հակառակութիւնս 'ի թշնամեաց՝ բար-

ձի թողի էին արարեալ։ Մարգարէն առ 'ի խրախուսել զնոսա՝ զուշակէ զգերազանցութիւն փառաց երկրորդ տաճարին. «Քաջալերացարո՛ւք. զի այսպէս ասէ Տէր ամենակալ. զորմէալ միւսանգամ շարժեցից զերկինս և զերկիր և զծով և զցամաք, և միանգամայն շարժեցից զամենայն ազգս. և եկեսցէ ընտիր ընտիր ընչից (իմա՛ ցանկալին կամ ակնկալութիւնն) ամենայն ազգաց, և լցուցից զտունդ զայդ փառաւ. զի մեծ եղիցին փառք տանդ այդորիկ վերջինդ քան զառաջինն՝ ասէ Տէր ամենակալ» (Ագ. Բ. 7—10)։

Հ. Զի՞նչ մարգարէացաւ Մաղաքիա յաղագս գալստեան Մեսիային։

Պ. Մաղաքիա՝ որ վերջինն էր Մարգարէից, զուշակեաց զգ Մեսիայէ փոքր մի զկնի Ագեայ՝ օրինակ զայս. «Ահա ես առաքեմ զհրեշտակ իմ, և տեսցէ զճանապարհս իմ առաջի իմ. և յանկարծակի եկեսցէ 'ի տաճար իւր Տէր՝ զոր դուք խնդրէք, և հրեշտակն ուխտի՝ զոր դուք կամիք, ահաւասիկ գայ՝ ասէ Տէր ամենակալ» (Մաղաք. Գ. 1)։

Հ. Մեկնեսո՞ ինձ զառաջինն 'ի մարգարէութենանց ասի։

Պ. «Ընտիր ընտիր կամ ակնկալութիւն ամենայն ազգաց» բանիւս յայտ առնէ Մարգարէն ճշգրտապէս զՄեսիայն. քանզի այսպէս կոչի նա և 'ի զուշակութենէ Յակոբայ (Ծնող. ԽԹ. 10). և անուն այս բան հինաւուրց խոստմանց Աստուծոյ և բան մարգարէութեանց (Ծնող. ԻԲ. 18։ Եսայ. ԺԱ. 10։ ԽԹ. 6)՝ Մեսիային միայնակ սեպհականեալ է։ Եւ զի նիւթականն տաճարն երկրորդ՝ որ զրկեալն էր արդէն 'ի Տապանակէն, 'ի տախտակացն օրինաց, 'ի գաւազանէն Ահարոնի, և այլն, թէ՛ բան ճարտարակերտութեանն, թէ՛ բան զարդուցն՝ զորով նուաստացեալն իմն և անշուք (Ա. Եզրաս. Գ. 2)՝ ո՛չ երբէք կարէր փառաւորութեամբ կամ ճոխութեամբ հաւասարիլ առաջնոյն. թէ՛ զի թէ գերազանցել. ուրեմն փառք այնորիկ էր գալուստ և ելթ և այցելութիւն Մեսիայի՝ փառաց թագաւորի (Սաղմ. ԻԳ. 7 և 8) և Տեառն փառաց (Ա. Կորնթ. Բ. 8)։

Հ. Կատարեցա՞ւ իսկապէս մարգարէութիւն Ագեայ։

Պ. Այո՛՝ կատարեցաւ լրիւ. վասն զի Մեսիայն երևեցաւ յաշխարհի՝ մինչ տակաւին շէն կայր երկրորդ տաճարն, որ և կործանեցաւ զկնի մահու Փրկչին. սմին իրի մեծ անմտութիւն է ակն ունել յայտնութեան նորոյ Մեսիայի. զի առաւել քան

1800 ամ. են, յորմէ հետէ աւերեալ է ցուցեալն 'ի Մարգարէին տաճարն. և զի երկինք և երկիր, ծով և ցամաք և ամենայն ազգք՝ ըստ բանին Աստուծոյ շարժեալ դղրդեցան ծննդեամբ, մկրտութեամբ, խաչելութեամբ, յարութեամբ և քարոզութեամբ Փրկչի և Առաքելոց նորա։

Հ. Մեկնեա զերկրորդն 'ի մարգարէութեանց տուր։

Պ. Մաղաքիա առաւել ևս պարզութեամբ գուշակէ զՄեսիայէ՝ կոչելով զնա «Տէր և Հրեշտակ ուխտի». այլ այսպիսի անուանք 'ի հին Կտակարանի՝ բայց 'ի Մեսիայէ՝ ո՛չ այլում ումեք պատշաճին. գուշակէ, թէ «Եկեսցէ 'ի տաճար իւր Տէր», զոր անհնարին է այլում ընծայել, բայց միայն Աստուծոյ և Մեսիայի. կոչէ «զՏէրն և զՀրեշտակն ուխտին»՝ ակնկալութիւն Հրէից. զոր նորա խնդրէին և կամէին. և ո՞ւմ ումեք ակնկալեալ ապասէին յամենայն դարս որդիք Իսրայէլի, եթէ ո՛չ Մեսիայի միայնում։

Հ. Կատարեցա՞ւ իսկապէս մարգարէութիւն Մաղաքիայ։

Պ. Այո՛. իբր զի նախ քան զյայտնութիւն Տեառն տաճարի և հրեշտակի նորոյ ուխտին՝ առաքեցաւ առաջի նորա Յովհաննէս Կարապետն պատրաստել զճանապարհն իւր. և ինքն յայց ել տաճարին՝ ո՛չ իբրև զայլս 'ի մարդկանէ, այլ իբրև Տէր տաճարին, և հաստատեալ անտի զդնոցս և զխաճատուն՝ փառաւորեաց զայն՝ Աստուածային արքութեամբ և ճշմարտութեամբ և հեզմամբ արեան իւրոյ հաշտեցուցեալ զմարդիկ ընդ Աստուծոյ՝ հաստատեաց ուխտս նոր՝ եղեալ ինքնին միջնորդ կամ հրեշտակ այնորիկ։

## ՅՕԳՈՒՍԱԾ ՀԻՆԳԵՐՈՐԴ.

Մարգարէութիւնք յաղագս ցեղին՝ յորմէ երևելոց էր Մեսիայն.

Հ. Խօսի՞ն Մարգարէք զցեղն՝ յորմէ ծնանելոց էր Մեսիայն։

Պ. Այո՛. զոր Մարգարէքն որոշեալ իսկութեամբ զժամանակ երևելոյ Մեսիային յաչխարհի՝ ցուցին նոյնպէս և զցեղն՝ յորմէ ծնանելոց էր նա, հանդերձ տեղեաւ և եղանակաւ ծնընդեանն։

Հ. Գիտէի՞ն Հրէայք զցեղն՝ յորմէ ծնանելոց էր Մեսիայն։

Պ. Ընտրեսամանցն Աստուծոյ առ Ղևհայեանն Աբրահամ, Իսահակ և Յակոբ՝ անուանակոչս գիտէին, թէ 'ի ցեղէ նոցա ծը-

նանելոց էր Փրիսկոս կամ Ակվիլան ըստ մարմնոյ (Հռոմ. Թ. 8). և յանկարծ 'ի ցեղն Յուդայ՝ միոյ յերկոտասան ցեղիցն Իսրայէլի, ըստ գուշակելոյ Յակոբայ նահապետի. զնոյն բան կրկնելով Մարգարէից՝ առաւել ճշգրտութեամբ բացատրեցին, թէ խոստացեալ Փրկիչն ծնանելոց էր յարմատոյն Յեսսեայ յազգէ Դաւթի (1)։

Հ. Ո՞՝ 'ի մարգարէից զառաջինն գուշակեաց զայսմանէ։

Պ. Նաթան. որոյ յայտ արարեալ Դաւթի, թէ յետ մեռանելոյ նորա Սաղոմոն որդի իւր կանգնեսցէ զտաճար Տեառն, յաւելու 'ի բերանոյ Աստուծոյ. «Հաստատիցի յիշի անուն (տուն) նորա և արքայութիւն նորա առաջի իմ մինչև ցյաւիտեան, և աթոռ նորա կացցէ կանգուն առաջի իմ մինչև ցյաւիտեան» (Բ. Թագ. Է. 16)։ Զայս խոստումն կրկնել և ինքն Դաւիթ 'ի Սաղմոսի իւրում՝ խօսելով 'ի կողմանէ Աստուծոյ. «Միանգամ երդուայ 'ի պրոյթիւն իմ, թէ Դաւթի ես ոչ ստեցից։ Զաւակ նորա յաւիտեան կացցէ, և աթոռ նորա որպէս արեգակն առաջի իմ, որպէս լուսին՝ զի հաստատեալ է յաւիտեան» (Սաղմ. ՁԸ. 36—38)։

Հ. Գուշակէ՞ ինչ զայսմանէ Եսայի։

Պ. Այո՛. քանզի ասէ. «Բղխեսցի գաւազան յարմատոյն Յեսսեայ, և ելցէ ծաղիկ յարմատոյ անտի. և հանդիցէ 'ի վերայ նորա հոգի Աստուծոյ, հոգի իմաստութեան և հանճարոյ, հոգի խորհրդոյ և զօրութեան, հոգի գիտութեան և Աստուածպաշտութեան. և լցցէ զնա հոգի երկիւղի Աստուծոյ... և եղիցի յաւուրն յայնմիկ արմատն Յեսսեայ, և որ կանգնելոցն է՝ իշխան հեթանոսաց, և 'ի նա հեթանոսք յուսացին» (Եսայ. ԺԱ. 1-10)։

Հ. Գո՞ն այլ ևս Մարգարէք՝ որք խօսեցան զայսմանէ։

Պ. Գոն՝ այո՛, Երեմիա և Եզեկիել։

Հ. Զիա՞րդ խօսի Երեմիա։

Պ. «Ահա՛ աւուրք գան՝ ասէ Տէր, և յարուցից Դաւթի ծագումն արդարութեան. և թագաւորեսցէ թագաւոր, և 'ի միտ ածցէ, և արասցէ իրաւունս և արդարութիւն 'ի վերայ երկրի։

---

(1) Անչափ մեծ էր ակնկալութիւն ծննդեան Մեսիային յազգէ Դաւթի, մինչ զի Տրայիանոս կուսակալ վերջ տալ անդադար վտարանջութեանց Հրէից՝ հրաման եւ սրով բառնալ յերկրէ զրովանդակ ցեղն Դաւթի. ընդ որս նահատակեցաւ և սուրբն Շմաւոն ազգակից Փրիսկոսի։

Յաւուրս նորս փրկեացի Յուդա, և Իսրայէլ բնակեսցէ յուսով. և այս է անուն նորա՝ զոր կոչեսցէ նմա Տէր, Յովսեդեկ (Տէր արդարութիւն մեր) 'ի մարգարէս՝ արդարութիւն մեր» (Զաքար. Ի Գ. 5 և 6՝ համեմատեա՛ ընդ Լ Գ. 15 և 16)։

Հ. Իսկ Եզեկիէլ։

Պ. «Կայուցիս 'ի վերայ նոցա հովիւ մի՝ զծառայ իմ զԴաւիթ, և նա հովուեսցէ զնոսա. նա եղիցի նոցա հովիւ, և նա ոչ եղիցի նոցա Աստուած, և Դաւիթ ծառայ իմ իշխեսցէ 'ի մէջ նոցա։ Ես Տէր խօսեցայ», (Եզեկ. Լ Գ. 23. և 24)։

Հ. Ի՞նչ ասացուցանէ, թէ զուշակութիւն Նոսթանայ առ Մեսիան վերաբերի և ո՛չ առ այլ ոք։

Պ. Վասն դի եթէ Նոսթան, և եթէ Դաւիթ՝ խօսին առանձնայ զայնպիսի զաւակէ, որ թագաւորելոցն էր յաւիտեան, և ո՛չ եթէ զՍողոմոնէ կամ զՌեհաբեամայ ցեղին Դաւթի՝ որոյ թագաւորութիւնն բարձաւ 'ի Յուդայ գերութեամբն Բաբելոնի։ Յայս տակս տիրապէս ապաշաւի այս՝ միում միայնում Մեսիայի, որ թագաւորելոցն էր յաւիտեան յաւիտենից հոգեւորապէս։ Եւայլ վկայէ, թէ 'ի վերայ զաւազանի արմատոյն Յեսսեայ հանդիպեցէ հոգի Աստուծոյ լրութեամբ հանդերձ ամենայն պարգեւաց իւրոց, և 'ինքն հեթանոսք յուսացին։ Երեմիա յաւելու, թէ թագաւորն այն եղիցի իմաստուն, և արասցէ յերկրի դիրաւորութիւն և զարդարութիւն. և անուն նորա կոչեսցի Տէր արդարութիւն մեր։ Եզեկիէլ նկարագրէ զդէպս Դաւթին զայն (1)՝ հովիւ և ասաջնորդ, որում խոստանայ Տէրն լինել Աստուած։ Այս ամենայն այնպիսի յատկութիւնք են, որ բաց 'ի Մեսիայէ՝ ո՛չ այլ ինչ կերպիւ ապաշաւիլ կարեն այլում ումեք։

Հ. Կատարեցա՞ն մարգարէութիւնքս 'ի Քրիստոս։

Պ. Այո՛. քան զի զՍարարիա 'ի ծննդեան որդւոյ իւրոյ ասէ. «Օրհնեալ Տէր Աստուած Իսրայէլի, զի այցս եալ մեզ, և արար փրկութիւն ժողովրդեան իւրում. և յարոյց եղջիւր փրկութեան մեզ 'ի տանէ Դաւթի ծառայի իւրոյ, որպէս խօսեցաւ բերանով Սրբոցն՝ որ յաւիտենից Մարգարէքն նորա էին» (Ղու. Ա. 68—70)։ Հրէայք զարմացեալ 'ի վերայ հրաշից Փրկչի՝

(1) Վասն զի առաջին Դաւթին՝ 'ի ջրեալ հարիւր տասն հեազ ենչէր 'ի գերեզմանի. այլ այս էր սովորութիւն Հրէից, ընդ որս զակառաւոր զաւակունս կոչէին յանուն ակառաւոր նախահարց։

ասէին. «Միթէ սա՞ է որդի Դաւթի» (Մատթ. ԺԲ. 23)։ Ամենայն խոստովանելով զնա Մեսիա, և հայցելով զթութիւն անձանց՝ աղաղակէին. «Ողորմեայ մեզ՝ որդի Դաւթի» (Մատթ. Թ. 27. ԺԵ. 22. Ի. 30։ Ղուկ. ԺԸ. 38)։ Եւ 'ի մնանելն նորա հանդիպեալ Յերուսաղէմ՝ կարգոյր մարդերան ընդ առաջ ելեալ ժողովրդեն. «Ովսանա՛ որդւոյ Դաւթի» (Մատթ. ԻԱ. 9)։

## ՅՕԳՈՒԱԾ ԵՐԿՈՏԱՍԱՆԵՐՈՒԴ.

Բարգաւաքութիւնք յազգս տեղւոյն՝ ուր Ժեսանեցոց էր Քեսիոյն.

Հ. Ո՞՝ Մարգարէից Նոխազուշակն զտեղի Ծննդեան Մեսիայի։

Պ. Միքիա հեռաւեալ բանիս. «Եւ դու Բեթղեհէմ՝ տուն Եփրաթայ՝ ամենաւոր իցես լինել 'ի հազարաւորս Յուդայ. 'ի քէն ելցէ ինձ լինել իշխան Իսրայէլի, և ելք նորա 'ի սկզբանէ աւուրց աշխարհի» (Ե. 2)։

Հ. Պատչանքն մարգարէութիւնս Քրիստոսի։

Պ. Ըստ ամենայնի. նախ՝ զի Մարգարէն զուշակէ զելս 'ի Բեթղեհէմէ այնոքիսի անձին, որ ունի յատաջնեմ և զայլ ելս. «Եւ ելք նորա 'ի սկզբանէ աւուրց աշխարհի». այսինքն է՝ նախայաւիտենականութիւն կամ անսկիզբն գոյութիւն նորա. իսկ արդ ո՞ւմ 'ի հաղածնայ Հնարէ պատչանելոյ զգուշակութիւնս զայս, եթէ ոչ Մեսիայի միայնոյ։ Բայց յայտանէ՝ որ ծրնունելոցն է 'ի Բեթղեհէմ, կոչի իշխան Իսրայէլի, որպէս և կոչէին զՄեսիայն այլ Մարգարէք (Եղեկ. ԼԷ. 21—22)։ Փոքր մի զկնի հատատաւ մարգարէն, թէ թագաւորս զօրութեամբ Եհովային ժողովեալ ընդ իշխանութեամբ իւրով զամենայն Իսրայէլ, և փառաւորեալի մինչև 'ի կատարած յաւիտեանց (Ե. 3. և 4). որպէս գուշակեն և այլք (Եղեկ. ԼԷ. 21։ Սաղմ. ԻԱ. 28. ՀԱ. 8), թերցէ ընդ իւր զկատարեալ խաղաղութիւն Իսրայէլի (Ե. 5), բարձցէ 'ի ժողովրդենէ զհմայութիւնս և զվհուկս, խորտակեալցէ զանդրիս, և կործանեալցէ ըղպաշտոն կռոց (Ե. 12—14։ Եղեկ. ԼԷ. 23)։

Հ. Հաւատայի՞ն Հրէայք, եթէ 'ի Բեթղեհէմէ յառնելոյ է Մեսիայի։

Պ. Այս. քանզի որպէս վկայէ Աւետարանական պատմութիւնն՝ եկեղեցին Հրէից, այսինքն քահանայապետք և դպիրք նոցա ընդ հարցումն Հերովդիսի՝ «Ուր ծնանիցի Քրիստոս», պատասխանեցին միաբերան՝ «Ի Բեթղեհեմ Հրէաստանի». և յապացոյց բանից իւրեանց ի մէջ ածին զմարգարէութիւն Միքիայ (Մատթ. Բ. 4—6). ամենեքեան նման և սմանք ի ժողովրդենէ զՔրիստոս ի Գալիլէէ կարծելով՝ հարցանէին տարակուսութեամբ. «Ոչ դիպք ասեն, եթէ ի զաւակէ Դաւթի և ի Բեթղեհեմ գեղջէ՝ ուր Դաւիթն էր, գալոց է Քրիստոս» (Յովհ. Է. 42). Չկասարումն մարգարէութեանս ի վերայ Յիսուսի Քրիստոսի՝ յայտնէ բովանդակապէս Աւետարանագիրն (Ղու. Բ. 1).

## ՅՕԳՈՒԱԾ ԵՐԵՔՏԱՍՆԵՐՈՐԴ.

### Մարգարէութիւն յապագս հրաշալի եղանակաւ ծննդեան Մեսիայի.

Հ. Յիսո՞ւ զուշակէ Մարգարէն զծննդենէ Մեսիայի։

Պ. Ոչ ըստ օրինակի հասարակաց մարդկային ծննդեան, այլ յամենամաքուր կուսէ զերբնական և հրաշալի ինն եղանակաւ. որպէս նախասաձանոյց Եսայի. «Ահա կոյս յղասցի, և ծնցի զորդի, և կոչեսցեն զանուն նորա Էմմանուէլ» (Է. 14).

Հ. Ի՞ւ ասասցուցանէ, թէ զուշակութիւնս առ Քրիստոս վերաբերի տիրապէս և ոչ առ այլ ոք։

Պ. Գերագոյն կոչմամբքն՝ զորս ընծայէ Մարգարէն մանկանն, որ ծնանելոյն էր ի կուսէն, զօրօրինակ Էմմանուէլ՝ տիրապէս Մեսիայի և եթէ սեպհական, ըստ որում Աստուած ի նմա և նովաւ ի մեզ բնակի։ Յընդ մեզ Աստուածն, կամ որ նոյն է՝ զԷմմանուէլն. բարձրագոյնանէ առաւել քան զառաւել՝ կարդալով այսպէս. «Մանուկ ծնաւ մեզ, որդի տուաւ մեզ, որոյ իշխանութիւն իւր եղեւ ի վերայ ուսոց իւրոց, և անուն կոչեցաւ նմա հրաշալի մեծի խորհրդոյ, սքանչելի խորհրդակից, Աստուած, հզօր. իշխան (խաղաղութեան), հայր հանդերձելոյ աշխարհի» (Թ. 6). ու՞մ ումեր ի մարդկանէ հնար է ընծայել զնմանօրինակ անուանս՝ բայց ի Մեսիայէն, որում արդարեւ արդարքն ակնկալեցան Ձեսային հնոյ ուխտի իբրեւ Աստուծոյ (Սաղ.

Խե. 7 և 8), իբրեւ Տեառն (Սաղմ. ՃԹ. 1) և իբրեւ Եհովայի (Ծնող. ԺԶ. 7. 10 և 11։ Ելից. Գ. 3, 4 և 6)։

Հ. Զիա՞րդ խօսի մարգարէն զկուսական ծննդենէն Քրիստոսի։

Պ. Կոչէ զմայր նորա ըստ Երրայականին Ալմա, որ ճիշդ առմամբն նշանակէ կոյս ազջիկ, օրիորդ սուրբ, անապական և ամենակոյս։ Ի հին կտակարանի յեսթն տեղիս Ի կիր արկեալ է բառս Ալմա, և ամենայն ուրեք մի և նոյն նշանակութեամբ (Ծնող. ԻԴ. 43։ Ելից. Բ. 8։ Սաղմ. ԿԷ. 26։ Երգ երգ. Ա. 2. Զ. 7։ Առակ. Լ. 19։ Եսայ. Է. 14). յորմէ յղացաւ ազգեցութեամբ Հոգւոյն սրբոյ, և ծնաւ անհայր հրաշալի ծնընդեամբ Մեսիայն։

Հ. Լցա՞ւ մարգարէութիւնս Ի վերայ Քրիստոսի։

Պ. Այո՛. վասն զի աւետարանիչն Մատթէոս հաղիւ խօսեցեալ զանսերումն յղութենէ Յիսուսի Քրիստոսի յորովայնի ամենասուրբ կուսին Մարիամու՝ յաւելու անդէն և անդ. «Այս ամենայն եղեւ, զի լցցի՝ որ ասացաւն Ի Տեառնէ Ի ձեռն Եսայեայ մարգարէի. ահա կոյս յղացցի, և ծնցի զորդի, և կոչեսցեն զանուն նորա Էմմանուէլ, որ թարգմանի՝ ընդ մեզ Աստուած» (Մատթ. Ա. 22 և 23)։ Այլ թէ զիա՞րդ պատշաճին Մեսիային՝ մեծագեալ անուանքն, զորս տայ մարգարէն մանկանն Օծելոյ՝ բացատրեալ են յայլ և այլ գլուխս գրոց։

## ՅՕԳՈՒՍԾ ՁՈՐԵԲՏԱՍՆԵՐՈՐԴ.

Մեսիայն է Էմմանուէլ կամ Աստուած և մարդ միանգամայն.

Հ. Զի՞նչ այլ ևս գուշակեն Մարգարէք զՄեսիայէ։

Պ. Զանձնէ և զպարտականէ Մեսիային խօսին Մարգարէք, թէ եղիցի նա Աստուած և մարդ միանգամայն. եղիցի Մարգարէ, որ քարոզեսցէ ժողովրդեան խրատ զուխտ նոր. եղիցի Քահանայապետ, որ մատուցցէ զանձն իւր Ի պատարագ վասն թողութեան ամենայն մեղայ Հաւատացելոց. և եղիցի վերջապէս Թագաւոր, որ հոգեւորապէս հովուեսցէ զնորն Իսրայէլ։

Հ. Խօսի՞ն Մարգարէք զմարդկութենէ Մեսիայի։

Պ. Այո՛. որպէս Ի վերս անդր տեսաք, Հառեցին նորա ըղձեղէն՝ յորմէ ծնանելոցն էր ըստ մարմնոյ Քրիստոս, զքաղաքէն՝ ուր ծնանելոցն էր. և զեղանակէն՝ ըստ որոյ ծնանելոցն էր Ի կու-

սէն. սմին իրի և չիր պէտք միատանգամ 'ի մէջ բերելոյ զՄարգարէս։

Հ. Խօսքն և զԱստուածութիւնն։

Պ. Բազում օրինակաւ։ Եթէ՝ զի 'ի խօսքն զՄեսիայէ՝ ասենայն ուրեք կոչեն զնա Եհովան, որ բառ խառնուրդն լինելոյ Հրէից՝ Աստուծոյ միայնում բացարձակապէս տուեալ լինի։ Այս անուն այնչափ յարգի էր առ Հրէայս ընդհանրապէս, մինչ զի անգամ մի միայն 'ի տարեօրէն արտասանէր զայն Քահանայապետն յատուկ քաւութեան. «Ահա ասերբ զան՝ ասէ Տէր. հաստատեցից զրանս իմ բարի, զոր խօսեցայ 'ի վերայ տանդ Իսրայէլի և 'ի վերայ տանդ Յուդայ։ Յաւուրսն յայնոսիկ և 'ի ժամանակին յայնմիկ ծագեցից Դաւթի ծագումն արդարութեան, որ առնիցէ իրաւունս և արդարութիւն յերկրի։ Յաւուրսն յայնոսիկ փրկեսցի Յուդա, և Երուսաղէմ բնակեսցի յուսալի։ Եւ այս է անուն՝ զոր կոչեսցէ նմա Տէր արդարութիւն մեր՝ Եհովա» (Երեմ. ԼԳ. 14—16)։ Երկրորդ՝ զի Եսայիա 'ի գուշակելն զծնանելն Մեսիային՝ զաւանի զնա յայտնապէս Աստուած. «Վասն զի ծնաւ մեզ, որդի տուաւ մեզ, որոյ իշխանութիւն իւր եղեւ 'ի վերայ ուսոյ իւրոյ, և անուն կոչեցաւ նմա հրաշալագործ մեծի խորհրդոյ, արանչելի խորհրդականի, Աստուած հզօր, իշխան (վարդապետութեան), հայր հանդերձելոյ աշխարհի» (Թ. 6)։ Երրորդ՝ զի բազում ուրեք կոչեն զՄեսիայն՝ Որդի Աստուծոյ ծրնեալ 'ի յաստեղեոյ. «Ասայ Տէր ցՏէր իմ. նիստ ընդ աջմէ իմմէ, մինչև եղից զթշնամիս քո պատառանդան ոտից քոց» (Սաղմ. ՃԹ. 1)։ Ինքն Մեսիայն վկայէ զինքենէ. «Տէր ասայ ցիս. որդի իմ ես դու, և ես այսր ծնայ զքեզ» (Սաղմ. Բ. 7)։ Զնոյն վկայէ և Աստուած յաւելն. «Յարգանդէ յառաջ քան զարուսանակ ծնայ զքեզ» (ՃԹ. 3)։ Իսկ մարգարէն Միքիա. «Եւ դու Բեթլեհեմ 'ի տկղքանէ աւուրց աշխարհի» (Ե. 2)։ Զմիաւորութիւնն Աստուածային և մարդկային բնութիւնց յանձին Մեսիային՝ ճառեսցուք յետոյ։

## ՅՕԳՈՒԱԾ ՀՆԳԵՏԱՍՆԵՐՈՐԴ.

### Մեսիայն է Բարգաւիչ.

Հ. Դուշակէ՞ հին Աստուածաշունչն զմարդարէութիւնն Մեսիայի

Պ. Այժ. քանզի 'ի ժամանակի տուչութեան օրինացն 'ի Սինա 'ի ձեռն Մովսէսի՝ խոստացաւ Աստուած տալ նոցա յետ ժամանակաց մարգարէ՝ յասելն. «Մարգարէ յորուցից նոցա յեղբարց իւրեանց իբրեւ զքեզ, և տայց զբանս իմ 'ի բերան նորա... և մարդ՝ որ ոչ լուիցէ՝ զոր խօսիցի մարգարէն յանուն իմ, ես խնդրեցից զվրէժ 'ի նմանէ» (Բ. Օրին. ԺԸ. 18—19)։

Հ. Զիա՞րդ նկարագրէ Եսայիա զՄեսիա—մարգարէն։

Պ. Ոչ իբրեւ զմի 'ի Մարգարէից առաջնոց առաքեալ առ Հրէայս և ի Հեթ, այլ մարգարէ տիեզերական՝ օծութեամբ Աստուածային Հոգւոյ նախակարգեալ, զի ուսուցանեսցէ զիրաւունս Հրէից և Հեթանոսաց հաւասարապէս, և լուսաւորեսցէ զաշխարհս համայն. «Եղիցի յաւուրս յետոյնս լեռան Տեառն և տուն Աստուծոյ 'ի վերայ գլխոյ լերանց, և բարձրասցի 'ի վերայ բլրոց, և եկեսցեն 'ի նա ամենայն Հեթանոսք։ Եւ երթիցեն ժողովուրդք բազումք, և ասասցեն. եկայք երկրաւ 'ի լեռն Տեառն և 'ի տուն Աստուծոյ Յակոբայ, և պատմեսցէ մեզ զճանապարհս իւր, և գնասցուք ընդ նա» (Եսայ. Բ. 2—3)։ «Հոգի Տեառն 'ի վերայ իմ. վասն որոյ հօծ խսկ զիս, աւետարանել աղքատաց առաքեաց զիս, բժշկել զրեկեալս սրտիւք, քարոզել գերեալոց զիմաստութիւն, և կուրաց տեսանել» (Ես. ԿԱ. 1)։

Հ. Զո՞րպիսի ուխտ քարոզէր Մեսիա—մարգարէն՝ Հրէից և Հեթանոսաց։

Պ. Բարբարոսին նոր և անօրինութեան, որպէս ասէ Երեմիա. «Ահաւասիկ աւուրք գան՝ ասէ Տէր, և ուխտեցից առնոյ Իսրայէլի և առնոյ Յուդայ ուխտ նոր՝ ոչ բան ուխտին՝ զոր ուխտեցի ընդ հարս նոցա... զի նորա ոչ կայցին յուխտին իմում, և ես անփոյթ արարի զնոսանէ՝ ասէ Տէր։ Այլ այս է ուխտն՝ զոր ուխտեցից առնոյ Իսրայէլի... տայց զօրէնս իմ 'ի միտս նոցա, և 'ի սիրտս նոցա գրեցից զնոսա, և եղէց նոցա ՅԱստուած, և նորա եղիցին ինձ 'ի ժողովուրդ։ Եւ մի՛ ևս ուսուցանիցեն իւրաքանչիւր զընկեր իւր, և իւրաքանչիւր եղբայր իւր՝ ասել, թէ ծանիր զՏէր. զի ամենեքեան ծանիցեն զիս՝ 'ի փոքրկանոյ մինչև 'ի մեծամեծս՝ ասէ Տէր. զի թողից եղէց անօրէնութեանց նոցա, և զմեղս նոցա ոչ ևս յիշեցից» (Լ.Ա. 31—34)։

Հ. Բառնալո՞ց էր Մեսիա—մարգարէն զպատարագս և զզոհս հնոյ ուխտին։

Պ. Այո՛. ունայնայուսանելոյ էր միանգամայն զպատարագս անդրան կենդանեաց հնոյ ուխտի, և փոխան այնոցիկ հաստատելոյ զնոր և զանարիւն պատարագ մարմնոյ և արեան իւրոյ. բառնալոյ էր ամին նման և զծխական օրէնս Մովսիսի, զի մի յԵրուսաղէմ և ելթ մատչիցին պատարագք, այլ յամենայն ծագս աշխարհի՝ ուր և կարդան զԱստուած. որպէս և մարգարէն կանխասացեալ. «Ոչ են կամք իմ 'ի ձեզ՝ ասէ Տէր ամենակալ. և զպատարագս ո՛չ ընկալայց 'ի ձեռաց ձերոց։ Զի յարեւելից մինչեւ 'ի մուտս արեւու փառաւորեալ է անուն իմ 'ի մէջ ազգաց, և յամենայն տեղիս մատչին խունկք անուան իմոյ և պատարագ սուրբ, զի մեծ է անուն իմ 'ի Հեթանոսս՝ ասէ Տէր ամենակալ» (Մաղաք. Ա. 10—11)։

Հ. Կատարեցա՞ւ մարգարէութիւն Երեմիայ 'ի վերայ Փրիստոսի։

Պ. Լրիւ. քանզի եղեալ նորա միջնորդ նորոյ կատարելագոյն և մշանջենաւոր ուխտի՝ հնացոյց զՄովսիսականն իբրև զժամանակեալ ինչ և զանկատար, եւ և զատուեր հանդերձելոյն բարեաց (Եբր. Ը. 6—13. Թ և Ժ)։

## ՅՕԴՈՒԱԾ ՎԵՇՏԱՍԱՆԵՐՈՐԴ.

### Մեսիայն է Քահանայապետ.

Հ. Կանխասացնե՞ց հին Կտակարանն զքահանայապետութենէ Մեսիայի։

Պ. Զքահանայապետութենէ կամ դյուխտենական քահանայութենէ Մեսիայի գուշակեալ է 'ի Սաղմոսն Դաւթի. «Երդուաւ Տէր, և ոչ ևս զղջասցի, թէ դու ես քահանայ յաւիտեան ըստ կարգին Մելքիսեդեկի, և Տէր ընդ աջմէ քումմէ» (Սաղմ. ՃԹ. 4)։ Գուշակութիւնս այս անտարակոյս է զՄեսիայէն. վասն զի նախ գուշակեալն կոչի յաւիտենական, զոր անհնարին է ընծայել ումեք 'ի մարդկանէ. երկրորդ՝ զի է ըստ կարգին Մելքիսեդեկի յայնժամ, երբ 'ի հնումն ոչ զոյր այսու կոչմամբ դաս ինչ քահանայութեան. իսկ քահանայք Հրէից էին առ հաստակ ըստ կարգին Ահարոնի. և երրորդ՝ զի կոչի Տէր Դաւթի, և այնպիսի Տէր՝ զոր ինքն Եհովայն ասաց. «Նիստ ընդ աջմէ իմմէ»։

Հ. Ո՞րպիսի ինչ լինելոց էր ապաստարութիւն Օծեալ—քահանայապետին։

Պ. Սահմանեալ էր նմա 'ի յարիւնից մատուցանել Աստուծոյ 'ի բաւութիւն մեղաց մարդկան՝ պատարագ հաշտարար՝ ոչ քան կարգի Ահարոնեան Քահանայիցն զանազան կենդանիս, այլ զանձն իւր, և յինքեալ միշտ բարեխօս վասն մեր. «Եւ յետ վաթսուն երկուց եօթներորդաց բարձցի օծութիւն, և իրաւունք ոչ իցեն 'ի նմա» (Դանիէլ. Թ. 26). այսինքն ապանցի Օծեալն անապատ մահուամբ, կամ թէ ոչ վասն անձին ինչ իւրոյ։ Զայսի այնպէս ճշգրիտ և մանրապատում՝ նկարագիր հանդիսանայ շարչարանաց Տեառն մերոյ՝ մինչև համարել զնա ապանութեամբ գրեալ՝ կարով առ խաչին Աստուածորդոյն. «Տեսար մեք զնա. ոչ զոյր նորա տեսիլ և ոչ գեղեցկութիւն։ Այլ տեսիլ նորա անարգ՝ նուազեալ քան զամենայն որդւոց մարդկան։ Այր մի 'ի հարուածս, և գիտէ հանգերել ցաւոց. զի դարձուցեալ զերեսս իւր՝ անարգեցաւ, և ոչ ինչ համարեցաւ։ Եւ զմեզս մեր բառնայ, և վասն մեր շարչարի. և մեք համարեցաք զնա 'ի ցաւս և 'ի հարուածս և 'ի շարչարանս իբրեւ յԱստուծոյ. բայց նա վիրաւորեցաւ վասն մեղաց, և պատժեցաւ վասն մերոց անօրէնութեանց։ Խրատ խաղաղութեան մերոյ 'ի նմա, և նորա վիրօքն բժշկեցաք։ Ամենեքեան իբրեւ ոչխարք մոլորեալք, այր 'ի ճանապարհի իւրում՝ մոլորեցաք, և Տէր մատնեաց զնա առ մեղս մեր, և նա առ վշտին ոչ բանայ զբերան իւր։ Իբրեւ ոչխար 'ի սպանդ վարեցաւ, իբրեւ որոջ առաջի կտրչի անմատնչ կայ, այնպէս ոչ բանայ զբերան իւր։ Առ խոնարհութեան նորա զատաստան նորա բարձաւ, և զազգատոհմն նորա ո՞ պատմեսցէ. զի բառնին յերկրէ կեանք նորա։ Յանօրէնութեանց ժողովրդեան իմոյ 'ի մահ վարեցաւ։ Եւ տայ զչարս փոխանակ զերեզմանի նորա, և զմեծամեծս փոխանակ մահու նորա. զի անօրէնութիւն ոչ գործեաց, և ոչ գտաւ նենգութիւն 'ի բերանս նորա։ Եւ Տէր կամի սրբել զնա 'ի վիրաց անտի» (ԾԳ. 2—10)։

Հ. Կատարեցա՞ն մարգարէութիւնքս 'ի Քրիստոս Յիսուս։

Պ. Ամենայն մասամբ. որպէս միտքն վկայեն Աւետարանիչք և սուրբ առաքեալն Պօղոս (Եբր. Է. Ը. Թ. և այլն)։

# ՅՕԳՈՒԱԾ ԵՕԹՆԵԻՏՍԱՆԵՐՈՒԴ.

## Մեսիայն և թագաւոր.

Հ. Դուշակէ՞ հին Կտակարանն զթագաւորութիւնն Մեսիայի։

Պ. Այո՛. որպէս քննեալ տեսաք 'ի վերոյ զմարգարէութիւնս յազգս իջանելոյ նորա 'ի ցեղն Դաւթի, և ծնանելոյն 'ի Բեթղեհէմ. «Հաւատարիմ լիցի անուն նորա և արքայութիւն (Մեսիայի) նորա առաջի իմ միշտ ցյաւիտեան, և սիրտ նորա կայցէ կանգուն առաջի իմ միշտ ցյաւիտեան» (Բ. Թագ. Է. 16։ «Ահա տուրբ զան՝ ասէ Տէր, և յարուցից Դաւթի ծագումն արդարութեան, և թագաւորեսցէ թագաւոր, և 'ի միտ առցէ և արասցէ իրաւունս և արդարութիւն 'ի վերայ երկրի» (Երեմ. ԻԳ. 5)։

Հ. Ցիա՞րդ լինելոց էր թագաւորութիւն Քրիստոսի։

Պ. Անտարակոյս հոգեւոր, և ո՛չ որպէս մարմնաւորքն կարծեն՝ երկրաւոր. զոմն զի որպէս ասէ 'ի մարգարէութիւնս, Մեսիայն ո՛չ երդիցի ասել մարդ, այլ և Աստուած ճշմարիտ. և մասնաւոր յայտնութեան նորա յերկրի՝ երդիցի հաստատել զնոր քարոզութիւն օրէնս, զնոր մարգարէութիւնս հաստատել, և ամենայնիւ ո՛չ միայն Հրէից, այլ և Հեթանոսաց. և վերջապէս ասել զինքն 'ի մահ առ 'ի փրկել զմարդիկ 'ի գերութենէ ասատանայի։ Սոքին իրր ակնկալեալ Մեսիին նման՝ ո՛չ միայն Հրէայք, այլ նաև Հեթանոսք (Ծննդ. ԽԹ. 10։ Ես. Բ. 8). 'ի նա ուշնելոյ էին ամենայն ազգք երկրի (Ծննդ. ԻԲ. 18), և նմա երանելոյ էին ժողովուրդք ամենայն (Սաղմ. ՀԱ. 17)։ Իսկ Մեսիայն կարգեալ յամենայն 'ի մարգկանէ զմիամտական արքայութիւնն շնորհեաց՝ ասելով էր նոցա զյաւէտ կատարեալ և զնոր օրէնս հաստատել և բարոյ՝ հնոցդ 'ի նոսա ասասալս զպարգեւս Հոգւոյն, և ինքն հոգեւորապէս թագաւորեալ 'ի նոսա՝ աստուածորդելոյ էր ամենեցուն նոցա առ 'ի հաստատել զարքայութիւնն։

Հ. Մեկնեա՛ ինձ զոմանս 'ի յատկութիւնս Մեսիա—թագաւորին։

Պ. Ինքն զոլով թագաւոր հեզ, խաղաղ և արդար՝ հաստատեսցուցանելոյ էր զերկին և զերկիր, զՀրէայս և զՀեթանոսս, և հաստատելոյ էր 'ի նոսա զայնպիսի թագաւորութիւն համաչխարհ-

հանան սիրոյ և խաղաղութեան, զի ինձ ընդ ուրս մակրաղեսցէ, ցուլ և ասիւծ, զայլ և զառն 'ի միասին ճարակեսցեն առանց մեզանչելոյ իւրեանց. սատակելոց էր զամբարիշտս բանիւ իւրով, և խորտակելոց էր զաղէն պատերազմող, և խաղաղութիւն ընդհանուր արարեալ աշխարհաց բազմաց՝ սիրելոց էր ծովի մինչև 'ի ծով և 'ի գետոց մինչև 'ի ծագս աշխարհի (Զաք. Թ. 6—10։ Եսայի. ԺԱ. 5—7)։

Հ. Կատարեցա՞ն մարգարէութիւնքս 'ի Քրիստոս Յիսուս։

Պ. Ա. յո՛. որպէս բացատրէ ինքն Փրկիչն. «Իմ արքայութիւն չէ յայսմ աշխարհի» (Յովհ. ԺԸ. 36). «զիսաղաղութիւն թողու՛ մ ձեզ, զիսաղաղութիւն զիմ տամ ձեզ» (ԺԴ. 27). «Պատուիրան նոր տամ ձեզ, զի սիրիցէք զմիմեանս, որպէս սիրեցի ես զձեզ, զի և դուք սիրեսջիք զմիմեանս։ Յայսմ գիտասցեն ամենեքեան, եթէ իմ աշակերտք էք՝ եթէ սիրիցէք զմիմեանս» (ԺԳ. 34—35)։

## ՅՕԳՈՒՍԾ ՈՒԹՆԵՐՈՐԴ.

Քարոզութիւնք յաղագս այլ և այլ տնօրէնութեանց երկրորդ կենաց Քեսուսի.

Հ. Զի՞նչ այլ ևս գուշակէ հին Կտակարանն զտնօրէնութեանց երկրաւոր կենաց Մեսիայի։

Պ. Մարգարէք որոշեալ ճշգիւ զժամանակ յայտնութեան Մեսիային, զտեղին՝ ուր ծնանելոյն էր, զյատկութիւնս նորա զկս զկս, և զորպէսն ապատարութիւն նորա՝ զարմանալի թիւն նշանին հետազօտութեամբ զուշակեցին զտնօրէնութիւնս ամենայն բոլորանգակ կենաց նորա. այնպէս զի եթէ մեռանիցի որ ասացուածոց նոցա՝ կարէ յոյժ զամբողջ աւետարանական պատմութիւն։

Հ. Կանխասացնեա՞ց հին Կտակարանն զՄեսիայէ, թէ ուստի զկարագրեսցէ։

Պ. Ա. յո՛. Մատարիա և Եսայիա միաձայն մարգարէացան զայդմանէ, յորոց առաջինն. «Ա՛հա ես առաքեմ զհրեշտակ իմ, և տեսցէ զճանապարհս իմ առաջի իմ» (Գ. 1). իսկ երկրորդն. «Զայն բարբառոյ յանապատի. պատրաստ արարէք զճանապարհ Տեառն, և ուղիղ արարէք զշաւիղս Աստուծոյ մե-

բոյ . . . Եւ երևեցին մատք Տեառն , և տեսցէ ամենայն մարմին փրկութիւն Աստուծոյ . զի Տէր խօսեցաւ » (Թ . 3 և 5) ։

Հ . Կատարեցա՞ւ մարգարէութիւնս 'ի Քրիստոս Յիսուս ։

Պ . Այո՛ . որպէս վկայեն Աւետարանիչքն (Մատթ . Գ . 1 . ԺԱ . 7—10 ։ Ղուկ . Գ . 2—5) . վասն զի 'ի մերձենալ ժամանակի յայտնութեանն Փրկչին մերոյ՝ երևեցաւ յեղեալս Յորդանանու Կարապետն Յովհաննէս , և քարոզելով զմկրտութիւն ապաշխարութեան՝ պատրաստէր զժողովուրդն յընդունելութիւն մերձեալ արքայութեանն երկնից ։

Հ . Կանխաձայնեցի՞ն Մարգարէք , թէ երկիրպագցեն նմա թագաւորք և մատուցանեն զբնծայս ։

Պ . Դաւիթ և Եշայիա մարգարէք զուշակեցին զայսմանէ . ասացին . « թագաւորք Արաբայ և Սաբայ պատարագս բերցեն նմա ։ Երկիրպագցեն նմա ամենայն թագաւորք երկրի » (Սաղմ . ՀԱ . 10 և 11) . երկրորդն . « Ամենեքեան 'ի Սաբայ եկեսցեն՝ բերել ոսկի և կնդրուկ և ականս պատուական , և զփրկութեան Տեառն ասցեն զաւետս » (Եսա . Կ . 6) ։

Հ . Կատարեցա՞ն զուշակութիւնքս 'ի Քրիստոս Յիսուս ։

Պ . Այո՛ . վասն զի 'ի ծննդեան Տեառն մոգք յարևելից եկեալ յԵրուսաղէմ՝ « Ընկալեալ երկրպագին նմա . և բացեալ զգանձս իւրեանց՝ մատուցին նմա պատարագս՝ ոսկի և կնդրուկ և զմիւռս » (Մատթ . Բ . 2 . 11) ։

Հ . Ծանուցի՞ն Մարգարէք զիջումն Հոգւոյն սրբոյ 'ի Քրիստոս Յիսուս ։

Պ . Բազում անգամ . ընդ որս և Եսայի . « Եւ բղխեսցէ գաւազան յարմատոյն Յեսսեայ , և ելցէ ծաղիկ յարմատոյ անտի ։ Եւ հանգիցէ 'ի վերայ նորա Հոգի Աստուծոյ , հոգի իմաստութեան և հանճարոյ , հոգի խորհրդոյ և զօրութեան , հոգի գիտութեան և Աստուածպաշտութեան ։ Եւ լցցէ զնա հոգի երկիւղի Աստուծոյ » (ԺԱ . 1—3 . ԿԱ . 1—2) ։

Հ . Լցա՞ւ մարգարէութիւնս 'ի Քրիստոս Յիսուս ։

Պ . Այո՛ . որպէս Աւետարանիչք վկայեն . 'ի մկրտելն Փրկչին մերոյ 'ի Յորդանան՝ հէՀոգի Աստուծոյ 'ի վերայ նորա . « Ահա բացան նմա երկինք , և եմուտ զՀոգին Աստուծոյ , զի իջանէր իբրև զաղաւնի , և գայր 'ի վերայ նորա » (Մատթ . Գ . 16 ։ Մարկ . Ա . 10) ։

Հ . Կանխաձայնեցի՞ն Մարգարէք , թէ Քրիստոս Յիսուս ըս-

կլուանիցի գրարոզութիւն իւր 'ի Գալիլէէ։

Պ. Ա. յե. որպէս ասէ Եսայիաս. «Երկիր Զաբուղոնի և երկիր Նեփթաղիմի, ճանապարհ ծովու, և այլք՝ որ բնակեալ էք գծովեզերքդ և յայնկոյս Յորդանանու, Գալիլեա Հեթանոսաց։ Կոչմանէ Հրէաստանի։ Ժողովուրդ՝ որ գնայր ընդ խաւար, և տեսա զլոյս մեծ. և որ բնակեալ էր յաշխարհի և 'ի սահմանս մահու՝ լոյս ծագեալ ձեզ» (Գ. 1—2)։

Հ. Կատարեցա՞ւ մարգարէութիւնս 'ի Քրիստոս Յիսուս։

Պ. Ա. յե. որպէս և աւետարանիչն Մատթէոս վկայէ. «Յիսուս... մեկնեցաւ գնաց 'ի Գալիլեա... և բնակեցաւ 'ի սահմանս Զաբուղոնի և Նեփթաղիմայ. զի լցցի բանն՝ որ ասացաւ 'ի ձեռն Եսայեայ մարգարէի. երկիր Զաբուղոնի և Նեփթաղիմայ, ճանապարհ ծովու յայնկոյս Յորդանանու՝ Գալիլեա Հեթանոսաց.... Յայնմ հետէ սկսաւ Յիսուս քարոզել և ասել» (Դ. 12—17)։

Հ. Գուշակեցի՞ն Մարգարէք, թէ Քրիստոս Յիսուս քարոզելոց է սուրբ։

Պ. Զայս ծանուցանէ յայտնապէս Դաւիթ. «Բացից սուրբ զբերան իմ, խօսեցայց զառակս 'ի սկզբանէ» (Սաղմ. ՀԸ. 2)։

Հ. Կատարեցա՞ւ այս 'ի Քրիստոս Յիսուս։

Պ. Ա. յե. որպէս և Աւետարանիչն վկայէ. «Խօսէր ընդ նոսա բազումս առակս... և առանց առակի ոչինչ խօսէր ընդ նոսա. զի լցցի ասացեալն 'ի մարգարէէն. բացից առակս զբերան իմ, բղխեցից զծածկեալսն 'ի սկզբանէ աշխարհի» (Մատթ. ԺԳ. 3. 34. 35)։

Հ. Քարոզեցի՞ն Մարգարէք, թէ գործելոց է Քրիստոս Յիսուս հրաշս մեծամեծս։

Պ. Ա. յե. Քրիստոս գործելոց էր հրաշս մեծամեծս՝ ապաքէն զլոյս կուրաց, և զլսել խլոց, բժշկելով զոտիս ամենայն, և յարուցանելով զմեռեալս բուռ նախատեսութեանն Եսայեայ. «Յարիցեն մեռեալք, և կանգնեսցին՝ որ իցեն 'ի գերեզմանս» (ԻԶ. 19)։ «Ահա ոսկի Աստուած մեր հատուցանէ զատաստան, և հատուցէ. ինքնին եկեսցէ և փրկեսցէ զմեզ։ Յայնժամ աչք կուրաց բացցին, և ականջք խլոց լուցցեն։ Յայնժամ փողեսցէ կաղն իւրովք զեղջերու, և պարզ լիցի լեզու ծանրախօսաց» (Լ. 4—6)։

Հ. Կատարեցա՞ւ մարգարէութիւնս 'ի Քրիստոս Յիսուս։

Պ. Լրիւ. միայն խաղաղանին գրիչք նորոյ Կտակարանի (Մատթ. Թ. 18—19։ Մարկ. Ը. 22—25։ Յովհ. Գ. 16. 33)։ «Պատասխանի եւ նոցա (Յիսուս) և ասէ. երթայք պատմեցէք Յովհաննու՝ զոր տեսէք եւ լուայք. զի կոյրք տեսանեն, կաղք գնան, բորոտք սրբին, խուլք լսեն, մեռեալք յառնեն» (Ղուկ. Է. 22)։

Հ. Գուշակեցի՞ն Մարգարէք գիտնարհութեամբ մուտս Քրիստոսի Յիսուսի Յերուսաղէմ՝ նստեալ յաւանակի։

Պ. Զաքարիա մեծանայն ազգակիկ. «Ուրախ լե՛ր յոյժ՝ դո՛ւստր Սիոնի. բարբաջեա՝ դո՛ւստր Երուսաղէմի. ահա թագաւոր քո գայ առ քեզ. արդարեւ փրկիչ, նոյն հեզ և հեծեալ 'ի վերայ իշոյ և յաւանակի նորոյ» (Թ. 9)։

Հ. Ասացի՞ն Մարգարէքն, թէ Յիսուս Քրիստոս մտանելոցի 'ի միջէ յաշակերտաց իւրոց։

Պ. Այո՛. Դաւիթ գուշակեաց զմատնութիւն նորա 'ի ձեռն միոյ 'ի ձեռնասուն աշակերտաց իւրոց. «Այրն խաղաղութեան իմոյ՝ յոր և եւեթ յուսացայ։ Որ ուտէր զհաց իմ՝ յաճախեաց առնել ինձ խորտութիւն» (Խ. 10)։ Իսկ Զաքարիա գուշակեաց զարարողէս զմատնութիւնն, այսինքն է զերեսուն արծաթին. «Եւ կշռեցին զմարդս իմ՝ երեսուն արծաթի։ Եւ ասէ ցիս Տէր. ա՛ռ զայդ 'ի բոյս, և քննեա՝ թէ ո՞րպէս իցէ, որպէս և ես գայոց փորձ վասն նոցա։ Եւ առի զերեսուն արծաթին, և արկի 'ի տուն Տեառն 'ի բոյս» (ԺԱ. 13)։

Հ. Կատարեցա՞ն մարգարէութիւնքս 'ի Քրիստոս Յիսուս։

Պ. Հաստատեցան. իբր զի մատնեցաւ Փրկիչն 'ի Յուդայէ, որ մի էր յերկոտասան աշակերտաց անտի իւրոց. և 'ի փորձ դատանութեան իւրոյ ընկալաւ 'ի Քահանայապետէն Հրէից զերեսուն արծաթի. զորս արդէն զդիպակալ դարձոյց 'ի տուն նորն։ (Մատթ. ԻԶ. 14—15. ԻԷ. 3—4։ Յովհ. ԻԳ. 18 և 21)։

Հ. Յո՞րքան այլ ևս ամբարշտութիւնս գուշակեցին Մարգարէք՝ զորս կրեալոց էր 'ի մարդկանէ Յիսուս Քրիստոս։

Պ. Դաւիթ ասէր, թէ յանդգնելոց էին 'ի վերայ նորա բազում սուտ վկայք՝ հաստատանելով նմա շար ընդ բարւոյ (Սաղմ. ԼԴ. 11—12). թշնամիք ճշմարտութեան խորհելով նմա չարիս՝ դիպելոց էին 'ի վերայ նորա՝ բանս անօրէնութեան (Խ. 8 և 9). և եղեալ զնա 'ի նախատինս մարդկան՝ ծաղր առնելոց էին զնա-

ցիս հրապարակաւ (ԻԱ. 7). իսկ Եսայի, թէ՝ հարկանելոց էին զմիմիսանս նորա, ապտակելոց էին զերեսան, և թքանելոց էին ընդ երեսան (ՂԹ. 6)։

Հ. Կատարեցա՞ն մարգարէութիւնքս 'ի վերայ անձին Յիսուսի Քրիստոսի։

Պ. Այո՛. քանզի Քահանայապետք և ժողովուրդ Հրէից առ 'ի կորուսանել զնա՝ կապոցին բազում առաւ փկայս, և ամբոխն հանդերձ զինուորօքն փչով պատկեալ զգլուխ նորա, և կատակելով տուեալ 'ի ձեռս զեղէգն՝ թքին ընդ երեսս նորա, և ծնծեցին զնա։ (Մատթ. ԻԶ. 59—60։ Մարկ. ԺԴ. 56—65)։

Հ. Գուշակեցի՞ն Մարգարէք զչարչարանս և զմահ Յիսուսի Քրիստոսի։

Պ. Այո՛. Դաւիթ նախատեսս եղեալ անդարձս մահուան արդարոյն Յիսուսի. ասէր իրի և ասաց. «Որսացան զանձն արդարոյ, և զարիւն ամբիծ պատուար առնիցին» (Դ. Գ. 21). և կանխաձանոյց զծակելն զնորա զոտս և զձեռս. «Թափեցին զձեռս իմ և զոտս իմ» (ԻԱ. 17)։ Իսկ Զաքարիա՝ և զկորուն. «Հայեսցին 'ի նա՝ յոր խոցեցին» (ԺԲ. 10), զնայհոյութիւնսն՝ զոր հայհոյելոց էին 'ի խաչին՝ զՅիսուս տեսողք և անցաւորք (Սաղ. ԻԱ. 8—9), զմիմիսանս բաժանումն զգեստանցն նորա (ԻԱ. 19), զլեղեալս կերակրիցն, և քացոխս 'ի ծարս զարբուցանելն (ԿԲ. 22) զարձեալ զուշակեաց Դաւիթ։

Հ. Լցա՞ն մարգարէութիւնքս 'ի Քրիստոս Յիսուս։

Պ. Այո՛. առ նախանձու շարախաստութեան Հրէից զՅիսուսն, և անմեղ զատապարտութեան նորա 'ի մահ զկայեաց Պիղատոս յատենի (Մարկ. ԺԵ. 10). ասացեալք՝ որ խաչեալ էին ընդ ամբիսն և ընդ ահեկն, անցաւորք և Քահանայապետք ամենեքին նախատեցին զնա և հայհոյեցին (ԺԵ. 29 և 31). զձեռս և զոտս ծակեցին՝ յորմէ՝ բնեալեցին զնա ընդ փայտ խաչին. իսկ զկողն խոցեալ տիգաւ մի ոմն 'ի զինուորացն (Յովհ. ԺԹ. 34). զանիկար ապատանեանն և զհանդերձսն բաժանեցին 'ի միջի իւրեանց խաչահանուելն (ԺԹ. 23), և նոքուն նման ընկալ 'ի տակոյի ապդեսպան մահուան զքացոխս լեղեաւ հանդերձ (ԺԹ. ԻԹ)։

Հ. Զիա՞րդ նկարագրեցին Մարգարէք զհանդէս չարչարանաց Յիսուսի Քրիստոսի։

Պ. Եսայի ընծայեցուցանէ զայն իրրև զերազոյն տիպարս ան-

յիշաչարութեան և խոնարհութեան. «Եւ առ վշտին ոչ բանայ զբերան իւր։ Իբրև ոչխար 'ի սպանդ վարեցաւ. իբրև որոջ առաջի կտրչի անմռունջ կոյ, այնպէս ոչ բանայ զբերան իւր» (ԺԳ. 7)։ Սաղմոսերգուն ծանուցեալ զաղօթելն նորա 'ի վերայ թշնամեաց իւրոց. «Աստուած օրհնութեան իմոյ՝ մի լռեր... մարտեան ընդ իս 'ի տարապատրաստ. փոխանակ սիրոյ իմոյ մատնէին զիս. այլ ես յաղօթս կայի» (ՃԸ. 5). յաւելու և զկարգալն 'ի ձայն մեծ առ Հայր. «Զայնիւ իմով ես առ Տէր կարդացի, ձայնիւ իմով զՏէր աղաչեցի... 'ի նուազել յինէն հոգւոյ իմոյ» (ՃԽԱ. 2—9)։ Սմանս գուշակէ զիսաւարումն 'ի տառանջեան արևու (Ը. 9), և Անդէ զշարժ երկնից և երկրի, ծովու և ցամաքի և ամենայն ազգաց (Բ. 8)։

Հ. Կատարեցա՞ն մարգարէութիւնքս 'ի Քրիստոս Յիսուս։

Պ. Այո՛ զի՛ զայսպէս, որպէս հաստատեն Աւետարանիչք սուրբք, զի նա կամեալ և հաճուեալ 'ի բանեցարկեալ և 'ի զորուէն՝ ոչ ոմեք հատոյց փոխարէն, այլ խոնարհութեամբ, մինչ 'ի տակաւի տագնապս խաչին քաղէին զգիր իւր՝ ինքն աղաչէր 'ի վերայ թշնամեացն. «Հայր՝ թո՛ղ զոսա. զի ոչ գիտեն՝ զինչ գործեն։ Աստուած Աստուած իմ՝ ընդէ՞ր թողեր զիս» (Մատթ. ԻԷ. 46). և վարագոյր տաճարին յաւանդելն զհոգին՝ սկսաւ յերկուս 'ի վերուստ մինչև 'ի վայր, երկիր շարժեցաւ, և վէմք պատռեցան, և գերեզմանք բացան (—51—52)։ «Խաւար եղև 'ի վերայ ամենայն երկրի մինչև ցիններորդ ժամն. խաւարեցաւ արեգակն» (Ղուկ. ԻԳ. 44)։

Հ. Զի՞նչ գուշակէ Մարգարէն զհոգւոյ և զմարմնոյ Յիսուսի Քրիստոսի յետ մեռանելոյն։

Պ։ Մարմին նորա մնալոյ էր անապական 'ի գերեզմանի, և հոգին իջեալ 'ի դժոխս՝ ազատելոյ էր անտի զհոգիս յաւուրս փրկութեան հանդուցեալ արդարոցն. «Ոչ թողցես զանձն իմ 'ի դժոխս, և ոչ տայցես սրբոյ քում տեսանել զապականութիւն» (Սաղմ. ԺԵ. 10)։

Հ. Կատարեցա՞ւ մարգարէութիւնս 'ի վերայ Քրիստոսի Յիսուսի։

Պ. Այո՛. «Զի ոչ թողաւ հոգի նորա 'ի դժոխս, և ոչ մարմին նորա ետես զապականութիւն» (Գործ. Բ. 31)։

Հ. Զյարութենէ Քրիստոսի Յիսուսի խօսեցա՞ն Մարգարէք։

Պ. Այո՛. քանզի այսպէս երդէ Դաւիթ. «Աստուած փրկ-

կեսցէ զանձն իմ 'ի ձեռաց գժոխոց, յորժամ ընդունիցի զիս» (Սաղմ. ԽԸ. 16). «Որչափ ցուցեր ինձ նեղութիւն բազում և չարչարանս, դարձեալ մխիթարեսցես զիս, և 'ի խորոց անդրնդոց երկրէ հանես զիս» (—Ն. 20). և յաստուածային յաւուր երդմանի. «Ողջակիզեսցէ զմեզ յետ երկուց աւուրց, և յաւուրն երրորդի յարիցուք և կեցցուք առաջի նորա, և ծանիցուք և ընդ հետ երթիցուք ճանաչել զՏէր» (Ովսէ. Զ. 2).

Հ. Կատարեցա՞ւ մարգարէութիւնս 'ի Քրիստոս Յիսուս։

Պ. Ճշմարտիւ. քանզի յերրորդում աւուր յետ մահուան իւրոյ յարեաւ 'ի մեռելոց, և երևեցաւ բազմաց. «Զնա՛ւս խնդրէք զՆազովրացի զխաչեալն՝ ասաց հրեշտակն, յարեաւ՝ չէ ասա» (Մարկ. ԺԶ. 6)։ «Քրիստոս... յարեաւ յաւուր երրորդի ըստ գրոց. և թէ երևեցաւ Կեփայի և ապա մեռեալանցին։ Ապա երևեցաւ աւելի ևս քան զհինգ հարիւր եղբարց միանգամայն» (Ա. Կորնթ. ԺԵ. 4—6)։

Հ. Գուշակեցի՞ն Մարգարէք զհամբարձումն Քրիստոսի Յիսուսի յերկինս։

Պ. Ո՛չ միայն զհամբարձումն՝ յասելն. «Եկ 'ի բարձունս, գերեալս զգերութիւն» (Սաղմ. ԿԷ. 19), այլ և զնստելն ընդ աջմէ Հօր Աստուծոյ 'ի բարձունս. «Ասաց Տէր ցՏէր իմ. Նի՛ստ ընդ աջմէ իմմէ, մինչև եդից զթշնամիս քո պատուանդան ոտից քոց» (Սաղմ. ՃԹ. 1)։

Հ. Կատարեցա՞ւ այս 'ի Յիսուս Քրիստոս։

Պ. Այո՛. որպէս գրիչք Նորոյ Կտակարանի վկայեն. «Եւ եղև յորմէնէն նորա զնոսա՝ մեկնեցաւ 'ի նոցանէ, և վերանայր յերկինս» (Ղուկ. ԻԴ. 51)։ «Եւ ինքն Տէր Յիսուս յետ խօսելոյն ընդ նոսա՝ համբարձաւ յերկինս, և նստաւ ընդ աջմէ Հօր» (Մարկ. ԺԹ. 18)։

Հ. Զի՞նչ այլ ևս գուշակեցին Մարգարէք զՔրիստոսէ Յիսուսէ։

Պ. Յետ համբարձման իւրոյ յերկինս՝ առաքելոյ էր վերջապէս յերկիր զՀոգին սուրբ. «Եւ եղիցի յետ այսորիկ հեղից զոգւոյ իմոյ 'ի վերայ ամենայն մարմնոյ, և մարգարէացին ուստերք ձեր և դստերք ձեր, և ծերք ձեր երազովք երազեսցին, և երիտասարդք ձեր տեսիլս տեսցեն» (Յովել. Բ. 28)։

Հ. Կատարեա՞ց Քրիստոս Յիսուս զմարգարէութիւնս։

Պ. Այո՛. Յիսուս Քրիստոս ըստ խոստման իւրոյ՝ որ յառաջ

բան զշարչարանան, իբրև համարձակ յերկինս՝ առաքեալ ըղ բոլորեալսն 'ի Հոգի զՀոգին սուրբ յԱռաքելսն և 'ի Հաստատելոսն, զի առաջնորդեսցէ նոցա փոխանակ իւր ամենայն ճշմարտութեամբ. «Եւ լցան ամենեքեան Հոգւով սրբով» (Գործ. Բ. 4)։

## ՅՕԳՈՒԱԾ ԻՆՆԵՐՈՐԴ.

### Քնդհանուր հետաքրքիր վերոգրեալսցն ամենայնի.

Հ. Զի՞նչ մակարերի 'ի համառօտ տեսութենէ Կրօնին՝ որ ընդ օրինաւ։

Պ. 'Ի տեսութենէ մատանոյ Կրօնին՝ որ ընդ օրինաւ, գոյս յենեցեալ մինչև ցայժմ, բղխին երեքին մեծամեծ եղբայրացութիւնք։

Հ. Զի՞նչ է առաջին եղբայրացութիւնն։

Պ. Թէ Մովսիսական կրօնն կրէ յինքեան զանջնջելի հիմք Աստուածոյնութեան, այն է առեալ գոլոյ առ 'ի յԱստուծոյ. և յայս ասեալս առանց բնդդիմութեան խոստովանելի է իբրև զերբնական յայտնութիւն։

Հ. Զի՞նչ է երկրորդն։

Պ. Թէ յայտնութիւնն՝ զոր առանցեալ Աստուած Իսրայէլի, էր իբրև նախապատրաստութիւն, այլ ոչ բնաւ կատարեալ. և յայս ասեալս առեալ առ ժամանակ մի և եթէ՝ որ զգաղարելոյ էր յապայն նոր և կատարելագոյն յայտնութեամբն։ Զատուցեալս յայտնապարարս քարոզէ կրօնն Մովսիսական՝ որոյ մեծագոյն առարկայն էր ակնկալութիւն Մեսիայի։ Զնոյն քարոզեն և բազմանակ ծիսական օրէնքն՝ որ ըստ բուն նշանակութեան իւրում «Զառաջի հանդերձելոյ բարեացն ունէր, և ոչ զնոյն կերպարանս իրացն» (Եբր. Ժ. 1)։ Բազմաթիւ Մարգարէք զուշակեցին, թէ Մեսիայն եղիցի մարգարէ առ 'ի առանցել մարգարէութեան զուիսաւ նոր. յայտ է, թէ փոխան հնոյն առեալոյ 'ի ձեռն Մովսիսի, եւս և առ 'ի քարոզել ոչ միայն Հրէից, այլ և Հեթանոսաց. եղիցի Քահանայապետն առ 'ի հաստատել զնոր զամենատուր զատարագ ընդ ամենայն տեղիս մատուցանելի, և այսու ունայնացուցանել զսահմանեալ զոչս և զոչՁակէզս հնոյ ուխտի՝ որք յԱրտաւոյէ մ և եթ մատչէին. եղիցի քարոզաւոր առ

'ի կանգնել յերկրի 'ի Հրէից և 'ի Հեթանոսաց և յամենայն ազգաց՝ գնդեալ և զմի արքայութիւն, և այսու բառնալ զկրօնական տարբեր զրութիւնսն՝ որ խորոց իմն էին ցայն վայր ընդ մէջ առաջնոցն և յետնոց։

Հ. Զի՞նչ է երրորդն։

Գ. Թէ Մեսիան՝ որ էն միանգամայն Մարգարէ, Քահանայ և Թագաւոր, զուշակեալն կանխաւ Մարգարէիւք հոգի Աստուածային, է իսկապէս Տէրն մեր Յիսուս Քրիստոս. քանզի 'ի նա կատարեցան ճշմարտապէս մարգարէութիւնք ամենայն հոգի ոգւոյ՝ զորս միանգամ իրաւեցանն զՄեսիայէ։ Յայս սակս Աստուածն Քրիստոսական է յայտնութիւն ամենակատարեալ, առ որ ածէր հին իրրև նախապատրաստութիւն, և է նոր ուխտ՝ բերեալ յերկիր Քրիստոսէ Փրկչէ։ Այս 'ի ապացուցանել և 'ի բացատրել զճշմարտութիւնս զայս՝ ձեռն արկցուք 'ի տեսութիւն կալեալս մատանց յայտնութեան նորոյ ուխտի։

# ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

## ԳԼՈՒԽ Ա.

## ՅԱՌՑՆՈՒԹԻՒՆ ՓՐԻՍՏՈՍԻ

## ՅՕԴՈՒԱԾ ԱՌԱՋԻՆ.

*Ցեսուսիւն վարդապետութեանց հաւատոց նորոց ուխտի.*

Հ. Ցիա՞րդ են վարդապետութիւնք հաւատոց նորոց ուխտի։

Պ. Հոգի կամ՝ էութիւն վարդապետութեանց հաւատոց նորոց ուխտի՝ նոյն է, որ ինչ էրն 'ի Հնումն, այսու և եթէ զանազանութեամբ, զի 'ի նորումս յաւէտ պարզ, կատարեալ և լիուլի բացատրեալ են՝ որ ինչ 'ի Հնումն մթին և թերի էին մասունք հաւատոց։

Հ. Ցիա՞րդ վարդապետէ յայտնութիւն նորոց ուխտի զգոյութենէ Աստուծոյ։

Պ. Ըստ վարդապետութեան նորոց ուխտի՝ Աստուած է բարձրեալ և ամենակատարեալ Հոգի (Մատթ. Ե. 48։ Յովհ. Դ. 24), Հոգի անեղ (Գործ. ԺԷ. 25), մշտնջենաւոր (Ա. Տիմ. Ա. 19), ամենուրեք (Գործ. ԺԷ. 26—28), անփոփոխ (Յակ. Ա. 17), Հոգի ամենազէտ (Երր. Դ. 13), անհուն իմաստուն (Ա. Կորնթ. Բ. 7), ամենիշխան (Եփես. Ա. 11), ամենակարող (Մատթ. ԺԹ. 26), Հոգի ամենասուրբ (Ա. Պետր. Ա. 13—16), արդարադատ (Հռոմ. Բ, 11), ամենաբարի (Մատթ. ԺԹ. 17), անհուն ճշմարիտ և հաւատարիմ (Յովհ. ԺԷ. 17)։

Հ. Ցիա՞րդ վարդապետէ նոր ուխտն զամենասուրբ Երրորդութենէ։

Պ. Աստուած՝ որ Ինն ամենակատարեալ Հոգի, մի է գոյութեամբ (Մարկ. ԺԲ. 29), այլ երեք անձամբք (Մատթ. ԻԸ. 19)՝ Հայր (Յովհ. ԺԷ. 3), Որդի (Յովհ. Ա.) և Հոգի (Ղուկ. Դ. 22)։ Հայր ծնանի յաւուրս քան զյաւիտեան 'ի գոյութենէ իւրմէ զՈրդին միածին, և բղխէ զամենասուրբ Հոգին։ Որդին ծնեալ անժամանակաբար 'ի Հօրէ համագոյ նմա։ Հոգին սուրբ 'ի յաւիտենից բղխեալ 'ի Հօրէ՝ գոյակից է Հօր և Որդւոյ։

(Յովհ. Գ. 16. Ե. 17 և 18 ԺԵ. 26. ԺԷ. 5. և այլն)։

Հ. Զիա՞րդ ուսուցանէ նոր ուխտն զարարչութենէ տիեզերաց և ամենայն եղելոց։

Պ. Եռանձնեայ և մի Աստուածն արարչագործեալ ստեղծ զամենայն յոչնչէ՝ «Որ ինչ յերկինս և որ ինչ յերկրի, որ երևելին և որ ոչն երևելին» (Կող. Ա. 16). և նախախնամէ «Կրելով զամենեսեան բանիւ զօրութեան իւրոյ» (Եբր. Ա. 3). «Դա արար զհրեշտակս իւր Հոգիս, և զպաշտօնեայս իւր բոց հրոյ» (7). և «Զհրեշտակս՝ որ ո՞չ պահեցին զիւրեանց իշխանութիւնն, յանիրաւնական կապանսն պահէ 'ի դատաստան աւուրն մեծի» (Յուդ. 6). նաև պահպանէ, որ հայրաբար հոգոյ զկէս արարածոյ իւրոյ՝ «տալով ամենայնի կեանս և շունչ և զամենայն ինչ» (Գործ. ԺԷ. 25). և մանաւոր իմն զորովով խնամ տանի մարդոյն, այնպէս զի և մազ անգամ ո՛չ անկանի 'ի գլխոյ նորա առանց զիտութեան իւրոյ (Ղուկ. ԺԲ. 7). և զհրեշտակս իւր իսկ կացոյց 'ի պաշտպանութիւն այնոցիկ 'ի մարդկանէ, որք ընդունեալ են 'ի ժառանգութիւն փրկութեան (Եբր. Ա. 14)։

Հ. Զիա՞րդ ուսուցանէ նոր ուխտն զմարդոյն։

Պ. Զմարդոյն ուսուցանէ նոր ուխտն, նախ՝ թէ է Աստուածատիպ արարած (Եփես. Դ. 24). որ կորուսեալ զանմեղութիւն իւր՝ անկեալ է 'ի մեղս և գրաւեալ ընդ մահու (Հռոմ. Ե. 12). վասնզի ամենայն որ է «բնութեամբ որդի բարկութեան Աստուծոյ» (Եփես. Բ. 3). անկարող անձին զօրութեամբ գործել զբարի ինչ, և վերականգնել զուխտն ընդ Աստուծոյ, զոր կործանեցաք. որպէս լուսոյն, չէ հնար ունել հաղորդութիւն ընդ խաւարի (Եփես. Ե. 8), ճշմարտութեան ընդ ստութեան (Յովհ. Ը. 44—45), և կենացն ընդ մահու (Հռոմ. Զ. 13). յայս տակս կարօտիմք հղօր Փրկչի առ 'ի վերատին կանգնել (Գործ. Դ. 11 և 12)։

Հ. Զի՞նչ զարձեալ ուսուցանէ զմարդոյն։

Պ. Մարդն փրկեալ է, յորժամ հաւատացեալ 'ի Փրկիչն Քրիստոս՝ ծնանի յաւազանէ վերատին ծննդեան (Մարկ. ԺԶ. 16), արդի նոյն յամենայն 'ի մեղաց իւրոց (Ա. Կորնթ. Զ. 11), հաղորդ լինի Աստուածեղէն բնութեանն (Բ. Պետր. Ա. 4), լինի որդի Աստուծոյ (Յովհ. Ա. 12 և 13) և Ցանաւար Հոգւոյն արդոյ (Ա. Կորնթ. Զ. 19). և յայնմ հետէ օժանդակու-

թեամբ բարեբար շնորհացն՝ զորս մատակարարէ եկեղեցին 'ի ձեռն սուրբ խորհրդոց իւրոց, արիանալ ընդ դէմ հարկիչ սատանայի (Եփես. Զ. 11). և կեցեալ Աստուածահաճոյ վարուք՝ փայլեալք անարատակրօն զանձամեծան բարիս յարբեցութեան Հօրըն երկնաւորի (Մատթ. Ե. 21. եւայլն)։

Հ. Զի՞արդ ուսուցանել նոր ուխտն զԲրկչէն։

Պ. Եւ է միւսն Որդի Աստուծոյ (Յովհ. Ա. 18)՝ որ հաճեցաւ զկենաւոր դրամբքն մեր (Ա. 14), ծանոյց մարդկան զաւետարանն արքայութեան (Մատթ. Թ. 25), մատոյց զանձն իւր 'ի խաչին հաշտարար զաստուած Աստուծոյ 'ի քաւութիւն մեղաց մերոց (Եբր. Թ. 14), հաստատեաց յերկրի զաւրս եկեղեցի իւր առ 'ի տալ մարդկան զաստուածաշունչն ինքեանմբ ըստ փրկութիւն կատարեալ (Եփես. Դ. 11—15), և համբարձեալ յերկինս՝ շնորհէ անտի հաստատելոյն իւրոյ «զԱստուածեղէն գրութիւնն ամենայն առ 'ի կիրառս և յԱստուածաշունչսն» (Բ. Պետր. Ա. 3), բարեխօսէ վասն մեր առաջի յաւիտենական արդարութեան (Եբր. Է. 25), մինչև եկեալ վերստին յերկիր առ 'ի դատել զկենդանիս և զմեռեալս, և հատուցանել, փրկեալս ըստ գործոց (Յովհ. Ե. 25—29). յետ որոյ տայցէ զթագաւորութիւնն 'ի ձեռս Աստուծոյ և Հօր, և «Եղիցի Աստուած ամենայն յամենայնի» (Ա. Կորնթ. ԺԵ. 24-28)։

## ՅՕԳՈՒԱԾ ԵՐԿՐՈՐԴ.

Ցեսութիւն բարոյական վարդապետութեանց նորոյ ուխտի.

Հ. 'Ի քանի՞ մասունս պարունակին բարոյական ուսմունք նորոյ ուխտի։

Պ. Յերկուս. այն է Օրէնք, և Շարժումն առ 'ի լնուլ զօրէնսն։

Հ. Ա՞ռ ի՞նչ հային Օրէնքն։

Պ. Վասնզի Օրինացն գրով «'Ի բաց մերկանալ 'ի մէնջ բան առաջին գնայիցն զմարդն հին՝ զապականեալն յանկութիւնամբք խաբէութիւնն, և նորոգիլ հոգւովն մտաց մերոց և զգենուլ զնոր մարդն, որ ըստ Աստուծոյն հաստատեալն է արդարութիւնամբ և սրբութիւնամբ ճշմարտութիւնն» (Եփես. Դ. 22—24), առաջի դնէ մեզ զերկուս կարեւորագոյն սկզբունս գործունէութեան, իսկ նկատմամբ առ իւրաքանչիւր անձն 'ի

մէնջ՝ զակիրքն անձնուրացութեան, նկատմամբ առ Աստուած և առ ընկերս՝ զակիրքն սիրոյ։

Հ. Զի՞նչ ուսոյց Փրկիչն զերկոսին զսուս։

Պ. Զառաջինն 'ի տպանել՝ յորժամ բարձրագոյն քարոզեաց. « Եթէ ոք կամի զալ զկնի իմ՝ ուրացիցէ զանձն իւր և բարձցէ զխաչ իւր, և եկեսցէ զկնի իմ » (Մարկ. Ը. 34). որ հայի 'ի բաց իլել միտեղութիւնն 'ի մէնջ զանձնասիրութիւն, որում փարիմարդն անկեալ. վասն զի « Անձնասիրութիւնն է սիրիրն մեղայ ամենայնի » (Սիրաք. Ժ. 15)։ Զերկրորդն՝ յորժամ նոյնպէս պատուիրեաց Փրկիչն յասելն. « Սիրեսցես զՏէր Աստուած քո յամենայն սրտէ քումմէ և յամենայն անձնէ քումմէ և յամենայն մտաց քոց. այս է մեծն և առաջին պատուիրան։ Եւ երկրորդն՝ նման սմին, սիրեսցես զընկեր քո իբրեւ զանձն քո » (Մատթ. ԻԲ. 37—39). որ հայի տարածել 'ի մեզ զսերմն նոր, սուրբ և աստուածահաճոյ կենաց, և հաստատել 'ի մէջի զուխտս կատարեալ (Կողոս. Գ. 14)։

Հ. Մեկնեա՛ ինձ զակիրքն անձնուրացութեան։

Պ. Նոր ուխտն պատուիրէ, նախ՝ զառնալ 'ի մեղայ մերոյ յամենայնէ. « Ապաշխարեցէք » (Մատթ. Գ. 2). այսպէս ընկիրքն ասար քարոզչութեան իւրոյ Աստուածային փարգապետն, և զնոյն հրամայեաց առնել աշակերտաց իւրոց (Ղուկ. ԻԴ. 47), որպէս զի այնուհետեւ սիրիրն արատաց յարատեւ մարտին ընդ դէմ անձանց մերոց նահատակեալք և արեամբ շատ հակառակ մեղայն, որ բուներալ է 'ի մեզ (Եբր. ԺԲ. 4). և հոգալ 'ի խաչ հանել զմարմին մեր կարեաւ և ցանկութեամբ հանդերձ (Գաղատ. Ե. 24. Կող. Գ. 5), որպէս զանձինս յամենայն պղծութենէ մարմնոյ և հոգւոյ (Բ. Կորնթ. Է. 1), և զդուշանալ 'ի մեղայ ոչ միայն գործով, այլ և խորհրդով և բանիւ (Մատթ. Ե. 28), և այնուհետեւ սկսանիլ զգաստերագոյն հոգեւոր ընդ դէմ ապիսարհի, որ զգալով 'ի շարի՝ իսկոյն հանապազ տանիլ զմեզ 'ի փորձութիւն, հեռացեալք յամենայնէ՝ որ գրգռեն 'ի մեզ զերեսին ցանկութիւնս՝ « Զցանկութիւն մարմնոյ, զցանկութիւն աչաց և զպարարութիւն կենցաղոյս » (Ա. Յովհ. Բ. 15 և 16), և փութալ հաստատել 'ի մեզ 'ի տեղի առաջնոյն՝ զժուժկալութիւն և զսրբութիւն (Ղուկ. ԻԱ. 34), 'ի տեղի երկրորդին՝ զաղքատութիւն և զանարծաթասիրութիւն (Ա. Տիմ. Զ. 8 և 10), և 'ի տեղի երրորդին՝ զխոնարհութիւն (Ղուկ. ԻԲ. 26), և վերջա-

պէս մղել զմշտնջենաւոր պատերազմ ընդ դէմ մշտնջենաւոր թշնամւոյն մերոյ սատանայի, որ 'ի սկզբանէ հետէ եղեւ և է աւասջին պատճառ մեզայ ամենայնի և փորձութեանց (Ա. Յովհ. Գ. 8). և առ այս «Զգենուլ զսպառազինութիւն Աստուծոյ. զի կարող լինիցիմք կալ ընդ դէմ հնարից սատանայի» (Եփես. Զ. 11)։

Հ. Զի՞նչ այլ ևս թելադրէ անձնուրացութիւնն։

Պ. Հրաժարիլ կամովին յամենայն իրաց աշխարհայնոց, թէպէտ և պատուական իցեն նոքին առաւել քան որչափ աչք. ձեռք և ոտք մեր՝ յորժամ գիտասցուք, թէ գայթակղեցուցանեն զմեզ, և լինին առիթ մեզայ (Մատթ. Ե. 29—31), ուրանալ զտուն, զհայր, զմայր զընտանիս մեր՝ յորժամ տեսանիցեմք, եթէ այլապէս չիք հնար 'ի բաց կալ յամբարշտութենէ, և հասանել 'ի կեանսն յաւիտենից (Մարկ. Ժ. 29), աղօթել յամենայն ժամ հոգւով ամենայն աղօթիւք և խնդրուածովք, և զօրանալ Տերամբ և կարողութեամբ զօրութեան նորա (Եփես. Զ. 10 և 18)։ Այս ամենայն տակաւին անբաւական են առ 'ի տպաւորել 'ի մեզ զնոր վարս Քրիստոնէական. վասնորոյ առ այս պահանջի և սէր. «Եթէ ջամբիցեմ զամենայն ինչս իմ աղքատաց, և մատնիցեմ զմարմին իմ յայրումն, և սէր ո՛չ ունիցիմ՝ ոչինչ օգտիմ» (Ա. Կորնթ. ԺԳ, 3)։

Հ. Զո՞րպիսի սէր կանոնադրէ նոր ուխտն ունել առ Աստուած։

Պ. Սէր կատարեալ ամենայի և կախողին. «Սիրեսցես զՏէր Աստուած քո յամենայն սրտէ քումմէ և յամենայն անձնէ քումմէ և յամենայն զօրութենէ քումմէ և յամենայն մտաց քոց» (Ղուկ. Ժ. 27), բոլորովին տարբեր 'ի սիրոյ անտի՝ զոր ունիմք առ աշխարհ։ Զաստուածսիրութիւն մեր պարտիմք ապացուցանել հնազանդութեամբ կամաց նորա և պահպանութեամբ օրինաց նորին. «Եթէ սիրէք զիս՝ զպատուիրանս իմ պահեսջիք» (Յովհ. ԺԴ. 15). «Որ ունի զպատուիրանս իմ, և պահէ զնոսա՝ նա է, որ սիրէ զիս» (21)։

Հ. Ա՞ء ինչ առաջնորդէ մեզ Աստուածսիրութիւնն։

Պ. Փութալ նմանիլ կատարելութեանց դերագոյն Լակին, և առնել զամենայն ինչ 'ի փառս նորա. «Եղանարդ եղերուք Աստուծոյ՝ իբրև որդիք սիրելիք, և գնացէք սիրով՝ որպէս և Քրիստոս սիրեաց զմեզ» (Եփես. Ե. 1—2). «Այնպէս լու-

աստուածայ լոյս ձեր առաջի մարդկան, որպէս զի տեսցեն զգործս ձեր բարիս, և փառաւորեսցեն զՀայր ձեր՝ որ յերկինս է» (Մատթ. Ե. 16). Եւ այնպիսի անսասան հաստատութեամբ զՀոգեւոր լինել ոչնչի՝ մինչև յանձն առնուլ հրաժարել յամենայնի, զոր անուանն Աստուծոյ, և որպէս զի «Ոչ նեղութիւն, ոչ անձկութիւն, ոչ հալածանք, ոչ սով, ոչ մերկութիւն, ոչ վիշտք, ոչ սուր, ոչ մահ, ոչ կեանք, ոչ հրեշտակք, ոչ իշխանութիւնք, ոչ որ կան, ոչ հանդերձեալքն, ոչ զօրութիւնք, ոչ բարձրութիւն, ոչ խորութիւն և ոչ այլ ինչ արարած կարասցեն մեկնել զմեզ 'ի սիրոյ անուն Աստուծոյ» (Հռոմ. Ը. 35. 38 և 39)։

Հ. Զո՞րպիսի սէր կանանցդէ նոր ուխտն ունիլ մեզ առ ընկերս ընդհանրապէս։

Պ. Ընկերասիրութիւնն միշտ անլոյծ կապակցեալ ընդ Աստուածասիրութեան (Ա. Յովհ. Դ. 20)՝ ըստ պատուիրանաց Քրիստոնէութեանն՝ բոլանդակէ զամենայն մարդիկ՝ գրաւելեալս և զիշնեալս, որով զանազանի յայլ ամենայն կրօնից» (Մատթ. Ե. 44—48). անկեղծ է միշտ 'ի սէրս սրտի և պարզ (Ա. Պետր. Ա. 22), և ապաստուցեալ իրօք. «Մի բանիւք և լեզուաւք սիրեսցուք, այլ արդեամբք և ճշմարտութեամբ» (Ա. Յովհ. Գ. 18). «Որ սիրէ զընկերն՝ զօրէնսն կատարէ, զմի՛ շնայցեսն, և մի՛ սպանանիցես, և մի՛ գողանայցես, և մի՛ սուտ վկայիցես, և մի՛ ցանկանայցես. և եթէ այլ ինչ պատուիրան է՝ յայնս բան բովանդակին, եթէ սիրեսցես զընկեր քո իբրև զանձն քո։ Սէր ընկերի իւրում չարս ո՛չ առնէ. լրումն օրինացս սէր է» (Հռոմ. ԺԳ. 8—10)։

Հ. Զի՞նչ այլ ևս պատուիրէ նոր ուխտն 'ի միասին ընկերասիրութեան մասնաւորապէս։

Պ. Ո՛չ երբէք գրկել զընկերն՝ ո՛չ միայն բանիւ կամ գործով, այլ և ո՛չ խորհրդով անգամ (Մատթ. Ե. 22. Է. 1—2 և 12), մեծաւ համբերութեամբ տանել ամենայն չարեաց, և նեղել ո՛չ միայն եօթնեկին, այլ և եօթանասնեկին եօթն յանցանաց եղբօրն (Մատթ. Ե. 28 39. Զ. 14. ԺԸ. 22), հոգալ՝ ո՛չ միայն առ 'ի լցուցանել զմարմնաւոր պիտոյս նոցա, այլ և զհոգեւոր փրկութիւն նոցա (Ա. Կորնթ. Ե. 14 և 15։ Եբր. Ժ. 24)։ և ընդհանրապէս այնպէս կարեկից լինել ընկերացն, մինչև յանձն առնուլ ըստ օրինակի Փրկչին, դնել 'ի վերայ նոցա զան-

ձրն իւր 'ի վերանգի. «Այլ ոչ սատակէր իմ, զի սիրեսջիք զմիմեանս, որպէս և ես սիրեցի զձեզ։ Մեծ ևս քան զայս սէր ոչ ոք ունի, եթէ զանձն իւր դիցէ 'ի վերայ բարեկամաց իւրոց» (Յովհ. ԺԵ. 12 և 13)։

Հ. Զո՞րպիսի յորդորս մատակարարէ նոր ուխտն առ կատարումն պատուիրանացս։

Պ. Ա. 'ի խառնութեանել զմարդն յամբարշտութենէն, և հաստատել 'ի շաւղի առաքինութեան՝ առաջի դնէ նոր ուխտն դիպարի բազմութիւն և յանախ բաղդերս։ 1. Խառնումս մեզաւորին, թէ որչափ և անհպին իցեն յանցանքն՝ թողցին նմա, և թէ ճշմարտապէս ապաշխարեսցէ, և ուխտեսցէ կեալ այնուհետև արդարութեամբ (Ա. Յովհ. Ա. 7 և 9)։ 2. Որչափ և ապիկար իցէ կարողութիւն անձանց մերոց առ այնպիսի մեծագոյն գործ՝ ունիմք զհամարձակութիւն մատչիլ առաջի աթոռոյ շնորհաց, և յանդուն Փրկչին խնդրել զԱստուածային զօրութիւն ամենայն առ 'ի կենաս և յԱստուածապաշտութիւն (Բ։ Պետր. Ա. 3։ Մատթ. Է. 7։ Յովհ. ԺԴ. 14։ Եբր. Դ. 16)։ և 'ի բաց եղեալ յանձնէ զծանր կապանս մեղաց, և մտեալ բնդ քաղցր լծով Քրիստոսի՝ զառանիցեալք վերջապէս զհանդիսաւոր խղճի (Մատթ. ԺԱ. 28 – 30)։

Հ. Յորդորէ՞ նոր ուխտն առ բարեպաշտութիւն զերազանցութեամբն իւրով։

Պ. Այո. առաջի դնելով արդարոյ և մեղաւորաց հաստատագոյն զմտնութիւնն Քրիստոսանման Կրօնին՝ զոր պաշտեմք, համեմատութեամբ բնդ հրէականին կամ հեթանոսականին. «Եթէ սիրիցէք զսիրողսիկ՝ որ սիրեն զձեզ, զի՞նչ փոխարէն իցեն. ո՞չ ապարդեն և մաքսաւորք զնոյն գործեն։ Եւ եթէ ասացէք միայն ողջոյն բարեկամաց ձերոց՝ զի՞նչ առեալ առնէք. ո՞չ ապարդեն մաքսաւորք և մեղաւորք զնոյն գործեն։ Այդ՝ եղերուք դուք կատարեալք, որպէս և Հայրն ձեր երկնաւոր կատարեալ է» (Մատթ. Է. 46. 48)։

Հ. Յորդորէ՞ նոր ուխտն առ բարեպաշտութիւն խառամամբ շնորհաց մկրտութեանն։

Պ. Այո. քանզի ասէ Առաքեալն. «Ոչ գիտէք, զի որ միանգամ մկրտեցաք 'ի Յիսուս Քրիստոս՝ 'ի մահ անդր նորա մկրտեցաք։ թաղեցաք բնդ նմին մկրտութեամբն 'ի մահ. զի որպէս յարեաւ Քրիստոս 'ի մեռելոց փառաւոր Հօր, նոյնպէս և մեք

'ի նորոգութիւն կենաց շրջեցուք » (Հռոմ. Զ. 3. 4)։

Հ. Զորդորէ՝ նոր ուխտն առ բարեպաշտութիւն որժանաւորութեամբ կոչման մերոյ։

Պ. Ա. յոյ. վասն դի մեք ազատեալ 'ի խաւարէ՝ որդի կոչիմք լուսոյ և տուրբնջեան. սիրեա իրրև անդուն արիութեամբ զդեցեալ զիմաստն հաւատոյ և սիրոյ, և զսաղաւորան յուսոյ փրկութեան, պարտեալս եմք զՏէր (Ա. Թես. Ե. 5)։ Մեք տաճար Աստուծոյ կենդանւոյ եմք, և Աստուած բնակեալ է 'ի մեզ, վասնորոյ պարտ է մեզ մեկնիլ 'ի սրբութենէ։ Մեք ուստերք և դստերք Աստուծոյ ամենակալի կոչիմք. յայս տակս պարտմամբ սուրբ պահել զանձինս ասիրեն Աստուծոյ » (Բ. Կորնթ. Զ. 16 և 18. Է. Ա.)։

## ԹՈՐՀՐԴԱՌՈՒԹԻՒՆ

1. Աստուծոյն ուրեք ուրեք ասացի զնէ Քրիստոնէից զհաստատութիւն՝ փոխարէն ամբարշտութեան և աստիրութեան՝ յորոնք վասն ամբարշտութեան բարեաց անգամ յաստի կենալոն. « Զայսոնէր բարկութիւն Աստուծոյ յերկնից 'ի վերայ ամենայն ամբարշտութեան և անիրաւութեան մարդկան » (Հռոմ. Ա. 18), և անդարձ մեղաւորաց 'ի կենանն՝ որ զկնի զերեզմանին, ակնկալեալ Ցոյց հուրն անապատ (Մատթ. Ի. 41). որ « Եղիցի լալ և կրճել ատամանց » (Ղուկ. ԺԳ. 28). « Իսկ Աստուած արդարութիւն առ ամենայն ինչ օգտակար է, և զաւետիս կենաց ունի՝ զարդիս և զհանդերձելոյն » (Ա. Տիմ. Դ. 8). և արդարոյն՝ որոյ խնդրելն զարդարութիւն երկնից, 'ի տրիտուր փառակցն և անձնասրացութեան՝ հարիւրապատիկս հատուցանել Աստուած յայսմ կենդի երկրաւոր բարեաց (Մատթ. Զ. 33։ Մարկ. Ժ. 30)։ Իսկ յետ մահու պատրաստեալ են այնպիսի բարիք. « Զոր ակն ոչ եռեալ, և ականջն ոչ լուաւ, և 'ի սիրտս մարդոյ ոչ անկաւ » (Ա. Կորնթ. Բ. 9)։

2. Զորդորս բարեպաշտութեան, քան զոր ասասել սրբասուէ բարձրագոյն չիք անուանակոչ՝ զոր մատուցանէ Քրիստոնէութիւն, է պանեշելի մեծութիւն ամենազութի զորութեանն Աստուծոյ՝ ցուցեալ մեզ 'ի խորհրդեանն փրկութեան. « Աղաչեմ զձեզ՝ եղբարք, զթութեամբն Աստուծոյ պատրաստել զգամարմինս ձեր պատարագ կենդանի, սուրբ, հաճոյ Աստուծոյ՝

գիտասն պաշտօնդ ձեր » (Հռոմ. ԺԲ. 1). և յիշատակութիւն անմոռանալի սիրոյ Հօրն երկնաւորի, զոր յայտնեաց առ մեզ 'ի մեծի անտեսութեանս. « Յայսմ երևեցաւ սէրն Աստուծոյ 'ի մեզ, զի զՄիածին իւր միածին առաքեաց Աստուած յաշխարհս, զի եղիցուք նովաւ կենդանիք։ Յայսմ է սէրն, ոչ զի մեք սիրեցաք զԱստուած, այլ զի նա սիրեաց զմեզ, և առաքեաց զորդին իւր՝ 'ի քաւութիւն մեղաց մերոց։ Սիրելիք՝ եթէ Աստուած այսպէս սիրեաց զմեզ, ապա և մեք պարտիմք զմիմեանս սիրել. . . մեք սիրեացուք զԱստուած. վասն զի նա նախ սիրեաց զմեզ » (Ա. Յովհ. Դ. 9. 11 և 19). մանաւանդ յորժամ կոչէ զմեզ առ բարեգործութիւն միջնորդութեամբ խաչաքարշաբ երից Փրկին մերոյ. « Վասն Քրիստոսի պատգամաւորիմք որպէս և Աստուծոյ բարեխօսութեամբ մեօք. աղաչեմք վասն Քրիստոսի՝ հաշտեցարուք ընդ Աստուծոյ։ Զի նա՝ որ ոչն գիտէր զմեղս՝ վասն մեր մեղս արար, զի մեք եղիցուք նովաւ արդարութիւն Աստուծոյ » (Բ. Կորնթ. Ե. 20—21)։

3. Ընդ մէջ բարեյսկան և հաւատոյ վարդապետութեանց նորոյ ուխտի տեսանի հղօրագոյն իմն շաղկապ։ Հաւատոյ վարդապետութիւնն բարբառի առ մեզ, թէ անկաւ մարդն և ապականեցաւ. որ և վերականգնեալ նորոգի շնորհիւ խաչի մահու Աստուածատաւ Փրկչին։ Բարեյսկանն ասէ՝ զնէ մեզ գՀնարս, թէ գիտս զոգ ազատեալ յառաջնոյն, անցանելոյ եմք առ երկրորդն. և ասանէ կանոնս յարգաս՝ զոր ինչ արժանն իցէ, գործելոյ առ 'ի ջնջել յանձինս մեր օժանդակութեամբ շնորհացն Աստուծոյ զամենայն՝ որ ինչ ապականեալն է և հին, և նորոգեալ 'ի մարդն նոր՝ արդիլ 'ի մեղաց։ Վարդապետականն խօսի զծայրագոյն կատարելութեանց զեռանձնեալ Աստուծոյ, զամենատեսութենէ նորս, զամենազիտութենէ, զիմաստութենէ, զարդարադատութենէ, և այլն։ Խօսի զմեծամեծութենէ, զշարժարանաց, զմահաբանէ և զանապատ արդեանց Աստուծամարդոյն՝ մեր վասն, զայնոցիկ բազմայեղանակ հնարիցն՝ զորս 'ի կիր առնու նա առ փրկութիւն իւրաքանչիւր ուրուք 'ի մէջ, զտիեզերական դատաստանէ և ընդմիանելենական հատուցմանց արդարոց և մեղաւորաց։ Իսկ բարեյսկանն քարոզէ յայտնի՝ ամենայնի զրաստմամանեալ յորդորս, և ապրք զուն զործէ խորհեցուցանել զմեղաւորս յամբարիշտն զբնայիս, և հաստատել 'ի նահատակութիւն առաքինութեան. այնպէս զի երկոքին սորա՝ այն է վարդապետական և բարեյսկան,

ուստնոյ Քրիստոնէութեան են յատկապէս խօսելով կենդանի և անբաժան երկոքին մասունք մերոյ և նոցոյ գիտութեան։

4. Բարոյական ուսումն նորոյ ուխտի՝ զարմացուցանէ զմեզ բարձրութեամբ և կատարելութեամբ կանոնաց իւրոց, և ուժգնութեամբ և մաքրութեամբ յորդորակաց իւրոց։ Որոց վասն ճանն Հայի առ 'ի կրթել զմարդն, թէ՝ զի՞արդ մարթէ իւրաքանչիւր յամբարշտութենէ, կեալ Աստուածպաշտութեամբ և արդարութեամբ, և վարել զոչնչաբոհ կեանս (Տիտ. Բ. 12)։ Ա՛ 'ի խլել յարմատաց յանձին զմեզս գործակցութեամբ Աստուածային շնորհաց՝ պատուիրեալ լինի մարդոյն անձնուրացութիւն. առ 'ի զանձել անձանց զատարիութիւնս՝ պատուիրեալ լինի սէր առ Աստուած և առ մարդիկ, և զարձեալ յաղագս Աստուածասիրութեան և ընկերասիրութեան պատրաստս զոլ Քրիստոսի՝ եթէ կարելոր լիցի 'ի զոհ մատուցանել զկեանս իւր։ Քրիստոնէութիւնն այսպէս խօսելով՝ յորդորակօք իւրովք ընդդրիչ զմարդն յամենայն կուսմանց, ազդէ յամենայն կարօտութիւնս հոգւոյ նորա և 'ի միտսն՝ և 'ի հոգին և 'ի սիրտն համոզելով զմին, նուաճելով զմիւսն, շարժելով զմայլեցուցանելով զերրորդն։

3. Բարոյական ուսումն նորոյ ուխտի ըստ յետին ասմանն պատշաճուցանէ զայր իւրաքանչիւր խոհական՝ բարձրագոյն գերազանցութեամբն իւրով, զոր ունի համեմատութեամբ՝ ոչ միայն ընդ մարդկեղէն, այլ և ընդ հնոյ ուխտի ընդհանուր հրահանգացն բարուց (Մատթ. Ե. Զ. Է.)։ Ընդարձակութիւնս այս այնպէս հանդուգնանօթի է և անուարակոյս, մինչև աներկրդ է ձեռն արկանել ապացուցանել զայն։ Մանաւանդ զի նորին իսկ թշնամիք Քրիստոնէութեան բռնադատեցան խոստովանիլ զնոյնն հրաժարակաւ (1)։ Եւ յաւէտ քան զասացեալս պանծալի գերակայութիւն բարոյական կանոնաց Քրիստոնէութեան բաղդատութեամբ միահամուռ հաստատեցան 'ի մարդկանէ՝ է այն, զի Քրիստոսական սուրբ հաւատքն ոչ միայն աւանդէ մեզ կանոնս կենաց, և մատակարարել բարեպարագս գործս բարեպաշտութեան, այլ և շնորհէ մեզ հանդերձ այսու ամենայնիւ և զԱստուածեղէն ընդդրութիւնն ամենայն՝ առ 'ի կեանս և 'ի բարեպաշտութիւն (Բ. Պետր. Ա. Դ.), զորս ոչ ոք 'ի մարդկանէ կարաց երբեք տալ մարդկան։

---

(1) Զոր օրինակ. Ռուսսո Ժէ-ֆրէ. գիրք Դ. հատոր Գ.

# ՑՕԴՈՒԱԾ ԵՐՐՈՐԴ.

## Յեռաբիւն հրապարակական Աստուածպաշտութեան նորոյ ուխտի.

Աստուածպաշտութիւն հասարակաց՝ զոր ունի եկեղեցին Քրիստոնէական, թէ և ոչ է ճանաչել մանրամասն հանգամանաց, և կարգեալ ըստ սրբոցն 'ի նոր Կտակարանի՝ որպէս ծիսակարգն էին օրէնք 'ի Հեռոմն, այլ բուռ կազմութիւնն և բուռ գոյութիւնն բովանդակարար հաստատեալ է 'ի վերայ նոյն իսկ Կուսակարանին նորոյ. բուռ արամ մեանմագոյնքն 'ի արքազնագործութեանց Քրիստոնէական եկեղեցւոյ, կամ որ նոյն է՝ արքազան խորհուրդք ասեղեալ են հանմանգամանքն 'ի նոսին Կուսակարանի. յայս տակս անմարմին է լուել և ոչ խօսիլ զանէ զոյնն ինչ բանս զարաշամանաց հասարակաց նորոյ ուխտի։

Հ. Ցի՞նչ է նպատակ հասարակաց Աստուածպաշտութեան։

Պ. Նպատակ արարչին արաշամանացն յերկուս ինչս հայի. Նախ՝ յայտ առնելոյ և յանդիմանութեան կացուցանելոյ զանձրիմն կամ զհոգեորն զերկրպագութիւն, զհաւատս, զյոյս, զսէր, և զնդհանրապէս զոյլ ամենայն արարատանութիւնս՝ զորս արարեալք Աստուծոյ և Արքոյ նորս։ Երկրորդ՝ արդարանելոյ, անուցանելոյ և 'ի վերս յերկինս համբարձանելոյ 'ի նոսրս 'ի մեզ այնու՝ զերկրպագութիւնն հոգեւոր, բարբարիմ հաւատով և սիրով՝ 'ի վերս բնծայանցուցեալ զոյս մեր, և 'ի ձեռն երանելի նշանաց ինքեանց 'ի սիրտս մեր զանելոյի շնորհն Աստուծոյ առ 'ի հաստատել զանձինս 'ի ճշմարիտ բարեպաշտութեան. բուռ արամ մատանեալ մեզ մի քրիստոնէական արաշամանաց բնծայանցուցանեն ինքեանցն զիրարին խորհրդական իմաստս՝ յայտ արարեալ զայս կամ զայն 'ի մեր շնորհեալ ճշմարտութիւնս Աստուածանէ։

Հ. Ընդէ՞ր զարդարեմք զեկեղեցիս մեր խաչիս և պատկերաց Արքոյ։

Պ. Խաչն և կենդանագիրք Աստուծոյ և Արքոյ խորոյ՝ որով զարդարեմք զեկեղեցիս, հանրարանալ զմիտս մեր 'ի զաղտնարկ առ նախագաղափարն, և յորմնակէ առ նախատիպն՝ յուշ առնեն մեզ զանհուն կատարելութիւնսն և զարարութիւնսն Աստուծոյ առ մեզ զհանդէս, մանաւանդ 'ի տնտեսութիւնսն մեր

փրկութեան, որով և յորդորեն զմեզ արհնել և գոհանալ զնմանէ՝ հեղլով աստուծի սիրոյ նորոգ զանձինս մեր. յուշ առնեն նաև զպանծալի նախատակութեանց վկայիցն հաւատոյ արդ աւետեաց արքայութեան երկնից, և շարժեն զմեզ երանել յիշատակի նոցա՝ թափանցելով զբարեխօսութիւնս նոցա առաջի աթոռոյ Աստուածամարգարէին և պաղատիլ յանձինս զբազմաբարեխօսութիւն անձանց նոցա։

Հ. Ա՞ւ ի՞նչ սահմանեցան տօնք ի Քրիստոնէութեան։

Պ. Տօնք՝ յորոց ոմանք ի փառս Աստուծոյ և Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, այլք ի պատիւ Աստուածամօր, և կէսք ի յիշատակ անմարմին Զուարթնոց և Արդոյ ամենեցուն կատարին, յուշ արարեալ հաւատացելոցս զբազմադիմի շնորհս Աստուծոյ՝ զփրկագործութիւնս Փրկչին մերոյ, զհանդէս սրբութեան թագուհւոյն երկնից, և զնախատակութիւնս բարեպաշտութեամբ հանգերձ և բարեբարութիւնք վկայիցն Աստուծոյ, և որոյ սարսաւորենն փրկութեան մերոյ՝ երկնային զօրութեանց, աւանդեն միանգամայն և խրատս ոգեշունչս, և մղեն զմեզ օր ըստ օրէ բարխատգէտ լինել և սիրել զմեծարգասէրն, զհանալ զմիշտ Կուսն Մարիամայ, և յորդել զյիշատակ Արդոյն Արդոյն, ապաստարելով յանձինս զտիպ զԱստուածանշանդ քաղաքավարութեան նոցա։

Հ. Ա՞ւ ի՞նչ և եկեղեցական պաշտամունք։

Պ. Ամարիկ ընդհանրապէս որպէս թէ նշանակաւոր յանդիման կացուցեալ մեր առաջի ըստ կարգի՝ զդարմանալի անուանութիւն Աստուծոյ ի Դարձ փրկութեան մերոյ յերկրի ասա, և յաւէտ ևս զանցս Փրկչին մերոյ՝ ընդ զնոգի իւրարանչիւր Քրիստոնէի վասն խորհրդաւորութեանցմբ, և յորդորեն զամենայն որ սրբազան զգայմամբ ի պաշտան Բարձրելոյն, և ի մանաւորի սրբազան խորհուրդք՝ իրրև միջոցք և երևելի նշանք անհերևելի փրկագործ շնորհացն Աստուծոյ պատկերացուցեալ մեզ յանդիման զանհուն արդիւնս Փրկչին մերոյ, և զանմահանալ զնորս առ մեզ բարութիւնս՝ առաւելապէս իմն զարթուցանեն զմեզ հաւատալ ի նա, սիրել զնա և յուսալ ի միջնորդութիւն նորա և յոգնականութիւն։

Հ. Զի՞նչ և սրբազան անօթք և երգք նշանակիցեն։

Պ. Սրբազան անօթք և զգեստք՝ զոր ի կիր առնուն յեկեղեցական պաշտամունս, մէն մի անհատարար առնալ ունին զխորհրդական նշանակութիւնս, և հանրարձակալ զմիտս անձինս

Հաւատացելոց 'ի նիւթականէն առ Հոգւոյն՝ արծարծանեն 'ի հոգւոջ զբարեպաշտական մտածութիւնս. իսկ երգք, աղօթք և ընթերցուածք բացորոշ հնչմամբք մարդկեղէն բարբառոյ՝ բայց 'ի պատմելոյ զփառսն Աստուծոյ՝ ուսուցանեն բացարձակապէս Հաւատացելոց նոսա զվարդապետութիւնս հաւատոյ և զկենացն կանոն այլովքն հանդերձ։

## ՑՕԴՈՒԱԾ ՁՈՐՐՈՐԴ.

### Զի՞նչ ուսուցանէ նոր ուխտն նկատմամբ առժամանակեայ կենաց մարդոյ.

Հ. Նոր ուխտն ե՞տ քաղաքական օրէնս ինչ 'ի պէտս Հաւատացելոց։

Պ. 'Ի յայտնութեան նորոյ ուխտի ո՛չ եղան քրիստոնէից տակ՝ քաղաքական օրէնք ըստ կարգի, որպէս Եբրայեցւոցն 'ի ձեռն ուխտին Հնոյ։ Սուրբ Կրօնն Քրիստոնէական՝ թուի թէ զանց արարեալ զժամանակեայ կենցաղավարութեամբ մարդոյ՝ հոգայ յատկապէս վերանորոգել զմարդն մեղուցեալ՝ արբելով զնա յամենայն գարշութեանց, և մարքուզարդեալ ածել 'ի մշտնջենաւոր երանութիւն։ Այսու ամենայնիւ վերատին ծնանելոյն զհոգևոր էութիւն մարդոյն՝ երևեցուցանէ հանդերձ այսու և զբարեբար տպաւորութիւն յաշխարհական կեանս անդ նորա. քանզի սուրբ առնելով զմարդն՝ առնէ զնա միանգամայն և բարեբարդ. և Քրիստոնէութիւնն՝ թէ և ո՛չ է 'ի թագաւորութենէ յաշխարհէ սատի (Յովհ. ԺԸ. 36), բայց և այնպէս ունի ըստ առաքելոյ բանին՝ զաւետս կենացն, ո՛չ հանդերձելոյն և եթ, այլ և զարդիս (Ա. Տիմ. Դ. 8)։

Հ. Զիա՞րդ ուսուցանէ Քրիստոնէութիւնն զերջանկութենէ մարդոյ անհատաբար։

Պ. Առաջին թշնամի մարդկութեան, առաջին աղբիւր ապականոյ նորա ամենայնի՝ առէ Քրիստոնէութիւնն, են սխալաւոր մտաւորութիւնք իւրաքանչիւր անձին, իմն նախանձ. վրէժխնդրութիւն, փառասիրութիւն, ագահութիւն, ատելութիւն՝ այլովքն հանդերձ, որոց բունեալ 'ի սրտի իրրու դաժան բռնաւորաց՝ առնչեն զհոգին, մաշեն զմարմինն, և խանգարեն զառողջութիւնն, երբեմն յաւելլով նմա զրազմութիւն թշնամեաց, և եր-

թեմն թէ և հոխաստուգեալ աշխարհական բարեօք, այլ ոչ երբէք ասան նման թողլ վայելել 'ի խաղաղութեան։ Աղաւորն ազնիւ մի՛ջոց, և չիք ինչ արտարին հար՝ որոյ մարթի իցէ խաղաղել զայն. մի միայն տուրս հաւատոն է՝ որ սատակ ազատաց, և ցանարեցուցանէ զգլխաւոր ազգիւր թշուառութեանցս ամենայնի՝ ոչ միայն զչարիս ապահով հաւատացելոց յորդեալ, այլ ամենայն զ'ի վերայ եղեալ՝ 'ի բաց կալ 'ի մոլութեանցս՝ 'ի խաչ հանեալ զայնս, այլ և շնորհելով զերբնական կարողութիւնս, առանց որոյ լոկ մարդկեղէն զօրութեամբ անհնարին է առնել. և զորս բաց 'ի Քրիստոնէութենէ ոչինչ յերկրաւորայս ձեռնհաս է տալ։ Աւուրք հաւատքն ուսուցանելով մարդոյ պատերազմաւ յաղթել կրից՝ տարածացուցանէ 'ի հոգւոջ նորա զիւաղաղութիւն երկնային (Փիլիպ. Դ. 7), որում ոչ երբէք արժանացան մոլիք (Եսայի. ԺԷ. 20 և 21)։ Փոխանակ անձնասիրութեանն հանդերձ այլ շառաւիղաք՝ տնկէ 'ի սրտի նորա զերկուս նոր զգայմունս՝ սէր առ Աստուած, և սէր առ ընկերս, փոխարկելով զսիրտ նորա 'ի սրբարան հնազանդ երկնչութեան. և յայնժամ ոչ ոք է՝ որ կարողն իցէ ազատել զնոսանս խաղաղութիւն և զարթեխառնութիւն Քրիստոնէին, քանզի եթէ յորդեն 'ի շուրեմարանս նորա աշխարհային բարիք, ընդունի՝ տեսանելով 'ի նոսա զպարգև Աստուծոյ և զմիջոցս փրկութեան յինելոց ընկերաց և փրկութեան հոգւոյ իւրոյ. այլ ոչ երբէք կապի սիրտ իւր 'ի բարիսն յայնոսիկ (Եսայի. ԿԱ. 11)։ Եւ յորժամ կորուսանէ՝ ոչ ինչ հոգայ, և ոչ բնաւ խախտի։ Եթէ ածէ Ցէր 'ի վերայ փորձութիւնս և թշուառութիւնս, Քրիստոնեայն ապաւինեալ որդիական վստահութեամբ առ Դատաստանաւորն՝ խնդայ 'ի շարշարանս իւր (Կողոս. Ա. 24)՝ գոլով անեղկայց, թէ փորձութիւնք՝ որ 'ի վերայ հասեալ, են նոր ապացոյցք սիրոյ Հօրն երկնաւորի (Եբր. ԺԲ. 6) առաքեալ վասն հոգւոյ օգտի իւրոյ (Ա. Պետր. Ա. 6—7), և թէ Աստուածաբանն ոչ երբէք թողու անկանիլ 'ի փորձութիւն առաւել քան զկարս իւր (Ա. Կորնթ. Ժ. 13)։ Եթէ յառնեն 'ի վերայ մերձաւորք՝ բորբոքեալ առելութեամբ և չարութեամբ, և յանմեղութեան անդ իւրում հարատաւհարեն զնա և նեղեն՝ «Սէր նորա ամենայնի համբերէ, ոչ զրգռի, ոչ խորհի զչար» (Ա. Կորնթ. ԺԳ. 4—8), այլ ներկ թշնամեաց իւրոյ. և մինչև ազօթս առնէ 'ի վերայ նոցա, սիրէ զնոսա, և հաստատեալ բարի փոխանակ չարութեան նոցա։ Ձմարիտ

Քրիստոնեայն միշտ զոհ է ընդ վիճակ իւր, և այս և եթէ խաղաղութեան երջանկութիւն յաշխարհի սատ. յայս ասեն թոյլ 'ի Քրիստոնէութենէ չիր այլ կրօն, որ կարէր իցէ սատգիւ երջանիկ առնել զմարդ 'ի մանաւորի և ընդհանրապէս։

Հ. Զիա՞րդ ուսուցանէ Քրիստոնէութիւնն զերջանկութենէ մարդոյ ընտանեկան նկատմամբ։

Պ. Քրիստոնէութիւնն մուծանէ զճշմարիտ երջանկութիւն ևս և 'ի ծոց ընտանեաց. բաս այսմ մասին գրեթէ անհրաժեշտ են բարիք սուրբ Հաւատոյն. քանզի նախ՝ արգելեալ Հաւատոյն ոչ գրաւմանկութիւն՝ եղոյց զհարազատ եղբանակ ամուսնութեան, այն է միակնութիւն. որով միայն հնարաւոր է որդէս անիկեղծ սէր՝ և միաբանութիւն 'ի գերդաստանի. նոյնպէս և կատարեալ բարոյական նպատակի ամուսնական կենաց։ Երկրորդ՝ արքեաց դէոր պատկին խորհրդական օրհնութեամբ, որով շնորհի զուգաւորելոցն շնորհալի կարգութիւն կելոյ 'ի միասին հոգեւոր և սուրբ սիրով, ծնանիլ և զաստուրակել զաւակունս յօրհնութիւն, և բացուածոյց գիմանալի նշանակութիւն ամուսնութեանն՝ յարատեւոյ այնմ առեալ զիարհրդական միաւորութիւն Քրիստոսի ընդ Եկեղեցւոյ (Եփես. Ե. 29—33)։ Երրորդ՝ 'ի վերս եհան յանարգութենէ զյեղն կանայի։ ընդ որում ձեղեալն էր առ Հեթանոսս՝ սարսի նման անարգեն զմարդկային արժանապատուութիւն (Գաղ. Գ. 28։ Ա. Կորնթ. ԺԱ. 12). առանց որոյ գրեթէ անհնարին էր 'ի միջի առն և կնոջ՝ բարոյական զուգաւորութիւն և սէր անարատ. այնպէս զի երկրորդն ամենայն կեանս իրրև մի մարմին և մի հոգի 'ի Քրիստոս Յիսուս (Եփես. Ե. 22—33)։

Հ. Զի՞նչ ուսուցանէ ծնողաց Քրիստոնէութիւնն նկատմամբ առ զաւակունս։

Պ. Քրիստոնէութիւնն ազատաստուցեալ վանմանոյց զաւանչութիւնս և դյարաբերութիւնս՝ որ 'ի միջի ծնողաց և զաւակաց։ 'Ի վերայ բնական զիոյ որդեսիրութեան յաւել սուրբ Հաւատքն զնոր իմն յատկութիւն. այն է՝ զի սկսան հայել 'ի սերունդս իւրեանց ծնողք իրրև յոյդիս Աստուծոյ և յանդաման սրբարարութեան երկնից՝ սիրեալ յաշխարհի 'ի ձեռն յԱստուծոյ արհնեալ ամուսնութեան։ 'Ի վերայ ծնողացն եղան պարտք՝ անուանել զզաւակունս՝ ոչ 'ի սէրս և եթէ Երկրաւորս և երկրաւոր հայրենեաց, այլ նախապատուապար 'ի սէրս մշտենջենաւոր կենաց և հայրենեացն՝ որ յերկին (Եփես. Զ. 4). ամին նման 'ի

վերայ բնական սիրոյ զատակայն առ ծնողս՝ յառելսն Քրիստոնէութեանն նորանոր զրգիռք և վեհ յառաջութիւնք, այնչ Հաղորդ լինիլ և սիրել զնոսա 'ի Տէր (Եփես. Զ. 1)՝ զոլով կապակցեալ առաքինոյն ընդ յեռնոյ ուշ մարմնաւոր միայն, այլ և հոգեւոր շաղկապով 'ի Քրիստոս Յիսուս. և սոքա առ ամենն կենցաղավարութիւն Քրիստոնէից յաշխարհի ասա՝ եղեալ ընդունայնոյն մարդասէրն սիրոյ, որ յաղագս ընդ միմեանս զսիրելոյն անդամս զերդաստանին. եղեալ շտեմարան բարեպաշտութեան սիրոյն խորհրդութեան և բարութեան։ Եւ յիրաւի՝ բաց 'ի զերդաստանոյս ճշմարիտ Քրիստոնէից չիք ուրեք հաստատուն բնականական բարեկենդանութիւն։

Հ. Զի՞նչ ուսուցանէ ժողովրդական Քրիստոնէութիւնն՝ նկատմամբ առ երկրաւոր իշխանս և առ թագաւորս։

Պ. Կրոնն Քրիստոնէական պատուիրէ ժողովրդեան. «Զթագաւորս պատուեցէք» (Ա. Պետր. Բ. 17). «Տուք զկայսերն կայսեր» (Մատթ. ԻԲ. 21). «Հնազանդ լերուք ամենայն մարդկանցն առեղծուածոյ (իշխանութեան). զոսա Տեառն. եթէ թագաւորի՝ իբրեւ առաւել ուժեր. եթէ զօրագլխոյ՝ իբրեւ 'ի նմանէ առաքելոյ» (Ա. Պետր. Բ. 13—14)։ Եւ զոսա. «Քանզի ուշ ուստեր է իշխանութիւն, եթէ ուշ Աստուծոյ. և որ են՝ Աստուծոյ կարգեալ են» (Հռոմ. ԺԳ. 1). քանզի ամենայն իշխան՝ «Աստուծոյ պաշտօնեայ է՝ քեզ 'ի բարիս. և երկիւղածութեամբ յերկրի ասա՝ ուշ միայն բարեխնամ, այլ և պատուհասաւոր Դատաւորութեանն, ահաւոր վրէժխնդիր այնմ՝ որ զչարն գործիցէ (4). յայս տակս «Որ հակառակ կայ իշխանութեանն՝ Աստուծոյ հրամանին հակառակ կայ. և որք հակառակ կան՝ անձանց զատապարտութիւն ընդունին» (2)։ Պատուոյ և պարտաւորէ զժողովուրդն ասելով. «Հարկ է հնազանդ լինել ուշ միայն վասն բարկութեանն, այլ և վասն խղճի մտացն (5) «Արարէք մատաց ծառայել իբրեւ Տեառն, և ոչ իբրեւ մարդկանց» (Եփես. Զ. 7). «Հարկ է հնազանդ լինել յամենայնի երկիւղիւ տերանց, ուշ միայն բարեբարոյսն և հեզսն, այլ և կամակորսն. զի և այս ճշմարիտ շնորհք Աստուծոյ են» (Ա. Պետր. Բ. 18—19). և նորա քան զամենայն առնել ապրիցս վասն թագաւորաց և ամենայն իշխանաց» (Ա. Տիմոթ. Բ. 1—2)։

Հ. Զի՞նչ ուսուցանէ իշխանաց և թագաւորաց՝ Քրիստոնէութիւնն նկատմամբ առ ժողովուրդն։

Պ. Քրիստոնական Կրօնն ազգէ իշխանաց և թագաւորաց՝ զայնպիսի զգայմունս և պարտականութիւնս, որոց անդէտն էին յառաջագոյն նկատմամբ առ հպատակս իւրեանց Հեթանոսք, իսկ զարդարութիւն և զողորմութիւն, զգութ և զսէր՝ յոյժ ա-բարեալ նոցա, թէ և ժողովուրդ իւրեանց մարդիկ են՝ որպէս և ինքեանք, սերմնալ 'ի միոջէ հաստատեալ Դատաւորէն Աստուծոյ (Գործ. ԺԷ. 26). թէ որդիք են և նոքա՝ միոյ և նոյնոյ Հօրն Երկնաւորի՝ որպէս և ինքեանք (Մատթ. Ե. 48. Զ. 8), եղբարք նոցա 'ի Քրիստոս Յիսուս (Կորնթ. Գ. 11), յորոց վասն իւրաքանչիւրոց 'ի նոցանէ մեռաւ Քրիստոս (Ա. Կորնթ. Ը. 11), հաղորդք Աստուածեղէն բնութեանն (Բ. Պետր. Ա. 4), նախասահմանեալք նստել 'ի հանդերձելումն ընդ Տեառն իւրեանց 'ի դահոյս երկնայինս, և վերջապէս 'ի վերայ նոցն իսկ թագաւորաց և իշխանաց, որպէս և 'ի վերայ ժողովրդեան նոցա՝ գոյ յերկինս անուշտ Տէր և զատաւոր (Եփես. Զ. 9):

Հ. Զի՞նչ ուսուցանէ ժողովրդեան Քրիստոնէութիւնն նկատմամբ առ միմեանս:

Պ. Քրիստոնէական Կրօնն զերազանց իմն եղանակաւ ուսմանէ, ազնուացուցանէ և ամրապինդ յոգւոյապէս զփոխադարձ վերաբերութիւնս ժողովրդոց՝ իբրեւ անդամոց մեծի քաղաքական մարմնոյ ընդ իւրեարս, պատուիրելով իւրաքանչիւր ոմեքս 'ի նոցանէ զանձնուրացութիւն և զեղբայրութիւն:

Հ. Զի՞նչ առաջին և զի՞նչ երկրորդ պատուիրանացն իցեն խնամարք:

Պ. Անձնուրացութեամբն՝ որով Կրօնն Քրիստոնէական պատուիրէ ժողովրդեան 'ի բաց կալ յանձնասիրութենէ և 'ի խաչ հանել զանձնային զցանկութիւնս մարմնոյ, ցամաքեցուցանէ զառաջին աղբիւրն բազմապատիկ չարեաց ընկերական կենաց. իսկ երկրորդաւն՝ որով քարոզէ զեղբայրութիւն, բանայ զանհամեմատ աղբիւր ընկերական քարեաց. վասն զի որք անկեղծ եղբայրասէրքն են՝ կեան ոչ վասն անձանց ինչ իւրեանց, այլ եղբարց, պատրաստ զոչով զանձն 'ի սէր նոցա զամենայնն՝ զոր ունին, և 'ի կարեւորագոյն դէպսն՝ դնել միմեանց զանձինս իւրեանց 'ի վերայ ընկերին: Յերկրորդումն պատուիրանաց ասասի ուսանիմք զարմանալ՝ յանձն առնուլ կամաւ զհաստատակաց պաշտամունս եկեղեցական և աշխարհական առաջնորդութեան, խնամակալութեան, հոգաբարձութեան և գատաւորութեան, և

սխալակցարար կարելիոյ զոլ բանիս և արդեամբ՝ ըստ հոգւոյ և ըստ մարմնոյ աղքատաց և տառապելոց, որոց և այրեաց, հիւանդաց և զառամելոց։ Ճշմարիտ Քրիստոնեայն ներշնչեալ անձնուրացութեամբ և ընկերասիրութեամբ՝ է օգտակարարարդոյն անդամ հասարակութեան, եթէ եկեղեցական իցէ և եթէ աշխարհական, եթէ իշխան իցէ և եթէ տոկական, եթէ զինուորական իցէ և եթէ ճարտար, եթէ զինուոր իցէ և եթէ արուեստաւոր. վասն զի կատարել զարաշուն իւր մեծաւ իմն ջերմեռանդութեամբ՝ ուղղելով ըստ կարի զամենեսեան առ բարին հասարակաց։ Եթէ անդամք ամենայն որ և իցէ ազգի կամ տեսակութեան՝ լինիցին ճշմարտիւ Քրիստոնեայք, եթէ առաջնորդ առնուին ինքեանց ըգբարոգեալն 'ի Քրիստոսէ զանձնուրացութիւն և զեղբայրասիրութիւն, լինէր յայնժամ ազգն կամ երկրաւոր թագաւորութիւնն այն նման արքայութեանն երկնից. լինէր՝ ասեմ, թագաւորութիւնն յորոյեալ մշտնջենաւորապէս ներքին հաստատուն խաղաղութեամբ և ընդհանրական եղբայրասիրութեամբ, թագաւորութիւն՝ յորում ամենայն բարաքայիք 'ի միասին առեալ՝ յորինիցին առաջիս ըստ գրոյն զմի մարմին և զմի հոգի։ Մ՞ի մոռացուք, թէ զերկուսին զաւաքնութիւնս զայսոսիկ՝ որ այնպէս կարեւոր են իսկական բարեաց ժողովրդեան, Քրիստոնէութեան և եթէ Հաստատուն է տապաստել 'ի մարդիկ։

---

## ԴԼՈՒԽ Բ.

## ՑՕԴՈՒԱԾ ԱՌԱՋԻՆ.

Ժամանակ գալստեան Յիսուսի Քրիստոսի յաշխարհ՝ համաշխարհական ակնկալութեամբ և սրանչելեօք ապացուցեալ.

Հ. Եւ՞ երբ եկն Յիսուս Քրիստոս յաշխարհ։

Պ. 'Ի ժամանակին՝ յորում ըստ նախագուշակութեանց հնոց հարիւր էր զալ Մեսիային, և յորժամ Հրէայք և Հեթանոսք հասուցանէին ակնկալեալ Ազգին գալստեան նորա։ Զաստուածութիւն առաջնոյն տեսաւ 'ի մեր անդր բարայայտեալ՝ և զմարդասէրութիւնս Յակոբոյ, յաղագս ո՞չ պակասելոյ իշխանի 'ի ցեղէն

Յուդայ և կատարման Դանիէլեան եօթանասուն եօթներորդական, որք լցան ամենամիջոց ստուգութեամբ 'ի վերայ Փրկչին մերոյ. Որոյ արդ հետաքրքրել զերկրորդն, յորոյ 'ի հաստատութիւն յաւուրս բերեալ այժմ զանտարակուսելի ապացոյցս։

Հ. Ակն ունէին 'ի ժամանակին յայնմիկ Հրէայք յայտնութեան Մեսիայի։

Պ. Այո. և այսմ վկայեն Պատմութիւն ուսումնական, Յոսեփ Փլաւիոս և Թարգմիք Հրէից։

Հ. Զի՞նչ յայսմ մասին 'ի մէջ բերէ Ս. Աւետարանն։

Պ. Դէպ՝ յորմէ երեւեալ Յովհաննու Մկրտչի յեպերս Հորդանանու՝ սկիզբն արար քարոզութեան, առաքելոյն առ նա Հրէայքն հարցանել, թէ նա՞ իցէ Քրիստոս. ապա որս պատասխանեալ, թէ չէ ինքն Մեսիայն, այլ յաւուրս ընթացս նորա, բա՛ կրեսս քարոզել. «Ապաշխարեցէք, զի մերձեալ է արքայութիւն երկնից... որ զկնիր իմ գայ՝ հզօրագոյն է քան զիս» (Մատ. Գ. 2։ Մարկ. Ա. 7)։ Երկրորդ՝ յորմէ Մոգք աստղնորդութեամբ սքանչելի աստեղն եկեալ Յերուսաղէմ՝ հարցին. «Ո՞ւր է՝ որ ծնաւ արքայն Հրէից» (Մատթ. Գ. 2. 11)։ 'Ի սոսկ հարցմանէ ասոյ դղրդեցաւ բոլորովակ քաղաքն (Մատթ. Գ. 3)։ Երրորդ՝ յորմէ զՓրկիչն տակաւին մանուկ ածին 'ի տաճարն ըստ օրինացն Մովսիսի «Ցոնդիսման տանել Տեառն»՝ հրէն ընդ առաջ նորա ծերունին Սիմէօն, որ «ակն ունէր մխիթարութեանն Իսրայէլի» (Ղուկ. Բ. 25). և Աննա մարգարէուհի խօսէր զնմանէ ընդ ամենեսին՝ «Որ ակն ունէին փրկութեանն Երուսաղէմի» (38)։

Հ. Զի՞նչ զՄեսիայէ Յոսեփ Փլաւիոս, Մանաս ասորին, և Հրէայ Մատենագիրք խօսեցան։

Պ. Յոսեփ Փլաւիոս (1) պատմէ, թէ 'ի ժամանակին յայնմիկ երեւեցան արք բազումք համբաւեալք զինքեանս դոյ Մեսիա. և այսմ հաստատեցին բազումք 'ի ժողովրդենէ. որով ապացուցանի, թէ և խարեբայքն և խարեբայքն համանգամանայն գիտէին ասուցիս, թէ հասեալ է արդ 'ի վերայ ժամանակ գալստեան ճշմարիտ Մեսիային։ Իսկ Մանաս յայտնապէս խոսի, թէ ա՛ռնայն Հրէաստան ապատամբեցան 'ի Հռոմայեցւոց յաւուրս

(1) Յոգեպս պատերազմին Հրէից. Գիրք Գ. գլուխ 8. Գրուագ. 9։ Եւ Գիրք Գ. գլուխ. 10. գրուագ. 7։

Վ. Եսպասիանոսի և Տիտոսի՝ հաստատեալ, թէ, եօթանասուն եօթներորդն Դանիէլի յաղագս գալստեան Մեսիոյ լցեալ են. արդ և յայս ասէր հաւրկ էր յայտնել Մեսիոյ։

Հ. Հեթանոսք ևս ակն ունէին՞ գալստեան Մեսիոյն։

Պ. Անտարակոյս. վասն զի Տակիտոս՝ ժամանակակից պատմիչ անցեալ պատերազմին Հրէից գրէր, թէ բազումք հաստատին հինաւուրց վկայութեանց քրմաց, թէ 'ի ժամանակին յայնմիկ բնակչին արևելք զնոր զօրութիւն. և թէ որք զոլորտն են 'ի Հրէաստանէ՝ տիրեսցեն աշխարհի (1)։ Սուտել ևս ազգութեամբ իւրոք և Սվետոնիոս. «Յարևելս համայն տարածեալ է վաղնջական և հաստատուն կարծիք, իբրու թէ նախատեսմանեալ է, զի որ երևելիցին յայնժամ 'ի Հրէաստանէ՝ կալցեն զերկիրս» (2). զնոյն երկրորդեն և երկրորդին ժամանակակից Պատենագիրք՝ Փիլոն (3) և Փլաբիոս (4), և որ եկացն յերկրորդում դարու՝ մատենագիրն Եհեղիպոս (5)։

Հ. Հայք և Պարսիկք ևս ակն ունէին՞ գալստեան Մեսիոյն։

Պ. Այո. քանզի իբրև լուան զծնունդն Յիսուսի 'ի Բեթղեհեմ՝ Մոգք 'ի հարաւային գաւառացն Հայաստանի, զնոցին Յերուսաղէմ երկիրպագանել նմա (6)։

Հ. Զի՞նչ յայտմ մատին և Զինուցիք։

Պ. Սարսա ևս զնոյն սպասկաբութիւն ունէին. իբրու զի բան միկայելոյ Պատմագրաց երկրին՝ յետ 65 ամի ծննդեան Քրիստոսի Ներսեակարան Զինուց ասարեալ 'ի Պաղեստին խնդրակս առ 'ի բաստագել, թէ յիրաւի ծնաւ զԱրարատն երկնից (7)։ Արեանն եթէ սա հեռաւոր Հեթանոս գոյր ազգութիւն բնդհանուր և անխարան սպասկաբութիւն, գոյր հարկաւ և առ Հրէայս. վասն զի 'ի սոցանէ սա նոսա ասծանցեալս առանցաբութիւն։

Հ. Զիա՞ր ոչ մատրթ էր ասծանցել 'ի Հրէից սա Հեթանոս ակնկալութիւն գալստեան Մեսիոյն։

---

(1) Պատմութիւն. Գիրք. Է. գլուխ. 13։
(2) Վ. տրոյ Վեսպասիանոսի. գլուխ. Դ.։
(3) Հատոր. Ի. Էրես. 449, 499, 435. բան ստրոգրութեան Մանանայ։
(4) Յաղագս պատերազմին Հրէից. Գիրք. Գ. գլուխ. 28։ Է. Գիրք. Դ. գլուխ. 31։
(5) Յաղագս վասարանութեան Էրուսաղէմի. Գիրք. Է. գլուխ. 44։
(6) Վրդանանէսեան ընթերցուածք. 1831. Հատոր. Թ.։
(7) 246։

Հ. Նախ՝ Հրէայք բաղում ամաց կանխաւ գրուեալք 'ի Բաբելոն, 'ի Հայաստան (7), 'ի Պարսկաստան, 'ի Միդիա, 'ի Սիւռիա (Սիրիա), 'ի Փիւնիկէ, յԵգիպտոս (8), 'ի Հնդիկս (9), 'ի Չինաստան (10), և մինչեւ յԱմերիկա (11)՝ ածանցեցին սա բնակիչս աշխարհացս այսոցիկ հարկաւ և զազգային աւանդութիւնս խրատանց. և երկրորդ՝ զի Աստուածաշունչ թարգմանեալ իբր երկերիւր ամաց յառաջ քան զծնունդն Քրիստոսի՝ յաժէր անտարակոյս 'ի ժամանակէ ատոի 'ի ձեռս գիտնականացն Հեթանոսաց։ Զերկրորդին պանծալի զանցս գործէր անհերկրայ Նախատեսութիւնն. զի յառաջ քան զգալուստն Մեսսիայի՝ նախապատրաստեցէ այսոքիմբ զամենեսին յընդունելութիւն նորա. և այս 'ի ժամանակին՝ յորում հարկ էր իսկապէս երեւիլ Քրիստոսի, նմա ակնկալեալ ապասէին և Հրէայք և Հեթանոսք։

Հ. Գործեցա՞ն և արանչելիք նախ քան զծնունդն Քրիստոսի կամ զկնի։

Պ. Գալուստն Փրկչի մերոյ եղեալ 'ի ժամանակի հաստատեալոյ ակնկալութեան Հնմարիտ Մեսսիային, թէ և կարի ազգութեամբ, այլ տակաւին անորոշ բարբառով խօսէր զԱստուածաշունչ պատգամաւորութենէ Յիսուսի Քրիստոսի. այլ գերբնական արանչելիքն՝ որ շուրջ պատեցին զծննդեամբ նորա, յայտնապէս վկայեցին, թէ յամենեցունց՝ որ ծնան 'ի ժամանակին յայնմիկ, նա միայն է 'ի վաղուց անտի խոստացեալ Փրկիչն։ 'Ի արանչելեացս յայտնանէ ամենեքեան նախ քան զծնունդն Քրիստոսի Փրկչի, այլ զկնի։

Հ. Ո՞ր պէս եղեւ աւետումն ծննդեան Յովհաննու Կարապետի, և պատանեցումն Զաքարիայի։

Պ. Նախ քան զծնունդն Յիսուսի Քրիստոսի երեւեցաւ բարեպաշտօն քահանայի ումեմն Հրէի՝ որոյ անունն էր Զաքարիա, 'ի տաճարին Երուսաղիմայ Հրեշտակապետն Գաբրիէլ, և ետ ա-

---

(1) Պատմութիւն Խորենացւոյ. Գիրք. Գ. Երես. 156, 163, 200։

(2) Հանուրց պատմութիւն Աստուածաշնչի Նիկոդեմոսի. Երես. 440. Տպ. Պետերբուրգ։

(3) Ցիշատակարան ազգ Վանափառատոյ 'ի վերայ Ազուանից։

(4) Հանուրց տեղեկութիւն 'ի վերայ Հրէից Չինաստանի, և 'ի մասին ազգութեանն՝ զոր արարքն նորա 'ի վերայ գրականութեան այսր քնդարձակածաւալ հայրենութեան յառաջ քան զծիսականն Քրիստոսի, արարեալ Լ. Ապպէ Արանչոյ։

(5) 250։

սեռոյ, թէ 'ի նմանէ և 'ի կնոջէ նորա յԵղիսաբեթէ' (թէպէտ և երկոքին ևս անցեալ էին զաւուրքք, և կին իւր ամուլ էր)։ Ծնոյի Յովհաննէս անուն որդի, որ և եղիցի յառաջընթաց Մեսիային։ Իսկ Զաքարիա՝ զի տարտամութեամբ յամրաշաւտ զոտս բնոյ արանշնչի զուշակութիւնն Հրեշտակապետին, խրատեցաւ պապանձմամբ, մինչև կատարեսցի աւետիսն, և որոշիցն Եղիսաբէթ առուգիս յշաւոյ յաւուր յայնմիկ (Ղուկ. Ա. 5—25)։

Հ. Զիա՞րդ եղև աւետումն ծննդեան Յիսուսի Քրիստոսի։

Պ. Յետ 'ի վերայ անցանելոյ ամսոց վեցից գկնոջ աւետման առ Զաքարիա՝ առաքեցաւ յԱստուծոյ 'ի Ղազարէթ անուն քաղաք Գալիլիոյ առ ամենամաքուր կոյսն Մարիամ նոցն Հրեշտակապետն, և ետ նմա աւետիս ասելով, թէ յղասցիս և ծնցիս զերրնական իմն եղանակաւ զՈրդին Աստուծոյ զՄեսիան։ Սուրբ Կոյսն հաւատացեալ այսմ, և Ճշմարիտ կոյս՝ «Յղացաւ 'ի Հոգւոյն սրբոյ» (Ղուկ. Ա. 26—38)։

Հ. Գործեցա՞ն այլ ևս գկնոջ հրաշք։

Պ. Այո՛. իբր զի 'ի տեսանելն Եղիսաբէթի զՄարիամ՝ զիւրոյ զիսաղալ մանկանն յորովայնի իւրում. և լցեալ Հոգւով սրբով՝ զաւանեաց զնա խնայր Տեառն, և երանեաց ետ նմա. և սրբոյն կոյսն Մարիամ յուեալ զբանս մարգարէութեանն՝ եհեղ գհոգի իւր առաջի Աստուծոյ հանդիսաւոր երգարանութեամբն՝ փառաւորելով զմեծամեծ բարիս նորա առ ինքն և առ Իսրայէլ։ և կանխատեսեաց մանգամայն զհանդերձեալ փառս իւր (Ղուկ. Ա. 39—56)։ Եւ յորժամ ծնաւ արդարն Եղիսաբէթի, այր նորա Զաքարիա յաւուր թլփատութեան նորածին մանկանն՝ 'ի զարմացումն ամենեցուն բժշկեցաւ 'ի համբութենէն, և լցեալ Հոգւով սրբով՝ փառաւորեաց զԱստուածն Իսրայէլի յաղագս կատարման յառաջագոյն խոստմանն զՄեսիայէ, նախատեսանելոյ զհանդերձեալ ապաստութիւնն և զարդիւնս որդւոյ իւրոյ (Ղուկ. Ա. 59—79)։

Հ. Ո՞ր և զիա՞րդ ծնաւ Քրիստոս Յիսուս։

Պ. Թէպէտ և մերձ 'ի վերայ հասեալ էր ժամանակ ծննդեան Յիսուսի Քրիստոսի՝ ըստ յառաջագոյն կանխատեսութեանն Միքիայ (Ե. 2) 'ի Բեթղեհեմ, այլ սրբոյն Կոյսն կայր տակաւին 'ի Ղազարէթ յիւրում սեպհական բնակարանի։ Զինչ ոչ գործէ Ղազարոսանութիւն. քանզի զայսու ժամանակաւ կայսրն Օգոստոս հրաման ետ տիեզերական ընդհանրութեան հպատակաց

իւրոց. և Մարիամ հանդերձ խօսնարարամբն իւրով հարկեցաւ գրնալ 'ի բնական հայրենիս իւր 'ի Բեթղեհեմ, ուր և ծնաւ զանգրանիկ իւր (Ղուկ. Բ. 1—8)։

Հ. Գործեցաւ՝ սրանչելիք 'ի ծննդեանն Յիսուսի Քրիստոսի։

Պ. Այո՛. 'ի ծնանելն Յիսուսի Քրիստոսի՝ խակրն երևեցաւ հրեշտակ Տեառն հովուացն Բեթղեհեմի՝ որք պահէին 'ի գիշերի զհօտս ոչխարացն, և ծագեցաւ առ նոսա լոյս սաստիկ։ Հրեշտակն ծանոյց նոցա զծնունդ Փրկչին 'ի քաղաքին Դաւթի, և ծանոյց գիւրդ գտանել զԱստուածամանուկն. որք և տեսին առ ժամայն զամբաւ բազմութիւն երկնային զօրաց, որք օրհնէին զԱստուած և ասէին. «Փառք 'ի բարձունս Աստուծոյ, և յերկիր խաղաղութիւն, 'ի մարդիկ հաճութիւն» (Ղուկ. Բ. 8. 14). և ահա Մոգք 'ի հեռաւոր աշխարհացն արևելից՝ առաջնորդութեամբ հրաշալի աստեղն եկին 'ի Բեթղեհեմ՝ երկիրպագանել արքային Հրէից ծնելոյ յայրին, և մատուցին նմա պատարագս՝ ոսկի, կնդրուկ և զմուռս (Մատթ. Բ. 1—12)։

Հ. Եղե՞ն սրանչելիք 'ի Տեառնընդառաջին։

Պ. Այո՛. յորժամ լցան աւուրք քաւութեան, և զԱստուծն Յիսուս ըստ օրինացն Մովսիսի առեալ ածին 'ի տաճարն՝ յանդիման առնել Տեառն, շարժեալ 'ի Հոգւոյն եկն նոյնժամայն անդ և ծերունին Սիմէօն, և ընկալեալ 'ի գիրկս իւր գխոստացեալ Փրկիչն՝ գտանելոց զնա՝ լոյս Հեթանոսաց, փառք Իսրայէլի և Փրկիչ ամենայն աշխարհի. և յաւել մարգարէանալ զնմանէ և զմօրէ նորա։ Եկն 'ի տեղին յայն և արդարն Անն՝ դուստր Փանուէլի, որ փառաւորեալ զԱստուածամանուկն Յիսուս՝ կարդաց զնա ամենեցուն յանդիման ակնկալութիւն փրկութեան Երուսաղեմի (Ղուկ. Բ. 22—38)։

Հ. Զի՞նչ և յաղագն։

Պ. Յորժամ յղացաւ Հերովդէս 'ի սրտի սպանանել զմանուկն Յիսուս՝ Հրեշտակն Աստուծոյ երևեալ Յովսէփայ՝ պատուիրեաց նմա առնուլ զմանուկն մարդն հանդերձ, և փախչիլ յԵգիպտոս. և ապա յորժամ բարձաւ մահուամբ 'ի միջոյ արիւնարուշն, և փարատեցաւ միանգամայն կասկած դաւաճանութեանն՝ երկնային պատգամաբերն ազդ արար տուր Գերդաստանին՝ դառնալ անդրէն յերկիրն հայրենի (Մատթ. Բ, 12—23)։ Ըստ այսմ 'ի սկզբան անդ երևելոյ Յիսուսի Քրիստոսի յաչխարհի՝ անոյշ ամենայն վկայէին զնմանէ իբրև դդերբնական Ա-

ուսուցչոյ Աստուծոյ և զնշխարիսն Մեսիոյն. իբրև զի յայանեցուս յաչխարհին սրանչելեաց և սուրբերամբք, յորս ունկնդրին և ոչ խոստովանիլ զնաւան Աստուածային. և յորժամ յանուն գնայցուք՝ միսն զիրեալս մորթս մի և ունայնութեանց նորա, ուստեղծս յայտնապէս զնախադրութեամբն բեռնս ամենայն կատարեալ խնդալոյ 'ի նոսա։

## ՅՕԳՈՒԱԾ ԵՐԿՐՈՐԴ.

### Յաստիսրիսն Յիսուսի Քրիստոսի.

Հ. Որպիսի՞ ինչ էր նոգաստակ գոլանան Մեսիոյն յերկիր։

Պ. Նոգաստակն՝ զորմէ բուսեալ ելեալ Տէր Յիսուս յամենայն 'ի ժամանակս կենաց իւրոց, և զոր կրչէր ինքն զորդի իւր (Յովհ. Ժէ. 4)՝ էր խորհուրդ ամենասքանչ, խորհուրդ ամենաբին ամենայն ցայն զոյր յերկիրի։ Թէ և ընդ զանազան դարս կացին օրինադիրք և իմաստունք՝ էին նոգաստակին զորմոց և մնայ անձանց ելեալ միանգամայն զայս կամ զայն մասն, կամ զնշանակ քարոզութեան ուսուցանելոյն, կամ միանգամայն և բարեձեւել զկրթանսարան մարդասիրութեանս ոչար կամ ոչինչ ազգի և աշխարհի, և կամ յառաջ մասին զայս կամ զայն զիտութիւն կամ արուեստս. . . . ապերոյն Փրկիչն Քրիստոս ելին և երևեցաւ յերկրի, զի միանգամն արարչագործեալ զանհամար ազգ մարդկան՝ զարարածեալսն մեզ զոր. զի բուսաւորեալ զամենայն մարդիկ լուսով աստուածութեամբ Աստուածութեանն (Յովհ. ԺԲ. 36։ ԺԷ. 3). զի տուսցէ և առանձնացէ ամենայն մեզ զարարչոյ զամենամարդս կանոնս բարեպաշտութեանն, և արասցէ զնոսա ուրբս յամենայն գարշութեանց (Մատթ. Ե. 9. Է.)։ զի կազմեսցէ յերկրաքնեալսն յամենայնէ զմի ժողովուրդ, զմի հօտ, զմի թագաւորութիւն Աստուծոյ (Յովհ. Ա. 16։ Մատթ. Գ. 17), և զի միանգամն զամենեսեանն զնոսա միաբանէ 'ի մեծանձնութեան օրհնեալոն Հօրն երկնաւորի (Մատթ. ԻԵ. 34)։

Հ. Ո՞ւր և զիա՞րդ կամեցաւ Մեսիայն առնել զայս։

Պ. 'Ի միջի ժողովրդեան՝ որ ոչ երբէք արանձնացաւ մեծամեծ հանձարոք, որպէս և ոչ երբեմն քաղաքականութեամբ, մանաւանդ յորժամ արդիւք Իսրայէլի խառնեալք 'ի հարազատս իմաստից Աստուածային գրոց՝ յուսային տեսանել յանձին Մեսիոյն զիմաստս որ երկրաւոր և զպարտական, և անձանց և նիմ

սեպհականեալ զարհուրելիս ամենայն զԱստուծոյ՝ առ անարդ ամենազգիս ունէին զՇնորհեալ ազգ մարդկան։ Թէպէտ զայնու ժամանակաւ 'ի վերս երևեցան արք՝ որք համբարձին զինքեանց զոչ Մեսիա, այլ ո՛չ բնաւ վարեցան ըստ օրինակի Տեառն մերոյ - որք ո՛չ միայն ո՛չ էին զերծ 'ի մարդասիրեանց համազգեաց իւրեանց, այլ բազում այն է՝ զի 'ի վար արկեալ զանհնազանդութիւն նոցա յանձանց յազգաւն՝ յայտնեցին զանձինս իբրև աշխարհակալս թագաւորս Իսրայէլի. և խառնեցուցեալ զանմիին զկնիս իւրեանց՝ խոյանակեցին անձամբ զիսարկութիւնս անձանց. այլ Գիրքս կարդա միշտ բոլորովին հակառակ բնութեանցն նոցա գրեալս. նա հակառակամարտ եկայց միշտ անապաշտութեան և մարդասիրեանց ծանանց ազգի իւրոց, և զարհանապարդ հաստատութիւն եկայց կոչման իւրում՝ մինչև ցմահանն ապշամարտելով զանձնայն գշարութիւն և գհակառակութիւն թշնամեաց իւրոց. վասն որոյ յաստուածազրութեան տարաբաղձութեամբ գրպարտութեանց, թշնամանաց, հալածանաց և մահու անդամ։ Իսկ արդ ո՞ է՝ որ վասն այսորիկ և եթէ ո՛չ խոստովանի զնա Աստուածամարդ։

Հ. Զո՞րդիսի հնարս 'ի կիր արկ առ կատարումն քարոզութեանս։

Պ։ Թերևս ասիցէ որ զնութիւն կամ զիսատումն բարեպաշտութիւն կենցաղավարութեան. սակայն ինչ ինչ ծնեալ 'ի չքաւորութեան՝ շուն էր զտեղի անդամ առ 'ի հանգուցանել զգլուխ իւր (Մատթ. Ը. 20). և Աշակերտաց իւրոց զաշակերտս կանխաւ զանարդանս, զսղիսս և զմահս անդամ (Ղուկ. Ղ. 22։ Յովհ. ԺԶ. 2)։ Թերևս զիմաստութիւն երկրաւոր և ճարտարապետութիւն, սակայն նա կացոյց 'ի տարածել զփարդապետութիւնս իւր զարս անկիրթս և թաւիշս յաշակերտութենէ գրոց (Գործ. Դ. 13). «Զյիմարս աշխարհիս ընտրեաց Աստուած, զի յամօթ արասցէ զիմաստունս. և զտկարս աշխարհիս ընտրեաց Աստուած, զի յամօթ արասցէ զհզօրս. և զանանձնս աշխարհի և զարհամարհեալս ընտրեաց Աստուած և զոչինչսն, զի զնոսա ունիցի խափանեալս» (Ա. Կորնթ. Ա. 27—28)։ Թերևս զարհամարհ ցանկութիւնս մարդկան. սակայն առաջին պատուիրն՝ զոր նա Աշակերտաց իւրոց, էր անձնուրացութիւն, աստուածութիւն ցանկութեանց մարմնոյ, և խստակրօն կենցաղ բարեպաշտութեան. զորս զնոսա 'ի վերոյ զոլով մարդկեղէն հաստատ-

թեանց՝ Աստուածամարդոյն և նոր վարդապետ է և հնարաւոր սահմանել և կատարել։ Խմաստութիւնն՝ որով վարեցաւ Յիսուս յերկրաւոր տնտեսութեան իւրում, զերծարդկային և անհուն էր զերծարդկային, զի առ 'ի գիւտ այնորիկ ոչ զերծեցաւ առ վարժապետս (Յովհ. Է. 15)։ Ծնեալ զոլով յանապատին ապրաստութեան (Ղուկ. Բ. 7), և հոլովեալ զերեսնամեայ հասակ կենաց իւրոց 'ի հիւսնութեան 'ի քաղաքին՝ ոչ ոչ զոյր ամենեին վարժոյ (Յովհ. Ա. 46)։ «Սմա ասաց՝ իսկ այս խմաստութիւն» (Մատթ. ԺԳ. 54), ապշութեամբ հարցանէին զնմանէ քաղաքակիցք իւր, որ քաջիկ գիտէին զազգ նորա և զնեռնոց։ «Զիա՞րդ զգիրս գիտէ սա, զի ուսեալ բնաւ չիք» (Յովհ. Է. 15), քրքմնջելով ասէին՝ ուսեալ, զի երկուց և տասանց զամսոյ զեռ ամաց՝ վաղաժամեան հնութեամբք իւրովք և սրատարանեալ ասի 'ի բերան պատանեկացոյց զ Քրիստոսանս Հրէից (Ղուկ. Բ. 46—49)։ Խմաստութիւն նորա էր միանգամայն և անհուն, զի հասանէր մինչև 'ի գիտութիւն զազգանեաց պատից և մատաց և խորհրդոց մարդկան (Յովհ. Ա. 47. Բ. 25։ Մատթ. ԺԲ. 25։ Մարկ. ԺԲ. 8։ Ղուկ. 2. 8), ևս և 'ի կանխագիտութիւն իրաց ապագայից (Ղուկ. ԺԹ. 43. ԻԲ. 34։ Մարկ. ԺԴ. 9) և այլն։ Եղկոտին այսորիկ զկոյր խմացականութեան զազգանեաց մարդկան և ժամանակաց բուռ յաւուրս բանիցն Աստուծոյ՝ Աստուծոյ միայնում սեպհական են (Երեմ. ԺԷ. 9։ Էսայի. ԽԴ. 7)։

Յիսուս Քրիստոս որչափ ժամանակս և եկաց յաշխարհի՝ ընդարձակաց զանձն իւր միշտ իբր յաւէտ կատարեալ սկզբնատիպ ամենայն առաքինութեանց։ Նա առաջին եղեւ, որ եկայց որդեամբ 'ի կեանս իւր՝ զոր ինչ ուսոյցն այլոց, և վանեմ բարոյականն Աւետարանին վանեմագոյն ևս փայլի 'ի գնացս նորա։ Նա յաճենայն ժամանակս ապատարութեան իւրոյ երեւեցաւ բնչատեաց միջև շունչ գաղջի առ 'ի դնել զգլուխ իւր (Մատթ. Բ. 20)։ և առ 'ի հոգալ զպէտս իւր զմարմնաւորս՝ կարաւորացաւ ձեռնատութեան այլոց (Ղուկ. Բ. 1—3)։ Երեւեցաւ միշտ խոնարհ, միջև յանձն էառ լուանալ զոտս Աշակերտաց իւրոց։ (Յովհ. ԺԳ. 4—15), և հրամայեցաւ 'ի թագաւորական արքունիսն, որով պատկել կամէին զնա երկրային Հրէայք (Յովհ. Զ. 15)։ Գերբրնական հեզութեամբ, երկայնամտութեամբ և վեհանձնութեամբ տարաւ բամբասանաց և հայհոյանաց թշնամեաց իւրոց,

եւ և թշնամոյ և ծաղռ, ցիրանոյ և հարուածոյ, և տակաւին և անազատոյն մահու անգամ, զոր յանձն էառ սրտի մտաւ և կամաւորեալ անդադրութեամբ յաղագս պարտականոյ այլոց, փայլեցաւ հանապազ բորբոքեալ սիրով առ Հայր. «Ինքն ես յերկնից՝ ասէր զանձնէ, ոչ զի զկամս իմ արարից, այլ զկամս այնորիկ՝ որ առաքեաց զիս» (Յովհ. Զ. 38)։ «Զի ծանիցէ աշխարհ, եթէ սիրեմ զՀայր. և որպէս պատուիրեաց ինձ Հայրն՝ այնպէս առնեմ» (Յովհ. ԺԴ. 31)։ Զամենայն աւուրս իւր նշխարեալ 'ի կատարել զարդարան կամս Հօր իւրոյ. և կարեկցաւոյ վասն ակեցաւ, զի ուսուցեալ մարդկան զլին միայն զՁշմարիտն Աստուած, զի ուսուցեալ նոցա փառաւորել զՀայրն երկնաւոր գործովք բարեաւք, և զի հաստատեալք յերկրի վերայ զարքայութիւնն Աստուծոյ (Մատթ. Ե. 16)։

Եղոյց Տէր Յիսուս և զսէր անհուն առ մարդիկ՝ յանձին կալեալ զանպայման ճգնութս առ 'ի լուսաւորել զնոսա լուսով Աստուածային. և ընթացեալ հետեւոս բազում 'ի բազաւ և զաւառս 'ի զաւառ բարոզէր, հոմանգէր և յանդիմանէր զիբարանչիւր որ և զամենեսին բոլոր պատուիրանս՝ առանելով յոժարութեամբ այսրիկ ապաւաս ազգի ազգի մշոյց և շարանց։ Զոր 'ի ցուցանել զ'ի յԱստուծոյ առաքելութիւն իւր և յոգն հաստատել քարոզելոյն 'ի սէս սէս անուս՝ գործէր բոլոր պիտոյից և հրաշս, բժշկէր ցցուրս, լուսաւոր լինէր կուրաց, ունկն տայր խլոյ և զնայս անդամալուծիս՝ բարիս առնելով ամենեցուն (Գործ. Ժ. 38)։ Եղոյց յատկապէս և զսէր որդիական հնազանդութեամբ ամենասուրբ Մօր իւրում և հոյլաբերին Յովսեփայ (Ղուկ. Բ. 5։ Յովհ. ԺԹ. 27), զսէր առ ազգակիցս բոլոր մարմնոյ և առ ծանօթս (Յովհ. ԺԱ. 5. 11. 36. ԺԴ. 23), զսէր առ հոյրենեաս (Մատթ. ԺԵ. 24. ԻԴ. 37։ Ղուկ. ԺԹ. 41), զսէր առ մանկունս (Մատթ. ԺԹ. 13—15), զսէր առ Աշակերտս իւր (Մատթ. ԺԷ. 1—5 եւ այլն), գթութիւն և զանազանեան կարեկցութիւն առ մեղաւորս (Մատթ. Թ. 10—13։ Ղուկ. ԺԹ. 10)։ Եղոյց վերջապէս զանազանեան մարդասիրութիւն իւր 'ի խաչին, յորում բնաւեցաւ մինչեւ յաղագս փրկութեան նոցա, որ և 'ի սակաւի առանձնանն անգամ աղօթէր առ Հայր 'ի վերայ խաչահանուելոյն և թշնամեաց (Յովհ. Գ. 16։ Ղուկ. ԻԳ. 34)։

'Ի կեանս Յիսուսի՝ յորժամ շրջէր յերկրի, ոչ երեւեցաւ ա-

մեծեալն արտաքին. իբր զի ոչ միայն ըստ վկայելոյ Աշակերտաց իւրոց՝ նա «Ոչ արար մեղս, և ոչ գտաւ նենգութիւն 'ի բերանն նորա» (զԱ. Պետր. Բ. 23՝ համեմատեա՛ ընդ Ա. Յովհ. Գ. 5), այլ որքերիմ թէ՝ նոցա անդամ կարացին ոչ յանդիմանել երբէք զնա յիմիք։ Քահանայապետք, ծերք և բազմագլուխ խուռնքն Հրէական խնդրէին սուտ վկայութիւն փոխն Յիսուսի՝ «Զի սպանանիցեն զնա, և ոչ կարէին գտանել» (Մատթ. ԻԶ. 59)։ Յուդա՝ որ քաջ ճանաչէր զԱրդարեալն իւր, յետ մատնութեանն ելն 'ի զիղջ. վասն զի մատնեաց զարիւն անպարտ (Մատթ. ԻԷ. 4)։ Պիղատոս՝ որ ուշադրութեամբ 'ի քննին եմուտ ամենայն ամբաստանութեանց և զրպարտութեանց Հրէից զՅիսուսէ, խաստովան եղեւ 'ի լուր շարախօսացն. «Ոչինչ գտանեմ զնոսա յանցանիկ» (Ղուկ. ԻՂ. 4). «Անպարտ եմ ես յարենէ արդարոյդ այդորիկ, զոր գիտաջիք» (Մատթ. ԻԷ. 24)։ Այսպիսի ամենակատարեալ արդութիւն և անմեղութիւն Յիսուսի Քրիստոսի՝ որ անբնական է այլ մարդոյ յարդեան անկեալ վիճակի իւրեանց (Հռոմ. Ե. 12), երեւեցուցանէ յանձին Փրկչի մերում զաւաւել որ բան զառակ մարդ, ճշմարտապէս խօսելով՝ զԱստուծոյ մարդացեալ, որպէս և ինքն հաճեցաւ կոչել զինքն։

## ՅՕԳՈՒՍԾ ԵՐԲՈՐԴ.

### Խրանչելիք Յիսուսի Քրիստոսի.

Այսր Յիսուս նոսա սրանչելիս բազում անդամ և բազում ուրեք, և այնպէս մեծամեծս՝ զորս ոչ որ 'ի (բազում անդամ) մարդկանէ կարող եղև երբէք գործել (Յովհ. ԺԵ. 24)։ Յիսուս Քրիստոս սա 'ի յայտ առնել զինքն Տէր ապաքաւոյ երկնից՝ փոխեաց զՋուրն 'ի գինի (Յովհ. Բ. 1—11). հրամայեաց հողմոց և ծովու, և հնազանդեցան (Ղուկ. Ը. 24։ Մատթ. Ը. 23—27). գնաց 'ի վերայ ջուրց (Մատթ. ԺԴ. 26). զոյգն հացիւ և զոյգն ձկամբք յագեցոյց անդամ մի զհինգ հազարս, և այլ անդամ մի զչորս հազարս 'ի մարդկանէ՝ բաց 'ի մանկանց և 'ի կանանց (Մատթ. ԺԴ. ԺԵ)։ Ա՛ռ 'ի ծանուցանել զինքն իշխան մարդկեղէն բնութեան՝ բանիւ և եթ և լոկ հրամայութեամբ ձեռաք և հանդերձիւ երարձ զբազում սխալս (Մատթ. Թ.

20—23 ։ Ղուկ. Դ. 20)՝ շնորհելով զլոյս կուրաց (Մատթ. Ի. 29—34 ։ Մարկ. Ժ. 46—52), զլեզու համրաց, զլսել խըլ-ից (Մատթ. Թ. 32—35 ։ Ղուկ. ԺԱ. 15), և զբժշկութիւն բոլորաց (Մատթ. Ը. 1—5)։ Յայտնեաց զինքն՝ ինքնիշխան Տէր ամենազաւրութեաց, յորժամ անդամ մի մերձենալով՝ առ որս 'ի մարդկանէ ըմբռնեալ էին յայսոց պղծոց, սաստիկ տագնապս հալածէր զնոսա 'ի բաց (Մատթ. Ը. 28—34 ։ Ղուկ. Ը. 26—40)։ Երևեցաւ միանգամայն և Տէր մահու և կենաց, յորժամ յարոյց 'ի մեռելոց զորդի այրի ոյն Նայինայ (Ղուկ. Է. 11), զդուստր Յայերոսի ժողովրդապետին Հրէից (Ղուկ. Ը. 49), և զՂազարոս 'ի չորեքօրեայ գերեզմանէն (Յովհ. ԺԱ.)։

'Ի վերայ անձին Յիսուսի գործեցան յերկնից հրաշք։ Յորժամ յետ մկրտութեան նորա 'ի Յորդանան եբնէր 'ի Ջրոյ' բացան ահա երկինք, և Հոգին սուրբ 'ի նմանութիւն աղաւնւոյ էջ 'ի վերայ նորա, և լսելի եղև ձայն 'ի վերուստ. «Դա է որդի իմ սիրելի, ընդ որ հաճեցայ» (Մատթ. Գ. 16 և 17 ։ Մարկ. Ա. 10 և 11 ։ Ղուկ. Գ. 21—22)։ Յորժամ ապրակերպեցաւն 'ի Թաբոր 'ի տես երից Աշակերտաց իւրոց՝ «Լուսաւորեցաւ երեսք նորա իբրև զարեգակն, և հանդերձք նորա եղեն ապիտակ իբրև զլոյս»։ Երևեցան Մովսէս և Եղիա՝ խօսելով զելիցն, որ կատարելոցն էր Յերուսաղէմ. ուր միաւանգամ եկն ձայն յամպոյ. «Դա է որդի իմ սիրելի՝ ընդ որ հաճեցայ. զնա լուարուք» (Մատթ. ԺԷ. 5)։ Եւ զարձեալ յորժամ առաջի բազմութեան ժողովրդեան Երուսաղէմայ աղաղակեաց խնդրեալ յերկնաւոր Հօրէ՝ զի փառաւորեսցէ զանուն իւր. «Եկն բարբառ յերկնից. և փառաւոր արարի, և զարձեալ փառաւոր արարիցս» (Յովհ. ԺԲ. 28)։ Եւ վերջապէս 'ի ժամու խաչելութեան «'Ի վեց ժամէ աւուրն խաւար եղև 'ի վերայ ամենայն երկրի մինչև ցինն ժամ». և իբրև աւանդեաց զհոգի իւր 'ի ձեռս երկնաւոր Հօրն՝ «Ահա բացարարեցան տաճարին ցերեք յերկուս 'ի վերուստ մինչև 'ի վայր. երկիր շարժեցաւ, և վէմք պատռեցան, և գերեզմանք բացան, և բազում մարմինք ննջեցելոց արդար յարեան» (Մատթ. ԻԵ. 45—52)։

Տէր Յիսուս այնպիսի եղանակաւ գործէր զհրաշս, մինչ զի անհնարին է յերկրայս լինել ընդ այնս, կամ կարծել 'ի նոսա ըստ նմանի կամ զարուեստս. վասն զի գործէր յանպատրաստից և անակնկալ՝ յորժամ հարկն պահանջէր, է որ լոկ բանիւ բերանոյ,

է որ լոկ մերձեցմամբ, և է որ մինչև լոկ խորհրդով կամ փա-
փաքելով 'ի մտի (Ղուկ. 6. 19; Յովհ. Դ. 50—54; Մատթ.
Ը. 8 և 13)։ Զորօրինակ ասէր ցանգամուլոցն. «Արի ա՛ռ
զմահիճս քո, և գնա՛ 'ի տուն քո»։ և ախտակիրն բժշկէր
(Մատթ. Թ. 6)։ Ասէր ցբորոտն. «Կամիմ՝ սրբեա՛ց»։ և յանկուն
թօթափել փարատէր 'ի նմանէ բորոտութիւնն (Մատթ. Ը. 3)։
Զայնէր առ մեռեալն. «Ղազարէ՛ և կ արուսթս», և չօրեքօրեայ
մեռեալն՝ որ արդ հոտիլ սկսեալ էր, յառնէր 'ի գերեզմանէ
(Յովհ. ԺԱ. 13)։ Գործէր հրաշս ո՛չ յորոշեալ տեղւոջ ուրեք
և 'ի սահմանեալ ժամանակի, կամ զկիր առաջի ասկաւատոր վրկայից,
այլ ամենայն ուրեք յամենայն ժամ յայտնապէս և հրապարակաւ։
Երթէր նա 'ի քաղաքս և 'ի գիւղս Հրէաստանի՝ ուղեկից ունելով բազում անգամ
զշաբաթաւոր անձինս. զնայր յԱշրուսաղէմ 'ի հաստատակաց ժողովարանս և 'ի տաճարն՝ յորժամ
'ի սպառնաս մեծամեծ ոտնից յամենայն զաւառացն Պաղեստինոյ
գիրկէր անդ անհամար ժողովուրդ, և ամենայն ուրեք ցուցանէր
զամենակարողութիւն իւր և զբժշկարար սքանչելագործութիւնս։ Բժշկեալքն 'ի նմանէ կէին յետ այնորիկ 'ի քաղաքս և 'ի
գիւղս իւրեանց. որոց որպէս ցաւագարութիւն, նոյնպէս և ցաքանչելեաց առողջութիւն յայտնի էին ամենայն ազգականաց նոցա,
դրացեաց և բազաբացոց. և ժողովուրդն խմբովին գնին երթայր առ 'ի տեսանել զյարուցեալն Ղազարոս. յայս տակս էր։
զի իշխանք Սինագոգային խնդրէին կորուսանել զնա. «Քանզի
բազումք 'ի Հրէից երթային և հաւատային 'ի Յիսուս» (Յովհ.
ԺԲ. 11)։

Փարիսեցիք, Սադուկեցիք, Դպիրք և Քահանայք բորբոքեալ
ատելութեամբ հակառակ Յիսուսի՝ բազում անգամ ակամաստես
եղեն հրաշագործութեանց նորա և զարմանալի ազդեցութեան
այնորիկ 'ի ժողովուրդն (Յովհ. ԺԲ. 19). ամենի իրի անհնարին
է գմտաւ ածել, թէ նորա ամենայն զօրութեամբ և ճգամբ ո՛չ
զուն գործեցին առ 'ի յայտ առնել և 'ի յանդիմանել զիւրաքանչիւրն, եթէ գոյր 'ի նոսա։ Ապան զի 'ի ձեռս նոցա էր սանձ
պետութեան աշխարհին. և յայս տակս զիւրին՝ զատոզական
քննութեամբ ապացուցանել զիրաւղախտութիւն (եթէ գոյր)։ Բաւական էր յերևան հանել զկնգեղծիս միոյ և եթէ 'ի հրաշիցն, զի
այնուհետև համարձակ կարող լինիցին ցրել զատուգութիւն այլոցն ամենից։ Եւ զի՞նչ. թէպետեմիր Յիսուսի ինքնին խոստովան

յինին զատուգութիւն պրանչելեաց նորա. «Զի՞նչ արասցուք, զի սպրն այն բազում նշանս առնէ. եթէ թողուցուք զնա այնպէս, ամենեքին հաւատան 'ի նա» (Յովհ. ԺԱ. 47—48). և զատաբերանելոյ զՓրկիչն 'ի մահ խաչի՝ ո՛չ բնաւ հանդարտակեցան յանդիմանել զնա առաջի ժողովրդեան, որպէս թէ զործեալ էր կիզծ հրաշս. այլ հարկեցան ապաստան լինել 'ի սուտ վկայս։ Տէր Յիսուս զհրաշագործութեանց իւրոց խօսէր միշտ, և խօսէր յայտնապէս և աներկիւղ ամենայն ժամանակակից մարդկան՝ իրս զվեր ասպարեցէ Աստուածութեան իւրոյ. «Եթէ ո՛չ գործեմ զգործս Հօր իմոյ՝ ասէր սա ամենեսեան, մի հաւատայք ինձ, սակայն թէ գործեմ, թէև ինձ ո՛չ հաւատայք, սակայն գործոցն հաւատայջէք» (Յովհ. Ժ. 37—28)։ «Զգործսն՝ զոր ետ ցիս Հայր, զի կատարեցից զնոսա, նոքին իսկ գործքն՝ զոր գործեմ, վկայեն վասն իմ՝ եթէ Հայր առաքեաց զիս» (զՅովհ. Ե։ 36. համեմատեա ընդ ԺԴ. 11. և ԺԵ. 24)։ Իսկ արդ՝ կարո՞ղ էր Յիսուս Քրիստոս ոչպէս արուեստի աստուծի ոչնորան իսուն բազմութեան խօսիլ զհրաշից իւրոց իրրև զան 'ի Յաստուծոյ զորձելոց. եթէ էր յայտնապէս կեղծիր ինչ կամ արուեստ մարդկեղէն։

Հարցք Յիսուսի Քրիստոսի ո՛չ եղեն ապարդիւն յանկանաւեան. իրր զի յետ գործելոյ Փրկչին զառաջին հրաշս 'ի Կանա Գալիլեայ՝ «Հաւատացին 'ի նա Աշակերտք իւր» (Յովհ. Բ. 11)։ Յետ յարուցանելոյ 'ի մեռելոց զորդի պարտականի ուրումն 'ի Կապառնաում՝ «Հաւատաց 'ի նա ինքն և ամենայն տունն իւր» (Յովհ. Դ. 53)։ Յետ տասնից Փրկչին հոգոյ ծովուն՝ ամենեքին «Որ 'ի նաւին էին, մատուցին երկրպագին նմա, և ասէին. ոչ արդարև Որդի Աստուծոյ ես դու» (Յովհ. ԺԴ. 33)։ Յետ յարուցանելոյ հինգ հազար և երիս ծկամբք գրանի մի հաղարաւ 'ի ժողովրդենէն՝ «Իրրև տեսին զարանչելիսն՝ զոր արար (Յիսուս), ասէին. թէ սա է ճշմարիտ մարգարէն՝ որ գալոց է յաշխարհս» (Յովհ. Զ. 14)։ Եւ վերջապէս չարժեալ 'ի արանչելեաց Տեառնէն՝ «Խոստովան 'ի ժողովրդենէն հաւատացին 'ի նա, և ասէին. Քրիստոսն յորժամ գայցէ՝ միթէ առնէ՞ ինչ նշանս առաւել, քան զոր սոյս առնէ» (Յովհ. Լ. 31)։ Եւ այնպէս սատանիկ էր թէ հաւատուցեալն 'ի նա հրաշիցն ապատա՝ մինչև Փարիսեցւոյ ասելոյ ապաշնարհ խոստովանիլ. թէ «Աշխարհն ամենայն զկնի նորա գնաց» (Յովհ. ԺԲ. 19)։

Այսոյիկ ամենայնի հարազատս թեան Աբեսարանապա-

ասում՝ Հրաշքն է յարութեան անուն անուանակոչս, ոչ զգին քաղաքաբնակքն այն Հրէից և Հեթանոսաց, որք ընդդիմակացին զԲրիստոսանվեր հաւատն առ ժամանակս Յիսուսի Քրիստոսի և Աւետարանաց նորա։ Յոյսն է, զի քարոզութիւն Աւետարանին անհրաժեշտութեամբ տարածեցաւ յամենայն մասունս աշխարհի. և ոչ միայն հաղորդք հաւատոյ 'ի Հեթանոսաց, այլ նաև 'ի Հրէից՝ որք յաստուածոգոյն աշակերտութեան այնմիկ. խնդրութեամբ դիմեցարուս լինելով այնոր ազատաւ ստերութեան և տարապարութեան սիրելոյ հարստահարութեանց և մահուս անցեալ 'ի մերձաւորաց և 'ի հեռաւորաց։ Եւ որք ընկալան զԱւետարանն՝ գրեթէ կեցին առ Աւետարանաւն, և բազմացան 'ի հոգւոյն առ Յիսուսի Քրիստոսի։ Այլոյ ամենեցուն ասելն, մանաւանդ Հրէից հնար էր հաւատալ զբանս Աւետարանին՝ որ միոյն արարչագործին Քրիստոսի. հնար էր քանել և հանապազաւոր ճշդիւ զոյնս՝ և զգուանել զանձրկեալսն ճշմարտութիւնն։ Թիւրութիւն՝ զորոյ պատուէր Աւետարանն, չեղեն երբէք։ կամ թէ կեղծիք էին մատուցանիս. ոչ զի ազատաւ ասելն հաւատարիս ժամանակակիցքն այնորիկ համոզեցան ընդունել զքարոզութիւնն աստուածայնոյ. կամ զիա՞ զի յանձն առին նոքա հաւատալ առաքելական ուսանոց՝ կարծելիս հրամարելոք 'ի հաւատոյ նոցանէ նոց իւրեանց, և եկին 'ի մտիս առ 'ի պարտականութիւն ազատութեանց 'ի զոհ մատուցանել զկեանս անգամ իւրեանց. եթէ հայեցիր ստուգեալ։

'Ի Հրէից թէև բազմաքիս ոչ հաւատացեալ՝ 'ի Քրիստոս՝ թէ չնաւոք հանդիսացան նոքին, այլ ոչ երբէք ժխտեցին զաստուածութիւն հրաշից նորա. և հանապազաւոր թէ և բորբոքեալ էին նոքա ընդդէմ Յիսուսի Քրիստոսի, այսու ամենայնիւ իրաւամբն ասեն՝ զի զարշարոյ ամենայն զկնի իւր ձգէ» (Յովհ. ԺԱ. 47—48. ԺԲ. 19). ասեալն առ 'ի արդարացուցանել զանհաւատութիւն իւրեանց՝ միոյթ կարան այնոքիս, որպէս թէ ասէր զիր՝ զանհաւատութիւն Քրիստոս զորութեամբն Բանիգրեալ բուսոյ (Մատթ. ԺԲ. 24)։

Թաղմուան Հրէից (1) զկոյլ նոցանէս, թէ Քրիստոս առա-

---

(1) Տեսութիւն վիպասութեանց Ասորեաց՝ յաղագս Յիսուսի Քրիստոսի. Քրիստոս Ակսան ընթերցուածք. 1834 տարի. Գիրք Ա. Երես. 387—299։

գիւ գործէր զգալմանայի գործս, և թէ լոկ կոչումն անուան նորա բժշկէր զախտս ամենայն, յորում առաջի դնին փորձք ինչ սքանչելագործ կարողութեանց նորա՝ թէ և աղաւաղութեամբ, բայց սակայն յաւելու, թէ զայս ամենայն գործէր նա ոչ իւրով ինչ զօրութեամբ, այլ ամրաձաձուկ և անպատում անուամբ Եհովային փորագրեալ 'ի քարի՝ զոր գաղտ յափշտակեաց 'ի Արբրոց Արբոյն։ Չշաղակրատանս զայս 'ի հաւուց անտի իւրեանց մինչև ցայսօր ոչ զադարեցին Հրէայք կրկնել առ 'ի բացատրութիւն սքանչելեաց Քրիստոսի, ոչ բնաւ յանդգնելով՝ որպէս և հարք իւրեանց, ժխտել, թէ իրօք ոչ գործեցան հրաշք 'ի ձեռն նորա։

Պատմիչն Հրէից Փլաւիոս 'ի գիրսն՝ (Յաղագս Հնութեանց Հրէից) յետ ըստ կարգի պատմելոց զգաստաւորութենէ Պիղատոսի և զապստամբութենէ Հրէից՝ այսպէս խօսի զհրաշից Քրիստոսի. «Զայսու ժամանակաւ եկաց Յիսուս այր իմաստուն, եթէ միայն արժան իցէ կոչել զնա այր. քանզի գործէր նա հրաշս. ուստից զայնոսիկ՝ որ կամակար ընկալան զճշմարտութիւնս, և առաջնորդեաց զբազում Աշակերտս 'ի Հրէից և 'ի Հեթանոսաց. նա ինքեան զրաւում Աշակերտս 'ի Հրէից և 'ի Հեթանոսաց. նա ինքն էր Քրիստոս։ Եւ թէև ըստ ամբաստանութեան ծերոց (իշխանաց) մերոց՝ Պիղատոս դատապարտեաց զնա 'ի խաչ, սակայն Աշակերտք նորա ոչ ուծացան զառաջինն առ նա սիրոյ։ Յաւուրն երրորդի վերստին երևեցաւ նա իւրոցն կենդանի ըստ կանխասացութեան Աստուածապղեցիկ Մարգարէից, որք խօսեցան յառաջագոյն զնմանէ և զբազմայեղանակ այլոց հրաշից նորա։ Կոչեցեալն յանուն նորա միաբանութիւն Քրիստոնէից՝ առէք տակաւին (1)։

Ակայութիւն Փլաւիոսի անտարակուսելի է մինչ 'ի սպառ, թէպէտ զի նախ՝ այս գլուխ բանից գտանի ըստ ամենայնի անոխմոխ յամենայն 'ի վաղնջական ձեռագիր և յամենայն 'ի տպագիր օրինակս մատեանին «Հնութեանց Հրէից». երկրորդ՝ զի յառաջ քան զայն Եւսեբիոս՝ ոչ միայն յեկեղեցական պատմութեան իւրում (2), այլ և 'ի հակաճառութեանն (3)՝ զոր գրեաց ուղղակի ընդ դէմ Հրէից 'ի ժամանակին, յորում ըստ Եւսեբիոսի՝ 'ի մեծի

---

(1) Գիրք ԺԸ. գլուխ. Գ։
(2) Գիրք Ա. գլուխ. Ժ։
(3) Ապա՝ գիրք Ա. Եւսեբիոսի. Գիրք Գ. գլուխ. Ե.

պատուի և 'ի կիրառութեան էին յիշատակեալ գրութիւնք Գրիգորի առ Հրէայս և առ Հեթանոս (1)։ Երրորդ՝ զի յիշատակեն զոյնմանեալ Հերոնիմոս (2) և Խոսրով Պերուսիոս 'ի փոխման չորրորդ դարուն (3), Եղիշէ և Սոզոմենոս 'ի սկզբան հինգերորդին (4), և բազումք այլք զկնին։

'Ի ժամանակակից Հեթանոսաց ևս եղեն բազումք, որ վկայեցին առաջութեան հրաշից Քրիստոսի։ Յորս առաւել հրաշակերտ է արձանագրութիւն կամ յայտարարական թուղթն Զիզատոսի Պոնտացւոյ գրեալ առ կայսրն Տիբերիոս, յորում պատմի կարգաւ կենդանաքարոյութիւն Յիսուսի Քրիստոսի, դատապարտիլն նորա 'ի մահ, յարութիւնն, և զանազան հրաշագործութիւնք։ Իսկ, թէ նա բժշկեաց զցաւագարս, յորոյ ըստ մեռեալս, և 'ի մահու նորա խաւարեցաւ արեգակն։ Հարազատութեան արձանագրութեանս վկայէ նախ Յուստինոս վկայ ('ի սկզբան երկրորդ դարուն)՝ որ 'ի կրկին Ջատագովութիւնս իւր, զորս գրեաց 'ի Հռոմ առ Կայսրն, առ Թերակոյսն և առ բազմանդակ ժողովուրդն Հռոմայ 'ի պաշտպանութիւն Քրիստոնէից ընդդէմ անիրաւութեանց Հեթանոսաց։ Յառաջնումն 'ի սոյնէ յոգեամ խօսի զիրաշիրութենէ Փրկչին՝ յաւելու. «Զոր ինքնին (Հեթանոսք) կարէք առաջել զոյս ամենայն յարձանագրութենէ Պիղատոսի Պոնտացւոյ»։ և յերկրորդումն յոգեամ բան լինի զհրաշիւք բժշկելոյ Փրկչին զսխտամէտս, և զյարուցանելոյ նորա զմեռեալս՝ շարադասէ. «Զայս ամենայն՝ զորս արար նա (Յիսուս), կարէք հաստատել յարձանագրութենէն՝ որ եղեւ առ Պիղատոսէ Պոնտացւոյ» (5)։ Զամենայն յիշատակեն զկնին Յուստինոսի նաև Տերտուղիանոս ('ի վերջն երկրորդ դարուն) 'ի Ջատագովութեան իւրում, զոր գրեաց 'ի պաշտպանութիւն Քրիստոնէից յերեսաց Հեթանոսաց (6)։ Եւսեբիոս 'ի սկզբան չորրորդ դարուն (7), աստրն Ռուֆերիանոս 'ի նմին դարու (8), և բազումք այլք։

---

(1) Պատմութիւն եկեղեց. Գիրք. Գ. Գլուխ. Թ։
(2) Յանի գրոց. եկեղ. — Յովսեպոս։
(3) Խոս. Պերս. Գիրք. Դ. Դպրութիւն. 125։
(4) Սոզոմեն. Պատմութիւն եկեղ. Գիրք. Ա. Գլուխ. Ա.
(5) Ջատագովութիւն. Ա. Գլուխ. 35 և 48։
(6) Ջատագովութիւն քրիստոնէից Հեթանոսաց. Գլուխ. 21։
(7) Պատմութիւն եկեղ. Գիրք. Բ. Գլուխ. Բ։
(8) Ճառ ԻԶ. ՅԲ. թուղթն առ Կորնթացիս։

Տարդաս՝ Յոյն մատենագիր Հեթանոս առաջին դարու Քրիստոնէութեան պատմէ, թէ յութերորդում և 'ի տասներորդում ամի թագաւորութեան Տիբերիոսի՝ խաւար յեղափոխեալ կալաւ զաշխարհս 'ի միջօրէին, և այս էր ամ և ժամ մահուան Քրիստոսի (1)։

Փլեգոնաս՝ Հեթանոս ազգատոհմիր կայսեր Տրայիանոսի (յերկրորդում դարու) յիշատակէ զսոսկալի երկրաշարժութիւնն, յորմէ կործան անկան բազում շինուածք 'ի Բիթանիա, եւ և զանազիր խաւարմանէ արեգական 'ի վերերրորդում ժամու տուեալն (անտարակոյս ասեմ, որ եղեւ յետ լրման լուսնի), զոր վերածէ առ Դ. ամ 202 Ողիմպիասին. այն է յութեւտասներորդ ամ կայսերութեան Տիբերիոսի, որով և առ ժամն մահուան Քրիստոսի (2)։

Կեղսոս՝ Եպիկուրեան փիլիսոփոս (յերկրորդ դարուն)՝ հրաշակաւոր գիտնական իբրոյ դարուն, և մոլեռանդն հակառակորդ Քրիստոնէական կրօնի՝ խոստովանի ընդհանրապէս զաստուածութիւն յոյսանդակ Աւետարանագրաց հրաշիցն. յայտմ և եթէ խոկալ, որ ընծայէ զայնս մոգութեան, և ոչ հաւանիս կրշել զՅիսուս Քրիստոս Աստուած՝ այնր և եթէ ազգաւ, վասն զի լուսաւորեալ նա զկրօնս, և զնայոյզ զկաղս (3)։

Պորփիրոս՝ Պղատոնական փիլիսոփոս երրորդ դարուն, և բազում այլք (4)՝ որք առ նոսա կեցին Իմաստասէրք, ըստ յաւաղ բերելոյ Արնորիոսի՝ նոյնպէս ծանեան և խոստովան եղեն զգրաշարժութիւնս Քրիստոսի, այլ միայն մոգութեան ընծայելով (5)։

Յամենայնի՝ որ 'ի բնութեան ածան 'ի մեր անդր, երեւի անպատրուակ, թէ 'ի նախնի դարս Քրիստոնէութեան ոչ որ ուրացաւ 'ի Հեթանոսաց անուն զգրաշարժութիւն աւետարանական սրանշելեացն, որպէս և ճշմարտոյնս ճանեցին Քրիստոնեայ ջատագովք ժամանակին զնոյանէ. ասասցեանք հաւատոյ 'ի գրուածս իւրեանց վասն հաստատելոյ խօսին զրրիստոնէական հրաշիցն իրրու զապացուցեալ և զանսխնձելի զարծոյ, զուն զարծելով միայն

---

(1) Պատմութիւն Սեբէոս. Գիրք. Գ.
(2) (875)։
(3) (276)։
(4) Աւ Եւսեբիոսի. Պատրաստութիւն Աւետարանական. Գիրք. Ե. Գլուխ. Ա։
(5) Աստուրիս. ընդդէմ Հեթանոսաց. Գիրք. Ա. Երես. 25։

հերքել զայն հեթանոսական ցնորսն. որպէս թէ մոգական արուեստս գործեալ իցեն այնորիկ, և որպէս թէ զնոյնպիսիսն և նա զառաջելագոյնս 'ի սրանչելեաց ունէր ոչ առ անդամ մի կատարելին ստուգագոյն և այլք ոմանք 'ի հակայիցն կուսակցութեանց (1)։

## ՑՈԴՈՒԱԾ ՁՈՐՐՈՐԴ.

### Մարգարէութիւնք Յիսուսի Քրիստոսի.

Յիսուս Քրիստոս մարգարէացաւ նախ զանձնէ իւրմէ. երկրորդ՝ զԱշակերտաց իւրոց. երրորդ՝ զբարոզութիւնն Աւետարանին և զեկեղեցւոյ իւրմէ. չորրորդ՝ զխանգարեալ անցիցն Երուսաղէմի և զամենայն Հրէից. և հինգերորդ՝ զխաչելութիւն՝ այլովքն հանդերձ։

Մարգարէացաւ Յիսուս Քրիստոս զանձնէ իւրմէ, յորժամ ասացն.

«Ահաւասիկ ելանեմք Երուսաղէմ, և որդի մարդոյ մատնեսցի Քահանայապետացն և Դպրաց, և զատապարտեսցեն զնա 'ի մահ, և մատնեսցեն զնա Հեթանոսաց՝ այպանել և հարկանել և 'ի խաչ հանել, և յերիր աւուր յարիցէ» (Մատթ. Ի. 18—19. համեմատեա ընդ Ղուկ. ԺԸ. 31—32)։

Փրկիչն խօսէ ոչ միայն զմահուանէ իւրմէ, այլ և զառեղծն՝ այսինքն է զԵրուսաղեմի, ուր գործելոյ է սատանութիւնն. և նախասասէ, թէ ոչ միայն մատնեսցի Քահանայապետացն և Դպրաց, այլ նաև Հեթանոսաց. և եթէ այսոքն ապատանեցեն զնա, թքանիցեն և հարկանիցեն և սպանանիցեն յատկապէս խաչաձեւաբար մահու։ 'Ի մարգարէութիւնս յայսմիկ են այնպիսի մանաւոր պարագայք, զորս անհնարին է մարդկային յաւուրս առաւելեալս գուշակել։ Բայց յայտնեն մարգարէացաւ Յիսուս Քրիստոս ճշգիւ և զյարութիւնն իւրմէ, որ նոյնպէս գեր 'ի վերոյ է մարդկային խնամատութեան։ Եւ այս ամենայն՝ որպէս և Աւետ-

---

(1) Զքաղուածս այլ և այլ վկայութեանց 'ի Հեթանոսաց յաղագս Աւետարանական ուսմամ իրաց՝ մարթի է ընթեռնուլ առ բազումս 'ի Մատենագրաց. գործիսկ առ Եւսեբիոսի՝ Աւետարանական ապացոյցք. առ Հյուսիսոսի՝ ապացոյցք Աւետարանի. առ Հիւսոփիրենոսի՝ Էրան Քրիստոնէական ապացուցեալ 'ի գործոց. առ Դոմիտիանոս—ոսի—Կոլենի՝ Կրան Քրիստոնէական վաստակաւորեալ վկայութեամբ նախնի հեթանոս Մատենագրաց. և այլն։

տարանիչքն (Մատթ. ԻԶ. և ԻԷ։ Ղուկ. ԻԳ. և ԻԴ) միայն, կատարեցան ամենաճիշդ աստուածեամբ 'ի նա։

Մարգարէացաւ Յիսուս Քրիստոս զԱշակերտաց իւրոց. է որ զանհատից ոմանց 'ի նոցանէ, և է որ զամենեցուն ընդհանրապէս։ Զորօրինակ. դուշակեաց, թէ մի ոմն յԱշակերտաց մատնելոցէ զԱրդարարն իւր, մինչդեռ ուշ որ 'ի նոցանէ զմատս ածեալ էր զոյս. և նոցայ յառաջագոյն յանուանէ զմատնիչն (Մատթ. ԺԶ. 21։ Ղուկ. ԻԲ. 21։ Մարկ. ԺԴ. 18։ Յովհ. ԺԳ. 21. և այլն)։ Դուշակեաց, թէ առաքեալն Պետրոս (յորժամ առ միայնէր զմտերմութենէ իւրմէ, և ա և զյաժարութենէ մեռանիլ ընդ նմա, և ուշ բնաւ թողուլ զնա՝ թէպէտ և այլք յԱշակերտացն թողցեն) հակառակ այս ամենայն հաստատեցեալ՝ ուրացի զԱրդարարն իւր, ուրացի երիցս անգամ, և ուրացի յատկապէս 'ի նմին խակ գիշերի՝ մինչչեւ իսկ հաստատեալ (Մատթ. ԻԶ. 33—35։ Մարկ. ԺԴ. 29—30։ Ղուկ. ԻԲ. 33—34)։ Դուշակեաց ասելոյն և զվկայութիւնն մնացեալ նոցն Առաքելոց (Յովհ. ԻԱ. 18). իսկ վասն ամենայն Առաքելոցն նախադասելոյ, թէ 'ի ժամու մատնութեանն թողցեն զԱրդարարն իւրեանց, և ցրուեսցին իւրաքանչիւր՝ ուրոյ ուշ իսկ հովիւ, թէ և Առաքեալքն զընդհակառակն խորհիցին և խոստիցին նմա (Մատթ. ԻԶ. 31—35)։

Մարգարէացաւ նոյնպէս, թէ յետ հանրարձման իւրոյ իջանիցէ 'ի վերոյ նոցա սուրբ Հոգին (Յովհ. ԺԴ. ԻԶ. ԺԵ. 26. ԺԶ. 7. և այլն). եղիցի ապա յիշատակեմ (Գործ. Ա. 4—8). թէ նորա և ամենեքին՝ որ հաւատան յինքն, զօրծեսցեն զմեծագոյն սքանչելիս (Մարկ. ԺԶ. 17—18։ Յովհ. ԺԴ. 12). և վերջապէս թէ ամենեքին նորա վասն անուան իւրոյ հալածեսցին, շարչարեսցին, և ճաշակեսցեն զմահ (Մատթ. Ժ. 17. ԻԴ. 9։ Ղուկ. ԻԱ. 12։ Յովհ. ԺԵ. 20)։

Մարգարէացաւ Յիսուս Քրիստոս դարարութենէ Աստուծոյ իւրոյ և զնշխեղեցեալ իւրմէ՝ յորժամ ասացն, թէ քարոզեսցի ծագաւոր 'ի ծագս աշխարհի՝ ուշ միայն Հրէից, այլ և Հեթանոսաց (Մատթ. Ը. 11։ Մարկ. ԺԴ. 10։ Ղուկ. ԻԴ. 47։ Գործ. Ա. 8). թէ դրունք դժոխոց ուշ երբէք յաղթահարեսցեն զնշխեղեցին իւր. և ուշ թէ միայն հաստատելոյ է այն յերկրի, այլ և տեւելոյ է մինչեւ ցկատարած աշխարհի (Մատթ. ԺԶ. 18. ԻԸ. 20). թէ սրբազան խորհուրդն հաղորդութեան

նմանապէս պաշտեցին յերկրի մինչեւ ցերկրորդ փառաւորեալ գալուստն իւր (զԼուկ. ԻԲ. 16. համեմատեա ընդ Ս. Կրթիչ. ԺԱ. 24. եւայլն)։ Եւ՞ զոյս ամենայն զուշակեաց Փրկիչն.—'Ի ժամանակին՝ յորում՝ ըստ մարդկային տարամարտութեան բարբարոսիցն ընդհակառակն ակնկալելի էր. քանզի շարք պատեալ էին զնոսա յայնժամ այնպիսի ահեղ թշնամիք, որոյ 'ի ձեռս ամենեքեան էր դրեալ բռնանալ իշխանութիւն երկրին. և ինքեանք առաջի կայր մահ խաչի։ Այլ նա զոյս ամենայն առանձինն յառաջագոյն, և վարդապետէր աշակերտին հանապազ մարգելոցն խնամութեան և հանձարոյ։ Դա առ 'ի տարածանել ըզմարդապետութիւն իւր շունչն, բայց եթէ զաշակերտս երկրաւոր, և ամենեքին նորս դրեալ արք անդրադէտք, որոյ ամենեցուն առաջի կայր նոյնպէս ըստ կանխապուշակութեան իւրոյ՝ առերեսութիւն ընդհանրական, ապառ, հաղորդանք և եղբ միայնակեանք. . . . . արեամբ գիւ՞ր մարթի էր բարարձակապէս վճռել, թէ Աւետարանն տարածեցի յաշխարհ ամենայն, և թէ որ ընկալցին զայն՝ յարիւնեցան զայնպիսի միաբանութիւն, որ անուանեան կայցէ մեռցէ մինչեւ ցկատարած աշխարհի։ Կարէ՞ որ առնել զայսոսիկ բայց յամենատես և յամենազօրն Աստուծոյ։

Զհանդերձեալ անցիցն Եզրասաղէմի և զամենայն Հրէից մարգարէացաւ Քրիստոս, յորժամ ասասցուս զվարդարակի աւերածն Եզրասաղէմի, գիրգանումն Տաճարին և բռնանգամ թագաւորութեան Հրէից, գկատարած և գգերութիւն ժողովրդեանն այնմիկ հանդերձ տակաւին թշուառութեամբք՝ ըստ գրելոյ Աւետարանչացն (Մատթ. ԻԴ. 11։ Մարկ. ԺԳ. 6)։ Այլ 'ի ժամուս 'ի բայց թողեալ զմանուսոյ պարարդայս տակաւին զուշակութիւնս՝ բառակուսեալս թնդութիւնամբ պաշարման և կործանման Տաճարին և Եզրասաղեմայ, և գերութիւն և գերութիւն ժողովրդեանն Հրէից։

Հանապազիցիր կրթանեցին զԵզրասաղէմ յ36 կամ յ37 ամի դէմ Համբարձման Քրիստոսի։ Ա. 'ի տարատարս ջնջել գյանցանաւոր ապաստարութիւնս Հրէից՝ պարարեցին Լեղէոնէր Հռոմայեցւոյ զԵզրասաղէմ առ կոչեցութիւնս Տիտոսի։ Այնպէս երկարատեւ և սասիկ եղեւ պաշարումն, մինչեւ ստատիլ 'ի ներքս Համբարայ ուռելոյ և բնակելոյ, և յերեսաց զմնդակարգացն տոյց և արածութիւն մեռան 'ի բաղարի անդ 115 հազար անձինք. բայց յոյց փոխուցեալ 'ի բաղարէ անտի անդրան 'ի բանտանէն Հրէ-

ռանցքեաց՝ յուսով զառանելոյ անձանց զկեր. զորս հրամանաւ Տիտոսի 'ի խաչ հանեալ ապանանէին օր ըստ օրէ ապա իբրեւ 500. իսկ որ 'ի ներքս փոսկեալ մեռցին՝ ասիրեցան հայթայթել սարկնս 'ի գիականց մեռելոց. և մայր ոմն յիսպառ յուսահատեալն խրատ ասան զորդի իւր և եկեր (1) վերջապէս առ 'ի կատարել գրելոցն. «Ամէն ասէն ասեմ ձեզ. ոչ մեռցէ սղոր քար 'ի քարի վերայ, որ ոչ քակտեսցի» (Մատթ. ԻԴ. 2). «Պատեսցեն զքեզ թշնամիք քո պատնէշ, և պաշարեսցեն զքեզ, և նեղեսցեն զքեզ յամենայն կողմանց, և յատակեսցեն զքեզ և զորդիս քո 'ի քեզ, և ոչ թողուցուն քար 'ի քարի վերայ յամենայնի 'ի քեզ» (Ղուկ. ԺԹ. 43—44).

Սոսկալի յորձակմամբ ասին Հռոմայեցիք զԵրուսաղէմ. և զորս 'ի նմա գտին՝ անողորմին անխնայ ընդ սուր. մինչեւ քաղաքն, և որ շուրջ զնոսա գիւղքայք քանի մի մղոն տարածութեամբ, և նաև Ջորդանանա՝ նեղեցան արեամբ ապականեալքն, և Երուսաղէմ ըստ Փլաւիոսի՝ այնպէս աւերեալ ապականեցաւ, մինչեւ չերեւեցուցանել ամենեւին զնշմարանս ինչ շինութեան (1). 'Ի միջի արշաւարաց և զարմանագործ Տաճարն յանզգուշութենէ մերոյ ոչ բուրք 'ի զօրուէն հրոյ ճարակ եղեալ նատաւ 'ի մոխիր. Յամենայն 'ի Յոսեփոսէ պատմեան՝ կորուան 'ի Հրէից իբր միլիոն մի և 100,000 անձինք (2).

Զմերջին կործանմանէ Երուսաղէմի և զգերութենէն Հրէից՝ Փրկիչն Յիսուս ասացեալ էր կանխաւ. «Եւ անկցին (Հրէայք) 'ի սուր սուսերի, և գերեսցին յամենայն Հեթանոսաց, և Երուսաղէմ եղիցի կոխան յազգաց, մինչեւ կատարեսցին ժամանակք Հեթանոսաց» (Ղուկ. ԻԱ. 24). 'Ի կատարումն այսորիկ գրէ Փլաւիոս, թէ յետ կործանման Երուսաղէմի 'ի Տիտոսէ՝ վարեցան 'ի գերութիւն հոգիք իբր 97 հազարք. յորոց մեծագոյն մասն կորեաւ 'ի տեսարանս խաղուց, այլք 'ի մենամարտս, կամ 'ի գազանամարտս. և որք մեռցին կենդանի՝ վարեցան Եգիպտոս և Աղեքսանդրիա և յայլ աշխարհս՝ առ 'ի վաճառել 'ի ստրկութիւն (3). Յետ ամաց 'ի վերայ անցանելոյ եօթանասնից՝

---

(1) Փլաւիոս. յոգւոյս պատերազմին Հրէից. Գիրք. Զ և Է.
(2) " Գիրք. Է. Գլուխ. Ա.
(3) " Գիրք. Է. Գլուխ. Ա.
(4) " Գիրք. Զ. Գլուխ. Խէ. Գիրք. Է. Գլուխ. Իէ.
(5) " Գիրք. Զ. Գլուխ. Խէ. Գիրք. Է. Գլուխ. Բ.

ուրեք նորանոր խռովութիւնք Հրէից միմեանցմամ առին Հռոմայեցիք զԵրուսաղէմ՝ արով և հրով ապանեալ իբրեւ 580 հազար հոգիս 'ի նոցանէ։ Յոյնեամ հրամանաւ կայսերն Ադրիանոսի տապալեցաւ Ս. Բազարն 'ի հիմանց, և ընդ ուերսուս Ցանարին էանց արար, և 'ի տեղւոջ հնոյն Երուսաղէմի կանգնեցաւ նոր քաղաք լցեալ նոր բնակչաք, նոր անուամբ (Հելիա), նոր աստուածովք. և Հրէայք ոչ յարիւնեան ապրարելոյ անտի՝ արգելցեալք յամենայն մասունս աշխարհի։ Եւ այնուհետեւ լրիւ ունայն եղեալ ամենայն փորձք Յովիսանոսի սերայորի և Հրէից՝ ոչ 'ի վերականգնել զԵրուսաղէմ և զՏաճարն։

'Ի հանուրս բայաստրութենէ անտի՝ զոր կարդեցաք 'ի վեր անդր, ակն յայտնի եւեթ, թէ և ի չ յոչ մի յահաւոր մարգարէութենէն Յիսուսի Քրիստոսի յաղագս հանդերձեալ անցիցն Երուսաղէմի և Հրէից, Ցոյց անկասար. և յայս ասելէ, զի նախնի սիրելեաւք Քրիստոնէութեան բնդդէմ զնէին հակառակորդայ՝ զմարգարէութիւնս զոչս իբրեւ զմի 'ի հզօրագոյն ապացոյցսից՝ յԱստուծոյ զոչոյ սուրբ Կրանի մերոյ (1)։ Իսկ զմարգարէութիւնս Քրիստոսի՝ որ յաղագս հանդերձեալ անցիցն աշխարհի, այնչ է յաղագս կատարածի այնորիկ (Ղուկ. ԻԱ. 34—36), յաղագս յարութեան մեռելոց (Մատթ. ԻԲ. 30—32), յաղագս հաստատակաց զատանանցի, և որոց զինչ այնորիկ փառաց և պատուոց արդարոց և մեղաւորաց (Մատթ. ԻԵ. 31—46), բան որում չեն եկատարեալ, Թողեալ ոչ ոչիմ անհետացուցի՝ մատիցուք 'ի քննին մեծագունեին Հրաշից և մարգարէութեանց Աւետարանին—յարութեան Յիսուսի Քրիստոսի 'ի մեռելոց։

## ՑՈԴՈՒԱԾ ՀԻՆԳԵՐՈՐԴ.

### Յարութիւն Յիսուսի Քրիստոսի 'ի մեռելոց։

Յարութիւն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի է որպէս թէ զարակ այն ամենայն գլխաւորեալն անցիցն, որով ապացուցանին ոչ 'ի յԱստուծոյ էր նորոս և Աստուածութիւն, և ոչ զոր հանդերձ

---

(1) Ասնիերեան. բնդդէմ Հրէից։ Խրատարանութիւն. Գիրք Դ. Գլուխ 74։ Թէոդորիտոս. Ճառ ԺԱ։

Աստուծոյ զոյն կրանին՝ որ ի ձեռն նորա հաստատեցաւ։ Զայս-մանէ խօսեցաւ ինքնին Փրկիչն յայտնապէս առ Հրէայսն՝ որ 'ի խնդիր էին հրաշից. «Այդ չար և շնացող ազգն նշան խնդրէ, և նշան չի տացի նմա, բայց նշանն Յովնանայ մարգարէի։ Զի որպէս էր Յովնան ի փոր կետին զերիս տուրս և զերիս գիշերս, նոյնպէս լիցի և որդի մարդոյ 'ի սիրտ երկրի զերիս տուրս և զերիս գիշերս» (Մատթ. ԺԲ. 39—40)։ Եւ յորժամ գնացին կամ-ման 'ի մահ խաչին՝ զորոյ գիտի զաղոյ էր և յարութիւն իւր, բարբառեցաւ. «Այժմ փառաւորեցաւ որդի մարդոյ, և Աստուած փառաւորեցաւ 'ի նմա» (Յովհ. ԺԳ. 31)։ Զվերջին բա-նիս յայս միտս ասին և առին Աստուածն, և վկայեցին, թէ Քրիստոս յարութեամբն իւրով երևեցաւ իրրև որդի Աստուծոյ ամենակարողութեամբ փառաւորեալ (Հռոմ. Ա. Դ.). ուստի և բարբաջեցին. «Եթէ Քրիստոս չիցէ յարուցեալ՝ ընդա-նոյն են հաւատքն ձեր» (Ա. Կորնթ. ԺԵ. 17։ Գործ. Դ. 33)։

'Ի միրոյգրեալ բանս Քրիստոսի առաւել մարգարէութիւն մե-ծագոյն. քան զի Փրկիչն 'ի խաչին զհանգերձեալ յարութենէ իւրմէ՝ զուշակեաց զոյնոյիսի զերբեանսն զորոց, որ անհաս է մարդկեղէն միտց. և զոյանմանէ խօսեցաւ ոչ միանգամ կամ 'ի հարեւանցի, այլ բազում անգամ և բազում ուրեք. ոչ միայն առաջի ձեռնասուն Հրէականաց իւրոց (Մատթ. ԺԶ. 21. ԺԷ. 9–22 և 23), այլ և առաջի բազմամարմն ժողովրդեան Հրէ-ից և Պարգևատեաց նոցա (Մատթ. ԺԲ. 40։ Յովհ. Բ. 19)։ ոչ երկրիցն կամ անուշ բանիւք, այլ պարզ անով՝ զոր անհեղինն էր ասելոյ իմանալ (Մատթ. ԻԷ. 62–64)։ Յետ այսր ամենայնի զուշակեաց կարի ճշգութեամբ և դիտ ժամա-նակին, որպէս հանեցաւ մեռեալ 'ի գերեզմանի (Մարկ. Ը. 31։ Մատթ. ԺԲ. 40)։

Այսպէս բանն Քրիստոսի առաւել հրաշք, և առաւել մեծա-գոյն հրաշք. նախ՝ զի ասաց զայս ինքնին յարուցեալն Քրիստոս, յայտնապէս՝ որպէս ասացն (Մատթ. ԻԷ. 6)։ Երկրորդ զի ցու-ցաւ յայնմիկ ամենամեծ կարողութիւն Աստուծոյ. քան զարամ յարութիւն մեռելոյ է անապատկոյս ասասել ամենայնի կարողու-թեան զարդ քան բժշկութիւն անապատելոյ ուրուք, կամ փարա-սանն բարձրանալն, նոցին։ Եւ երրորդ՝ զի յարութիւն Փրկչին արարաւ՝ ոչ եթէ 'ի ձեռն այլոց ուրուք արանձնաւորեալ, որ-

ոչէ արարան այլ ամենայն յայտութիւնք ենչեցելոց յիշատակեալ 'ի հին 'ի նոր Կտակարանս, այլ ի ձեռն նոցին իսկ Յորդանանի. որ որոշէս կանչեցաւ և էր գոնեն իր, նոցանչէս կանչեցաւ և էաւ վերատին զայն (Յովհ. Գ. 18)։ Քանզի յարեան Քրիստոս զարմանեալք Աստուածութեան իւրոյ՝ բան համարձակութեան իւրոյ ընդ Աստուծոյ Հօր, որ յայտնին զնա 'ի մեռելոց (Հռոմ. Ը. 11. Գ. 9). որ որոշէս ինքն «Ես եկեալս յանձին իւրում, նոցանչէս եմ ('ի յարութենէ) և որոշեալ ունել կեանս յանձին իւրում» (Յովհ. Ե. 26)։

Յիսուս Քրիստոս մեռաւ խաչելոյ, որում և Աստուածքն յայտնապէս վկայեցին (Յովհ. ԺԹ. 30)։ Իսկ հանդերձեալքս Հրէայքն յոչ կամելոյ և ընդ կարծիս ամենայն՝ զոր ինչ 'ի սկզբանէ մինչև ցայսոր հնարեցին ապա հանդերձակ վկայութեան Աստուծոյն, է՝ որոշէս թէ զարարչութիւն մարմին Փրկչին 'ի գերեզմանէ. ուրեմն մահ Փրկչին անարգակուսելի է և յամենեցուն վկայեալ, և առաջիւ վկայեցին այսմ բարեմարդ։ Վկայեցին զինուորքն, որք եկեալք առ Յիսուս առ 'ի խորտակել զարուեան նորա՝ ասելին, զի մեռեալ էր (Յովհ. ԺԹ. 33). վկայեալ և զինուորքն, որ 'ի առաջեալ զմահ Փրկչին՝ խոցեալ զկող նորա գեղարդեամբ (34). վկայեալ այսմ և հարթարարեալն, որ կոչի առ խաչին Քրիստոսի. և ինքն Պիղատոս, որ մինչև ոչ թոյլատրեալ հաստատեալ զմահ Փրկչին, ոչ թոյլ եւս Յովսեփայ Արիմաթիացւոյ բառնալ զմարմին նորա 'ի խաչէն (Մարկ. ԺԵ. 44). վկայեցին վերջապէս և նորին իսկ թշնամիքն, որոց եկեալ առ Պիղատոս ասացին. «Ցիշեցար, զի մոլորեցուցիչն այն ասէր՝ մինչ կենդանին էր, թէ յետ երից աւուրց յառնեմ» (Մատթ. ԻԷ. 63). և խնդրեցին կացուցանել պահապանս 'ի պահպանութիւն գերեզմանի Փրկչին։ Յառաջին դարս Քրիստոնէութեան ոչ որ համարձակեցաւ երբէք ուրանալ զմահ Քրիստոսի 'ի խաչին. ընդհակառակն թէ՛ Հեթանոսք և թէ՛ Հրէայք պատերազմէին զՔրիստոնեայս, զի պարտեան զայր ոմն մեռեալ անարգ մահու։

Աստուածքն 'ի սկզբան անդ կշռելով զկարեւորութիւն հանդարտութեան յայտութեանն Քրիստոսի՝ 'ի մարի եղին, զի մինչ ոչ ընդունելն ամենայն մասամբ, և ոչ առաջեալն ուրանութեամբ զայն, ոչ հաստատելն, յայս ասեն յոյժամ սուրբ Կանոնքն զգայուցին Աշակերտացն, թէ յարեան Քրիստոս, և թէ սեռին զնա՝ «Երեկեալս առաջի նոցա շարժութեամբ բանք

նոցա, և ոչ հաւատացին նոցա» (Ղուկ. ԻԴ. 11)։ Յորմէ՝ Աշակերտքն՝ որ երթային յԷմմաուս, պատմէին Աւետարանն, թէ երեւեցաւ Փրկիչն ինքեանց, և «Ոչ նոցա հաւատացին» (Մարկ. ԺԶ. 13)։ Յետ այսորիկ երեւեցաւ փաղփաղակի Յոյսեանքն և այլոց Աշակերտաց իւրոց, որք 'ի սկզբան ունէր հաստատեցեալ զոգի ինչ տեսանել (Ղուկ. ԻԴ. 37)։ և Թովմաս՝ որ 'ի ժամուն ոչ էր ընդ նոսա, ոչ կամեցաւ հաւատալ միւսոցն հաւատացեալսն աշակերտակցաց իւրոց անդամ, և ասէ. «Եթէ ոչ տեսից 'ի ձեռս նորա զնշան բեւեռացն, և արկից զմատունս իմ 'ի տեղիս բեւեռացն, և մեկնիցից զձեռս իմ 'ի կողս նորա՝ ոչ հաւատամ» (Յովհ. Ի. 25)։ Այսորինակ ծանրահաւատութիւն Աւետարանն 'ի յարութիւն Փրկչին, և այսոքիսի զգաստութիւն՝ բան որոց հետամուտ էին խակութեամբ հաստատ լինել անդամ, ան-հնարելի թէն եղանակաւ վկայեն, թէ եթէ Աւետարանն հաւատացին 'ի վերջոյ, ծանեան ասա ուրեմն բանականաբար և աչքաբաց նաև զնշմարութիւնն իրացն։

Վկայութիւն Աւետարանն 'ի մասին յարութեան Փրկչին անտարակուսելի է. իբր զի միթէ մա՛ր ինչ ինչ ունիլ առ նենգաւորս, զորս քարոզելով այսոց զմարդութիւն սրտի և բազմաբոյր ուղղութիւն հոգւոյ անընդունելի ցային վայր յաշխարհի՝ ինքեանք նոքա զնոյնն յանձինս իւրեանց երեւեցուցանեն. զորս քարոզեն արհամարհել զմարմնութեամբ՝ և ինքեանք բան օրինակի Փրկչին հրաժարին յանձնայնէ։ Աղբատութիւն նոցա այնպիսի էր, զի զրաղեալ 'ի ծանրաստաղուկ հոգս Աւետարանն՝ հարկեալ լինին նաև աշխատել ձեռօք առ 'ի տնանել զոյսիսն պարկն իւրեանց։ Զորս քարոզեն մեռուցանել զմարմին՝ և Հա՞ր է արդեօք բնդ թուով արկանել զայն ամենայն նահատակութիւնս, ժուժկալութիւնս և կիրս՝ որոց մատնեցին կամաւ զանձինս ամենայն 'ի ժամանակս տարաբերական պաշտամանց իւրեանց։ Զորս քարոզեն զհեզութիւն. և յորմէ՞ տեսութիւն իւրեանց զարժէ մեծամեծ յատաջադիմութիւնս՝ ոչ երեւեցուցանեն յանձնայն 'ի զնայս իւրեանց և զնշանախեց անդամ մտադրութեան։ Զորս քարոզեն զիրարութիւն յանդգնաց, և ինքեանք զարհամարապէս հայածեալ և նեղեալ՝ զնշոյլս անդամ ոչ ցուցանեն՝ ոչ զանդգնաբանաց, ոչ սրտնեղութեան և ոչ սրտնչնաց։ Զորս քարոզեն այսոց զուղղութիւն և զմիամտութիւն, և ինքեանք անօրինակ իմն պարզմտութեամբ խոսին զարդեան-

թեանց և զոկարութեանց, ևս և զանկուիկ դիտութենէ խրատեանց. զոր որոյ ո՛չ 'ի միտ առնուին յառաջն զրագումն 'ի բանից Աստուածային խրատանց. և առաւել ևս զմեղկութենէ և զերկչութենէ 'ի պահս շարչարանաց նորա, և միանգամայն զմերժութենէ խրատանց. և այլն։ Ընդ որս ընդ այսպիսս Հաւ՚ր է երկրպագել կամ զկիր հանարել անտիրանս։

Աստուծին ապաստոյց այսորիկ է անանկնկալ և հաստատուն փոփոխութիւնն, որ յարութեամբն Քրիստոսի եղեալ Աստուածն։ Յառաջն էին նորա որք երկչոտ և կասկածաւորք. այսոր ապաստոյգնեալք աներկիւղ և անասան հանդարտութեամբ՝ յանձն առնուն քարոզել տիեզերաց, արձանանան առաջի հրէութեամբ ժողովոց, առաջի թագաւորաց և դատաւորաց, առաջի Գրչաց և Գարեղեցոց։ Յառաջն՝ յորժամ զՔրիստն ոչնչաց ասնէին 'ի շարչարանս և 'ի մահ, Աստուածքն թողեալ ամենեքին զնա՝ փախեան. իսկ այժմ յորժամ մեռաւ արդ Աստուածն խրատեանց, հաստատեն 'ի մտի յեղակարծուստ Աշակերտքն յանձն առեալ 'ի սէր նորա զշարիս ամենայն, արհամարհեն զաշխատութիւնս, զվատանգս, զհալածանս, զկապանս և զրանս, և առ ոչինչ համարեալ զմահ՝ ամենեքին խնդութեամբ ընդունին զայն, և կենդանի հեղմամբ արեան խրատանց զիկայութիւն յարութեան Տեառն։ Իսկ արդ՝ ո՞ է, որ ներշնչեաց զարութիւն այսպիսի 'ի մարդիկս, որք յառաջն՝ յորժամ եհաս 'ի մերոյ մատանց մատնեալն, վհատութեամբ թողին զԱստուածն խրատանց, և սատակեալ զնա 'ի շարչարանս, 'ի խաչի և 'ի գերեզմանի՝ 'ի մեծի ապշեալք էին յաղագս փրկութեան անձանց։ Յարութիւն Քրիստոսին է և նիւթ է, որ մեկնէ զգաղտնիս հրաշալի փոփոխութեան Աստուածոյն. և առանց մեծի արանշելեաց գրեթէ անհնարին է բացատրել զանձնարարութիւն, զբաղութիւն, զնախանձաւորութիւն և զհաստատութիւն նոցա զոր ունէին զարիս մարդոյ։

Երկրորդ ապացոյցն է հաստատն առաքելական քարոզութեան նոցա Հրէից, և ազգաց Հեթանոսաց։ Աստուածքն փոխանակի յետ խաչելոյն ասելոյն և մահու Աստուածոյ խրատանց՝ որում ակնածանս եղեն, յԵրուսաղէմ ամենեքին ձեռնարկեն անդէն և անդ 'ի նոյն իսկ 'ի քաղաքի քարոզել Հրէից յայտնապէս, թէ Քրիստոս խաչեալն 'ի նոցանէ՝ յարեալ . . . . և դիմեալ առ այս. Հազարք հազարաց 'ի Հրէից ընդունին զդաւանութիւն նոցա, յԵրուսաղէմ շուն քարոզք յարութեան Քրիս-

բրամոսի 'ի մերձաւոր բաղաքս և 'ի գիւղս, և անդ եւս բաղումք 'ի բնակչացն հաւատան աւետարանին նոցա. չուեն անտի առ Հեբեռնոս. 'ի Հեբեռնոսոյ եւս հաղարաւոր անձինք ուրացեալ զաստուածս հայոց խրեանց՝ ըստ օրինակի Հրէից հաւատան հաստատեալքն 'ի Խաչեալն։ Այսպէսակի յաճախեն 'ի վերայ նոցուն Հաւատացելոցն՝ ցեղս նախանձու և արհամարհանաց ազգակիցք խրեանց, և 'ի փորձ մատուցանեն զնոսա ազգի ազգի տառապանաց և նեղութեանց. սակայն ոչինչ՝ ո՛չ վիշտ, ո՛չ սար, ո՛չ հաղածանք, ո՛չ սաստ, ո՛չ մերկութիւն, ո՛չ սուր և ո՛չ այլ ինչ յոյսդիսեալս մեկնել կարեն զնոսա «'ի սիրոյն Աստուծոյ՝ որ 'ի Քրիստոս Յիսուս» (Հռոմ. Ը. 35 և 39)։ Զորս իրրեւ ոչխարք փորձեն 'ի սպանդ, և մեռանին զօրհանապարհ (36), և անցանեն 'ի վերայ զարդ երեք տասկոյն հանդերձ հարածանաց Քրիստոնէից. խակ Քրիստոնեայք կան և մնան անտատան 'ի հաւատս խրեանց։ Զի՞նչ նշանակիցէ այս ամենայն, եթէ Քրիստոս ո՛չ յաղեալ։ Զիարդ այն հաղարաւոր և հարիւր հաղարաւոր անկանեալս մարդիկն յանէն ասին հաւատալ Աւետարանին. և զի՞նչ է՝ որ կարոյ փոփոխել զնոսա այնպէս, և շնչել 'ի նոսա տանել խնդութեամբ թշուառութեանց ամենայնի, եթէ ո՛չ մահն և յարութիւն Յիսուսի Քրիստոսի։

## ՅՕԳՈՒՍԾ ՎԵՑԵՐՈՐԴ.

### Իրաւն Հոգւոյն սրբոյ յԱւետարանսն.

Զգարշաւս Հոգւոյն սրբոյ յԱւետարանսն՝ որ է առաջին հրաշք Քրիստոնէականն Եկեղեցւոյ, և մինչդամայն սիրելիս ստուգութեան այնորիկ, ասասցէս նկարագրէ սուրբ Աւետարանիչն Ղուկաս 'ի գիրս Գործոց Առաքելոցն. «Եւ 'ի կատարել աւուրցն Պենտեկոստէից էին ամենեքեան միաբան 'ի միասին։ Եւ եղեւ յանկարծակի հնչիւն յերկնից՝ նկեալ իրրեւ առատիկ հողմոյ, և լցոյ զամենայն տունն՝ յորում նստէին։ Եւ երեւեցան նոցա բաժանեալ լեզուք իրրեւ 'ի հրոյ, և նստաւ իւրաքանչիւր 'ի վերայ նոցա։ Եւ լցան ամենեքեան Հոգւոյ սրբոյ, և սկսան խօսել յայլ և այլ լեզուս՝ որպէս և Հոգին տայր բարբառել նոցա» (Բ. 1—4)։

Էջ Հոգին Աստուծոյ յԱւետարանսն, զի վիպեսցէ յԱստ-

ուսուցան զոչոց Քրիստոնէական Կրօնին, և կատարեցին յայտմ մասին մարգարէութիւն Փրկչին՝ զորմէ բազում անգամ կանխաւ խօսեցեալ էր յայտնապէս (Յովհ. ԺԴ. 16. 17. 26. ԺԶ. 7. 8. 13. 14։ Ղուկ. ԻԴ. 49)։ Եւ Հոգին Աստուծոյ, զի անժրիտելի իմն եղանակաւ միացեալ յարութիւնն և համարձակութիւն Քրիստոսի յերկիրս. զոր որում միջոցաւ եղեալ էին ոչարարք՝ և ուշ ինքն ինքանեալոց էր յերկիր (Յովհ. Է. 39. ԺԶ. 7—8). և վերջապէս զի ինքնին Հոգին սուրբ ինքմամբն իջեալ յերկիր եղեալ սկիզբն և պատճառ ամենայնի, որոց զինքն կատարելոց են Աստուածաբանք Քրիստոսի սրանչելիք՝ առ 'ի միայն, թէ Աստուածոյ է հաստատութիւնն։

Հոգին սուրբ ինքեալ Աստուածն՝ նախ քան զամենայն զարդն սրանչելի լեզուագիտութիւնն. իբր զի յորժամ էջ 'ի նոսա Հոգին՝ խօսէին սկսան խօսել յայլ և այլ լեզուս՝ «Որպէս և Հոգին տայր բարբառել նոցա» (Գործ. Բ. 4). որում ակնարկեալ եղև բազմաթիւ ժողովուրդ 'ի Հրէից և յեկաց Հեթանոսաց՝ հաւատաւորեալ 'ի ժամանակին յայնմիկ յամենայն կողմանց Աշխարհի առ 'ի ուսանել զսուրբ Աւետարանէն. որոց զարմացումն այնպէս մեծ եղև, զի յորժամ առաքեալքն Աստուծոյ հաղիւ սկիզբն արար մեկնելոց նոցա զոչանչելի յայտնութիւնն եղեալ առաջի նոցա, և ասաց. «Ապաշաւեցէք, և մկրտեսցի իւրաքանչիւր որ 'ի ձէնջ յանուն Տեառն Յիսուսի Քրիստոսի 'ի թողութիւն մեղաց, և ընդունիջիք զաւետիս Հոգւոյն սրբոյ» (Գործ. Բ. 38), առ ժամայն 'ի նմին իսկ աւուր հաստատեցին 'ի Քրիստոս արք իրրև երեք հազարք։ Ընդունելութիւնն Աստուծոյն զշնորհս 'ի զանազան լեզուս խօսելոյ՝ որ և նիւթն մշանջենական բնդ նոսա, միայն տիեզերական քարոզութիւն նոցա, առանց որոց անհնարին էր քարոզել զԱւետարանն 'ի տակաւ աւուրս ամենայն աշխարհի, և հաստատել զեկեղեցիս։

Երկրորդ՝ Հոգին սուրբ յաւանութեամբ Աստուծոյն։ Որպէս Փրկիչն խոստացեալ էր յառաջագոյն Աշակերտաց իւրոց. «Զորժամ եկեսցէ նա՝ Հոգին ճշմարտութիւն, առաջնորդեսցէ ձեզ ամենայն ճշմարտութիւնս» (Յովհ. ԺԶ. 13). «Նա ուսուցանէ ձեզ զամենայն՝ որ ինչ ասացի ձեզ, և յիշեցուցանէ ձեզ» (ԺԴ. 26), այնպէս և եղև։ Աստուածքն զոչով արք անհնարս զրոց և արարչութիւնք, քէնչէս և զաստիարակեալ էին 'ի Փրկչէ,

այսու ամենայնիւ զնա ոչ կատարելապէս հաստատ եղեալ էին վարդապետութեանց նորա ամենայնի (Ղուկ. ԻԴ. 25—26։ Յովհ. ԺԶ. 12)։ Երբեմն ևս ընդդէմ զառնային նմա (Մատթ. ԺԶ. 22)։ Յետ յարութեանն՝ թէ և 'ի նորոյ և ամենայն հանգամանաւք հրահանգեցան 'ի նմանէ, բայց և այնպէս ոչ էին տակաւին ազատ 'ի թիւր կարծեաց ազգակցաց իւրեանց յաղագս Մեսիային, և ոչ իսկ ըստ պատշաճի 'ի միտս առեալ զգաղտնիս արքայութեան Աստուծոյ (Գործ. Ա. 6—7)։ այլ յորժամ էջ 'ի նոսա Հոգին սուրբ, բացան յայնժամ և միտք նոցա՝ որք և ընկրուան վարդապետել զԱստուծոյ զվարդապետութիւն գերազանց և կատարեալ, մեկնել զտեսութիւնս Մեսիային այնպիսի վայելչութեամբ և վսեմութեամբ, զորս անհնարին է այլում ումեք առնել, և առանդել աշխարհի զայնպիսի կանոնս բարեպաշտութեան, որք անհամեմատարար վեհագոյն են՝ քան զորս ցայն վայր երևեցան յաշխարհի կրթիչք բարոյ մարդկան։ Զկնորսն Գալիլիոյ աքանչացուցանեն վաղվաղակի բարոյութեամբ իւրեանց զՀրէշտակսն, զՅովհաննէս, զԱստուած և զայլ աշխարհս. վասն հոգեամբ մտանեն 'ի պայքար ընդ Իսրայէլ և ընդ Փիլիսոփայս, և աւետարանելով զփրկութիւն աշխարհի՝ յամօթ առնեն զիմաստութիւն խնամանոց, և արդեամբ բարոյութեան իւրեանց գերեն ամենայն ուրեք զանհամար բազմութիւն ժողովրդեան։ Իսկ արդ՝ իցէ՞ այլ ինչ այս ամենայն, եթէ ոչ զի Աստուած ինքնին ետ Աւետարանչաց իւրոց զբերան և զիմաստութիւն (Ղուկ. ԻԱ. 25)։

Երրորդ՝ Հոգին սուրբ իջմամբն իւրով յԱւետարանն՝ որպէսզի զնոսա յամենայն 'ի մեղաց։ Իբրև զի թէպէտ մեծ էր անձնուրացութիւն նոցա, յորժամ թողեալ զամենայնն՝ զկնոջն զնոցին նորա հետաց Փրկչին, ասելոյն զնոցա որպէսզի Զերեթեայ (Մարկ. Ժ. 35—37) ցուցանեն, թէ չև ևս էին զտեալ խորան հետ զահասիրութեան և ցանկութեան աշխարհական բարեաց՝ 'ի սրտի Աշակերտաց Փրկչաւորի։ Թէպէտ և մեծ էր սէր Աւետարանչացն առ Վարդապետն իւրեանց, այլ չև էր յաղթեալ 'ի նոսա մինչ 'ի սրտս անձնասիրութեան. յոյս ասէր յորժամ 'ի վերայ եկեալ մտանէն, թողին նորա զԱստուածային Վարդապետն իւրեանց և ցրուեցան (Մատթ. ԻԶ. 56)։ թէպէտ և անեղբարձիկ էր ընկերութիւն նոցա, այսու ամենայնիւ զթեցան երբեմն մարդկեղէն տկարութեամբ և յայտնեալ (Ղուկ. Թ. 54)։ այլ իջմամբն Հոգւոյն սրբոյ՝ փոխարկեցան նորա ըստ ամենայնի։ Անձ-

նութեամբն, Աստուածութեամբն և ընկերութեամբն ժամանեն 'ի նոսա վարվարակի 'ի ծայր զերծոյն կատարելութեան. և նորա վասն փառաց անուանն Աստուծոյ և փրկութեան երդարց յանձն առնուն որոյ մասոր զամենայն զանասկս նեղութեանց և վշտաց. «Եւ բաղցեցան, և ծարաւեցան, և մերկ գնացին, և կոխահարեցան, և անհանգիստ եղեն, և աշխատեցան ձեռաք իւրեանց. բամբասեն զնոսա՝ օրհնեն. հալածեն՝ յանձն առնուն. հայհոյեն՝ օրհնեն. իբրև տակ նշանակի ամենայն աշխարհի՝ սամենեցուն փարելի լինելով մինչև ցայժմ» (Ա. Կորնթ. Դ. 11. 14)։ 'Ի վերջոյ առ 'ի պատկել զիրոյի իւրեանց և զնաշատակութիւնս 'ի սէր Աստուծոյ և 'ի փրկութիւն երդարց՝ ասն և զանձինս 'ի մահ։

Զորրորդ՝ Հոգին սուրբ իջմամբն իւրով յԱռաքեալսն եւ նոցա շնորհս հրաշագործութեան, ըստ որում՝ վկայէ Աւետարանագիրն Ղուկաս. «'Ի ձեռս Առաքելոցն լինէին նշանք և սքանչելիք բազումք 'ի ժողովրդեանն». և յայս տակս «Յաւելուին Հաւատացեալքն 'ի Տէր՝ բազմութիւն արանց և կանանց» (Գործ. Ե. 12. 14)։ Մանաւանդ յաղագս որոյն Փիլիպպոսի ասէ. «Ոմանք զնէին ժողովուրդքն բանից Փիլիպպոսի միաբան՝ 'ի լսել նոցա և 'ի տեսանել զնշանսն, զոր առնէր. բազմի բազումք՝ որ ունէին զայս պիղծս, աղաղակէին 'ի ձայն մեծ, և ելանէին. և բազում անդամալոյծք և կուսք բժշկէին» (Գործ. Ը. 6—8). յաղագս որոյն Պետրոսի՝ որ բժշկեաց զ'ի ծնէ կուսն, և յայս տակս հաստատին 'ի Գրիգոր տէր հինգ հաղորդք (Գործ. Գ.) զարձեալ յաղագս տոյս, որ բժշկեաց տոյս և զՅնեան ոմն, որ յութն ամաց հետէ զնեալ 'ի մահիճս անդամալոյծ. և ամենեքին՝ որ բնակեալ էին 'ի Լիդդա և յԱրքիսոն (Սարոնա)՝ դարձան 'ի Տէր (Գործ. Թ. 34—35)։ Ըստ այսմ՝ օրինակի որոյմէ և զաղագս Առաքելոց (Գործ. Ե. 1—5. Ժ. 44—45)։

## ՑՈԴՈՒԱԾ ԵՕԹՆԵՐՈՐԴ.

Սքանչելի եղանակս տարամոմն Քրիստոնէական կրօնի։
Սքանչելագոյն այսուհետև այնորիկ 'ի Հաստատութեան։

Քրիստոնէական Կրօնն՝ որոյ նախկին քարոզիչք կացին Առաքեալք, տարածեցաւ յաշխարհս ամենայն անակնկալելի բան

տրապետեմբ, և տարածեցու ոչ միայնոյն ատարութեամբ, այլ որպէս և է Հնդիցիս, Աստուածային գրութեամբ։ Ի սոյր դրոց ասանելիք, թէ 'ի նոսին ասեր՝ յորում էջ Աստուածն Հոգին յԱռաքեալսն, 'ի ձեռն քարոզութեան Պետրոսի հաստատեցին 'ի Բրիտանս արդ երեք հազար (Գործ. Բ. 41)։ Հայրն անցեալ էին 'ի վերայ ասելոյ բնչ, և ահա 'ի ձեռն քարոզութեան և սրոնշելեաց նոցն իսկ Աստուծոյ եկին 'ի հաւատս այլ ևս տրբ հինգ հազար (Գործ. Դ. 4)։ Այնուհետև սրոնցուն վարդապետի Աստուածոյն ասեալսն զԲրիտանս յամենայն կողմանս աշխարհի. և ահա յետ անց բնչ հանդարձման Բրիտանոյ զրկ սուրբն Պօղոս թուղթս առ Հռոմայեցիս, առ Կորնթացիս, առ Գաղատացիս, առ Եփեսացիս, առ Փիլիպեցիս, առ Թեսաղոնիկեցիս, առ եպիսկոպան Կրետոյ, և այլն. և Աստուածոյն Յակոբոս և Պետրոս՝ զրեցհանդերձանս առ Հաւատացեալսն Պոնտոսի, Գաղատոյ, Կապադովկիոյ, Ասիոյ և Բիւթանիոյ (Ա. Պետր. Ա. 1). և զրիչ Գործոց Աստուածոյն վկայէ, թէ 'ի բազաքս բազումս՝ որպիսի են Անտիոք, Աթենք, Դամասկոս, Կեսարիա, Իկոնիա, Մելիտէ, և այլն, հաստատեալ էին արդ եկեղեցիք Հաւատացելոց 'ի Տէր. ո՞ւր թողցուք ասասանոր և զՊօղոսի՝ որպէս ինքն վկայէ, ընդ քարոզութեամբ Աստուծոյ Աստուածոյն մինչև յԻլիրիկ (Իլլիրիկ). որով և կատարեցաւ դուշակութիւն մարգարէական. «Ընդ ամենայն աշխարհ ել բարբառ նոցա, և մինչև 'ի ծայս աշխարհի են բառք նոցա» (Հռոմ. Ժ. 18)։

'Ի Հեթանոսաց բազումք վկայեցին երբեմն ընդ փոքր ատրածման Բրիտանոնէական Կրանին. յորոց նոսին՝ Պլինիոս կուսակալ Բիթանիոյ՝ որ (յամի 104) ծանուցեալ կոչեցեր Տրայանոսի զՀանդարձանաց հաստատանացն յարուցելոյ ընդդէմ Բրիտանէից, յաւելու. «Թուի ինձ, թէ արդեան իրաւութիւնս արժանի է զդուշաւոր բնութեան. մանաւանդ յազգս թուոց նոցա, որոց բազմանայ վտանգն. բազմի բազումք յարանց և 'ի կանանց յամենայն կարգէ և յամենայն հասակէ մատնեցան 'ի տանջանաւորանս, և մատնեցին ևս. և ոչոր մնասաչառութեանս (Բրիտանութեան) հարուածեալ է ոչ միայն 'ի քաղաքս, այլ նաև յանտառս և 'ի շէնս. մինչ զի մեհեանք Աստուածոյն անմայացեալ են զոգիս, և տանք 'ի մեղաց անաբ զազարեալ (1)։ Երիցորդ՝ Տիրե-

(1) Բ. Պլինիոսի թուղթք առ Տրայանոս. Գիրք. Ժ. Նամակաւ 97։

բիանոս կոչնական առաջնոյն Պաղեստինի՝ 'ի Ծանուցագրի իւրում՝ առ նոյն կայսրն յայտ արարեալ ասէ. « Զանձրայայ եւ 'ի պատուհասելոյ եւ 'ի սպառնալոյ զԳաղիլեացիսն՝ որ կոչեն զինքեանս Քրիստոնեայս. իսկ նոքա ո՛չ դադարեցան 'ի զիմելոյ յամենայն տանջանարանս »։ եւ խնդրէ 'ի կայսերէ տնօրինել՝ որպէս արժանն էր (1)։

Երկրորդ՝ Գեղոս եւ Ղունկիանոս, որք կեցեալ յերկրորդ դարս՝ էին երկրեանն եւ յայտնի թշնամիք Քրիստոնէութեան։ Առաջինն 'ի սոյանէ գրէ. « Տարօրինակ իմն է, զի Քրիստոս մինչ կենդանին էր՝ ո՛չ զոք զարթոյց 'ի հաւատս. իսկ յորժամ մեռաւ՝ Աշակերտք իւր ձգեն 'ի հաւատս զամենայն որ՝ զոր և կամին »(2)։ Իսկ Ղունկիանոս Յոյն մատենագիր գրէ. « Գաւառն Պոնտոսի լի է անաստուածովք և Քրիստոնէիւք »(3)։

Իսկ մերն Ազաթանգեղոս և Յունացն Եւսեբիոս, յորոց առաջինն՝ որ եկաց 'ի սկզբան չորրորդ դարու, յառաջ բերէ 'ի պատմութեան իւրում (4) զերկուս հրովարտակս. մի՝ Տրդատայ առ աշխարհն Հայոց յաղագս բնաջինջ առնելոյ յերկրէ զՔրիստոնէութիւնն. « Զի նոքա անհնարին լինին խափան դիցն պաշտաման »։ երկրորդ՝ զԴիոկղետիանոսի առ Տրդատ, յորում գրէ, թէ Քրիստոնեայք զմեր նախնիսն, զառաջին հարսն՝ զթագաւորսն զառնացուցեալ ձանձրացուցին, զի մեր սուրբս բթեցան, և նոքա ո՛չ զարհուրեցան 'ի մեռանելոյ. . . . և զաշխարհս ամենայն փոխեցին 'ի դիցն պաշտամանէ. . . թէպէտ և ոգիք ոգիք պատուհաս տանջանաց 'ի վերայ եղեալ՝ առաւել եւս տոչորեալ յարգագոյնս տարածեցան ազանդն նոցա։ Թէպէտ և բիւրապատիկ ինչ արհամարս առատից արկաք 'ի վերայ նոցա, առատապէս հեղումն արեանն նոցա առաւել եւս բղխեաց, յորոմէ ուռումն նոցա »(5)։

Եւ երկրորդն՝ որ է Եւսեբիոս, որ եկաց 'ի նմին դարու, պահեաց զերկուսին հրովարտակս Մարսիմիանոսի Բ. յորոց յառաջնումն հրամայէ հալածել առատապէս զամենայն Քրիս-

---

(1) 318։
(2) Աստուածաբան Կեղաց. Գիրք. ԺԱ. Մասն. 46։
(3) 320։
(4) Երես. 107։
(5) Երես. 120—121։

բիտանեանց՝ ասելով, թէ պատճառ չարեաց ամենայնի՝ որ հասին ժամանեցին 'ի վերայ կայսերութեան Հռոմայ, է կրօնական մոլորութիւն Քրիստոնէից, որ ծաւալեաց զիւրաւոր իւր գրեթէ ընդ տիեզերս ամենայն (1). երկրորդն է թագի կայսերն առ գնոս զուսաց, որով ծանուցանէ, թէ նախանձիւ իւր Գիտղեսոնանոս և Մարտիմանոս Հրաման եառեն հալածել ամենայն ուրեք զՔրիստոնեայս. վասն զի բոլոր ժողովուրդն անգամանեալ զոգ պաշտամամբ դիցն՝ յարեալ խառնեցան ընդ ժողովուրդս Քրիստոնէից (2)։

Սուրբն Յուստինոս 'ի տրամախօսութեան իւրում ընդ Տրիֆոնի Հրէի գրէ. « Հաստատէ, զի չիք և ոչ մի ազգ՝ ոչ առ Յոյնս, ոչ առ բարբարոսս, կամ դիւրդ և կաշեային նոքին, եթէ որ բնակին 'ի վրանս, եթէ որ 'ի խորանս, և եթէ որ խոպան անցարկ երամ՝ թափառին այսր անդր հաստիւք իւրեանց, չիք՝ ասեմ, ժողովուրդ և ոչ մի, որ ոչ մատուցանիցէ Հօր և Արարչի ամենայնի զաղօթս և զգոհութիւնս յանուն Ցիսուսի խաչելոյ » (3)։

Իսկ Տերտուղիանոս 'ի Ջատագովութեան իւրում՝ զոր գրեաց առ ժողովուրդն և առ կայսրն Հռոմայ, այսպէս կարդէ գրած իւր. « Դեռ յերկիրն երևեցար մեք, և ընդ ամբոխ զամենայն քաղաք, դիզդիս, զամրոցս, զհրապարակս, զառեանս, զիրաւարանս, զարքունիս, զծերակոյտն և զմեծատանոցս ձեր՝ 'ի ձեզ թողեալ միայն զմեհեանս ձեր։ Կարող էաք յաղթել ձեզ՝ մինչև առանց վտարանքելոյ կամ բառնալոյ ամենեքին զդիցս ինչ, այլ միայն 'ի բաց կալցուս 'ի ձէնջ։ Եթէ մեք՝ որ այսչափ բազմաթիւ եմք, մեկնեալ 'ի ձէնջ՝ գնամ եղեալ գնայաք յերկիր ինչ հեռաւոր, ուր զիւր սասանէր աշխարհ տիրութեան ձերոյ՝ կորստեամբ այրեան քաղաքացեաց. որք եթէ բաժանեալ 'ի ձէնջ 'ի բաց գնայիք, լինէր ձեզ այս 'ի պատիժ պատուհասի։ Սակայիր հարկաւ յամենայնեանէ՝ յորում տեսանելոյ էիք զանձինս. սակայիր՝ ասեմ, 'ի հանուշխորհրդական լռութեանէ և 'ի թմբրութեանէ՝ յորում երևելոյ էր իբրու մեռեալ՝ տիեզերական տիրութիւն ձեր. և հապա դատանիցիք զոր առ ձեզ առ 'ի իշխել նը-մին . . . . » (4)։

---

(1) Գիտութիւն եկեղ. Գիրք. Թ. Գլուխ. Է։
(2) Անդ. Գլուխ. Թ։
(3) Խոսակցութիւն ընդ Տրիֆոնի. Գլուխ. 117։
(4) Ջատագովութիւն. Գլուխ. Գ։

Կրոնն Քրիստոնէական՝ որ նախապատմեալ էր Աստուծոյ 'ի յաւիտենից առ 'ի լինել իրրև միջոցն ամենակատարեալ և անմոլար ճանապարհ Աստուածաճանաչութեան՝ զոր միայն հրեշտակաւոր էր ճանաչել զԱստուած և պաշտել զաստուր կամս նորա, և զրարութիւնն՝ առ 'ի տրել շնորհիւ Միածնի զասպիսեալ զրնութիւն մարդկային, կամ՝ որ նոյն է՝ ծնանիլ վերստին յեւ բան մարմնոյ ծնեալեան նաև 'ի Հոգւոյ, զի կեցցուք յերկրի առ իրրև պանդուխտք՝ միշտ զվերինն խորհելով, ուր Քրիստոս նստի ընդ աջմէ Հօր (Կող. Գ. 1). և իրրև նոր ազգաւոր պատերազմեալք միշտ զինու հոգւոյն ընդդէմ ցանկութեանց մարմնոյ, ընդդէմ փայլչութեանց աշխարհի և ընդդէմ պատրանաց այսոցն չարութեան, մինչև հասցուք լրութեամբ Հաւատոյ և անտատն յուսով 'ի ժառանգութիւն փառացն արքայութեան, երևեցցուք իրօք և զբանիշիցն արդիւնս 'ի նոսանի Հաւատացեալսն. և այսր ամենայնի առ 'ի լինել խոտութեամբ հասու՝ թեանցուք զկրօնս, զարս և զհրամանս ազգաց զարուն՝ յորում երևեցաւ Քրիստոնէութիւնն։

Երիս ցեղք Կրօնից էին 'ի ժամանակին, իսկ Իսրայէլեան և Հեթանոսական. յորոց առաջինն թէպէտ և 'ի սկզբան անդ ճշմարիտ և Աստուծոյ ճշմարտէ յայտնեալ և հաստատեալ, թէպէտ և պանծացեալ ուղիղ Աստուածաճանաչութեամբ, Նահապետացն ոգեշնչութեամբ, Մարգարէիցն քարոզութեամբ, և Օրինացն տուչութեամբ ընդ զարս բազում, այլ անցեալոյ ժամանակաց այնպէս ապաստաղեալ եղծեալ էր, մինչև Հրէից ամենեցուն խառնիլ 'ի միասին և անպիտանանալ, և մինչև հազիւ հազ գտանիլ ուրուք 'ի նոցանէ՝ որ խնդրիցէ զԱստուած։ Վարդապետք Իսրայէլի ո՛չ ևս քարոզէին զօրէն աստուծոյ, այլ միակեալ զարբայութեան երկնից զգրուն՝ ինքեանք ո՛չ մտանէին, և ո՛չ ուրեք թոյլ տային մտանել. տաճարքն էին հաստատութեամբ զժողովուրդն, և անդանէին անհնազանդութեամբ զգաստան և զնաստս (Մատթ. ԻԳ.). կամէին մարդկան բերանս ծանանս, և ինքեանք և ո՛չ ծայրս մատին շարժէին զայն, և զամենայն զգործս իւրեանց գործէին 'ի ցոյց մարդկան։ Փառասէրք նոցա զանց արարեալ զարատութեանն Աստուծոյ՝ ուսուցանէին վարդապետութիւնս զմարդկան պատուիրանս, և զնային իւրարանչիւր որ քան մոլար առանցքեան ձերոյ իւրեանց, և արտաքս հեռացեալ Աստուծոյ՝ շրջամբք և

եթէ պաշտէին զնա (Մատթ. ԺԵ. 3—9)։ Ընդ այս մտխոնակ ապրելոյ զսիրտս երկիրգրէ Աստուծոյ, և շնորհիւ Հոգւոյ նորա որբելոյ՝ մոլորութեամբ հայթայթէին ոչ ոչ միրտութեամբ մարմնոյ, և բաժակաց, և սրընձեանց և մանչանց արդարանալ (Մարկ. Է. 3—4)։ Քանզի այսպէսք Հրէից 'ի սպասս մոռացեալ զմայելչականն փառաւորութիւն Աստուածարարքերոյն՝ զՏաճարն արարեալ էին սովորական փառասանոց. ուր անելիկիս ընդդամութեամբ տային և առնուին, գնէին և վաճառէին զարջաս և զոչխարս, զարջունիս և սրընձաս (Յովհ. Բ. 14—15)։ Զէր 'ի պաշտամունս նոցա հոգեւորութիւն ինչ, այլ յամենայնի մարմնութիւն, յամենայնի ծէս, յամենայնի արարողութիւնք, և առաւել քան զսոցանս՝ փառասիրութիւն և շահասիրութիւն 'ի պաշտաւնեայս սրբութեանցն, ապանդք և հերձուածք յաշխարհս, ապականութիւն բարուց և վարուց յամենեսին, և ընդհանրական բարձումն Աստուածպաշտութեան 'ի միջոց ընտրեալ և սեպհական ժողովրդեան Աստուծոյ (1)։ Եւ յայս ասա 'ի զալ ճշմարիտ Մեսիային՝ ամբարշտութեամբ ապանին զնա յանդիս կախեալ գիրաչէ։

Կրապաշտութիւնն՝ որոյ հիմն հաստատութեան և շինուածն գոլով կեղծ, 'ի ժամանակին յայնմիկ ամենեքեան ես քան զեւ ժամանեալ էր 'ի ծայրագոյն ստորնան խանգարման և ապականութեան, քան որում ամենայն ինչ և ամենայն որ աստուածայեալ էին առ Հեթանոս՝ բայց յԱստուծոյ ճշմարտէ, և թէ աստուածոյն յանկուսն բազմայուցեալ, մինչեւ ոչ միայն իւրաքանչիւր ազգի կամ տէրութեան, այլ դրեթէ իւրաքանչիւր գաւառի և քաղաքի ունել զուրոյն աստուած և աստուածուհի։ Եւ Սինկրիտոսն Հռոմայ ոչ միայն ոչ ամաչէր աստուածացուցանել տակաւին զհնոյս, գրաչս, զկայսերս կորովաբանս և զփարիշս պատերազմաց, այլ և զկերպարանեալ մոլութիւնս ազատեղի դիւութեանց մարմնոյ, ընդ որս նաև սեռս ազգի ազգի անչունչ արարածոց. որպէս զարտ, զրուսին, զաստեղս, զհուր և զջուր, և զջրոյս անթան կենդանեանց՝ որպէս զոյժ և զիոյ, զոձ և զիս կորդիլոս, և այլն։ Իսկ այդ եթէ աստուածք նոցա ինքեանք մեռեալ էին՝ զիա՞րդ կարէին տալ անմահս պաշտելեացն զկենդանութիւն.

---

(1) "Եղծեալ էին կարգք օրինացն՝ ոչ միայն մեծամեծքն, այլ և փոքունքն" (Ս. Ներս. շնորհ. 'ի մեկ. Մատթէ. Երես. 41)։

եթէ 'ի կարծեցեալ աստուծս նոցա չգոյր ոչ արութիւն, ոչ արդարութիւն և ոչ այլ ինչ 'ի գերազանց կատարելութենէ, զիա՞րդ հնար էր այնոցիկ ներշնչել կամ՞ ասել զայնպիսեաւ ազգաց երկրպագուսն։

Բարի և վարի ժողովրդեան գործոցն՝ յորում երեւեցաւ Քրիստոնէութիւնն, խանդարեալ և ապականեալ էին միշտ 'ի բաւական, որպիսին չէր երբէք տեսեալ։ Ամենայն մարդկային մոլի կիրք՝ ցանկութիւնն և ցասմունքն աստուածացուցեալ էին, և օրինակաւ իւրեանց զայսպէս թէ խրախուսէին զամենայն որ գործել զչարիս ամենայն։ Հոգի մեռուանց՝ մարդասիրաբար և տիրամիտ տիեզերաց՝ որ զնոսիս իւրովք ամենայն հպատակաց իւրոց էր նոխատիպ յամենայնի, էր նոցա և նախատիպ ամբարշտութեանց ամենայնի։ Գայրն Տիբերիոսի, Կալիգուլայի, Ներոնի, և Կարակալլայի ժանտի են ամենեցուն։ Դ ժամանակին յայնմիկ տիրին ընդհանրապէս ազանգք երկրին՝ Աստիկեանն և Եգիպտեան. յորոց մին արծարծեալ ունէանէր զամբարտաւանութիւն, միւսն բորբոքեալ բոցափառէր զմարմնական ցանկութիւն։ Մեծատունք Հռոմոյ այնպէս անձնատուր լեալ էին 'ի գոր զեղչութիւնս, որոց նկարագիրն գրեա՛ թէ անշնաստաչի թեւ ամենայն ունէր, և ստորին կարգի ժողովրդեան նմանապէսեամբ նոցա զեղծեալ իրեալ էին անշունապէս յանդուգն գիտութեանց մարմնոյ և մարութեան։

Արդեն Քրիստոնէական 'ի սկզբան անդ յայտնութեան իւրում ասեմ նոցա անհամար աբանելեաց, և զկնի եւս ոչ դադարեցաւ հանդիսացուցանել զնոցնայրսին 'ի վկայութիւն Աստուածայնութեան իւրոյ։ Որ ինչ տեսանի 'ի պատմութեան Քրիստոսի՝ հիմնադրի Եկեղեցոյ նորա։ Ընդեն ապա և 'ի պատմութեան սրբոյ Առաքելոցն, և մի և նոյնն զկնի յամենայն պատմութիւնս Եկեղեցոյ նորա։ Երկրորդ՝ Փրկիչն Քրիստոս իւրև Աստուածամարդ և Սուրբ Առաքեալքն ներշնչեալք 'ի նմանէ՝ իւրեւ 'ի վերուստ երեւեցան լի գերմարդկային իմաստութեամբ՝ առանց ամենեւին ուսանելոյ ինչ 'ի մարդոյ մարդկապէս։ Եղեն լուսաւորք և զկնի Եկեղեցոյ Քրիստոսի արք՝ որք առանց ինչ աշխարհային հրահանգաց ասի 'ի բերան արարեալ պատանեցուցին Աստուածեղէն իմաստութեամբ իւրեանց զգերագոյնս իմաստասիրաց Հելլենասց, երեւեցուցին զձիրս սրատեսութեան, և իսանցան զաստուածային հարուստ ժամանակաց զկնի

հանդերձելոց իրաց (1)։ Կանխագիտութեանն շնորհ այնոքիսի իմն անընդհատութեամբ հանապազորդեալ է յԵկեղեցւոջ Քրիստոսի ընդ ամենայն ժամանակս, մինչեւ յայտնի գոլ ցայժմ սրանց սմանց ընտրելոց՝ հոգեւոր կոչեցեալ փառս բազմաղիմի նախագուշակութեանց նոցա, և գիտելոց զգալանիս խորոց սրտի մարդկան։

Երրորդ՝ Յիսուս Քրիստոս և որք զկնի զնային հետոց նորա Ս. Առաքեալք, հանդիսացան զերամարաւոր սրբութեամբ և զերբրինակ անձնուրացութեամբ փառս սիրոյն Աստուծոյ և եղբարց։ Եղեն բառ ասեմ և յորս զկնի հոլովեցան նոցա ընդ դարս ամենայն սրբակոց Քրիստոնեայք բազումք, անհամար Վկայք և Վարկայուհիք, Ճգնաւորք, Պահեցողք, Աղօթաւորք, Լռակեայք և բազում այլք՝ որք ցուցին յանձին իւրեանց զօրինակս սրանչելի և զոգջիր անհատատոյի անձնուրացութեան և յաւէտ կատարեալ սիրոյ առ Աստուած և առ ընկերս (2)։

Վերջապէս եթէ այդ ևս խնամով որ մեր եղեալ խելամուտ լինիցի մինչեւ մինչեւ Քրիստոնէութեան, զնոյն իսկ անժխտելի զտանէ ապացոյցս բղխմանն այնորիկ յԱստուծոյ. զորօրինակ և Փրկիչն Յիսուս ծանոյց 'ի սիրդանէ։ Եւ անձնիւր Քրիստոնեայ եթէ հաստատեսցէ 'ի մտի լինիլ արդեամբ հաստատեալ հաւատացեալ հշմարիտ, հընարաւոր է նոքա՝ բառ օրինակի այլոց անկեղծ Քրիստոնէից զգալ անձամբ յանձին իւրում, և 'ի մեր առնուլ լիովին զգօրութիւն ամենայնի նշանաց այսոցիկ. այսինքն է՝ կարող է առնուլ 'ի Տեառնէ դիմաստութիւն, զգերազոյն շնորհս սրանչելեաց և յաստուածագիտութեան, և կատարել զմեծամեծ նահատակութիւնս խիզնուրացութեան 'ի սէր Աստուծոյ և եղբարց (Մատթ. ԺԷ. 20։ Յովհ. Է. 17։ Ա. Յովհ. Բ. 27)։

## ՅՕԳՈՒԱԾ ՈՒԹԵՐՈՐԴ.

Հաւատք 'ի Քրիստոս Յիսուս, և արդիւնք հաւատոցն.

Հաւատք կամ հաւատալն է ճանաչել և ընդունիլ սրտի մտօք զայն ամենայն անսխալելի ճշմարտութիւնս՝ զորս յայտնեաց Աստ-

---

(1) Որպէս Մեծն Եւրեպէս, տուրքն Սաղմոս Պարթև և այլք։
(2) Տես 'ի Յայտնութիւն և 'ի վերս Հարց։

ասած 'ի Հին և 'ի Նոր Կտակարանս, այսինքն է դղեակութիւն իւր և դյուակութիւնս, զորինս և զարտուիրանս զրաշխարս յաղագս ուղղութեամբ ճանաչելոյ և պաշտելոյ մարդկան զԱստուծոյ իւրեանց, և Աստուածախնդրաց իմն կենցաղավարութեամբ ժառանգելոյ զհանդերձեալ արքայութիւն, և ևս զոր ինչ գրեալ է յաղագս արարչութեան և նախախնամութեան արարածոց ամենայնի՝ որ ինչ յերկինս և որ յերկրի, խառնվանիլ հաստատեցեամբ։

Հաստատ՝ բան մեկնելոյ սուրբ Գրոց բաժանին 'ի կենդանի կամ 'ի ճշմարիտ, և 'ի մեռեալ կամ 'ի կեղծ։

Կենդանի կամ ճշմարիտ ասի Հաստատ, յորում մարդ՝ զորս ճանաչէ մտաւ, և խառնվանի շրթամբ զսա 'ի յԱստուծոյ յայտնեալ յԱստուածաշունչ գիրս ճշմարտութիւնս, զայն ամենայն ընդունի միտմամբ սրտի, և ընտ արդեամբ և իրաւ (Երր. ԺԱ. 1—40։ Մատթ. Թ. 20—22։ Հռոմ. Ե. 9—10)։ Ներհակ սին՝ Հաստատ ասի մեռեալ կամ կեղծ, յորմէ թէեւ ձեւանայ ճանաչել զամենայն, թէեւ ճանաչէ և խառնվանի շրթամբ մարդ զսա 'ի նմանէ 'ի ձեռն Մարգարէից և Առաքելոց բարոյական ճշմարտութիւնս, այլ ոչ աչօք և Եթ. իրաւ զի զոր ինչ կարդացեալ ճանաչել մտաւ, զնոյնն ժխտել 'ի սրտի թերահաւատութեամբ և խառնարարութեամբ. զոր ինչ զաւանի բերանով՝ ուրանայ զնոյնն գործովք (Մատթ. ԺԷ. 19)։

Այս ուրեմն ասի փրկութիւն մարդկան պարգևին Հաստատ յամենատուր Երրորդութիւնն, բայց Հաստատ կենդանի, Հաստատ ճշմարիտ (1), Հաստատ ամենայն գործովք բարեաց. բան որում մարդն արդարանայ՝ ոչ 'ի գործոց օրինաց, այլ 'ի Հաստատոյ (Հռոմ. ԺԱ. 6։ Եփես. Բ. 9։ Բ. Տիմոթ. Ա. 9։ Մարկ. ԺԶ. 16։ Յովհ. Գ. 15—16). ոչ մարդկային ինչ արժանաւորութեամբ կամ արդեամբք, այլ արդեամբ չարչարանաց խաչի Աստուածարդոյն (Եբր. ԿԳ. 9։ Եփես. Ե. 23). և բան որում փրկութիւնն արարչի Հաստատոյնոյ՝ ոչ իրր 'ի վարձ բարեգործութեան, այլ իրր ձրի շնորհ Աստուծոյ (Հռոմ. Գ. 16։ Եփես. Բ. 5. 8). ոչ բան մարդկան կամաց ինչ կամ յօժարութեան, այլ բան ամբաւ ողորմութեան Աստուծոյ (Ա՚ոմ. Գ. 8. ԼԷ. 39։ Ա. Կորնթ. ԺԲ. 9). որ կամի, զի ամենայն մարդիկ կեցցեն՝ զարով 'ի ձեռն Հաստատոյ 'ի գիտութիւն ճշմարտութեան։ Իսկ գործք բարեաց՝ որոց փոխանակ խառնա-

նոյ Աստուած վարձս ասա և 'ի հանգերձելումն, է պարտք խրատեցիր Հաւատացելոց, որք իրրև ծառայք պարտական են և պատուոյ բարի առնել՝ առ 'ի ցուցանել զնոսա, թէ զոյ յիներնաներս Հաւատոյ կենդանի և պտղաբեր, որ ասոյ զպատուոյ իւր 'ի ժամս։ Որպէս մարդն արդարանայ 'ի Հաւատոյ, նոյնպէս և Հաւատացն արժան է պարտ է արդարանալ 'ի գործոց. քան զի բազում Հաւատք մեռեալ են առանց գործոց. եւ երկրորդն նոյնս արժան է արդարանալ 'ի յաւոյ, և ասա 'ի հանդիսակ առաքինութեանց։

Բայց 'ի Հաւատոյն՝ որ առ ամենատուր Երրորդութիւն անձանց Աստուածութեան հաւատարուցիս, պարտական է անշուշտ խրատանշիր զի զաւանիլ զՅիսուս Քրիստոս յատկապէս՝ իրրև միմիայն 'ի յաւիտենից արարատաւոր Փրկիչ աշխարհի (Եսայ. Խե. 21—22. ԾԹ. 16։ Գործ. Դ. 12), իրրև միմիայն զերազոյն Միջնորդ կատարեալ հաշտութեան և մշանջենաւոր խաղաղութեան ընդ Հայր Աստուած և ընդ մարդիկ (Եսայ. ԽԹ. 6։ Երր. Ե. 9։ Հռոմ. Ե. 10։ Ա. Տիմ. Բ. 5). որ առ 'ի բառնալ զմեզս ամենեցուն՝ ինքնին եղեւ մեզք (Ռոմկ. Դ. 8։ Բ. Կորնթ. Ե. 21). որ առ 'ի վերացուցանել զանէծս օրինաց՝ ինքնին եղեւ անէծք (Գաղ. Գ. 13։ Բ. Օրին. ԻԱ. 23). որ առ 'ի ազատել զմարդիկ 'ի զերութենէ սատանայի և 'ի մեղաց՝ քարոզեաց զնոր ուխտ Աւետարանին (Հռոմ. Ա. 16։ Ա. Կորնթ. Ա. 18. 21). որ առ 'ի փրկել զաշխարհ 'ի յաւիտենական մահուանէն՝ յանձն էառ կամաւ զմահ (Յովհ. Գ. 16—17. ԺԴ. 13։ Գաղ. Ա. 4). որ և նստեալ ընդ աջմէ Հօր յերկինս՝ իրրև Քահանայապետս անանցանելի միշտ բարեխօսէ մեզ (Երր. Դ. 14. Է. 25. Թ. 24). որ և 'ի կատարածի աշխարհս յայտնելոց է 'ի զատել զկենդանս և զմեռեալս, և հատուցանել իւրաքանչիւր ոմեք ըստ հաւատոյ և ըստ գործոց իւրոց (Մատթ. ԻԴ. 30. ԻԵ. 6։ Ղուկ. ԺԲ. 36. 39. ԺԹ. 12. 15։ Ա. Պետր. Է. 13)։

---

## ԳԼՈՒԽ Գ·

## ՅՕԳՈՒԱԾ ԱՌԱՋԻՆ·

### Ընդհանրական Եկեղեցի Քրիստոսի·

Եկեղեցին Քրիստոսի է հոգեւոր միաբանութիւն մարդկան, որք միով Ճշմարիտ հաւատով, միով հոգւով և միով մկրտութեամբ հաւատան և պաշտեն զմի Աստուած, միով հաւատոն յուսով ակն ունին կեցման երկնից, և միով անկեղծ սիրով միացեալ են ընդ Աստուծոյ և ընդ միմեանս (Եփես. Դ. 3—6)։ Յայս սակս Եկեղեցին իբրեւ գնեալ արեամբ Քրիստոսի՝ տուրբ է յամենայն աղտեղութենէ, և մաքուր շուրթ հեղգանդ նմա յամենայնի (Գործ. Ի. 28։ Եփես. Ե. 25)։ Իբրեւ ընտրեալ յԱստուծոյ 'ի ժառանգութիւն արքայութեան՝ Եկեղեցին Քրիստոսի զգեցեալ է զարդարութիւն և զփառս (Յայտ. ԺԹ. 8։ Եփես. Ե. 27։ Սաղմ. ԽԵ. 13)։ Իբրեւ առարկայ Աստուածային շնորհաց՝ Եկեղեցին Քրիստոսի ածի Հաւատով և Հաւատացեալքով օր ըստ օրէ (Գործ. Թ. 14. ԺԱ. 24)։ և իբրեւ շինուած իմաստութեան Աստուծոյ՝ պատրաստէ Տէր ինքնին 'ի սիւնս ապաստարութեան Եկեղեցւոյ իւրոյ՝ հոմիւս և պաշտեալս 'ի գոլեալս փառաց իւրոյ (Երեմ. Գ. 15։ Գործ. Խ. 28։ Եփես. Դ. 11—12)։

Եկեղեցին Քրիստոսի փոխարերութեամբ առեալ 'ի տուրբ Գիրս՝ մերթ յաղագս գերամարդեղ սրբութեանն, անապատութեանն և անարատութեանն կոչի Հարսն Քրիստոսի (Յայտ. ԻԱ. 9)։ մերթ յաղագս ընտրեալ և որոշեալ զոյց յամենայն ընկեցեալ աշխարհաց և 'ի մեղաւ կրօնից՝ Վիճակ, Ժառանգութիւն և ցանկալի Բաժին Աստուծոյ (Երեմ. ԺԲ։ 10։ Բ. Օրին. ԼԲ. 9)։ մերթ յաղագս ընդունելոյ զՀոգին Քրիստոսի, և անխախտ յոգիս միանալոյ ընդ նմա՝ Մարմին Քրիստոսի (Եփես. Ա. 22. 23։ Կորս. Ա. 24)։ մերթ յաղագս նմանելոյ Քրիստոնէական միութեանն՝ փարախի ոչխարաց՝ Հօտ Աստուծոյ (Եզեկ. ԼԴ. 15։

Ա. Պետր. Ե. 2), մերթ յաղագս առաջնորդելոյ Աստուածելոյն Հոգւոյն, և սուրբ պարհելոյ զոյն 'ի պղծութենէ հոգւոյ և մարմնոյ՝ Եկեղեցի և Տաճար Աստուծոյ կենդանւոյ (Ա. Տիմ. Գ. 15; Բ. Կորնթ. Զ. 16), մերթ յաղագս մշտնջենաւորապէս ա-նեղծ Հաւատոյ Յեկեղեցւոջ Քրիստոսի անմրցելոյ մատակարարու-թիւնն հաստատութիւնք Հաւատոյ՝ Սիրոյ և Հաստատութիւնն ճշ-մարտութիւնն (Ա. Տիմ. Գ. 15), մերթ վասն զարհանալոյ ա-մենայն Եկեղեցւոյն Քրիստոսի 'ի գլխաւորութիւնն հաստատութեանցն Հաւատոյն, և պատրաստելոյ 'ի գործս բարիս՝ Այդր Տեսանն (Եբրայ. ԺԲ. 10; Մատթ. ԻԱ. 41), մերթ յաղագս նոր ա-բարեալ գալոյ Եկեղեցւոյն՝ մերկանալով զմարդն հին, և զգենու-լանելոյ 'ի հին Հրէականն Երուսաղեմէ՝ նոր և երկնային Երու-սաղէմ (Գաղ. Գ. 26; Եբր. ԺԲ. 22; Յայտ. ԻԱ. 2. եւայլն); Անդամք Եկեղեցւոյ իրրեւ ժողովուրդ հոգեւոր թագա-ւորութիւնն Քրիստոսի (Յով. Ա. 49; Ղուկ. Ա. 32), և իրրեւ բնակիչք տանն Աստուծոյ և քաղաքի Արքայի (Եփես. Բ. 19. Ա. 18)՝ յաղագս եւս քան զեւս զարգացման խորհրդոցն 'ի նոցանէ, 'ի Հաւատս և 'ի բարեբարոյութիւնն, և բարեւ մատակարարութիւնն հաստատութիւնքն և պաշտամունքն Երանի, և ոչնչանալ գործոց Քրիստոնէական միաբանութիւնն՝ բանա-ձեւն բուռ Աստուածային ասմանաստութիւնն 'ի կարգս երկուս; Կարգ Քահանայութիւնն 'ի սուրբ Գիրս ոչ ոչն ամենայն կոչի՝ բուռ ոչ ապրանութիւնն պաշտամունքն և սարանութիւնն ունցին. զարարիմակ. Աստուածոյ (Ղուկ. Զ. 13), Աւետարանիչք (Եփես. Գ. 11), Պաշտամանոյք Աւետարանի (Եփես. Գ. 7). Հովիւք (Եփես. Գ. 11), Վարդապետք (Եփես. Գ. 11), Տնտուք խորհրդոցն Աստուծոյ (Ա. Կորնթ. Գ. 1), Տնտուք շնորհացն Աստուծոյ (Ա. Պետր. Դ. 10), Հրեշտակք Եկեղեցւոյ (Յայտ. Ա. 20), Պատգամաւորք Քրիստոսի (Բ. Կորնթ. Ե. 20), Երիցունք (Ա. Տիմ. Ե. 17), Տեսուչք կամ Եպիսկոպոսք (Գործ. Ի. 20; Ա. Տիմոթ. Գ. 1), Գործակիցք Աստուծոյ (Բ. Կորնթ. Զ. 1) եւայլն. յորոց կարգի Արքայազնութիւնն (Իշ-խանութիւն) և ուսուցիչ Եկեղեցին (Մատթ. ԺԲ. 15—19. ԻԲ. 19—20; Ա. Կորնթ. ԺԲ. 28—29; Ա. Տիմ. Գ. 15. և-այլն); Կարգն երկրորդ՝ որ են ասկ աշխարհականք, կոչի 'ի սուրբ Գիրս՝ Հօտ (Ա. Պետր. Ե. 2), Եղբարք (Ա. Տիմ. Գ. Ե), Ոչխարք և Գառինք (Յով. ԻԱ. 15—16), Ժողովուրդ

Տեառն (Գործ. Ի. 28), 'ի միտքն առեալ՝ ուսանող Եկեղեցի կամ Ուխտ աշխարհական։

Հեղինակ սրբասաստութեան և փարպապետութեան մնացեալ Հաւատոյ՝ է ինքն միայն Յիսուս Քրիստոս, որ իրրև երևեցաւ յաշխարհս առ 'ի կատարել զմեծ գործ փրկութեան մարդկան, զառաջինն ինքեան միայնոյ անպիտանակոյց գկատարողութիւն ուսուցանելոյ զնշմարտութիւնս Հաւատոյ՝ ընկալեալ առ 'ի Հօրէ. «Հոգի Տեառն 'ի վերայ իմ. վասն որոյ և օծ իսկ զիս, աւետարանել աղքատաց առաքեաց զիս, բժշկել զրեկեալս սրտօք, քարոզել գերեալց զթողութիւն, և կուրաց տեսանել, արձակել զվիրաւորս 'ի թողութիւն, քարոզել զտարեկան Տեառն ընդունելի» (Ղուկ. Դ. 18—19). և շրջեալ բնդ քաղաքս և բնդ գեղս քարոզելով զԱւետարան՝ վկայեաց. «Թէ յայլ իսկ առաքեալ է» (Ղուկ. Դ. 43). «Յայլ իսկ ծնեալ, և 'ի դոյն իսկ ելեալ յաշխարհս» (Յովհ. ԺԶ. 37). պատուէր անդէն և անդ ժողովրդեան և Աշակերտաց 'ի վերայ եդեալ. «Մի զոր կոչէք վարդապետ, զի մի է ձեր ուսուցիչ (որ է Քրիստոս)։ Մի կոչիր ուսուցիչ, զի ուսուցիչ ձեր Քրիստոս է» (Մատթ. ԻԳ. 1. 8. 10)։ Յետ որոյ ընտրեալ 'ի միջոյ ամենայն բազմութեան ունկնդրաց խրոց յայս գերագոյն պաշտաւն ուսուցչութեան նոսա՝ զերկուսանեան, և ապա զեօթանասունսն՝ 'ի նոսա յանձն արար զառ 'ի յԱւետարանս առեալ գկարգաւորութիւն ուսուցչութեան (Ղուկ. Զ. 13. Ժ. 1. եւայլն). նոսա՝ ժամանակաւորապէս, մինչև բնդ յերկրի էր, զի քարոզեսցեն զԱւետարանն ապրարարութեան «Աշխարհացն և եկեղեցոյ տանն Իսրայէլի» (Մատթ. Ժ. 5—19). յետոյ մշանջենաւորապէս, յորժամ յարուցեալ 'ի գերեզմանէ, և 'ի դէպս հանեալ զնորոգ տնտեսութիւնն՝ հաստատեալ առ Հայր՝ ասացեալ առ նոսա. «Որպէս առաքեաց զիս Հայր, և ես առաքեմ զձեզ» (Յովհ. Ի. 21). «Գնացէք ուսուցէք զամենայն Հեթանոսս, մկրտեցէք զնոսա յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ» (Մատթ. ԻԸ. 18) և ասէն յանդիման և ասէակի ապառնաբար պարարարեալ զամենայն որ և գնանոցերձեալ Քրիստոնեայս զամենեսին՝ հնազանդութեամբ բնդունիլ գվարդապետութիւն նոցա. «Որ ձեզ լսէ՝ ինձ լսէ. և որ զձեզ անարգէ՝ զիս անարգէ. և որ զիս անարգէ՝ զառաքիչն իմ անարգէ» (Ղուկ. Ժ. 16։ Մատթ. Ժ. 14. ԺԲ. 15—19։ Մարկ. ԺԶ. 16)։

Յետ յանձն առնելոյ Աստուածային բարկութիւն ուսուցչութեան՝ հաճեցաւ Տէրն, զի 'ի նոցանէ անցցէ այն անմիջապար 'ի յաջորդս նոցա, և 'ի սոցունց փոխանցեալ յազգէ յազգ՝ պահեսցի յԵկեղեցւոջ մշանջենաւորապէս մինչ ցվախճան աշխարհի. յայս սակս և ասաց զԱշակերտս իւր. «Երթայք յաշխարհ ամենայն, և քարոզեցէք զԱւետարանն ամենայն արարածոց... որպէս առաքեաց զիս Հայր, և ես առաքեմ զձեզ։ Գնացէք այսուհետեւ, աշակերտեցէք զամենայն Հեթանոս, մկրտեցէք զնոսա յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ. ուսուցէք նոցա պահել զամենայն՝ զոր ինչ պատուիրեցի ձեզ. և ահաւասիկ ես ընդ ձեզ եմ զամենայն աւուրս մինչեւ 'ի կատարած աշխարհի» (Մարկ. ԺԶ. 15։ Մատթ. ԻԸ. 18. 20)։ Աշակերտքն՝ որպէս յայտ է, ոչ ապրեցան մինչ ցկատարած աշխարհի. և եթէ կարող եղեն քարոզել զԱւետարանն ամենեցուն՝ որ 'ի դարս առաջին կեցին Հեթանոսք, բայց և այնպէս ոչ զօրեցին քարոզել զնոյնն՝ որ 'ի հանդերձեալ դարս գալոց են յաշխարհ ազգք։ Այսպէս արեամբ 'ի դէմս Աստուածոյ իւրոց կոչոյց Փրկիչն 'ի պաշտօն տիեզերական քարոզութեան զհանդերձեալ փոխանորդս նոցա զամենայն, որոց ըստ առաջնոյն ասացեալ խոստացաւ լինիլ զործակից։ Մի որ մտացածին ինչ համարիցի՝ զոր ասեմ. այլ սոյգ և հաւատարիմ վարդապետութիւն մեր ուրուք 'ի զլխաւոր Աստուածոյն. որ վկայէ, թէ ինքն Քրիստոս ետ Եկեղեցւոյ իւրում ոչ միայն «զԱռաքեալս, զՄարգարէս, զԱւետարանիչս, այլ նաև զՀովիս և զՎարդապետս» (Եփես. Դ. 11)։

Աստուածոյն անտարակոյս քաջ գիտելով զկամս Տեառն իւրեանց, և առաջնորդեալք Հոգւով Նորա յամենայնի՝ յայտնեցան հետեւեցան օրինակի Նորա. զի ինքեանց և եթէ վերապահեցին զիրաւունս ուսուցչութեան՝ զոր ընկալան 'ի Տեառնէ (Գործ. Ե. 42. Զ. 1—6), առ ոչինչ համարեալ զամենայն արդեալս թշնամեաց (Գործ. Դ. 19. Ե. 28—29), և վկայեալ իրարանցիւր որ զանձնէ իւրմէ. «Եթէ աւետարանեմ՝ ոչինչ են ինձ պարծանք, քանզի հարկ 'ի վերայ կայ. բայց վա՛յ է ինձ, եթէ ոչ աւետարանեմ» (Ա. Կորնթ. Թ. 16). զի աւանդեցին ապա զԱստուածային իրաւունս իւրեանց փոխանորդաց իւրեանց՝ Եպիսկոպոսաց և Երիցանց, զորս անձամբ ընտրեցին և կացուցին (Գործ. ԺԴ. 23. Ի. 28)՝ պատուէր 'ի վերայ եղեալ նոցա

ուսուցանել 'ի ժամու և 'ի տարաժամու ամենայն համբերութեամբ և երկայնմտութեամբ (Բ. Տիմ. Դ. 2—5 ։ Ա. Տիմ. Դ. Զ. 14). զի հրամայեցին յատկապէս ընտրեալ և ձեռնադրեալ արանցդ սպասիկ (Գործ. Ի. 28) առանձել զսա 'ի յԱստուծոյ առեալ զիշխանութիւնն ուսուցչութեան՝ և այլոց նոյնպէս նախապատրաստեալ և ընտրեալ արանց (Բ. Տիմ. Բ. 2 ։ Ա. Տիտ. Ա. 5 և 9) իրրև յաջորդաց իւրեանց. զի արդեքն յայտնապէս արանց անարժանից յանիշխանել զիշխանութիւնս զայս. «Զիա՞րդ քարոզեսցեն, եթէ ո՛չ առաքեսցին» (Հռոմ. Ժ. 16)՝ հարցանէ մեծ Պարդապետն Հեթանոսաց. «Որքէ ամենեքին առաքեա՞լք իցեն, որքէ ամենեքին մարգարէ՞ք իցեն, որքէ ամենեքին վարդապե՞տք իցեն» (Ա. Կորնթ. ԺԲ. 29). և պատասխանէ առնէ 'ի միւսում թղթի. «Ոչ եթէ անձամբ ոք առնու պատիւ, այլ կոչեցեալն յԱստուծոյ, որպէս և Ահարոն» (Եբր. Ե. 4). զի յորդորեցին և պարտաւորեցին ընդհանրապէս զՀաւատացեալս ամենայն՝ ասելով. «Ունկնդիր լերուք առաջնորդաց ձերոց, և հրամանաւ կացէք նոցա. զի նոքա տքնին վասն ոգւոյ ձերոյ, որպէս թէ հաշուս տալոց իցեն ընդ ձեր» (Եբր. ԺԳ. 17)։

Յամենայնէ՝ որ ինչ գրեցաւն ցարդ, երևի յայտնապէս, զի վարդապետութիւն բանին Աստուծոյ, եպիսկոպոսութիւն՝ որ է վերատեսչութիւն, և երիցութիւն՝ որ է հովուութիւն, որոց ամբողջութիւնն կոչի ժառանգաւորութիւն և ոսկեայ եկեղեցւոյ կամ կարգ քահանայութեան, է անբեկրայ տեսմանաղրութիւն Աստուծոյ. որք 'ի Յիսուսէ Քրիստոսէ ընկալեալ ուղղակի զիրաւունս իւրեանց և զկենդանութիւն՝ պարտական են ընդ երկիրս յաւիտենական կորուստն (Եղեկ. Գ. 18)՝ Ա. Հանապազորդեան քարոզութեամբ բանին Աստուծոյ, և ողջամիտ մեկնութեամբ հին և նոր Կտակարանաց՝ հաստատել և ընդարձակել զԵկեղեցին Աստուծոյ կենդանւոյ 'ի խմբի Հաւատացելոց և անհաւատից հաստատապէս՝ զիմաստուն լինելով ներկիր համարձակութեամբ ամենայն վտանգաց (Մատթ. Ժ. 26—28). Բ. Այժմեամբ ուղղութեամբ մատակարարել զկիրութիւն, զհաղորդութիւն, զձեռնադրութիւն և զայլ սրբարար խորհուրդս Եկեղեցւոյ 'ի շինութիւն և 'ի փրկութիւն Հաւատացելոց (Ղուկ. ԻԲ. 19 ։ Մատթ. ԻԸ. 19 ։ Գործ. Բ. 46. Զ. 3. 4. 6). Գ. Զյանցաւորս զղջացեալս ընդունել Եկեղեցի, և խառնել 'ի միաբանութիւն Հաւատացելոց

ցին՝ արձակելով զնոսա 'ի կապից մեղաց, իսկ զանդեղջան և ըղկամակոր մոլորեալսն սրատաքել Եկեղեցւոյ, և բանադրելով հատանել 'ի միաբանութենէ Հաւատացելոց (1) (Մատթ. ԺԶ. 16. ԺԸ. 18։ Ա. Կորնթ. Ե. 3—5 և 13։ Ա. Տիմ. Ա. 20). Գ. Ա.նրամբաս և առաքելոցն կենցաղավարութեամբ լինել օրինակ զարգացման ժողովրդեան Ա.ստուածանական կատարելութիւնս (Ա. Կորնթ. ԺԳ. 40։ Ա. Պետր. Ե. 1—3). Ե. Տնօրինել միաբանութեամբ դիրողութիւնս ամենայն՝ որ զինեղոց Կրօնի, մաքրութեան վարուց և բարուց և կատարարութեան գործոց Եկեղեցւոյ (Գործ. ԺԵ. 6—29։ Ա. Պետր. Ա. 5—9) եւայլն։

Եկեղեցին Քրիստոսի թէպէտ մի է, բայց ներքսամամբ ատի և երկնային կենաց անդամոց իւրոց՝ բաժանի 'ի զինուորեալ, որ է միաբանութիւն կենդանի Հաւատացելոց՝ որոց տակաւին գոլով 'ի կեանս յաշխարհի՝ իրրեւ զօրականք Քրիստոսի ապատարգինեալ յուսով երանական կենաց, հաւատովք և անկեղծ սիրով առ Ա.ստուած և առ ընկերս՝ մարտ եղեալ կուսին ընդդէմ որոգայթից սատանայի, ընդ դէմ ոգեորանաց աշխարհի, և ընդ դէմ ազատղի ցանկութեանց մարմնոյ, մինչև հասցեն 'ի նաւահանգիստ կենաց անխախտանից Ա.ստուածահաճոյ կենցաղավարութեամբ (Ա. Յովհ. Ե. 4—5։ Ա. Կորնթ. Թ. 27։ Երր. ԺԲ. 1—4։ Գաղ. Ե. 16 և 22։ Կող. Գ. 5։ Եփես. Զ. 11—13). և 'ի յաղթական, որ է զումար հանդուցեալ 'ի Քրիստոս Սրբոց, որոց սնդեալ զմէջս իւրեանց ճշմարտութեամբ Ա.ստուածանին, և զդեցեալ զգրահս սրբութեան՝ մարտուցեալ յաղթեցին վասնաւն Հաւատոց յաւուր կեանս՝ մերենայեալ սրոց չարութեան, հակառակ կացին մեղաց, գործեցին զարգարութիւն, և վերաբերեալ յերկնայինն Երուսաղէմ՝ վայելեն անեկալութեամբ 'ի փառս յանապատում (Երր. ԺԲ. 22—23։ Յայտ. ԺԳ. 8. Ի. 15. ԻԲ. 4։ Յովհ. ԺԷ. 24)։

Եկեղեցին Ա.ստուծոյ թէ և մի է բան Հաւատոյն միաբանութեան և բան կոչման Հաւատացելոցն, բայց բան ժամանակի և

---

(1) "Որպէս զի յայսմ հետէ կայցի իշխանութիւն առաքելական (Episkopos) կապել զապաստամբեալսն յորմէնացն Ա.ստուծոյ յերկինս և յերկրի, և զզարձեալսն յապաշաւանս 'ի վաստակաց գործոց՝ արձակել 'ի կապանաց մեղաց, յորմամ ցուցցեն զպատուն արժանաւոր ապաշխարութեան"։ Ի. Հիշանդրական. Երես. 194։

ըստ այլ և այլ նեղբին և արտաքին հանգամանաց՝ այլ և այլ անուամբ կոչի. նախ՝ Ղաշտալեական Եկեղեցի, որ յաւուրց անտի նախնեաց մարդոյն սկսեալ 'ի դրախտի, և յաւուրս Զրհեղեղին ամփոփեալ 'ի Ղշտեան տապանի՝ պահեցաւ ողջ անաղարտ մինչև ցԱբրահամ։ Երկրորդ՝ Խորայելեան Եկեղեցի, որ 'ի ձեռն ոմանց ընդ մէջ Աստուծոյ և Աբրահամու հօրն Հաստատեալ տեւեաց մինչև ցՄովսէս։ Երրորդ՝ Մովսիսական կամ դրաւոր օրինաց Եկեղեցի՝ ընդարձակեալ և հոխացուցեալ 'ի Սինա սահմանադրութեամբ ծխոյ և արարողութեանց զոհից և պաշտամանց, տեւեալ մինչև ցդալուստ խոստացեալ 'ի սկզբանէ աշխարհի Հշմարիտ Մեսսիային։ Երկու ինչ արժանի են դիտողութեան 'ի նախաբրիստոսական Եկեղեցւոջ. նախ՝ արտաքին պաշտամունք, արարողութիւնք և պատարագք անասանց՝ իբրեւ առ ժամանակեայք և մարմնաւորք խորհրդոց էին յետ ժամանակաց. իսկ երկրորդն, այն է ակնկալութիւն խոստացեալ Մեսիային, որ էրն միանգամայն և հոգի Խորայելեան կրօնի, իբրեւ անանցանելի քան առաւել ևս ընդարձակեցաւ, լուսաւորեցաւ և կատարելագործեցաւ նորոգեալ ոգեղէն 'ի ձեռն Ցիսուսի Քրիստոսի Փրկչի մերոյ. որ և հանապազորդելոյ է անայլայլելի և անփոփոխելի Հայրականութեամբ յաւիտեան և յաւիտեանս յաւիտենից (1) (Ծնեղոց. ԺԵ. 7—18. ԺԷ. 2—14։ Ելից. Զ. 4։ Գործ. Գ. 25։ Երեմ. ԼԱ. 31—33։ Ա. Պետր. Գ. 20։ Բ. Պետր. Բ. 5։ Եբր. Ը. 8. 10. 13. Թ. Ժ. ԺԱ. 7։ Սաղմ. ՃԺԱ. 9. Եսայ. ԾԵ. 3. ԿԱ. 8։ Եղեկ. ԺԶ. 60. 63։ Եր. ԺԳ. 20)։

Եկեղեցին Քրիստոսի մի է յաղագս միութեանն Աստուծոյ, միութեան մկրտութեանն, միութեան Հաստատոյ, միութեան յուսոյ և միոյ սիրոյ Հաստատչելոյն, ևս և յաղագս միոյ Միջնորդի իսաղաղութեան ընդ Աստուած և ընդ մարդիկ (2). և ընդհանրա-

---

(1) «Առաջին (Եկեղեցի) Հայրապետաց 'ի Նոյ' ուխտին, զոր հաստատեցին տուն Սեթայն. զի զատեալ որոշեալ էին 'ի կայենեան տանէ անտի. մինչև ևս 'ի Նոյէ ցԱբրահամ. զի մի կեղծիցեն՝ ասէ, արքին. ետու ձեզ՝ ասէ, զտանեսցի իրրեւ զրանցայս վասն զի. բայց մինչև այրեն և չունիցի մի ուսիցիք։ Եւ ցԱբրահամէ 'ի Մովսէս թլփատութեամբ առանց օրինաց։ Եւ 'ի Մովսիսէ մինչև 'ի ծագել նոր Օրինաց, և կատարեցան. և չիք այն՝ որ փոխել և անցուցանել» (Ս. Ներսես. Շնորհ. 'ի Մեկն. Մատթ. Երես. 14)։

(2) «Ցամենայն ազգաց և լեզուաց՝ որք աշխարհատեցան Աւետարանին, և 'ի

կան, որ յինքն ժողովեալ ամփոփէ զամենայն դՀոգւով և դՅիրչմարտութեամբ վերածնեալ երկրպագուս ամենասուրբ Երրորդութեան՝ եթէ Հայր, եթէ Յոյն, եթէ Հռոմայեցի, եթէ Երրայեցի, եթէ այր, եթէ կին, եթէ ազատ և եթէ ծառայ. քայց և այնպէս բան զանազանութեան աշխարհական դրիցն և բան այլեայլութեան 'ի պաշտամունս ինչ՝ կոչի և Եկեղեցին՝ Արևելեան, Արևմտեան, և բան տարբերութեան ազգաց, զատաց և բաղբաց՝ կոչի Եկեղեցի Հայոց, Եկեղեցի Յունաց, Եկեղեցի Երուսաղեմի, Եկեղեցի Անտիոքայ, Եկեղեցի Ասիացոց, Եկեղեցի Երրայեցոց, և այլն։ Այլ ամենեքին ոչա մի են, եթէ է 'ի սուս միութիւն Հօրն, միութիւն մկրտութեան, միութիւն Հնմարիտ Հաւատոյ, հաստատուն յուսոյ և անկեղծ սիրոյ, և հաղորդութեան. իբր զի ոչա և եթէ են յԱստուածային գիրս ծանուցեալ յոգւակիսայր և յատկանիշք Կաթողիկէութեան Եկեղեցւոյ, որպէս և Առաքեալն ասէ. «Որք միանգամ 'ի Քրիստոս մկրտեցարուք, զՔրիստոս զգեցեալ էք. չիք խորիր՝ ոչ Հրէի և ոչ Հեթանոսի, ոչ ծառայի և ոչ ազատի, ոչ արուի և ոչ իգի. զի ամենեքին զուր մի էք 'ի Քրիստոս Յիսուս» (Գալ. Գ. 37—28)։ «Մի մարմին և մի Հոգի, որպէս և կոչեցարուք 'ի մի յոյս կոչման ձերոյ։ Մի է Տէր, մի հաւատք, մի մկրտութիւն, մի Աստուած և Հայր ամենեցուն, որ 'ի վերայ ամենայնի և ընդ ամենեսին և յամենեսին 'ի մեզ» (Եփես. Դ. 4—6)։ «Մի հայց, մի մարմին եմք բազումքս. զի ամենեքին 'ի միոջէ հացէ առնուն վայելեմք» (Ա. Կորնթ. Ժ. 17)։ «Այլ ոչ վասն նոցա

---

վէճն (Քրիստոս) հաստատեալք մերձեցան, յամենեցունց մի Տաճար հոգևոր և մի Եկեղեցի շինեցան,, (Սարգ. Շնորհ. 'ի Մեկն. Ա. Պետր. Ճառ. Դ)։

«Որպէս մի է Տէր Աստուած Հայր, և մի է Տէր Յիսուս Քրիստոս՝ Որդի Աստուծոյ Հօր, և մի է Հոգին սուրբ վառակիր Հօր և Որդւոյ. և մի է Երրորդութենէն նոյն բնութեան Որդի, որ միացաւ 'ի մարդկութիւնն. մի է և Կաթողիկէ Եկեղեցի՝ չինեալ և հաստատեալ 'ի նա Առաքելական դասանմամբ, նմանապէս և մի մկրտութիւն,, (Ղևոնդ. Լամբր. 'ի Մեկն. Պատարագի. Երես. 60—61)։

«Ոակի խորհրդոցն՝ զՄեծն հաստատութեանն անշարժութեանն է, և զիանն հրեղէն՝ Կաթողիկէ Եկեղեցի է, որ ժողովէ զամենայն զժողովս 'ի միաբանութիւն Հաւատոց 'ի ներքոյ թևոց իւրոց,, (Ագաթանգ. Երես. 557)։

«Իսկ զի բարձր է զիանն առաջին, զի մեծ և բարձր է զաստիս Կաթողիկէ Եկեղեցւոյ յան զամենայն Արդոյն. իսկ կամարքն՝ որ 'ի սեանց անտի 'ի միմեանս կապեալն, զայնքան է հաստատութիւն միաբանութեան Կաթողիկէ Եկեղեցւոյ,, (Ագաթանգ. Երես. 559)։

(խնամ Աստուծոյ) միայն աղաչեմ, այլ և վասն ամենայն Հաւատացելոց բանիւն նոցա յիս. զի ամենեքեան մի իցեն, որպէս դու՝ Հայր՝ յիս և ես 'ի քեզ, զի և նոքա 'ի մեզ իցեն» (Յովհ. ԺԷ. 20—21)։ Սմին իրի տարբերութիւն լեզուի և գաւառի, տարբերութիւն ծիսաց և արարողութեանց, մինչեւ տարբերութիւն մասնաւոր վարդապետութեանց (այլ ոչ էական մասանց Հաւատոց, և յայտնեալ ճշմարտութեանց Աւետարանի)՝ ոչինչ վնասեն միութեան և ընդհանրականութեան Եկեղեցւոյ, եթէ ոչ իցեն 'ի Հաւատս Քրիստոնէից՝ մոլորութիւն, 'ի յոյսն՝ երկրայութիւն, 'ի սէրն՝ ատելութիւն, և 'ի վարն՝ եղծմունք (¹)։

Եկեղեցին Քրիստոսի բաց 'ի յինելոյ մի և ընդհանրական, է համընդհանրական և սուրբ՝ ըստ սրբութեան Գլխոյ իւրոյ, ըստ սրբութեան Հաւատոցն, և ըստ սրբութեան վարուց Հաւատացելոց։ Եկեղեցին սուրբ է նախ՝ ըստ Գլխոյ իւրոյ Յիսուսի Քրիստոսի, որ 'ի Հայրական ծոցի գոլով միշտ սուրբ յերկինս, յերկրի եւս կենդանագործեցաւ անհուն սրբութեամբ՝ որչափ և եկացն, իբրև դերադանց նախադասելիսար ամենակատարեալ սրբութեան, և իբրև զառն անմեղ պատարագաւ անձին իւրոյ 'ի խաչին՝ սրբեաց զՀնմարտիս Հաւատացեալսն յինքն, զորս և մեռցոյց ընդ անձին իւրում՝ իբրև զանդամս մարմնոյ իւրոյ (Եփես. Ա. 22. 23։ Կողոս. Ա. 24։ Տիտ. Բ. 14։ Եբր. ԺԳ. 12։ Ա. Յովհ. Ա. 7)։ Եկեղեցին Քրիստոսի սուրբ է և ըստ Հաւատոցն. ոչ միայն, զի է ուղղափառ և ազատ յամենայն մոլորութենէ, նաև զի 'ի Հաւատոցն Յիսուսի Քրիստոսի սրբին Հաւատացեալք 'ի մեղաց և 'ի խղճէ չարեաց (Գործ. ԻԵ. 9։ Եփես. Ե. 26։ Եբր. Թ. 14)։ Սուրբ է նաև ըստ Աստուածամայելուչ կենդանագործութեան Հաւատացելոց, որք 'ի բաց մերկացեալ զմարդն հին՝ զապականեալն մեռելոտի գործովք՝ իբրև նոր արարածք նախանձաւոր գործոց բարութեան գործեն զՀանոյս Աստուծոյ. և իբրև որդիք լուսոյ գնալով 'ի լոյս Աւետարանի բարեպաշտութեամբ և Քրիստոսավայելուչ սուրբ կենդանագործութեամբ՝ ընծայեն զարդիւնս Հաւատոց իւրեանց 'ի գովեստ և 'ի փառս անուան Աստուծոյ, 'ի միմիթարութիւն եղբարց և յուղղութիւն ամբարշտաց (Գաղ. Դ. 18։ Տիտ. Բ. 14. Գ. 5։ Հռոմ. Է. 6. ԺԲ. 2։ Ա. Կորնթ. Ե. 7)։

---

(1) «Վասն միայնոյ, սուրբ, Կաթողիկէ և Առաքելական Եկեղեցւոյ Տէր աղաչեսցուք»։ Ժամագիրք։

Եկեղեցին Քրիստոսի բաց 'ի յերից յատկութեանցս ունի ըղ-
չորրորդ իմն՝ այն է Առաքելականութիւն, որ նշանակէ ոչ միայն 'ի ձեռն Առաքելոց կամ յլուս օրինի ընտրեալ և կայուցեալ յաջորդաց նոցին հաստատեալ, այլ և դի ի շնորհաց և հրշմարտութեամբ նոցն Աստուածեղէն հոգւոյն, որով և ունի և պահպանէ անեղծ և անարատ զնոցին Հաւատս և զպարզութիւն, և մատակարարէ ողջմտութեամբ առանց յաւելուածոյ և կրճատման՝ զբացայայտ Ճշմարտութիւնս նորոյ Կտակարանի 'ի դատաստանս Հաւատացելոց, և յամենայնի զհետ ընթանալ Առաքելական հետոց, հաղորդել զիտաւոր մեղայ, պարարելի զնոցն բարեբ հանդէս արրութեան՝ որ յԱռաքեալս, ցուցանել ըզնոյն ապարիշտ հանապազորդեան մարտի ընդդէմ թշնամւոյն, փրկութեան հոգւոց և պղծութեանց մարմնոց և հոգւոյ՝ որպէս և նոքա, և զնոյն մշտարարար նախանձ յաղագս մեծվայելչութեան փառաց Յաւիտենականին, և փրկութեան հոգւոց Հաւատացելոց միշտ բարբաջեալ սիրով առ Աստուած և առ ընկերս, միշտ զվերինն խնդրելով՝ ուր Քրիստոս նստի ընդ աջմէ Հօր, միշտ զհանոյն Աստուծոյ զորձելով, միշտ յանդիմանն աշաց ունելով ըղկատարելութիւնս Հօրն երկնաւորի. և փութայ և ճգնի, զի և յինքեան տապաւորեսցէ զհաւատարն, միշտ և անձանձրոյթ պատերազմի ընդդէմ ցանկութեանց հին մարդոյն, մինչև հասցէ 'ի կէտ Աստուածային կոչմանն՝ 'ի Ժառանգութիւն անարատաւորեալ փառացն արքայութեան (Եփես. Բ. 20; Մատթ. Ժ. 5—6; Գործ. Զ. 4; Հռոմ. Զ. 4. Ը. 1 և 14; Եզեկ. Ի. 43; Ա. Պետր. Բ. 21—24; Տիտ. Բ. 12; Ա. Կորնթ. Ե. 7; Փիլիպպ. Ա. 27; Ա. Յովհ. Ե. 4 և 5; Յայտ. ԻԱ. 14):

Յամենայնի՝ զորս ցոյս վայր գրեցաք, մանկարերի ուղղակի, թէ 'ի Կաթողիկէ Եկեղեցւոջ՝ որ է հոգևոր արքայութիւն Քրիստոսի յերկրի ասա, խոկացէք զառանին նոսա այնորիկ և նի Քրիստոնէից, որ 'ի Ս. Գիրս կոչին ընտրեալք, նոր ազգաւորք, արդարք, սուրբք, Հաւատացեալք, Եղբարք. որոց անուանեալ գրոյմեալ զոլով 'ի դպրութեան կենաց՝ Ժառանգելոց են անարատակրաց զվերկութիւն, զորս Աստուած և նի ճանաչէ (Բ. Տիմ. Բ. 19; Յովհ. Ժ. 14) և ոչ մարդ, թէպէտ և մարդարէ, թէպէտ և առաքեալ. որպէս և ոչ Եղիա (Գ. Թագ. ԺԹ. 14; Հռոմ. ԺԱ. 4) ծանեալ զեօթն հազարսն, և ոչ Փիլիպ-

պես՝ զՍիմոն մոգ (Գործ. Ը. 13. Ե. 1—11)։ Բանդի մարդն՝ թէև որպէս և ասացեալ է, «Ամենայն ծառ 'ի պտղոյ իւրմէ ճանաչի... ոչ կարէ քաղցր թաղցիլ՝ որ 'ի վերայ լերինն կայցէ», հայեցեալ յերեւոյթս կամ յարտաքին ցոյցս բարեպաշտութեան կամ ամբարշտութեան ուրուք՝ կարող է համարել զոմն սրդար և զոմն մեղաւոր, զոմն արդի կենայ և զայլ ոմն արդի կորընչեան. այլ զոլով միշտ սիրալիան և սրտագէտ իսկ ո՛չ՝ անբաւական է առնել միշտ զատաստան անիրկի. նա մանաւանդ զի ասացեալ է որոշակի Աստուածաշունչ Գիրս թէև. «Սուտ ասարեալք, մշակք նենգաւորք՝ կերպարանին 'ի կերպարանս Առաքելոց Քրիստոսի, և չեն ինչ զարմանք. քանզի և ինքն սատանայ կերպարանի 'ի հրեշտակ լուսոյ. և ոչինչ է մեծ, թէ և պաշտօնեայք նորա (սատանայք) կերպարանին իբրեւ պաշտօնեայք արդարութեան» (Բ. Կորնթ. ԺԱ. 13—15)։ Սոքին իրի և չէ ինչ օտար. զի եթէ և կեղծաւորք, խարդախք. նենգաւորք և մոլիք կերպարանեցին յանկեղծ Հաւատացեալս, յանխարդախ աշակերտս Քրիստոսի, յաննենգ Աստուածաբանս և եղբայրասէրս, կամ 'ի պարկեշտ սրբակեցս, և մարդիկ պարզամտութեամբ պատրեալք յերեւութիցն (որ չէ իրօք)՝ համարեցին զնոսա այնպիսիս ոմանս (Առակ. ԻԶ. 24—26. ԻԷ. 6։ Մատթ. Է. 21—23։ Հռոմ. Թ. 6։ Բ. Տիմ. Գ. 5։ Եսայ. ԻԹ. 13. 15. 16. ԾԼ. 2։ Բ. Կորնթ. Ե. 12։ Ղուկ. ԺԱ. 44)։

Բ. Եւ որում Կաթողիկէ Եկեղեցին է խորհրդական սուրբ մարմին Քրիստոսի, կենդանի Տաճար Հոգւոյն սրբոյ, և 'ի նմա իրբեւ յընտրեալ զերդաստանի շրջի և զնոյ ամենասուրբ Եկեղեցին, բայց և այնպէս ո՛չ ամենայն որ՝ որ համարի զանձն անդամ այսր Եկեղեցւոյ, կամ երեւելապէս զատանի 'ի նմա, և մինչեւ անդամ մասնակից սրբազան խորհրդոց նորա լինի, է 'ի նմա և իրօք։ Իրբ զի են՝ այո՛, և զժբաղդաբար բազումք են՝ որք թէև 'ի ձեռն մկրտութեան լուսաւոր աւազանին ծննդեան սրբեալ են 'ի սկզբնական մեղաց, և մտեալ 'ի հանդէս Աստուածպաշտութեան, այլ հանապազորդեան անօրէնութեամբ և ներգործական մեղօք՝ զորս գործեն անխտիր առանց զմտաւ ածելոյ երբէք ըղձառնալն զղջմամբ և զկեանն ապաշխարութեամբ, նման են թաւալեալ անդրէն 'ի տիղմն լուացեալ խոզիս և շանս՝ որ 'ի փոխանցն զառնան (Բ. Պետր. Բ. 22)։ Իրբ զի են, և բազումք են՝ որք թէև ունակս բար կանխեն Եկեղեցի, և յանկարն լսել հանդ-

պաշտօր խրատս , այլ ո՛չ երբէք դան 'ի դիտութիւն ճշմարտութեան , և ո՛չ իսկ յուղղութիւն վարուց (Բ. Տիմ. Գ. 7)։ Իբր դի են և բազումք՝ որք թէև մերձենան բազում անդամ 'ի հաղորդութիւն խորհրդական մարմնոյ և արեան Կենարարին , այլ մերձենան ո՛չ այնչափ յանդգնապարտութիւն անձանոյ՝ որչափ 'ի դատապարտութիւն , վասն դի մերձենան անարժանութեամբ (Ա. Կորնթ. ԺԱ. 27—31)։ Են՝ այո՛ , և բազումք են՝ որ թէ և խառանան միշտ և պանծան յանձինս դիտել և պաշտել զԱստուած , այլ գործովք եղբայրասէրութեան ուրանան զԱստուած (Ա. Յովհ. Գ. 8). ո՞ւր թողցուք և զԱռաքելոյն զահագնալուր ապառնալիսն . « Ո՞չ գիտէք , զի անիրաւք զարքայութիւնն Աստուծոյ ո՛չ ժառանգեն . մի խաբիք . ո՛չ պոռնիկք , ո՛չ կռապաշտիչք , ո՛չ շունք , ո՛չ իգացեալք , ո՛չ արուագէտք , ո՛չ գողք , ո՛չ ագահք , ո՛չ արբեցողք , ո՛չ բամբասողք , և ո՛չ յափշտակողք՝ զարքայութիւնն Աստուծոյ ո՛չ ժառանգեն» (Ա. Կորնթ. Զ. 9—10)։ Այսպիսիք և սոցա նմանիք՝ եթէ ո՛չ լուսացեալ զիրս արեամբ Քրիստոսի 'ի ձեռն ապաշխարութեան՝ եկեսցեն հաստատուն որոշմամբ յուղղութիւն վարուց , ընդունայն է այնպիսեացն լոկ Քրիստոնեայ անունն , և խաբեբայ յոյս փրկութեան . և թէպէտ են նոքին Եկեղեցւոջ , այլ ո՛չ Եկեղեցւոյ (1) . թէպէտ են յանդգնամանի Քրիստոսի , այլ իբրև որոմունք խառնեալ ընդ ցորենոյ , և իբրեւ չարք ընդ բարեաց , որոց և կատարած նոցա եղիցի լի կորստեամբ 'ի հուրն անշէջ (Մատթ. Թ. 19։ Ա.ռակ. Ե. 5. Թ. 18։ Գաղ. Ե. 19—21։ Եփես. Ե. 5։ Յայտ. ԻԱ. 8. 27։ Ղուկ. ԺԲ. 20. 47. 48. ԺԶ. 22—23։ Հռոմ. Բ. 6. 9. Զ. 23։ Բ. Թես. Ա. 6։ Բ. Կորնթ. Ե. 10)։

Գ. Այսարդոյ են յայտնապէս և իրաւ 'ի Մի , Սուրբ , Կաթողիկէ և Առաքելական Եկեղեցւոյ Քրիստոսի , և անմասն 'ի հաղորդութենէ և 'ի փրկութենէ Սրբոյ՝ 1. Յայտնի կամ լռելեայն անհաւատք , հայհոյիչք , ուրացողք և մոլորեալք։ 2. Ամենայն Հերետիկոսք դատապարտեալք յընդհանուր Եկեղեցւոյ , որք ա-

---

(1) « Սա (Եկեղեցին) է դրախտ Աստուածատունկ անմահանելի չարաց . զի 'ի նմանէ օձին արտաքս անկաք , և Քրիստոսիս 'ի սմա մտանեմք . և վասն զի դրախտն կենդանեաց զմեզոք մեռեալս ոչ ընդունի , նոքանչիս և յայս Եկեղեցւոյ արտաքս ուրոշին ամբարիշտք և մեղաւորք » (Յովհ. Իմաստասէր . Ճառ Եկեղ . Երես . 134։

բանան կամ ժխտեն յանձն կամակորութիւնամբ զէական ճշմարտութիւնս Հաւատոյ՝ 'ի Քրիստոսէ և յԱռաքելոց նորին և 'ի Մարգարէից որոշակի քարոզեալս. որք թլփատեն զվարդապետութիւնս Աստուածաշունչ Գրոց, և յանձնեն 'ի նոսա զնոր բան ըստ մարմնոյ լսելեաց իւրեանց՝ զվարդապետութիւնս ինքնահնարս 'ի կորուստ անձանց, և որոց բանն և ընդունին։ 3. Ամենայն Հերձուածողք և Աղանդաւորք՝ որք բաժանեալ զանձինս 'ի Հաւատոյ և 'ի վարդապետութենանց ծնող կամ մայր Եկեղեցւոյ իւրեանց՝ պատրանաւք մոլորեցուցչաց՝ հաստեալ 'ի հաղորդութենէ և ընդհանուր Եկեղեցւոյ Քրիստոսի՝ ձեռացուցանեն զնոր բան Եկեղեցի 'ի կորուստ անձանց։ Սոցա և ամենեցուն նեմանեաց սոցա չիք փրկութիւն՝ ոչ սատ և ոչ 'ի հանդերձելումն (Բ. Օրին. Դ. 2. ԺԲ. 32։ Յայտն. ԻԲ. 19։ Բ. Տիմ. Բ. 18։ Գաղ. Ա. 6—9։ Ա. Յովհ. Բ. 19։ Եբր. Ժ. 25. 31. 39։ Բ. Պետր. Բ. 19. 20. 22)։

## ՅՕԴՈՒԱԾ ԵՐԿՐՈՐԴ.

### Ճարտարապետ Եկեղեցւոյն Քրիստոսի.

Եկեղեցին Աստուծոյ, այսինքն է միարանութիւն ամենայն Ճշմարիտ Հաւատացելոց 'ի պաշտօն միասոյ ամենասուրբ Երրորդութեան և 'ի փրկութիւն անձանց՝ այնչափ հին է, որչափ է և Աստուած Այարիչ ամենայնի, որչափ և է մարդն առաջին Եղեալ 'ի Դրախտի. որ և է այնպիսի ամենակատարեալ շինուած՝ զոր ոչ այլ որ ձեռնհաս է 'ի Հրեշտակաց և 'ի մարդկանէ խորհիլ, ստեղծանել և էացուցանել՝ բայց յամենաբարեգութեան և յամենակալ իմաստութենէ Աստուծոյ (1). յայս տեղս պարտ է խոստովանիլ, թէ արարչական պատճառ և գերագոյն ճարտարապետ Եկեղեցւոյ է ինքն միայն Աստուած, որ յետ արարչագործութեան նախատեղծ մարդոյն (2)՝ ստեղծն և անդ հանձնաւ յայտ-

---

(1) "Ոչ չինեաց (իմա Աստուած) զԵկեղեցի իւր 'ի վերոյ երկնային լերին Հաւատոյ հիման,,. (Յովհ. Մաստոր. 'Ի Մանկն. Մատթ. Երես. 103)։

(2) "Սկսաւ հոգևոր օրհնաբերութիւնն Աստուծոյ 'ի սկզբան լինելութեան մերոյ, և տուաւ նախ՝ առաջին մարդոյն պարգևին, զոր ոչ պարհնաց. և ապա տանն Անթայ մինչև ցՍրբնեղեղն, զի զատեալ որոշեսցին 'ի տանէն Կայէնի. և յետ Ջրհեղ-

նել նմա զգիտութիւն ամենատուր Հաւատն և յանկութեանց և կամաց իւրոց՝ տարատրելով 'ի բանական հոգւոջ նորա զիրգ տուր առ 'ի սիրել զինքն յամենայն անձնէ և 'ի զօրութենէ՝ վասն անհամեմատ գեղեցկութեան և բարութեան իւրոյ, աղաչելով 'ի միտս նորա զգիտութիւն ամենայնի՝ ճանաչել, պաշտել և փառաւորել զինքն անհունապէս՝ իբրեւ միմիայն արարիչ, պարգեւատու բարեաց և խնամակալ յամենայնի, ներշնչելով 'ի կամս նորա զյաջողութիւն առ 'ի հաճոյանալ ինքեան յամենայն ժամ՝ ճիշտ պահպանութեամբ բարի և բարեբար հայրական իրաւանց, պատուիրանաց և օրինաց իւրոց, մեկնիլ յամենայն իւրաց չարեաց, և մերձենալ առ բարին, վերջապէս տարով նմա և զուխտն տուր՝ որով որպէս թէ զաշն դնէր ընդ մարդկան Աստուած. — մարդոյն՝ զառանիլ զնա Աստուած իւր, պաշտել զնա հոգւով ճշմարտութեան, հնազանդ լինիլ կամաց և օրինաց նորա որդիական հպատակութեամբ, սիրել զնա առանձ քան զամենայն երկրաւոր և երկնաւոր արարածս. — և Աստուծոյ՝ իրենամիլ զմարդն հոգւոր և մարմնաւոր պիտոյիւք, զօրացուցանել զնա զարծակցութեամբ արարարք շնորհաց իւրոց, առաջնորդել նմա 'ի խաւարի աշխարհս այսորիկ անմոլար, որով որպէս թէ նոր նորոգեալ զնա և վերածեալ 'ի տեսն նախկին արքութեան, արդարութեան և կատարելութեան (յոր վայելէր Նախահայր մարդկութեան յանմեղութեան վիճակի անդ)՝ վերածեալ զնա անդրէն յառաջին փառս անմահութեան, յորմէ զրկեցաւն պատուիրանազանցութեամբ (Ծնող. ԺԷ. 2. 14. 19. 21։ Ա. Մնաց. ԺԶ. 16։ Եսայ. Զ. 4։ Գործ. Գ. 25։ Գաղ. Գ. 16)։

Եկեղեցին Քրիստոսի 'ի յայտնութեան նորոյ ուխտին ընդարձակեցաւ և վերահաստատեցաւ իրեւ շարունակութիւն այնր միոյ և միայնոյ Աստուածային Եկեղեցւոյ, որ հաստատեալն էր յերկրի 'ի սկզբան անդ առեղծագործութեան նախամարդոյն, և հիմնեցաւ 'ի վերայ այնր մշանջենաւոր ուխտին՝ զոր եդ Աստուածընտրեալն ընդ առաջին Հարսն՝ Հաւատոյ յայտնութեամբք և Մարգարէիւք՝ այսու և եթէ տարբերութեամբ, զի հոգի Իսրայէլեան

---

զնդին Նոյի մինչև զԱբրահամ . . . և տանն Աբրահամու մինչև զՄովսէս . և Մովսիսի երկրատան զնդին Իսրայէլի . . . մինչև յառաջին զաչուան Քրիստոսի, և Քրիստոսի նոր պատուիրանաւ՝ ոչ գրով, այլ հոգւով՝ մինչև յերկրորդ գալուստն ,, (Յովհ. Ծորտ. 'ի Մեկն. Մատթ. Երես. 105)։

Եկեղեցւոյ էր խոստումն և ակնկալութիւն Մեսիային, իսկ Քրիստոնէականին՝ միայն կատարումն. նոցա խոստմունքն՝ ժամանակաւոր, մերս մշտնջենաւոր. նոցայն ըստ մասին՝ մարմնաւոր, մերս՝ ըստ ամենայնի հոգեւոր. նոցայն՝ հին, մերս՝ նոր. նոցայն՝ արեամբ երինջաց և ցլաց կնքեալ, մերս՝ արեամբ սուրբ և ամրիծ Գառնն Աստուծոյ. նոցայն՝ օրինակ, մերս՝ ճշգրտութիւն։ Եւ յայս սակս Յիսուս Քրիստոս իբրեւ միջնորդ այսր նորոյ ուխտի՝ որ մահուամբ իւրով ազատեաց զմարդիկ յանիծից և 'ի մեռելութենէ մեղաց, որ սրբեաց զնոսա արդեամբքն խաչին իւրոյ, և արեամբ իւրով գնեաց և արդարացոյց՝ զորս հաստատեցին յինքն, հաստատեալ հիմնեցոյց յերկրի զԵկեղեցին Քրիստոսի, որով և ինքն միայն եղեւ և հանդիսի գերագոյն Հեղինակ և Ճարտարապետ Եկեղեցւոյ իւրոյ սրբոյ (Հռոմ. Գ. 11—17. ԺԱ. 16—29։ Եփես. Գ. 6. Դ. 21։ Գաղ. Գ. 17—29։ Եբր. Ը. 8. 10. 13. Թ. 11. 14. 16. 23. ԺԱ. 10։ Երեմ. ԼԱ. 31. 33։ Եսայ. Խբ. 6. Խթ. 8)։

Դարձեալ ճարտարապետս եղեն և են Եկեղեցւոյն Քրիստոսի (թէև գործիսկան կամ պաշտօնական 'ի հեղինակութենէ Քրիստոսի կարգեալք), ամենայն Մարգարէք, ամենայն Առաքեալք և ամենայն հոգեշնորհ Քարոզիչք և Վարդապետք (1), որք ըստ կոչման և ընտրութեանն Աստուծոյ՝ թողեալ զհայր և զմայր, զգաւն և զվայելս աշխարհական, և յոժարակամ յանձն առեալ դրոյց և գծարաւ, զմերկութիւն և զսոսթ, զանարգանս և զդիմելութիւնս, զբանտ, զքարկոծումն և զմահ գլխովին՝ անդադար համարձակութեամբ, և նախանձայոյզ եռանդեամբ ընթացեալ բազաբէ 'ի բազաբ և յաշխարհէ յաշխարհ՝ զաւետեան և յարութեան Քրիստոսի վկայութեամբ և քարոզութեամբ, բանիւ և արդեամբ՝ գործակցութեամբն Քրիստոսի որսան զմարդիկ 'ի թագաւորութենէ սատանայի՝ յարքայութիւն Քրիստոսի, 'ի մեռելութենէ մեղաց՝ 'ի նորոգումն կենաց, 'ի խաւարէ կուսակրաութեան՝ յԱստուածատեսութեանն յոյս. որով և ճարտարա-

---

(1) "Որպէս և եղեն իսկ նմանագոյն նոցա (Առաքելոց) Հայրապետք յընդհանուր տիեզերս, որք և չինեցին յիւրաքանչիւր տեղիս և ժամանակս՝ զիմանալի չինուածս Հաւատոյ 'ի վերայ Հիմանն Առաքելոց և Մարգարէից" (Ընդհանրական. Երես. 225)։

"Եւ չինեսցուք մեք ձեզք հանդերձ 'ի վերայ հաստատութեան Հաւատոյն Առաքելոց և Մարգարէից" (Ագաթանգ. Երես. 432)։

պետեն զԵկեղեցիս 'ի զովնաս փառաց անեղին Աստուծոյ (Մարկ. Գ. 14. ԺԶ. 15։ Բ. Տիմ. Ա. 11։ Մատթ. Ժ. 16. 18. ԻԳ. 34։ Ղուկ. ԻԱ. 16։ Յայտն. ԺԱ. 3։ Գործ. Բ. 47. Գ. 22. 24. Թ. 14. Ժ. 13։ Ա. Կորնթ. Գ. 10։ Հռոմ. Ժ. 14։ Ա. Տիմ. Բ. 7։ Եսայ. Լ. 20։ Եփես. Գ. 11)։

## ՅՕԳՈՒՍԾ ԵՐՐՈՐԴ.

### Հիմն Եկեղեցւոյ Քրիստոսի.

Եթէ Եկեղեցին է գործ ամենակատար իմաստութեան Աստուծոյ՝ որ յանհուն բարութենէ իւրմէ շարժեալ յայտնութեամբ 'ի վերուստ՝ համահաւասար զմարդիկ 'ի միաբանութիւն Հաւատոյ՝ ճշմարտութեանն գիտութեամբ 'ի փառս իւր, և առաջնորդէ նոցա գերբնական լուսով ընդ խաւարամած հովիտս չի գայթակղութեամբ և հասանելս մեղաց աշխարհիս՝ մինչև 'ի սահմանեալ կէտ երկնային կոչման նոցա, ուրեմն ինքն և եթ՝ որպէս է Ճարտարապետ Եկեղեցւոյ իւրոյ, է և միանգամայն առաջին արարչական և ամենակարող Հիմն Եկեղեցւոյ իւրոյ, միմիայն ամենակար և միշտընջենաւոր զօրութիւն՝ որ անելեւութացէս 'ի նմա բնակեալ միշտ՝ մշտածորան հեղմամբ շնորհաց Հոգւոյ իւրոյ սրբոյ և մաստակարարութեամբ բանին կենաց՝ 'ի բոլոր ունի զհաստատութիւն Եկեղեցւոյ իւրոյ, նախանամէ և պահպանէ զնա մինչև 'ի կատարած աշխարհի։ Զի՛նք մարդութիւն չարագոյն քան զայն, եթէ որ համարիցի 'ի մարդկանէ և մինչև 'ի հրեշտակաց զոր՝ սկզբնական լեառն 'ի հիմանէ Աստուածային Եկեղեցւոյ. փոխանակ զի եթէ Եկեղեցին է 'ի սկզբանէ աշխարհի, զիա՞րդ կարէ սակաւօրեայ, մահկանացու, և յետ ժամանակաց ծնեալ և կնչեալ այր ոք՝ հիմն լինել մշտնջենաւորին։ Եթէ Եկեղեցին է բոլորովին հոգեւոր և խորհրդական ընկերութիւն Աստուածապաշտից, զիա՞րդ հնարաւոր է նիւթական և մարմնական արարածականի ու

ոչ խրատ, որպէս և Աւետարանն ուսուցանէ «Ոչ զոյլ ոք քան զեղեալն՝ որ է Յիսուս Քրիստոս» (1) (Ա. Կորնթ. Գ. 11. 12: Ա. Կորնթ. Գ. 4. 10. 22. 23: Հռոմ. ԺԵ. 20: Բ. Տիմ. Թ. 19: Մատթ. ԻԱ. 42. 44: Մարկ. ԺԲ. 10: Ղուկ. Ի. 17. 18: Գործ. Գ. 11: Ա. Կորնթ. Ժ. 4: Ա. Պետր. Բ. 4. 8):

Հիմն չինուածոյ և վէմ հաստատութեան Եկեղեցւոյ հանդիսին բաց 'ի Յիսուսէ Քրիստոսէ՝ նաև ամենայն Աւետարանք (2), ամենայն Մարգարէք, ևս և Լուսաւորիչք, Քարոզիչք և Հշմարիտ Հաւատացեալք՝ ոչ քան թուն կամ քան իսկական հեղինակութեանն իրրև սկզբնապատճառաք Եկեղեցւոյ, այլ քան նախահաստատութեան իրեանց և քան պաշտաման բարոյութեանն. զսան դի Մարգարէք հարուստ ժամանակաք վաղագոյն շարժեալք յԱստուծոյ՝ հաստատային 'ի Քրիստոս, և իրրև եկեալ ծանուցին զգալուստ նորա, քարոզեցին զփրկութիւնն՝ զոր գործելոց էր, և խոստման եղեն զԵկեղեցին տուրք՝ զոր հաստատելոց էր (Ամովս. Բ. 11: Թուոց. ԻԴ. 14: Գործ. Գ. 22. 24. Ի. 43: Ա. Պետր. Ա. 10. 11): Աւետարանք իրրև ականատես վկայք կատարման այնր ամենայնի 'ի ձեռն եկեալ Փրկչին՝ զորոց կանխաւ խօսեցան Մարգարէք, քան ընտրութեանն Աստուծոյ նախընծայք եղեն 'ի Հաւատս Քրիստոսի. զոր և սրտեռանդն և հոգեւոր քարոզութեամբ սփռեցին ընդ տիեզերս, և յորոց ընկալանն՝ շինեցին յամենայն տեղիս զԵկեղեցիս 'ի փառաւորութիւն Աստուծոյ. որոմ եղեն հիմն և վէմ հաստատութեան Եկեղեցւոյ Քրիստոսի (Ա. Կորնթ. Դ. 10: Եփես. Բ. 20: Յայտ. ԻԱ. 14: Մատթ. ԺԶ. 18: Հռոմ. Թ. 33: Ա. Պետր. Բ. 6): Քան այսմ իսկ և զամենայն հոգեւոր ընպատուրայ Աւետարանի, որոց լցեալ նախանձու տարածման արքայութեան Աստուծոյ՝ հանապազորդեան անձանձիր քարոզու-

---

(1) «Լեռան խնամայի է Քրիստոս՝ յաղագս անդրդուելի զօրութեանն. որպէս լեռան Աստուծոյ և լեռան պարարտ ընդդէմ հպարտացեալ լերանցն և քաղաք 'ի վերայ այնր լերին չինեալ՝ է Եկեղեցի քան Եսայեայ. «Եղիցի յաւուրս յետին լեռան Տեառն», և հիմն այնր քաղաքի՝ Աւետարանք և Մարգարէք, և չինուածք՝ դատ ամենայն աշխարհաց» (Յովհ. Մաշտ. 'ի Մեկն. Մատթ. Երես. 102):

(2) «Եւ եղեն հիմունք Աւետարանքն, և ատին ընդունիս քահանայութեան և մարգարէութեան և առաքելութեան երկնաւոր խորհրդոցն զիտութեան» (Ագաթանգ. Երես. 340):

թեամբ բանին կենաց՝ ծառայեն զոյս Աստուածգիտութեան 'ի միտս անհատուցից՝ խառնելով զնոսա 'ի հօտն Աստուծոյ, և հաւատարիմ վերակացութեամբ և ողջամիտ վարդապետութեամբն զոյսցուցանեն և հաստատեն զնոսա 'ի չինուած մարմնոյն Քրիստոսի (Ա. Պետր. Բ. Ե։ Եփես. Դ. 12։ Ա. Կորնթ. ԺԴ. 5)։

## ՅՕԴՈՒԱԾ ՉՈՐՐՈՐԴ.

### Գլուխ Եկեղեցւոյն Քրիստոսի.

1. Եկեղեցին, կամ որ նոյն է՝ կրօնական ընկերութիւն Հաւատացելոց է խորհրդական մարմին Քրիստոսի՝ արբեալ արեամբ նորա յամենայն մեղաց, և անբակտելի միաւորութեամբ կապեալ ընդ նմա մշանջենաւորապէս՝ իբրև ընդ միմիայն գլխոյ իւրում (1). յորմէ ընդունի շնորհս կենդանարար, զաճումն 'ի հոգեւոր կեանս և զդգացումն փրկաւէտ (Եփես. Ա. 3. Դ. 12. 15. Ե. 23)։ 2. Եկեղեցին է գինուորութիւն ուխտաւոր Աստուածայնոց ճշմարտութեան Հաւատոյ ընդդէմ կորստական հնարից բանարկութեան, իսկ Քրիստոս իբրև միմիայն յաղթական սատանայի՝ անմեղութեամբ և արդութեամբ մարմնոյ իւրոյ է Գլուխ գինուորութեանս (Երր. ԺԲ. 2)։ 3. Եկեղեցին է արքայութիւն Աստուծոյ յաշխարհի սատ, իսկ Քրիստոս միմիայն թագաւոր և տնօրէն իշխութեանց ամենայնի՝ որ 'ի նմա (Մատթ. ԻԱ. 42։ Եփես. Ա. 21. 23)։ 4. Եկեղեցին է ժողով ժողովրդոց փրկելոց, և որոց ակն ունին ժառանգել զփրկութիւն. իսկ Քրիստոս միմիայն Գլուխ և առաջնորդ փրկութեան (Մատթ. Ի. 28։

---

(1 "Դիցուք երկոցուն բաժանեալ որմանցս՝ գլուխ անկեան և թագաւոր զվէմն Քրիստոս, որպէս և է իսկ ճշմարիտ, և զառաւոր զդիրս Առաքելոց և Մարգարէիցն և զուղղակիս Վարդապետաց Եկեղեցւոյ"։ (Ընդհ. Երես. 111)։

"Զի նա ինքն (Աստուածութիւնն) գլուխ է Եկեղեցւոյ որոյ ... և 'ի նա ամենայն շինուածն պատշաճի, և ամէն զանուն Աստուծոյ. յոր ամենայն մարմին յաղթի և խաղաղիցի և անդամք հաստատեալ և կազմեալ"։ (Ագաթ. Երես. 550)։

"Գլուխ Եկեղեցւոյ՝ Որդի և Բան Տէր Յիսուս՝ տուր ինձ հմտութիւն"։ (Յաճնախ. Երես. 300)։

"Մեռեալ Քրիստոս ոմեանց զնա (զՀոգին) 'ի վերոյ ամենայն Եկեղեցւոյ, և զնա (զԵկեղեցի) մարմին անուանէ Զիրա՝ Քրիստոսի, և յոսկերաց նորա (Եփես. Ե. 23). որ սարբանայր 'ի Գլուխն Քրիստոս՝ ոչ այլ խիթ, քարոզ յոգեկոչութեամբ Հոգւոյն"։ (Ներս. Լամբ. 'ի Մեկն. Պատարագի. Երես. 107)։

Գաղ. Գ. 13։ Եբր. Թ. 12։ Ա. Պետր. Ա. 19։ Յայտ. Ե. 19)։ 5. Եկեղեցին է միաբանութիւն Սրբոց, որոց 'ի սրոչ և 'ի հոգւոյ հաւատան և խոստովանին զԱստուած. իսկ Քրիստոս միմիայն գերագոյն Քահանայապետ խոստմանութեան Հաւատոյ Հաւատացելոց (Եբր. Գ. 1. 2. Ե. 4. 5. Է. 20. 21. 23. 28), որ անանցանելի քահանայութեամբ իւրով նստեալ յերկնաւորս ընդ աջմէ Հօր՝ բարեխօսէ միշտ վասն Եկեղեցւոյ իւրոյ, և հանապազորդեան օրհնութեամբ անուցանէ, ասէ և խնդէ երկնաւոր շնորհօք զժողովս Սրբոց (Եբր. Է. 25. Թ. 24։ Թուոց. Զ. 23. 26։ Գործ. Գ. 26։ Եփես. Դ. 8)։ 6. Յիսուս Քրիստոս առեալ յընդհանուր մարդկութենէ 'ի ձեռն սրբոյ Կուսին զմարդկային մարմին՝ եղեւ ազգակից մարդկան ըստ մարմնոյ, և յետ կատարման փրկութեան մարդկան զնոյն մարմին սրբացուցեալ և Աստուածացուցեալ՝ պարգեւեաց Հաւատացելոց 'ի խորհրդական հաղորդութեան մարմնոյ և արեան իւրոյ, որով և միաւորեաց զհաւատս ճաշակողն յանդամս իւր, և եղեւ ամենեցուն նոցա կեցարան հոգեւոր միաբանութեան. թաղեաց 'ի մասնակից խորհրդոյն զսերմն ապագայ յարութեան և նորոգ կենաց, և ամենեցուն եղեւ յոյս կենաց, շնորհեաց արժանապէս ճաշակողացն զբարեբար շնորհս և զօրութիւնս, որով և ելից զամենայն, և ընտ յամենայնի և զերկնաւորս և զերկրաւորս իրրեւ ծայրագոյն զլուխ ամենայն իրաց Եկեղեցւոյ իւրոյ՝ տալով նմին զհոգին իւր յաւաջնորդութիւն և 'ի զիտութիւն ճշմարտութեան (Յովհ. ԺԴ. 16. Ի. 22), զԱռաքեալս և զՄարգարէս, զՅովհան և զԱրդապետս 'ի ապաւաւորութիւն Բանին կենաց, 'ի հաստատութիւն Սրբոց և 'ի պաշտօն փրկութեան ամենեցուն՝ որոց կարդան զանուն Տեառն (Երեմ. Գ. 15։ Եփես. Դ. 11. 12)։ Յաղագս այսորիկ ոչ ոք յարարածոյ՝ եթէ Հրեշտակ և եթէ մարդ, ոչ կարէ կոչել զանուն բան բուն նշանակութեանն՝ միայնոյն զլուխ ընդհանրական Եկեղեցւոյ Քրիստոսի՝ առանց ծանր մոլորութեան և զատապարտութեան 'ի յանդարձ կրակն որոն իրրեւ յաւիտենական իրաւանց Աստուծոյ։ Այս ամբարշտութիւն՝ անօրէնութեան մարդոյն միայն վայելուչ է, որ զնեալով զաթոռ իւր յԵկեղեցւոյն Աստուծոյ, և ընկալեալ զերկրպագութիւն Աստուածային յամենայն ազգաց՝ արձակելոյ է հայհոյութիւնս ընդ դէմ Բարձրելոյն իրրեւ զերարբիտոս ոմն. վասն զի Եկեղեցին իրրեւ շինուած Աստուածային անհուն իմաստ-

թեան՝ անկարօտ է մարդկեղէն օժանդակութեան և խնամատարութեան. և հաստատեալ Աստուածատուր յայտնութեամբք՝ նորա և եթէ կարօտի անսխալ առաջնորդութեան. և ազատեալ ապրեամբ Մխածնի և հեղմամբ փրկարար շնորհայ հոգւոյ նորա, միաւորեալ ընդ նմա որպէս մարմին ընդ գլխոյ, որպէս հարսն ընդ ընտրեալ փեսայի՝ նմա և եթէ պարտի հնազանդիլ, որպէս կին առն իւրում (Աղմ. Խե. 13. 14։ Յայտ. ԺԹ. 7. 8. ԻԱ. 2. 9։ Ա. Կորնթ. Գ. 9)։

Սակայն երկրորդական նշանակութեամբ, իմա՛ ըստ պաշտաման բարոյութեան և տարածման Աւետարանի, ըստ պաշտաման հովուութեան և դաստիարակութեան բանաւոր հօտին Աստուծոյ, ըստ գերազանցութեան Հաւատոց և բարեպաշտութեան անձանց, և ըստ նախագահութեան՝ զորս առանձնեալ են ըստ կարգի 'ի տնտեսութեան Եկեղեցական իրողութեանց՝ Հովիւք, Վերատեսուչք, Առաջնորդք և Երիցունք, կոչին իբրաբանչիւր որ 'ի նոցանէ գլուխ և հովուապետ Եկեղեցւոյ. որպէս աւագ—քահանայն նկատմամբ մասնաւոր Եկեղեցւոյ գեղջ իւրոյ՝ զոր խնամէ, Եպիսկոպոսն կամ Առաջնորդն նկատմամբ Եկեղեցեաց իւրոյ միանկի՝ զոր հովուէ, Հայրապետն կամ Կաթողիկոսն նկատմամբ այն ամենայն գաւառական և նահանգական Վիճակաց և Եկեղեցեաց՝ զորս ըստ տնօրէնութեան տիեզերական Ժողովոց, կամ ըստ միաբան հաւանութեան ազգի միոյ և կամ տէրութեան՝ ունի ընդ ծայրագոյն իրաւասութեամբ իւրով, ո՛չ իրրեւ ինքնիշխան գլուխ, այլ իրրեւ գլուխ յետ պետական և ինքնիշխան Գլխոյն Քրիստոսի (1)։

## ՅՕԳՈՒԱԾ ՀԻՆԳԵՐՈՐԴ.

Ազգիւր ողջամիտ հաւատացիութեան Եկեղեցւոյն Քրիստոսի՝ հին և նոր կտակարանք են, և աւանդութիւնք Առաքելոց՝ իբրև աստուածայնամ։

Ողջամիտ ուսումն Քրիստոնական Հաւատոց (2) պարունակի

---

(1) "Զի՞նչ գլուխ Եկեղեցւոյ յետ գլխոյն։ Ընդհանրական. Երես. 226։

(2) "Զոյս վկայութիւն ասացեալ կարդեցուք 'ի մեր լսելիս զսուրբ Հաւատս ճշմարիտս, զոր յայտ յանդիման վարդապետեցին մեզ Գիրքս սուրբք՝ սուրբ Հոգ-

յԱստուածային յայտնութեան կամ 'ի քանն Աստուծոյ, որ և է յայս տակս՝ մի և եղական աղբիւր անվրէպ Աստուածգիտութեան։ Այլ ըստ որում ինքն Աստուած հաճեցաւ տալ մարդկան զյայտնութիւն իւր կրկին եղանակաւ՝ իմն բերանով և գրով, և 'ի տալն՝ աւանդեաց զայն իւրն սուրբ Եկեղեցւոյ 'ի պահպանութիւն և 'ի մատակարարութիւն ամենեցուն, ուրեմն մարթի է ասել ուղղութեամբ և իրաւամբ, թէ ընդհանրական աղբիւր ուղղափառ Աստուածգիտութեան են՝ Ա. Աստուածաշունչ մատեան. Բ. Արբազան աւանդութիւնք, որոց Եկեղեցին Քրիստոսի է շտեմարան և թարգման։ Աստուածաշունչ մատեան ասելով՝ իմանանք զՅ. Գիրս՝ յայլազգի Քրիստոնէից տիրիլս կոչեցեալ, գրեալ Հոգւոյն Աստուծոյ 'ի ձեռն օծեալ յԱստուծոյ արանց, որոց անուանք Մարգարէ և Առաքեալ ճանաչին։ Բայատրել իմաստն զառաջին, այսինքն է՝ թէ զԱստուածաշունչ մատեանն գրեցին իսկապէս Մարգարէք և Առաքեալք և ո՛չ այլ ոք, նշանակէ ապացուցանել զվաւերականութիւն (կամ առաւել ճշդիւ խօսելով) զվաւերականութիւն Գրոց որոց պատմագրանոցին։ Բայատրել զերկրորդն, այսինքն է՝ թէ գրեցին նոքա յատուկ թելադրութեամբն Հոգւոյն որոյ, նշանակէ ընդունել և խոստովանել զկրօնական վստահութիւն այնոցիկ վարդապետացին։ Առ այժմ 'ի բաց թողեալ զքննութիւն պատմական ապացուցից Ս. Գրոց (ըստ որում չէր տարակոյս ինչ զայսմանէ, և ո՛չ իսկ մեծ առ Քրիստոնեայս)՝ մեկնեսցուք համառօտիւ զկրօնական վստահութիւն այնոցիկ։

Վստահութիւն ըստ վարդապետական մասին Ս. Գրոց՝ որպէս ուսուցանէ Եկեղեցին Քրիստոսի, այն է՝ զի գրեալ է ներշնչութեամբ Հոգւոյն որոյ. և յայս տակս ամբարեալ ունի յինքեան ո՛չ զմարդոյ ուրուք գրան կամ զծնունդ մտաց, այլ որպէս և է իրաւք՝ զԱստուծոյ գրան և զյայտնութիւն։ Այս ամենայնիւ զնէ 'ի նոցս միջի Եկեղեցին սուրբ զիստիր իմն՝ զոմանս 'ի գրոց Աստուածաշնչին կոչելով Կանոն կամ Կանոնական (1), զայլս՝ ոչ Կա-

---

ումն ,, (Ագաթանգ. Երես. 265)։ — ,, Մեք զայս ճշմարիտ հաւատս ունիմք 'ի սուրբ Գրոց և յորինեալ Եկեղեցւոյ՝ առաջնորդ կենաց հանապարհի առ Աստուած, և 'ի սուրբ Գիրս վարդապետութիւն Հաւատոյ։ Եւ մի խոտորիք 'ի կարգաց իմաստութեան՝ մի յաջ և մի յահեակ ,, (Ագաթանգ. Երես. 283)։

(1) Ճանաչեան յաւս կանոն՝ առ մեզ վարի. իբր քանկ, ցուցակ մարդոց կամ իրաց։ 2. Իբր սահմանագրութիւն պատուիրանաց Եկեղեցւոյ. յայս տակս ամենայն որոշմունք ժողովոց կոչին առ մեզ կանոնք։ 3. Անփոփոխ և հաստատուն օրէնք և

նոնական կամ արտաքոյ Կանոնականաց։ Կանոնական կոչեմք զգիրս, զորս ըստ առանձնելոյ նոցուն իսկ Պատգամաւորաց Աստուծոյ՝ ընկալեալ է 'ի սկզբանէ հետէ Եկեղեցին, և զրոշմեալ 'ի կանոնի՝ իսկ 'ի ցանկի ընդունելի Աստուածաշունչ Գրոց՝ մասնակարարել զնոսա Հաւատացելոցն իբրեւ անփոփոխ կանոն դիմատուութեանց Հաւատոց։ Կանոնական գիրք Աստուածաշնչին՝ ըստ Արքոյն Աթանասի մեծի, հաւատալի են իբրեւ Աստուածային, և են աղբիւր փրկութեան՝ առ 'ի լցուցանել բանիւք այնորիկ ծարաւելոցն զպատարագն իւր 'ի նոսա և ելթ Աւետարանի ուսումն բարեպաշտութեան. յորս մի որ յաւելցէ ինչ և մի պակասեցուցցէ 'ի նոցանէ՝ զինչ և իցէ (1)։ Իսկ ոչ Կանոնական՝ ըստ վկայելոյ նոյն իսկ սրանծայի Պարդապետին Եկեղեցւոյ, կոչին գիրք՝ որք ոչ են անցուցեալ 'ի կարգ ՅԱստուծոյ ներշնչելոյն գրոց, այլ ընկալեալ 'ի Հայրց 'ի սէաս ընթերցուածոյ նոցա հաշտաւորից և երախայից, և որոց արժանն ունկն դնել բանից բարեպաշտութեան (2), և են շահեկան և լի խրատու ուղղութեան. և որպէս սուրբն Յովհաննէս Դամասկացին ասէ, այլ ոչ մուծեալ 'ի ցանկ, այսինքն 'ի կանոն (3)։ Զառաջիկայ խնդրոյս խաւեսցուք սուղ ինչ բանիւ յերիս հատուածս։ Յառաջնումն՝ յաղագս ներշնչութեան Գրոց Սրբոց, յերկրորդումն՝ յաղագս Գրոց Կանոնականաց, և յերրորդումն՝ յաղագս ոչ Կանոնականացն։

## ՀԱՏՈՒԱԾ ԱՌԱՋԻՆ.

### Ներշնչութիւն Աստուծոյ 'ի հին Կտակարանի.

Երբայեցիք առ 'ի հանաչել և առ 'ի հաւատալ զկանոնական գիրս հնոյ Կտակարանի ներշնչութեամբ Աստուծոյ գրեալ՝ ունէին հզօր ապացոյցս. այլ առաւել քան զնոսա մեք Քրիստոնեայքս ունիմք։ 1°. Յաղագս արժանաւորութեան արտունակեալ

---

կարգաւորութիւնք՝ ընդ որս չիք հնար յաւելուլ կամ յապաւել ընդհակառակն անասի զմի ինչ։

(1) ԼԹ. Թուոց Գ. Գլուխ. Գ. Գլուխ. 17. Երես. 472. Մոսկվայ. 1844 ամի։

(2) Տես անդ։

(3) Առդ բարարութիւն ուղղափառ Հաւատոյ. Գիրք. Դ. Գլուխ. 17. Երես. 472. Մոսկվայ. 1844 ամի։

'ի նոսա նեբիոցն. վասն զի 'ի Ս. Գիրս բովանդակին այն-
պիսի վսեմագոյն վարդապետութիւնք Հաւատոյ, այնպիսի ամե-
նայատակ կանոնք սրբութեան վարուց, այնպիսի կատարելագոյն
ծիսական և բազաբական օրէնք, մինչեւ Հրէից ամենեցուն՝ մինչ-
զեւ վարէին օրինաց, յաղագս այսոցիկ և եթէ կատարելութեանց
խոստովանիլ զոյն շունչ և բան Աստուծոյ և ոչ մարդոյ. բայց
յայտնանէ 'ի կարգի այլ և այլ ճշմարտութեանց զուանին 'ի հին
Կտակարանի նաեւ մարգարէութիւնք, յորոց բազումք կատարե-
ցան յանդիման աչաց նոցա՝ յաւելեալ 'ի Հաւատս նոցա զնոր
ինն հզօրելագոյն համոզումն յաղագս յԱստուծոյ բղխման նուիրա-
կան Գրոց իբրեւանց։ 2°. Զի են ակներեւ վկայութիւնք Ս. Գրոց
յայտմ մասին. զորօրինակ. յորժամ ինքնին Աստուած հրամայէ
միւսանգամ 'ի Ծառայից իւրոց գրոշմել 'ի գիր ինն։ Զորօրինակ.
«Եւ ասէ Տէր ցՄովսէս. գրեա զայդ առ 'ի յիշատակ 'ի գիրս,
եւ տուր յականջս Յեսուայ, զի ջնջելով ջնջեցից զյիշատակ
Ամաղեկայ յերկրէ 'ի ներքոյ երկնից» (Գեղից. ԺԷ. 14. հան-
մատեա՛ ընդ ԼԱ. 18. ԼԲ. 15—16. ԼԴ. 1—8 և 27։ Բ.
Օրին. Թ. 10—11. Ժ. 1. 2. ԼԱ. 19). և հրամայէ յատկա-
պէս գրել գրանս կամ գայտնութիւնս իւր. զորօրինակ. Մովսի-
սի. «Եւ ասէ Տէր ցՄովսէս. գրեա՛ դու քեզ զպատգամսդ զայ-
դոսիկ, զի այդու բանիւ դնիցեմ ուխտ ընդ քեզ և ընդ Իսրայէլ»
(Ելից. ԼԴ. 27). Երեմիայ. «Գրեա՛ դու քեզ զամենայն զբանս՝
զոր ետուս քեզ հրաման, 'ի մատեանի» (Լ. 2). Եղեկիէլի. «Որ-
դի՛ մարդոյ՝ գրեա՛ դու քեզ զնշան աւուրն, յորմէ հետէ եհաս
արքայն Բաբելացւոց 'ի վերայ Երուսաղէմի. յորմէ յայտնանէ առա-
կեցցես տանն զառնացողսդ զառակս զայս, և ասասցես ցնոսա.
այսպէս ասէ Տէր Տէր» (ԻԴ. 2—3)։ 3°. Զի սրբազան Մատե-
նագիրք չեւ սկսեալ գրել զվարդապետութիւն կամ զմարգարէ-
ութիւն կամ զայլ ինչ յայտնութեաց՝ բարձրաբարբառ քարոզէ-
ին. «Լուարո՛ւք զպատգամս Ամոսայի Տեառն (Եղեկ. Զ. 3։
Ամոս. Դ. 1)։ «Ասէս ասէ Ամոսայի Տէր» (Եղեկ. ԻԵ.
3)։ «Ասէս ասէ Տէր ամենակալ»։ «Եղեւ բան Տեառն առ
Զաքարիա մարգարէ որդի Բարաքեայ» (Զաք. Ա. 1). «Եղեւ
բան Տեառն 'ի ձեռն Անգէի մարգարէի, և ասէ» (Անդ. Ա.
3)։ 4°. Զի Մարգարէք 'ի գլուխս գրուածոց իւրեանց վկայեն
զանձանց զոլ ներշնչեալ յԱստուծոյ. զորօրինակ Մովսէս.
«Եւ ասէ՝ ե՛րթ, և ես բացից զբերան քո, և խելամուտ ասասցից

զքեզ՝ զոր պարտ իցէ խօսիլ» (Եզեկ. Դ. 12). Երեմիա. «Եւ ձգեաց Տէր զձեռն իւր առ իս, և մերձեցոյց 'ի բերան իմ, և ասէ ցիս. ահա՛ եղաւ զբանս իմ 'ի բերան քո» (Ա. 9). Դաւիթ. «Հոգի Տեառն խօսեցաւ ցիս, և բան նորա 'ի լեզուի իմում» (Բ. Թագ. ԻԳ. 3):

Ա. ժամանակաւ յայտնութեանն Քրիստոսի յերկրի՝ որպէս և ակնառուս վիպագիրքն Փլատիոս և Փիլոն վկայեն, բովանդակ Հրէայք հաւատային հաստատութեամբ զհին Կտակարանն հեղինակութեամբ Աստուծոյ գրեալ, և 'ի նմա բովանդակեալ Աստուածային վարդապետութեանց. այնպէս զի անհնարին է առնել 'ի նոսա այլայլութիւն ինչ, կամ թէ յաւելուլ անտի, և կամ յանելուլ զնոր իմն: Ինքնին եւս Յիսուս Քրիստոս ոչ քան-նոցա միայն, այլ բազմօք և առաւել եւս եղոյց յարգանս առ Կտակարանն հին՝ իբրև առ մատեան նուիրական և թանձին Աստուածային, յորժամ հարկ լինէր հաստատել նոքա զայլ և այլ հմտարութիւնս. որպիսի թէ հմտարութիւն յարութեան մեռելոց (Մատթ. ԻԲ. 31), և նաև զերապանծ հմտարութիւնն առաքման իւրոյ յԱստուծոյ. «Քննեցէք զգիրս»՝ ասէր նա առ Իսրայէլացիս. «զի զուք համարիք նոքօք ունել զկեանս յաւիտենականս. և նոքին իսկ են, որ վկայեն վասն իմ» (Յովհ. Ե. 39): «Եթէ հաւատայիք զուք Մովսէսի (գրուածոցն), հաւատայիք որդեաք և ինձ. զի նա վասն իմ իսկ գրեաց» (46). և Աշակերտացն՝ որ երթային յԵմմաուս, «Սկսեալ 'ի Մովսէսէ և յամենայն Մարգարէից՝ մեկնէր նոցա, որ ինչ յամենայն գիրս գրեալ է զնմանէ» (Ղուկ. ԻԴ. 37): Խօսէր միշտ զհին Կտակարանէ՝ իբրև զԱստուծոյ և ոչ բնաւ զմարդոյ ուրուք դրանէ. «Զէ՛ մարթի եղծանիլ գրոցն» (Յովհ. Ժ. 35): «Ամէն ասեմ ձեզ. մինչչեւ անցցեն երկինք և երկիր, յոտա մի՝ որ նշանախեց մի է, ոչ անցցէ յօրինացն և 'ի Մարգարէից, մինչեւ ամենայն եղիցի» (Մատթ. Ե. 18): Երբեմն 'ի մէջ բերելն բանս ինչ 'ի հնոյ Կտակարանէ՝ յաւելոյր. «Ասաց Աստուած» (Մատթ. ԺԵ. 4): Եւ յայս տակս յանդիմանէր զՀրէայս՝ ասելով. «Ընդէ՞ր անցանէք զպատուիրանսն Աստուծոյ վասն ձերոյ աւանդութեան» (3): «Եւ անարգէք զրանն Աստուծոյ ձերով աւանդութեամբ՝ զոր աւանդեցէք» (Մարկ. Է. 13): Եւ առանձինն 'ի խօսելն զԴաւիթայ՝ ասէր. «Ինքն Դաւիթ Հոգւովն սրբով ասէ. ասաց Տէր ցՏէր իմ՝ նիստ ընդ աջմէ իմմէ» (Մարկ. ԺԲ. 36):

Զնոցն յարգանս՝ զորս եցոյց Աստուածային Պարգևատուն խրատանց, ցուցին հնոյ Կտակարանի և Ս. Առաքելոյ, 1°. 'ի վկայութիւն ածելով բազում անգամ գրեալում բանս 'ի հին Կտակարանաց առ 'ի հաստատել կամ առ 'ի մեկնել նորոք զնշանակութիւնս Եկեղեցոյն (Գործ. Գ. 17—25; Յակ. Ա. 10—12 և 19. Բ. 1—4—10—11—23—26. Գ. 6; Յուդ. Ա. 5. 11. 12. և 16), և յայլ յոլով տեղիս, մանաւանդ յԱւետարանն Մատթէոսի, և 'ի թղթին Եբրայեցւոց: 2°. Կոչելով զհին Կտակարանն՝ «Գիրք սուրբ» (Հռոմ. Ա. 2; Բ. Տիմ. Գ. 15). «Պատգամ Աստուծոյ» (Հռոմ. Գ. 2). «Բան մարգարէական» (Բ. Պետր. Ա. 19); 3°. Բացայայտ թարգմելով, թէ բերանով այս ինչ կամ այն ինչ անուն Մատենագրի հնոյ Կտակարանաց ինքնին Ս. Հոգին խօսեցաւ (Գործ. Ա. 16. ԻԸ. 25; Եբր. Գ. 7); 4°. Յայտնապէս վկայելով ներշնչութեան Աստուծոյ յամենայն 'ի գիրս հնոյ Կտակարանի ընդհանրապէս. «Զի ամենայն մարգարէութիւն՝ ասէր Ս. Առաքեալն Պետրոս, «իբրոյ գրոց լուծումն ոչ ունի. քանզի ոչ եթէ ըստ կամաց մարդկան տուաւ մարգարէութիւն երբէք, այլ 'ի Հոգւոյն սրբոյ գրեալք՝ խօսեցան մարդիկ յԱստուծոյ» (Բ. Պետր. Ա. 20 և 21); «'Ի մանկութենէ զգիրս սուրբս գիտես»՝ բարբառի միւս Առաքեալն սիրելի աշակերտին իւրում Տիմոթէոսի, «որ կարող են իմաստուն առնել զքեզ 'ի փրկութիւն 'ի ձեռն Հաւատոյն՝ որ 'ի Քրիստոս Յիսուս»; «Ամենայն գիրք Աստուածաշունչք և օգտակարք 'ի վարդապետութիւն են և 'ի յանդիմանութիւն և յուղղութիւն և 'ի խրատս արդարութեան, զի կատարեալ իցէ մարդն Աստուծոյ յամենայն գործս բարութեան հաստատեալ» (Բ. Տիմ. Գ. 15. 17); Սոքին իբրև Եկեղեցին 'ի սկզբանէ հետէ հիմնադրութեան իւրոյ՝ հաւատոյ ճշմարտապէս զնեբշնչութիւն Աստուծոյ 'ի գիրս հնոյ Կտակարանաց, և զայն զայս հաւատս իրրև էական մասն եմոյծ յամենայն հանդանակս նախնի ժամանակաց՝ ընթերցեալ 'ի վկայութիւն 'ի ձեռնադրութեան հոգւոյ Եկեղեցւոյ (1):

Ներշնչութիւն Աստուծոյ 'ի Նոր Կտակարանի.

Թէև 'ի Ս. Գիրս չիք ուրեք ասացեալ որոշակի, թէ գիրք

(1) Տես 'ի Մաշտոցն Ձեռնադրութեան:

նորոյ Կտակարանի իսկն գրեալ թելադրութեամբ Աստուծոյ, որպէս ասացեալն է յաղագս գրոյ Հին Կտակարանի, բայց սակայն և այս ճշմարտութիւն անուրանալի է. «Եւ ես աղաչեցից զՀայր», ասէր Փրկիչն Աշակերտաց իւրոց, «և այլ միխիթարիչ տայէ ձեզ. զի լինիցի 'ի յաւիտեան. զՀոգին ճշմարտութեան՝ զոր աշխարհս ոչ կարէ ընդունել. զի ոչ տեսանէ զնա, և ոչ ճանաչէ զնա. բայց դուք ճանաչէք զնա, զի առ ձեզ բնակեցէ, և ընդ ձեզ եղիցի» (Յովհ. ԺԴ. 16. 17)։ Այսպէսն եթէ Ս. Հոգին լուռ այսմ խոստման բնակեաց խնամս Աստուծոյ, և բնակեաց 'ի նոսա 'ի յաւիտեան անբաժան հանապազորդաբար, զիա՞րդ ուրեմն մարթէ յանձն առնուլ, թէ նա եթող զնոսա կամ մեկնեցաւ 'ի նոցանէ 'ի կարեւորագոյն վայրկեանս և եթէ, յորում 'ի գրի հարկանէին դիմորդութիւնս իւրեանց։ «Միխիթարիչն Հոգին Սուրբ՝ զոր առաքեսցէ Հայր յանուն իմ, նա ուսուցէ ձեզ զամենայն՝ որ ինչ ասացի ձեզ, և յիշեցուցէ ձեզ» (-26). զիա՞րդ ասացին Հարաւոր էր, զի նորոգ և երկնային ուսուցիչս Հոգւոյս զնոսա անհրաժեշտ 'ի ժամուն և եթէ, յորժամ 'ի գրի դրոշմէին նորա զմարդասիրութիւնս իւրեանց։ Եւ եթէ յայտնի զէտս հնար եղեւ նոցա սքանչել՝ որպէ՞ս ուրեմն լցաւ խոստումն Փրկչին. «Նա ուսուցէ ձեզ զամենայն»։ «Յորժամ մատնիցեն զձեզ, մի հոգայցէք. թէ ո՞րպէս կամ զի՞նչ խօսիցիք. զի տայցի ձեզ 'ի ժամուն յայնմիկ զինչ խօսիցիք. զի ոչ եթէ դուք իցէք՝ որ խօսիցիք, այլ Հոգին Հօր ձերոյ՝ որ խօսիցի 'ի ձեզ» (Մատթ. Ժ. 19—20)։ «Զի ես տայց ձեզ բերան և իմաստութիւն, որում ոչ կարիցեն կալ հակառակ, կամ առ պատասխանի ամենայն հակառակորդքն ձեր» (Ղուկ. ԻԱ. 15)։ Իսկ արդ՝ եթէ Փրկիչն խոստացաւ Աշակերտաց իւրոց բերան և իմաստութիւն 'ի պահուն անդամ, յորժամ վիրսկը հատանիցէ նոցա ուսման իւրեանց դատաւորաց և նեղչաց, մինչ թարգմանչս զԱ. Աւետարանիչս զուրկ 'ի գերբնական գործակցութենէ իւրմէ, յորժամ 'ի մի քոմանդանէին նորա զաւետարանութիւնն իւրեանց 'ի քարտիսի 'ի սկիզբս հրահանգութեան համայն դարուց։

Մասնաւորիւք Կտակարանի նորոյ ամենեքին միանգամայն ընտրեցան և կոչեցան 'ի պաշտաման համաշխարհական դաստիարակութեան Աստուծոյ, և լցեալ Հոգւով սրբով՝ «Խօսեցան զԱստուծոյ իմաստութիւնն ծածուկ խորհրդով, զոր յառաջ քան

գյուխառնես սահմանեալ Աստուած 'ի փառս մեր։ Զոր ոչ որ յիշխանաց աշխարհս այսորիկ ծանեաւ, այլ նոցա յայտնեաց Աստուած Հոգւովն իւրով, զի Հոգին զամենայն քննէ և զխորս Աստուծոյ. զի ո՞չ եթէ զՀոգի աշխարհս այսորիկ առին, այլ զՀոգին՝ որ յԱստուծոյ. և զոր խօսեցանն՝ ո՞չ եթէ մարդկեղէն ուսմամբ ճարտարութեան բանից, այլ վարդապետութեամբ Հոգւոյն» (Ա. Կորնթ. Թ. 7—13). և զվարդապետութիւնս խրատեալս եւս աշխարհի՝ ո՞չ իբր զմարդոյ ուրուք գրան, այլ առաքիւ որպէս զԱստուծոյ բան. «Եւ մեք զոհանամք զԱստուծոյ անդադար. զի առեալ զբուր բանին Աստուծոյ առ 'ի մէնջ՝ ընկալարուք ո՞չ իբրև զբան մարդկան, այլ որպէս ճշմարտիւ զբան Աստուծոյ» (Ա. Թես. Բ. 19)։ Յայս տակս և Եկեղեցին Քրիստոնէական 'ի սկզբնաւորութենէ անտի իւրմէ 'զբոմանդակ նոր Կտակարանն հաւատաց միջոց Հոգւոյն Աստուծոյ հեղինակեալ. զոր և ընկալեալ 'ի ձեռաց Առաքելոց՝ պաշտեաց զայն իբրև զերազոյն և ամենապատուական հրահանգ յուսումն ճշմարտութեանց Հաւատոյ։ Զի եթէ ո՞չ այսպէս, զիա՞րդ կարելի էր անհրահանգ և անկիրթ արանց՝ որպիսիք Առաքեալքն էին, զայնպիսի զերազանց և զբարձրագոյն վարդապետութիւնս գրել ըստ Հաւատոյ, զորոյ զնմանն տակաւին ո՞չ մարիցաս ամենեքեան արդիւնաւորել հանճար ինչ մարդկեղէն, թէև յաւէտ կիրթ։

## ՑՕԳՈՒԱԾ ԵՐԿՐՈՐԴ.

Յաղագս Կանոնական գրոց Աստուածաշնչի ընդունելեաց.

### ԿԱՆՈՆԱԿԱՆ ԳԻՐՔ ՀԻՆ ԿՏԱԿԱՐԱՆԻ

Կանոն ընդունելի գրոց Հին Կտակարանի ծանուցեալ առ նախնի Հրէից՝ էր հետեւեալս։ 1. Ծննդոց կամ Արարածոց. 2. Ելից. 3. Ղեւտացւոց. 4. Թուոց. 5. Երկրորդ Օրինաց. 6. Յեսուայ Նաւեայ. 7. Դատաւորաց, և իբրև յաւելուած այնորիկ Գիրք Հռութայ. 8. Առաջին և Երկրորդ Գիրք Թագաւորութեանց՝ իբրեւ կրկին մասունք մի՛ոյ գրոց. 9. Երրորդ և Չորրորդ Գիրք Թագաւորութեանց. 10. Առաջին և Երկրորդ Գիրք Մնայորդաց. 11. Գիրք Եզրայ Առաջին, որոյ է և Երկրորդ (զոր Յոյն վերնագրին Նէհեմայ ընծայեալ). 12. Եսթեր. 13.

Յոբ. 14. Սաղմոսք Դաւթի. 15. Առակք Սողոմոնի. 16. Յաղագս նորա. 17. Երգ Երգոց նորա. 18. Գիրք Մարգարէութեան Եսայեայ. 19. Երեմիայ. 20. Եղէկիէլի. 21. Դանիէլի. 22. Երիսուսան Մարգարէք։

Զայս կանոն ունէր Եկեղեցին Իսրայէլեան, որում նախ քան զգալուստ Մեսսիային՝ «Հաւատարիմ եղեն պատգամքն Աստուծոյ» (Հռոմ. Գ. 2). զորս և պաշտէր՝ որպէս յայտ է, Ա. 'Ի վկայութենէ Յովսեփայ Փլաւիոսի, որ յիշատակէ զ22 Աստուածային գիրս և եթ, և յաւելու, թէ հինգն 'ի նոցանէ գրեցան 'ի ձեռն Մովսէսի, երեքտասանքն 'ի ձեռն Մարգարէից յաւուրց անտի Մովսէսի մինչև զԱրտաքսերքսէս (Արտաշէս) Պարսից արքայ (1), և այլ ևս չորեքին գիրք՝ յորս են երգք 'ի գովեստ Աստուծոյ, և օգտակարագոյն խրատք յուղղութիւն մարդոյ։ Բ. 'Ի վկայութենէ հնոյ ոմանց 'ի Վարդապետաց Քրիստոնէական Եկեղեցւոյ՝ Մելիտոնի, Որիգինիայ, Հերոնիմոսի և այլոց, որք շրջեցան յատկապէս վասն այսր խնդրոյ 'ի Հրէաստան՝ փոյթ կալեալ տեղեկանալ 'ի նոցունց գրանիւնութիւն սրբազան Մատենից նոցա. և միշտ գտին ըստ 'ի վերս անդր ասացեալսն 'ի 22 գիրս ամփոփեալ։ Գ. 'Ի Հանապարհորդեան աւանդութենէ Հրէից, որք և ցայսօր ժամանակի ունին անխախտ զմի և զնոյն կանոն (2)՝ յարմարեալ զթիւ Կանոնական Գրոցն՝ թուոյ տասից Աբրեանց։

Զմի և զնոյն կանոն գրոց հնոյ Կտակարանի թուի ամբողջապէս ընկալեալ յԵկեղեցւոյն հնոյ ուխտի՝ Եկեղեցին նորոյ ուխտի, որպէս և բաղմաթիւ վկայքն հաւատեն զայն, յորոց՝ 1. Մելիտոն եպիսկոպոս Սարդեայ (յելս Բ. Դարուն) մեծափայլ ըղձիւ Հանապարհորդեաց յԱրևելս՝ առ 'ի գտնել և յստուգիւ հաստատ լինել կանոնի գրոց հնոյ Կտակարանի, զորս ըստ այսմ ապա դասակարգէ 'ի թղթին՝ զոր ուղղեաց առ Ոնեսիմոս. «Հինգ գիրք Մովսէսի, այսինքն Ծննդոց, Ելից, Ղեւտացւոց, Թուոց, Երկրորդ Օրինաց, Յեսուայ Նաւեայ, Դատաւորաց, Հռութայ, չորս գիրք Թագաւորութեանց, երկու գիրք Մնացորդաց, Սաղմոսք Դաւթի, Առակք Սողոմոնի կամ թէ Իմաստութիւնն, Յաղագս, Երգ երգոց, Յոբ, Մարգարէքն՝ Եսա-

(1) Ընդդէմ Ապիոնի. Գիրք. Ա. Յօդուած. 8։
(2) Մինչև. Տարաբերութիւն Սիրոյն Հրէութեան. Գիրք. Դ. Երես. 409։

յի, Երեմիա, Երկոտասան Մարգարէիցն մի գիրք, Դանիէլ, Եզեկիէլ և Եղբ» (1)։

2. Որիգէն (՝ի սկզբան Գ. Դարուն) զյանկ իւր այսպէս սկսանի. «Գիտել արժան է, զի գիրք հնոյ ուխտի բան աւանդելոյ Հրէից՝ են քսան և երկու». և յետ մի առ մի թուելոյ զնոսա՝ յաւելու. «Այսոքոյ թուոյ նոցա զասանին Գիրք Մակաբայեցւոց (2)։ 3. Սուրբն Կիւրեղ Երուսաղեմայ (Դ. Դարուն) յորդորէ՝ ՝ի կրօնագիտութեան իւրում (Կոչումն ընծայութեան)։ «Ընթերցիր զ22 գիրս, և առ անյապոն մի հաւատ լինիր» (3)։ 4. Եւսեբիոս Կեսարիայ (Դ. Դար) ՝ի խօսիլն զյանկէ Մելիտոնի՝ յաւելու, թէ Մելիտոն ամենասեայ ՝ի նմին ցուցակի զայն ասեն Գիրս հնոյ ուխտի, որք ընկալեալ են հանուրց հաւատացեալքն (4)։ 5. Ս. Աթանաս Աղեքսանդրիոյ (Դ. Դար) ՝ի թղթի իւրում յաղագս Տօնից և համաձայնութեան Ս. Գրոց (նմա ընծայեալ սովորաբար) ՝ի մէջ բերեալ, և թուեալ զ22 Կանոնական Գիրս՝ որոշէ զնոսա յայլոսապէս յոչ Կանոնականացն (5)։ 6. Ս. Գրիգոր Աստուածաբան (Դ. Դար) և 7. Ս. Ամփիլոքիոս (Դ. Դար) ՝ի թիւ արկեալ զ22 գիրս հնոյ Կտակարանի՝ ոչինչ յիշատակեն զմեռելոցն (6)։ 8. Յովհան Լատրիկեայ (յ364 ամի) յետ ասելոյ ՝ի 59 կանոնի ասելով՝ «Ոչ է արժան ընթեռնուլ եկեղեցւոջ զանցայս Սաղմոս կամ թէ Գիրս ոչ կանոնեալս, այլ միայն զԳիրս հին և նոր Կտակարանաց կանոնիւք որոշեալս». ապա ՝ի հետեւեալ՝ այն է ՝ի 60 կանոնին շարունակէ. «Արժան է ընթեռնուլ զԳիրս հնոյ Կտակարանի, Ա. զՇնորհաց. Բ. զՅեսայեայ յեղիպտոսէ. Գ. զՂեւտացւոյն. Դ. զԹուոյն. Ե. զԵրկրորդումն Օրինաց. Զ. զՅեսուայ Նաւեայ. Է. զԴատաւորաց. Ը. զՀռութեանն. Թ. զԵսթեր. Ժ. զԹագաւորութեանց առաջին և զերկրորդ Գիրս. ԺԱ. զԹագաւորութեանց երրորդ և չորրորդ Գիրս. ԺԲ. զՄնայորդաց զառաջին և զերկրորդ Գիրս. ԺԳ. զԵզրայ զառաջին և զերկրորդ Գիրս. ԺԴ. զԳիրս 150 Սաղմոսաց. ԺԵ. զԱռակս Սաղոմոնի. ԺԶ. զԺողովող.

---

(1) Ցեկեղեցական Պատմութեան Եւսեբիոյ. Գիրք. Դ. Գլուխ. 26։
(2) Նոյն Եւսեբիոյ. Գիրք Զ. Գլուխ. 25։
(3) Կրօնագիտութիւն. Դ. Գլուխ. 35։
(4) Եկեղեցական Պատմութիւն. Գիրք. Դ. Գլուխ. 26։
(5) Գրքոյն Ոնկերցուածք. 1841 ամի. Գիրք. Դ. Երես. 216. 218։
(6) Գիրք Կանոնաց Ս. Առաքելոց, Ս. Տիեզերական Ժողովոց, եայլն։

ԺԷ. զԵրգ Երգոցն. ԺԸ. զԵրկուասան Մարգարէսն. ԺԹ. զԵռասն. Ի. զԵրեմիա, զԲարուք, զՈՂՋ և զԹուղթն. ԻԱ. զԵզեկիել. ԻԲ. զԴանիէլ։ 9. Ս. Եպիփան եպիսկոպոս Կիպրոսի խոսի յերիս տեղիս 'ի գրուածս իւր յաղագս Կանոնական Գրոց Հնոյ Կտակարանի, և միշտ թուէ զնոսա 22. և յաղագս միոցն յաւելու. «Ոչ զոսանին 'ի կանոնի։ Թէպէտ սգուտիար են նոքին և լի յորդորակաւ, այլ արտաքոյ են 'ի թուոյ Ս. Գրոցն» (1)։ 10. Հերոնիմոս (Գ. Դար)' որ թարգմանեաց յԵբրայականէն զգիրս բովանդակեալս 'ի կանոնի Հրէից, զսոսա միոյն ասէ. «Ոչ զոսանին 'ի կանոնի, և համարելի են ընդ անյայտս»։ 11. Հիլարիոս եպիսկոպոս Պիկտաւիոյ (Գ. Դար) թուէ նոյնպէս 22 Կանոնական Գիրս Հնոյ Կտակարանի, և յաւելու. «Այլ ոմանք շաբաստանալ ընդ սոսա նաև զԳիրս Ցոփրիթայ և Յուդիթայ' զամենայն զգիրս հաշուել կամին 24' ըստ թուոյ տառից Յունական Այբուբենից»։ 12. Ռուփինոս (Գ. Դար) ակնարկեալ զգրոցէ զ22 Կանոնական Գիրս Հնոյ Կտակարանի յոչ Կանոնականացն' անուանեալ զոյսոսիկ եկեղեցական։

Թէև յ85 Առաքելական կանոնք ընդ Կանոնականս յիշատակին նաև Իմաստութիւն Յեսուայ որդւոյ Սիրաքայ, և երբեմն Գիրք Մակաբայեցւոյ, սակայն գիտել արժան է, զի կանոնն այն խոսի զընդունելի և զսուրբ Գրոց, և ոչ թէ զԿանոնականաց. իսկ սուրբ և ընդունելի կոչին հաստատապէս ամենայն Գիրք Աստուածաշնչի' եթէ՛ մեծեալքն 'ի կանոնս, և եթէ՛ արտաքոյ մնացեալքն. ընդ որս նաև այնոքիկ 'ի Մատենից, զորս վարէ Եկեղեցին յԱստուածային զարշամանս իւր. և յայս ասելէ, զի 'ի նմին կանոնի ընդ Աստուածաշունչ Գիրս դասեալ են նաև երկոքին Թուղթք և Կանոնագրութիւնք Եղեսիոնոյ (2)։ Զայս տարակուսութիւն առաւել ևս զարգութեամբ բացատրէ և երանելին Օգոստինոս' յաւելն. «Երբայեցիք զՄակաբայեցւոյն զԳիրս ոչ երբէք ընկալան հաստատ Օրինաց, Մարգարէից և Սաղմոսաց. այլ Եկեղեցին համարեցաւ զայնս ոչ անպիտան, եթէ ընթերցի և լսիցի ողջմտութեամբ» (3)։

Իսկ որ ինչ վերագրեալ առ կարգութիւն կանոնի Գրոց Հնոյ

---

(1) Ընդդէմ Հերետիկոսաց. Գիրք. Ա. Գլուխ. 8։
(2) Գիրք Կանոնաց Ս. Առաքելոց, Ս. Տրդատայ Ժողովոց և որոց Հարց։
(3) Գիրք. Բ. ընդդէմ Դոնդանդիոյ. Գլուխ. 21։

կոստարանի, այսինքն է՝ ընդունել կամ հրատարակել առ Հրէայս զայս կամ զայն գիրս Աստուծոյ ազդեցութեամբ գրեալ և Կանոնական Գիրս, զիտել արժան է նոքա՝ զի բան վկայելոյ Փիլոնոյ (1) և Եւսեբիոյ Պամփիլացւոյ (2)՝ ժողովուրդն չունէր յայնմ մասին իրաւունս ինչ կամ արտօնութիւն, այլ Հոգիւք և Եմ և 'ի նոցունց յատկապէս այնորիկ սակաւաւոր անձինք՝ յորս էր Հոգի սուրբ. ամենայն իրի իրաւունս ունիմք ասել, թէ սկզբան կազմութեան կանոնի առ Եբրայեցիս՝ ժամանակակից է սկզբան յԱստուծոյ ներշնչեալ Գրոց։ Առաջինն Մովսէս եղեալ, որ յետ գրելոյ զգիրս իւր՝ ծանոյց զայնոսիկ իրրև Աստուածային Գիրս՝ հրաման առեալ դնել զնոսա 'ի Տաճարի յաջմէ կողմանէ Տապանակին, և ընթերցանել օր ըստ օրէ 'ի լուր Խորհրդոյ։ Ըստ այսմ վարեցաւ և Յեսու Դաւեայ, զորմէ գրեալն է. «Եւ գրեաց Յեսու զբանս զայսոսիկ 'ի Գիրս Օրինաց Աստուծոյ» (Յեսու Դաւեայ. ԻԴ. 26). այսինքն յաւել կամ չարտակցեաց զգրուածս իւր առ Հնգամատեանն։ Եւ նոյն վարեցաւ և Սամուէլ, որ գրեաց «Զիրաւունս թագաւորին 'ի մատեանի, և եդ առաջի Տեառն» (Ա. Թագ. Ի. 25)։ Ըստ նոցա արարին ամենայն՝ և որք զկնի նոցա կացին արդարոք Մատենագիրք, թէպէտ և 'ի նոցա գիրս պակասին կարեւոր ապացոյցք։

Զմերժին կարգադրութիւն Կանոնական Գրոց Հնոց Կտակարանի արար Եզրաս՝ թերեւս գործակցութեամբ Նէհեմիայ և Մարգարէից ոմանց եղելոց 'ի ժամանակին, որ մանրախոյզ քննութեամբ 'ի մի մատեան ժողովեալ զարդարան Գիրս՝ հրատարակեաց իրրև Աստուածայինս (Բ. Մակ. Բ. 13)։ Այսմ ազգէն զոչոյ վկայէ և աւանդութիւն Հրէից զաշխեալ 'ի Թարգմանութ, և Զէնոբիոս՝ որոյ միաբանին և հռչակաւոր Հարք Նիկեղեայոյ։ Այնուհետև ոչ ևս ելին 'ի Հրէից Մարգարէք, որոյ միոյն վերապահեալ էր արտօնութիւն քննելոյ և դատելոյ զԿանոնական Գիրս (3)։

---

(1) Ընդդէմ Ապիոնի. Գիրք. Ա. Ցոգուած. 8։

(2) Պատմութիւն Աստուածոյ. Գիրք. ԺԲ. Գլուխ. 22. Երես 507. Փարիզ. 1628։

(3) Յաստիճանս՝ զորս յառաջ բերայք 'ի վերոյ յաղագս 22 Գրոց Կանոնականաց Հնոց Կտակարանի, գտանի դիպն ստորոգութիւն. Ա. 'ի մասին Գրոց Նաթուրայ, թէպէտ Եռանձնոյ, և զրոց Եռանձնի. ոչ ոչ երկու առաջինք ընդ Կանոնականս Հնոց

## Կանոնական Գիրք Նորոյ Կտակարանի.

Զ Կանոնական Գիրս Նորոյ Կտակարանի 'ի սկզբանէ հետէ Եկեղեցին Քրիստոսի Ծանեալ և հաւատաց լինել 27։ Ա. Աւետարան 'ի Մատթէոսէ։ Բ. Աւետարան 'ի Մարկոսէ։ Գ. Աւետարան 'ի Ղուկայ։ Դ. Աւետարան 'ի Յովհաննէ։ Ե. Պրակք կամ Գործք Առաքելոց։ Կաթողիկէ թուղթք. Զ. Մի Յակոբայ։ Է. և Ը. երկուք Պետրոսի։ Թ. Ժ. և ԺԱ. Առաջին, երկրորդ և երրորդ թուղթք Յովհաննու։ ԺԲ. Մի Յուդայի։ Զորեքտասան թուղթք Պօղոսի. ԺԳ. Առ Հռոմայեցիս։ ԺԴ. և ԺԵ. Առաջին և երկրորդ թուղթք առ Կորնթացիս։ ԺԶ. Առ Գաղատացիս։ ԺԷ. Առ Եփեսացիս։ ԺԸ. Առ Փիլիպպեցիս։ ԺԹ. Առ Կողոսացիս։ Ի և ԻԱ. Առաջին և երկրորդ թուղթք առ Թեսաղոնիկեցիս։ ԻԲ. և ԻԳ. Առաջին և երկրորդ թուղթք առ Տիմոթէոս։ ԻԴ. Առ Տիտոս։ ԻԵ. Առ Փիլիմոն։ ԻԶ. առ Եբրայեցիս։ ԻԷ. Յայտնութիւն կամ Տեսիլ Արբոյն Յովհաննու Աստուածաբանի։

Դարձեալ Հարք Եկեղեցւոյ՝ եթէ յԱրևելս, և եթէ յԴիւսիս, գյիշատակեալ 'ի վերս անդր 27 Գիրս Նորոյ Կտակարանի Ծանեան և ընկալան իբրև Կանոնականս, իմն ազդեցութեամբն Աստուծոյ գրեալս. որում լիցին ապացոյցք՝ 1. Որիգէն, որ յեօթներորդ ճառի 'ի վերոյ գրոյն Ցեսուայ թուէ զչորս Աւետարանս գրեալս 'ի Մատթէոսէ, 'ի Մարկոսէ, 'ի Ղուկայ, և 'ի Յովհաննէ, զԳործս Առաքելոց գրեալ 'ի Ղուկայ, զթուղթն

---

մարեալ 'ի ցանկս Որիգինիսայ, արբոյն Կիւրղի, արբոյն Աթանասու, Հիլարիոսի, Դիոդորոսի Լաւոդիկիայ՝ ասելն, յայլս անչիշատակ են մեկնեալ, ոչ իբրև արտաքոյ կանոնի, այլ 'ի մի գոլով համաթուեալ ընդ Երեմիայ. վասնորոյ և սուրբն Ոսկեբերան 'ի մէջ բերելն 'ի Բարուքայ բանս յապացոյց Աստուածաշնչեան Քրիստոսի՝ ոչ որպէս 'ի նմանէ առեալ գրէ, այլ որպէս յԵրեմիայ. ասպէս և սուրբն Բասիլիոս (Գիրք Դ. ընդդէմ Եւնոմիոսեանց) և այլք։ Իսկ Եոթներ՝ թէ և 'ի ցանկի արբոյն Աթանասի, ոչ դիտեմ՝ ոյր ազգաւ համարեալ է ընդ եղեալս արտաքոյ կանոնի, և 'ի ցանկի արբոյն Գրիգորի Աստուածաբանի խապառ թողեալ 'ի բաց. բայց և այնպէս յայլ ամենայն ցանկս համարի ընդ Կանոնականս, և անտարակոյս ճայն բազմաց է՝ որ յուծանէ յայտագիրի պարագայս գինեղիրն. այսու ամենայնիւ սուրբն Աթանաս (և թէ նա իբրէ խակապէս հեղինակ չիւր անուն եղեալ համատատութեան Ա. Գրոց) գնդուցանէ ատտանաթ, թէ "Ի Նոսնենաց ոմանք հաւատան զԵրրայեցւոցն՝ ընդ Կանոնական համարել նաև զՆօթեր, և զՀուդիթ չարչարեալ ընդ Դատաւորացն պատմութիւն՝ իբրև զմի զլուխ, իսկ զՆօթեր թողեալ որիշ. որով թիւ Կանոնականացն դարձեալ մնայ բուն տասներեքն 22 ,, ։ Համառօտ տեսութիւն Ա. Գրոց 'ի Փիրատոնէական ընթերցուածս 1841 ամի. Գիրք Դ. Էջ 218—219։

Յակոբա, զԹուղթն Յուդայի, զերկուս Թուղթս Պետրոսի, զԹուղթս (ոչ որոշեալս զթիս) Յովհաննու, զշրջեալսն Թուղթս Պօղոսի, և զՅայտնութիւն Յովհաննու Աստուածաբանի։ Եւ այլոյր զերկրորդ Թուղթն Պետրոսի, զերկրորդ և զերրորդ Թուղթս Յովհաննու և զառ Երրայեցիս Թուղթն Պօղոսի՝ թեպէտ և համարի ընդ Կանոնականս, բայց և միանգամայն ազգ առնէ զերկրպութիւն ոմանց զնմանէ, և զեռ զոչ կատարեալ ընդունելութիւն նոցա միապան հաւանութեամբ ամենեցուն (1)։ 2. Եպեսիս՝ ըստ օրինակի Որիգինեայ յետ թուելոյ զամենայն Գիրս նորոյ Կտակարանի՝ բաժանէ զնոսա յերկուս կարգս. յառաջնումն կարգէ՝ զորս միապան հաւանութեամբ ամենեցուն ընկալեալ էին, և յերկրորդումն՝ զորս տակաւին ընդ երկբայութեամբ էին։ Ի սոցա համարի եդեալ են Թուղթք Յակոբա, Յուդայի, երկրորդ Թուղթն Պետրոսի, երկրորդ և երրորդ Թուղթք Յովհաննու, և ապա յաւելու, թէ մեծագոյն մասն Ազգապետաց Եկեղեցւոյ ընկալեալ են զայսոսիկ ընդ ճշմարիտսն, և Եկեղեցիս բազումս թարգեն (2)։ 3. Սուրբն Աթանաս թուէ զամենայն Գիրս նորոյ Կտակարանի առանց զէթ զոչինչ երկբայութեան և տարբերութեան, և 'ի թիզթին յազագս Տօնից և 'ի հանուանութեան Ս. Գրոց՝ յայս ոճ բանից եղբարկայուցանէ զնատ իւր. «Ահա թիւ և անուանք Կանոնական Գրոց նորոյ Կտակարանի։ Սորա են իրրու հիմունք, խարիսխ և սիւն Հաւատոյ մերոյ. վասն զի գրեցան նորին, և տուան Ս. Աստուածոյ Գրիչսն Փրկչի, որք կնքին առ նմա և ուստ 'ի նմանէ» (3)։ Ըստ որոյն Աթանասի խասին՝ 4. Սուրբն Կիւրեղ Երուսաղեմայ. 5. Սուրբն Ամփիլոքիոս. 6. Ղեւոնդ Բիւզանդիոյ. 7. Սուրբն Յովհան Դամասկացին (4), ամենեքին առանց բայաառութեան ընդունելով զ27 Գիրս նորոյ Կտակարանի ընդ Կանոնականս։

ՅԱրեւմտեան՝ 1. Հարք ժողովոյն (318) Կարթագինայ յերեսնեւրորդ երրորդ կանոնի թուեն բովանդակարար զ27 Գիրս

---

(1) Եկեղեցական Պատմութիւն. Էջեր. Գիրք. Զ. Գլուխ. 25։

(2) Եկեղեցական Պատմութիւն. Էջեր. Գիրք. Գ. Գլուխ. 25։

(3) Գիրքս. Ընթերց. 1841. Հատոր. Դ. Երես. 219—220։

(4) Կիւրղի Երուսաղէմի Կրօնագիտութիւն. Դ. 36։ Զորդն Ամփիլոքիոսի տես Կանոնագիրքն։ Ղեւոնդ Բիւզանդիոյ. Գիրք ազանգոց. պրակ. Բ։ Սրբոյն Յովհաննու Դամասկացւոյ. Գիրք. Դ. Աստուածաբանութիւն. Գլուխ. 17։

նորոյ Կանոնաբանի. 2. Հռոմիոս՝ զամենայն մինչև ցմին. 3. Եղանելին Օգոստինոս՝ նոյնպէս. 4. Պապին Իննոկենտիոս և Գելասիոս՝ նոյնպէս. 5. Գանոնիստս 'ի վերջն Զ. Գարուն՝ նոյնպէս (1)։

Գոն՝ իրաւ է, երկու կամ երեք հին ցանկք, յորս ո՛չ յիշատակին ունիք 'ի Գրոց նորոյ Կանոնաբանի, որպէս Յայտնութիւնն Յովհաննու 'ի ցանկս Ժողովոյն Լաւոդիկեայ (կանոն 60), և սրբոյն Գրիգորի Աստուածաբանի, և մի թուղթ Յակոբու, երիցուին թուղթք Պետրոսի, և մի թուղթ Յովհաննու 'ի ցանկին Մուրատորեայ, այլ այսմ պատճառս ո՛չ այլ ինչ է, բայց եթէ որպէս Որիգէն և Եւսեբի գրեն, զի ընդ յերիսուր ժամանակս յուզեցան զնոցունց վէճք առ Հարս Եկեղեցւոյ, և այսպիսի վէճք հարկաւ լինելոց էին յայնմ ժամանակի. իբր զի Գիրք Աստուածայնոյն գրեալ կամ առ Եկեղեցիս ունիս, կամ թէ առ ընդհանուր՝ անշնորին էր, զի միօրինակ արդարութեամբ ծառայեալ էին ընդ ամենայն տեղիս, և յայնմ լեալ Հաւատացելոց ամենեցուն. ունիք 'ի նոցանէ անակնկալի արդարութեամբ տարածեցան 'ի Կաթողիկէ Եկեղեցիս տիեզերաց՝ (որպէս չորեքին Աւետարանքն), այլ անագան, և էլեաք կարի անագան՝ (յորոց համարի են այն ամենայն թուղթք), զորոց եղեն երկրայութիւնք, և յարեան վէճք. սոքին իբրի Հովիւք և Պարգևատուք նախանի զարուց Քրիստոնէութեան մեծագոյն թմն աշխարհութեամբ և խնամատեն հեռատեսութեամբ վարեցան 'ի քննութեան և յընդունելութեան յանուն առաքելոց երևեալ Գրոց, որպէս պահանջէր նաև սրբութիւն գործոյն. զի և իր թմն՝ որչափ վաեմ և սանծալի իցէ, նոյնչափ եւս նուրբ և խորին քննութեամբ հարցաքննեալն զնորա զհարազատութիւն. և զոյր սրդեաք վասնմարդոյն ինչ Քրիստոնէից սակս առաւել քան զԳիրս Աստուածայնոյ. նա մանաւանդ զի 'ի ժամանակին յայնմիկ երևեալ էին և երևէին հետզհետէ՝ բազմահատոր կենդանարարք և առաջոյ չարակրաւորութիւնք յանուն Աստուածայնոյ (2)։ Սարսիլն ունիք 'ի նախանի տղջամիս Հարց Եկեղեցւոյ երևեցուցին կասկածանս սակս այս

(1) Կանոնագիրքք սրբոյ Աստուածայնոյ և սրբոյ Ժողովոյ։

(2) Որպէս Աւետարան մանկութեան Քրիստոսի. Աւետարան Երրորդութեան. Աւետարան Թովմայի. Աւետարան Պետրոսի. Տան Մարիամու, եւայլն՝ բազմաթիւ Գործք Առաքելոց, յոլով թուղթք և յոլովագոյն ևս Յայտնութիւնք։ Տես զՊատրիարքն զՄատեանն անցեալոյ նորոյ Կանոնաբանի։

ինչ կամ՝ այն ինչ Գրոց Նորոյ Կտակարանի, ասկայն ոչով ազատաս չեղեն պատարագիկի՝ ոչ ինքնանոր, և ոչ Գիրք ինչ Նորոյ Կտակարանի. և այսպիսի ընդարձակութիւն՝ ոչ միայն դի կարեւորագոյն էր յայնժամ, այլ էր միանգամայն և արդեան յիշատակի խոհական ուսուցանելեան նոցա, և զոմանի ամրահաստատելեան յայտարիանակ վասն իրողութիւնս։

## ՀԱՏՈՒԱԾ ԵՐՐՈՐԴ.

Յաղագս ոչ կանոնական Գրոց Աստուածաշնչի.

### ՈՐՔԱՆՈՒԹԻՒՆ ՆՈՑԱ ԵՒ ՅԱՐԴ.

Ի Նոր Կտակարանի ոչ գոն (բայց ի ստեղ զլոց) արտաքոյ կանոնի Գիրք. այլ որք ենն՝ ի Հին Կտակարանի և եմ են, զորս Եկեղեցին Յունաց այսպէս թուէ. 1. Տոբիթ. 2. Յուդիթ. 3. Իմաստութիւն Սողոմոնի. 4. Իմաստութիւն Յեսուայ որդւոյ Սիրաքայ. 5. Գիրք Եզրասայ. 6. Երեքին Գիրք Մակաբայեցւոյ (2)։ Որչափ անտարակուսելի է ոչ գոյն այսոցիկ ի կանոնի Աստուածաշունչ Գրոց առ Եբրայեցիս և առ նախնի Հրէութեանն, այնչափ ևս հաստատի է թէ՝ նոցա և թէ՝ սոցա, միշտ ի յարգի ունին զայնոսիկ։

Եբրայեցիք՝ որպէս յայտ է, առ ժամանակիս զաստեան Ամենայն յերկրս բաժանեալ էին. կէսք ի նոցանէ կոչէին Պաղեստինացի Հրէայք՝ բնակեալ Երուսաղէմ և շուրջ զնովաւ. որք խօսէին ի հայրենի բարբառ ազգի իւրեանց, և ի կիր առնուին զԱստուածաշունչն Եբրայեկան լեզու. միւս կէսն զարգեալ Աղեքսանդրիա, և ի մոռացեալ արարեալ զազգային լեզու՝ մարէին Յունական, և ընթերցումն զԱստուածաշունչն ըստ թարգմանութեանն Եօթանասանից ի Յոյն լեզու։ Երիցս ևս մեծագոյնն հաստատագոյն զոչ ի կանոն մուծեալ Գիրս, թէ և ոչ ոչ ոչ զորս էին ի կանոնի։

---

(1) Ի սոցա համարի են նաև Հանգիստն Յովհաննու Աստուածաբանի. 2. Աղօթք Մանասէի թագաւորի. 3. Թուղթ Կորնթացւոց առ Գալատ., և պատասխանի սորին. 4. Աղերս Եւթաղեայ. 5. Մահ զիշատառն Մարգարէից. 6. Կռապ երկուսասան Նահապետաց։

Սակս Հրէից Պաղեստինոյ դիտելի է, զի որպէս վկայէ Յովսէփ Փլաւիոս քահանայ Երուսաղէմի, չէր ուրեք առ նոսա կարողութիւն յայտ առնել կամ հրատարակել կրօնագրաւորեալ գիրս բայց 'ի Մարգարէից. որք և սկսեալ 'ի Մովսէսէ մինչեւ զԱրտաշէս Պարսից արքայ՝ կարգեցին բովանդակարար գիրքս սղգի իբրեանց 'ի 22 Աստուծոյ ներշնչեալ Գիրս. և ապա յաւելու նոյն Մատենագիրն. «Բայց և որ ինչ սկսեալ զԱրտաշէսէ մինչեւ ցաւուրս մեր գործեցան անցք, նոյնպէս գրոշմեցան յիշոմին 'ի Գիրս. այլ սորա ո՛չ են 'ի պատուի որպէս նախայիշատակեալքն. վասն զի դադարեալ էր յաջորդութիւն Մարգարէից» (1). յորմէ տեսանի նոսա, թէ Հրէայք՝ թէ և յարգէին զոչ մուծեալ 'ի կանոն գիրս, այլ ո՛չ հաւասար ազգեցութեամբն Աստուծոյ գրեցելոցն և 'ի կանոն մուծելոց. տեսանի դարձեալ և պատճառն այսորիկ. այսինքն է՝ զի գրեցան նորին 'ի միջոցի շրջիր հարիւր ամացն յառաջ քան զծնունդ Քրիստոսի, յորում միջոցի չերեւեցան այլ եւս առ Հրէայս Մարգարէք. նա մանաւանդ զի կանոն սրբազան Գրոց Հնոյ Կտակարանի գլխովին լրացեալ գոլով 'ի ձեռն Եզրայ, և որոց կենդանի էին յայնմ ժամանակի Մարգարէք՝ ո՛չ որ իշխեաց այնուհետեւ յաւելուլ ինչ յայն։

Իսկ վայելչական յարգութիւնն՝ զոր 'ի սկզբանէ հետէ եղեալ և ցուցանէ արդ Եկեղեցին Քրիստոնէական՝ Գրոցն, որոց ո՛չ են ներմուծեալ 'ի կանոն, տեսանի՝ 1. զի զամենեսին զնոսա ժողովեալ է 'ի միում մատենի ընդ Գրոց Կանոնականաց. 2. զի հրաման տայ նորահաւատից և Հաւատացելոց 'ի պէտս կրթութեան անձանց ընթեռնուլ զայնոսիկ՝ ո՛չ միայն 'ի տան, այլ նաև յԵկեղեցւոջ (թերեւս յայս սակս կոչեցան նորին Եկեղեցական). 3. զուցէ և այսպիսի խորհրդով շարակարգեալ զայնոսիկ Եկեղեցին 'ի կարգի Կանոնականացն, որպէս է տեսանել յ85 կանոնի Առաքելոց, և յ33 կանոնի Ժողովոյն Կարթագինայ. 4. զի նախնի Հարք Եկեղեցւոյ միշտ խօսեցան զնոսունց պատկառելի ակնածութեամբ, յորոց սուրբն Աթանաս ասէ, թէ պիտանի են յոգի յաւուրս բարեպաշտութեան երախայից։ Սուրբն Եպիփան Համարի զնոսա շահեկան և արդիւնաւոր. Սուրբն Յովհան Դամասկացին՝ բարի և լի խրատուք ուղղութեան։ 'Ի վերջոյ Ե-

(1) Ընդդէմ Ապիոնի. Գիրք. Ա. Յեղ. 7 և 8։

եկեղեցին՝ թէև միշտ 'ի յարդի կալաւ զարտաքոյ կանոնի եղեալ Գիրս և յարգէ, այսու ամենայնիւ և ո՛չ զանց արար զանազանել զնոսին 'ի Կանոնականացն. և զանազանութիւն այս ինչ է, թէ յետինքն գրեալ են յաստուծոյ թելադրութեամբն Աստուծոյ, և 'ի նոցանէ և նի՛ կազմի մատեանն Աստուածաշունչ. իսկ առաջինքն ո՛չ ունելով զայս պանծալի յատկութիւն՝ համարեալ են յաւելուած Աստուածաշնչի իբրև սուրբ, բարի և օգտակար գրութիւն։

Որ ինչ գրեցան ցայս վայր, գրեցան ասկս Կանոնական և ո՛չ Կանոնական Գրոց Աստուածաշնչի ըստ որոշման Արևելեան և Արևմտեան Մատենագրաց Եկեղեցւոյ մինչև ցկիսն հինգերորդ դարու. այսինքն՝ մինչև լեալ էին 'ի նմա ցաւալի բաժանմունք։ Եւ զի Եկեղեցին Հայոց ըստ գրելոյ Թորգոմեանցն (Գիրք. Գ. Գլուխ. 63) Կորեան 'ի Մաքսիմիանոսէ Պատրիարքէ Կոստանդնուպօլսի ընկալաւ 'ի սկզբան հինգերորդ դարուն զ զատոյգ և զհաստատուն օրինակն Աստուածաշունչ Գրոց 'ի ձեռն արքոյն Խաղկայ և Մեսրոպայ թարգմանչաց մերոց, յայտ է, թէ և զնոսին բաժանումն ընդ Կանոնականս և ընդ ո՛չ Կանոնականս կալաւ՝ զոր ունէին ցայն վայր Յեկեղեցիսն Յունաց՝ սուրբն Աթանաս, սուրբն Բասիլիոս, սուրբն Կիւրեղ և այլք։ Զորոշումն արարեալ յատկապէս յաղագս Կանոնական և արտաքոյ եղեալ Գրոց հին և նոր Կտակարանաց (թէև ինչ ինչ տարբերութեամբ) յարգի մերում զտանեմք 'ի Ժողովի, որ գումարեցաւն պատասուիչ հրամանաւ Սիոնի Կաթողիկոսի յութերորդ դարու։ 'Ի քառասներորդ և 'ի չորրորդ կանոնի յիշատակեալ Ժողովոյն ընդ Կանոնական Գիրս Հնոյ Կտակարանի շարակարգեալ են՝ Տովբիթ, Յուդիթ, Մատաթայեցւոյն Պատմութիւնք, Իմաստութիւնք Սողոմոնի և Սիրաքայ՝ ոչինչ յիշատակեալ զԵզրասայ (որք որպէս 'ի վեր անդր տեսաք, ո՛չ գոնեին ո՛չ 'ի կանոնս Եբրայեցւոյ, և ո՛չ նախնի Եկեղեցւոյ Յունաց)։ իսկ 'ի մեկնութեան Եսայեայ Եպիսկոպոսն Թեոդորոս արարեալ արքոյն Սարգսի Շնորհալւոյ՝ ո՛չ յիշատակին՝ ո՛չ 'ի կարգի Կանոնականաց, և ո՛չ որոց արտաքոյ են կանոնի, Գիրք Տովբիթայ և Իմաստութիւն Սողոմոնի։ Բայց յայսմանէ զիմաստութիւնն Սիրաքայ և զԳիրս Եզրասայ թողու Հեղինակն ընդ երկրայութեամբ. այլ զայս ամենայն կալցի որ՝ որպէս և ասարժէ. ըստ որում ես ո՛չ կամիմ ձեռնարկել ինձէն ինձել յընտրութիւն կամ 'ի հերքումն այս ինչ կամ

այն ինչ Գրոց, որ ծայրագոյն կատարելութեան Եկեղեցւոյ միայն վերապահեալ է. այլ ուղղութեամբ միայն գրել՝ զոր ինչ 'ի սրբազան Մատենագիրս ընդունելութիւն և անընդունելութիւն զուանին։

## Յաղագս Աստուածունչ.

Աստուածունչ ասելով խմանամք զրան Աստուածային ոչ գրրուշեալ 'ի մատենի 'ի ձեռն Սրբոյն Գրչաց, այլ կենդանի ձայնիւ առանձեալ Եկեղեցւոյ և հանապազորդութեամբ պահեալ 'ի նմա (1)։ Աստուածունչն կարեւոր է իրրև առաջնորդ և հրահանգ առ ընդունելութիւն և առ ուղիղ խմացումն Ս. Գրոց, առ կանոնաւոր կատարումն Ս. Խորհրդոց և առ պահպանութիւն ծիսից 'ի սկզբնական մաքրութեան իւրում։ Աստուածաշունչ մատեանն պարզևեալ մեզ յԱստուծոյ իրրև միմիայն և եզական աղբիւր յայտնական Կրօնի և Աստուածպատգամաբանութեան՝ ինքնին պարտաւորէ զմեզ ունել զայդ իմն Աստուածային սատարութիւն յայսրմ պանծալի իրողութեան. ըստ որում առ 'ի ուսանիլ ըստ պատշաճի զվարդապետութիւնս դրոշմեալս 'ի Ս. Գիրս՝ այէտ են մեզ նախ համոզել լիովին, թէ Գիրք Աստուածաշնչի մասնական են խնդրոյս յԱստուծոյ ներշնչեալ, և նոյն իսկական կանոն, որ ել 'ի ձեռաց սրբոյն Մատենագրոյ։ Յայսպիսի կարևորագոյն պարագայի միջոց տարակուսելի են և ապիկար՝ ասել մարդկային վկայութիւնք և լոկ պատմական հաստատմութիւն, յորոց վերայ իրրև 'ի վերայ այսր անսուտ ճշմարտութեան անհրաժեշտ է հիմնել զրոշանդակ շինուած Քրիստոնէութեան մերոյ. ամենն իրրև կարօտեալք ունել առատաւոր զայնպիսի վկայութիւն, յորմէ իսկ լիովին հաստատել զվկայութիւն Աստուածային։ Դարձեալ յորժամ ընթեռնումք զՍ. Գիրս, կարօտեմք ամենայն տրեալ զասելս 'ի նմա ճշգիւ զրուն իմաստս այնորիկ և ոչ զաստուծոյն, և զլիովին տպահով լինել՝ ոչ մարդկեղէն վկայու-

---

1 Բազում ինչ խօսիլ արժան էր յաղագս աստուածունչութեանց յընդհանուր, որպէս և 'ի մասնաւորի, յաղագս բժանման սրբոցին Հայրապետական, Եկեղեցական և 'ի Հայրապետական, և դարձեալ սոցա բժանմանցն 'ի Վարդապետական, 'ի Գամենական և 'ի Ոմիական. այլ առ այժմ թողեալ 'ի բաց զայն ամենայն՝ յուսալով յոյսում պատշաճ առնլոջ 'ի ժամանակի հատել զնոցունց մասնաւորս։

թեամբ, այլ Աստուծոյ. այսինքն է՝ թէ առանց ամենեքեան սխալելոյ՝ հաստատ լինիմք բան պատշաճի և աստուածային իմաստից բանին Աստուծոյ. ապա թէ ոչ այսպէս՝ զի՞նչ լինէր յայնժամ Հաւատք մեր։

Հարցանի. ո՞ որ է, որ կարող իցէ առանցինորդ լինել մեզ անկասկած յայտմ վասն զարժանութեան. ո՞ որ է, որ կարող իցէ բաւականաւորապէս լցուցանել մեր աղաղակ զերկրին պայմանս զարտասիկ։ Բողբոջանքս Հարեցին յայս սակս զսկզբունս երիս. ունէր ցուցանեն զբանական հանճար մարդոյ, այլ զնոցին իսկ զԱ. Գիրս, և կիսաք զնեերքին լուսաւորութիւն մտաց 'ի Հոգւոյն սրբոյ, կամ թէ զապդու


՝ զոր զդայ որ, յարժամ ընթեռնու զԱստուածաշունչ մատեանն։ Բայց սակայն առանցինորդ ապահով ոչ կարէ գոլ՝ 1. Բանական հանճար մարդոյ ինքնին միայնակ։ Զսոսա՝ զի ոչ է բաւական անվրէպ աստուածութեամբ որոշել զկանոն Ս. Գրոց, զի պատճառն պատմական վկայութիւնք վասն այսր. առանց որոց անհնարին է մտաց տալ զվճիռ իւր. և զարձեալ, զի վաղեմի ցանկք Ս. Գրոց՝ ընդայնալ ոչ միայն մատեանս Հոմերայ Եկեղեցւոյ, այլ նաև ամբողջ մատեանս Եկեղեցեաց (որպէս տեսաք 'ի վերս անդր), ոչ են բաղարոքին համաձայն իրեարաց. նա մատեանքն են զիրք, որք 'ի ցանկս ինչ համարեալ ընդ Կանոնականս՝ յոլով բնաւ ոչ յիշատակին, և յամենայն արտաքոյ կանանի համարին. ուրեմն և յայտմ պարագայի անկարելի է առնել զայնպիսի որոշումն, յորում՝ ոչ իցեն ամենեքեան երդրութիւնք կամ պատճառ հակառակութեան։ Զի և ընթացք նորին իսկ Լատերի՝ որ ոչ յամենայն 'ի բաց մերժել 'ի կանանէ Աստուածաշնչի զթուղթն Յակոբայ, զերկրորդ թուղթն Պետրոսի և զյայտնութիւնն (առ ոչ զոր նոցա յիշատակեալ 'ի ցանկս ինչ վաղնջականս), և առաւել քան զնոս որինակն Ռոսթանդիոսայ՝ որ 'ի վկնա ընդ իրեարաց 'ի մասին Կանոնական արժանաւորութեան Աստուածաշունչ Գրոց՝ յայն առեալան ծայրայեղութեան հասին, մինչ չթողուլ 'ի նմա զԳիրս ինն՝ զոր ոչ հերքեաց ոմն կամ միւս կողմն, են անհերքելի ապացոյց ճշմարտութեանս։ Երկրորդ՝ զի միայն մարդոյ առանց հայտատեսչի զերազոյն ինն հեղինակի՝ անպատեհան է առանձինն զոլ ուղիղ և ապահով մեկնիչ Ս. Գրոց. քան որում զիտեմք 'ի զորձոյ, զի միայն անձնիւր մարդոյ մատեանս ինն է, որ բաց յընդհանուր սկզբանց՝ ունի նաև զանհատական սկզբունս և զանձնութիւնս, և քան մեծի մա-

սին զառանձին ձգումունս և զանձնական յաժարութիւնս՝ որով փարի 'ի գործառնութիւնս իւր. ուրեմն յայնժամ Հարկ լինէր մեկնել ամենայն ուժեր Ս. Գրոց ըստ իմաստողութեան և ըստ շարժուն կարողութեան իւրում, երբեմն ևս ըստ սիրոյ խորհրդոց և դիտման իւրոց, յորմէ 'ի վեր երևին այնքան մեկնութիւնք Ս. Գրոց՝ որբան են մատնաւոր միտք։ Երրորդ՝ յայտնի է, զի յաժարութիւն կամ միտումն մէն մի մատնաւոր մտաց յոլով անգամ այլայլի, և զոր ինչ խորհէր որ յերէկն իրրև ատոյգ՝ կարէ համարել զայն այսօր սուտ. ուրեմն և մատնաւոր մեկնութեանց Ս. Գրոց հարկ լինէր փոփոխել օր ըստ օրէ։ Վերջապէս զի միտք մարդոյ կարէ բացատրել այսպէս կամ այնպէս զայնոսիկ և եթէ ճշմարտութիւնս Ս. Գրոց, որոց իսկապահաս լինի. իսկ որոց ոչն լինի հատուն՝ զիա՞րդ կարէ բացատրել. և ո՞ է՝ որ երաշխաւոր անսխալութեան նորա յայնմ զատանի։

2. Ոչ կարէ գոլ ապահով առաջնորդ և ուղղիչ Ս. Գիրք ինքնին, որպէս պնդեն Բողոքականք. որք և ասեն, թէ արժան է զրանն Աստուծոյ բացատրել բանիւն Աստուծոյ, և զխրթին տեղիսն յայտնեաւրն։ Դարձ՝ զի Աստուածաշունչ Գիրք ուղիղ որոշեն՝ ուղղութիւն և ուղղամտութիւն յինքեան ամփոփեալ զրոց. երկրորդ՝ զի ապացոյցք Աստուածաշնչին ասին ներշնչութեան զրոց իւրոց են վասն հնոյ և եթէ Նորակարանի, և այն՝ վասն զրոց ոմանց. իսկ վասն նորոյ Կտակարանի 'և բոլոր զամ Ս. Գրոց չիք ամենեւին. նա մատնաւանդ վկայութիւն Ս. Գրոց զինքենք ուղղել զարդ յամենայն դէպս հանդիպել զիրարանշիւր որ։ Երրորդ՝ հարկ է զմտաւ ածել, թէ Ս. Գիրք է իրօք զրուած մատեան և ուղղակի իմն կենդանի, որ խօսիցի կամ լուիցէ. և յայս ասին ուղղակի զհարցուածս մեր, թէ զիա՞րդ արժան իցէ իմանալ զայս կամ զայն տեղի 'ի նմա, և ուղղակի պատասխանի առնէ մեզ, կամ լուծանէ զտարակոյս մեր։ Յորմէ յայտնի լինի, թէ լուծանել կամ փարատել զտարակուսութիւնս բացատրութեամբ Ս. Գրոց հիմնեալ 'ի նոյն Ս. Գիրս՝ դարձեալ զկամայ մերոյ կախեալ կայ՝ որպէս և ընտրելն. այսր աղագաւ զայս ինչ կամ զայն ինչ տեղի իրրև սրբազագոյն, և ապա մերսումն մեկնել զայնս՝ որպէս և հանոյ եղիցի յաժարութեան և կամայ մերոյ. մինչդեռ այլք ըստ կարծեաց իւրեանց զայլ սրբազագոյն տեղիս յառաջ բերեալ բացատրեն զնոսին ըստ իւրեանցն յաժարութեան։ Յայտնանէ ևս մակարերի, թէ և առատանոր հիմն կամ

առաջնորդ մեկնութեան Ս. Գրոց մեր բանական միտք մեր՝ քան թէ Ս. Գիրք. մեկնութիւն դարձեալ, թէ առանձնաւոր և կարելի են յոյժ յոյժ խորհրդաւորութիւնք։ Ոչ թէ զոյն կամիմ ասել՝ որպէս թէ շիտակ ամենեւին ասէ, կամ թէ ոչ իցէ պարտ մեկնել զՍ. Գիրս Ս. Գրովք, և զմիմեանս տեղիս նորս արդարացուցանելոյն. քանզի իցէ. իրր զի և սա մի յապաւեալ կանոնաց ոգեշունչ մեկնութեան Աստուածաշնչի. այլ զայն և ևս, թէ այս կերպ բացատրութեան Ս. Գրոց ոչ է միայնակ զգիտութիւնն, անմիջապ և բոլորովին անկասկած կամն, որում հարկ իցէ հաստատիլ ամենայնիւ։ Յ. Ոչ երկայնաբան և ոչ ներքին լաստարութիւն մնայ 'ի Հոգւոյն Արրոյ, կամ թէ ազդումն 'ի սրտի իւրաքանչիւր Հաւատացելոյ՝ որպէս ուսուցանեն բազումք 'ի Ծոցի Բողոքականութեան։ Այս ասիլ բացատրութեան Ս. Գրոց բան երեւութիւն լաստոյն իմն երեւի. քանզի ո՞ այլ որ առաւել ճշգրտագոյնս միայնակ կարէ կանոնի և ներշնչութեան Գրոց արրոց. ո՞ այլ որ առաւել ճշգագոյնս յուցանել զարէ մեզ զիրս բարդաս իմաստս՝ քան 'ի աւրր Հոգւոյն՝ 'ի միոջ և 'ի միայնոջ բանոյդ պատմեալ այնորիկ. այլ 'ի զարմացարութեան անգ այս կերպ մեկնութիւն յոյժ անուանգի երեւի և յաւէտ թերացեալ յաստանութիւնէ։ Լաստարութիւն ներքին, կամ թէ ազդումն 'ի Հոգւոյն Արրոյ՝ որում արժանաւորին արդեամբ ճշմարիտ Հաւատացեալք (Ա. Յովհ. Բ. 27), է գարանի և խորհրդաւոր իմն ներգործութիւն. և սա 'ի ոչ այլ տեղի զատանաց ամենայնի՝ կարեւոր է, զի որ որ ասիցէ զանձնէ արժանացեալ այսմիկ՝ հաստատեալ և զրանս իւր անկեղծ արանչեղգործութեամբք. ապա թէ ոչ՝ այս կերպ իմացարութիւնս բանայր յայնժամ զրուան ոչն մնայուցիցն ասելոյ անարդարութեանց և անմարդութենէ 'ի մեկնութեան Ս. Գրոց, և ամենայն որ յանուն քարայր զգնորս մնայ իւրոց բան հանդիպ իւրոց յայտ առնել՝ իրրև զարդեցութիւնս Ս. Հոգւոյն, և ամբարշտութեամբ զուն գործել հաստատել զոյնս բանիւք Աստուածաշնչի։ Դա մանաւանդ արդ այսպիսիք իրոք և մարմնի անմանոց յանդիմանելիքն յայտնագոյն զատութիւն բանիւ իւրեանց, զոր իրրև ճշմարիտ բարդելիքն երրեմն։ Զիարդ ասարակոյս, թէ Հոգին աւրր իրրև Հոգի ճշմարտութեան՝ հանդարտիցէ ինքն ինքեան. ասիցեն Բողոքականք՝ որք ոչնչեն, որոյնչա թէ 'ի մեկնութեան Ս. Գրոց մարդաբանեն Ս. Հոգւոյն՝ մինչեւ յանհաւանս հակադարձին իրարայ և ասարանայնին

ի միմեանց, և բազում այն է՝ զի զոր մի հերձուածն ընծայեցուցանէ զիմն իրրև զճշմարիտ՝ միւս հերձուածն հերքէ զայն իրրև զմոլորութիւն (1), որով յայտնի առնեն, թէ նորա ևս վայրին ոչ Հոգւով Սրբով, այլ զարձեալ իրեանց բանական մտաց, իրեանց մասնաւոր պաշտպանմամբ և սխորժակաց։ Այսու ամենայնիւ ոչ երբէք յանդգնիմ մերժել, թէ որպէս յայլ ամենայն բարի գործս, այնպէս և յուսման 'ի վերուստ յայտնեցեալ Կրօնի՝ ոչ կարեւոր իցեն իւրաքանչիւր Քրիստոնէի գործակցութիւն, խնամատարութիւն և հրահանգութիւն Ս. Հոգւոյն (Ա. Յովհ. Բ. 27) (2), այլ զայն և եթէ բարբառիմ, թէ ներքին լուսաւորութիւն կամ ազդումն Ս. Հոգւոյն ընկալեալ իրրև միմիայն առաջնորդ մեկնութեան Ս. Գրոց, յաղագս վերոյգրեալ պատճառացն՝ ոչ է կատարելապէս բաւական։

Այսպէս ևթէ ոչ են լիովին ապահով այն ամենայն աստուածութիւնք՝ որով վարին Բողոքականք յուսմունս Աստուածային յայտնութեանց 'ի սուրբ Գրոց, ո՞ւր արդեաք մարթէ գտանել զայն. —զայն զայս աստուածութիւն՝ զոր խնդրեմք, բաց վկայելոյ Եկեղեցւոյ Քրիստոսի՝ շնորհեալոյ Հաւատացելոյ ինքն Աստուած կենդանի ձայնիւ 'ի սրբազան առանդութիւնս։ Յայս տակս և յառաջ բերեալ հետեւեցուցանեմ, թէ՝ 1. Արդարեան առանդութիւնքն է մեծ ատար և երկրորդ ապրիւր յուսումն Քրիստոնէական Կրօնի. 2. թէ առանդութիւնն պահեցեալ մինչև ցայժմ անեղծ. 3. թէ զի՞նչ իցեն նշանակք ստոյգ Աստուածաբանական առանդութեանց։

## ՀԱՏՈՒԱԾ ԱՌԱՋԻՆ.

### Առանձութիւնն է մեծ ատար և երկրորդ ապրիւր յուսումն Քրիստոնէական Կրօնի.

1. 'Ի պատմութեան Քարոզութեան և Հաստատութեան Քրիստոնէական Հաւատոյ 'ի գարս առաջին՝ ակնարկեալ տեսանի, Ս. զի Քրիստոնէութիւնն տարածեցաւ 'ի սկզբան անդ կրկին եղանակաւ. — ընդհանրապէս՝ կենդանի ձայնիւ, մասնաւորապէս՝

(1) Թուի թէ բաւական է յուշ առնել առանձաւ միայն զվարդապետութիւնս Լուսաւորի, Կալվինականաց և Անաբապտիստաց յ-ա-ղ-թ- հ-ղ-ա-ն-ի-ն։

(2) Որպէս և տուրն Ոսկերերան 'ի 119 Սաղմոսն, Թէոդորիտոս 'ի ԺԴ. Գլուխն Ովսեայ, և Օգոստինոս 'ի 126 Սաղմոսն, և այլք ուսուցանեն։

գրովք։ Ինչպէս Փրկիչն նախկին Պարգևապետ Կրօնի յերկնից իջելոյ՝ ոչինչ գրեաց զայնմանէ. բաղումք 'ի սրբոց Աւետարանացն ըստ նորա օրինակի անդիր քարոզեալ թեամբ ընդարձակեալ զաւանանս Հաւատոց՝ ո՛չ թողին ընտրեալն զկնի վախճանի իւրեանց ըստ գրաւոր յիշատակարանս բաց 'ի քարոզչաց ոմանց զվերոյ Աւետարանի, որք վարեցան հաւատարակէս՝ է որ բերանացի քարոզութեամբ, և է որ գրովք։ Բ. Պաշտօնեայք սրբոյ եկեղեցւոյն յայնժամ ձեռն արկին 'ի գրութիւնս, յորժամ բանիւ բերանոյ յաջողեցաւ նոցա բաւականապէս ծաւալել և հաստատել զՔրիստոնէութիւնն, և գրեցին նորա յայնժամ ըստ վկայելոյ իւրեանց «Զիրաց հաստատելոց» (Ղուկ. Ա. 1. 2) առ անձինս 'ի վաղուց գաստիարակեալս նոքաք 'ի Հաւատս՝ 'ի ձեռն անդիր քարոզութեան. որք և առ բարեր խնամուս լինելոց գրուածոց Աստուածախօս Պարգևապետաց իւրեանց՝ սրբասական էին բնականարար և հարկաւ յոգն անձանց 'ի կիր առնուլ և զյաւաջագոյն կենդանի ձայնիւ քարոզութիւնս նոցա՝ (որպէս վարին ուսանողք սովորարար յայտնակ դէպս). որով յարգելով զարժէս Աւետարանն Թղթոցն՝ յարգէին մեռանողացն և զարժէս Աւետարանական առանդիցն։

Զ. Յայտնի է նոյնպէս՝ Ա. զի Աւետարք 'ի գրելն զթուղթս առ Հաւատացեալս գիրաց իրաց՝ լուծին, մինչև եկեալ առ մեռանիս՝ բանիւ բերանոյ խօսեցին նոցա, և այնու որպէս թէ լը-նուցան զթերին Թղթոցն. «Բազում ինչ ունէի գրել առ ձեզ, այլ ո՛չ կամեցայ քարտիւ և գեղով. զի ակն ունիմ ինձէն իսկ գալ առ ձեզ և բերան 'ի բերան խօսել»՝ գրէ Սուրբն Յովհաննէս Աստուածաբան երկրորդ Թղթի իւրում (12)։ «Բազում ինչ ունէի գրել քեզ»՝ երկրորդէ նոյնն յերրորդ Թղթի իւրում (13—14)։ «այլ ո՛չ կամեցայ քարտիւ և գեղով գրել։ զի ակն ունիմ 'ի մօտոյ իսկ տեսանել զքեզ և բերան 'ի բերան խօսել ընդ քեզ»։ Ըստ նոցա օրինակի գրէ և սուրբն Պօղոս. «Բայց զայլ ինչ՝ յորժամ եկիցի, յայնժամ պատուիրեցից» (Ա. Կորնթ. ԺԱ. 34)։ Բ. Զի Թուղթք Աւետարանացն գրեալ առ այլ և այլ մասնաւոր Եկեղեցիս կամ թէ առ մասնաւոր անձինս՝ ո՛չ այնպէս յայտնի եղեն ընդհանրական Եկեղեցւոյն վաղվաղակի. մինչ զի առ ժամանակաւ Երրանոսի՝ (որ եկայն 'ի վախճան երկրորդ դարուն), գտանէին ամբողջ ազգք ուշակերտեալ Քրիստոնէութեան, որ ո՛չ ունէին առ ինքեանս և ո՛չ զմի 'ի սուրբ Գրոց՝

բաւականանալին աստուածութեան և երկ (1)։

3. Կիրարան Մատենադիրք ոչ միայն քարոզեցին, այլ նաև յայտնապէս պատուիրեցին սիրող ունել զաստուածութիւնն և փարել ամենայն։ Բան այսմ Ս. Ս.առաքեալն Պօղոս՝ որ փաստակեցուն 'ի թղթագրութիւնս առաքելական զամենայն Ս.առաքեալս, զրէ յերկրորդ թղթի իւրում առ Թեսաղոնիկեցիս. «Եղբարք՝ հաստատուն կացէք, և սիրող կարարուք զաստուածութիւնն՝ զոր ուսարուք՝ եթէ բանիւ և երկիւղ թղթով մերով» (Բ. 14)։ Ս. Ս.առաքեալն ուղղակի և որոշակի պատուիրէ Քրիստոնէից պնդութեամբ ունել նաև զբերանացի աստուածաբանս, և զայս առնէ՝ յորժամ Թեսաղոնիկեցիք ունէին զյաստաջադոյն առ ինքեանս զբերեալ զաստուածին թղթի իւր. և պատուիրէ նոցա յարգանաւք և հաստատութեամբ ունել զգրով և զբերանով աստուածաբանս փարդապետութիւնս իւր։ «Գովեմ զձեզ. զի զամենայն ինչ զիս յիշէք, և որպէս աստուածոյն ձեզ՝ զաստուածութիւնսն ունիցիք»՝ զրէ նոյն Ս. պարտն յաստաջին թղթի Կորնթացւոց. յորում՝ որպէս յայտնի, ոչ գրաւոր՝ այլ զբերանացի աստուածաբանին խօսի։ «Ով Տիմոթէ՝ պահեա զաստուածն՝ խոտորեալ 'ի պղծոյ և 'ի նորաձայն բանից, և 'ի հակառակութենէ, և 'ի մոլորանուն գիտութենէ» (Ա. Տիմ. Զ. 20)։ «Ընդ դիր օրինակ ողջմտութեան բանիցն՝ զոր ինձն լուար, հաւատովք և սիրով՝ որ 'ի Քրիստոս Յիսուս։ Զյարաւոր աստուածն պահեաց» (Բ. Տիմ. Ա. 13—14)։ «Եւ զոր լուար ինձն բազում վկայիւք՝ զայն ապանդեսցես հաւատարիմ մարդոց, որք բաւական իցեն և զայլս ուսուցանել» (Բ. Տիմ. Բ. 2)։ Ասասիկ զարձեալ պատուէր նորին Ս.առաքելոյ 'ի մնալն բերանացի աստուածութեանց։

4. Սմին իրի և որոշ Ս.առաքելաշնորհ աստաջին զարուց Քրիստոնէութեան որպէս ասէրն Իրենէոս՝ բան գրելոյ Եւսեբիոսոյ յորդորէր զՀուստոսլեայս մեկնել յայլ բան այլոյ կարծեաց Հերետիկոսաց, և «Հաստատութեամբ ունել զաստուածութիւնս Ս.առաքելական» (2)։ Սուրբն Պատրիարքաս աստանդեաց Հուստոսլեոյց գրանս Տեառն, զոր յաւելեալ էր անմիջապէս յՍ.առաքելոյ անտի (3)։ Իսկ Եղիսիպոս մեծի կուսաւ նաև հանդերձաբանել

---

(1) Ընդդէմ Հերետիկոսաց. Գիրք. Գ. Գլուխ. 4.
(2) Եկեղ. Պատմ. Եւսեբ. Գիրք. Գ. Գլուխ. 36.
(3) Եկեղ. Պատմ. Եւսեբ. Գիրք. Գ. Գլուխ. 14.

զաւանդութիւնս Աստուծոյ 'ի մի մասունս, յորոց և որոգայթս սատանայի 'ի հինգ գիրս. որք (առ ցաւս արտոյց Հաւատացելոց) ոչ հասին առ մեզ տարագրք (1)։ Եւ վերջապէս յորժամ ընդհանուր Եկեղեցին Քրիստոսի յանձին Հոգւոյ խրոյ 'ի մի միաբանութիւն համախմբեալ Հաւատոյ 'ի Տիեզերական Ժողովս 'ի քննելն, 'ի յաղագիմանելն և 'ի մերժելն զմոլորութիւնս Աղանդեցչաց, և 'ի հաստատելն զվարդապետութիւնս ուղղափառութեան Հօրդ որդոյ' վարեցաւ ոչ հեղինակութեամբ և եթէ ասացողութեամբ Գիրոց սրբոց, այլ նաև ասասարութեամբ Աստուածայնոյն ասացողութեանց։ Որպէս է տեսանել 'ի գործս Տիեզերական Ժողովոցն՝ Ա. Նիկիոյ (2)։ Ա. Կոստանդնուպոլսի (3), Ա. Եփեսոսի (4)։

## ՀԱՏԻԱԾ ԵՐԿՐՈՐԴ.

### Աստուածութեան պատկերն մարդեղի ցայժմ անեղծ։

1. Աստուածայր բան որում քարոզեցին զյայտնութիւն Երրորդին ոչ 'ի մասնաւոր թեղ տեղիս, ոչ 'ի թաքստեան կամ 'ի լեռնին ասկուանոցս տեսանց, այլ յամենայն կողմանս տիւրաբնի, և առ ամենայն ազգս. և որպէս արդարեալքն վարեցան քարոզութեանն նոցա, փոյթ կալան ասացեալ զԱստուածային Հաւատոյն ամենեցուն և իրարանցիր ուսեալ, որք ծարաւի էին փրկութեան։ յոյս տուին և անկարելի էր եղծանել կամ կորնչել յընդհանուր Եկեղեցւոջ Քրիստոսի Աստուածային ասանդութեանց, մանաւանդ պանծալոց և փութմարդունից։ «Որ որ ընդդէմ ասասցի զշնորհաւորութիւնն՝ ասէր Սուրբն Երրորդ, տեսանել կարող է յամենայն Եկեղեցւոջ զԱստուածային ասանդութիւնս ընդ ամենայն աշխարհ քարոզեալ» (5)։

2. Ընդ որում Քրիստոնեայքս ամենայն վարեալ նախանձու ելծաւ՝ ձիգն դնէին 'ի պահպանութիւն Աստուածային ասանդութեանց, մինչև այնչափ զգաստութեանց պատանեալ Կրոնիցս

---

(1) Նիկէ. Գաղատ. Լաոդիկ. Գիրք. Դ. Գլուխ. 22։
(2) Թէոդորիտոս. Գաղատ. Նիկէ. Գիրք. Ա. Գլուխ. 8։
(3) Թէոդորիտոս. Գաղատ. Նիկէ. Գիրք. Ե. Գլուխ. 8—9։
(4) Գործք Ժողովոց Ցարատեմի. Հատոր. Բ։
(5) Քրիստոնէական Ընթերց. Հատոր. Բ. Դ։

այսր աղագաւ 'ի սրբոյն Պօղոսէ (զԱ. Կորնթ. ԺԱ. 2. հաւատեմատեալ ընդ Ա. Թեսաղ. Ա. Ը։ Կողոս. Ա. 4. 6։ Հռոմ. Ա. 8). որոյ պատճառն որպէս յայտնի է, էր նախ վստահութիւն վարդապետութեան, յորում տեսանէին նորին զրանն Աստուածային. երկրորդ՝ ազգաբարութիւնք և յորդորք Ա. Ա. ուսելոց յաղագս հաստատութեամբ կալոյ և պնդութեամբ ունելոյ զաւանդութիւնս իւրեանց (Բ. Թեսաղ. Բ. 15). ևս և իրաստագոյն արդելք 'ի հակառակն կոյս միտելոյ. «Այլ եթէ մեք կամ հրեշտակ յերկնից աւետարանեսցէ ձեզ աւելի քան զոր աւետարանեցաքն ձեզ, նզովեալ եղիցի»՝ զրէր տուրբն Պօղոս առ Գաղատացիս. «Որպէս յառաջագոյնն ասացաք, և արդ դարձեալ ասեմ. եթէ որ աւետարանեսցէ ձեզ աւելի քան զոր մերն, նզովեալ լիցի» (Գաղ. Ա. 8. 9), և երրորդ՝ կարևորութիւն աւանդութեանցն. ըստ որում՝ որպէս ասացաւն 'ի վերոյ, ոչ գոյին 'ի սկզբան անդ Թուղթք Ա.ռաքելոյ. և զկնի երեսմանն ևս՝ մինչչեւ յայտնի եղեն նորին ընդհանրական Եկեղեցւոյն, յորմէ Եկեղեցեաց, և նաեւ ամբողջ Հաւատացեալ ազգքդ աւանդութեամբք և եթէ կային՝ մատակարարելով իրերաց կենդանի ձայնիւ զհանգամանս Քրիստոնէական Կրօնի, որպէս լուեալ էր իւրաքանչիւր որ 'ի բերանոյ լուսաւորչի իւրոյ և դասուիարակի յաստուածգիտութեանն Հանապարհի։ Ցայս ակնարկէ և բան Յուստինոսի խնամանոյ. «Զոչինչ ուսուցանէին նորա ըստ հանձարոյ մտաց իւրեանց, և ոչ երբէք բերէին յառ իւրեարս հաստատութիւն բանից՝ հեռի զոլով 'ի փառամոլութենէ յամենայնէ և 'ի շարամտութենէ. այլ զոր ինչ առեալն էին ՅԱ.ստուծոյ՝ զնոյն և աւանդէին մեզ զուստն»։ Եւրա՝ զոր ինչ գտին Եկեղեցւոջ, յաւելու միւս ոմն պանծալի Վարդապետ, զնոյն և պահեցին. զոր ինչ ինքեանք ուսան, զնոյն և ուսուցին. զոր ինչ ընկալան 'ի հարց, զնոյն և աւանդեցին յետնոց» (1)։

Աղրիւր և շտեմարան Ա.ռաքելական աւանդութեանց մինչեւ առ մեզ հասեալ՝ համարելի են՝

1. Վաղնջական հանգանակք. որք իրրեւ տիպք ուղղութեան բանից յոյժ կարեւոր զոլով Հաւատացելոց՝ կազմեցան անտարակոյս յաւուրս Ա.ռաքելոց, և պահեցան հանապազօր յամենայն

(1) Օգոստոնոս. ընդդէմ Յուլիանոսի. Գիրք Բ. Գլուխ. Ի։

Եկեղեցիս՝ սկսեալ 'ի Հաստատութենէ իւրեանց։ Հանդանակը Հաւատոյ՝ զոր 'ի կիր առնուին Քրիստոնեայք յառաջին երիս դարս, մինչև երևեցան Արիկիանեն, թէև յանախէին յոչ, այլ ամենեքին նորա յար և նման զոլով իրերայ քան բուն մը-տացն և անեմուն 'ի բաւս ինչ՝ բովանդակէին զայնոսիկ զքրիստոս մատուցեալս Հաւատոյ, որք մուծան ապա 'ի Հանդանակս Նի-կիոյ (1)։

2. Կանոնք Ս. Առաքելոց։ Յարգն՝ զոր ցուցանէին Հաւա-տացեալք նախնի դարուց՝ Կանոնաց այսոցիկ, և որով պաշտէ-ին զնոսա ոչ միայն յԵկեղեցիս ոմանս, այլ ամենայն ազգք և 'ի տիեզերական Եկեղեցիս, եղեալ զայնոսիկ 'ի դասական և ընդհանրական Ժողովս իբրև հիմն կանոնագրութեանց իւրեանց. և վարեալ այնորիմբ իբրև հաստատագոյն և ընդհանրական օ-րինաց, յայտ առնեն զվաւերականութիւն և զգերագոյն արդութիւն Առաքելական կանոնացն։ 'Ի վերայ այսր ամենայնի անառարակու-ելի է, թէ Ս. Առաքեալք աւանդեցին զայնոսիկ Եկեղեցոյ ոչ զրով, (եթէ ոչ այսպէս՝ հարկ էր 'ի սկզբան անդ մտանել այնոցիկ 'ի կանոն Գրոց Նորոյ Կտակարանի), այլ անգիր աւան-դութեամբ. զորս ապա ժողովեալ անցուցին 'ի գիր հետեւողք կամ՝ ըստ ժամանակի մերձաւոր Յաջորդք Առաքելոց (2)։ Թէ-պա Առաքելական կանոնաց է 85, և 'ի նոսա բովանդակին աւանդու-թիւնք Առաքելոց յաղագս բարեկարգութեան և անտեսութեան Եկեղեցոյ։

3. Սահմանք և կանոնք Ժողովոց. նախ՝ զատատականաց, յորս ըստ 37 երրորդ կանոնի արդոց Առաքելոց, ամի ամի երկիցս ժողովէին յայլ և այլ տեղեաց Եպիսկոպոսունք յաղագս ընտրութեան իրաց Հաւատոյ և անօրինութեան կարգաւորացն՝ ած-եալ ընդ իրեանս և զգիրս աւանդութեանց Եկեղեցիս իբրա-քանչիւրոցն 'ի նոցանէ պահեալս, մանաւանդ ընդհանրական Ժողովս, յորս յանձինս Հոգւոյ Աստուծոյ իրոց համախմբէր ընդհանուր Եկեղեցին Քրիստոսի։ — Արդարև այս յարգն է յոչ. իբր զի Ժողովք՝ որպէս տեսաք 'ի վերս անդր, վարեցան միշտ 'ի դասատ-

(1) Զբաղումս 'ի Հանդանակացս Ժողովեաց Բենիամ 'ի մատենին Լեհերէն։ Հատոր. Դ. Գիրք. Ժ. Գլուխ. Դ. Նոյնպէս և Վիլորինսկի 'ի Ցիշատակարանս Քրիստոնէական Հնութեանց. Մասն. Դ. Գիրք. Թ. Գլուխ. Դ։

(2) Քրիստոնէական ընթերց. 1841 տարի. Գիրք. Գ. Երես. 456։

գրութիւնս խրատոյ ոչ Ս. Գրոցս և ի նմա, այլ նաև առաքելութեամբ. և զի՝ ի սահմանադրութիւնս և յարոշմունս յիշատակեալ ծայրոյց արաշեալ հասին մինչև առ մեզ աւանդութիւնք ոչ միայն փարիսեցականք, այլ նաև բարեպաշտք, ծիսականք և կանոնականք, և ընդհանրապէս ամենայն որ ինչ զիանդրոյց Քրիստոնէական Հաւատոյ և Եկեղեցւոյ։

4. Եաթնի պատարագամատոյցք։ Պատարագամատոյցք՝ զորս՝ ի կիր առնուին կամ թէ՝ ի կիր առնուն ցարդ յայլ և այլ Եկեղեցիս յԱրևելս և յԱրևմուտս, են յոյժ յոյժ (1). յորոց բազումք ծանուցեալ յանուն այսր կամ այնր Առաքելոյ և Առաքելաշնորհ սրբոյն՝ ի մեր ելեալ հասանեն մինչև՝ ի ժամանակս Առաքելոյ, որպէս խորհրդատուր Ս. Առաքելոյն Յակոբայ։ Սորա ամենեքին համարին իբրև արանձաւի շինմարան Առաքելական աւանդից և կրօնական ճշմարտութեանց՝ նախաշաւուն Եկեղեցւոյ, յարոյց հաստատեալ կարգաւորեալ իբրևանց, զերծոյն նշանակութեան և կիրառութեան յանդրանիկն Եկեղեցւոջ, որք ոչ թէ՝ ի մասին հանրական փարիսեցութեանց՝ յորս զբաղմամբն համարձակեին այս ամենայն փարեմի պատարագամատոյցք իբրևոյ, համարելի են անսխալ. և՝ ի սուս յամենեսին զուանին զատանութիւնք ամենատուրք Երրորդութեան, Աստուածութեան Միածնի Որդւոյ և Հոգւոյն սրբոյ, մարդեղութեան բանին Աստուծոյ, միջոց կրաւութեան Աստուածածնի, կարեւորութեան շնորհաց, հոգեւորապէս մատակարարութեան մարմնոյ և արեան Աստուածոյնոյն՝ ի հաղորդութեան, և յիշատակութեան Սրբոցն. Լեն։

5. Հին միայնութիւնք Մարտիրոսաց, որպիսի են միայնութիւնք սրբոյն Իգնատիոսի, սրբոյն Պողիկարպոսի և այլոց բազմաց գրեալ՝ ի Հաւատացելոց ժամանակին, և նաև յանուանս միոյոյ։ Սոքա՝ Եաղանակը դիմեալ՝ ի կամաւոր մահ մատն անուան Քրիստոսի անարատաւոր և յայտնապէս տային զբաւանութիւն Հաւատոյ խրատոյ առաջի ենդջոց. Երբեմն եւս հոգիք բանիբ մեկնիչքն նոցա զկարեւոր հանգամանս Քրիստոնէական ճշմարտութեանց։ Յիշատակեալ զաւանութիւնք և մեկնութիւնք

(1) Զմոգովսին պատարագամատոյցս մարթի է գտանել առ Անդրանիկ Մատենագրի պատարագամատոյցս Տիեզերական Եկեղեցւոյ Հռոմ. 1749 ամի, և առ Հանեանոյսոյ՝ Հաւաքումն պատարագամատոյցս արևելեանցս. Փարիս. ի 1716 ամի. յորում զարեալեան և ի՝ պատարագամատոյցս թուի մինչև 50։

զոսով անտարակոյս անկեղծ և փութերանդ, նա և արձանագրեալ 'ի գիր յանդամանս վկայից՝ Համարին այժմ պանծալի յիշատակարան Կրոնից Եկեղեցոյ 'ի ժամանակին յայնմիկ, նա և Աստուածեալս ուսանելոցն ուղղութեանն արշաւեալ 'ի նմին։ Ընդ սաստգութիւն վկայարանութեան Մարտիրոսաց գիր ուղղի երկրպագութեան, մասն զի առ նախնեաւք ոչ այլագոյ մատուռ զանազին ձերին առ Հաւատացեալս, եթէ ոչ յետ մանրամասոյ քննութեան և մեծաց զատանանին Եպիսկոպոսաց, զորս և բնութեանն 'ի Համարիս Հայոց Բրիտանիոյ ընդ ուսուցութեամբ առաջ Եղիցեալ Եկեղեցոյ, զոր որպէս յայտ է՝ ոչ բնաւ թոյլ տային ունել խանդագութեան ինչ առնել 'ի նոսա կամ թէ յանդգնեալ զատ 'ի Հաւատոյ բնութեանն Եկեղեցոյ։ 'Ի Համարիս այլ և այլ զատանութեանց Հաւատոյ՝ զորս բնութեանն 'ի Արտիրոսաց գիրս, են նաև ամենասրբոյ խառնութեանք ամենասուրբ Երրորդութեան և Աստուածութեան Յիսուսի Քրիստոսի, և յիշատակութիւն Որդոյ, նոյն։

6. Վաղնջի Եկեղեցական Պատմութիւնք. յորոց պատմութիւն Լուսաւորչի Պարթևիոյ՝ յայտնութեամբ 'ի փաղանգական աղբերաց և 'ի դիւանագրութեանց՝ է յաւէտ պատուական, զի 'ի նմա ամբարեալ են ուսանելութիւնք յորում 'ի ժամանակս անուն Աստուծոյ՝ ոչ միայն պատմական, ժամանակագրական, և աշխարհագրական, այլ նաև կրոնական՝ որոց ասին է և ուսանելութիւն յաղագս կանանց Ս. Գրոց հին և նոր Կանոնիցն։

7. Ամենապատութիւնք հաշտարար Հարց և Վարդապետաց նախնի Եկեղեցոյ. զոր գրեցին կամ զանազանց գաւառութեանս առ 'ի վկայութիւն Հաւատոյ խրատանց առաջի Եկեղեցոյ՝ (որպէս բացատրութիւն Հաւատոյ մեծին Աթանասի և բազմաց այլոց), կամ զրուցանեն ճշմարտութեանց Կրօնի առ կրթութիւն Քրիստոնէից, որոցմէ են Կոչեալն ընծայութեան կամ Կրօնագիտութիւն Սրբոյն Կիւրղի, յանձնարարական սրբոյն Գրիգորի Լուսաւորչի, Աստուածաբանութիւն Յովհաննու Դամասկացւոյ և այլ անթիւ վարդապետութիւնք. զորս ինքն յաղագս իջանելոյ Քրիստոսի 'ի դժոխս, յաղագս միշտ կուսութեան Աստուածամօր, յաղագս միանգամ Հոգւոյ հանգուցելոյ մինչեւ ցոր բնաշխարհական գաղանանին, յաղագս պաշտաման ներչելոյ, յաղագս միրութեան մանկանց, նա և յաղագս ոչ վերատին կրկնութեան այնմիկ, յաղագս կատարութեան ամենասուրբ Խորհրդոյ Հաղորդութեան

թեան, նաև Մեկնութիւնք Ս. Գրոց, Ճառք յանդիմանականք ընդդէմ Հերետիկոսաց և Հերձուածողաց, ևն։

8. Ընդ սոսա նաև Գիրք պաշտամանց վաղեմի Եկեղեցւոյ, որոց սակի են՝ Ս. Ժամակարգութիւնք Աստուածային պաշտամանց, հանդէսք, պատարագք, կիրակէք և տօնք. Բ. Ժամանակունք, շինութիւն աղօթատեղեաց, և բաժանմունք 'ի նոսա. Գ. Արարողութիւնք, այսինքն է մատակարարութիւն խորհրդոց Հաղորդութեան, Մկրտութեան, Զեռնադրութեան, Պսակի, ևս և յուղարկաւորութիւն ննջեցելոց. Դ. Զգեստ և անօթք կրօնական պաշտամանց, ևն։ Եւ զի քրիստիան ամենայնի այսոցիկ բովանդակի 'ի գիրս պաշտամանց, յայս սակս նոքին ևս հանդերձն պահպանեն Աստուածաբանքն։ Այլ ըստ որում ոչ ամենայն ինչ՝ որ պարունակի 'ի վերոյ անդր ցուցեալ աղբիւրս կամ 'ի շտեմարանս Աստուածաբանս, է միանգամայն և Աստուածաբանութիւն. զոն իրր զի և ընդհակառակն և բազում ինչ այնպիսիք, որոց անկարելի է ընծայել զանուն այսպիսի։ Ասոյգ Աստուածաբանութեանն հարկ է անշուշտ ունել զիւր սեպհական յատկանիշս, ըստ որոց հնար իցէ մեզ որոշել զայնոսիկ յայլ ամենայն ճշմարտութեանց, յայլ ամենայն մոլորութեանց, և մասնաւորապէս յայլ ամենայն մարգարէական և 'ի խորհրդական աստուածաբանութեանց։

## ՀԱՏՈՒԱԾ ԵՐՐՈՐԴ.

*Թէ զինչ իցեն նշանակք ասոյգ Աստուածաբանութեանց.*

1. Ըստ որում Աստուածաբանութիւնն է անգիր բան Աստուածային, որպէս և Ս. Գիրքն՝ բան Աստուածային զրաշնչեալ 'ի գիրս, և երկրորդին ևս 'ի միոջէ ակամէ Հոգւոյ Ճշմարտութեան յառաջ եկեալ և պարգևեալ Հաւատացելոց, մին իրրև զանմարան Աստուածային ճշմարտութեանց, միւսն իրրև աստուածային ուղիղ խնայութեան և առ մեկնութիւն այնորիկ. յայս սակս հարկ է, զի մի իցեն ընդ մէջ Աստուածաբանքիր Ս. Գրոց և Աստուածաբանքիր (1) աստուածաբանութեանց՝ յոյժ մեծ կամ բաւական, ուղղակի կամ անուղղա-

(1) "Քանզի աստուածաբանութիւն Եկեղեցւոյ մեր՝ զոր ունիմք, 'ի վկայութիւնս Աստուածաշունչ Գրոց հաստատեալ են,, ։ Ցրնդհանրական. Երես. 148։

կին հակառութիւնք ինչ, այլ զի լինիցի 'ի նոցա միջի ամենապարզագոյն միաբանութիւն ըստ ներքնոյն և ըստ արտաքնոյն, որպէս զի Եկեղեցին Քրիստոնէական 'ի պատճառս աւանդութեանց իւրոց (որպէս Հրէիցն 'ի յետին ժամանակս) մի անարգուն բանին Աստուծոյ կամ լուծիչ օրինաց Ս. Հոգւոյն համարեալ դատապարտ ինչ լինիցի՝ որպէս նոցայն 'ի Քրիստոսէ (Մատթ. ԺԵ. 3. 6։ Մարկ. Է. 8. 9. 13). բայց յայտնեալ պիտոյ է զարձեալ, զի և 'ի միջի Ս. առաքելական աւանդութեանց ամենայնի՝ համեմատութեամբ միմեանց իցեն կատարեալ հաւատութիւն և միաձայնութիւն. ըստ որում դժուարին է մատներել անգամ, թէ՛ զ թէ հաւատալ, թէ Ս. Ս. առաքելքն խորհեցան և խօսեցան միմեանց հակառակ, և սահմանեցին իւրաքանչիւր որ ընդդէմ ընկերի իւրում ներհակ աւանդութիւնս։

2. Ստոյգ Ս. առաքելական աւանդութիւն համարելի են, զորս մարթի է հաստատեալ 'ի վերս միոյ 'ի ժամանակս Ս. առաքելոց, և զորս Եկեղեցիք Ս. առաքելոց անտի հաստատեալք՝ ունէին և պահէին յառաջին և յերկրորդ դարս։ Զայն զայս նշան Ս. առաքելական աւանդութեան ցուցանել կամի և Տերտուղիանոս. «Զայն և եթէ աւանդութիւն հարկ է Ս. առաքելական համարիլ. զոր այժմ ունին Եկեղեցիք Ս. առաքելոց անտի հիմնեալք» (1)։ Այլ ըստ որում կարի հեռացեալ է դար մեր Ս. առաքելոցն դարուց, և մատուցանէր քաղմոց 'ի նախնի Պարգևատուց Եկեղեցւոյ կորառեամբ բարձեալ 'ի միջոց, յայս սակս ստիպիմք զերրորդ լոմն ինդրել զապացոյց Ս. առաքելական աւանդից. այսինքն է՝ 3. Զորս միանգամ ամենայն Եկեղեցական Մատենագիրք Գ., Դ. և Ե դարուց, կամ թէ մեծագոյն մասն 'ի նոցանէ՝ միաբան ընծայեցուցանեն իբրև աւանդութիւն Ս. առաքելոց. զիսն զի զոլով նոցա ըստ ժամանակին մերձաւորագոյնք Ս. առաքելոց, և մատեանք Աստուածայնոյն 'ի ժամանակսն յայտսիկ՝ ուշ 'ի սպառ անհետացեալ. յայս սակս դիւրին էր նոցա կնքել զրանս իւրեանց վկայութեամբք վաղեմի Հարց Եկեղեցւոյ (2)։

4. Անհերքելի նշան Ս. առաքելական աւանդութեան հարկ է համարել վերջապէս և զայն, զոր պահէին 'ի սկզբան կամ պահեն արդ միահամուռ Եկեղեցիք Քրիստոնէից։ Յայս ակնարկէ

---

(1) Ընդդէմ Մարկիոնի. Գիրք. Ա. Գլուխ. 21։
(2) Օգոստինոս. Ընդդէմ Յուլիանոսի. Գիրք. Բ. Գլուխ. Ժ։

հաստատեալ և Օգոստինոս յաւելն. «Զոր ունի ընդհանրական Եկեղեցին, և զոր Թարգմանն որ և իսկ ժողովական սահմանադրութիւնն այսպէս ասացեալ 'ի նմա մշտապէս, համարիմ ամենայն իրաւամբ առանդեալ Աստուծոյ» (1).

## ՅՕԳՈՒՍԾ ՎԵՑԵՐՈՐԴ.

### Պարտ և արժան է ժողովրդեան ընթեռնուլ զՍ. Գիրս.

Թէպէտ և զերազոյն մեկնիչ խրթին և գաղտնածածուկ իմաստից Ս. Գրոց՝ է Կաթողիկէ Եկեղեցին, թէպէտ և բարոյ և զատարակ Աստուածային յայտնութեանց կայուցեալ են 'ի Հոգւոյն սրբոյ Վարդապետք և Հովիւք, այսու ամենայնիւ Եկեղեցին Հայոց 'ի սկզբանէ հետէ հաստատութեան իւրոյ ոչ միայն ոչ արգել աշխարհական անդամոց իւրոց, այլ նաև յորդոր և խրախոյս մատոյց նոցա յամենայն դարս՝ ընթեռնուլ և ուսանիլ առանին զսուրբ Գիրս՝ իբրև զերազոյն գործիս Քրիստոնէական Կրօնի, հեռի զոլով միշտ յամբարշտութենէն. բայց որոյ փաստմամբ և ապիտաբերոյ Պատգամ ամենեք յղայսն և ծնան 'ի միջին դարս զնոր ուսումն արգելման, զի մի իշխեսցեն ժողովրդականք ունել 'ի տունս իւրեանց զսուրբ Գիրս, և ոչ իսկ ընթեռնուլ կամ թէ ուսանել անտի զհանգամանս յայտնեալ ճշմարտութեանց. և զորս ասեմ՝ յայտնի է։

Նախ՝ զի ընդ դարս ամենայն թոյլ ետ և տայ Եկեղեցին Հայոց՝ մանկանց և զարոյց յամենայն աստ ընթեռնուլ Եկեղեցիս գրնդարանակ հաստատեալս 'ի հին և 'ի նոր Կտակարանաց՝ բայց աստուծոյ սրատչաւի՝ 'ի լոյր և յուսումն ազգանց և կանանց, ծերոց և տղոյոց անխտրապէս։

Երկրորդ՝ զի յամենայն զարոյս յետ վարժելոյ զմանկանս յորդորմանս ասելոյ և բարոյ Հայերէն լեզուի՝ տայ 'ի ձեռս ամենեցուն նոցա զհին և զնոր Կտակարանս (2). թերևս բնկալեալ և պահեալ ասանելութեամբ զայս եղանակ դատարարութեան

---

(1) Յաղագս Մկրտութեան. Գիրք. Ե. Գլուխ. 24։

(2) «Պարտ է միշտ դատարարութիւն Աստուածայնոյն 'ի հրաշանդել զմեզ 'ի լաւութեան կարգս. զի յանանձնելոյդ 'ի շնորհաց Ս. Հոգւոյն ճշմարտութեամբ՝ ասենք ասացեալ զվաստակս արդարութեանն սրտիս և ուղղափառ հաւատով Աստուած»։ Յանխտակ. Երես. 23։

յոյժմեակոց անտի երանաշնորհ Թարգմանչաց մերոց Իսահակայ և Մեսրոպայ, որք յետ թարգմանութեան Ս. Գրոց 'ի Յունական լեզուէ 'ի Հայկականն՝ բայցի ամենայն ուրեք զմարգոյս, և 'ի մեռն Ս. Գրոց յցին զՀայաստան Աստուածգրութեամբ։

Երրորդ՝ զի ամենայն ուրեք յաշխարհական կարգէ հրամանատոյ Եկեղեցին Հայոց ունիլ 'ի տան, 'ի գնացս 'ի հանապարհի, և մինչև 'ի պատերազմունս բնդ թշնամեաւն զսուրբ Գիրս, որպէս և 'ի Պատմութենէ արդոյ Վարդանանցն զայս ասանելիս. որ բան արդոյն Եղիշէի (Երես 10) 'ի գնացն 'ի պատերազմ յերկիրն Պարսկական՝ « Բարձին ևս բնդ թշնամեաւն զսուրբ Կտակարանս. զի բազումք 'ի նոցանէ ('ի զօրուէն) զԳիրս սուրբս ասեալք 'ի մանկութենէ՝ զանձինս մխիթարէին, և զընկերսն քաջալերէին » (Երես 34)։ « Եւ բան պատերազմականն կարգին զբաջ ասանց զյիշատակարանս հանապազ երկրորդէր առաջի նոցա, զի և ինքն իսկ (ազարապետն Հայոց սուրբն Վարդան Մամիկոնեան) տեղեակ էր 'ի մանկութենէ իւրմէ Ս. Կտակարանաց » (Երես 182)։ Ինքնին սուրբն Վարդան յանանարանութեան իւրում առ զօրն Հայոց՝ ասէ. « Եւ այլ զի՞նչ ևս երկրորդեցից առաջի ձերոց քաջ նահատակութեանդ. զի բան զիս տեղեկացոյցեր և հմուտ էր Ս. Կտակարանացն » (Երես 190)։ ապէս և վասն կանանց Ս. Դաւհատակացն գրի. « Սաղմոսք էին նոցա մրմունջք երգոց, և քնքերցուածք Ս. Գրոց՝ կատարեալ ուրախութիւնք » (Երես 220)։

Չորրորդ՝ զի մեծանուն և արդիւնաւոր Վարդապետք և Հոմիք Եկեղեցոյ Հայոց յորդորեալք և սաստիկ պատուէր 'ի վերոյ ամենեցուն եղեալ եղեալ Եկեղեցականաց, և եղեալ աշխարհականաց՝ ասելով. « Պարտ և արժան էր ամենայն Հաւատացելոց ունելոյ զիրսոյ և ծանօթ լինել Աստուածային Գրոց . . . մինչ զի չլինել կարօտ յայլոց ուսանիլ, այլ միայն յԱստուծոյ և յԱստուածային Գրոց . . . զորմիք Գրքատանէութեան ասացուածն Աստուածաշունչ գիրքն է ; զոր պարտ և պարտական էր ամենեցուն ունելոյ, մինչ զի չլինել կարօտ յայլոյ ուսանիլ » (1)։ « Եւ ամենայնի 'ի ձեռս առեալ զԱստուածային Գիրս ընթեռնուլ. բնդ նմին և զԳիրս Կանոնականացն Թղթոցն Աստուածոյ . . . և արդ՝ ևս ասացեալք զոմն թանգրեի ամենայն մանկանց Եկեղեց-

(1) Պատմութիւն Դաւդոյ Փարպեցոյ։

ից յայսպիսի գործս պարապիլ, և 'ի սոյն գեղերիլ, և ինքեանց վայելչութիւն և պատկ պարծանաց զսոյն համարիլ» (1) ։

Ըստ այսմ ոչ միայն ներեալէ Յեկեղեցւոյ Հայոց՝ ընթեռնուլ և ուսանիլ աշխարհականաց զսուրբ Գիրս, այլ նաև՝ որք կարողքն են, ուսուցանել այլոց զսոյնս 'ի դպրոցս ըստ պատմական, ըստ աշխարհագրական, ըստ հնագրական, ըստ բանասիրական և ըստ այլոց մասանց, և մեկնել նաև զայնոսիկ ըստ ս. հողջ և ուղիղ կանոնաց բացատրութեան, զգուշացեալ միշտ և յամենայնի, զի մի անհրաժանգիր ոմանք և տգէտք (ոչ միայն յաշխարհականաց, այլ նաև Յեկեղեցականաց) (2) միջամուխ լինիցին 'ի քննութիւն և 'ի մեկնութիւն Ս. Գրոց՝ թարց հրահանգութեան Եկեղեցւոյ 'ի կորուստ անձանց և լսողաց իւրեանց. զի ամենայն աղանդք և հերձուածք ծագեցան Յեկեղեցւոջ 'ի սկզբանէ հետէ՝ յոչ բարւոք խմացողութենէ և 'ի թիւր մեկնութենէ Ս. Գրոց ։

## ՅՕԴՈՒԱԾ ԵՕԹՆԵՐՈՐԴ.

### Անսխալութիւն Եկեղեցւոյն Քրիստոսի.

Որ որ հաւատայ զսուրբ Գիրս հեղինակութեամբ Աստուծոյ

---

(1) Սարգիս Շնորհալի. 'ի մեկն. Եղեռն Թղթոց Կաթողիկեայց. Երես. 1 ։

(2) "Որք ըստ իմաստութեան Հոգւոյն պիտեն քննել զբանս Աստուածաշունչ Գրոց և խմանալ զմիտս բանին՝ որ 'ի սոսա, լուսոյ և կենաց լինին ասին քննողաց նոցա ըստ ասելոյն. Ճրագ են բանք քո ոտից իմոց, և թէ՝ լոյս են հրամանք քո 'ի վերայ երկրի. և թէ՝ պատուիրանք Տեառն լոյս են, և լոյս տան աչաց. և թէ՝ բանն՝ զոր խօսեցայ ընդ ձեզ, կեանք են յաւիտենական։ Իսկ որ զկերպարանս բանին միայն ընթեռնուն 'ի գիրս, և զգօրութիւն մատանց ծածկելոյ ոչ կարեն ճանաչել ուղղապէս՝ վասն ոչ աշխատելոյ ուսանմամբ 'ի նոսա, այլ ծեքեն զբանն ըստ թիւր և սակար իւրեանց իմացուածոցն, և կարծեն յանձինս, եթէ գիտեմք, լաւ էր նոցա ոչ բնաւ ճանաչել զգիրս. այլ կեալ անմեղութեամբ ընդ տգէտս և ոչ կորբն. ին, քան թէ մեծաւոր գիտութեամբ անկանիլ 'ի վիշն կորստեան բան Դաւրայն և Փարիսեցւոց՝ կոյրք գոլով կուրաց առաջնորդք։ Վասնորոյ և զԳանանայեցի Համայլ և Շպղթեան կոչեցելոյ գաւառաց՝ 'ի սկզբանէ լանմամբ յայտոսիկ բամբասելի կիրս. յորոց միջի բազումք ծնան հերձուածք յայսմ պատճառէ. զի ընթեռնուր զԳիրս սուրբս՝ ոչ վասն օգտելոյ կամ օգտեցուցանելոյ զլսողսն, որպէս օրէն է և պահանջի 'ի քահանայից. այլ յաղագս հակառակարանութեան և յաղթելոյ միմեանց 'ի կործանումն լսողաց . . . պարտ էր ձեզ քննենուն զԱստուածաշունչ Գիրս, 'ի յայտնի եղելոց բանիցն կերպարել, և զծածկեալսն լուսաւորեալ. որ վասնորին իսկ ուսուցանեն Գիրքք ,, ։ Լեղհանեան. Երես. 232 ։

գրեալ, հաւատալ պարտի և զվարդապետութիւն անսխալութեան Եկեղեցւոյ. իբր զի 'ի սուրբ Գիրս գոն՝ 1. այնպիսի սէր բանից, որք յայտնապէս կամ մեղմով իմն յայտ առնեն զոյն զայս ճշմարտութիւն. 2. գոն այնպիսիք ևս, որք կարեւոր հանգամանաց հանդերձ ապացուցանեն զայն, որպէս է տեսանել 'ի հետեւեալս։ Նախ՝ Ցիսուս Քրիստոս խոստանայ պահել զԵկեղեցի իւր մշտին, շնորհապէս անսպասելի և անյաղթելի. «Շինեցից զԵկեղեցի իմ, և դրունք դժոխոց զնա մի յաղթահարեսցեն» (Մատթ. ԺԶ. 18)։ Ըստ այսմ անհնարին էր միայն Եկեղեցւոյ անյաղթ, եթէ ոչ էր 'ի բաց բարձեալ 'ի նմանէ կարելութիւն վրիպելոյ կամ մոլորելոյ 'ի վարդապետութիւնս Հաւատոյ. զի եթէ խոտորէր Եկեղեցին 'ի ճշմարտութիւնս Հաւատոյն՝ խոտորէր հարկաւ և 'ի Քահանայապետութիւնս, 'ի տնտեսութեան և յամենայնի. և այսպիսի ամենայն անհերքելի իմն ապացուցութեամբ յայտնի առնէին, թէ զրունք դժոխոց յաղթեցին զԵկեղեցին, և թէ ոչ է նա այնուհետեւ սուրբ և անսխալ Եկեղեցի Քրիստոսի։ Երկրորդ սուրբն Պօղոս հայեցեալ առ կոչումն ուսուցանող Եկեղեցւոյ կամ թէ ուսուցչաց Հաւատոյ՝ ասէ. «Նա (Աստուած) եղ զոմանս Առաքեալս, զոմանս Մարգարէս, զոմանս Աւետարանիչս, զոմանս Հովիւս և Վարդապետս 'ի հաստատութիւն սրբոց, 'ի գործ պաշտաման, 'ի շինուած մարմնոյն Քրիստոսի. . . . զի մի յայտմհետէ իցեմք տղայք խառնեալք և տատանեալք յամենայն հողմոց վարդապետութեան՝ խաբէութեամբ մարդկան, խորամանկութեամբ 'ի խորէութիւն մոլորութեան» (Եփես. Դ. 11. 15). այսինքն՝ յայն ասկս կոչոյց Աստուած զԵկեղեցւոջ զուսուցիչս Հաւատոյ, զի մի «Իցեմք տղայք՝ խաբեալք և տատանեալք յամենայն հողմոց վարդապետութեան խաբէութեամբ մարդկան». զիա՞րդ ապարէն մարթ էր ուսուցանող Եկեղեցւոյ հասանել յայս գերագոյն կոչումն իւր, եթէ ոչ էր ազատ կացեալ նորա (գէթ ըստ հանրութեանն) յորոգայթից մոլորութեան. . . ։

Երրորդ՝ նոյն սրբազան Առաքեալն հայեցեալ և առ նպատակն լրութեան Եկեղեցւոյն՝ որոշակի և ուղղակի կոչէ զնա «Սիւն և հաստատութիւն ճշմարտութեան» (Ա. Տիմ. Գ. 15. 16). «Զի գիտասցես»՝ գրէ Վարդապետն Հեթանոսաց սիրելի աշակերտին իւրում Տիմոթեայ, «թէ ո՞րպէս պարտ իցէ քեզ 'ի տան Աստուծոյ շրջիլ, որ է Եկեղեցի Աստուծոյ կենդանւոյ, սիւն և

հաստատութիւնն ճշմարտութիւնն։ Եւ յայտնի խակ մեծ է խորհուրդն Աստուածպաշտութիւնն, որ երևեցաւ մարմնով» (1)։ Յայտ վարդապետութիւնէ յայտնի լինի նախ, թէ Եկեղեցին՝ զոր մեք խօսի ասասնոր Աստուածն, ոչ է սակնեբին մանաւոր Եկեղեցին Եփեսոսի, այլ ընդհանրական Եկեղեցին Քրիստոսի. զոր զի նմա և եթէ վայելուչ է պատուանուն «Եկեղեցի Աստուծոյ կենդանւոյ», և զնա և եթէ նմանեցուցանեն Ս. Գիրք՝ «Տանն Աստուծոյ» (Գործ. Ի. 28։ Ա. Կորնթ. Գ. 16 և 17։ Բ. Կորնթ. Զ. 16. եւայլն)։ Բ. զի ճշմարտութիւն բանիս՝ որոյ սիրոն և հաստատութիւնն կոչի ասասնոր Եկեղեցին, պարտ և արժան է խնամով զրաւանգակութիւն Քրիստոնէական ուսման՝ ըստ սոնց Ս. Գրոց (Յովհ. Ա. 17. Ժ.Դ. 16։ Գաղ. Գ. 1. Ե. 7. եւայլն), և ոչ թէ զոյլ ինն ճշմարտութիւն։

Զորրորդ՝ Աստուած բազում անգամ կոչի զրուս Եկեղեցւոյ. «Զնա» (այսինքն զՔրիստոս Քրիստոս) ասէ առքն Պօղոս. «Եւ Հայրն Աստուած Գլուխ 'ի վերայ ամենայն իրոց Եկեղեցւոյ, որ է մարմին նորա, լրումն՝ որ զամենայն յամենայնի լնու» (Եփես. Ա. 22—23. Գ. 15. Ե. 23։ Կողոս. Ա. 18)։ Եւ դարձ՝ եթէ Գրիչն իբրեւ իսկական Գլուխ Եկեղեցւոյ՝ կեաց հանապազորդարար ըստ մարմնոյ անբաժան կցորդութեամբ, ասաց նմա անդադար գկենդանութիւն, և անանգամ Հոգւոյն զնա, ուրեմն յանկարելոյ ասկի է, եթէ թողուցու նա բանիանգամ Եկեղեցւոյ 'ի բազմ խոտորիլ 'ի ճշմարտութենէ մարդասիրութեանց Հաւատոյ՝ զորս ինքնին գնարգոյն ճշմարտութիւն (Յովհ. ԺԴ. 6)։ և խոտորումն Եկեղեցւոյ ոչ ապրագ հնար է եղանել, բայց եթէ կամ զիրաւութեամբ նորա և հաճոյութեամբ, կամ ուանց զիրաւոյ ինչ նորա. սակայն երկոքին ևս անհնարին են։

Հինգերորդ՝ Գրիչն Յիսուս 'ի բազում անգամս կոչի գերազոյն Տէրն Եկեղեցւոյ, որում՝ «Պարտ է թագաւորել, մինչև զիրկ զամենայն թշնամիս 'ի ներքոյ ոտից իւրոց» (Ա. Կորնթ. ԺԵ. 25)։ Սակայն առ 'ի հաստատել Տեառն 'ի նոյնասակ իւր՝ կարեւոր է անդրադարձ. զի պարտեալ զնորդնալի թագաւորութիւնն իւր, խնամ զԵկեղեցին, 'ի մարդութեանց Հաւատոյ. ապա թէ ոչ՝ ասկա ասասնոր ներքնոյ թագաւորութեանն այսմիկ՝ կարծանէր

---

(1) Յունարէն գրիչ. «Յայտնի խակ մեծ է խորհուրդն բարեպաշտութեան. Աստուած երևեցաւ 'ի մարմնի»։

անուարակոյս 'ի վերջոյ, և յայնժամ ինքն լինէր յաղթահարեալ 'ի դրանց դժոխոց, և ոչ թէ յաղթական այնոցիկ։

Վեցերորդ՝ Յիսուս Քրիստոս յետ տնօրէնութեան փրկութեան մարդկան՝ յորժամ հանդերձեալ էր համբառնալ յերկինս, ասաց առ Աշակերտս իւր՝ կացուցանելով զնոսա 'ի գործ տիեզերական քարոզութեան. «Եւ ահաւասիկ ես ընդ ձեզ եմ զամենայն աւուրս մինչեւ 'ի կատարած աշխարհի» (Մատթ. ԻԸ. 20). բայց այս խոստումն չէր առանձին Առաքելոց միայն, այլ ամենայն Հովուաց և Վերակացուաց Եկեղեցւոյ. զի ոչ միայն 'ի վերայ Առաքելոց, այլ նաև 'ի վերայ ամենայն Յաջորդաց նոցա եղեալ են պարտք տարածանել և հաստել 'ի վերայ ուսման Եկեղեցւոյ. և յայս սակս յատկապէս՝ որպէս յայտ առնէ զնոյն և բովանդակ իմաստ բանին, տուեալ է և յիշատակեալ խոստումն՝ որ ճշգրտի դարձեալ յոճոյ ասացուածոյն. «Մինչ ցկատարած աշխարհի». որ 'ի սուրբ Գիրս նշանակէ զվախճան աշխարհի, և զլրումն տնտեսութեան Քրիստոնէութեան (Մատթ. ԺԳ. 40. 49։ Ա. Կորնթ. ԺԵ. 25)։ Զայսր և զնման այսմ արար Քրիստոս Աշակերտաց իւրոց միւս ևս խոստումն. «Եւ աղաչեցից զՀայր, և այլ մխիթարիչ տայցէ ձեզ. զի ընդ ձեզ բնակեսցէ 'ի յաւիտեան.... Նա ուսուցցէ ձեզ զամենայն՝ որ ինչ ասացի ձեզ, և յիշեցուցցէ ձեզ» (Յովհ. ԺԴ. 16 և 26). յորում բանս «ընդ ձեզ բնակեսցէ 'ի յաւիտեան»՝ ցուցանէ յայտնապէս, թէ Փրկիչն 'ի խոստանալն ոչ զԱռաքեալս և եթէ ունէր յանդիման աչաց իւրոց, այլ և զՏեղակալս նոցա 'ի պաշտման քարոզութեան Ս. Հաւատոյ։ Եւ եթէ զմտաւ ածցուք, թէ և Առաքեալք ինքնին ոչ անձանց և եթէ սեպհականեցին երբէք զդերբնական գործակցութիւն Հոգւոյն սրբոյ, այլ նաև ամենայն Հովուաց Եկեղեցւոյ ընդհանրապէս, զորս կացուցանէին հետզհետէ (Բ. Տիմ. Ա. 14։ Գործ. Ի. 28), յայնժամ ճշմարտութիւն բանիս լիապէս փայլեսցի առաջի մեր։

Մի՛ որ ապաքէն խորհիցի, թէ վարդապետութիւն անսխալութեան Եկեղեցւոյ իցէ նորաձայնութիւն իմն, որում ոչն էին գիտակ նախնիք Քրիստոնեայք. քաւ և մի՛ լիցի. այլ այնչափ հին է այս, որչափ հին է և ինքն Եկեղեցին, և զոյն զայս վարդապետութիւն Հովիւք և Վարդապետք միաձուն և միաբան քարոզեցին յամենայն ժամանակս Հաւատացելոց. զոր. սուրբն Իգնատիոս Աստուածակիր ասէ. «Յայն ոգիս և ընկալաւ 'ի գլուխս

իւր Տէրն զծնումն, զի հաղորդեսցէ Եկեղեցւոյ զանապատնութիւն» (1)։ Որոգինէս. «Ոչ է արժան ունկն դնել այնոցիկ, որոց ասեն՝ ահա աստ է Քրիստոս, և ո՛չ Յեկեղեցւոջ զնա ցուցանեն՝ որ լի է փառաւք յարեւելից մինչև 'ի մուտս արեւու, և զեղեալ լուսով ճշմարտութեան, և է սիրեն և հաստատութիւն ճշմարտութեան, և 'ի նմա և եթէ է բովանդակ տնօրէնութիւն Որդւոյ մարդոյ, որ ասացն առ ամենեսին և ամենայն ազգք. «Ահաւասիկ ես ընդ ձեզ եմ զամենայն աւուրս մինչև 'ի կատարած աշխարհի» (2)։ Սուրբն Կիպրիանոս. «Հնմարիս փրկարար և արքայութիւն Քրիստոսի Եկեղեցւոյ (այսպէս կոչէ Ս. Հայրն զվարդապետութիւն նորա) ո՛չ կարէ պղծորիլ և ո՛չ ապականիլ, որպէս և ինքն Եկեղեցին է անապական մարմին և կոյս» . . . և այլուր գրեալ. «Որք անկանեն 'ի Քրիստոսէ' կորիցեն ըստ յանցաւածոց իւրեանց. այլ Եկեղեցին՝ որ հաւատայ 'ի Քրիստոս, և զայն՝ զոր ծանեալ միանգամ, պահէ, ո՛չ երբէք անկցի 'ի նմանէ միանգամայն» ։ Սուրբն Կիրեղ Երուսաղեմի. «Եկեղեցին անապականապէս մատակարարէ զամենայն զվարդապետութիւնս՝ զորս կարեւոր են 'ի գիտութիւն մարդկան» (3)։ Թէոփիլոս Աղեքսանդրացի. «Աստուած յամենայն ժամ շնորհէ Եկեղեցւոյ իւրում զմի և զնոյն շնորհս առ պահպանութիւն բովանդակ մարմնոյ, և զի մի յապրանարանոցէ զնա իւիք թոյն հերետիկոսացն վարդապետութեան» (4)։ Սուրբն Ոսկեբերան. «Լեառն անուանէ (Մարգարէն) զՅեկեղեցին և զանընկճելութիւն վարդապետութեանց նորա» (5)։ Եկեղեցին ստուգապէս է լեառն ըստ հաստատութեան, ըստ կարծրութեան և ըստ անշարժութեան. իբր զի որպէս ո՛չ է հնար սասանեցուցանել զլեառն, նոյնպէս և ո՛չ զՅեկեղեցին Աստուծոյ (6)։ Եկեղեցին ո՛չ պահպանի արտաքոյ ժամանակաց, այլ կատարելոյ շնորհիւ Հոգւոյն սրբոյ. և յայս տակս ո՛չ ծերանայ, ո՛չ թերանայ և ո՛չ ընկնի՝ նեղեալ զոլով 'ի բազմաց։ Եւսեբիոս Օգոստինոս. «Եկեղեցին ո՛չ խոտորի յաւիտեան յա-

---

(1) Թուղթ առ Եփես. Գլուխ. 17։
(2) Ի Մատթ. Մատթ. Շապ. 30։
(3) Թուղթք. 55 և 73։
(4) Կրնապատութիւն. 18. Հատոր. 23։
(5) Թուղթ. 77. Առ Եպիփանոս։
(6) Ի Շապն. 2. Հատոր. Բ. 'ի վերայ Յեսուայ Նաւեայ։
(7) Ի Սաղմ. Թ. Հատոր. 6։

բրոնիցս. վասն զի նա է նախակարգեալ սիւն և հաստատութիւն ճշմարտութեան (1)։ Սուրբն Կիւրեղ Աղեքսանդրացի. «Անվանեցի է յոլովոցին Եկեղեցին՝ ունելով զՔրիստոս 'ի միմեանս և 'ի նեցուկ անսասան»։ Սուրբն Ղեւոնդ Երեցն Ներսիսեան. «Ամենակատար և յի հրաշմարտութեամբ (է) սուրբ և Կաթողիկէ Եկեղեցի, որ յինքն բովանդակեալ ունի զամենեցուն զիարհուրդն» (2)։

## Զի՞նչ արժան է իմանալ զանխախտութիւն Եկեղեցւոյ.

Զնկեղեցին Քրիստոսի հաստատեալ անսխալ, նախ՝ ըստ գերագոյն և միմիայն պատնառի անսխալութեան, որ է ամենատուր Երրորդութիւնն ապրիւր յաւիտենական ճշմարտութեան։ Հայրն Աստուած տրէ զՔրիստոնեայս իւրական ճշմարտութեամբն (Յովհ. ԺԷ. 17)։ Աստուածորդին Յիսուս Քրիստոս (3)՝ որ խոստացաւն կոչ ձեալ անբաժան ընդ Հաւատացելոց իւրոց «Զամենայն աւուրս մինչեւ 'ի կատարած աշխարհի» (Մատթ. ԻԸ. 20)։ և «Հոգին Աստուածեղէն՝ որ առաջնորդէ զնոսա ամենայն ճշմարտութեամբ» (Յովհ. ԺԶ. 13)։ Սմին իրի ոչ մարդիկ յատկապէս՝ յորոց կազմի Եկեղեցին Մարմին Քրիստոսի, այլ զարձեալ կրկնեմ, ինքնին եռանձնեալ Աստուածութիւնն կամ թէ հոգեզգոյնքս, ինքնին Տէր Գլուխն Եկեղեցւոյ՝ զորութեամբ ամենաստրուած Հոգւոյն պահէ 'ի նմա կատարեալ մաքրութեամբ և անապականութեամբ՝ զիւրն զԱստուածային ուսումն, և նոխատարսհպանէ զնա 'ի մոլորութեանց։

Երկրորդ՝ հաստատեալ զԵկեղեցին անսխալ՝ ըստ առարկային, որ է ճշմարտութիւն առ հաստատակ Քրիստոնէական Երդանի արդունաւորեալ յԱստուածային յայտնութեան (այսինքն 'ի Ս. Գիրքս, և առցս վկայութեամբ 'ի վաւերական աւանդութիւնս Առաքելոց և 'ի գիրս Հարց) (4)։ Իբր զի Ա. խոստացաւ Փրկիչն լինել

---

(1) 'Ի Բանն առ Տիմոթ. Գ. 14։

(2) 'Ի Մեկն. Մատթ. Երես. 7։

(3) «Քեզ՝ ով Եկեղեցի, առաջնորդէ զքեզ Հոգւոյն. քեզ առաջնորդէ մշտնջենաւորագոյն վէմն աներանգական Քրիստոս»։ Ներս. Լամբր. 'Ի մեկն. Գաւառաց զի. Երես. 42։

(4) «Կալեալ և խորհիլ և առնել (պարտ է) զայն՝ որ 'ի հանդերս Աստուծոյ աւուրսն հաստատեալ վկայութեամբ Ս. Գրոց, և զի անկանիլ 'ի ցաղմանցս բնդիրս, որք վրիպեցուցանեն 'ի սուրբ Հաւատոյ»։ Գրիգոր Լուսաւորիչ. Յանտիս. Երես. 37։

«Պարտ և պատշաճ է՝ զի որ փորձ ինչ լցեալ է, առանց վկայութեանն Գրոց սրբոց

ընդ Քարոզչաց Աւետարանի յամենայն ժամանակս մինչև ցկատարած յաւիտենից. և այսու որպէս թէ լինել նոցա աներկուութապէս մշտնջենաւոր առաջնորդ՝ հրաման տալով նոցա ուսուցանել աշխարհի «Պահել զամենայն՝ զոր ինչ պատուիրեաց ինքն» (Մատթ. ԻԸ. 20)։ Բ. Յաղագս Հոգւոյն սրբոյ նոր և երկնային դաստիարակի, որ իջեալ ըստ խոստման Փրկչին յԱռաքեալս՝ թնակեաց այնուհետեւ մշտնջենաւոր յԵկեղեցւոջ, և նախապահպանէ զնա յամենայն 'ի մոլորութենէ։ Աւաց ինքն Քրիստոս Աշակերտաց իւրոց. «Մխիթարիչն Հոգին սուրբ՝ զոր առաքեսցէ Հայր յանուն իմ, նա ուսուցէ ձեզ զամենայն՝ որ ինչ ասացի ձեզ, և յիշեցուսցէ ձեզ» (Յովհ. ԺԴ. 26)։ Յայս սակս անսխալութիւն Եկեղեցւոյ յայնոսիկ եւ եթէ ճշմարտութիւնս է, որոց հիմն գտանի 'ի Ս. Գիրս. և որք են՝ որպէս թէ գոյութիւն Քրիստոնէական Կրօնի և ոչ թէ յայլ արտաքին գիտութեանցն ճշմարտութիւնս, որպիսիք են ճշմարտութիւնք խնամատարական, ճշմարտութիւնք արհեստական, պատմական, աշխարհագրական, երկրաչափական, եւայլն, որոց հիմն և ապացոյցք՝ են մարդկային հանճար և վկայութիւն, այլ ոչ յայտնութիւն և վկայութիւն Աստուծոյին։

Երրորդ՝ հաւատամք զԵկեղեցին անսխալ և ըստ Պաշտօնէիցն, որք են իրրու թէ գործիք՝ 'ի ձեռն որոց ուսուցանէ Հոգին սուրբ զԵկեղեցի իւր, և պաշտպանէ 'ի մոլորութենանց. Ա. զի կայուցեալ են նորին յԵկեղեցւոջ 'ի Տեառնէ յատկապէս՝ ասա 'ի դաստիարակել զայլս 'ի Հաւատս, զի մի այնուհետեւ Հաւատացեալքն իցեն «Տղայք խռովեալք և տատանեալք յամենայն հողմոց վարդապետութեան՝ խարէութեամբ մարդկան» (Եփես. Դ. 14)։ Բ. Զի ամենայն խոստմունքն՝ զորս գտանեմք 'ի Ս. Գիրս, յորս խօսի Փրկիչն զզերբնական օգնականութենէ իւրմէ և զգործակցութենէ, եւս և զՀոգւոյն սրբոյ, պատշաճին ըստ մեծի մասին սրբոյ Առաքելոյ, և 'ի ձեռն նոցա անմիջապէս կայուցեալ Յաջորդաց նոցա և Հովուաց (Գործ. ԻԸ. 20)։ Գ. Զի ոչ թէ մի ոմն 'ի նոցանէ կամ՝ թէ ոմանք միայն իցեն անսխալ, այլ ամենեքին 'ի միասին, այսինքն ընդհանրական ուսուցանող Եկե-

---

ցուցանել . . . արդ մի ինձ՝ որ զայս ասեմ, հաւատար վայրապար, եթէ ոչ ըստ փորձ պատմութեանդ 'ի Գրոց սրբոց ցուցից, զի վկայութիւն սոյա Հաւատոցս մերոց ոչ 'ի բանդիտութենէ է, այլ 'ի յանդիմանութենէ Գրոց սրբոց »։ Կիւրեղ Երուսաղէմի. 'ի Լուսաւորչական քննութեան. Դասախ. Դ։

գնցին. զատ որում և խառնումն Փրկչին յաղագս 'ի յանխառնութեան գործակցութեան Հոգւոյն Հիմարութեան և իւրն անբաժանութեան՝ ոչ առ մի ոմն և եթէ մասնաւոր աշակերտաց եղև, այլ ընդհանրապէս առ ամենայն աշակերտս իւր, և 'ի նոսա յանձինս ոչ առ մի ոմն միայն (այսինքն կամ առ Եպիսկոպոսն Անտիոքայ կամ Աղեքսանդրիոյ, և կամ թէ Հռոմայ, որպէս ցնորեն մոլորեալք ասանք), այլ առ ամենայն փոխանորդս նոցա հաւատարմաց, որպէս և պաշտօն տարածման և պահպանութեան սուրբ Հաւատոյ. յոր սակս խառնակեալն է Աստուածային ձեռնադրութիւնս՝ ոչ միում միայնում Առաքելոյ ասեալ, կամ թէ յաջորդի նորա յանձնէ, այլ ամենայն Առաքելոց և ամենայն Յաջորդաց նոցա հաւատարապէս։ Որոնցմէ եթէ յիրողութիւնս մտորգանուն թեանց Հաւատոյ՝ ներկայացուցիչ ընդհանրական Եկեղեցւոյ է (որպէս և է հաւատեալ), ուստիչ Եկեղեցին կամ նախագահք Եկեղեցւոյ, յայնժամ ոչ մի որ 'ի նոցանէ զատ կամ մեկուսի առեալ, այլ ամենեքին նորա միաձայնամբն առեալ՝ ազատ են 'ի վտանգէ անկանելոյ 'ի մոլորութիւնս. և զայս Հիմարութիւն 'ի սկզբանէ հետէ ծանեալ միշտ և ելիցս արդեամբ Եկեղեցին. յորժամ 'ի կարեւորագոյն պարագայս 'ի յանձնել մեծակշիռ խնդրոց զՀաւատոյ՝ ոչ առ Հայրապետս որ գիմեաց, այլ առ Տիեզերական Ժողովս, որ է միմիայն գերագոյն դատաւորական առեալն խնդրոց Հաւատոյ և ունօրէն ծանրագոյն ամենայն կրօնական իրաւութեանց Հաւատացելոյ. և ընդ նորս դատաստանս դնին՝ եթէ Հայրապետք, եթէ Պապք, եթէ Եպիսկոպոսք, և եթէ Երիցունք, և զհակառակորդն «Ղրոմէ Կարթագինիկէ և Աստրելական Եկեղեցի» զատ սահմանելոյ առաջին Տիեզերական Ժողովոյն՝ որ 'ի Նիկիա։

Իսկ մասնաւոր Հոմիւք, Հայրապետք և Եպիսկոպոսք՝ որպէս և Աստուածային Գիրք վկայեն, սխալական են, և սխալեցան իւրեանք 'ի Հաւատս. «Եւ 'ի ձէնջ յարիցեն արք», նշանակէր Հոգւով սրբով Առաքեալն Պօղոս՝ յաղագս Հոմիւսոյ Եկեղեցւոյն Եփեսոսի, «որ խօսիցին թիւրս՝ ձգել զաշակերտսն զկնի իւրեանց» (Գործ. Ի. 30). որպէս և զատ յայտնութեան Յովհաննու Աստուածաբանի (Բ. 5). և զատ գրելոյ Եկեղեցական Պատմութեան՝ մարթի է անկանիլ նաեւ մասնաւոր Եկեղեցեաց 'ի սրբարանս, և մոլորիլ 'ի Հիմարութենէ, որպէս և անկան իրաւ

Եկեղեցիք յոլով յուղղութենէ Հաւատոց, և չարժեցան աշուա-
նակք նոցա 'ի տեղւոջէ իւրեանց (1)։

## ՑՕԳՈՒԱԾ ՈՒԹԵՐՈՐԴ.

### Խորհուրդք Եկեղեցւոյ իրրև միջոցք շնորհաց Աստուծոյ.

Ճշմարտութիւնք Քրիստոնէական Հաւատոյ դիրկակի են. ոմանք հասանելի մտաց մերոց. զորօրինակ՝ վարդապետութիւնք գերագոյն կատարելութեանց Աստուծոյ, վերարերութիւն նորա առ աշխարհս և յատկապէս առ մարդիկ. այլք գոգչիր անհաս իսպառ. զորօրինակ՝ խորհուրդ ամենասուրբ Երրորդութեան, խորհուրդք մարդեղութեան Փրկչին, և անկման, փրկագործութեան և վերստին ծննդեան մարդոյ։ Ուշի ուշով 'ի քնին մատուցեալ զճշմարտութիւնս առաջնոյ տեսակի՝ ամենայն ողջամիտ անձն պարտաւորի խոստովանիլ զարդարութիւն, զվսեմութիւն և զլրութիւն նոցին 'ի Քրիստոնէութեանն, զորպիսին ո՛չ երբէք մարթացաւ հանձարել իմաստասէր որ յայլ Կրօնս. իսկ ճշմարտութիւնք երկրորդ տեսակի կամ ծածուկք՝ որոց ո՛չ զոլով մեր հաստ, և ո՛չ իսկ բաւական 'ի կշռել զարժանաւորութիւնս 'ի նոսա պահեալս, բայց և այնպէս իրաւամբ հաստատեմք, թէ խորհուրդքն այնորիկ բոլորովին վայելուչ են Աստուծոյ հեղինակի Քրիստոնէական Կրօնի։ Այս 'ի ապացուցանել զաստացեալս՝ միտ դիցուք հանգամանացս որ զկնի։

1. Մարդն իրրև էակ հունաւոր՝ անբաւական է հաստ զոլ ամենայնի։ Նա ինքն ինքեան սակս է մեծագոյն և առաջին գաղտնիք, բաստ որում ո՛չ զորէ հաստ զոլ ո՛չ զոյութեան հոգւոյ իւրոյ, ո՛չ սքանչելի կազմութեան մարմնոյ իւրոյ, ո՛չ եղանակի յօդակապութեան անդամոցն, և ո՛չ փոխադարձ յարաբերութեանց նոցա առ իրեարս։ Նմա 'ի տես յերեւան գան յիւրաքանչիւր

---

(1) "Եւ զի եկեալք անդեալ ելեալ էին հոտքն ընդ Յուրան 'ի նոյն կողմն, ուստի ան ցեալ էին, այսինքն է 'ի յետին ժամանակն անորինելոց են անկեալք 'ի ճշմարտութենէն, զոր կենդանոց են յետս զդրոշմ ուխտին սրբութեան, և քարոզումն Թագաւորութեան. և 'ի դաւանանի լինելոց են զայլք, որ կոտորելոց են զսուրբ դաւին, այսինքն՝ որ դնան 'ի ճշմարտութենէ անտի. և յուխտէ քահանայապետի լինելոց են զայլք, և հանեն նախանձոտ արեան 'ի դաւանանի, այսինքն ուխտին և քահանայութեանն, և խռովութիւն ժողովրդոյն"։ Աղաթանգ. Երես. 562։

քայլս գազանիք՝ նաև 'ի անասնոցի ոչխարին. իսկ ինքն միշտ անկարող առ լուծումն, թէ զի՞նչ արդեօք իցէ նիւթն, զի՞նչ ընկրկելական տարերքն նիւթոյն, թէ զի՞նչ արդեօք իցեն կարողութիւնք՝ շարժիչ բովանդակ մեքենականութեան երկրի, զիա՞րդ յառաջ գան անիթիւ, զարմացուցիչ և բազմայեղանակ յայտնութիւնք կենաց, և որպէ՞ս կատարի անբերմնեցի շրջան այնորիկ մինչեւ յանհատս զոյակս անգամ։ Երբեմն գիւտ ամենայն՝ զոր զանէ մարդ հետաքննէ 'ի բնութեան, բանան հետաքննէ առաջի աչաց նորա և զնոր ոչխարին գազանեաց, և որչափ առաւել 'ի զննին մատչի այնորիկ, ևս քան զեւս զանէ 'ի նմին գազանածածուկս և անթափանցելիս։ Զիա՞րդ ապարէն հնարէ, զի 'ի Երկնի միայնում՝ որոյ բովանդակութիւնն է ինքնին Աստուած՝ զոյութիւն ամենապարծրնաց և ամենածածուկ, յայտարերութիւն նորա առ մարդն լինիցի ամենեցուն ակն յանցելման, ապարդ և բնաւին հասանելի։

2. Պէտք են հարիւր գազանեաց և 'ի բնական Երկնի, այսինքն է 'ի գազաւիսարս՝ զոր տրամաբանիչ մարդ ինքնին զԱստուծոյ՝ ստարատարեալ ընդունիլ զայնոսիկ իրրեւ հիմարիս. զորոշիանակ՝ միտք մեր խոստովանին հարիւր, թէ Աստուած է էութիւն ինքնուրոյն և անապականն կարեւոր. այլ ճանաչել բուն ոչ, թէ զիա՞րդ էութիւն կարիցէ ունել զգաստաս զոյութեան իւրոյ յինքեան. խոստովանի միտք մեր, թէ կենայ Աստուած յաւիտեան, բայց կենայ թարց փոփոխութեան ժամանակի անցելոյ և հանդերձելոյ, կամ թէ առանց հնանալոյ ժամանակի, ոչ ունելով ոչ սկիզբն և ոչ վերջաւորութիւն։—Հնարաւո՞ր է այս։ Խոստովանի միտք մեր, թէ Աստուած է անեղբ և ամենուրեք. այլ ոչ բուն կերպարանելով ոչ զամենուրեքութիւն թարց տարածութեան, և ոչ զարածութիւն թարց նիւթոյ։—Բայց հարկ է Աստուած . . . . որպիսի՞ ապարէն իրաւամբ պահանջեմք, զի 'ի յայտնեալ Երկնի միայնում մի յինքեանց խորհուրդք, քաջ գիտելով, թէ պատճառս խորհրդոցս է մատամբ իւր հանճարութիւն մտաց մերոց, և մատամբ ևս անհունութիւն Աստուծոյ։ Թերեւս զգամբ ճանաչելի յայտնութեանն կարիցէ որ առնել զկարարարութիւն՝ անկարարար, կամ զանճանաչելին ամփոփել 'ի ճանաչելի. ոչ բնաւ. բայց որում զարդ յայտնութեանն էր և է ևս քան զեւս մերկանալ և ծանուցանել զանճանաչելին Աստուած՝ ճանաչելոյ մտաց մարդոյ, քան որչափ ապարէն Երկնի բնական. սակայն իրրեւ 'ի յայտնու-

թեանն առաւել ևս պէտք են խորհրդոց։

3. Ի զնին կացեալ ևս մօտագոյն խորհրդոց Կրօնի Քրիստոնէութեան՝ գտանեմք ի նոսա զանձուկ իմն ազիւազիւն ընդ միմեանս և զմեկնութիւն միոյն միւսովն. զորօրինակ՝ խորհուրդն մարմնաւորութեան Աստուածորդւոյն մեկնէ զխորհուրդն ամենասուրբ Երրորդութեան, խորհուրդն փրկագործութեան ենթադրէ զխորհուրդն անկման, և խորհուրդն վերածնութեան և արդարացուցման մարդոյն բղխի ի խորհրդոց փրկագործութեան . . . Վերջապէս յամենեցուն ի նոցանէ կազմի ամենայարդար և իմաստնագոյն իմն եղանակաւորութիւն, յորում իմաստ իւրաքանչիւր ունի զիւր խորին նշանակութիւն, զոր և ո՛չ է հնար հերքել առանց հերքելոյ զքովանդակ կարգաւորութիւն։ Հարցանի. ո՞ որ տրամադրեաց զայն զայս իմաստուն կարգաւորութիւն խորհրդոց. թերեւս Առաքեա՛լք (քանզի նոքա ամփոփեցին ի սուրբ Գիրս զնշմարտութիւնս զայսոսիկ). այլ Առաքեալք՝ որպէս ամենեցուն յայտնի է, էին արք կարի սարդամիտք, և ըստ չափու կրթութեանն՝ իսպառ անկարողք առ այսպիսի գործ . . . զոնէ խոստովանիլ հարկ է, թէ կարգաւորութիւն այսչափ իմաստուն ո՛չ երբէք անվայելուչ ինչ է Աստուծոյ։

4. Միտ զնելով որոշակի մէն մի խորհրդոց Քրիստոնէութեան՝ նկատեմք, զի նորին միաբով ի մէնջ անհաս՝ բացուցանեն մեզ գրաղում ինչ, և մատակարարեն զյաւէտ սրանծայի հմտութիւնս կարեւորագոյնս ի գործ Կրօնի։ Ըստ այսմ գաղտնիք անկման սարդամանէ զծնունդ շարին յաշխարհ և զպատերազմն զանեւրեւոյթ, զոր կրէ իւրաքանչիւր որ յանձին իւրում, ևս և զի թշուառութիւնս՝ զորոց զբնութեան իւրաքանչիւր որ փորձէ ի կեանս իւր։ Խորհուրդն մարդեղութեան եօթնանփայլ լուսով յանդիման կացուցանէ զվսեմ արժանաւորութիւն մարդկային բնութեան, զանձուն սէր Այրարչին մերոյ առ մեզ, և ցուցանէ ի Մարդացելումն զամենակատար տիպար յաղագս նմանողութեան։ Խորհուրդն փրկութեան և խաչաշարշար մահու Փրկչին ևս քան զեւս երեւեցուցանէ զմեծագոյն արժէս հոգւոց մերոց, և զամենամեծ կատարելութիւնս Ստեղծողի մերոյ, խնամ զանեղբայրական բարութիւն նորա և զարդարութիւն, զանպայման արդութիւն նորա և զիմաստութիւն, զամենակալ զօրութիւն նորա և զհաստատութիւն ի խոստմունս իւր։

5. Խորհուրդք Քրիստոնէական Կրօնի ունին զկարի մեծա-

զոյն արդիւնս՝ եթէ՛ նկատմամբ առ Աստուծոն, եթէ՛ նկատմամբ առ մարդն՝ ենթակայ այնմիկ։ Որոյ զի 'ի յայտնութեանն եթէ զարտունակեալ էին զիւրիմսոյ ճշմարտութիւնք և եթէ, ոչինչ այնպէս մեծակշիռ լինէին 'ի համարման մերում. քան որում ոչ զրգռէին յարաժամ զհոգի մեր. այլ զոլով կնքեալ Աստուծոյ յատուկ խորհրդանշանութեամբ՝ զրդռեն և շարժեն զմեզ բնականապէս, և անուցանեն յարատեւապէս 'ի մարդն՝ զգայմունս յարդանաց, զարմացման և ջերմեռանդութեան։ Թորհուրդք Քրիստոնէական յայտնութեան առաջի դնեն մարդոյ զհամատուագոյն իմն ճանապարհ ուսանելոյ ինքնին զյայտնութիւնն՝ զճանապարհ Հաւատոյ. զարմանեն և թժշկեն զդաժանագոյն ախտն բնութեան մարդոյ, զամբարտաւանութիւն ասեմ զմտաց՝ զարդիւրն անհամար շարեաց. ցուցանեն զարժէքս Հաւատոյ մերոյ, և խոնարհութեան մերոյ, և հնազանդութեան կամացն Աստուծոյ՝ յորժամ զերեսս զմիտս մեր 'ի հպատակութիւն Քրիստոսի (Բ. Կորնթ. Ժ. 5)։ Վերջապէս խորհուրդք Քրիստոնէական Հաւատոյ ունին զբարերար ազդեցութիւն նաև 'ի վերայ գործունէութեան մերոյ. որք բացայայտեալ յանգիման աչաց մերոց զանեզրական կատարելութիւնս Տեառն՝ ասածեն 'ի մեզ զառ ինքն զԵռանդ, և հաւատարմացուցեալ զնոքա առ մեզ զանբաւ բարերարութիւնս՝ զարթուցանեն և անուցանեն 'ի մեզ զսէր առ նա և զգոհութիւն զնմանէ։ Նոքա են՝ որ ցուցանեն մարդոյ և զօրաւորագոյն շարժառիթս բարեգործութեան, և զամենակատար նախատիպ առաքինութեանց ամենայնի յանձին Աստուածային Փրկչին մերում, և զսպասաւորագոյն միջոցս առ հասանել նոցին օժանդակութեամբ Աստուածային շնորհաց։

Յաստուածոյս ցոյս փայլ տեսանի անդերձ, զի 'ի Քրիստոնէական Կրօնի իբրեւ 'ի վերուստ երեւեալ ճշմարտութեան՝ մեծագոյն մասամբ են խորհրդական, այսինքն է զգայական աչաց աներեւոյթ, այլ աչաց Հաւատոյ տեսանելի և իմանալի փարդաւորութիւնք, որոմք սկսանի և նորոգի բարոյապէս միտս իւրաքանչիւր մարդոյ, կազդուրի և ամէն գերբնական շնորհք, և հաստատեալ 'ի շատի արդիւնս և կատարելութեան՝ ցոյցեալն յԱստուծէ իւրմէ, վերափոխի մահուամբ յերանաւէտ հանդիսատ արքայութեան երկնից։ Զգլխաւորս 'ի խորհրդոց՝ (յորս բովանդակին գրեթէ այլ ամենայն մասունքն), համարի Եկեղեցին 'ի սկզբա-

նէ հետէ եօթն. այսինքն է՝ 1. Աղաչխարութիւն (1). 2. Մկրտութիւն. 3. Դրոշմ. 4. Հաղորդութիւն. 5. Զեռնադրութիւն. 6. Ամուսնութիւն. 7. Վերջին Օծումն կամ Այցելութիւն հիւանդաց, զորս բացատրեսցուք 'ի կարճոյ մի ըստ միոջէ։

## 1. Աղաչխարութիւն.

1. 'Ի Քրիստոնէական Կրօնէ ուսանիմք զԱստուածայրն ազգի մարդկան զԱդամ յանցուցեալ օրինաց Յաւիտենականին, և զաստուածատեալ ծննդովք իւրովք յանէծս, զրկեալ 'ի սրբարար շնորհաց Հոգւոյն սրբոյ, և հակամէտ միշտ 'ի գործս չարեաց. և բովանդակ ազգ մարդկան ներեալ 'ի մեղուցելոյն յԱդամայ՝ որպէս ճիւղ ծառոյ ստեղնի 'ի թունաւոր արմատոյ, կայ և ինչ հանապազորդաբար ընդ բարկութեամբ ահաւորին Աստուծոյ և ընդ ապառնալեօք պատժոց դեհենին. իսկ ապաչխարութիւնն է մեծ և սկզբնական (2) Խորհուրդ Եկեղեցւոյ, ըստ որոյ անձնիւր անձն (նախատաճմանեալ առ փրկութիւն) զարթուցեալ յեղակարծ որպէս թէ 'ի խոր քնոյ՝ մտանէ 'ի խորս սրտի իւրոյ, և. նոցիցս յայլ ըստ այլոյ խորհրդոցն, հետապատ զկիրս իւր և զարշի 'ի պղծութեանց նոցին, քննէ զգործս իւր և զղուի յանիրաւութեանց նոցին. և գարձուցեալ զաչս հոգւոյն յայս կոյս յայն կոյս զտանել ինքեան զոր յապաւէն յեղակոծացս յամենայնէ՝ նշմարէ միայն 'ի հանգիպոյ զեղս ճանապարհին, ընդ որ բարձի ինքն եզերեալ 'ի գուրն բորբոքեալ հնոցին. յայնժամ զդողանի հարեալ և տակայեալ՝ անհնարին ահիւ եկանէ 'ի խնդիր եռանդեամբ բաղմաւ փրկութեան անձին իւրոյ։

Խթան ապաչխարութեան է երկայնամիտ քաղցրութիւն Աստուծոյ. որ իբրեւ ամենակատար և ծայրագոյն բարի՝ կամի, զի ամենայն որ դարձցի յամբարշտութեանց զնայցից իւրոց 'ի գիտութիւն ճշմարտութեան. և զտեալ զողորմութիւն՝ կեցցէ 'ի

---

(1) Զապաչխարութիւնն ասեմք 'ի Հեգինակաց Կրօնագիտութեան յերբորդում տեղւոջ կարգեն զկնք Մկրտութեան և Դրոշմի. այլ ըստ որում սկիզբն մարդկային նորոգութեան է ապաչխարութիւնն, յայս տեսակս և մեք 'ի սկիզբն Խորհրդոց զայսն կարգեցաք, և ապա զայլս ըստ կարգի, զի և Ս. Գիրքս նախ քան զՄկրտութիւնն ուսուցանեն զդէպ (Գործ. Բ. 38) և Խուսավանիլ զմեղս (Մատթ. Գ. 6)։

(2) "Խոստովանեցուցէք զկատարեալն հաւատս, և զիր փոքր ինչ ապաչխարութիւն, և յետ ժամանակի ինչ մկրտեցէք զնոսա"։ Ընդհանրականն. Երես. 201։

յաւիտեան։ Եւ զի թարց ապաշխարութեան անհնարին է ումեք մերձենալ 'ի սրբութիւնս Սրբոյն, կամ հաղորդ շնորհաց նորա դառնալ. յայս տակս և Փրկիչն իրրեւ առաջին պայման փրկութեան՝ զապաշխարութիւնն քարոզեաց։ «Ապաշխարեցէք։ զի մերձեալ է արքայութիւնն երկնից» (Մատթ. Դ. 17)։ «Ապաշխարեցէք և հաւատացէք յԱւետարանն» (Մարկ. Ա. 15)։ յորժամ յայտնեցուն յերկրի առ 'ի կատարել զմեծագոյն գործ ազգութեան մարդկան 'ի լծոյ մեղաց, և հաշտութեանն ընդ Աստուծոյ։ Իսկ արդ՝ ապաշխարութիւն է Տէրն մարդկան յԱստուծոյ առ նորոգումն կենաց և թաղութեան մեղաց։ ըստ որոյ մարդն՝ թէև յանհուն զանկատակ զկեանս աշխարհի և վայելչութեանց նորա, թէև զանկատակ զկեանս սատանայի և խաբկութեանց նորա, թէև զանկատակ զկեանս մարմնոյ և ցանկութեանց նորա, զարթնու ըստ ազդեցութեան Աստուածեղէն Հոգւոյն 'ի մեռելջրինակ թմբրութենէն, տեսանէ պարզապէս, թէ կեանք իւր անցեալ է իրրեւ շղթայ թանձր սէգագէս յանցանաց, օրինազանցութեանց. մատնութեանց Աստուծոյ և գարշ մոլութեանց. տեսանէ, թէ գործք շարին՝ զորս գործէրն ցայն վայր, պատրատեն ինքեան զգեցեալն ահագին. տեսանէ, թէ և բարեգործութիւնք իւր անզամ ասկուիկ՝ ոչինչ գրեան յատենի Դատաւորին, յորժամ նորոգեալ յիշատակք շարեալն ամենայնի՝ զորս գործեալն է ցայն վայր, դան էարդաւ 'ի միտս իւր, և մեծաւ սարսափմամբ դողացուցանեն զէութիւնն. և ինքն զմտաւ ածելով՝ թէ օրէնք սրբոյն և արդարոյն Աստուծոյ խստեն զմեղաւորս, և զնեն զամենեսին զնաս ընդ ահաւոր բարկութեամբ մշանջենաւոր պատժոյ, առէ իւրովի այնուհետեւ զմեղս, և փութալով ազատիլ 'ի բարկութենէն՝ որ գալոցն է, ոչ առ այլ որ դիմէ, բայց եթէ առ միմիայն ամենաբաւական ազգութիւն ողորմութեան առ Աստուած։

Նշանակք հաւատոյ Ապաշխարութեան են՝ 1. Յորժամ մարդն ծանուցեալ խիստագոյն զգայութիւն մեղաց՝ զոմանքի հարկանի, խռովի 'ի միտս իւր, դարձի 'ի նոցուն, և դնէ 'ի մտի՝ ոչ եւս դառնալ անդրէն 'ի գործեան առաջինս (Յոր. Խ. 6։ Երեմ. Լ. 19)։ 2. Յորժամ զղջացեալ՝ վարի այնուհետեւ անձուկ և նեղ հանապարհաւ անձնուրացութեան (Մատթ. Է. 14)։ և դուն գործէ խլել յանձնէ իւրմէ զայն ամենայն վնաս մեղաց՝ զորս սերմանեալ յառաջագոյն, և կործանել զայն ամե-

նայն բուրս ամբարշտութեանց՝ զորս կանգնեցան ցայն վար . 3. Յորժամ ապաշխարողն չարչարի պէս պէս նահատակութեամբք կրից մարմնոյ , ժուժկալութեամբ և տաՀօք՝ հեղու զարտասուս , ողբեցու զբուրմ , բաղխէ զկուրծս , և խնդայ ինքնին ընդ չարչարանս իւր (Եզեկ . Ա . 24) , 'ի խաչ հանէ զմարմին իւր ֆարեօք և ցանկութեամբք հանդերձ (Գաղ . Ե . 24) . 4 . Յորժամ զմտաւ ածեալ զանՀուն բարութիւն և զսէրն Աստուծոյ՝ տրտմի և ցաւի 'ի սրտի իւրում , զի վշտացոյց և անարգեաց անարժան զործովք իւրովք զԱստուած , և խոնարՀութեամբ և Հաւատովք մատչի առ նա յապերս ներողութեան (Հռոմ . Բ . 8 ; Բ . Մնաց . Է . 14) . 5 . Յորժամ իրրեւ կարօտ ոք Նորոգութեան ըստ Ներքին մարդոյն երևնէ յօժարութեամբ 'ի խնդիր Հանդիպիցն Աստուծոյ , անտաց օրինաց Նորա , խորՀի 'ի Նոսա 'ի տուէ և 'ի գիշերի , և ցանկայ լնանիլ նոքօք , ապրի բեկեալ և խոնարՀ սրտիւ , քանզի Հոնապազոր զՀաւատս իւր և զգործս , Հաւատարիմ լինի ուխտի իւրում , նուիրէ բոլորովին զանձն իւր Աստուծոյ , նախանձաւոր լինի գործոց բարութեան , և ճաշակէ զրաղցրութիւն աղթիցն ։

Որպէս Ապաշխարութեանն անՀնարին է կատարեալ գոլ առանց անկեղծ խոստովանութեան , նոյնպէս և դխոստովանութիւնքն իմանալի է թերի և ապիկար առանց սրտի մտաց զգՀման . և երերին այսորիկ այնպէս անձուկս աղխաղխեալ են ընդ իրերաց , մինչև երկուցն զանկատարս գոլ առանց երրորդին , և սմա առանց երկուցն ։ Խոստովանութիւնն՝ որ է բողոք մեղաւորին զչարագործութենէ իւրմէ և վկայութիւն շրթանց իւրոց վասն գաժանարարութեան անձին իւրոյ՝ է համանգամայն և յայտարարութիւն կատարեալ արդարութեան և սրբութեան դատաստանաց Յաւիտենականին , որ սատիկ վրէժխնդրութեամբ և առանց ակնառութեան պատժէ զյանցաւորս ։ Յորժամ մեղաւորեալն չարժեալ 'ի Հոգւոյն շնորՀաց մատանէ 'ի խորս սրտի իւրոյ , և զշտեմարանեալս 'ի նմա զխորՀուրդս , զկիրս և զգործս կշռէ կշռոր-զաւ օրինաց միայն Սրբոյն , խառնի , տագնապի և զդողանի Հարկանի , և առ նա և եթ զիմէ՝ որ Սուրբն է Սրբոց . 'ի նա միայն ապաւինի՝ որ առատն է և լի բազում ողորմութեամբ . 'ի նա և եթ յուսայ՝ որ աղբիւրն է կատարեալ քաւութեան , և որ յամենայն ժամ առ ինքն կոչէ զծանրաբեռնեալս պէսպէս մեղօք . և յայնժամ լնու մարդն զպատուիրանն Աստուածային , « Ասա զու նախ զանօրէնութիւնս քո , զի արդարացիս » (Եսայ . ԻԳ .

24)՝ խոստովան լինելով նմա զծածուկ և զյայտնի, զխորհրդով և զգործով, զկամայ և զակամայ, զդիտութեամբ և զանդիտութեամբ գործեալ զմեզս իւր։ Թէպէտ և խոստովանութիւնն՝ Աստուծոյ միայնոյ մատչի, զի նա միայն է ծայրագոյն Օրէնսդիր և Դատաւոր գործոց մարդկան և հրեշտակաց, և մեղուցեալն ո՛չ երբէք մարդոյ մեղանչէ, այլ Աստուծոյ, թէպէտ և կատարեալ թողութիւն յանցանաց՝ ի նմանէ և եթէ վայելէ ակնկալել (1), զի նա միայն է Արքութիւն Արքոց և միակ ազգիւր քաւութեան և փրկութեան (Եսայ. Լդ. 7։ Դանիել. Թ. 9։ Միքիա. Է. 18։ Մարկ. Բ. 7). այլ քան որոմ՝ ի սկզբանէ հետէ հաճելագոյն խնամատութիւնն Աստուածային տալ զօրէնս իւր մարդկան՝ ի ձեռն մարդոյ, թողուլ զմեղս մեղուցելոյ՝ ի ձեռն ընտրեալ Պաշտօնէից իւրոց, յոյս տակս և Քրիստոնէից պարտք են զխոստովանութիւն մեղաց իւրեանց Աստուծոյ մատուցանել, այլ՝ ի ձեռն կամ առաջի արժանաւոր Պաշտօնէից Եկեղեցւոյ, և զանդդատապարտութեան կամ զարձակման զյայտարարութիւն՝ ի կապից մեղաց իւրեանց միջնորդական աղօթիւք նոցա ընդունիլ յԱստուծոյ. թէպէտ և այսու ո՛չ արգելեալ լինի ուղիղ խոստովանիլ Աստուծոյ (2) զզրաստօրէական զյանցանս իւր յիւրաքանչիւր աւուր՝ ի սենեկի կամ յԵկեղեցւոջ, ապէս և զորս գործեալն է որ ընդդէմ ծնողաց իւրոց նոցա և հեռաւորացն և մերձաւորացն, բարեկամացն և ատելեացն՝ իւրաքանչիւր ուղիղ՝ ի նոցանէ, ըստ Աստուածային օրինաց (Ղուկ. ԺԵ. 21։ ԺԸ. 13։ Մատթ. Զ. 15։ Յակ. Բ. 13)։

Խնամատութիւնն Աստուածային յորժամ հանեալ զԽորայէլ յԵգիպտոսէ՝ հաստատեաց օրինօք և կարգօք զԵկեղեցին հնոյ ուխտի, ո՛չ յամենայն կարգել՝ ի միջի ընտրեալ ժողովրդեան իւրում և զատեան ապաշխարութեան, խոստովանութեան և թողութեան մեղաց՝ ի ձեռն Քահանայից. ըստ որոյ յանցաւոր իւրաքան-

---

(1) «Նա Աստուած միայն թողուլ զմեղս՝ ի ձեռն իմ և ոչ ես»։ Նեղս. Լամբ. ՝ի Մեկն. Պատարագ. Երես. 66. — «Երկիւղս կամ երկիւղ՝ ի տարուցն խոստովանիլ զյանցանս իւրեանց Քահանայից, կամ ևս յոլովագոյն, և քանզի առնել զապաշխարութիւն՝ զոր ոնք Քահանայն վասն մեղացն՝ կատարել պահոք և աղօթիւք և ողորմութիւնամբ, որով և թողութիւն յանցանացն՝ զոր խոստովանեցաւ, արժանաւորի մեղուցեալն զտանել Աստուծոյ»։ Ընդհանրականն. Երես. 202։

(1) «Առանց խոստովանութեան չիք հնար քաւութիւն զտանել. վասն այսորիկ պարտ է փութալ՝ ի խոստովանութիւն՝ Քահանային խոստովանել ժամանակ, և Աստուծոյ հանապազ»։ Խոսրով. ՝ի Մեկն. Ժամ։

չիւր մատուցեալ առ զու�տանարին ըստ կարգութեան իւրում՝ զգուարակ կամ զնոխազ, զոչխար՝ զնէր զձեռս իւր 'ի վերայ գլխոյ նորա, և խոստովան լինէր զմեղս իւր. և ապա ի Քահանայն 'ի մեզայ անտի, և թողեալ լինիցի նմա մեղքն » (Ղեւտ. Ե. 4. 10). «Ղասն զի նոցա (Քահանայից) էր տուեալ բառնալ զմեղս ժողովրդեան և առնել քաւութիւն վասն նոցա առաջի Տեառն »։ Գոյր դարձեալ յԱստուծոյ և յատուկ պատուէր, զի վասն թողութեան ամենայն մեղաց Իսրայէլի անգամ մի 'ի տարւոջն մտանիցէ Քահանայապետն 'ի ներքին կողմն վարագուրին, « Որպէս արարն Ահարոն՝ մատուցանէր զնոխազն կենդանի, և դնէր Ահարոն զձեռս իւր 'ի վերայ գլխոյ նոխազին կենդանւոյ, և խոստովան լինէր 'ի վերայ նորա զամենայն անիրաւութիւնս որդւոցն Իսրայէլի, և զամենայն անիրաւութիւնս նոցա և զամենայն մեղս ... որպէս հրամայեաց Տէր Մովսիսի » (Ղեւտ. ԺԶ. 21. 34)։ Բայց 'ի յատկայեալ Քահանայից և 'ի Քահանայապետաց՝ որք յետ լսելոյ զխոստովանութիւն մեղաց 'ի բերանոյ մեղուցելոց՝ թողութիւն չնորհէին նոցա, առաքէին ընդ զանազան ժամանակս յԱստուծոյ նաեւ Մարգարէք, որպէս Ղաքիան՝ որ յետ խոստովանեցուցանելոյ զԶաւիթ՝ որ ապաւեալն էր զՈւրիա, յայտ արար նմա զթողութիւն ասելով. « Տէր առնոյցեալ զքեզ զմեղս քո, և մի մեռցիս » (Բ. Թագ. ԺԲ. 19)։ Թէպէտ և 'ի գալ Մեսսիային յայտնեցաւ նաեւ արդարութիւնն յաւիտենական, և առաքեալն օրէնքն Մովսիսի փոխեցան 'ի լոյս՝ որպէս և քահանայութիւն Ղեւտական ցեղին յընդհանրականն, թէպէտ և տեղի տուեալ բարձան վասն քաւութեան մեղաց այլապէս պատարագք անբանից միանգամ պատարագաւ անմեղ Գառին Աստուծոյ, որ զամենասուրբ անձն իւր զոհեալ 'ի խաչին՝ իբրեւ հաշտարար ընծայ Հօր Աստուծոյ եղիւ մեզ զկատարեալն զիրկութիւն, այսու ամենայնիւ խոստովանութիւն և թողութիւն մեղաց յանուն Նորա եկաց մնաց անխախտ 'ի Քրիստոնէական Եկեղեցւոջ։ Քահանայապետն խոստովանութեան մերոյ (Երբ. Գ. 1) յորժամ հանդերձեալ էր համբառնալ յերկինս առ 'ի յանդիման լինել երեսաց Աստուծոյ բարեխօս վասն մեր, յանձն արար դրանդիան արքայութեան՝ Յոդովոյ Աշակերտաց իւրոց՝ ասելով առ նոսա. « Ամէն ասեմ ձեզ. զի զոր կապիցէք յերկրի՝ եղիցի կապեալ յերկինս » (Մատթ. ԺԸ. 14). և տալով նոցա զՀոգին չնորհաց՝ յա-

ել. «Եթէ ումեք թողուցուք զմեղս՝ թողեալ լիցի նոցա. եթէ զուրուք ունիցիք՝ կալեալ լիցի» (Յովհ. Ի. 28). ասին իրի Ս. անդրանիկ Եկեղեցին Երուսաղեմայ յանդիման կացուցանէ զոչ առակաւ օրինակս ապաշխարութեան և խոստովանութեան մեղայ. «Եւ բազումք 'ի Հաւատացելոցն գային առ Պօղոս, և խոստովան լինէին, և պատմէին զգործս իւրեանց» (Գործ. ԺԹ. 18).

Առաքեալք Քրիստոսի 'ի բազում տեղիս թողթոց իւրեանց պատուէր տան Աշակերտաց իւրեանց, իսկ և Հովուաց և Երիցանց Եկեղեցւոյ շարունակել զգործն հաշտութեան Աստուծոյ ընդ մեզաւորաց՝ տալով նոցա այսու զիրաւունս կապելոյ և արձակելոյ դիւղմնանս խոստովանողացն։ Զայս միտս տուրքն Պօղոս յետ վկայելոյ՝ թէ Աստուածայնութեամբն հանդիսին 'ի նոսա շնորհք, «Մի անփոյթ առնէր» ասելով, «զշնորհացդ՝ որ 'ի քեզ են, որ տուաւ քեզ մարգարէութեամբ 'ի ձեռնադրութենէ երիցութեան» (Ա. Տիմ. Դ. 14), խօսի և զպաշտամանէ հաշտութեանն 'ի ձեռն նոցա. «Այլ ամենայն ինչ յԱստուծոյ՝ որ հաշտեցոյցն զմեզ ընդ իւր 'ի ձեռն Քրիստոսի, ևետ մեզ զպաշտօնն հաշտութեան, զի քանզի Աստուած էր՝ Քրիստոսիս զաշխարհս հաշտեցուցանել ընդ իւր, և չհամարել նոցա զմեղս իւրեանց, և եդ 'ի մեզ զբանն հաշտութեան։ Այդ վասն Քրիստոսի պատգամաւորիմք՝ որպէս և Աստուծոյ բարեխօսութեամբ մեզ։ Աղաչեմք վասն Քրիստոսի՝ հաշտեցարուք ընդ Աստուծոյ» (Բ. Կորնթ. Ե. 1—20)։ Որպէս տուրքն Յակոբ յայտնագոյն ևս վարդապետէ. «Եթէ հիւանդանայցէ 'ի ձէնջ՝ կոչեսցէ զԵրիցունս Եկեղեցւոյն, և աղաչեսցեն 'ի վերայ նոցա աղօթս... և աղօթքն Հաւատոյ՝ փրկեսցեն զշխտեալն... և եթէ մեղս ինչ իցէ գործեալ՝ թողցին նմա» (Յ. 14—16)։

Ա. 'ի արդիւնաւոր և սուրբ վերկաւոր լինել Խորհրդոյ Ապաշխարութեան կամ թէ խոստովանութեան՝ պահանջին պայմանք ինչ, յորոց գլխաւորքն են՝ 1. զի խոստովանողն յետ միանգամ զարձին և լուացման արտասուաւք և արեամբ Փրկչին ըստ սիրտ իւր 'ի խղճէ չարեաց՝ դիպէ հաստատութեամբ 'ի մտի՝ մի և յաժարութեամբ և կամաւ դառնալ յատաջին գործս իւր ապաշտանս. այսինքն որ չնայցին յառաջագոյն՝ մի և չնայցէ այնուհետեւ. որ առէր զեղբայր իւր՝ սիրեսցէ զնա. որ գողանայրքն (1)՝ դադարեսցէ 'ի գողութենէն. որ սրբենայրն՝ յետ կայ-

(1) «Տեսանեմք ոչ միայն գողութիւն, այլ և առութիւն վասն գողութեանն». ՀՀ

ցէ 'ի ապատ. իսկ որք որոկոսքէ ունակարար յետ մեզանշելոյ և ապաշխարելոյ' զարձեալ շաղախին կամաս 'ի մեզն յառաջինս, նման են ըստ Աստուածային պատգամին' խոզիս, որ յետ լուացմանն ախտրժին թաւալիլ անցրէն 'ի տղմի, և շանց' որ յետ փսխելոյն' միւսանգամ զառնան 'ի փսխածն իւրեանց. այսպիսեաց սակս ճշմարտիւ խօսելով' ոչ միայն անօգուտ են ապաշխարութիւն և խոստովանութիւն, այլ և առիթ մեծի դատաստանի' իբրեւ անարգողաց և թշնամանողաց զմեծափառութիւն Աստուածային։ Զի և Փրկիչն յարձակելն զկինն պոռնիկ 'ի մեզանէ մասնակցութենէ' ասաւ իւրեաց. «Երթ, այլ մի՛ ևս մեզանչէր. ապանդէս և 'ի թշնամեն զերեսունեւութ ամեայ զհիւանդն' հրամայեաց. «Ահաւասիկ ողջացար, մի՛ ևս մեզանչեր, զի մի՛ չար ևս ինչ լինիցի քեզ» (Յովհ. Ե. 14)։ Զ. Զի խոստովանողն պարտաւորի յանձն առնուլ զմեծար կամ զպատշաճ հատուցումն' զոր կարգէ խոստովանահայրն ըստ շափու և ըստ տեսակի յանցանաց իւրոց, որպէս և Ս. Գիրք ուսուցանեն. «Անձն որ եթէ մեղիցէ, և արհամարհելով արհամարհեաց զպատուիրանս Տեառն, և ստեսցէ ընկերի իւրում' եթէ՝ յաւանդի, եթէ՝ 'ի զոլորութեան, և եթէ՝ 'ի յանիշտակութեան, և եթէ գնասեսցէ ինչ ընկերի իւրում, և եթէ ելցիս կորուստ ինչ, և ժխտիցէ 'ի վերայ նորա, և երդնուցու սուտ վասն միոյ ուրուք յամենայնի' զոր և առնիցէ մարդ առ 'ի մեզանչելոյ նորա, տուժեսցի զգլուխն, և զինքեարդ մասն յաւելցէ 'ի նոյն. և ոչ իցէ' հատուցցէ նմա յաւուր յորում յանդիմանեսցի» (Ղեւտ. Զ. 1—7։ Թուոց. Ե. 6. 7)։ Այսպէս ահա և մարգարէն Զաքէոս մինչև ոչ յանձն էառ ասելով, «Տէ՛ր' ահա զկէսն ընչից իմոց տայ աղքատաց. և եթէ զոր զրկեցի' հատուցից չորեքկին» (Ղուկ. ԺԹ. 8), ոչ լուաւ զնոսն թողութիւնն 'ի Փրկչէն. «Այսօր եղեւ փրկութիւն տանս այսմիկ»։ Խոստովանութիւնն կարեւոր է ամենեցուն, և կրկնելի ըստ հարկին։ Ենթակայ են նման ամե-

---

լոկ բանիս, այլ և մեծամեծ երդմանց ուրացութիւն, որոյ մեղայ չիր թողութիւն։ Զի և ոչ զգԶուն և խոստովանութիւնն առ այն' յորմէ զոգացան. զի թողութեան իշխանութիւն զոգոյն յոգագս զոգացելոյ իրին' որ տէրն է զոգացեալ զոգին, ոչի, և ոչ ասար որ խոստովանահայրն։ Վասարոյ զի ոչ խոստովանի նմա, և ոչ հատուցանէ' զոր զոգաւ ան 'ի նմանէ և զրկեաց, ոչ ասեմ չորեքկին ըստ մարգարէին Զաքէի, այլ և ոչ' զոր էառն, ոչ քնզուի թողութիւն յաւելանան»։ Ընդհանրական. Երես. 29։

նայն Հաւատոյն։ իսկ Պաշտօնեայ՝ ուսումնական և սաղ-
մինք (1) Քահանայք և Քահանայապետք։

## 2. Միկրոսիմ.

Միկրոսիմն է երեւելի խորհուրդ Քրիստոնէական Եկեղեցւոյ սահմանադրեալ 'ի Յիսուսէ Քրիստոսէ, յորում միրոնէի անձրն Հաւատոյն իւրոյն երիցս ընկղմեալ 'ի Ջուր սուրբն՝ մերկրոյն 'ի մեղն Քրիստոսի, թաղի ընդ նմա 'ի գերեզմանի՝ մեռանելով մեղայ, և յառնել անաւր նորոգեալ և հագեալ կենաց զգեցեալ զՔրիստոս. «Որ մկրտեցաք 'ի Քրիստոս՝ 'ի մահ անդր նորա մկրտեցաք, թաղեցաք ընդ նմա մկրտութեամբն 'ի մահ» (Հռոմ. Զ. 3—4). «Այրեցայք զմեզ 'ի ձեռն սուրբն մերանգամ ծննդեան և նորոգութեան Հոգւոյն սրբոյ» (Տիտ. Գ. 5—6). «Որ մրանգամ 'ի Քրիստոս մկրտեցայք՝ զՔրիստոս զգեցեալ էք» (Գաղ. Գ. 27). և մկրտելոքն յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ՝ մերժէ զայլ ամենայն կարծեցեալ սուտ աստուածս՝ եթէ յերկինս և եթէ յերկրի, և զաստուն զամենասուրբ Երրորդութիւնն՝ մեծին և ճշմարիտ Աստուած իւր, ստեղծող և նախախնամող ամենայնի, և զմեզն շնորհաւք սրբի նմին (2) և հարսն Քրիստոսի։

Խորհուրդ մկրտութեան հաստատեալ է բոլորովին յորդեանս անուանութեան աշխարհակեցոյց Խաչի և մահու Աստուածորդւոյն, ևս և յարդարութիւնն՝ զոր պատրաստեալ նա Հաւատացելոց իւրոց։ Զայս ասեն նորա և եթէ փրկելոց են՝ որք հաւատան և մկրտին յանուն Միածնի Որդւոյն, որպէս և ասէր Պետրոս առաքեալն. «Ապաշխարեցէք, և մկրտեսցի իւրաքանչիւր ոք 'ի ձէնջ յանուն Տեառն Յիսուսի Քրիստոսի 'ի թողութիւն մեղաց, և ընկալջիք զառեալս Հոգւոյն սրբոյ» (Գործ.

---

(1) «Յետ մկրտութեան թէպէտ լիցի մեզանչել դարձեալ, ծածկել խոստովանութեամբն առանձինն միոյ առն յոյժ առաքինւոյ. զի ոչ ամենայն Քահանայի պարտ է խոստովանիլ»։ Բարեկ. Ճառն. 'ի Մեկն. Մարկ. Ճառ. ԽԲ։

(2) «Իսկ ո՞ է հարան կամ ո՞ փեսայն, եթէ ոչ սոքա՝ զոր Աստուածն ասէ, թէ այսպէս ասէ Տէր. խաչեցայց գրեալ ինձ յարտաքոյ, և խաչեցայց գրեալ ինձ արտաքուստ և զիտութեամբ, և ծանիցեն՝ զի ես եմ Տէր Աստուած քո, և լիցես դու զԵռամանիս քո զփայտաշէնս և ասասցես, եթէ երբեմն դարձայց յայնմ քամ ասելի»։ Ագաթանգ. Երես. 319։

Բ. 38). զեան զի ընդհանուր ազգ մարդկան 'ի պատճառս յանցանաց մարդոյն առաջնոյ զոսանին ընդ անիծիւք և ընդ բարկութեամբ Աստուծոյ, և ամենայն ոք բան բանից արդոյն Գրքի «Յուսոյ անօրէնութեամբ և ծնանի 'ի մեղս» (Սաղմ. Ա. 7) բան Յոբայ «Լի բարկութեամբ» (ԺԴ. 1), թէպէտ և մեռոյ աւուր իսկն կենաց նորա. և բան արդոյն Պօղոսի՝ «Ազատեալ ամենեքին մեռանին. զի որպէս 'ի միոջէ մարդոյ մեղք յաշխարհս մտին, և 'ի մեղաց անտի մահ, և այնպէս յամենայն մարդիկ տարածեցաւ մահ, որով ամենեքին մեռան.... Թագաւորեաց յԱդամայ մահ, և 'ի վերայ չյանցուցելոցն՝ ըստ նմանութեան յանցաւածոցն Ադամայ... զի զտաղանդն 'ի միոջէ յանցաւածոցն անտի՝ 'ի դատապարտութիւն... ապա ուրեմն որպէս միոյն յանցանօք յամենայն մարդիկ դատապարտութիւն, նոյնպէս և միոյն արդարութեամբն յամենայն մարդիկ արդարութիւն» (Հռոմ. Ե. 15. 19)։ Եմին իւրի որ ոք հաւատայ և մկրտի յանուն Միածնին իւրոյ միմիայն արդարութեան՝ կեցցէ. իսկ որ ոչն հաւատայ և ոչ մկրտի՝ արդէն իսկ դատապարտեալ է։

Զիաւս Գրիգորոս նոխանշանակեաց զԽորհուրդ Մկրտութեանն, յորժամ ինքնին մկրտեցաւ 'ի Յորդանան (Մատթ. Գ. 13—15). և սահմանեաց, յորժամ ինքնին սկսաւ մկրտել զեկեղեցս 'ի Հաւատս (Յովհ. Գ. 22). և պատուիրեաց Աւետարանչաց իւրոց յետ յարութեան իւրոյ առնել զնոյն (Մատթ. ԻԸ. 19—20). զի Հաւատացեալքն ազատեալ նոցա յիշխանութենէ սատանայի, և արդարացեալ 'ի սկզբնական մեղացն՝ ծառայեսցեն Աստուծոյ իրրև որդիք շնորհաց (Գործ. ԻԲ. 16։ Հռոմ. Զ. 3. 4 և 11)՝ իրրև ժառանգակիցք Քրիստոսի, և ժառանգք հանդերձեալ փառաց արքայութեան երկնից. որում անհնարին է զոլ, մինչչև վերստին ծնեալ իցեմք 'ի Ջրոյ և 'ի Հոգւոյ (Յովհ. Գ. 3. 5 և 6), այսինքն 'ի բաց մերկացեալ մկրտութեամբ ըստ մարդն հին հանդերձ ապականեալ դործովք իւրովք, և զգեցեալ զնորն՝ որ ըստ Աստուծոյն հաստատեալն է արդարութեամբ և արքութեամբ, և պաշտեալ զՏէր Աստուած յաստի կեանս յԵկեղեցւոջ իւրում. որոյ չիք այլ գլուխ մարդոյ, բայց եթէ Մկրտութիւն Ջրոյ և Հոգւոյ։

Մկրտութիւնն Քրիստոնէական Եկեղեցւոյ բոլորովին տարբեր է 'ի Մկրտութենէ հնոյ ախտի և Յովհաննու. իրր զի նոցայն էր

լուսոյն Լրոյ և Մկրտութիւն ապաշխարութեան (1) (Մարկ. Ա. 4։ Յովհ. Գ. 3. 16), իսկ Քրիստոսական՝ արդարոյ Խորհուրդ, յորում մկրտելոյն մեռանիս անմիջոյ, և կենդանանայ Աստուծոյ. և լուսանալ Հաւատովք արեամբ Փրկչին՝ ծնանիս յաւազանէ՝ ունելով յիշխանութիւն զսերմն նոր, հոգեւոր և անապական կենաց։ Տարբեր է նաև 'ի Քրիստոսական հնոյ ս խոսի. քան զայսմ այն էր իսկ արտաքին նշանակ, որում զանազանէր Իսրայէլն յայլազգեացն, իսկ Մկրտութիւնն է վերին Խորհուրդ, յորում սերմանէ Հոգին սուրբ անձրևատեսակաբար 'ի հոգւոջ մկրտելոյն զսերմն անապական կենաց (2) միշտմնոյն իւրով, և ծածկէ զդպանն արդարութեան երկնից յաղագս սրտի նորս. ոչ անցուցանել և զոչ անցուցանել, որոգայթս և անպտուղ առնել զսերմն անապական կենաց, ապէս և զառանել և ոչ զառանել, կամ շահիլ և ոչ շահիլ զմարդուցեալ զանձն արդարութեան՝ յանձնէ իւրաքանչիւր Քրիստոնէի և զնոցա յաժառութեանց կարեւոր կայ։ Յայս ասեն որպէս միանգամ մեռաս և յարիս Քրիստոս, և մահ նոսա ոչ ևս տիրէ, հարկ է և զՄկրտութիւնն Քրիստոնէից միանգամ և եթէ կրաստել առանց երրիցք կրկնելոյ զոյն վերրստոյնն՝ բաց 'ի հերձուածոցն Արիոսի, Նեստորի և Հոգեմարտի և նմանեանց նոցին. որոց ոմանք զՈրդւոյն ուրանան զԱստուածութիւն, այլք՝ զՀոգւոյն. և յայս ասեն Մկրտութիւն նոցա ոչ զոյսով կատարեալ Մկրտութիւն յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրոյ, 'ի զոյլ ուրուք 'ի նոցանէ յաղագս ուղղափառութեան՝ հարկ է մերկրրանել. իսկ զոյսս ոչ երրիցք (3)։

Առանձնապէս Մկրտութեան են ամենայն Եկեղեցիք՝ եթէ Եպիսկոպոսական և եթէ Քահանայք. իսկ ենթակայ՝ ամենայն որ ուս հաստատեալ, որ զոյ 'ի Հաւատս Քրիստոնէութեան՝ եթէ չափահաս և եթէ անչափահաս. առաջինք բան Հաւատոյ անձանց

---

(1) «Յովհաննու Մկրտութիւն առաւել քան զՄովսիսի ապաշխարութիւն միայն էր. իսկ Քրիստոսի ոչ ապաշխարութիւն, այլ մերի թողութիւն և Հոգւոյն շնորհաբերութիւն»։ Նիկոն։ Հնոյ. 'ի Մեկն. Մատթ. Երես. 52։

(2) 'Ի Մկրտութեանն ոչնչաւոր ապաւորի 'ի սիրտս մարդոյ սերմանի հոգեւոր կենաց, որպէս պարզի 'ի Հաւատքիդ ներքոյ հանգերձեալ կենաց թաքեալ. և երկոքին ևս մեռեալ են՝ մինչչև են կենդանացեալ, մին հրաշագործք Հաւատով մերոնցելոյն, միւսն ոգեորիչ Ներմուծեալն հաւատն։

(3) Զարուցաբ մոլորին Յոյնք. զի յորմամբ յարի որ յԵկեղեցի նոցա 'ի մէջ կամ 'ի Պապականաց՝ վերստին մկրտեն զայնպիսին, ուստի առնէին երրիցս հերձեալ Ունիթորականք։

իրեանց, յորմէրն ըստ Հաւատոյ ծնողաց իրեանց և կնքուհարց։ որպէս և Առաքեալքն առնէին՝ մկրտելով անխտիր զիսկուհաս և զմանկունս (Գործ. ԺԶ. 15։ Ա. Կորնթ. Ա. 16)։ Եւ թէ ոչ բնական ջուր՝ 'ի տեղին կամ յԵկեղեցւոջ կամ արտաքոյ այնորիկ 'ի գեաս՝ (որպէս ասէր Ս. Լուսաւորիչ Հայրն մեր)։ կերպն է երիցս թաղել 'ի ջուր՝ կոչելով զանուանս երիցս անձանց ամենասուրբ Երրորդութեան։

## 3. Գրոչմ.

Խորհուրդ Գրոչմին մասնակցաբարեալ անմիջապէս զկնքի Մկրտութեան՝ է իբրև շարունակութիւն և կատարումն այնր խորհրդոյ։ Որպէս 'ի Մկրտութեան Փրկչին 'ի Յորդանան՝ Հոգին Սուրբ 'ի կերպարանս աղաւնւոյ իջեալ 'ի վերայ՝ վկայեաց Աստուածութեան նորա, նոյնպէս և 'ի մկրտիլ իւրաքանչիւր Հաւատացելոյ իջեալ անբաժանապէս 'ի վերայ առաքելոցն (¹)՝ հաստատեալ կնքէ զՀաւատս մկրտելոյն 'ի Յիսուս Քրիստոս. ըստ որում «Որ չէ որ կարէ ասել Տէր զՅիսուս, եթէ ոչ Հոգւովն սրբով» (Ա. Կորնթ. ԺԲ. 3)։ ուրեմն արտաքոյ Գրոչմին նշանակէ զօծութիւն շնորհաց Հոգւոյն սրբոյ, զոր ընդունին ապրիւք՝ մկրտեալքն 'ի ներքին մարդն իւրեանց՝ յօծանելն Պաշտաւնէին Եկեղեցւոյ խորհրդական իւղովն զնախատն և զայլ երևելի անդամս մարմնոյ նոցա։

Խորհուրդ Գրոչմին սկսաւ յԵկեղեցւոջ, յորժամ Փրկիչն ինքնին Հիմնադիրն Եկեղեցւոյ կնքեցաւ յԱստուծոյ՝ Աստուած (Յովհ. Զ. 27)։ և 'ի մկրտիլն՝ էջ 'ի վերայ նորա Ս. Հոգին (Լուկ. Գ. 22)։ և սահմանեցաւ՝ յորժամ Աշակերտք ըստ խոստման նորա ընկալան 'ի վերնատունն զօծումն շնորհաց Հոգւոյն սրբոյ (Գործ. Բ. 4)։ և զնոյնն ձեռնադրութեամբ մատաքարեալքն Հաւատացելոց (Գործ. Բ. 17—18. ԺԹ. 6)։ 'ի գիտութիւն և յուսումն Հաւատացելոյն Աւետարանի (Հռոմ. ԺԵ. 19։ Երր. Բ. 14)։ 'ի շինուած Եկեղեցւոյն Քրիստոսի (Ա. Կորնթ. ԺԲ. 7)։ 'ի նորոգութիւն մկրտելոյն ըստ Հոգւոյն (Հռոմ. Ի. 6)։ յոյժ եղբարութիւն Հաւատացելոց Աստուծոյ Հօր

---

(1) «Եւ որ 'ի նոցանէ (յԱռաքելոց) և յետ նոցին Հաւատացեալք՝ թէպէտ ոչ ունէին զայսպիսի, այլ անբաժանապէս ըստ Հաւատոյ 'ի նոյն նմանութիւն մկրտին 'ի հար և 'ի Հոգին»։ Ներս. Շնորհ. 'ի Մեկն. Մատթ. Երես. 61։

(Հռոմ. Բ. 15), յառաջ առնելով ժառանգութիւնն փրկութիւն (Եբրայ. Ա. 19—14), և առ 'ի սրտերուդիս նոցա քնդդէմ ցանկութիւնս մարմնոյ (Գաղ. Դ. 16)։

Պարտականս Քրիստոսի գրչին են Քահանայք և Քահանայապետք. ընդունակ՝ ամենայն Հաւատացեալք. նիւթն է իւրն սրբարարութեամբ՝ որում խաչեալ ծառանն զրիստոս, զնակատ և զայլ բոլոր զարդարանս մարմնոյն. և կերպարանն՝ ազգութիւն ուշմանեալ Յիսուսի։ Զմիանգամ գրչին անհնարին է միւսանգամ գրչիլ՝ բայց յԱՄ.զանգաւորացն, որոց ուրանան զմի կամ զմիւսն յանձանց ամենասուրբ Երրորդութեան, յորմէ զան 'ի Հաւատս Կաթուղիկէ Եկեղեցոյ Քրիստոսի։

## 4. Հաղորդութիւն.

Հաղորդութիւնն է Քրիստոսի Տիրանական ընթրիքաց, յորում Քրիստոսնեայք ընդ զգայի (1) արարածոցն հային ճաշակեն Հաւատովք զմարմին Քրիստոսի, և ընդ զգայի արարածոցն զին՝ բանին՝ բանին Հաւատովք զարիւնն Քրիստոսի 'ի թողութիւն մեղաց՝ նորոգութեամբ հոգւոյ (իբրեւանց (Ա. Կորնթ. Ե. 7—8) 'ի զարդարացումն անձանց 'ի բարիս, հաղեալք հաղորդութեամբն ընդ Քրիստոսի Փրկչի իբրեւանց, և 'ի յոյս փառաւոր և անապական կենաց յարութեան՝ 'ի կատարածի աշխարհիս (Յովհ. Զ. 51—59)։

---

(1) «Տեսանի հայ և դիպի, և քանանի մարմին և արիւն Որդւոյն Աստուծոյ»։ Խոսրով. 'ի Մեկն. Քահանայապետի։

— «Ելանանիս հային առանց լինի ընդ մարմնոյ, և նշանակաւ դիպեալ առանց լինի ընդ արիւնն»։ Ոսկեր. 'ի Ճառս. Դ. Խորհրդ. Հատոր. 3։

— «Եւ որպէս 'ի մեռեալ մարմնին բաժանեալ հոգին՝ յկուրիրն մարմնոյն ոչ լինի նիւթական առանձնութիւն, այլ միայն զի նիւթն նոցա զարանայ և ներդործէ որպէս կենդանի, քան այսմ և 'ի սա միայնակ Հոգին Աստուծոյ և արարեալ մարմին Քրիստոսի՝ նիւթոյս ոչինչ լինի զանձնութիւն կամ առանձնութիւն, այլ միայն զի իմանալի զարութիւն ընկալաւ, և 'ի հաճախագոյն զիրթ կատարել ներդործութիւն»։ (Անդ. Երես. 108)։ «Խորհրդաքանանակն լինի սա մարմին և արիւն Քրիստոսի, և ոչ երևելագոյն. Հաւատոն այսպէս առանի և ոչ մարմնոյն»։

— «Ինքնակ որինիկ (Հոգին) և կենդանարարանիկ զարդն հոգւոյ Քրիստոսի իւրոյ, և առնէ զամ՝ մարմին նորա և արիւն՝ ոչ հանարարեալ, այլ հանարարեալ»։ Ներս. Լամբ. 'ի Մեկն. Քահանայապետի. Երես. 83։

— «Ուստեղի զգայի նշանակաց զիրանալի խորհրդոց միոյ մարմնանալոյն իմաստանանալոյ»։ Անդ. Երես 95։

Խորհուրդ Հաղորդութեան գաղափարքդա. յԱստուծոյ նախ՝ Զատիկան գառամին իբրեւ օրինակաւ յԽորոյելեան Եկեղեցւոջ (Եմից. ԺԲ. 21. 28), և ճշմարտեալ հաստատեցաւ 'ի Քրիստոնէական ուսուցութեան, յորմէ՝ ինքնին Փրկիչն նախ քան զմեծագոյն զոհաղարձութիւն ամենասուրբ անձին իւրոյ 'ի խաչին՝ յերեկոյի մատնութեան և շարշարանաց իւրոց առ 'ի ձեռս իւր զհաց և զգինի, և սրբեալ կատարեաց զնաւա 'ի մարմին իւր և յարիւն. և բաշխեալ Աշակերտաց իւրոց՝ պատուիրեաց նոցա յիշատակել նորոր զրաւշարար մահ իւր և զանհուն զսէր՝ մինչեւ ցկատարած յաւիտենից (Մատթ. ԻՁ. 26. 27; Գ.ուկ. ԻԲ. 19; Ա. Կորնթ. ԺԱ. 23. 24. 26);

Նպատակ այսր մեծի Խորհրդոյ է միաւորիլ Հաւատացելոց ընդ Աստուծոյ, որ է վերջնական Քրիստոնէական կատարելութեան. թէպէտ և անատարակոյս է, թէ ընդ Քրիստոսի մարմնի և հարկ իսկ է կցորդիլ առաւելապէս հոգւով ըստ գրեցեալին, «Եւ որ մերձենայ 'ի Տէր՝ մի հոգի են» (Ա. Կորնթ. Զ. 11). սակայն մարդս ո՛չ է լոկ հոգեւոր էակ, այլ հոգեւոր և մարմնաւոր միանգամայն. և ինքն Աստուածորդին ընկալաւ 'ի բնութենէ մերմէ՝ ո՛չ հոգի և եթէ, այլ և զմարմին, փոխանակ յաղագս կատարեալ և ամբողջական միաւորութեան ընդ նմա՝ կարեւոր է անշուշտ հաղորդիլ ընդ Քրիստոսի ո՛չ միայն հոգւով, այլ և մարմնով։ Զիա՞րդ այսպէս լինիցի։ Ընդ մեզ միաւորեցաւ Տէրն մարմնով, զի ընկալաւ, մարթի է ասել, յամենեցուն 'ի մէնջ յորմէանէ ամենաբնեալ Էութիւն՝ զմարմին մարդկային. մեք ևս միաւորիմք մարմնով ընդ նմա, յորմէ՝ ընդունիմք հաղորդութեամբ 'ի նմանէ զմարմին իւր։ Եւ զի ըստ մարդկային բնութեան Աստուածորդւոյն միաւորեալ է ինքնին Աստուածութիւնն ամենայն կատարելութեամբք հանդերձ. յայս ասեմ յորմէ՝ հաշակիցս մարմնոյ միաւորիմք ընդ մարմնոյ Քրիստոսի՝ հաղորդիմք համանդամայն և Աստուածեղէն բնութեան նորա (1) ըստ Առաքելոյն. «Զի նորիմբք Աստուածեղէն բնութեան Հաւատացեալ լինիցիմք հաղորդակիցք» (Բ. Պետր. Ա. 4);

Խորհուրդն Պատարագի ո՛չ է լոկ յիշատակութիւն անհուն սիրոյ առ մեզ առաւելս՝ Փրկչին և խաչաշարչար մահու նորա, և ո՛չ

---

(1) "Հաղորդութիւն կոչէ, զի կցորդի նա մեզ և մեք նմա,, Խոսրով. 'ի Մեկ. Պատարագի։

լոկ սեղան միտրանոսական սիրոյ 'ի Քրիստոս Հաստատելոյ , այլ կարի փանմաղոյն խորհուրդ մարդկային փրկութեան ազգանոյր մանաւանդ Քրիստոսի . և արդեսաւ հայոն և դիմին ոչ են լոկ նշանակք կամ օրինակք մարմնոյ և արեան նորա , այլ հաստատեալ հաղորդութիւն բուն կուսածին մարմնոյ և արեան Փրկչին , յորս՝ այսինքն 'ի բանականացարդեալ հայն և 'ի դիմին՝ ներկայ է հոգեւորապէս Քրիստոս , որ և բաշխի ճշմարիտ Հաստատեալ մերձեցելոցն ։

Այս սրբանուէր բնութեանբութիւն խորհրդական մարմնոյ և արեան Քրիստոսի ոչ ոք են նոքա՝ զորս մեր զիրք , անկեալք զարդ և անարատութեամբ խոստովանութիւն յանդգնաց ամենայնի , ընդելոյ իւրարանչիւր ուսեալ և սրբելոյ դիմիցն իւր յամենայն շարեաց ։ Երիցարդ՝ կենդանեաց և սիրարարարդ Հաստատ , և յորդեանեանցն միտեալ սա 'ի ընդունիլ և բնակեցուցանել զՔրիստոս իւր 'ի հոգւոջ իւրում ։ Երկրորդ՝ նուիրել բոլորովին զհոգի իւր և զմարմին 'ի սէրն Աստուծոյ ։ Զորրորդ՝ ոչ ոք են նոքա մեղաւոր զարդարութիւնն բուն մարմնոյ , այսինքն մաքրել զանձն յաղագս , և անարատութիւն յամենայն մարմնաւոր ուսելոյ և բամբելոյ՝ բանկրանալ յերկնիցէ ։ Հինգերորդ՝ բուն արդարութեան ազգանութիւն , ազօթիր և հանգամն նոքա բուն զՀաղորդութիւնն և զմին ։ Վեցերորդ՝ որչափ հնար է , բարի է յանախակի Հաղորդութիւնն , կամ գոնէ 'ի տարեկան հանգիստ , եւս և 'ի գիտել ժամու հիւանդութեան , յերկար ճանապարհորդութեան , եւայլն ։ Եօթներորդ՝ վերջապէս զայս մերձենալն 'ի բաժակ Ս . Հաղորդութեան ստանոյ արժանաւոր զարդարութիւն , այսինքն շնչ եւս բոլորովին 'ի բաց սրբեալ 'ի զարդից իւրեանց զիտաղնտրեալս անարիեան , և ճշմարիտ ապաշխարութիւնամբ բուն եալ զոյգուսին՝ փոխանակ գանձանց զհոգեւոր շահ 'ի մանանաւորութենէ Ջէրուսալէմ բնութեանցն , ժառանգելոն զյաւիտեան զարդարութիւն հոգւոյ և մարմնոյ իւրեանց , փոխանակ զի ոչ խորտակ՝ անարդեցին զմարմին և զարիւն Տեառն (Ս . Կրթութ . ԺԱ . 27 . 30) ։

Պարտականաց խորհրդոյս են Քահանայք և Քահանայապետք ։ Ընդունեալ՝ ամենայն արժանաւոր Հաստատելոյ , եթէ չարիս և եթէ երանեալ ։ Եթէ՝ անկարգ դիմի (1) և անխորհուրդ

(1) ։ Գրեալ է 'ի Գիրս փառաց մեր և այս ինչ , թէ զիմեան փրկչի առանց Հրոյ խառնման մատուցանեն զարդարագն , . . . 'ի Լուսաւորչէն մերմէ 'ի արքայն Գրիգ-

հայ (1). (որք այլազգ առնեն՝ մոգորին) ։ Եկեղեցական՝ են բանքս. «Աչէր կերայք, և արբէք 'ի ամանէ» ։ Երկինքի է՝ որչափ կարեւոր զատիցի, և է կարեւոր վասն ամենայն Գրիգոռենէից ։

## 5. Զեռնադրութիւն.

Զեռնադրութիւն է Աստուծոյ սահմանեալ արքայական խորհուրդ, յորում՝ զարժանաւորս որ բան հմտութեանն 'ի տարբ Գիրքս, բան նախանձաւորութեանն 'ի Հաւատս և բան անարատութեանն 'ի վարս՝ միաբանական քնարութեամբ հաստիս կացուցանէ Եպիսկոպոսն ազօթիւք և ձեռնադրութեամբ ձեռին 'ի գործ քահանայութեան Եկեղեցւոյ՝ ասելովք 'ի նոս զիսարարութիւն առ 'ի հանել զհնոս Տեառն, առ 'ի քարոզել նոցա զբանն կենաց, և առ 'ի կատարել զիսորհուրդս և զհոգեւոր պիտոյս նոցա 'ի վարս Աստուծոյ, և յանուն և 'ի հաստատութիւն Եկեղեցւոյ նոցա ։

Գերագոյն հեղինակ և միակ ապրիր Եկեղեցական քահանայութեանն՝ է Յիսուսն ամենատուր Երրորդութիւնն (Ամբ. ԺԷ. 1 ։ Մատթ. ԻԸ. 19 ։ Գործ. ՃԳ. 2. 4 ։ Եփես. Գ. 11. 12 ։ Բ. Կորնթ. Ճ. 8. ՃԳ. 10 ։ Եբր. Է. 4). որ բան յաստուծոյն իմաստութեանն իւրոյ և անեղծական բարութեանն ընտրել յորմէնէ, և լցեալ հոգեւորական պարգեւաք

---

դարձ ունիցեն զայս առանդութիւն. որոկա ընկալաւ նոս 'ի նախնեաց սրբոց Հաւրց, որ յառաջ քան զնա ,, ։ Ներս. Շնորհ. 'ի Թուղթն առ Ալէքս ։

" Տէրն յորժամ առ 'ի ձեռս զբաժակն և ասաց՝ " Այս է արիւն իմ նորոյ ուխտի ,, , յաւել թէ " Ոչ արբից 'ի բերոյ որթոյ. մինչև արբիցէ զայս ընդ ձեզ նոր յարքայութեան Հաւր իմոյ ,, ։

Եւ երանելին Յովհան Ոսկերերան 'ի ոչն բանի մեկնութեանն՝ որ բան Աւետարանին Մատթէի ասէ, թէ " Այսու զմարս չարս հերձուածն արմատապէս խլէ. զի են ոմանք՝ որ 'ի Ս. Յորդանանէ ջուր 'ի կիր արկանեն ։ " 'Ի բերոյ որթոյ ,, ասէ. և արիւն՝ զինի և ոչ ջուր ձեռանի ,, ։ Նոյնն. 'ի Թուղթն առ Մանուէլ Կոյսոր ։

(2) " Բաղարջ հաց և անապական գինեաւ աւանդեցաւ մեզ ('ի Գրիգորոսէ) Ս. Յորդանանէ ,, - Նշխարքաց 'ի հաւն ողորմութեան ։

" Գաւառ Հելիոպոլիս (Գրիգորոս) յորժամ Եկեղ զգաւառ օրինակին և զբաղարջն ընդ նոսին, զնոս կոստանդեցոյ զնին՝ ակիրն ասրար նորոյ ուխտին՝ բան Աւետարանական զգաստութեանն ։ Եւ առեալ հաց 'ի անդանոյ անոտի (յորում է, թէ բարձրջ. բանցի առաջին օր էր Բաղարջակերացն)՝ ասաց. " Այս է իմ մարմին ,, . Ներս. Շնորհ. 'ի Թուղթն առ Մանուէլ կոյսոր ։ Տես զոյգանձ նաև յերեսն. 94. 123. 124. 125. 126 ։

կայացանէ պաշտօնական պարտութիւնն իւրոց յերկրի սատ՝ բա-
բողել և հաստատել զնշանագրութիւնս Հաւատոյ (Մարկ. ԺԶ.
15։ Ա. Կորնթ. Ա. 17։ Մատթ. ԻԸ. 19։ Հռոմ. Ա. 1։
Ա. Թես. Բ. Դ) 'ի միջի ամենայն տարածեալ, հաստատել զհոգս
իւր և չինել խնամութիւնսն զԵկեղեցի իւր (Երեմ. Գ. 15։
Յովհ. ԻԱ. 15. 17։ Գործ. Ի. 28։ Ա. Պետր. Ե. 2։ Բ.
Կորն. ԺԲ. 19։ Եփես. Դ. 12), զոր և իրրև անտեսեալ խորհրդոյն
Աստուծոյ՝ զարտին պաշտպան լինել Հաւատոյ (Գիւտ.
Ա. 7)՝ ապատուելով զայն 'ի սիրոս ժողովրդեան (Գալ. Ի-
32։ Գործ. ԺԴ. 22), և յանդիմանելով զանկարգարարս (Տիտ.
Ա. 9). և նոսիրելով զորոշեալսն զանձինս 'ի հնազանդութիւն յա-
ռաջադրութեան Աստուծոյ՝ բարի օրինակաւ անձանց, հանապա-
զորդեան արթնութեամբ և անոյշութեամբ կատարմամբ արդանուէր
պաշտամանն՝ զարտին լինել զասնաւ փրկութեան հաստատելոյ
(Եբր. ԺԴ. 17։ Տիտ. Դ. Ե։ Փիլիպպ. Գ. 17։ Բ. Թես.
Գ. 9։ Ա. Կորնթ. Ժ. 33։ Ա. Տիմ. Դ. 12։ Ա. Պետր.
Ե. 3)։

Պայմանք՝ զոր զանազանեն հարազատ Պաշտօնեայքն Ե-
կեղեցւոյ յանձնարարութիւն, են՝ 1. Կոչումն Աստուածային. զոր
զարդն մարդն ջաղթեալ յԱստուածային հոգւոյ, և նորոգեալ 'ի
մեռելոյն զարծոյ իրրև նոր արարած՝ եղայ սիրելի Աստուծոյ,
ուրանայ զաշխարհ, և զորս յաշխարհն են՝ թողու զնայր, զմայր,
զկին և զորդիս, զքաղաս և զվայրս, և նուիրէ զարդն մեռոյ զան-
ձն իւր 'ի ստաստարութիւն Աստուծոյ՝ խոնարհութեամբ և հնա-
զանդութեամբ՝ մոլորեալ զոր ըստ օրէն ածել զնորհաւ Հոգւոյն,
և ստանալու մարդութեամբ զարդն և անարատութեամբ մարդուց
(Բ. Տիմ. Բ. 1։ Տիտ. Ա. 7)։ 2. Գիտութիւն կատարեալ
կամ զանազանութիւն բաստական Ս. Գրոց, և խորհրդածութիւն
'ի տուէ և 'ի գիշերի 'ի պատգամս և յօրէնս Յաստուածանշանն.
զայսր պայմանի զկարեւորութիւն 'ի միտ առնու զոր բազ, եթէ
ընթերցի զանազանի ասասնայիս Աստուծոյ արդակեալ առ ազգս
Եկեղեցականս. «Զի զոր զգիտութիւն մերժեցեր, մերժեցից և ես
զքեզ, զի մի քահանայապետս ինձ՝ ասէ Աստուած» (Ովս.
Դ. 6։ Ա. Տիմ. Դ. 6. 13. 16)։ 3. Հոգի Աստուածական,
զոր զի զոյգ կարգին Պաշտօնեայքս հանապազաց առանց ձանձ-
բանալոյ՝ կամաւ և երկայնամտութեամբ ստանալ ամենայն ու-
ժեր և ամենայն ուժեր զգիտութիւն Հաւատոյն Քրիստոսի (Բ.

Կորնթ. Զ. 4։ Ա. Տիմ. Գ. 2։ Բ. Տիմ. Բ. 24), հանել սրբութեամբ 'ի վերայ հաստն (Եբր. ԺԳ. 17)' խնդրելով բան ամենայնի զոհաւոր նորա 'ի հանդէս Աստուածպաշտութեան Աւետարանական առաքելութեանց, և փրկութեան հոգւոյ Հաւատացելոյ (Ա. Կորն. Ա. 4. Ժ. 33)։ 4. Բարի վկայութիւն բուխանդակ ճշիղեցեալն և միակամ քնարութիւն, որոյ կալոյ է ինքն հոգին։ 5. Զգուշաւոր հրապարակական հայցաքննութիւն Հաւատոյ նորոյ և գիտութեան, որոմեն մարդոյ նորոյ և բարոյ։ 6. Էպիսկոպոսական ձեռնադրութիւն։ 8. Կատարելութիւնք բան մարմնոյ, զի մի քնարկացն թերի ինչ իցէ 'ի հասանելին կատարելութենէն և 'ի բնական կարգութեանց. այսինքն՝ զի մի լիցի ուսիմ, կամաց, լուծուս, սպասաւորն, միակամն, ընչաւոր, ակամնջաւոր, կաղ, կամ՝ որ և իցէ անդամոցք մարմնոյն պակասաւոր (1), եւայլն։

Ընդհանրական ապաստարանք ամենայնաւոր և յայս ասեն անարժան Եկեղեցոյ Պաշտամունքն են՝ 1. Տգիտութիւն Ս. Գրոց (և ամենաբանութեան շնորհացն Գրքոյսոյ (Ոմն. Գ. 6։ Մատթ. ԻԲ. 29. ԻԳ։ Գործ. ԺԳ. 27)։ 2. Գործք առհասարակ հին և ապրիմանական մարդոյն, այսինքն՝ մարդասիրութիւն (Գալատ. Ա. 10։ Ա. Թես. Բ. 4), ագահութիւն և արծաթասիրութիւն (Գործ. Ի. 33։ Ա. Տիմ. Գ. 3. 8։ Ա. Պետր. Ե. 2։ Բ. Պետր. Բ. 3։ Միք. Գ. 11), խարդախութիւն և խաբերայութիւն (Յակոբ. Ժ. 12։ Երեմ. Զ. 14։ Եզեկ. ԾԶ. 10—12։ Տիտ. Ա. 10—11։ Բ. Կորնթ. Գ. 2), սրբեցութիւն և ուշադրութիւն (Գալատ. ԺԲ. 59—62։ Բ. Տիմ. Բ. Դ։ Ա. Տիմ. Գ. 3։ Տիտ. Ա. 7), զգաստութիւն ուշադրեալ միշտ ցանկութեամբ իշխելոյ ոգւոյ (Ա. Պետր. Ե. 3), անձնասարդութիւն (Բ. Կորնթ. Գ. 5), վարարութիւն (Ա. Տիմ. Գ. 3։ Տիտ. Ա. 7), ունկրիտութիւն

---

(1) «Այր ոք . . . որում իցէ արատ, մի մատիցէ մատուցանել զարատաւոր Աստուծոյ իւրոյ. այր կաղ, կամ կոյր, կամ կարճանդ, կամ ակամնջաւոր, կամ այր ձեռանիկ, կամ ոտանիկ, կամ սապատոզն, կամ շիլ, կամ պուղակն, կամ այր՝ յորում իցէ քոս կամ քաղցկեղ, կամ միրգի, ամենայն այր՝ յորում իցէ արատ 'ի զաւակէ Ահարոնի քահանայի, մի մերձեսցէ մատուցանել զոնս Աստուծոյ քում, զի արատ պոյ 'ի նմա. և զարատաւորսն Աստուծոյ մի մատիցէ մատուցանել, զի արատաւորքն Աստուծոյ Արարչութիւնք Արարչեանց են. . . 'ի վարագոյրն մի մերձեսցէ, և առ անզանն մի մատիցէ, զի արատաւոր է»։ Ղևտ. ԻԱ. 17—23։

սրտի (Ղեւ. ԻԶ. 41), սխալակրութիւն (ցղեկ. ԻԵ. 15), առելութիւն ընդ դէմ ընկերին. (Յոգ. Բ. 11. Ծնող. Զ. 5), անարկնութիւն (Սաղմ. ԻԸ. 3. Ճառ. 2), անդգամութիւն (Գաւակ. ԺԲ. 8), սուտ վարդապետութիւնք (Ա. Տիմ. Ա. 4. Զ. 20), խանդաղատել զ.ինեսպանն (Գոգ. Ա. 6. 7), և որք ունելով զարտաքին թեղութիւնս՝ թէպէտ և իցեն յԵկեղեցական պաշտամունս, այլ անիծեալ են որդին յԱստուծոյ և անկեալ 'ի նեղութեան նորա, և պահեալ մեզ նոցա դատապարտութիւն ասելոյն (Մարք. Գ. 6. 7; Գոգ. Ա. 8. 9; Բ. Պետ. Բ. 1 և 3; Երեմ. ԼԶ. 29—31; Յայտն. ԻԲ. 18—19);

Որպէս յԱրարչեանն Եկեղեցւոջ կարգեաց Աստուած յառաջագոյն զայլ և այլ ատենանս Պաշտանէից Տաճարին; խնամ ըզԳահանայապետս, զԳահանայս, զՎարդապետս, զՀոգիս և զՎարդապետս Օրինաց, և այլն (Ծնող. ԺԴ. 8; Ելից. ԺԲ. 22; Սաղմ. ՃԺ. 4; Եսայ. Լ. 20. ԿԳ. 11; Երեմ. Գ. 15. ԻԳ. 4), նոյնպէս և 'ի նորումն հաստատս կայուցանել զԱռաքելս (Գաւակ. Զ. 13), զԱւետարանիչս (Եփես. Դ. 11), զԵպիսկոպոսունս (Գործ. Ի. 28), զՀովիս (Եփես. Դ. 11), զՎարդապետս (Եփես. Դ. 11), զԵրիցունս. (Ա. Պետր. Բ. 1), զՍարկաւագունս, և այլն. որք յերկրորդ և 'ի չորրորդ դարս քան զարշման Յիսուսոյ յաղագս բարեկարգ կանոնաւորութեան կրօնական իրողութեանց, և մինչև կատարման Աստուածային պաշտամանց՝ ընկալան զնորանոր մականունս, որպիսի են Կաթուղիկոս, Հայրապետս (Պատրիարգ), Մեծապատիւս, Էրզրումոյ կամ Վեհապետս, Այր և Քոր Եպիսկոպոսս, Ծայրագոյն և Մանուոր Վարդապետս, Գահանայք և Աւագ—Գահանայք, Կրօնաւորք, Սարկաւագք, Սարկաւագք, Վանահարք, Կրօնաւորաւէրք և Հաւատաւոր Կանայք, Աւագ—Սարկաւագք և Կիսասարկաւագք, Զոհընկալք, Ընթերցողք, Երգեցողք, Գանձապետք, և այլն;

Պաշտանեայ Խորհրդոյս են Հայրապետք և Եպիսկոպոսք; Ընդունակք՝ արժանաւոր անձինք յարակոն անել; Կերպարանն է հակումն, ուրթք, օծումն Միւռոնաւ և Զենադրութիւն, որպէս և առանձին Մաշտոցագիրք;

## 6. Քահանութիւն.

Քահանութիւն՝ որ առ այլս յազգաց հանարի քաղաքական կամ քնկերական կոչ, 'ի ձեռն Քրիստոնէութեան արարեալ կարգեցաւ 'ի թիւս Թարգմանչաց Հաւատոյ, յորում միանայն և հարան ազգաս և միաբանարար հանութեամբ իրերաց, ևս և օրհնութեամբ և աղօթիւք Պաշտամանէից որոց Սեղանոյն բարեպաշտ յոգեալ 'ի մի և յաներաժանելի մարմին 'ի նշանակ հոգևոր միաբարութեան Քրիստոսի ընդ Եկեղեցւոյ՝ ուրանն կենալ 'ի միասին, ծնանիլ և աճեցանիլ յերկիրս Տեառն զրաւանքեան յանանի արարչութեան Աստուծոյ, ընդարձակել զմարդկային քնկերութիւնն բարեկիրթ և օգտակար անդամոց, և միմիայն և ազնուական լինել իրերաց 'ի ձարտարական բերմանս աշխարհի։

Թարգմանչն Քահանութեան նախաստաղամարտեցաւ, յորմէ յետ լինելութեան աշխարհի զառաջին կին ասէր Աստուծոյ առ առաջին հայր մարդկութեան (Ծնանդ. Բ. 24)՝ զուգեալ զնոսա 'ի մի մարմին. և հաստատեցաւ 'ի յայտնութեան Քրիստոսի՝ յորմէ բերանն Փրկիչն ասաց արարչին յԱստուծոյ. «Արա ուրեմն (այր և կին) ոչ են երկու, այլ՝ մի մարմին. արդ՝ զոր Աստուած զուգեաց, մարդ մի մեկնեսցէ» (Մատթ. ԺԹ. 6)։ Պայմանք միութեան Քահանութեան են՝ 1. Կատարեալ հաւատք՝ եթէ հարսին և եթէ փեսային, և երկուսանց ազատ հանութիւն։ 2. Սիրոյ միութիւն փիլիսոփայական կարգութեանց ասն և կնոջ՝ առ կատարեալ ամուսնական արարեալ և առ ծնողական միութիւն։ 3. Յայտնի և առաջի վկայից արձանութեամբ Եկեղեցւոյ հաստատեալ արարողութիւն Պսակի։ 4. Սիրելութիւն (Ծնանդ. Բ. 24։ Ս. Տիմ. Գ. 2. 12). ապանոյ որոյ միջոց անարատ հանարի Պսակն։ Այրն պարտական է՝ սիրել և պատուել զկին իւր բառ ամենայնի հաստատ անձին իւրում, կամ որպէս զանձն իւր (Ծնն. Բ. 23։ Մատթ. ԺԹ. 5։ Եփես. Ե. 25։ Կողոս. Գ. 15։ Ս. Պետր. Գ. 2). 2. Լուծեալ նմա և փարել զնա իրրև զիւր զմարմին, որպէս իշխէ և փարէ զայր իւր զմարմին իւր (Ծնանդ. Գ. 16։ Ս. Կորնթ. ԺԱ. 3։ Եփես. Ե. 23) 3. Մինչև ցմահ հաստատեալ՝ մեռանել նմա ասանոյ երրեք մարմարելոյ (բայց 'ի բանէ պոռնկութեան) (1)

(1) Պաշտօն (Եպիսկոպոսն) և զՀրամանեալ օրէնս 'ի Տեառնէ՝ որ յաղագս առն

պանիսատանի կամ զուգաւորութիւն ընդ այլոց ազգաց՝ անկանելով յախտս շնութեան, կարեկից լինել կարեկից նորա, մբռնիցեալ 'ի վիշտս, և խորհրդակցիլ յառանձին անուանութիւնս (Ծնն. Բ. 24. Լ.Ա. 4. 7։ Ա. Թագ. Ա. 8։ Մաղաք. Բ. 14—15։ Ա.ռակ. Ե. 19։ Մատթ. ԺԹ. 3—9)։ Ա.ռաջին և մեծագոյն պարտականութիւնն կանանց նկատմամբ առարս իրենց է՝ 1. Հնազանդեալ անսալ ամենայն օրինաւոր խորհրդոց նոցա և բանից, և կատարեալ հնազանդութեամբ ընդ ամենայն գործս նոցա (Ծնն. Գ. 16։ Եփես. Ե. 22. 24։ Ա. Պետր. Գ. 1. 4. 5)։ 2. Սիրել զնոսա անկեղծութեամբ, ակնածութեամբ բերել առ նոսա՝ որպէս մարմնին առ գլուխ իւր, և յինել նոցա ամենայն մասամբ հաստատիմ (Ա. Կորնթ. Լ. 3. 5. 10։ Եփես. Ե. 33։ Տիտ. Բ. 4)։ 3. Կենալ անբասիր 'ի նոցանէ միջնեա ցմահ՝ եթէ յաստուածութեան և եթէ 'ի հիւանդութեան, եթէ 'ի յաջողութեան և եթէ 'ի ձախորդութեան (Հռոմ. Լ. 2—3)։ 4. Զարդարել զանձինս ոչ եթէ ակամբք կամ կերպասեղինաք, այլ պարկեշտութեամբ, զգաստութեամբ, ժրութեամբ, խոհեմութեամբ, հեզութեամբ, և այլովք զարդովք բարեաց (Ա. Տիմ. Բ. 9. 10. Ե. 10։ Ա. Պետր. Գ. 3)։

Ըստ որում որպէս 'ի միոջ անդր ասացաւ՝ նպատակ Ա.մուսնութեանն է ածումն անդամոց այրոյ թութեան Ա.ստուծոյ, վասն որոյ և զգաստանալն համարեալ ծնողացն իրրև զարարչեւ երկնից՝ պարտականն են առաւել քան զմարմնաւոր ամուսնոյն հոգալ զկոգեւորսն. այսինքն է 1. 'Ի տարայութեան անդ պատմելով նոցա յամենայնի զգաստանալի և զմեծամեծ գործս Ա.ստուծոյ, և զարդար և զանարատ պատասխանս նորա՝ հրահանգել զնոսա միտով և երկիւղիւն Ա.ստուծոյ (Յովհ. Ա. 3։ Եղիս. Ժ. 2։ Սաղմ. ՀԸ. 4։ Ա. Մնաց. ԻԸ. 9)։ 2. Ընդ. ամենայն հաստատի տալս՝ ամենայնանալ և տարարել 'ի բանական հոգւոջ նոցա և ակկրտանս յայտնեալ ճշմարտութեանց Ա. Գրոց և ամենայն Աստուածպաշտութեան (Բ. Օրին. Գ. 9. ԺԱ. 19։ Եսայ.

---

և կնոջ անբասանելի զուգաւորութեան. զի բաց 'ի բանէ պոռնկութեան՝ և որ այլ ևս ևս 'ի կանանս Ա. Հարցն գրեալ պատուիրաց (Իսու անարժանելի փոխարարական տարար, անկարգ բաղանութիւնն ասն կամ կնոջ՝ ասելի բան զանձին ամ, կնամանարութիւնն, հիդիրական մեծութիւնքս ասն կամ կնոջ առ կատարեալ զուգաւորութիւն, հայրն), այլով խիստ մի արասցէ բանիս։ Ընդհանրական. Եբրա. 194։

ԼԸ. 19). 3. Զսրբացուցանել զնոսա ո՛չ իբրեւ զսովորական աբրանաց մեր, այլ իբրեւ զսրբոյն Աստուծոյ և զմասանդարիցն Քրիստոսի, և յայս սակս մեծաւ փութով անուցանել զնոսա վասն Աստուծոյ միայնոյ՝ և Յիսուսի Քրիստոսի Փրկչի մերում՝ իբրեւ զաւանդ ինչ ազնիւ 'ի նորա պաշտօն նոխակարգեալ (Աւետ. ԻԲ. 6։ Մատթ. ԺԹ. 13. 14։ Եփես. Զ. 4). 4. Սիրել զնոսա իբրեւ զԱստուածոյս, հոգալ զՀոգեւոր և զմարմնաւոր զգիտոյս նոցա առատապէս, և առանց զայրացուցանելոյ ինչ զնոսա խստութեամբ՝ խրատել և ուղղել երկչոտութեամբ և մեղմ պատժովք (Յոբ. ԼԲ. 15։ Սաղմ. ՃԳ. 13։ Աւետ. ԺԳ. 24։ Տիտ. Բ. 4։ Եփես. Զ. 4). 5. Աղօթել միշտ առ Աստուած վասն յառաջադիմութեան նոցա 'ի բարին, գովել զնոսա հանապազօր, և հայցել յԱստուծոյ առանց ձանձրանալոյ՝ զարգացուցանել զնոսա շնորհօք և իմաստութեամբ, երկիւղիւ և Աստուածպաշտութեամբ (Ծննդ. ԺԻ. 18. ԼԸ. 15։ Երգ. ԺԱ. 20). 6. Ոչ ամուսնացուցանել զնոսա 'ի տարբայութեան, և ո՛չ իսկ ընդ ծննդոյս ամբարշտաց և ընդ անհաւատից (Ծննդ. ԻԳ. 1—4. ԻԶ. 34. 35. ԻԸ. 1. 2)։

Զատաւոյին և զերկրորդ զՊատկաղրութիւնս կանոնական համարին Աստուածային Օրէնք, զերրորդն ներքին՝ Եկեղեցական Օրէնք (1), իսկ զչորրորդ և զաւելին իբրեւ անկանոն։ Պաշտօնեայ արարողք թեան Պատկի են Քահանայք և Քահանայապետք։ Ընդունելիք՝ ամենայն չափահաս և յարմարաւոր Հաւատացեալք։ Ներքսական՝ աղօթք, զորս ասէմանեալ է Եկեղեցին յայս սակս։ Եւ զովելի, եթէ կատարեսցի յառաւօտ միոյեւ ցկէս օրն՝ անաւաղութեամբ (2)։

## 7. Վերին Օրէնն կամ Եկեղեցութիւն հիւանդաց.

Վերջին Օրէնն կամ Եկեղեցութիւն հիւանդաց է խորհրդական

---

(1) "Զերրորդ ամուսնութեան հրաման՝ որով դիջայ առ ժամանակիս ծննդոց արքայութեան, հաւանեցուցանեմ կանոնական դրով ,,։ Ներս. Լամբ. 'ի Թղթին առ Լեան արքայ։

— "Առաջին (Ամուսնութիւն)՝ օրէնք են. երկրորդն՝ ներսումն և գիջումն. երրորդն՝ պարտականոն։ Որ ոք գայս թիւ անցանէ՝ խոզաչին է գլխոցին ,,։ Գրիգոր Աստուածաբան. Ճառ. ԼԷ։

(2) "Եւ արդ՝ որ այսպիսի ընտրութեամբ ըստ օրինաց Աստուծոյ լինիցի Պատկն՝

ձէս՝ յորում պաշտօնական Եկեղեցոյ աղօթիւք և խնդրուածովք յայս ամիս կարդացվիր 'ի Մաշտոցագիրս, և ընթերցուածովք պատշաճաւոր հատուածոց Ս. Գրոց և պէտք Աղօթամատենից՝ 'ի զղջումն հրաւիրել զհիւանդն 'ի խոստովանութիւն և 'ի հաղորդութիւն, և թողութիւն հայցեալ յԱստուծոյ ներելի յանցանաց նորա՝ հանդուցանել զիրաւիրեալ խիղճ նորա, և հաստատուն յուսադրութեամբ յամենարարեալն արդիւնս խաչի Փրկչին և ամբաւ ողորմութիւնս նորա՝ իբրև անապատելի թոչակաւ յուզարկուորէ զնա 'ի հանդիստն յաւիտենից։

Զհիւանդաց Այցելութեան սկիզբն ասաւ Յիսուս Քրիստոս, յորժամ երթեալն լուր բանիւ (Մատթ. Ը. 8. 13), երթեալն անձամբ կամ հանդերձիւ միայն հղելով (Մատթ. Ը. 8. ԺԳ. 35. 36), և երթեալն զձեռս 'ի վերայ դնելով հիւանդաց (Ղուկ. Դ. 41)՝ բժշկեաց զանէպէս ախտս 'ի մարդկանէ՝ գրաւական բարերարութեանց իւրոց զանելիս և եթ զնոցա առեալ զՀաւատս (Մատթ. Թ. 28. 29։ Մարկ. Ե. 34. Ժ. 52) և ըստ դարձ 'ի մեռելոց, յորոց իբր 'ի պատիժ դան երթեալն 'ի վերայ մարդկան հիւանդութիւնք (Բ. Մնաց. ԻԱ. 12—15։ Ա. Կորնթ. ԺԱ. 30), և սահմանեաց՝ յորժամ ետ Աստուծոյ իւրոց զիշխանութիւն թողուլ զմեղս և բժշկել զսխտս 'ի Հաւատացելոց (Մատթ. Ժ. 1. 8։ Մարկ. ԺԶ. 18—20)՝ երթեալն աղօթս միայն վասն հիւանդաց առնելով (Գործ. ԻԲ. 8—9), երթեալն ձեռս միայն 'ի վերայ հանդերձ աղօթիւք դնելով (Գործ. Թ. 12. 17. 18. ԻԲ. 8), և երթեալն օծանելով զնոսա իւղով (Մարկ. Զ. 13։ Յակ. Ե. 14)։ Այլ բան որում յոյժ խորհրդական արարութեան սիրոյ են յատկապէս և պատանդին Հաւատք և եթ զղջմամբ հանդերձ 'ի հիւանդաց, և հանդգնական աղօթիւք Եկեղեցոյ 'ի սրբանուէր Պաշտօնէիցն, և բան Սարգսի Շնորհալւոյ ('ի մեկն. Յակոբ. Ճառ. ԺԱ.) «Ոչ իւղն տայ զառողջութիւն հիւանդին, այլ անուն Տեառն». ամէն իրի և գործածութիւն իւղոյն խորհանեալ է Եկեղեցւոջ Հայոց 'ի վաղուց անտի յայցելութիւնս հիւանդաց. այլ վարիմբ բան Աստուածոյն ասիրութեան (Գործ. Թ. 12. 17. 18. ԻԲ. 8)՝ միայն աղօթիս, հանդերձ և պաշտամունս առնելով, և ձեռս հանդերձ Ս.

---

որպէս և գրեցաք, մի յայլում ժամու դիւ զայն Քահանայն, բայց յառաւաւոտ ուստի մինչև ցժամ ճաշոյ»։ Ընդհանրական. Երես. 58։

խաչիւ և Ս. Աստուածնա և մասամբ Սրբոց 'ի վերայ հիւանդաց դնելով։

Պաշտօնեայ խորհրդոյս են՝ Քահանայք և Քահանայապետք։ Ենթակայ ամենայն հաւատացեալ հիւանդք։ Կերպարան են՝ ազօթք 'ի ծխատան յայս ոգեաս կարդալ, ընթերցուածք թժշկութեան Աստուածայ և ձեռնադրութիւն ձեռաց։ Կրկնելի է՝ որչափ և խնդրիցի։

## ՑՕԳՈՒԱԾ ԻՆՆԵՐՈՐԴ.

Յետաբիւն վարդապետութենէն Հաւատոյ Եկեղեցւոյն Հայոց.

Եկեղեցին Հայոց զոլով մի յանդրանիկ զատերաց նախահաստատ Եկեղեցւոյն Երուսաղեմի՝ 'ի սկզբան անդ սիսեալ քարոզութեամբ Թադէոսի և Բարդուղիմէոսի սրբոց Առաքելոց յամի 39, և ապա բազմութիւն հաւատացեալ 'ի ձեռն սրբոյն Գրիգորի մեծի Լուսաւորչի յամի 301, ընդդրկեալ ունի և պահպանէ հաւատարմութեամբ զայն ամենայն վարդապետութիւնս զՀաւատոյ, զծխոյ, զկարգաց և զաւանդութեանց, զորս սաստէր մինչեւ ցկէսն հինգերորդ դարուն ընդհանրական Եկեղեցին, այսինքն է մինչչև էր ներմուծեալ 'ի նմա 'ի պատճառս Յոյնոցն՝ որ 'ի Քաղկեդոն, 'ի պատճառս փառամոլութեան և նորամուտութեանց Եպիսկոպոսաց ոմանց այլազգեաց անկարգութեանցի բաժանումն. նախ՝ զի ընդհանրական Եկեղեցին բաժանեցաւ յԱրեւելեան և յԱրեւմտեան, և ապա օր ըստ օրէ զայրացեալ յամենայն կողմանց յանդուգն կամակորութեանց և երկպառակութեանց՝ յերեսան եկին ազգայինն կամ՝ մանաւանդ Եկեղեցիք՝ իւրաքանչիւրն զիւրն Ջատագովելով զԵկեղեցւոյ վարդապետութեանցն ողջմտութիւն և զՀաւատոյն ուղղափառութիւն՝ առանց ամենեւին մեռ դնելոյ ամբողջ և անապական պահպանութեան Հաւատոյն Աստուածաշունչ ծխոյ և աւանդութեանց՝ որ նախ քան զՔաղկեդոնին Ժողովն։ Իսկ Եկեղեցին Հայոց ոչ այսպէս. վասն զի նա ըստ անբեկելի խորհրդոց Նախախնամութեանն հեռի զոլով աշխարհաս, ազգաս և լեզուաս յայլոց Քրիստոնէից՝ յորս յարեան և յուզեցան ամբարիշտ և մուշարեր հերետիկոսութիւնք և աղանդաւորութիւնք Մարկիոնի, Նեստորիոսի, Մոնոփիզիտի, Սաբելի, Պօղոսի Սամոսատցւոյ, Սյրիոսի Աղեքսանդրացւոյ, Աստղինարիոսի. Լա-

ուղիկեաց, Մակեդոնի, Նեստորի, Եւտիքէսի Կոստանդնուպոլսեցւոց, Պեղագիոսի Բրիտանիացւոց և այլոց, ո՛չ միայն անիմաստ եկաց Աստուծոյ յայտնութեանց նոցին, այլ նաեւ 'ի ստիպել հարկին ժողովով դատապարտեաց հրապարակաւ զմոլորեցուցիչսն հանդերձ մոլորութեամբք իւրեանց և մոլորելովք, Աստուած միշտ հաստատիմ Հաւատոյն նոսանի Քրիստոնէական Եկեղեցւոյն (1). և յայս ասեն ո՛չ միայն է մի Առաքելական Եկեղեցւոյն Քրիստոսի հաստատեալ յաստուծին դարու անդ Քրիստոնէութեան, այլ և է անդրանիկ և ճշմարիտ Եկեղեցի Աստուծոյ, յորում անկորուստ և անապականի պահեցաւ մինչեւ ցայսօր ուղիղ դաւանութիւն բանին Աստուծոյ, ուղղմտութիւն Հաւատոյ և մատակարարութիւն խորհրդոց սրբոց Առաքելական հանդերձ առնդութեամբք։

1. Զան զի 'ի սկզբանէ հեւոյ հաւատոյ և խոստմանի Եկեղեցին Հայաստանեայց զամենատուր Երրորդութիւնն զՀայր և զՈրդին և զՍ. Հոգին յերիս անձնաւորութիւնս բաժանեալ, 'ի մի բնութիւն և 'ի մի Աստուածութիւն ժողովեալ, ո՛չ երեք Աստուած քան թէ ոչ անձանցն, այլ մի Աստուած. ո՛չ մի ոմն մեծ և միւս ոմն կրտսեր, ո՛չ մի ոմն յաւիտենական և միւս ոմն ժամանակաւոր, ո՛չ մի ոմն արարող և միւս ոմն արարեալ, այլ երեքին եւս համագոյ, երեքին եւս մշտնջենաւոր ինքնագոյ և համագոյ, և երեքին եւս միապառնական խորհրդով և հաճութեամբ ստեղծող և արարող յանէից երկնից և երկրի, երեւելեաց և անտեսանելեաց, նախախնամող ամենայնի։ 2. Զ՝Հայրն հաւատոյ և խոստմանի անծին և անսկիզբն, որ ծնաւ յաստուծ քան զյաւիտեանս 'ի բնութենէ իւրմէ անսխալ և անմարմին՝ զՈրդին Միածին, և բղխեաց յէութենէ իւրմէ անբաժանելի և անբնաւորեալ զամենատուր Հոգին։ 3. Զ՝Որդին միածին Հաւատոյ և խոստո-

(1) "Զան զի ուղղափառ Հաւատոյ քո լցոյ՝ ո՞վ Եկեղեցի Հայոց, ոչ նուազեցար. 'ի բարի սերմանս քոյոցդ որոմն ոչ խառնեցաւ (Մատթ. ԺԳ. 25). զաղբիւր յաստուծոյ աստուածութենանց քոյ ազատաղատակ Հուր ստարատի ուսմանց ոչ պղտորեաց (Սաղմ. ՃՁ. 34). 'ի աստուածութեան և 'ի ճշմարտութեան Հայր քո կենդանական՝ մեռելական խմբոյ և հերձուած քայքայութեան չարութենանն ոչ զանազանեաց (Ա. Կորնթ. Ե. 8). յոսկի ամրիծ Հաւատոյն և յարծաթի յուսատուիչ բանին՝ պղինձ ժանգաՀոտ և կապար սեւութեան ոչ զտաւ։ Եւ այսոքիկ խնդրուածովք մեծ նաՀատակին Քրիստոսի սրբոյն Գրիգորի քեզ շնորհեցան,,։ Յովհան Եկեղեցի 'ի Յանդիմանութիւնս. Երես. 338։

վանի ըստ անժամանակ և ըստ անմարմին ծննդեան՝ Որդի Աստուծոյ, և ըստ 'ի ժամանակի և մարմնաւոր ծննդեանն՝ Որդի մարդոյ, Աստուած կատարեալ և մարդ կատարեալ՝ հոգւով, մտաւք և մարմնով, որ անսերմնապար յղացաւ յարգանդի ամենաշնորհեալ Կուսին իննամեայ ժամանակաւ, և ծնաւ՝ անապական պահելով զկուսութիւն ծնողին, թլփատեցաւ ութօրեայ և ընծայեցաւ 'ի տաճարն քառասնօրեայ, շրջեցաւ յաշխարհի զամս երեսուն՝ ծածկելով զԱստուածութիւն իւր ընդ վարագուրաւ մարմնոյ իւրոյ, և 'ի լրումն ամացն երեսնից մկրտեցաւ 'ի Յորդանան՝ յայտնելով զփառս իւր և զզօրութիւն՝ աշխարհի, զդեւս հալածելով, զհիւանդս բժշկելով, զմեռեալս յարուցանելով, աւետարանելով Հաւատացելոց յանուն իւր զփրկութիւն նորոգ հոգեւոր և անապական կենաց, և բարիս առնելով ամենեցուն, որ և մատնեալ 'ի Հրէից՝ շարշարեցաւ առ Պոնտացի Պիղատոսաւն Յերուսաղէմ, և կոխեալ զխաչէ՝ մեռաւ անպարտական մահու՝ մատուցանելով Հօր Աստուծոյ զանձն իւր պատարագ հաշտարար 'ի թողութիւն մեղաց ամենայն Հաւատացելոց 'ի սկզբանէ մինչեւ յվախճան աշխարհի. և յարուցեալ 'ի գերեզմանէ նոմին Աստուածախառն և անապական մարմնով՝ համբարձաւ յերկինս, և անանցանելի քահանայութեամբ բարեխօսէ միշտ վասն մեր, և անեղեւոյթ ներկայութեամբ իւրով իրրեւ հոգիւ և զլուխ հոգւոյ, անուցանէ և զարգացուցանէ զարեամբ իւրով զնեալ զեկեղեցի իւր, և գաղոյէ 'ի կատարածի յաւիտեանս դատել զկենդանիս և զմեռեալս՝ վարձս փառաւոր արքայութեան հատուցանելով՝ որոյ հաւատացին յանուն իւր և կեցին Աստուածապաշտութեամբ, և զանվախճան տանջանս դժոխոյ՝ որոյ ոչն հաւատացին և ստունգանեցին զպատրաստեալ փրկութեամբ. իւրով։

4. Զ8խաւս Քրիստոս ըստ Աստուածութեան իւրոյ հաւատայ և խոստովանի Եկեղեցին Հայաստանեայց՝ Աստուած կատարեալ, և ըստ մարդկութեան իւրոյ մարդ կատարեալ. յորում կատարեալ Աստուածային և կատարեալ մարդկային բնութիւնք անշփոթ և անկորուստ պահելով զիւրաքանչիւր զիւրն զյատկութիւնս, զկամս, զգէմս և զներգործութիւնս՝ նոր և անճառելի խառնմամբ միաւորեցան յԱստուածային անձին Բանին՝ անհաս եղանակաւ և անքննելի միաւորութեամբ. այնպէս զի յերկուսին՝ այսինքն 'ի կատարեալ Աստուածային և 'ի կատարեալ մարդկային բնութեանցն եղեւ մի անձնաւորութիւն, մի բնու-

թիւն, մի կամք, մի գործ և մի ներգործութիւն, մի Աստուածամարդ, մի Որդի և մի Քրիստոս, ինքն չարչարեալ և նոյն ինքն անչարչարելի, ինքն մեռեալ և նոյն ինքն 'ի մահու անդ անմահ. որ զոլով յերկրի՝ ընդդէմ զերկինս, և 'ի աստուերս նստեալ 'ի գերեզմանի՝ ընդ Հօր փառաւորեալ յերկինս 'ի հրեշտակաց և 'ի մարդկանէ։ Եւ յայս սակս հերձիչ և նեղոմիչ հաստատապէս ըզԵվտոր, որ ուրանայր զԱստուածային բնութիւն Յիսուսի Քրիստոսի 'ի ծննդեանն 'ի Կուսէն, և ոչ զատանէր զծնեալն՝ Աստուած կատարեալ և մարդ կատարեալ՝ անբաժանապէս միաւորեալ 'ի մի՝ բնութեամբ, կամաւ և ներգործութեամբ յանձին Բանին. Եւ զԵւտիքէս, որ ուրանայր զմարդկային բնութիւնն 'ի ծննդեանն Յիսուսի Քրիստոսի 'ի Կուսէն, և ոչ զատանէր զծնեալն՝ Աստուած կատարեալ և մարդ կատարեալ՝ անշփոթապէս միաւորեալ 'ի մի՝ բնութեամբ, կամաւ և ներգործութեամբ յանձին Բանին (1)։

Ե. Եկեղեցին Հայաստանեայց 'ի ժամանակի անտի յերեւելոյ մոլորութեանց Ղեւտորի և Եւտիքէսի Եկեղեցւոջն Յունաց, ոչ միայն ոչ զանկանեցաւ երբէք, կամ թէ խմորեցաւ ամբարիշտ աղանդաւորութեամբք ուրուք 'ի նոցանէ, այլ զոլով միշտ հե-

---

(1) "'Ի չորրորդ և 'ի հինգերորդ դարս Քրիստոնէութեան Արեւելեան երկրին ամբարիշտ Հերետիկոսապետքն Ղեւտոր և Եւտիքէս։ Ղեւտոր Պարսիարք Կոստանդնուպոլսի՝ այր կարճատես և ամբարտաւան, որ Ջատագովել կամելով զԳիր սուրբ Քրիստոս և զկրան Մարիամ ընդդէմ մոլորութեանց Ա. Խոսկանաց՝ ինքնին անկաւ 'ի մոլորութիւն նոր, քան որդ շարաչար քարոզէր զմարդկային բնութիւն Աստուածային բնութենէն յանձին Քրիստոսի, և զաւրբ կոչեաց Մարիամ քարոզէր ոչ Աստուածածին, այլ մարդածին՝ ասելով, թէ "Յիսուս ծնաւ 'ի Մարիամայ առանց մարդոյ. իսկ Աստուածութիւնն քան ժամանակաց միաւորեցաւ ընդ նմա սակս զրութեան նորա, և որպէս թէ բնակեաց 'ի նմա և ներգործեաց՝ հպատակութեամբ զնա կամաց իւրոց. սակայն ոչ ծնաւ ընդ նմա 'ի միասին, ոչ չարչարեցաւ և ոչ իսկ մեռաւ. և յայս սակս է նա (Յիսուս)՝ միայն Աստուածապէնաց (Թէոպասքոս), այլ ոչ Աստուածամարդ։ Սակս զինեցաւ հակառակ Եւտիքէս Վանահայր 'ի Կոստանդնուպոլիս, որ 'ի մէջն գնելի առ 'ի հերքել զմոլորութիւն Ղեւտորի՝ ծնաւ թշնամի նոր իմն մոլորութիւն ոչ պակաս շարագոյն քան զնորայն։ Ըստ Եւտիքէսի՝ "Բնութիւնն Աստուածային նախ քան զմարդեղութիւն Բանին ոչիչ էր 'ի մարդկանէն, և 'ի մարմնանալն ընկալեցաւ մարդկութիւնն Յիսուսեան, որպէս ընկալմ կամ անհետանայ կաթիլ մի մեղու կամ լեղւոյ 'ի ծովու. և յայս սակս հետանեցաւ բնութիւն մարմին Քրիստոսի ոչ է հաճագոյնագոյն կուսին Մարիամու և ոչ մեզ. և Քրիստոս 'ի ծննդեանն ունէր զմի և նոյն բնութիւն քանին ,,։ Ինչպէս։ 'ի Գիծագրութեան։ Պատմ. Եկեղ. Մասն. Ա. Էջեր. 293—294։

ոչ յերկրորդն եւս, ապրպային ընդհանրական Խորհրդոյն հերքեաց, մերժեաց և նզովեաց հաւատարակս և զերկոսին եւս՝ եթէ զՆեստորեանս և եթէ զԵւտիքեանս. և ընդդէմ բուժանողացն զբնութիւնս Քրիստոսի (ասացի և զկամս և զներգործութիւնս ըստ կարծեացն Նեստորի) զաւանեաց և ասաց յայտնապէս զանբաժան միաւորութիւն բնութեանց երկուց, կամաց երկուց և ներգործութեանց երկուց Աստուածային անձին Բանին (1). իսկ ընդդէմ չորեքոտասանն բնութեանց Քրիստոսի ըստ կարծեաց Եւտիքեսի, այսինքն՝ որպէս զմի և եթէ բնութիւն կրթուածոյն և այլայլութեանն յատկութեանցն ներգործութեանց և կամաց բաղդէին յանձին Բանին, զաւանեաց և ասաց յայտնապէս զերկուս բնութիւնս, զերկուս կամս և զերկուս ներգործութիւնս անշփոթ և անայլայլելի (2).

6. Զ Քրիստոս Քրիստոս հաւատաց և խոստովանի Եկեղեցին Հայաստանեայց միմիայն պատրաստեալ 'ի յաւետենից ամենասուրբ միջնորդ կատարեալ հաշտութեան Հօր Աստուծոյ և մերկիչ ամենայն մարդկան՝ որոց հաւատան 'ի նա. «Որ իբրեւ աբեւամբն եմուտ 'ի սրբութիւնս երկնայինս՝ յաւիտենական գրեալ զմերն փրկութիւն» (3). միայն անմահ առաջնորդ նորոգ հոգեւոր և անապական կենաց՝ որոց միրտին յանուն նորա. միմիայն հիմն և ճարտարապետ Եկեղեցւոյ Հաւատացելոց, որ շարշարանաք և խաչիս իբրեւ երթալ զի շնամութիւնն 'ի միջոց, ապար խոստովանութիւն ընդ երկնաւորս և ընդ երկրաւորս, և հանդերձ հաւատքեաց յամենայն ազգաց զնախատանքն ամենայնի 'ի փրկութիւն 'ի պարծանս անուան իւրոյ. միմիայն Գլուխ Քրիստոնէական միաբանութեան, որ իբրեւ անհերեւոյթ գործակցութեամբն կենաց հանապարտաց 'ի խորին Հաւատացելոց, ըստ բնդրուածոց նոցա, արարածն գնաս յանդարտանի կամաց իւրոց, ընտ շնորհաց իւրոյ, ահեցուցանէ Հաւատովք, յուսով և սիրով, և ածէ առ փառսն անապատուն. և միմիայն զատուտ կենաց և մանչս արարածոց ամե-

---

(1) «Արդ եթէ մի բնութիւն վասն անքակտելի և անբաժանելի միաւորութեանն ասի, և ոչ վասն չորեքմանն. և երկու բնութիւն վասն անշփոթ և անայլայլելի լինելոյ և ոչ վասն բաժանման. երկայնաբանիցն 'ի սահմանի են ուղղափառութեան։» Ընդհանրական. Էջն. 91. Տես նաև 86. 10. 165. 212. 234. 237. հայլն։

(2) Ընդհանրական. Էջն. 83. 119. 120. 121. 137. 140. 160. 165. 172. 234. հայլն։

(3) Ընդհանրական. Էջն. 168։

նայնի՝ եթէ հրեշտա՛ց և եթէ մարդկան, որ և յայտնելոյ է 'ի կատարածի աշխարհիս՝ առ 'ի զատել զամենեսին, և վարձս ըստ իւրաքանչիւր գործոց ամենեցուն հատուցանել։

7. Հաւատայ և խոստովանի Եկեղեցին Հայաստանեայց, թէ մեռեալք մերկութեան անշուշտ կարիւոր է ծնանիլ, կենալ և մեռանիլ մարդոյ՝ ո՛չ յայս կամ յայն Եկեղեցւոջ, որպիսի են Հռոմէական, Յունական և այլք, այլ 'ի Կաթողիկէ և Առաքելական Եկեղեցւոջ Քրիստոսի. և Եկեղեցի Քրիստոսի ասի, որոյ հիմքն, ճարտարապետ, դրուխ և առաջնորդ ինքն Քրիստոս է և նէ հանապէս, յորում՝ անմոլորապէս ուսանի քարոզութիւն Բանին կենաց, յորում՝ անեղծ մատակարարին որբարար խորհուրդք, և անմոլորելի պահին Առաքելական աւանդութիւնք, կարգք, ծէսք, արարողութիւնք և վարդապետութիւնք նախնի Հարց նախ քան զրաժանումն (1). և Եկեղեցիս այս է սուրբ, Կաթողիկէ և Առաքելական Եկեղեցին Հայոց։

8. Հաւատայ և խոստովանի Եկեղեցին Հայաստանեայց զՀոգին սուրբ՝ հոգի ճշմարտութեան, անձնաւորութիւն կատարեալ ամենասուրբ Երրորդութեան, և Աստուած կատարեալ՝ էակից Հօր և Որդւոյ ըստ մշանջենաւորութեան, փառակից նոցա ըստ համագոյութեան և կցորդ ըստ արարչութեանն, անեղ, անժամանակ և անայրայլելի. քանզի զամենայն և զիւրս Աստուծոյ, և անքննին նոցա յամենեցուն, այրիր զիւրութեան և չնորհաց, ուսուցիչ ճշմարտութեան, առաջնորդ կենաց յաւիտենից, որ լնու զարարածս զօրութեամբ իւրով. որ խօսեցաւ յՕրէնս և 'ի Մարգարէս և յԱւետարանն. որ էջն 'ի Յորդանան և քարոզեաց զՄիածին (Ղկէմ. Գ. 20։ Յովհ. Ա. 26)։

Հոգին ճշմարտութեան բղխի էութեամբ առ 'ի Հօրէ միոյնոյ յաւուրս քան զամենայն յաւիտեանս, և բաշխի 'ի ժամանակի 'ի Հօրէ և յՈրդւոյ հաւասարապէս (2), որպէս և Լամբրոնացին ուսուցանէ. «Զ Հոգին Քրիստոսի ասեմք՝ ո՛չ եթէ իբր 'ի նմանէ յաւուրս սկիզբն առեալ և բղխեալ, որ է անձնաւոր հաւասար Նմին և համասիրտ բղխումն՝ ո՛չ յՈրդւոյ, այլ 'ի Հօրէ»։ և

---

(1) Բաժանումն Յունական և Հայկական Եկեղեցեաց սկսաւ 'ի Հինգերորդ դարու 'ի պատճառս Խոզոզոյն Քաղկեդոնի. Ընդհանրական. Երես. 107. 140։

(2) «Բան Լուսաւորչին պատճառի՝ առ 'ի Հօրէ միոյնոյ. իսկ բան ունակութեան և չնորհաբաշխութեան Հաւասարապէս Հօր և Որդւոյ»։ Ընդհանրական. Երես. 115։ Տես նաև Երես. 3. 43. 83. 84. 114. 140. 161։

դարձեալ. «Հոգին Գրիգորոսի ասեմ՝ իբր անօրինարար առեալ 'ի Հօրէ, և ոչ երթէ 'ի նմանէ բղխեալ» (1). և յայս տակս ուսուցանէ, թէ որք զՀոգին ասէր 'ի Հօրէ և յՈրդւոյ հաւասարապէս ասեն բղխեալ 'ի յաւիտենից՝ մոլորին։

---

## ԻԼՈՒԹ Գ.

## ՅՕԳՈՒՍԾ ԱՌԱՋԻՆ.

Ցանապանեայ Որդւոյ հանաւոտ բացատրութեամբ հանդերձ.

Թէպէտ և Արարիչն 'ի սկզբան անդ ստեղծագործութեան ետ և հաստատեաց 'ի հոգւոջ մարդկան զկարողութիւն ծանօթութեան և ընտրութեան բարւոյ և չարի, թէպէտ և արար զնա ուղիղ և զարդարեաց անձնիշխան կամաբ, զի քննեալ և ծանուցեալ ինքնին զբարին, զկատարեալն և զՀաճոյն Աստուծոյ՝ կացցէ միշտ 'ի սահմանի արդարութեան և սրբութեան, կեցցէ Աստուածահաճոյ վարուք՝ կէտ նպատակի խորհրդոց և գործոց իւրոց եղեալ զԱստուածանմանութիւնն և զընդ Աստուծոյ կենցաղավարութիւն Աստուածակայելուչ իմն անմեղութեամբ՝ 'ի չաւղի հոգեւոր և երկնային կենաց Եդեմայ. այսու ամենայնիւ մարդն առաջին ոչ կամեցեալ կալ 'ի Աստուածաւանդն պատուիրանիս յայսմիկ՝ խարէութեամբ բռնաբարուին մեղաւ. որով և պղծեցաւ սիրտ իւր 'ի գործել յօժարութեամբ զչար, և 'ի քարշել զՀետ կամաւ՝ որ ինչ հակառակն է ամենասուրբ կամաց Եհովային. սակայն զերարուն Բարին 'ի հայրախնամն շարժեալ սիրոյ՝ ոչ կամեցաւ թողուլ զմարդն անկեալ յընդ երկար, այլ առ 'ի նը պատատ կանգնման նորին 'ի կործանմանէ անտի, և յառաջնորդ առ միւսանգամ Աստուածամերձ կենցաղավարութիւնն՝ նախ քան զառաջութիւն ամենակատարեալ և յաւիտենական օրինաց Աստուարանին 'ի ձեռն Օծելոյն իւրոյ՝ հաճեցաւ տալ ընտրեալ ժողովրդեանն Իսրայելի 'ի ձեռն մեծին Մովսիսի 'ի լեառն Սինա զտասնեակ Պատգամս, յորս բովանդակին համառօտիւ սկզբունք

---

(1) Ներս. Լամբ. 'Ի Մեկն. Պատարագի. Երես. 111. 112։

ծայրագոյն Աստուածպաշտութեան, բարոյական գիտութեան և քաղաքական օրինաց հին և նոր Եկեղեցեաց։

Մոմէս նախ պատմեաց երիցս քառասնորդական պահս, և ապա արժանի եղեալ ելանելոյ 'ի լեռան առ Աստուած և առնելոյ յառաջնում և յերկրորդ նուագի զտախտակս Օրինաց՝ յաշագս ընդհանուր ազգի մարդկան։ Յայտնանէ ուսանիմք, թէ և ամենայն ումեք առ 'ի ստանալ և առ 'ի սեպհականել անձին իւրում զնոյն Պատգամս Օրինաց բարոյ մտաւութեամբ, արդիւնաւոր խորհրդածութեամբ և գործադրութեամբ գրեցելոցն 'ի նոսա ամենայնի՝ պէտք են պատրաստել պահօք և աղօթիւք զանձինս, արթել զսիրտս 'ի պէտք ցանկութեանց, զմիտս յաղտեղի խորհրդոց, և զխիղճս 'ի շարեաց յամենայնէ, և այնպէս անկեղծութեամբ և միամտութեամբ Հաւատոց և կամաց մատչել 'ի լուր և յուսումն Աստուածապիր Օրինաց 'ի շինութիւն և 'ի փրկութիւն իւրեանց։

Ա. Պատգամ. «Ես եմ Տէր Աստուած քո, որ հանի զքեզ յերկրէն Եգիպտացւոց 'ի տանէ ծառայութեան. մի եղիցին քեզ այլ աստուածք բաց յինէն»։ Օրինաւքս այսու նախ՝ ծանուցանի և ինքն միութիւն Աստուածութեան և Հնմարտութիւն գոյութեան նորա՝ 'ի ժամանակին, յորում զրեթէ ամենայն ազգք, եւ և առաւել բազաքակիրթքն անգամ մոլորեալ գկենդանին և գշնչիրսն զմին Աստուած՝ պաշտէին զոչէս զոչէս աստղուոյ և զմեռեալ տարերս իբրև զաստուածս, և անմտութեամբ երկիրպագանէին անոսանց։ Երկրորդ՝ 'ի միութենէն Աստուծոյ զհետ գայ ինքնագոյ և յաւիտենական գոլն իւր։ Ինքնագոյ՝ վասն զի չիք այլ որ մեծ կամ հաւասար նմա Աստուած, որում հնար իշխ հայցուցանել զնա (Բ. Օրին. Դ. 35. Լգ. 26։ Եսայ. Թ. 14։ Բ. Թագ. Է. 24. Եսայ. Խգ. 6. Խզ. 5. 9)։ Յաւիտենական՝ վասն զի չիք այլ ոք յառաջ քան զնա ժամանակս. այլ ինքն սկիզբն և արարող ամենայնի՝ որ ինչ յերկինս և որ ինչ յերկրի, որ երևին և որ ոչն երևին (Եսայ. Խգ. 10։ Բ. Օրին. Լգ. 27։ Սաղմ. Ղ. 2։ Յայտն. Դ. 8—10։ Երրորդ՝ գոլն մեծ և բարի. մեծ՝ վասն զի ամենակարողութեամբ իւրով արար բանիւ զօրութեան իւրոյ յոչէից զերկինս և զերկիր (Ծննդ. Ա. 1), եղ ամենայն իրաց զամենեմեան կարգաւորութիւն, և ամենութեամբ իւրով լնու զերկնաւոր և զերկրաւոր զոյութիւնս և մինչև զանդունդս ծովուց (Գ. Թագ.

Ը. 27 : Երեմ. ԻԳ. 24). և բարի՝ վասն զի ինքն միայն է անփոփոխ սուրբ (Եսայ. Ե. 16), միշտ հաստատեալ 'ի բանս իւր (Ա. Կորնթ. Ա. 14), երկայնամիտ և գթած առ մեղաւորս (Թուոց ԺԴ. 18 : Նեհեմ. Ի. 6) և կարեկից մեղաւորաց (Գ. Թագ. ԺԳ. 23) : Զորրորդ՝ զոյն Հոգի ամենաբեր և ճշմարտութիւն անհուն : Հոգի՝ վասն զի է աներևոյթ և ամենակարող զօրութիւն. որ վասն զի ոչ է 'ի նիւթոյ կամ ստեղծեալ՝ անեղծ է և անմահ (Հռոմ. Ա. 23 : Ա. Տիմ. Ա. 17). և զոր զով միշտ կենդանի՝ չնչէ կեանս և շարժումն յարարածս ամենայն : Եւ ճշմարտութիւն անհուն՝ վասն զի ինքն միայն է կատարեալ արդար, միշտ ուղիղ և անփոփոխ սուրբ. որպէս էրն յառաջ քան զյաւիտեանս՝ է և այժմ, և եղիցի՝ որչափ և էն. և է միանգամայն հաւր ծախիչ և նոխանձախնդիր իրաւանց իւրոց. որ որպէս պատժեաց արտաքսեալ 'ի դրախտէն զԱդամն մեղուցեալ, և կորոյս Ջրհեղեղաւ զամբարշտեալ աշխարհն և կենդանեաց առ Նոյեա, պատժեսցէ ամին նման և զորս ոչ կացցեն 'ի Պատգամս Օրինաց իւրոց, և ոչ գնայցեն ըստ կամաց իւրոց (Յեսու. ԻԳ. 19 : Նաւում. Ա. 2 : Եզեր. ԺԲ. 29 : Երեմ. Ի. 10 : Յովհ. Գ. ԻԴ) :

'Ի միութենէն Աստուծոյ հետեւի, զի բանաւոր արարածք՝ եթէ՛ հրեշտակք, և եթէ՛ մարդիկ, իրրև ձեռագործք ամենազօր ձեռին նորա, երախտապարտք անբաւ շնորհաց նորա՝ որ յանգոյութենէ ած զնոսա 'ի գոյ, զարդարեաց սքանչելի պարգեւք, ելից զոլիս նոցա՝ եթէ՛ հոգեւորս, և եթէ՛ նիւթաւորս, եթէ՛ զաստիս և եթէ՛ զհանդերձեալսն, և 'ի նմա և եթէ գանձեալ կան ամենակատար բարութիւն, զերազոյն ճշմարտութիւն, անհուն իմաստութիւն և անհամեմատ գեղեցկութիւն. վասն այսր ամենայնի զնա և եթէ պարտին ճանաչել և խոստովանիլ իրրև միմիայն ճշմարիտ և կենդանի Աստուած՝ Այրարիչ և Խնամակալ ամենայնի, սիրել զնա իրրև միմիայն ամենակատար բարութիւն և անհամեմատ գեղեցկութիւն, և պաշտել զնա իրրև միմիայն ամենաստուրբ էութիւն. որում վայելէ երկրպագութիւն յամենայն անձնէ և 'ի մտաց, յամենայն 'ի հոգւոյ և 'ի զօրութենէ՝ տալ քան զարարածս ամենայն երկնաւորս և երկրաւորս, և ոչ ոչինչս զլիսովին :

'Ի մեծութենէ և 'ի բարութենէ Աստուծոյ հետեւի, զի բանաւոր արարածք, հրեշտակք և մարդիկ՝ հայեցեալ 'ի զարմանա-

լի գործս նորա (Մատթ. ԺԵ. 31)՝ որովք լի են երկինք և երկիր, և յուղղութիւն զատաստանաց նորա, (Եսայ. ԻԵ. 3) որով առանց ակնառութեան զատի՝ եթէ զհրեշտակս և եթէ զմարդիկ, եթէ զմեծս և եթէ զփոքունս (Յայտն. ԺԴ. 7). և 'ի փրկութիւնն (Սաղմ. Ժ. 15)՝ զոր ձրի պատրաստէ ամենեցուն. վասնորոյ պարտին հաստատել գրելոյն ամենայնի 'ի Պատգամս նորա, և հաստատուն մնաք յուսալ 'ի նա և եթէ յամենայնի (Հռոմ. Դ. 20), և ոչ թէ յերկրաւոր թագաւոր ոք, 'ի մեծութիւն կամ 'ի ճոխութիւն, զովել զնս անդադար երգովք ըստ երկնային զօրացն (Յայտ. Դ. 11)՝ առնելով զամենայն ինչ 'ի փառս նորա (Ա. Կորնթ. Ժ. 31), բերելով զպտուղ արդարութեան (Յովհ. ԺԵ. 8), հաւատարիմ լինել նմա հոգւով և մարմնով 'ի նեղութիւնս, 'ի չարչարանս և 'ի մահուն անգամ (Յովհ. ԻԱ. 19 ։ Ա. Պետր. Դ. 11), երկնչել 'ի նմանէ իբրեւ 'ի միոյ միայնոյ զերագոյն Իսկէ, որ ունի զիշխանութիւն կենաց և մահու (Եսայ. Ը. 13), այլ երկնչել ոչ այնչափ իբրև յանցաւոր ոք 'ի խիստ զատաւորէ, որչափ որդի ամօթիսած 'ի պատկառելի հօրէ (Երր. ԺԲ. 9. 28)։

Յամենութեան Հոգի զոլոյն Աստուծոյ և յանհուն ճշմարտութենէն հեռուի, զի բանաւոր արարածք միշտ 'ի մտի ունելով, թէ առաջի ամենատես աչաց Աստուծոյ բաց են ամենայն ճանապարհք որդւոց մարդկան, որ իբրև անտուէր լոյս զիտէ, տեսանէ և բննէ զամենայն զգաստնի խորհուրդ մտաց մերոց, զամբարածուկ կիրս սրտից մերոց և զգործս ծածուկս՝ զորս յառաջեմք 'ի գործել 'ի թագաւոր կամ 'ի խաւարի անտես յուսերէ, պարտին սրբել բոլորովին զմիտս իւրեանց և զսիրտս յանարժան կրից և 'ի խորհրդոց, և 'ի բաց մերկանալ յանձանց զգործս խաւարին, գնալ ըստ ամենայնի զգաստութեամբ՝ որպէս և որդիք տուրընջեան և լուսոյ, 'ի բաց կալով 'ի նենգաւորութենէ, 'ի դարանակալութենէ և 'ի կեղծաւորութեան, գնալով ըստ ամենայնի անատերիւր ուղղութեամբ 'ի չարիս պատուիրանաց նորա բանիւ և գործով, այսինքն բերանով խոստովանիլ, սրտիւ հաւատալ և կամօք գործել՝ զոր ինչ կարգեալ են յՕրէնս Բարձրելոյն պարտաւորութիւնս առնելիս, զիմել փափագանօք առ նա իբրեւ առ աղբիւր ճշմարտութեան, խնամութեան և հոգեւոր կենաց (Սաղմ. Լ. 5 ։ Առակ. Գ. 3. 4. Ը. 35), հնազանդիլ կատարեալ վստահութեամբ կամաց նորա 'ի նեղութեան,

'ի ձախորդութեան, 'ի հիւանդութեան և յամենայնի (Մարկ. Է. 7։ Ոգր. Գ. 26։ Սաղմ. ԾԹ. 1—9), և փութալ ըստ աւուրց աւուրց 'ի նորոգիլ առաւօտու կանխել հոգւով և ճշմարտութեամբ յաղօթս և 'ի փառաւորութիւն անուան նորա (Սաղմ. ԾԷ. 5. ՀԹ. 9)՝ զնա և եթէ յերկինս և յերկրի համարեալ միայն արժանի երկրպագութեան (Ղեւմ. Թ. 6։ Մատթ. Դ. 10)։

Ընդ դէմ պատուիրանիս մեղանչեն՝ Ա. Կռապաշտք, անհաւատք, յուսահատք և անաստուածք (Եսայ. ԻԴ. 19։ Գործ. ԺԷ. 29. 30)։ Բ. Որք ո՛չ խոստովանին զԲրիստոս՝ Աստուածորդի որում որ ո՛չ ընդունի զՈրդի՝ ո՛չ ընդունի նաև զՀայր (Յովհ. Ը. 19)։ Գ. Այք անօրէնք, այսինքն որ ո՛չ գնան ըստ պատուիրանացն Աստուծոյ (Յովբ. ԻԱ. 14։ Ա. Յովհ. Բ. 14։ Հռոմ. Ա. 28)։ Դ. Որք առեն զբնկերս իւրեանց, և յաղագս նեղանալոյ 'ի պէտսն մեզս (Ա. Յովհ. Գ. 8։ Տիտ. Ա. 16)։ Ե. Որք ուրանան զուխտն նորա և զՀեկեղեցին (Բ. Օրէն. Գ. 23։ Սաղմ. ՃԼԷ. 5։ Երեմ. Գ. 21—22)։ Զ. Որք յուսան 'ի մարդիկ (Երեմ. ԺԷ. 5), և ո՛չ ուղղութեամբ գնան 'ի ճանապարհի Քրիստոնէութեան (Բ. Պետր. Բ. 15)։

Բ. Պատգամ. «Մի՛ պատցես զու թեզ կուռս ըստ ամենայն նմանութեան՝ որ ինչ յերկինս 'ի վերս, և որ ինչ յերկիր 'ի խոնարհս, և որ ինչ 'ի ջուրս 'ի ներքոյ երկրի. մի՛ երկիրպագանիցես նոցա, և մի՛ պաշտեսցես զնոսա. զի ես եմ Տէր Աստուածդ՝ Աստուած նախանձաւոր, որ հատուցանեմ զմեղս հարանց որդւոց յերրորդ և 'ի չորրորդ ազգս՝ ատելեաց իմոց, և առնեմ զողորմութիւն 'ի հազարս ազգս՝ սիրելեաց իմոց, և ոչ պահեն զպատուիրանս իմ»։

Որպէս ճանաչումն և երկրպագութիւն միոյն և ճշմարտին Աստուծոյ է ազգիս երանութեան, փրկութեան և անմահութեան, նոյնպէս լրումն և ուրացութիւն նորին՝ խորհրդաւոր սակայն մոլորութեան և աշխարհ կորստեան. յորմէ զգուշացուցանէ զբանաւոր պատգամս երկրորդ պատուիրանս. ըստ որում կանգնումն և պաշտօն կուռց՝ է հետեւանք անդիտութեան և ուրացութեան միոյն, կենդանւոյ և ճշմարտին Աստուծոյ։ Յանցանք կռապաշտութեանն ո՛չ միայն անարգութիւն է ընդ դէմ բարձրեալ և ամենակատար գոյութեանն Աստուծոյ, այլ և յետին խայտա-

ռակութիւն պանծալի արժանաւորութեան մարդկային հոգւոյ. զոր որում մարդն թէ և ինչ ինչ հանգամանաց մարմնոյ իւրոյ հաւասարի արարածոց այլոց, բայց զերազանցէ յոյժ յոյժ բանականն հոգւովն, խորհուն միտքն և ինքնիշխան կամքն բան զնոսա և բան զանզգայս, զորոյ յաղագս մեղրութեան իւրում ձուլեալ զարձանս, կոմեալ բանդակս և նկարեալ պատկերս՝ անկանի թանձր անմտութեամբ առաջի ձեռագործոց իւրոց 'ի ծունր, և զԱստուածավայելուչ զիւաւորութիւնն զոմանք համարձակ նոցա մատուցանէ՝ իբրեւ արարչական զերազոյն Լակի և Խնամոցի Տիրոջոյց. որում արդէն յիմարութեամբ զպաշտօնն Աստուածային, և ենթակայ բարկութեանն Աստուծոյ լինի։

Կապարչութիւն համարի ընդհանրապէս Աստուածավայելուչ երկրպագութիւնն մատուցեալ 'ի մարդկանէ արարածոյն զոյութեանց, որպէս ձուլեալ շաստուածոց (Ելից. Լ՚Դ. 17։ Բ. Օրին. ԻԷ. 15), բանդակեալ կռոց (Եսայ. ԽԵ. 20։ Ովս. ԺԱ. 2), անզգայ և համր, փայտեղէն, քարեղէն, ոսկեղէն, արծաթեղէն, հողեղէն անզգեալոց Արեւու, Լուսնի, կենդանեաց և այլակերպեալ կրից մարդկան (Բ. Օրին. Դ. 28։ Սաղմ. ՃԺԵ. 5. 7։ Ամ. Բ. 18. 19։ Երեմ. Գ. 9։ Ա. Կորնթ. ԺԲ. 2), նոր աստուածոց, որոց ո՛չ գոլով 'ի բնէ՝ յեւ ժամանակաց ամբարշտութեամբ մարդկան ստեղծան (Գատ. Է. 8), օտար աստուածոց՝ որոց պաշտօն յաղագս օտարաց ածանցի (Ծնող. Լ. 2. 4։ Ովս. ԻԴ. 20), արձանաց պիղծ զոյց, կամ որ նոցն է՝ դիւաց (Ովսէ. Դ. 12։ Ա. Կորնթ. Ժ. 20։ Պատմ. Դ. 9—12։ Յայտն. Թ. 20). յորս համարելով բնակեալ հոգեղէն ինն Լակ՝ պաշտեն զնոսա կամ բան նեթիոն կամ բան զարմեանն 'ի նմա բնակեալ, դնեն 'ի նոսա զոյս փրկութեան իւրեանց, երդնուն 'ի նոսա (Եսայ. ԽԴ. 17. ԽԷ. 20։ Ամոս. Բ. 14), 'ի զէսս կարեւորս հայցուին առ նոսա լինին բանսի և առաջնութեան, կամ այլ ինչ այսպիսի իրաց (Ովս. Դ. 12), և մերձաւորս զոնս նոցա մատուցանեն 'ի բանականաց կամ յանբանից (Սաղմ. ՃՁ. 38։ Եղից. ԻԲ. 20։ Գործ. Լ. 41)։ Որ ինչ գրեցան 'ի մերոյ՝ են այլ և այլ տեսակք կռապաշտութեան Կրօնի, յորոց խաւսիս արդեալս՝ Բ. Պատգամս (Բ. Օրին. Է. 7)։

'Ի համարի բարոյական կռապաշտութեան են, յորժամ մարդն՝ թէ և պարծի ճանաչել զմին զմիոյն զկենդանին զԱստուած,

և ոչ պարտանէ երկիր տարերաց կամ դից, իսկ Արքեպիսկոպոսն, Լուսաւորիչ, անասնոց, գիւաց և այլոց, այսու ամենայնիւ տեսար կամ զաղջ գոլով 'ի Հաւատս, կամ թերահաւատ և կամ չնչաւոր, զծայրագոյն սէրն՝ զոր յամենայն անձնէ և յամենայն 'ի զորութենէ ճշմարիտ երկրպագութեամբ հանդերձ Աստուծոյ միայնոյ՝ պարտականէ մատուցանել, փոխէ զայն 'ի պաշտօն մարմնական կրից իւրոց՝ զմեղութիւնս փոխանակելով փառացն Աստուծոյ (Հռոմ. Ա. 23), զատ թիւնն՝ ճշմարտութեանն Աստուծոյ (Հռոմ. Ա. 25 : Եսայ. ԽԳ. 20), և զգործսն մարդկոյ՝ հոգեկանին (Գաղ. Ե. 19. 20) : Բաց այսմ կուսակաչաց հանապրին, պիղծ են առաջի Աստուծոյ և անմասն 'ի փրկութենէ՝ 1. Ամենայն ագահք, ընդ որով իսանին արծաթասէրք, կաշառաւոր և գրկողք (Եփես. Ե. 5 : Կողոս. Գ. 5). 2. Աստուածեան պաշտօնեայք, իսկ որք ուսուցանեն ժողովրդեան՝ ոչ զորս Աստուած կամի և պատուիրէ, այլ զորս ամբարիշտք հնարեցին զընդունայնութիւնս (Ամ. Բ. 18 : Երեմ. ԺԴ. 15). 3. Հեշտասէրք (Փիլիպպ. Գ. 19), անիրաւք, շնացողք, իգայեալք. արուագէտք, գողք, արբեցողք, բամբասողք, յաւիրչտակողք, պոռնիկք (Ա. Կորնթ. Զ. 9—10), ևս և ծոյլք, ապաեղք, կախարդք, գեղատուք. և ամենայն՝ որ առնէ զսուտս, կուսակաչաց է բարուք, և բաժին իւր բորբոքեալ ծծմբով լիճ գահենին (Յայտ. ԻԱ. 8) :

Արդարեան յայտնութիւնն՝ զոր մատուցանէ Աստուածեան Եկեղեցին Հայոց Տեառնական և Արքոյն պատկերաց, հեռի է ամենևին 'ի կուսակաչութենէ, 'ի նիւթապաշտութենէ և 'ի տարրապաշտութենէ, որ և բաց 'ի գոլոյ անիմաստ նկատմամբ հոգևորութեան Քրիստոնէական Կրօնին՝ ունի և զգուստ բաղում՝ հանապարհաց յանդիման աչաց հանդիսացուցեալ զմեծամեծ անցս անօրէնութեան Քրիստոսի յաղագս փրկութեան մարդկան, և զոհատրան նահատակութեան հաւատարիմ Պաշտօնէիցն Աստուծոյ. որոց լցեալք հաւատովք, և բորբոքեալք անչէջ սիրով նորա՝ եռան կամաւ զանձինս 'ի քարկոծումն, 'ի յոչնչացումն անդամոց, 'ի քերանս, 'ի կոտանս, 'ի սուր, 'ի բանտ, և յայլ բիւր տանջանութիւնս՝ զորս միանգամ հնարել կարացին թշնամիք Քրիստոնէական Կրօնի մերում. որք և միշտ առաջի աչաց Հաւատացելոց գոլով պատկերացուցեալ իրրև անգիր զարոց՝ բարբառեն և սնուցանեն զՀաւատս նոցա, արծարծեն զեռանդն Աստ-

տուածսիրութեան նոցա, և չարժեալ քանչելեան զամենայն որ՝ հաւատակից, նահատակից և պատակակից սիրելեացն Աստուծոյ լինել։

Հեթանոսք կարծեն բնակեալ 'ի պատկերս զդերազոյն իմն զօրութիւն, այլ զայս բաց 'ի բաց մերժէ Եկեղեցին Հայաստանեայց։ Հեթանոսք երկիրպագանեն դիւական զօրութեանն 'ի կուռս բնակեալ (Յայտն. Թ. 20։ Սաղմ. ՃԺ. 5), այլ զայս մերժէ Եկեղեցին Հայոց։ Հեթանոսք պաշտեն զնիւթն բնակութեամբն 'ի նոսա հոգեղէն էակաց սրբազանեալ (Երեմ. Ե. 7. Ի. 11։ Գալ. Դ. 8), այլ Եկեղեցին Հայոց ո՛չ զդեւս բնակեցուցանէ 'ի պատկերս, ո՛չ զաստուած, ո՛չ զհոգեղէն էակս, և ո՛չ իսկ զպաշտօն կամ զերկրպագութիւն նիւթոյն կամ տարերայն՝ սրբոյ։ Խաչի և սրբոյ Պատկերացն մատուցանէ. բայց միայն զի հայեցեալ 'ի Խաչելութիւն Փրկչին՝ յանդիման կացուցանէ առաջի աչաց մտաց իւրոց զԱստուածորդին զՅիսուս՝ իւր վասն անպարտութեամբ մատնեալ մահու, և անհուն խոնարհութեամբ և գորովանօք 'ի ծունկս անկեալ առաջի Խաչին՝ երկիրպագանէ ո՛չ նիւթոյն (1), այլ որ իմացակատարէն 'ի վերոյ այնորիկ խաչեալն է իւր վասն թողութեան մեղաց և բարձմանն անիծից՝ Փրկիչն իւր. տեսանէ զՀաւատակցին կենդանագիրս,

---

(1) «'Ի սմա ('ի Խաչի) Բանիդ Հօր երկիրպագեսուք». Կանոն Խաչի կարգին, 'ի Շարականի։

— «Երկրպագութիւն մեր առաջի սորա (այսինքն 'ի Խաչի) ոչ նիւթեղէն արարածոյ, այլ քեզ միայնոյ անբաժանելի Աստուծոյ մատուցանի». Ընդհանրական. Երես. 95։

— «Մեք և որ բան մեզ՝ այսպէս ունիմք և քարոզեմք, թէ որպէս զԱստուածընկալն Խաչ տեսանելով՝ ոչ երկնչի նիւթոյն, այլ անբաժանելի Աստուծոյ՝ որ 'ի նմա, զերկրպագութիւն մատուցանեմք, այսպէս և Փրկչական պատկերին՝ ոչ նիւթոյն և գեղոյն, այլ Քրիստոսի, որ է պատկեր անբաժանելի Աստուծոյ Հօր, երկրպագեմք նոցա։ Իսկ գոնեալքեմ ծառայքդ Աստուծոյ զպատկերս և զանուանս՝ որ են բնութեամբ ծառայութիւնդ մեզ, պատուել և յարգել բան իրաքանչիւր արժանաւորութեան և զատարինութեան նոցին զվարս՝ 'ի տեսլենէ իրաքանչիւր պատկերացն օրինակ առնուլ մեզ, բարեաց՝ գոնուս ածելով զգանազան ձգնութիւն նոցա, որ վասն ճշմարտութեան». Ընդհանրական. Երես. 132—133։

— «Այս պարտիմք երկիրպագանել 'ի նմա ('ի Խաչի) Քրիստոսի՝ ոչ նիւթոյն, այլ Բանին Աստուծոյ զօրութեանն, որ անքաժանելի 'ի նմանէ հաւատացեալ լինի երկրպագուցս. . . և որ արարածոյ երկրպագութիւն մատուցանէ՝ բնոյ անիծիւք դատապարտելին Գիրքս սուրբ որպէս զկուռապաշտան». Ընդհանրական. Երես. 259—260։

զմտաւ ածէ զտակալի անցս նոցին շարշարանաց, յիշէ զհանդէս Աստուածութեան նոցա և եղբայրութեան, խանդաղատի և երկրպագէ՝ ո՛չ ներկին կամ պատատի պատկերին, այլ խնամուն և լի փրկութեամբ Աստուածային տնտեսութեանն՝ որ երեւին 'ի նմա, և յարտասուս հարեալ՝ հայցէ յԱստուծոյ պարգեւանօք և ինքեան շնորհել զնոյնպիսի շնորհս զՀաւատոյ, զսիրոյ, զյոյսս, զմարտիրոսութեան և զպատկի։

Խնամութիւնն Աստուածային, որ 'ի հանելն յԵգիպտոսէ զԻսրայէլ՝ վասն զիւրահաւանութեան նորա առ պաշտօն զրաչելոյ՝ արգել Պատգամաւս՝ «Մի առնել կուռս ըստ ամենայն նըմանութեան՝ որ ինչ յերկինս 'ի վեր, և որ ինչ յերկիր 'ի խոնարհ, և որ ինչ 'ի ջուրս 'ի ներքոյ երկրի»։ որ պատուէր ետ սեղան հողեղէն առնել ինքեան. խակ եթէ 'ի քարանց՝ մի ամենեին կոփածոյս, զի պղծեալ է, վասն զի մերձեցաւ 'ի նա ձեռին զործին (Եելից։ Ի։ 24—25)։ յետ ժամանակաց՝ յորժամ սերունդքն Հաւատոր նորա, և անց վտանգն կուսաբաշտելոյ ընտրեալ ժողովրդեան, նոյն ինքն անխոտոր խնամութիւն Աստուծոյ հրամանս տայ Մովսէսի շինել զտապանակ վկայութեան յանփուտ փայտից, պատել զնս սակուով սրբով, և դնել 'ի վերայ զերկուս նախարարակաց ոսկեղէն Քրուբէս՝ տարածեալ ունելով զթեւս 'ի վերայ քաւութեան (Եելից։ Իե։ Իզ։ Իէ։ Իը)։ Պատուէր տայ և Սողոմոնի 'ի շինելն զառաջին Տաճարն Աստուածապաշտութեան յԵրուսաղէմ՝ քանդակել յորման այնորիկ զարմանելիս, շղթայագործս, Քերուբէս, և ձուլել զուարակս երկուսսան 'ի ներքոյ ծովուն (անօթ տաճարին), և դնել յանկեան Տաճարին յաջմէ կողմանէ (Բ։ Մնաց։ Դ։ 2—10)։ սապէս և զաշտանակսն, զսեղան, զվարագոյրս, զմոմս, զպատմուճանս, զկամարս, զապարոչս, եւայլն։

Յերկրորդ շինութեան Տաճարին՝ զոր հանդերձեալ էին առնել Իսրայէլացիք յետ զարձի իւրեանց 'ի գերութենէն Բաբելոնի, փառաւորագոյն եւս հրամայէ Աստուած առնել Եղեկիէլի զպատս և զկաղմածս այնորիկ, պատուէր տուեալ կանգնել ըստ սեղանս ողջակիզաց 'ի կոփածոյ և 'ի քանդակեալ քարանց, քանդակել զարմանելիս և զՔերուբէս երկուս հանդէպ միմեանց, մին մարդադէմ և միւսն առիւծադէմ. և այսպէս քանդակել զամենայն զՏաճարն շուրջանակի յատակաց մինչեւ ցյարկսն Քերուբիմքն և արմաւենեաւք. վասն զի այս է օրէն Տաճարին՝ ասէ

Աստուած (Եզեկ. Խ. 44)։ Այս ուրեմն եթէ ամենակատար խմաստութիւնն Աստուծոյ հրաման եւ հաստատեալ ժողովրդեան իւրում սոյնօրինակ նկարուր, քանդակով, դրոշիւք և արմատներով կանգնել զՏաճար 'ի հոգեւոր պաշտօն փառաց իւրոց յԵրուսաղէմ, մեզ եւս Քրիստոնէիս չէ ինչ անտեղի, և ոչ իսկ առիթ գայթակղութեան, եթէ զարդարեսցուք զԵկեղեցիս մեր փրկարար Նշանաւ Փրկչի մերոյ, Փրկչական և Մարտիրոսաց պատկերօք, և տաւջի նոցա մատուցուք Բարձրելոյն զբանաւոր պատարագս մեր հոգւոյ և ճշմարտութեամբ։

Նախ բան զամենեսեան օրհնութիւն աղօթիւք և ընթերցուածովք գրովք սրբովք, և զօծութիւնն սուրբ իւղով՝ ոչ է արժան 'ի կիր արկանել յԵկեղեցական պաշտամունս զխաչ, զկենդանագիրս Փրկչի և Սրբոցն, և ոչ իսկ յարգել զնոսա խնկօք և մոմեղինօք, կամ թէ աղօթել առաջի նոցա. զի Մովսէս բան Աստուածային հրամանագրութեան յետ չինութեան Խորանին և Սեղանոյն, մինչեւ ոչ էօծ զնոսա սրբութեան իւղովն՝ որպէս և զաշտանակն, զսեղանն խնկոց, զսեղանն ողջակիզաց, զաւազանն և զամենայն զկահս նոցա, ոչ եղեն նորին Սրբութիւն Սրբութեանց, և ոչ սրբեցան՝ որք մերձեցանն 'ի նոսա (Ելից. Լ. 25—29). և ոչ իսկ հանդերձ փառք Տեառն 'ի նոսա՝ որպէս ասէ Գիրն. «Եւ կատարեաց Մովսէս զգործն (իմա զօծումն իւղոյ), և ծածկեաց ամպն զխորանն վկայութեան, և լի եղեւ փառաւք Տեառն Խորանն» (Ելից. Խ. 31—33). զնոյնն է տեսանել և առ Սողոմոնիս, յորում սրբագործեցաւ նորաչէն Տաճարն Երուսաղէմի. ասէ Գիրն. «Եւ իբրեւ կատարեաց Սողոմոն զաղօթս՝ փառք Տեառն լցին զտունն» (Բ. Մնաց. Է. 1)։

Գ. Պատգամ. «Մի առնուցուս զանուն Տեառն Աստուծոյ քո 'ի վերայ անուտեաց. զի ոչ սրբեսցէ Տէր զայն՝ որ առնուցու զանուն նորա 'ի վերայ անուտեաց»։

Աստուած զոլով անչափն Հմարտութիւն և անհամեմատ սրբութիւն՝ կամի, զի և Աստուածապաշտք ամենայն ցուցցեն յանձինս զնոյն յատկութիւնս՝ սրբելով զսիրտս իւրեանց 'ի խորհրդոց պղծոց, և զկրս 'ի տուութեանց և 'ի ստերջութեանց. զի մի անարգեալ հայհոյեսցի ամենասուրբ անուն նորա յարարածս իւր ամին իրի և արգելու մի՛ ամենեքեան երդնուլ տուութեամբ, և մի յիշել զահաւոր անուն իւր 'ի անուտի և յընդվայր 'ի դատարկաբանութիւնս, 'ի կատակս, յատելուս և յայլ սովորական խօսս,

զի մի զմիչտ ճշմարտութիւնն 'ի վկայութիւն անիրաւութեամբ կոչեալ ստութեան՝ թշնամանեսցի և պղծեսցի նոքաւ՝ փառաւորեալ անուն իւր, և զի մի պատժեսցի՝ որ կոչեսցն։ Յիսրայելեան Եկեղեցւոջ այնպէս մեծ եղեռն համարեալ էր յանցանք արտերդմութեան, մինչ զի Աստուածային հրամանաւն քարկոծմամբ սպանանէր ժողովուրդն զամենայն որ՝ որ երդնոյր սուտ իրրեւ զբրէական մեղաւոր որ, որ անէծս կարդայցէ ընդդէմ Աստուծոյ (Ղեւտ. ԻԴ. 16)։ Ընդդէմ պատուիրանիս մեղանչէ որ՝ 1. Որ անիրկիւղութեամբ առանց պատկառելոյ և թերթեւռութեամբ յիշէ զանուն Տեառն Աստուծոյ 'ի հանապազորդեան անուն խոստկութիւնս իւր և 'ի գործս, և երդնու ստութեամբ (Ղեւտ. ԺԹ. 12). 2. Որ երդմնի ուխտ առնել զգործ ինչ բարի, կամ 'ի պաշտաման ուրուք կալ, և ապա երդմնաւոր լեալ զանց առնէ զուխտն կամ զպաշտամանն (Թուոց. Լ. 2). 3. Որ 'ի վկայութիւն ածեալ յատեան զատաւորի՝ երդմնի լեալ վկայէ ստութեամբ, անիրաւութեամբ և զրպարտութեամբ՝ անզործ յանցանաց ընկերի իւրոյ (Բ. Օրին. ԺԹ. 16. 18). 4. Խարդախք, որոյ առեալ զինչս յաւանդի՝ յափշտակել կամիցին, կամ զկորուստս ուրուք գտեալ՝ սեպհականել յօժարիցին, և ստոյգութեամբ կամ սուտ երդմամբ ինչս հասուցանիցեն ընկերի իւրեանց (Ղեւտ. Զ. 2—4). 5. Ենգաւորք, ստախօսք, երկչեղուանիք, լեզուանիք և կեղծաւորք՝ որք 'ի ներքուստ այլ որ, և արտաքուստ այլ ոմն ձեւացեալ՝ պղծեն զկոչումն իւրեանց, գայթակղեցուցանեն զընկերս և վրդովեն զիաղաղութիւն հաւատակաց (Յակ. Ե. 12։ Սաղմ. Ժ. 7. ՃԹ. 17. 18). 6. Ընդհանրապէս ամենայն յիշոցաւոր, հայհոյիչք, անիծանողք, խաբերայք և ուրացողք՝ որք տգեղ բանիւք խոցոտեն զսիրտս եղբարց, զզուեցուցանեն և պղծեն զքաղաքս նոցա, որք կեղծաւորութեամբ աղօթեն յԵկեղեցւոջ, և արտաքոյ զտունս այրեաց կրծանեն. և զեղբարս ատելութեամբ անուանարկ առնեն. որք լրբութեամբ ծիծաղին յԵկեղեցւոջ, և թիւր մեկնութեամբ բանից սուրբ Գրոց ժխտեն զյայտնեալ ճշմարտութիւնս Կրօնի (Մատթ. ԺԲ. 31. ԻԳ. 3—28։ Հռոմ. Գ. 13—16։ Կորնթ. Գ. 8։ Յայտն. Բ. 9. ԺԳ. 1. 5. 6. ԺԷ. 3։ Գ. Թագ. ԺԱ. 9։

Յիշատակեալ 'ի վերս անդր Պատգամն՝ որ այսպիսի խաւութեամբ արդելու զտերդմնութիւն, զերդմնազանցութիւն և զտե-

տակս ամենայն առաքելանց՝ յիշողաստութեամբ հանդերձ և անխիծիւք, զատուիկ Հաւատոյն հանդերձ զնոսա նաև զայնպիսի ուղղութեամբ և անկեղծութեամբ կենցաղավարիլ յաշխարհի, և կալ 'ի զաշտամունս Կրօնից, մինչ զի ամենայն որ վատահ լեալ 'ի նոսա՝ հաւատոյցէ լոկ բանից և վկայութեանց նոցա իբրև անտարակուսելի ճշմարտութեան (Ղուկ. Ը. 16 : Եփես. Դ. 25 : Ա. Ոսկ. Գ. 3 : Բ. Յովհ. 2 : Մատթ. Ե. 34. 35). այնպիսի հաւատարմութեամբ վարել 'ի զատաստանի, 'ի տուր և յառս և յայլ և այլ յաշխարհային գործս, մինչ զի ոչ լինիցին երբէք պէտք երդման (Բ. Օրին. Ա. 16 : Ա. Ոսկ. ԺԴ. 5 : Գ. Թագ. ԺԲ. 13 : Գործ. Զ. 1—3 : Ա. Տիմ. Գ. 11. Զ. 2 : Յայտ. Բ. 10. ԺԷ. 14) : Իսկ 'ի կարեւորագոյն և անհրաժեշտ գէպս՝ յորժամ անշնորհին լինիցի առանց երդման վճռել զգործ ինչ, և յորժամ ոչ եմք ամրաստանելոյն կամ որ ընդդատանալ է՝ խնդրել զերդումն, այլ զոր դատաւորն կամ դատարանն ասիցէ՝ պիտոյ է երդումն, և այն կարի երկիւղածութեամբ և յոյժ պատկառանօք մատչիլ յերդումն (Մատթ. Ե. 33 : Երր. Զ. 13. 16 : Յայտ. Ժ. 6) 'ի Ս. Խաչն և 'ի կենդանարար Աւետարան Փրկչին, որպէս ասէանելոյն է Ա. Ուսուցչական Եկեղեցին Հայաստանեայց (1) :

Դ. Պատգամ. « Յիշեսջիր զօրն շաբաթուց սրբել զնա : Զվեց օր գործեսցես, և արասցես զամենայն զգործ քո. յաւուրն եօթներորդի շաբաթ Տեառն Աստուծոյ քում. մի գործեսցես 'ի նմա զամենայն գործ քո՝ դու, և ուստր քո, և դուստր քո, ծառայ քո և աղախին քո, եզն քո և էշ քո, և ամենայն անասուն քո, և եկն քո և պանդխտեան քո՝ որ 'ի քեզ : Զի զվեց օր արար Տէր Աստուած զերկինս և զերկիր և զծով և զամենայն՝ որ 'ի նոսա, և հանգաւաւ յաւուրն եօթներորդի. վասն այնորիկ օրհնեաց Տէր զօրն եօթներորդ և սրբեաց զնա » :

---

(1) « Մի եղիցի ձեզ յամարութեամբ դիմել յերդումս յանուն Աստուծոյ և Աւետարանն սուրբ և 'ի Խաչ՝ առանց մեծագոյն հարկի. քանզի Գրիգորաս Հրամայէ յԱւետարանին, ուր երդումն լինի, թէպ ամենեին մի երդնուցուս՝ ոչ միայն Աստուծոյ, այլ և ոչ յարարածս, ոչ յերկինս և ոչ 'ի երկիր, և ոչ 'ի գլուխ քո. այլ այնչափ ցուցիր ամենեցուն զձեզ հշմարտախօս լինել, մինչ զի լոկ բանից ձեր՝ որոշս երդման, հաւատացեալն մարդիկ : Իսկ եթէ ծայրագոյն ինչ հարկ լինիցի երդելոյ, մի որ մեղիչ զանիծոյն յանցանան՝ ուրանալով զերդումնան և երդմանագոյն լինելով. զի առաւել չար է ուրացութիւնն՝ որ յերդմունան է, քան զայն՝ որ յերկիւղէ մահու առաջի անհաւատից ուրանան » : Ընդհանրական. Եր. Ա. 17 :

Տարաբերեալ եօթնեներորդ աւուր եօթնեկի՝ թէև իբրև նոր ի-մնալն 'ի ձեռն Մովսիսի առանձին պատուիրան Իսրայելի, այսու ա-մենայնիւ կարի վաղնջական է և պահեալ արդարեմբ, 'ի ցեղին Սեթեայ և Նոյի, ընկալեալ յԱստուծոյ՝ որպէս վայելուչ է մա-կարերել, յորժամ յայտնեալ առաջին մարդոյն 'ի դրախտին՝ բերան ա բերան և երես առ երես խօսակցէր ընդ նմա (Ծնող. Բ. 2. 3)։ Սուրբ պահեցողութիւն շաբաթին յիշեցուցանէ Հաւատացելոց անդադար զամենակարող զօրութիւն և գծագրագոյն բարութիւն ամենասուրբ Երրորդութեան, քան զոյս ստոյգ յոչնչէ բանիւ իւ-րով 'ի վեց աւուրս զերկինս հանդերձ հրեշտակօք և զաւուր մարմ-նովք, և զերկիրս մարդկամբք և անասնովք, ծովուք և լերամբք և ամենայնիւ՝ որ են 'ի նոսա, կենդանեօք և անկենդանեօք՝ 'ի ցոյց փառաց իւրոց, 'ի պարգեւ բարութեան իւրոց և 'ի վայելս մարդոյ, և հանդերձ 'ի գործելոյ (այլ ոչ 'ի խնամոյ), յաւուրն եօթներորդի. և յայտնակս օրհնեաց զայն (Ծնող. Բ. 3), սրբեաց (Ծնող. Բ. 3։ Ելից. ԼԱ. 15), և հրամայեաց օրհ-նութեամբ և սրբութեամբ պաշտել (Ղեւտ. ԺԳ. 3. 30)։

Սակայն իբրև պարտական են Հաւատացեալք՝ 1. Ըստ օրինակի Ա-բրահամի իւրեանց հանդիպիլ յաւուր Կիրակէի (և յայլ Տօնից աւուրս յԵկեղեցւոյ եղեալս) յամենայն 'ի մարմնաւոր գործոց իւր-եանց, այսինքն 'ի տուրեւառութենէ, յերկրագործութենէ և յարուեստից՝ ինքեանք և մշակք իւրեանց, ապատարք, գործա-ւորք և անասունք իւրեանց, և հրամարիլ՝ որչափ կարելի է, 'ի դրամանաց, 'ի տեսարանաց, յաշխարհային զուարճութեանց, 'ի խաղոց, յանառիթ կերուխումից, 'ի մեղանչական գործոց, և յա-մենայնէ՝ որ ծանրացուցանեն և թմրեցուցանեն զզգայարանս մարմնոյ (1), և զոգանան զժամս և զվայրկեանս 'ի սէր հոգեւոր և օգտակար խորհրդածութեանց, Աստուածային պաշտամանց և բարեբարեկամ գործոց որոշեալ (Բ. Օրին. Է. 14։ Ղեւտ. ԻԳ. 3։ Նեհ. Թ. 31. ԺԳ. 15—17 և 19)։ 2. Կանխել յԵկեղեցի յերիգարագութիւն բարձրելոյն Աստուծոյ (Եղեկ. ԽԶ. 3։ Գործ. ԺԶ. 13) և յուսկնդրութիւն բարոյից. զի և Փրկիչն յայտ առեալ սովոր էր առնել զԱստուածն

---

(1) "Զօրն եօթներորդի՝ հանդիսաւոր կոչէ. վասն զի սրբարար աւուրս և փափուկ ունիլ պատուիրէ. զի ամենայն որ ծանուցեալ զօրն փափկութեան՝ գնանգիտաւ Աստուծոյն պատուոյն"։ Ս. Լուսաւորիչ. Առ Ազգականս. Երես. 497։

արքայութեան իրոյ (Ղուկ. Գ. 31. Զ. 6. ԺԳ. 10։ Մարկ. Զ. 2), և զնոցն առնէին Աշակերտքն իւր (Գործ. ԺԳ. 14—15. 44. ԺԷ. 2. ԺԸ. 4)։ 3. Աղօթել առաւել քան զսովորականն, առնել ողորմութիւն, ըստ հոգւոյ և ըստ մարմնոյ խրատել զանզգաստ մեզաւորս, յանդիմանել զմոլիս, յուղղութիւն ածել զանուղղայս, հաց բրդել քաղցելոց, հանդերձ բաշխել մերկաց և ողորմութիւն կարօտելոց, յայց ելանել հիւանդաց, սփոփել զբանտարկեալս և զամենայն հոգւով և մարմնով վշտացեալ եղբարս ըստ Հաւատոց (Թուոց. ԻԸ. 9։ Մատթ. ԺԲ. 5. 12։ Ղուկ. ԺԳ. 16։ Յովհ. Ի. 23. Թ. 14)։ 4. Խոստովանիլ դշարաթական մեղս, քննել երկիւղիւ զիւրքն իւր, ապաշխարել, զղջալ, արտասուել, հաղորդիլ ամենասուրբ Խորհրդոյն մարմնոյ և արեան Քրիստոսի, և զբաղիլ քնթերցուածոց սուրբ և այլոց հոգեշահ և բարոյական գրոց (Գործ. Բ. 42. ԺԳ. 27. ԺԵ. 21. Ի. Ի։ Ա. Կորնթ. Ե. 7. 8. Ժ. 21. ԺԱ. 28—31)։

Թէպէտ և շարաթու սուրբ պահպանութիւնն ըստ Աստուածային սահմանադրութեան մշտնջենաւոր լինելոց էր (Եղից. ԼԱ. 16—17։ Մատթ. Ե. 17—18), այլ զի 'ի Հրէական շարաթութեանէ ցաւ. Փրկիչն 'ի գերեզմանի, յայս տակս բարձաւ այն. զոր զտեղին կալաւ միաշաբաթին, այսինքն է առաջին օր եօթնեկին. վասն զի 'ի նմին աւուր յարեաւ Տէրն 'ի գերեզմանէ, և երևեցաւ բազում անգամ Աշակերտաց իւրոց (Մատթ. ԻԸ. 1. 6. 9։ Մարկ. ԺԶ. 9. 14). զի 'ի նմին աւուր էջ Հոգին սուրբ 'ի վերնատունն (Գործ. Բ. 1—4). և զի 'ի նմին աւուր սահմանեցին Աւետարանք պահել զշաբաթ Տեառն (անուանեալ զոյն Կիւրակէ, այսինքն է օր Տէրունական) հաղորդիլ Տէրունական Խորհրդոյն, քարոզել զԱւետարանն և մատուցանել զհանդիսաւոր պաշտամունս 'ի զոհութիւն փառաց Աստուծոյ (Յովհ. Ի. 26։ Գործ. Ի. Ի։ Ա. Կորնթ. ԺԶ. 2։ Յայտն. Ա. 10)։

Ընդդէմ Գաղատացիս մեղանչեն Քրիստոնեայք՝ 1. Որք 'ի Կիւրակէս՝ գործս և յոյլ աւուրս, ասեն զանձինս անխտիր 'ի գործել, 'ի վաճառել և 'ի գործել զինչ և իցէ զմարմնաւոր գործս (Ելից. Ժ. 31. ԺԳ. 15—16։ Եսայ. ԾԸ. 13)։ 2. Որք թէև զաղաղին յաւուր յայնմիկ յաշխարհական գրաքանչ, այլ ոչ պարապեալ քնթերցուածոց հոգեշահ գրոց, ողորմութեան գործոց, և Աստուածային պաշտամանց՝ անցուցանեն զօրս զայս

կամ գաստարկութեամբ՝ ոչ 'ի սէրս հոգւոյ ինչ վատասկեալ, կամ յեւս ամօթալի և ընդունայն մոլութիւնս, այն է յորտորդութիւն, 'ի խաղս թղթոց, 'ի հանդգնամտութիւնս ուտելոյ և խմելոյս խնջոյից, 'ի ձիավարութիւն, 'ի թատերական տեսարանս, և այլն (Դատ. ԺԳ. 17։ Եսայ. ԾԸ. 2։ Եղեկ. Բ. 13. 16. ԻԲ. 8)։ 3. Որք 'ի սրտէ ոչինչ ցուցանելով գյարդ առ սրբութիւն աստուծոյ՝ զատարուստ միայն առ 'ի պատրել զաստուծմամբ նախանձաւոր ձեւանան այնմ (Ղուկ. ԺԳ. 14։ Յովհ. Թ. 16)։ 4. Որք գայթ գոլով առ վայելուչ կատարումն սարուստութեանց Կրօնի՝ ձանձրացեալ են 'ի հանգստեան օրէս, կամ ժայր առնեն զոյն ամբարշտութեամբ (Ամովս. Ը. 5։ Ովս. Ա. 7)։

Տասնապատկեալ Պատգամք գրոշմեալ էին յերկուս տախտակս, յորոց չորեքին՝ յառաջնումն, վեցերին՝ յերկրորդումն։ Ի սոցանէ առաջին չորեքիներն՝ զորս համառօտիւ մեկնեցաք 'ի վերոյ, որոշեն զպարտաւորութիւնս Հաւատացելոցն նկատմամբ առ Աստուած և առ կրօնական պաշտամունս. իսկ մնացեալ վեցերիներն՝ զոր ինչ արժանն է առնել նկատմամբ առ անձն իւր, առ ազգակիցս և պատկերակիցս իւր ըստ մարմնոյ։

Ե. Պատգամ. «Պատուեա զհայրդ քո և զմայրդ քո, զի քեզ բարի լինիցի, և զի երկայնակեաց լինիցիս 'ի վերայ երկրին քարութեան, զոր Տէր Աստուած տայէ քեզ»։

Ինչ անուամբ իմացեալ լինին ոչ միայն հայրն և մայրն ուրուք՝ որք ըստ մարմնոյ ծնողքն բարերար համարին, այլ և Պաշտօնեայքն արքայութեանն Աստուծոյ, որք զաստիարակութեամբ Աստուածգիտութեան ճանապարհի, և հոգեւոր ծնողքն աստուծոյ՝ ծնանին զորդիս մարդկան յորդիս Աստուծոյ, զորդիս մահու յորդիս կենաց, զորդիս մարմնոյ՝ յորդիս հոգւոյ. և յայս ասեն երկոքին ևս համարեալ իրրու երախտաւորք մարդոյ. մին՝ մարմնաւոր կենացն ելով պատճառ, միւսն՝ հոգեւորին, արժանի են պատուոյ յարգանաց, սիրայիր հնազանդութեան, հրաւիրակութեան և պատկառելի երախտագիտութեան մարմնաւոր և հոգեւոր զաւակաց իւրեանց։

Ըստ այսմ պատուիրանի պարտական են զաւակունք՝ 1. Սիրել զծնողս իւրեանց՝ եթէ հոգեւոր և եթէ մարմնաւոր, զկնի Աստուծոյ առաւել քան զամենայն՝ որ ինչ յաշխարհի է (Ծնող. ԽԹ. 29). 2. Հնազանդիլ ամենայն բարի և օգտակար առաջա-

գրութեանց նոցա, խորհրդոց, կամաց և անօրէնութեանց ամենայարգար փութով (Ծնող. ԻԸ. 7. Խէ. 30։ Կորն. Գ. 20). զի և Փրկիչն Յիսուս երկոցունց ընտանեկան առաքինութեանցս եղոյց յանձին անկեղծ ծնողասիրութեամբն իւրով, և հպատակութեամբ բարեկամաց նոցա յարատեւոյց սրանչելի (Ղուկ. Բ. 51։ Յովհ. ԺԹ. 26—27). 3. Մեծաւ յժամտութեամբ փութալ ուսանիլ և արդիւնաւորել՝ զոր ինչ միանգամ բարի ծնողք իւրեանց ուսուցանեալ կամիցին ինքեանց հոգեւոր և աշխարհական գիտութիւնս և արուեստս (Առակ. ԺԴ. 1։ Բ. Տիմ. Գ. 15), և ջանալ վայելել զարշնութիւնս նոցա և զԱստուծոյ (Առակ. Գ. 1—4։ Եփես. Զ. 2—3). 4. Յորժամ յարրուեալս կատարելութեան հասակի իցեն՝ պարտական են հոգալ ամենայնիւ զկրօնական և զմարմնական պիտոյս ծնողաց իւրեանց, և ուրախ առնել զնոսա յամենայնի (Ծնող. Խե. 9—11. Խէ. 12։ Առակ. Ժ. 1. ԻԹ. 17). 5. Պատուել ընդհանրապէս զարգամանաց փորձառութեամբ ամաց զծերութիւն պատկառելի (Ցոյր. ԼԲ. 6. 7). 6. Հաստատութեամբ պահել զՕրէնս Բարձրելոյն, զոր ուսան ընդ դաստիարակութեամբ նոցա (Առակ. ԻԸ. 7)։

Բայց յոլովեալս հպատակութենէ և 'ի մեծարանաց՝ զոր ըստ Աստուածային սահմանադրութեան պարտաւորեալ են գտանիցեն ընծայել ծնողաց իւրեանց (Եփես. Զ), և հաստատեալ Հոգւոյ իւրեանց և Աստուծոյ (Երր. ԺԳ. 17։ Մատթ. ԺԶ. 19)՝ հաստատեալ գոն յԱստուծոյ նաև երրեակ իշխանութիւնք, այսինքն է՝ 1. Քաղաքացի 'ի վերայ հպատակաց իւրեանց (Հռոմ. ԺԳ. 1), 2. Առն 'ի վերայ կնոջ իւրոյ (Եփես. Ե. 22. 33), 3. Տեառն 'ի վերայ ծառայի իւրոյ (Եփես. Զ. 5—8), յորոց զերեքեանսն՝ ընդ որով կացուցեալ են այլք, է քաղաքականն, և այնմիկ և նմի յանձնեալ 'ի ձեռս սուր պատուհասի։ Ըստ այսմ Քրիստոնեայք թէպէտ պարտական են հնազանդիլ օրինաց և հրամանաց երկրաւոր թագաւորաց՝ յորմէ՝ լով զնոսա իբրեւ Պաշտօնեայս Աստուծոյ, հաստատելով նոցա զամենեսեան հարկս, և տանելով հարատեւութեանց անգամ ընչից և անձանց իւրեանց՝ երկայնմտութեամբ և աղօթիւք (Հռոմ. ԺԳ. 2. 6. 7։ Ա. Պետր. Բ. 13. 14. 17։ Յուդա. 8)՝ ասանց երրիր զմտաւ ոմեքոյ յապստամբութիւն, այլ ապատ են յիշխանութենէ և 'ի դատաստանէ նոցա 'ի պաշտամունս Հաւա-

ոց (Եկեղ. Ե. 1. Բ. 1)՝ զկոյսերն կոյսեր հաստատանելով, և զԱստուծոյն՝ Աստուծոյ. զամ որում թագաւոր թագաւորաց Աստուած և Եր է (Յայտն. ԺԷ. 14)։ 2. Կանայք զարդսին հնազանդիլ յանձնայնի ամուսնոց իւրեանց իբրեւ Տեառն, և սիրել զնոսա իբրեւ զգլուխս իւրեանց (Եփես. Ե. 22։ Կողոս. Գ. 18). այլ ունին հաւասար նոցա զկրօնական իրաւունս. և եթէ բռնադատեսցին ինչ՝ ի նոցանէ՝ ի Հաւատոյս՝ ազատ են յոչ անասելոյ նոցա, այլ ուշ՝ ի սիրելոյ։ Թէպէտ և զերութիւնն շնորհիւ Քրիստոսի բարձեալ է յերկրէ, և Ծառայ և ազատ հաւասարապատիւ միմեանց յիրաւունս մարդկութեան, այսու ամենայնիւ՝ որ ոչ վարձկան Ծառայ կարգեալ է ուրեք՝ զարդսի կենալ և Ծառայել միշտ հաւատարմութեամբ, ժրութեամբ և սրտի մաքր քան կամաց Տեառն իւրոյ (Տիտ. Բ. 9։ Ա. Տիմ. Գ. 1։ Կողոս. Գ. 22). խակ եթէ բռնադատեսցի՝ ի Հաւատոյս կամ՝ ի գործ ինչ ընդդէմ խղճի իւրոյ՝ ազատ է այնուհետեւ՝ ի Ծառայելոյ կամ յոչ Ծառայելոյ (Գաղ. Գ. 28)։

Ընդդէմ զէմ զարամիսանիս մեղանչեն զաւակունք՝ 1. Որք անմրտութեամբ կամ ստահակութեամբ ուշ անուան իրարուց, և ուշ բնդունին զկրթութիւն՝ ի Ծնողաց իւրեանց (Ա. Թագ. Բ. 25։ Առակ. Է. 7). 2. Որք զարդսին և իցէ եղանակաւ անարդեն բանիւք կշտամբանաց, անիծից և կամ հարուածովք զծնողս իւրեանց (Եղեկ. ԻԱ. 15։ Առակ. ԺԵ. 5. 20. Լ. 11։ Եղեկ. ԻԲ. 7). 3. Որք ամօթալի վարուք և անարժան գնացիւք անձանց զարհամարեն Ծնողաց իւրեանց՝ զգաւ, զքշուառութիւն և զնախատինս (Առակ. ԺԷ. 25. ԺԹ. 13. 26), կամ թէ՝ ի Ծերութեան նոցա, ի հիւանդութեան և ի ձախորդութեան թագուն զնոսա անմխիթար։ Ընդդէմ զարամիսանիս մեղանչեն Ծնողք՝ 1. Եթէ Ծառայեսցեն Տերանց իւրեանց առ յանկանէ, և ուշ՝ ի սրտէ (Եփես. Զ. 6։ Կողոս. Գ. 22). 2. Եթէ՝ ի խաղս իւրեանց և՝ ի հաշիւս վարեսցին խարէութեամբ, ագահութեամբ և գողութեամբ (Բ. Թագ. ԺԹ. 26։ Գ. Թագ. Ե. 20։ Տիտ. Բ. 10). 3. Եթէ յարուցանիցեն կռիւս, և ամբարշտութեամբ կեցցեն ընդ Ծառայակցաց իւրեանց (Ծննդ. ԺԳ. 7։ Մատթ. ԺԸ. 30) 4. Եթէ անհաւատարմութեամբ անձնատուր լինիցին յարամնութիւնս, յարբեցութիւնս և յայլ ամօթալի մեղութիւնս (Մատթ. ԻԴ. 49)։ Մեղանչեն ընդդէմ զարամիսանիս նաև Քրիստոնեայք՝ 1. Որք ոչն հնազանդին որբ-

նաւոր թագաւորաց երեսաց՝ հպատակելով քաղաքական կարգաց նոցա, և հաւատանելով նոցա զաշխատանս հարիւ (Հռոմ. ԺԳ. 2. 6. 7։ Մատթ. ԻԲ. 21). 2. Որք յանդգնին ձեռս կամ զկնս 'ի վերայ համբառնալ նոսիրական անձանց նոցա (Ա. Թագ. ԻՁ. 9։ Բ. Թագ. Ա. 14). 3. Որք զՊաշտանեանս եկեղեցւոյ, իմն զեպիսկոպոսունս, զվարդապետս և զդերեալս նոցա ոչ ունին երբեք զաւ 'ի յԱստուծոյ կայուցեալ տեսուչս և ասպնջորդս Հաւատոյ երեսաց (Մաղ. Բ. 7։ Ա. Կորնթ. Դ. 1։ Գաղ. Դ. 14). 4. Որք ոչ հնազանդին երանաւոր պատուիրանաց նոցա 'ի Հաւատոյս, և ոչ պահանեն զորս ուսուցանեն նոքա ուղղութեամբ (Մատթ. ԻԳ. 3։ Ա. Կորնթ. ԺՁ. 16։ Եբր. ԺԳ. 17). 5. Որք ոչն հոգան զմարմնաւոր պիտոյս նոցա, և ոչ ունին զնոսա առ պատուականագոյնս (Ա. Կորն. Թ. 7—11։ Գաղ. Չ. 6։ Փիլիպ. Բ. 29։ Ա. Թես. Ե. 13։ Ա. Տիմ. Ե. 17)։

Չ. Զասորամ. «Մի սպանաներ»։ Արդեն երբեք վանեմ զոյն իմն յարարածոյ ամենայնէ՝ որ յերկրի, էակ զարարեալ պատկերակրութեամբ Աստուծի երբոյ և հաղորդ մտաւոր անչափ կատարելութեանց նորա, է միանգամայն նաև զերազոյն առարկայ հանապազորդական խնամոյ նորա և սիրոյ. և յայս տեսիս ասէրզ Տէրն պատուիրան՝ մի երբէք սպանանել ոչ զոյլ ոչ, և ոչ զանձն՝ ոչ բան մարմնոյ և ոչ բան հոգւոյ։ Արդեալ դարձեալ պատուիրանս սէրս դնել յանձին կամ յրնկերին, հարկանել զանձն կամ զոյլս, մաղել, կրճատել կամ հատանել զանդամս մարմնոյ՝ զձեռսն, զոտսն և զաչս, զերեսն և զրնկերին, հեգնաբանել և թունաւորել զինքն կամ զոյլս։ Արդեալ նմանապէս 'ի դատաստանարարութենէ, յորմէ ծնանի բազում անդամ անմարդկալ արիւնհեղութիւն, և 'ի դնելոյ վերջապէս զոյթանկութիւն բնկերին մեղրութեամբք անձին, կամ զոյլս բամբասանաւ. վասն զի յայտանէ յատաջ զանդ վատահամբաւութիւն և բարոյական մահուանք երդարոյ և այլ կրոնական մեղրութիւնք, որք պատարերեն զմեզն անարգին և յանխնայական՝ անհաւատացեալս ևս բան զմեզն բնական։

Ըստ Զասորամիս բան այսմիկ՝ 1. Արդարասանութիւն հանցարի, եթէ ոչ բարկանայցէ 'ի տարարարուց երդոյ իւրում՝ (Մատթ. Ե. 21—22). 2. Որոյ սիրտն լինի միշտ պէտքէս պիղծ և անօրէն խորհրդովք (Մատթ. ԺԵ. 19). 3. Որ վասն Հաւա-

տոյ կամ բան մարմնոյ զնմանիս իւր և զընկերս առէ (Ա. Յովհ. Գ. 15). 4. Եթէ սոսկական որ զիսումամբ կամ յանկարծուստ հեղուցու զարիւն ուրուք (Ծննդ. Թ. 5։ Թուոց. Լե. 33։ Գ. Թագ. Բ. 32). 5. Թագաւորք և եկ և Դատաւորք առ 'ի նոցանէ կայուցեալք ունին յԱստուծոյ զիշխանութիւն պատուհասելոյ մահուամբ զչարս և զմեծեղեան յանցաւորս (Հռոմ. ԺԳ)։

Ընդդէմ պատուիրանիս մեղանչեն՝ 1. Որք հանապազօր նիւթեն 'ի սրտի և խոկան 'ի միտս հեղուլ զարիւն ուրուք (Ծննդ. Իէ. 41. Լէ. 18։ Երեմ. Իբ. 17). 2. Որք զրնութիւն ըզստատանային բերեն յանձինս՝ գործելով զսխտս նորա զչարսխոսութեան, զնենգաւորութեան, զմախանաց, զրանարկութեան, և զմշտապատրաստ գոլոյ առ կորուստ այլոց (Առակ. Ա. 16։ Սաղմ. ԺԱ. 2—4։ Հռոմ. Գ. 15). 3. Որք ամբարիշտք՝ որք զրգռութեամբ և քստութեամբ վիրավեն զխաղաղութիւն ընտանեաց և հասարակութեան. և յարուցանեն զընկերս ընդդէմ իւրեաց. յորմէ հեղանի արիւն արդարոյն (Յովբ. ԻԳ. 14։ Եզեկ. Իբ. 3։ Առակ. Ա. 11). 4. Որք ողէտք արհամարհողք Աստուածային արդարութեան և Գրոց սրբոց, յորմէ ծընանի մահ հոգեւոր (Եսայ. Թ. 2։ Մատթ. Գ. 16). 6. Որք անհաւատք՝ օտարոտեալք յԱստուծոյ (Յովհ. Զ. 9։ Ա. Յովհ. Ե. 12։ Եփես. Գ. 18). 7. Որք յուսահատք, յորմէ ծնանի անձնասպանութիւն (Բ. Օրին. ԻԸ. 34. 67։ Յայտն. Թ. 6. ԺԶ. 10), և այլն։

Ի. Գատդամ. « Մի՛ շնար »։ Շնութիւն ասի նկարագրաբար և է, եթէ ամուսնացեալ որ կամ ամուրի պառնկի ընդ ամուսնացեալ կնոջ ուրուք, ես և ընդ այլոց կամ ընդ կուսի, որք ոչ են ինքեան բան օրինի հարսնացեալ. և այլապանծրէն, եթէ Հաւատացեալ որ օտարոտուցեալ յԱստուծոյ Հմարտով զսիրտ իւր և զհոգի՝ (որում հարսնացեալ էին), ծառայեցուցանէ զայսոսիկ սուտ աստուածոց, խնամ կռոց, զրօշելոց, տարերաց, արարածոց և մեղայ. որով և կրօնապէս շնայ ընդ նոսա։ Երկրորդին ես հաւատարապէս 'ի ծանրագոյն յանցանաց ասի են. յորոց առաջինն վիրավէ զմիամիտ խաղաղութիւն ամուսնական, յարուցանէ կռիւ և զատելութիւն 'ի գերդաստանս, կործանէ զերջանկութիւնն ընտանեկան, զնէ զայթակղութիւն հասարակութեան, վատահամբաւ առնէ և դժբաղդ դնայօրս. երկրորդն՝ որ է ուրացութիւն ուխտին սրբութեան. որով որպէս թէ զհարս-

նայուցեալն Հաւատոյս ամենասուրբ սիրոյն Աստուծոյ՝ զհոգի իւր և զսիրտ, լուծեալ անջատէ զմարդն, և մատնէ զնոսա 'ի ծառայութիւն սատանայ և օտար աստուածոց. և շաղախեալ յանօրէնութիւնս այնպէս և 'ի մեզս պժգալիս՝ շնայ ընդ նոսա, ապրի ողորմելի կենաւք՝ զուրկ 'ի միութենէն Հաւատոյ, և անդրան և անզիղջ մեռեալ երթայ 'ի տարտարոսն հրով բորբոքեալ գեհենին։

Յայտ ասէ կատարել կին որ կամ այր ըստ նկարագրութեանն զպատուիրանս՝ 1. Որ յաշխարհական 'ի կենցաղավարութեան իւրում 'ի սրբութեան պահէ զսիրտ իւր, զմտաւորդս, զբանս և զշարժումսն անգամ (Յովհ. Ա. 1։ Ա.ռակ. Զ. 25։ Մատ. Ե. 2։ Եփես. Ե. 3). 2. Որ ողջախոհութեամբ սանձահարէ զմարմնական կիրս իւր, և զպատուութեամբ ժուժկալէ ընդդէմ անպարկեշտ ցանկութեանց (Ա.ռակ. Բ. 10. 11. 16։ Ա. Կորնթ. Զ. 13. և 15—18). 3. Այր և կին՝ որք փոխադարձ սիրով, հաւատարիմ պահպանութեամբ ամուսնական պայմանաց և միաբանութեամբ կենցաղավարին 'ի միասին (Ծնող. ԽԵ. 24. ԺՐ. 17. 21։ Մատթ. ԺԸ. 21. 22։ Սաղմ. ՃԼԳ. 1։ Ա.ռակ. Լ.Ա. 27։ Ա. Տիմ. Գ. 4. 5. 12). 4. Որք փութան հեռի կալ 'ի բնակակցութենէ և 'ի կենակցութենէ ընդ մեղաւոր և ընդ սրբեցուցչաց. և որք 'ի սէրս ամուսնացեալս մարմնոյ թաւալին (Ա.ռակ. Ե. 3—11. ԻԳ. 31—33։ Ա. Կորնթ. Ե. 11։ Ա. Պետր. Դ. 3)։ Իսկ ըստ Հաւատոյն կատարել որ զպատուիրանս՝ 1. Որ զգերագոյն սրբութիւն զՓԸրկչին կալեալ ինքեան 'ի կանոն՝ յամենայնի ջանայ արդիւնաւորել յանձին իւրում զնոյնն (Հռոմ. Ը. 29։ Ա. Յովհ. Բ. 6). 2. Որ սրբութեամբ խորհրդոց սրտի և միամտութեամբ Հաւատոյ մատչի 'ի պաշտօն և յերկրպագութիւն միակ Աստուծոյ իւրում և Աստուծոյ (Սաղմ. ԻԴ. 3—4։ Գ.ռկ. Ա. 74—75). 3. Որ պատրաստէ զանդամս իւր իրրեւ զէնս արդարութեան, ճշդէ զմարմնոյն ամենայն զգայութիւն իրրեւ մեռեալ ըստ մարմնոյ, և կենայ Աստուածահաճոյ անարատութեամբ վարուք (Հռոմ. Զ. 13 և 19. ԺԲ. 1։ Ա. Պետր. Ա. 15։ Բ. Պետր. Գ. 11), և այլն։

Ընդդէմ պատուիրանիս գնան՝ 1. Ամուսինք, որք թէև ուխտեցին առաջի Աստուծոյ կենալ 'ի միասին մշտնջենապէս անխախտ և 'ի սրբութեան զանկողին իւրեանց պահել, այլ ամբա-

բրչութեամբ յարուցեալ երկիրպագութիւնս և ատելութիւնս 'ի միջի' բաժանին, կամ թէ ապրիշն խառնակութեամբ ընդ սատանայ ոգեն զարբութիւն անկողնոյ իւրեանց (Մատթ. Ե. 28. ԺԹ. 9։ Մարկ. Ժ. 11. 12։ Հռոմ. ԺԳ. 1). 2. Այրեր՝ այր կամ կին, և կայր՝ երիտասարդք կամ աղջկունք. որք ասանց օրինաւորապէս Պաստի՝ որ և իսկ կերպիւ կամ պատճառաւ խառնակին կամ պոռնկին ընդ ումեք (Ա. Կորնթ. Զ. 16։ Գործ. ԺԵ. 20). 3. Իգացեալք, արուապէտք, և որք ձեռնաշարժութեամբ կամ այլ որ և իսկ բանի կերպիւ կատարեն զհոսումն սաղմին (Յուդ. 8։ Ա. Տիմ. Ա. 10)։ 4. Ընդդէմ պատուիրանիս պոռնկին ըստ Հաւատոյ, որք ուրացեալ զկենդանին և զՇնչմարիտն Աստուած և զուխտն Աստուածեղէն՝ երկիրպագանեն կուռս (Գ. Թագ. ԺԱ. 33։ Երեմ. ԺԵ. 6). 5. Որք թողեալ զկենդանարար վարդապետութիւնս Փրկչին՝ յարին 'ի պէսպէս մարդկային սուտ խարէութիւնս. ևս և որք զերկրպագութիւնն Աստուածամայրուչ փոխանակեն պատուոյ պաշտելութեան, և զնոյն ինքն Աստուածութիւնն՝ մարդահաճութեան, ակնատութեան, մարմնապաշտութեան, ագահութեան, եւայլն (Երեմ. Բ. 13. Գ. 21. 22. ԺԷ. 5։ Եփես. Ե. 5։ Փիլիպ. Գ. 19։ Հռոմ. Ա. 25։ Եսայ. Խ՚Դ. 20։ Եղեկ. Ե. 11. Է. 20. Ի. 39)։

Ը. Պատգամ. «Մի գողանար»։ Արդեսն սահմանեալ է Այրարչն իւրմէ վատակիչ մարմնոյ և սեռնայն կարօղութեամբ մնայ իւրոյ. և այնպէս բրտամբ իւրով հայթայթել յարդար վատակոյ իւրոյ զմարմնաւոր պիտոյս իւր և բնաւանեայ իւրոյ. իսկ գողութիւնն է արժգոյի յանցանք, զոր գործէ որ անցուցեալ զաւուրս իւր 'ի զատարկութեան և 'ի ծուլութեան, անիրաւութեամբ գողանալով կամ յափշտակելով 'ի ծածուկ կամ յայտնի, կամաւ կամ բանի զարդար վատակս ուրուք, և վարելով կեանս արդեամբք այլոց։ Գողութիւն ասելով իմացեալ լինի սեռնայն տեսակք անիրաւ շահու. զորօրինակ՝ յափշտակութիւն, գլխանք, կաշառաւորութիւն, կապտուին, կողոպտուին, ևս և նենգութիւն յաւս և 'ի տուրս, խարդախութիւն 'ի չափս, 'ի կշիռս, և խարէութիւն 'ի բանս և 'ի գործս, որոց միջոցաւ մարդն անօրէնութեամբ հարստանայ արդեամբք այլոց։

1. Գողութիւնն ապրիբանայ ընդհանրապէս յապականութենէ սրտին, որ արդէն զմարդն և ասելի ասնէ զնա յաչս Աստու-

ծոյ (Մատթ. ԺԵ. 19—20 : Երեմ. Ի. 9—10) : 2. Ըստ այսմ զգուշութիւն է, եթէ որ անիրաւութեամբ հատանել զվարձս մշակաց, ստրատուրաց և գործակալաց իւրոց (Մաղաք. Գ. 5 : Յակ. Ե. 4) : 3. Զգուշութիւն է, եթէ որ ինչ և իցէ եղանակս առնէ զրկանս ազգատաց, անազնականաց, որոց և այրեաց՝ զրաւելով զինչս և զստացուածս նոցա, և տոկոսս առուել քան զաւշմանեալն յօրինաց պահանջելով 'ի նոցանէ, և ոչ վճարելով զպարտս իւր (Ա.ռակ. ԻԲ. 22) : 4. Զգուշութիւն է, եթէ որ 'ի վաճառելն զինչ և իցէ՝ 'ի կիր արկանէ զչափ կամ զկշիռ պակասաւոր, և պահանջէ առութեամբ զինս առուել քան զարժէս իրացն (Ղեւտ. ԺԹ. 13) : 5. Զգուշութիւն է, եթէ որ առեալ յումեքէ յաւանդի զիր իմն, կամ զտեսակ զկորուստս ուրուք, և կամ 'ի գրաւ առ ինքն եղեալ զինչ ուրուք՝ իւրացուցանել կամիցի՝ ոչ կամելով նոցնութեամբ դարձուցանել զայնմիկ առ բնաւոր տէրն (Մարկ. Ժ. 19 : Հռոմ. ԺԳ. 9 : Ա. Թես. Դ. 6) : 6. Զգուշութիւն է, եթէ պաշտանեայս որ տէրութեան՝ կոչնականութեան, աշաւութեան կամ կաշառաց ազդաւս ոչ առնէ զդաս արդար, և զրկէ զանպարտն (Եղից. ԺԸ. 21. ԻԴ. 8 : Բ. Մնաց. ԺԹ. 6) : 7. Զգուշութիւն է, եթէ որ 'ի տունս և յանցս ճանապարհաց 'ի գիշերի կամ 'ի տուանջեանս կողոպտէ զինչս և զստացուածս այլոց (Յովբ. ԻԴ. 14 : Առգ. 5) : 'Ի զգուշութեան յանցանս են՝ և որք կցորդ լինին խորհրդով կամ գործով զոլոց (Աղամ. Ա. 18 : Եսայ. Ա. 23) : 8. Զգուշութիւն է վերջապէս, եթէ վարձկանս որ կամ գործակալ կամ տնտես ծառայեցեն տերանց իւրեանց անհաւատարմութեամբ, խարդախութեամբ և ագահութեամբ (Գ. Թագ. Ե. 20 : Տիտ. Բ. 10 : Ղուկ. ԺԴ. 10—12 : Նեհեմ. Դ. 16. 23). և որք գործեցեն զայսպիսս՝ մեղանչեն հակառակ « Մի զգողնար » Պատգամին :

Թ. Պատգամ. « Մի սուտ վկայութիւն վկայեր զընկերդ քումմէ » : Ատուած զոլով զերագոյն ճշմարտութիւն՝ օրինադրէ, զի և բանաւոր արարածք ամենայն՝ որ 'ի պատկեր իւր ստեղծեալ են, ունիցին յանձին զճշմարտասիրութիւն, ոչ զի այնու հանոյ միայն լինիցին ինքեանք, այլ զի և քնդհանուր ազգ մարդկան վայելեսցէ յիրաւունս և յարդարութիւն. քանզի պարտականութիւն իրաւանց ուրուք կախեալ է զարդարութենէ զատաստանաց. և եթէ ոչ ճշմարտութեամբ կամ առանց սուտենան

վկայեսցեն վկայք, ո՛չ լինի և արդար դատաստան։

Իններորդ պատուիրանաւս հրամայէ Աստուած՝ 1. Որպէս զի ամենայն որ՝ եթէ պաշտօնեայ, եթէ ստորադրեալ, եթէ դատաւոր և եթէ դատաւորեալ՝ փոյթ կալցին ստանալ և ցուցանել 'ի սրտի, 'ի բերան, 'ի վարս, 'ի դատաստանի և յամենայնի (Բ. Մնաց. ԻԹ. 34։ Եսայ. ԼԳ. 15։ Առակ. ԺԴ. 2։ Սաղմ. ԾԸ. 1. ՀԵ. 2. ՀԸ. 72) զայն ուղղութիւն և ճշմարտախօսութիւն, որովք ճոխացեալն էր Ղեւիացւոյ մարդկային ազգի 'ի ընկերքեան անդ՝ յորժամ ստեղծաւն (Ժողով. Է. 29)։ 2. Զի թագաւորք, դատաւորք և իշխանաւորք վարեսցին 'ի գործս քննութեան որոշմանց, պատժոց և տուգանաց՝ ընդ հպատակաց իւրեանց կատարեալ հաւատարմութեամբ և արդարութեամբ՝ ունելով միշտ 'ի մտի զպատկառանութիւն Օրինացն Աստուծոյ, և 'ի սրտի զերկիւղ նորա (Բ. Թագ. ԻԳ. 3։ Բ. Օրի. Ա. 16)։ 3. Զի Պաշտօնեայք Եկեղեցւոյ, այսինքն Հովիւք և Վարդապետք փոյթ կալցին յամենայն ժամ քարոզել և հրահանգել ըստ ողորմելոյ իւրեանց յոգեւոր վարդապետութիւնս Աւետարանին՝ հաւատարմութեամբ, ճշմարտութեամբ և ուղղութեամբ (Բ. Կորնթ. Զ. 7. 8. ԺԲ. 6։ Գաղ. Դ. 16։ Ա. Տիմ. Ա. 3։ Բ. 2. 7։ Տիտ. Ա. 13)։ 4. Զի ամենայն Քրիստոնեայք յառ և 'ի սուրս, 'ի բանս, 'ի գործս, 'ի վարս, 'ի վքիրայութիւնս՝ ազատի դատաւորայ և 'ի պահպանութեան ծածուկ խորհրդոյն այլոց՝ լինիցին հաւատարիմ, անկեղծ և արդար (Առակ. ԺԱ. 13. ԺԴ. 5։ Բ. Մնաց. ԼԴ. 12)։

Ընդդէմ պատուիրանիս մեղանչեն՝ և թագաւորք, ևս և դատաւորք 'ի նոցանէ կայցուցեալք, որք 'ի տեսչութեան իրայ աշխարհի իւրեանց, 'ի դատս և 'ի վճիռս բողոքոց հպատակաց իւրեանց՝ ո՛չ վարին երկիւղիւն Աստուծոյ՝ իբրև պաշտօնեայք նորա մեծութեանն, այլ աչառութեամբ հարատահարեն զաղքատն, և ատատպեցուցանեն զվատն զրկանաւք և անզթութեամբ զանեղնականն, զտգարն, զորբն և զայրին (Առակ. ԻԵ. 2. ԼԱ. 5. 8. 9)։ 2. Մեղանչեն Պաշտօնեայք Եկեղեցւոյ, եթէ 'ի մատնիչս բարարութեան Բանին կենաց վարեսցին մարդկային խաբէութեամբ, նենգութեամբ և խարդախութեամբ (Բ. Կորնթ. ԺԱ. 13։ Երեմ. ԺԳ. 14։ Հռոմ. ԺԶ. 18), ևս և յԱստուծային պաշտամունս և 'ի տեսչութեան հօտին՝ գայթութեամբ, կեղծաւորութեամբ, ղշաբաղութեամբ և մարդահաճութեամբ

(Յովհ. Ժ. 12։ Երեմ. Զ. 14։ Մաթ. Դ. 11։ Բ. Պետր. Բ. 13. Ե. 4)։ 3. Աղհատարակ ամենայն *Քրիստոնեայք, եթէ 'ի վկայութիւնս և յերդմունս իրենց վարեցին առութեամբ, խարդախութեամբ և կողմնակցութեամբ (Բ. Օրին. ԺԹ. 16. 18։ Առակ. ԺԲ. 17), եթէ յատուցին 'ի գրոյց իրենց և 'ի վարս, 'ի գնելն և 'ի վաճառելն 'ի կիր արկանիցեն զնեղութիւն և զխարէութիւն (Երեմ. Թ. 5). Եթէ ատելութեամբ և նախանձու բորբոքեալ ընդդէմ ուրուք՝ գրպարտութեամբ և չարախօսութեամբ բամբասեսցեն զնա՝ հանելով զնմանէ անուն շար. Եթէ ուրանայցեն զճշմարտութիւնն, և կեղծեսցեն ստէպէս յանցանս զնմանէ (Ելից. ԻԳ. 1։ Առակ. ԺԷ. 9. ԺԸ. 8. ԻՁ. 22։ Սաղմ. ԼՍ. 13). Եթէ առեալ յուսերէ յաւանդ զինն՝ ոչ կամիցին վերադարձուցանել տեառն իւրում. Եթէ զտուեալ խոստումն ոչ կամիցին կատարել. Եթէ զգուեալ կորուստ ուրուք ոչ հաճիցին օրինաւոր տեառն յանձնել. Եթէ տայցեն վասն ոչ իսկ իրաց եղեալս՝ յուրատ ինիցին, եւայլն (Սաղմ. ԼԵ. 20։ Ղեւտ. Զ. 2. 3)։

Ժ. Պատգամ. «Մի ցանկանար տան ընկերի քո, և մի անդոյ նորա. մի ցանկանար կնոջ ընկերի քո, և մի ծառայի նորա, և մի աղախնոյ նորա, և մի եզին նորա, և մի իշոյ նորա, և մի ամենայն անասնոյ նորա, և մի ամենայնի՝ զինչ ընկերի քո իցէ» (Ելից. Ի. 2—17)։ Տասներորդ պատուիրանաւս սահմանէ Տէրն զատուին և զամուսնական առաքինութիւնս, յորս յատէր պանծալիքն են ողջախոհութիւն, որ է ճանաչել միայն զիւր օրինաւոր անկողին, և ոչ ակն արկանել 'ի կին կամ 'ի նաժիշտ զրոյցս, և չարաւորութիւն, այսինքն է առանց ցանկանալոյ յաւիրաւորել զատացուածս ընկերին՝ շատանալ ունեցկոյին։

Բաւ այսմ պատուիրանի՝ Քրիստոնեայք զԱստուած և եթէ հաւատալով պարգևիչ բարեաց՝ 1. 'Ի նմանէ ակնկալել պարտին խնդրուածովք մարմնաւոր բարեաց, այսինքն է մարմնաւոր պիտոյից, ճոխութեան և մեծութեան (Ա. Թիմոթ. Բ. 7). 2. Ամենայն և եթէ աշխատութեամբ և վաստակեալով, ևս և արդիւնութեամբ Աստուծոյ ստանալ զայնոսիկ (Բ. Օրին. Ը. 18։ Առակ. Ժ. 22). 3. Զամենայն ինչս իւրեանց՝ զորս ունին, և զորս ցանկան ունել, համարիլ միշտ պարգև բարերարութեանն Աստուծոյ, և 'ի գործ ածել զայնոսիկ՝ եթէ հարկ լինիցի, 'ի փառս նորա, 'ի մխիթարութիւն և յոգուտ եղբարց կարաւելոց (Ա. Մնայ-

ԻԹ. 3. 12). 4. Ոչ երբէք սիրել զպարդեան քան զպարդեւոյն, իսկ՝ ոչ սիրել զմոխրութիւնն առաւել քան զԱստուած, որ ետն զայն, ոչ յարել յայն արտիւ, ոչ պարծիլ այնու, ոչ ապաւինիլ յայն, եւ ոչ իսկ զմասն ածել փառաւորիլ այնորիկ ազգաւ (Յովբ. Լ.Ա. 24։ Սաղմ. ԿԲ. 10։ Բ. Օրին. Ը. 17։ Երեմ. Թ. 32). 5. Ղայիլ միշտ 'ի մարմնաւոր ճոխութիւնն իրրեւ 'ի ժամանակաւոր, յապաւանացու, 'ի կորուստեան եւ յանկատար բարիս, զոր եւ փառն առնուցուս զյաւիտենական, զանապական եւ զանեղծ բարիսն երկնից՝ բաշխել առատութեամբ 'ի ոչնչս մխիթարութեան եւ փրկութեան եղբարց (Ա.ռակ. ԻԷ. 24։ Յակ. Ե. 2։ Երեմ. ԽԸ. 36։ Ղուկ. ԺԶ. 9)։

Ընդդէմ պատուիրանիս մեզանչեն Քրիստոնեայք՝ 1. Եթէ մոռացեալ զանմեղսն եւ զանհամեմատ ճոխութիւնն երկնից եւ զմիակ ապրիրն բարեաց ամենայնի զԱստուած՝ ոչ յանձին յախտս ընչաքաղցութեան եւ արծաթասիրութեան, որ է արմատ կռապաշտութեան եւ ամենայն չարեաց (Ա. Տիմ. Զ. 9. 10). 2. Եթէ առ անյագ ցանկութեամբ դիպելոց զինչս՝ փարեցին անիրաւութեամբ. հարստահարութեամբ եւ սահմանութեամբ առ այլս 'ի մարդկանէ (Ա.ռակ. ԻԸ. 20։ Միք. Բ. 2։ Դ. Թագ. Ե. 22—25։ Յակ. Բ. 6). 3. Եթէ յուսացեալ 'ի բազմութիւն ճոխութեան իրանց՝ լինիցին յանձնապաստան, ապաստամբ յՕրինեացն Աստուծոյ, զաստն առ ընկերակիցս եւ ծառայ հեշտութեանց մարմնոյ (Ա.ռակ. ԺԸ. 23. ԻԸ. 11։ Ղէկ. Թ. 26։ Յակ. Ե. 5). 4. Եթէ դրաստիցին զօրհանապազ անդադար եւ անհանգիստ առանց միտ դնելոյ երբէք կատարման եւ այլ Քրիստոնէական պարտաւորութեանց իրանց՝ առ 'ի ժողովել զհարստութիւն ոչ այնչափ յաջողելովն եւ օրհնութեամբն Աստուծոյ, որչափ բնական կարողութեամբ իրանց, ոչ եւ 'ի ոչնչս կարօտելոյ, այլ անձանց իրանց եւ եթէ (Յովբ. ԻԱ. 13։ Ժողով. Բ. 26։ Յակ. Ե. 1. 5։ Ղուկ. Զ. 9. ԺԶ. 19. 25). 5. Եթէ ոչ ոչ դիցեն առաւել այսպէս սրբել զշար ախտն արծաթասիրութեան 'ի սրտից իրանց. եթէ նախանձեսցին քան յաջողութիւնս եղբարցն, ձգտիցեն 'ի վերասել նոցա իւիք. միամ բանիւ՝ եթէ ոչ անկեղծութեամբ սիրեսցեն զընկերս իրանց, և բարիս ուրասցեն նոցա հաւասար անձանց իրանց։

Թէպէտ և զաղաւեամբ Քրիստոսի Փրկչի մերոյ, և հաստատութեամբ նոր և ամենակատարեալ Օրինացն ազատութեան հո-

գեւոր կենաց Աստուածոյ՝ ուրդի առեալ ունայնացաւ հին և անկատար Օրէնքն ծառայութեան մարմնաւոր կենացն հոգւոյ Կրտսերութեան, այսու ամենայնիւ Տաճարաւորաց պատուիրանքն՝ ըստ որում գրեցան մատամբն Բարձրելոյն (Ելից. ԼԲ. 16։ Բ. Օրին. Դ. 16), և գրեցան ոչ որպէս այլք՝ ի ծիրանի և՝ ի խորանի Օրինաց՝ առեալ առ ժամանակ մի, այլ իբրեւ հոգեւոր և մշանջենաւոր և առեալ՝ ի յաւիտեան (Մատթ. Ե. 28։ Հռոմ. Է. 14), զորս պահեաց և երկիր յանձին իւրում՝ ինքն ինքեան եկեալ Փրկիչն, և Աշակերտաց իւրոց հրամանս ետ պահելոյ. ամենայն իրի և մեր հարկ՝ ի մերոյս կայ ընդունել զայնոսիկ յաժարակամ մտութեամբ և ճիշտ պահպանութեամբ՝ իբրեւ նախքանեաց սարքաւորութիւնս Քրիստոնէական կոչման մերոյ, ըստ ամենայնի հպատակեցուցանելով այնոսիկ զկարողութիւնս հոգւոյ և արտից մերոց, և առնելով՝ զոր ինչ միանգամ բաւիւք՝ ի փառս Աստուծոյ, յօգուտ և՝ ի շինութիւն եղբարց, և՝ ի փրկութիւն անձանց մերոց (Մատթ. ԻԲ. 35—40)։

## ՅՕԴՈՒԱԾ ԵՐԿՐՈՐԴ.

Ցերուսաղէմ ազգաց հանդերձ հանդերձ.

Արարիչն երկնից և երկրի հաճեցաւ երեւիլ մեզ արարածոց՝ Հաւատոյն անուամբեամբ, և խոստիցս և սպասելեաց նոցա լինիլ Ցերուսաղէմն ազգանուէր ձայնիցն մրմնջիւն։ Արարչն ելեալ ազգին է՝ ի լրութենէ Հաւատոյ և՝ ի բոլոր արարչական բան փառաբանական անհուն կատարելութեանց Տեառն Աստուծոյ, և ազգերս կարեւորացն՝ որ ըստ հոգւոյ և որ ըստ մարմնոյ պիտոյից, յաստի յայտնանէ ինքնին յայտնի լինիլ, թէ որոյքան կարեւոր են պայմանք. որպէս դի ուղիղ լինիցի և ըստ արժանւոյն՝ մատուցումն ազգին՝ անաստուածոյս ընդունելութիւնն և փրկութեան հաստատումն. դի մի՛ և առ մեզ կրկնեսցի ասասանելիքն ասեղ. «Զի՞ կոչէք զիս Տէր Տէր, և զոր ասեմ՝ ոչ առնէք» (Ղուկ. Զ. 46), դի մի՛՝ ասեմ, ազգութեան յաղթութեամբ մեր առ Նա՝ մեզ ընդ վարձուց կալցուք յանձինս մեր ըստ Արդարութեան կանխաձայնելոյ. «Եւ ազգիք նորա՝ ի մեզ դարձցին» (Սաղմ. ՃԼ. 7), և պատժապարտս յերեսաց նորա եկցուք յարտաքս՝ ի Տաճարէ, որպէս դնան հաւատաւոր միշտ արտաքս՝ զոր զոր ազգութե-

նրն շրթամբք՝ ուրանան 'ի սրտի. և զոր աղօթենն 'ի սրտի՝ ուրանան զբերանով։

Պայմանք հանդիսական աղօթից են՝ 1. Աստուցանել հարկ է զաղօթս յանուն ամենասուրբ Երրորդութեան 'ի բարձունս երկնից յրութեամբ Հաւատոյ, բարեպաշտեալ սիրով, հաստատուն յուսով՝ 'ի բոլոր սրտէ, 'ի հոգւոյ և 'ի մտաց՝ զՀոգին սուրբ յոգնակուութիւն տկարութեան մերոյ հոլովելով, և զՅիսուս Քրիստոս զմիակ Փրկիչն՝ բարեխօս առ Հայր (Յովհ. Գ. 22—24. ԺԵ. 16։ Հռոմ. Ը. 26։ Եբր. Ժ. 22։ Ա. Կորնթ. ԺԴ. 15)։ 2. Նախ քան զաղօթելն հարկ է աղօթասիրին գնալ և սրբել զդիմամբ և խոստովանութեամբ զմիտս իւր և զիսիղճ յանցութենէ, 'ի նախատուէ, 'ի հպարտութենէ, յոխակալութենէ և յայլոց մաղանիթ մեղաց, և ապա խոնարհութեամբ և թոխանաձանոր մատչիլ յայն (Ծննդ. ԼԲ. 26։ Բ. Մնաց. Է. 14։ Ա. Տիմ. Բ. 8։ Դան. Թ. 4—11։ Դ. Թագ. Ը. 33)։ 3. Թէպէտ և յամենայն ժամ արժան է աղօթել և յամենայն տեղիս, սակայն առաւել հանդիսական է Աստուծոյ աղօթել 'ի ժամուկ 'ի դիշերի՝ պահօք, հսկմամբ, արտասուօք, երկրպագութեամբ և սակաւ բանիւք՝ առանց անկանելոյ յանօգուտ շատախօսութեան (Եփես. Դ. 14։ Ա. Տիմ. Ե. 5։ Մատթ. Զ. 5 և 7։ Գործ. ԺԳ. 3։ Ղուկ. ԻԱ. 36։ Երեմ. ԼԱ. 9)։ 4. Յաղօթս յիշատակել արժան է ամէն ամէն զուխտն Աստուածեղէն, զիսուսմունս Աստուծոյ առ Նախահայր Հաւատոյ, զոգորմութիւն իւր ամբաւ, զներողութիւնն բազմազեղ, և զաշխարհակեցոյց հեղումն արեան 'ի խաչի Միածնի Որդւոյ իւրոյ (Սաղմ. ԾԱ. 1։ Երեմ. ԺԴ. 21։ Ծննդ. ԼԲ. 9—12։ Դ. Թագ. Ը. 26։ Եփես. Բ. 14)։ 5. Մեծացուցանել դրարութիւն նորա և զարանչելի գործս, զոչնայ զերախտեաց նորա և զնորհաց, զոմիլ զշնորհարութիւնս նորա և փառաւորել զարդարութիւնս, որովք փառաւորեալն է 'ի յաւիտենից մինչեւ 'ի յաւիտեան (Դան. Թ. 16։ Սաղմ. ԿԶ. 17. ՃԽԳ. 1. Փիլիպ. Գ. 6։ Եփես. Գ. 16), և ապերսել սրտեռանդն փափաքանաք զկատարս հոգեւոր և մարմնաւոր բարիս, խնամ զանուանն Հաւատոյ, զյաւոյ և զսիրոյ, զմոլութիւն մեղաց, զհեղումն շնորհաց 'ի Հաւատացեալս, զմաքրութիւնն երկնային, և զբարութիւն առ 'ի յաջմել խմանալի թշնամւոյն հոգւոց մերոց, եւայլն։

Մինչ ձեռնունայն գտանին 'ի շնորհացն աղօթաւորք, և ա-

ընդունելի Աստուծոյ աղօթք նոցա։ 1. Եթէ թերի իցեն Հաւատոյ նոցա, հոգմակոծեալ յոյս և ստուգեալ սէր Աստուածպաշտութեան, որ թէեւ խնդրեն, այլ շարաշար խնդրեն. և յոյս ասէր ոչ առնուն (Յակ. Ա. 6. 7. Դ. 3)։ 2. Եթէ հանապազորդեն 'ի մեղս մահացու, եթէ սիրտ խրատոյ լցեալ է ոչնչէս անարգնութեամբ, եթէ մոռացեալ զԱստուած՝ ոչ միտ դնեն Օրինաց նորա, և եթէ անարժանութեամբ մատչին 'ի պաշտաման (Սաղմ. ԿՁ. 18։ Եսայ. ԾԹ. 2։ Երեմ. ԺԴ. 10 և 12։ Զաք. Է. 11—13։ Մաղ. Ա. 7—9)։ 3. Եթէ ոչ ունին կարեկցութիւն և անչիշաչարութիւն առ նեմանս իրեանց, մանաւանդ առ աղքատս, և եթէ կռապաշտեն զօրհնապաղ՝ զմարմին և զաշխարհային բարս նախասահմանս առնելով քան զոր բաւեցին և ետ զնոսա՝ զԱստուած, և եթէ պատրաստին միշտ 'ի շարաժամել և 'ի հեղուլ զարիւն եղբարց՝ (Եսայ. Ա. 15։ Երեմ. ԺԱ. 11—14։ Ասակ. ԻԱ. 13)։ 4. Եթէ լի են ախտիւ հպարտութեան, եթէ կեղծաւորեն 'ի Հաւատս և 'ի գործս. և որ առաւել բարեմեղին և գաղտեցի Աստուծոյ՝ եթէ զանձինս իրեանց միայն ունելով առ արդարս և առ հանցս Աստուծոյ՝ զայլս 'ի մարդկանէ զատուցեն իբրեւ յանցաւորս և անարժանս ողորմութեան նորա, որպէս Փարիսեցւոյն էր ամբարութիւն (Յովհ. Ի. 8 և 9. ԼԲ. 12—13։ Ղուկ. ԺԸ. 11. 12. 14)։

Այսչափ ինչ համառօտիւ գիտացեալ յաղագս ուղղութեամբ և լաւ արժանաւոր աղօթելոյ՝ մատիցուք արդ 'ի բացատրութիւն երեւելի մասանց Տէրունական աղօթիցն, զոր ինքնին Փրկիչն ասացեալ Աշակերտաց իւրոց, և նոցաւ՝ մեզ։

1. «Հայր մեր՝ որ յերկինս ես» կարգամբ՝ հեռեւելով Մատթէին. իբր զի ոչ ոք յանդգնէր կոչել այսպէս զԱստուած՝ եթէ ոչ էր Միածին Որդի Աստուծոյ եղեալ «Անդրանիկ 'ի մէջ եղբարց բազմաց» (Հռոմ. Ը. 29)՝ մարմին զմերն զգենլով, և մեր անդրէն զնա 'ի ձեռն մկրտութեան։ Դատելոյ Եւայի ծնանին յաշխարհս զծառայս և զորդիս բարկութեան, Եկեղեցին ծնանի զորդիս՝ ազատութեան և շնորհաց։ Ծառայութեանն ծնունդ կատարի թարց կամաց մերոց. իսկ ազատութեան ծնունդ՝ մերովք կատարի հաճութեամբ։

Բաղում՝ անգամ կոչեմք զանուն Հօրն երկնաւորի. այլ մինչդեռ թարմատիմք 'ի խորհուրդս և 'ի գործս երկրաւորս, մինչդեռ հպատակեցուցանեմք կամաս զանձինս ունայնութեանց

և արարածոց, և հանապարհորդեմք կեալ մարմնով՝ որպէս և ծնաւ-
քըս 'ի մարմնոյ (Յովհ. Գ. 6), զո՞ւրախութիւն մասն ընդ Հօ-
րըն երկնաւորի, և զիա՞րդ կարեմք գնել զանձինս 'ի կարգի որդ-
ւոց նորա հաւատարք ընդ Միածնին՝ «Որ է լոյս փառաց և նկա-
րագիր էութեան նորա» (Եբր. Ա. 3)։ Եթէ կարդասցուք զա-
նուն Հօրն երկնաւորի՝ ո՛չ առ 'ի զոհութեամբ խառնուիլն ընել
զնարհաւ որդեգրութիւն մեր, այլ (եթէ հնարէ ասել այսպէս)
առ 'ի պատրել այսու գրաբերգութիւն նորա, միթէ կարասցո՞ւք
գոչմամբ աղաղակի մերոյ զինաթափ զարդարութիւն նորա առ-
նել, որ թանէ զփրան և զերիկամունս. ո՛չ բնաւ. վասն զի պա-
տասխանի արձակէ առ յանդուգն աղաղակս որդւոց աշխարհի և
մարմնոյ՝ ասելով. ո՛չ եղէց ձեզ 'ի Հայր. մինչչև ո՛չ լինիջիք
ինձ դուք յորդիս հոգւով և սրտիւ. վասն զի դուք 'ի հօրէ 'ի սա-
տանայէ էք, զորոյ զգանկութիւնս կամիք առնել (Յովհ. Ը.
44). իսկ ես եղէց ձեզ որպէս Տէր խիստ ասէս ծառայից, և
որպէս գառաւոր անաչառ ասէս յանդգնաւորաց։

Այսուցուք ուրեմն, զի Աստուած մեր եղիցի այնպէս, որպէս
անուանեմք զնա. 'ի բաց կացցուք յերկրաւորացս յամենայնի, և
հաստատեցուք զյոյս մեր 'ի Հայրենիսն երկնից. և յայնժամ ան-
դադարութեամբ կարդասցուք. «Հա՛յր մեր՝ որ յերկինս
ես». որպէս զի առանց բարկանալոյ լուիցէ պաղատանաց մերոց։

2. «Սուրբ եղիցի անուն քո». Ահա աղերս առաջին։ Անուն
Աստուծոյ սուրբ և ամենասուրբ է յերկինս և յերկրի. իսկ զի
նովաւ կատարին փրկարար խորհուրդք Եկեղեցւոյ. նովաւ կնքի
հաւատարմութիւն խոստմանց մերոց և երդմանց. և զնոսա գնեմք
'ի հիմն և 'ի սկիզբն ձեռնարկութեանց մերոց։ Սմին իրի և պատ-
ուիրան աւանդեցեալ երկիւղածութեամբ պաշտել զանուն Աստու-
ծոյ և խնայութեամբ 'ի կիր արկանել. «Մի՛ առնուցուս զանուն
Տեառն Աստուծոյ քո 'ի վերայ անառեայ» (Ելից. Ի. 7)։ Յայս
ասէս խոստովանելով զանձինս անարժան պահպանս երկնաւոր
զանձուս այսոքիկ՝ աղերսեմք զՀայրն երկնաւոր, որպէս զի 'ի
յաւիտեան ինքնին սուրբ անուն նորա՝ արքեալի և 'ի մեզ, որպէս
զի շնորհալի զօրութեամբ իմն կարդասցուք զայն բերանով, և հա-
ւատարմութեամբ երևեցուսցուք զնոյնն գործովք. և «Այնպէս
լուսաւորեսցէ լոյս մեր առաջի մարդկան, որպէս զի տեսցեն
զգործս մեր բարիս, և փառաւորեսցեն զՀայր մեր՝ որ յերկինս
է» (Մատթ. Ե. 16)։

Այլ զի՞նչ. եթէ լեզու աղօթականին՝ որում առաջի կոչ տրել Աստուծոյ կամ առաւելապէս տրել զինքն նովաւ, ո՛չ է տակաւին տրեալ յախտէ վայրագաշունութեան, շարախօսութեան, սատանութեան և զրպարտութեան. զի՞նչ, եթէ ցանկութիւնք սրտից մերոյ հակառակ կան շրթանց մերոց, եթէ զձայն աղօթանուէր երգոյ մերոյ և զիսառատութեանց խոովեցուցանեն հնծութիւն տնանկին և բոլոր աղբատին բարձրացեալ 'ի սակս անիրաւութեանց մերոց յերկինս (Յովբ. ԼԳ. 28), որով բարեբանեցար ո՛չ զԱստուած զՀայրն որդոյ, և հնչուցանէ «Զայն արեան եղբարց մերոց» (Ծնանդ. Դ. 10). որովք ո՛չ փառաւորեցար զԱստուած զբաստաւորն զրկելոյ. զի՞նչ շահ ասի, զի կրեմք 'ի լեզուի զփառս Աստուծոյ, իսկ լեզուք հայեցեալ 'ի գործս մեր՝ ապշութեամբ հարցանէ մին ցմիւսն. «Ո՞ւր է Աստուած նոցա» (Սաղմ. ՀԸ. 10)։ Հարկ է ապաքէն՝ որքան հնար է, «Լուսաւորեալ զլեզուս մեր 'ի շարութենէ և առնել զարդի» (Սաղմ. ԼԳ. 14—15) բոլորով սրտիւ մերով, և յայնժամ ո՛չ ընդունայն ինչ եղիցի աղօթեալս մեր «Սուրբ եղիցի անուն քո»։

3. «Եկեսցէ արքայութիւն քո»՝ է երկրորդ աղերս որդւոյն արքայութեան։

Արքայութիւնն Աստուծոյ է՝ «Արքայութիւն ամենայն յաւիտենից» (Սաղմ. ՃԽԴ. 13). և յառաջագոյն եւս՝ մինչչեւ էին առեղծեալ զարք, թագաւորէր Աստուած յանեւուրբ 'ի յաւիտենականութեան անդ իւրում։ Արդ եւս յայտնի առնէ նոս 'ի ժամանակի դիւրանութիւնն Արարչական և Հայրական յարքայութեան բնութեան։ Եւս և զմեր զՀօրն և զԹագաւորն յարքայութեան շնորհաց. այլ այնպէս, զի տեսանեմք զնա ասասնար «Իբրեւ բնդ հայելի օրինակաւ» (Ա. Կորնթ. ԺԳ. 12) և եթէ։ 'Ի փախման դարուց երկրորդն արքայութիւնքս ժամանեալ ակաւ առ ակաւ 'ի կէս նախասահմանեալն կատարելութեան եղիցին միմիայն արքայութիւն փառաց, յորում յայտնեսցի բնութն որդւոյն արքայութեան զէմ յանդիման, և վերացուցեալ զնոսա փառաց 'ի փառս։ Իսկ արդ 'ի հանդերձեալ արքայութենէն՝ զոր այսպէս պատրաստեալն է Աստուած 'ի փայելս մարդկան, յորժամ յայտնեսցի փառաւ՝ զրկելոյն բաղումք, և արտաքս մնալոյ են կոչեցեալքն ամենեքին. ընտրեալքն և եթէ, եւս և որք ունին յանձինս զաւրին արքայութեան՝ հրաւիրեալ են «'Ի ժա-

անդել զպատրաստեալն նոցա զարբայութիւն 'ի սկզբանէ աշխարհի» (Մատթ. ԻԵ. 34)։ Սմին իրի հայցելով արդ զարբայութիւնն Աստուծոյ՝ ջերմեռանդութեամբ փափագիմք, զի լիցուսցէ Աստուած «Զսակնկալութիւն արարածոց՝ որք յայտնութեան որդւոցն Աստուծոյ սպասեն» (Հռոմ. Ը. 19), և արժանս արասցէ զմեզ վայելչապէս հանդիպել այսմ ամենափափագելի իրողութեան։

Մեր փափագիմք արքայութեան Աստուծոյ և գիտեմք, զի «Թագաւորութիւնս այս ոչ է յաշխարհէ սատի» (Յովհ. ԺԸ. 36). այլ միթէ բազումք 'ի մէնջ 'ի ցնորս ծանծաղամտութեան ո՞չ կառուցանեն սատանայ իւրաքանչիւր որ զիւր մասնաւոր թագաւորութիւն։ Այլ զորութեանց սրով խորհին դրաշմել սոյլոյ զօրինս երկիւղի և անարգութեան. արք՝ որ առ իմաստունս զանձինս ունին, ձգտին իշխել զրշաւ 'ի վերայ կարծեաց սոյլոյ։ Վաղվաղկոտն երադէ օրէնսդիր լինել հեշտութեանց և ցանկութեանց մարմնոյ. ընչաբաղձն կերտէ զթագաւորութիւն խաւարին, և ժողովէ զանդոյս հպատակս 'ի միթերանոցս իւր։ Փափագիմք արքայութեան Աստուծոյ և հաւատամք, թէ ընդ այն ածէ զուն նեղ և ճանապարհ անձուկ (Մատթ. Է. 14). այլ միթէ ո՞չ բազում անգամ յաւուրեալ քան զրնկերս՝ փութամբ ունիլ զճանապարհն լայն և մտանել ընդ դուռն ընդարձակ։ Խորհիմք կալ հանապազօր յաջ կողմն այլոց՝ ո՞չ զմտաւ ածեալ, թէ եթէ այսպէս երթիցուք ընդ առաջ Տեառն՝ դարձցուք բրնականարար 'ի ձախս անդր նորա կողմն։ Տենչամք ժառանգել զարքայութիւնն Աստուծոյ, և լուար թէ «Բռնաբարի այն» (Մատթ. ԺԱ. 12). այլ արդ ցուցանե՞մք զորպիսի և իցէ յանձինս զմիտն առ 'ի յաստիրակել զոյն. և միթէ ո՞չ յայն տակս և եթէ աղօթեմք, որպէս զի զծանրութիւն մեծի զործոյս զանձամբն Աստուծոյ և եթէ արկցուք։

Ղեմանեան ապարէն պաշտեսցուք զԱստուած, որպէս նոխանձիմբս իրերաց 'ի տիրողութեան յաշխարհս. երցուք ընդ առաջ արքայութեանն Աստուծոյ հանապարհաւ խաչի և հեզութեան. և յայնժամ աղօթքն՝ որ վասն զապատեան նորա, ո՞չ եղիցի երեսպաշտութիւն։

4. «Եղիցին կամք քո՝ որպէս յերկինս, և յերկրի» է ասելս երրորդ։

Աստուած մեր յերկինս և յերկրի առնէ՝ որպէս և կամի, զա-

մեծայն. «Զի կամայ նորա ոչ որ կայ հակառակ» (Հռոմ. Թ. 19)։ Արարածն՝ թէ և զարդարեալ անձնիշխան կամօք, այլ զերկնակութիւն իւր զրնաւ 'ի կամս և ի թիկ Արարչին իւրոյ եղեալ՝ ազերսէ ։ որպէս զի բարի և կատարեալ կամք նորա հնազանդեցուցէ ընդ իւր և զայրիկար և զանկատար կամս իւր, և յաջողեցուցէ «Զկամելն և զառնելն» (Փիլիպպ. Բ. 13) բան հաճութիւն։ Սակայն զի՞նչ իցէ կամքն Աստուծոյ երկրի՝ որպէս յերկինս։ Հրեշտակքն են երկինս, մարդիկ երկիր։ Իսկ արդ՝ յորժամ երկրաժինքն պաշտեսցեն զԱստուած ոգեղէն բարբարեալ սիրով և ոգեղէն անդիմադրելի նախանձու՝ որպէս և հրեշտակքն, եղիցին յայնժամ կամք նորա՝ որպէս յերկինս, և յերկրի։ Եկեղեցին Հաւատացելոց է երկինք յերկրի, խաւարաբարբ ամարիրեան աշխարհն՝ երկիր. յորժամ կորուսեալ ոչխարք յուիցեն և ծանիցեն զիրիկարար զձայն զՀովուին, և որք խարխարեանն 'ի խաւարի և 'ի սուեբս մահու՝ սեռանիցեն զլոյսն մեծ, կատարեսցին յայնժամ կամք Հօրն լուսոյ և յերկրի՝ որպէս յերկինս։ Հոգին է նմանութեամբ իմն երկինք 'ի մարդն, մարմինն՝ երկիր. յորժամ «Ղերբին մարդն մեր հաճեալ ընդ օրէնս Աստուծոյ՝ հնազանդեցուցէ նմին զօրէնս անդամոցն» (Հռոմ. Է. 22—23), և մարմինն Մեռայէ՝ որպէս և հարկ էր այնմ զոլ, այսինքն է արքանեակ հղարատ, եղիցին յայնժամ կամքն Աստուծոյ Հոգւոյն և յերկրի՝ որպէս յերկինս։

Բազում անգամ խաբիմք զկամսն Աստուծոյ, այլ հարկութիւ ոչ ապաւել քան զայն խորհիմք յառաջ վարել զմերս։ Փաստարիմք տեսանել զերկինս լրութեամբ կամսն Աստուծոյ՝ նըմանեալ երկնից կամ՝ եղեալ նոյն իսկ երկինք, այլ սակայն առնե՞մք սկիզբն մեծի փոփոխութեանս այսորիկ յանձանոյ մերոյ։ Սէ՛ր հրեշտակացին՝ վասն զի բարձր ես քան զմեզ, ոչ համարձակիմ խնդրել զքեզ. սէ՛ր Քրիստոնէական՝ ո՞ւր հանդչիս. նախանձն բարեպաշտութեան՝ ո՞ւր ներգործես. յո՞ բնակիս՝ ո՛ խոնարհ հպատակութիւն կամացն Աստուծոյ։ Փոխանակ համբառնալոյ երկրէ երկինս և 'ի Քրիստոնէական վարուց առ վարս հրեշտակացին, մինչ ոչ տեսանի անարգութիւն հոգւոյն առաջի մարմնոյ, և կրծանուումն յարշնարանեալ արբայութենէ շնորհաց յապատամբ իշխանութիւնն ապականացու բնութեան։ Ինչո՛ւ ապաքէն նախ զշար կամս անձանոյ, և ապա յաղթիս կացցուք յաղաղս բարի կամացն Աստուծոյ 'ի մեզ։

Երկրին խնդրուածք Տէրունական աղօթքին՝ զորոյ խօսեցար համառօտիւ, հայցին 'ի ժամանակաւորէս առ յաւիտենականն. իսկ չորեքիսին՝ զորոյ խօսելոյ եմք զկնի խնդրուածք, առ ժամանակաւորն առաւելապէս. սակայն 'ի միտ առնուլ արժան է, թէ խոհական կամ անխոհեմ փութով մերով զժամանակաւորէն և եթէ՝ շահիմք կամ զհանութիւն կամ զբարկութիւն Յաւիտենականին։

5. « Զհաց մեր հանապազորդ տուր մեզ այսօր »։

Ամենայն և եթէ լինել արժան է հոգոյ մերոյ զերկրաւոր բարեաց։ Կենանքն յայն սակս բարին է, զի նոքա միայն հնար է ժառանգել զերանութիւն զյաւիտենականութիւնն. և յայս սակս բարի են միայն ինչք, որք ընտն զանէս կենաց մերոյ։ Որ ոչ գիտէ, թէ որչափ ինչ պարտի գործել յաղագս յաւիտենականութեան՝ չունի նա զժամանակս բաղում առ 'ի հոգալ զաստուածս։ Բարեբարդարար Աստուածութիւնն բարի բառնայ 'ի մէնջ զաշխատութիւնն յետին, յորժամ յանձն առնումք զառաջինն. « Խնդրեցէք նախ զարքայութիւնն Աստուծոյ, և այն ամենայն յաւելցի ձեզ » (Մատթ. Զ. 13)։ Այս սակս հաւատարիմ որդիքն Աստուծոյ խնդրեն ոչ 'ի ծառայից, այլ 'ի Հօրէ. խնդրեն ոչ անտի պատուանաց կամ անպիտանացու չինուղագիւտս, այլ հայր. հայր ոչ անուշիկ, այլ անդարար. ոչ 'ի ժողովել 'ի շտեմարանս ամս բազումս, այլ այսօր և եթէ 'ի սեղանս՝ բաւական է ասելով՝ աւուրն չար իւր (Մատթ. Զ. 34). սակայն և չափաւոր հայցուածս վասն այսորիկ. ոչ այնչափ զմարմնաւորսդ հայէ խորհին, որչափ զկենդանարար հայէն զայնմանէ, որ բուծանէ և զօրացուցանէ զէական մասն մարդոյ. վասն զի « Ոչ միայն հացիւ կեայ մարդ, այլ ամենայն բանիւ՝ որ ելանէ 'ի բերանոյ Աստուծոյ » (Մատթ. Զ. 4)։

Մինչ համարիցի՞մք զդալ զոնէ ամենեքին մեք զմարկաւէտ բաղց բանին Աստուծոյ, մինչչև եմք 'ի ձեռս բերեալ 'ի պէտս այնորիկ զկերակուր պատշաճ. մինչ ո՞չ հեղգանանք բաղում անգամ զբազմն հոգեւոր ագահութեան մարմնոյ, որ ոչ այնչափ 'ի խնդիր է յաղեցման, որչափ որկորաութեան. ոչ այնչափ հանդերձի, որչափ զարդուց. ոչ առողջութեան առ 'ի պէտս աշխատութեան, այլ փոսիկութեան և պարապորդութեան։ Հոգայեալ զսովորական պէտս զժամանակաւորս մեր, երեւակայեմք այնուհետեւ և զդէպս և զկարիս անասնական 'ի զարոյ ամս. և վերջապէս ոչ բաւական համարեալ՝ զի վշտացուցանեմք զԱստ-

ուած աւելորդ ցանկութեամբքս, թողուցեմ նաև զնա, և դիտեմ նորոք հանդերձ առ զօրաւոր իշխանս աշխարհիս, իմում առ խորհրդութիւնս և առ անիրաւութիւնս, և ընդ յանդգնութիւնն խառնեմ և զանհաւատութիւն։

Բարեխառնեսցուք ուրեմն զգոնութիւնս մեր, և փարեսցուք խոհականութեամբ յընտրութիւն կարգաց մերոց. իբր զի խնամուն չափաւորութեան և եթէ իրաւամբ խնդրել զԿոյս «Ի հայկն կենդանոյ» (Յովհ. Զ. 35)։

6. «Եւ թող մեզ զպարտիս մեր, որպէս և մեք թողումք մերոց պարտապանաց»։

Ո՞րքան բազմութիւն պարտս ստացոյ եմք Աստուծոյ. նախ՝ պարտս ժառանգական։ Առաջին Դատաւորն մեր զնեաց զպարտքն արդիւնաց՝ հատուցեալ ոչնչի 'ի զին զկիսատեալ իւր և զաներնդոյ իւրոյ. և յայս ասեն ծնանիցիք ամենեքին պարտական։ Երկրորդ՝ ստացոյ եմք և պարտս անձնական։ Աստուած անիրաւութեամբս մեզ բաշխէ զմեծագին ստացանդս զհոգևորս և զմարմնաւորս «Իւրաքանչիւր ըստ իւրում կարի» (Մատթ. ԻԵ. 15). որոց բարեգործս և 'ի փառս Աստուծոյ գործածութիւնն համարիս շահ, զոր և պահանջէ 'ի մէնջ. մէն մի գործ անիրաւութեան, մէն մի սխալաւոր ցանկութիւն, մէն մի նենգաւոր խորհուրդ 'ի հանար արկեալ 'ի տուժարի Աստուածային՝ կազմեն զանհագին քան հանար պարտուց մերոց, զորս ո՛չ է հնար վճարել։ Այսպէս ոչոր ամենայնի փոխանակ ստացիր դնէ նա մեզ պարտական հաշտիս։ «Եթէ թողուցուք մարդիկն զյանցանս նոցա՝ թողցէ և ձեզ Հայրն ձեր երկնաւոր» (Մատթ. Զ. 14)։ Սակայն իրրև առ կատարումն նոցա բարեխնամն զգաչիս՝ զառաջնեան նորս ամենայ ընդ մեզ զպարտաւորս նորս մեր՝ ցուցանեմք բարեգթութեան նորս և զդիմութիւնս մեր. և եթէ այսու օրինակաւս ամենայն որ 'ի մէնջ միջնեալ ցանի՝ փութայր ընդել զդարութիւն մարդկանն յանդիման ոչոյն Աստուծոյ, պակասիցէ հարկաւ ոչնչանալ և ասիցաւ առ ասկաւ ձեռագիրս յանցանաց մերոց, մինչեւ զերջանիս փոխարարեալ թողութիւնք ամենիցն և իրաքանչիւրոցն արդիւնաւորիցին զշամանչարհական իմն արդարութիւն՝ զոմն անձնական զոմանցն Աղօթարանին, և անարատաւորեալ երանութիւնն՝ որոց որդեգրեցան։

Զիարդ՞ արդեաք զոյգերս իմն՝ ստացեալն թերեւս, զի անուանման բարեգթութիւնն թողուցու և ստացոյ արդիւնքն զյանցանս և զմեղսութիւնս ոչարս մանչիսանացուաց. թէպէտ և բաշխեալ

իսկեն նորին, այլ միթէ չիցէ՞ եւս մեզ փայլեալագոյն և թողութիւն զամենաչնչին յանցանս եղբարց մերոց։ Հաւատի է, թէ բարեգթութիւնն Աստուծոյ անսպառ է. և յայս տակս կամի, զի ո՛չ մի ոմն միայն 'ի մէնջ, այլ ամենեքին հաւասարապէս հաստատ արդարութեան. և 'ի շնորհելն միում ումեք 'ի մէնջ՝ որպէս թէ հայցէ շնորհել զնոյնն և եղբարց մերոց։ Ո մարդ՝ զոր չարժիս և կեաս ողորմութեամբ Տեառն. եթէ մերժեսցես զնորա քեզ զմիջնորդելն յաղագս եղբարց քոց, ընդունիցի՞ նա քո փոխն զմիջնորդութիւն որդւոյ իւրոյ. ո՞չ ապաքէն յայնժամ 'ի հայցուածին «Ասան թողլոց զպարտս մեր»՝ «Որպէս և մեք թողումք պարտապանաց մերոց»՝ դրոշմեսցուք ինքնին և զմեր զանազարութեան մերոյ։ «Անողորմ դատաստան լինելոց է այնմ, որ ո՛չ առնիցէ զողորմութիւն» (Յակ. Բ. 13)։ Մի հանցուք ուրեմն 'ի մտաց նախ ողորմել, և ապա խնդրել ողորմութիւն. վասն զի «Երանի է ողորմածաց, զի նոքա զողորմութիւն գրասցեն» (Մատթ. Ե. 7)։

7. «Եւ մի տանիր զմեզ 'ի փորձութիւն»։

Ընդունայն իմն ասաքէն լինէր թողութիւն մեզաց, եթէ զարհանապաղ դարձ առնէաք անդրէն 'ի նոսա տկարութեամբն առաջին։ Սակայն զիա՞րդ զժուարին է ո՛չ զթել երբէք 'ի հանապազորդեան մարտի ընդդէմ մարմնոյ, աշխարհի և այսոց շարութեան։ Անիծն մանչէ, ապուէաք խորամանկեն։ Եթէ լրջմտութեամբ հակառակ զինեմք խորամանկութեան ապուխաւն, յաղթահարիմք 'ի զօրութենէ առիծուն. եթէ ընդդէմ դնեմք կատաղութեան մրոյն զղջութիւն, պատրիմք 'ի խորամանկութենէ միւսոյն։ Զիր մեզ յոյս այլ, բայց եթէ զի միմիայն յաղթահարեսցեն թշնամեաց մերոց ամենայնի՝ հաճեսցի մի թողուլ յառնել 'ի մեր վերայ յարձակմանց առաւել քան որչափ զդէմ ունիլ կարեմք, կամ առաստաձեռնել 'ի մեզ զայնչափ զոյժ և զհանճար, որչափ կարեւոր է յաղագս կատարեալ յաղթութեան։

Աղօթեմք, զի մի անկցուք 'ի փորձութիւն. այլ միթէ ո՞չ անձամբ դիմեալ երթամք 'ի փորձութիւն, մինչեւ է այնոյիկ հասեալ 'ի վերայ մեր։ Աղօթեմք, զի մի ծանրասցի 'ի վերայ մեր մարմինն. այլ միթէ ո՞չ ինքնին դարմանեմք առաւել իմն խնամով, ջերմացանեմք զթշնամին մեր, և ապաս հարկանեմք նմին՝ իբրեւ բարեկամի և տեառն։ Աղօթեմք, զի մի շլացուցեալ թակարդեսցէ զմիտս մեր աշխարհ. այլ միթէ մեք ինքնին ո՞չ հաստա-

ունմք պատկիս մեր առ 'ի լսել զապականարար լուրս այնորիկ. ա-
ղօթեմք, զի մի զայթակղեցուցէ զմեզ ակն. այլ միթէ ո՞չ մեք
ինքնին բեւեռեմք զայն առ դեղեցկութիւնս երկրաւորս։ Ո՞րպիս-
եաց ուրեմն ընդդէմ փորձութեանց աղօթեմք, եթէ ո՛չ՝ ընդդէմ
անձանց իսկ մերոց. իբր զի «Խրատանչիւր որ փորձի առ 'ի
յիւրոցն ցանկութեանց ձգեալ և պատրեալ» (Յակ. Ա. 14).
զմէնջ ուրեմն կախեալ կայ շանկանել 'ի փորձութիւնս, իսկ ա-
ղօթիւք հարկ է զառաջս ունել՝ որոց ներշնակ կամաց մերոց զան
'ի մեր վերայ փորձութիւնք։

8. «Ամլ փրկեա՛ զմեզ 'ի չարէ»։

Զ-ոանի վերջագոյն տեսակ իմն չարի յապականեալ բնու-
թեան, որ ո՛չ այնչափ 'ի բնութեան իրին է, որչափ 'ի կարծիս
մեր, յարտաքին գործողութեան և յաճանցեալ տպաւորութեան.
որ և ո՛չ է միշտ խորագոյն պատուհասի Աստուծոյ, այլ
բազում անգամ պատժական գաւազան սիրոյ, զարման դառն,
կամ այլազգ խօսելով՝ բարութիւն կանխաւնաս։ Զբաւորութիւն,
ախտս, հեծութիւն, անարդանք, հալածանք՝ չարիք ասին և
հանապին, եթէ չիցեմք մեր ինքնին պատճառ. այլ զդողանի
հարկանի բնութիւնս մեր տկար յերեւութիցն անգամ նեղու-
թեանց։ Ո՞րան ուրեմն մեծ է կարեկցութիւն Հօրն երկնաւորի,
որ հրաման տայ մեզ խնդրել յինքեանէ պատապարել զմեզ յե-
բեւութիցն անգամ չարին, և փութալ հալածել զառաւելս ան-
գամ նուազունս երեւեալ 'ի հոգւոյ կենցաղոյս։

Իսկ արդ՝ քանի՞ ապաշնորհ և յանդուգն լինիմք, եթէ զայս-
չափ զկարեկցութիւնն նորա 'ի չար անդր վարիմք. զի՞արդ ան-
գին է բազմութիւնն՝ որոց աղաղակեն առ Աստուած յաղագս
թշուառութեանց, զորս ձեռօք իւրեանց գործեցին. մի ոմն
դեղխութեամբ խանդարեալ զառողջութիւն անձին՝ զոյ 'ի տա-
ճարն հեծել 'ի վերայ ախտից իւրոց. միւս ոմն աղերսէ զԱս-
տուած դատել զարտաքսեալս իւր, առաջի որոց դատի ինքնին 'ի խրդ-
ճէ իւրմէ. և այլ ոմն ողբոյ զաղքատութիւն իւր, զոր առասյա-
ջանութեամբ իւրով։ Արժան ինչ իցէ այսպիսեաց խնդրել փրկ-
կութիւն 'ի չարէն, քան թէ գոհանալ զնախախնամութենէն, որ
կանուխ ժամանակս յանդիմանէ և յուղղութիւն ածէ զսիրեալս
չար։ Խնդրութեամբ ապարէն տարցուք զպատուհասն, եթէ ինք-
նին պատճառ եղաք այնմ. իսկ եթէ անմեղս իցեմք, աղօթեսցուք
առանց ձանձրանալոյ՝ յաղագս փրկելոյ զմեզ 'ի թշուառութե-

նէն. զսան զի «Գիտէ Հայրն մեր երկնաւոր՝ զինչ պիտոյ է մեզ» (Մատթ. Զ. 32)։

Ստուգիւ՝ Հայր երկնաւոր՝ ոչ տես որդւոց քոց զբար փոխանակ հոգի, և ոչ զօձ փոխանակ ձկան (Մատթ. Է. 9)։ Եւ մեր թէեւ «Կամք յաղօթս, (այլ) որպէս արժանն իցէ՝ ոչ գիտեմք» (Հռոմ. Ը. 26)։ Եւ եթէ վաղվաղակի եւս ծանիցուք զթերութիւն աղօթից մերոց, այլ առանց քո ոչ երբէք ժամանեսցուք 'ի կատարելութիւն այնոցիկ։ Ուղղեա զու ինքնին զայն իրրեւ զիտունկ տուաջի քո. և յայնժամ ոչ միայն շրթունք մեր, այլ և միտք, սիրտ, իրանք, գործք, և հոգի և մարմին և ամենայն ոսկերք մեր աղաղակեսցեն «Տէր Տէր» (Սաղմ. ԼԴ. 10)՝ «Զի քո է արքայութիւն և զօրութիւն և փառք յաւիտեանս. ամէն»։

## ՑՕԴՈՒԱԾ ԵՐԲՈՐԴ.

Երկրորդ գալուստ Յիսուսի Քրիստոսի—Յարութիւն հաւատացեալաց—Յաւիտենական կեանք արդարոց—Յաւիտենական տանջանք մեղաւորաց։

Զանազանութիւն մարդկային հոգւոյ՝ յայտնապէս մեկնեալն և ապացուցեալն 'ի հին և 'ի նոր Կտակարանս՝ ընդունի և խոստովանի որ եւս և բնական համոզմամբ, եթէ ուշի ուշով մտադիր լինիցի և հաստատ գոյութեան և բնութեան իրին՝ որ կեաց եւ որ մեռանի 'ի մարդն. իրր զի որ մեռանի՝ է մարմին թանձր և տեսանելի. իսկ որ կեաց, կամ որ կենդանի առնէ զմարմինն՝ է նուրբ և անտեսանելի ոգի՝ հոգի սովորաբար 'ի մէնջ կոչեցեալ։ Մարմին յայտ առնէ ինքնին զմահկանացութիւն իւր. ըստ որում հատեալ բաժանի փորձիւ 'ի մասունս մասունս և ապականի. իսկ հոգին ոչ միայն զի ոչ երեւեցուցանէ ամենեւին նշմարանս ինչ բաժանելութեան և ապականութեան, այլ 'ի խորհրդական կարողութեան իւրում բոլորովին հակառակ այնմ գյատկութիւն, որ զգրուեալ գաղափարս զիրաց ժողովէ յանբաժան և յանչափոխ միութեան. և գործողութիւն այսպիսի՝ հոգւոյն և եթէ յատուկ է. այլ ամենայն տարերայնն՝ որ ընդ բաժանմամբ անկանին, զուրկ ելով յայնմանէ՝ մարմինն զեւ 'ի կենդանութեան անդ իւրում մեռանի, և որպէս յայտ է՝ ոչ ասկաւ անդամ, ըստ այլ և այլ

մասանց իւրոց, 'ի բաց ձգելով յինքենէ հանապազօր զման ինչ զոյութիւնս իւրոց ցանաբեալ. այլ հոգին յամենայն 'ի ժամանակս որչափ կեայ' կրէ յինքեանս յարատեւապէս զմի և զնոյն կենդանութիւն։ Արմատն ապրի կամ մահանալոյ կենայն լինի' որպէս թէ ասասցուս. մասն դի զօրութեամբ հոգւոյն շարժի' առաւել կամ ակաս ձեռնալ միշտ զնոյնն մեզկութեամբ իւրով. այլ հոգին և ուղղանար' ուր 'ի վերուստ ազատոյ կամ' 'ի ինոյ գաղարի մարմնոյն գործունէութիւն։ կենայ յարատեւապէս և գործէ' անկարօտ ամենեւին մարմնոյն գործակցութեանն գոլով։

'Ի վիպոյս անմահութեանն հոգւոյ մարդկան ասել հնար է զընտիր և զանմեղագոյն մասն մարդկային սեռի, և զոգոյս համայն ոչչնալ 'ի յաւէտ կրթելոյն մինչեւ ցիեռասիրութիւն. այնպէս դի յայսմ մասին մոլորութիւնք անգամ ոմանց 'ի նոցանէ ապացուցանեն կերպիւ իմն զշնչարարութիւնս զոյս։ Թէպէտ և զդրայական իմն ունէին նախնիք Եգիպտացիք և այլ Հեթանոսք' գաղափարս կենացն հանդերձելոյ, թէպէտ և անհեթեթ իմն էին և են հիւսուածք բանից' զորս 'ի կիր առնուն այդ եւս կատարեալ զգալոյ աշխարհէն, թէպէտ և սոսկալի իմն է իշխանութիւն հոգւոյն խառարի և շարութեանն' ընդ որում ունին զոմանս յայնցանէ, առ որս բարեգործութիւն համարեալ է տալ կենդանւոյն զանձն յոյրումն 'ի սէր կամ' 'ի պատիւ մեռելոյն, այսու ամենայնիւ 'ի խառնութիւնս որ և 'ի շփոթ գաղափարս և 'ի զգայմունս յոյսանկ, 'ի հաստատութեան և 'ի սիրոյութեան անանուկան և գաղտնական յատկութեանս 'ի վերայ մարդոյ, տակաւին իրրեւ անթեղն 'ի կոյս մոլորոյ թագուցեալ' ուշ է ընդորսմին շինիլ ճշմարտութիւնն, այսինքն եթէ յետ ասոյ կենայ միանգամ եւս յառնելոյ են մարդիկ։ Եթէ հին կամ նոր Սադուկեցիք ճիգն դնեն ժխտել զայն զոյս ճշմարտութիւն' յայն ասեմ է, դի արգելու նոցա այս գոլ և կեալ Սադուկեցւոցս, այսինքն է մայնելլ գոյնանալոյ անհոգութեամբ 'ի հեշտութիւնս և 'ի ցանկութիւնս մարմնոյ. այլ ճանաչումն և խոստովանութիւն անմահութեանն հոգւոյ' ոչ ոչ է մարել կեանս մահկանացու համանման անմահին հանդերձելոյ երկրին։

Յաղագս ասուածութեան ասպագայ կենայ մարդոյ հնար է քննել ապացոյցս նոսա յանխոս և յանկենդան արարածոց։ 'Ի բամանդակ աշխարհի չիք ոչ օրինակ, ոչ նշանակ և ոչ երեւոյթ 'ի չիր զառնալոյ որ եւ իցէ գոնէ շնչին իմն իրի։ Զիր անցեալ

քան՝ որ ոչ տանի առ ապառնին, և ոչ վախճան՝ որ անդրանդառնայ կամ վերադարձի առ սկիզբն։ Անձնիւր մանաւանդ կեանք իմն ապշական գերեզման՝ զնախկին և ետ քարոզ անդէն զնայելոյ զգետս մարմնոյ, և բարձրանայ ինքն յանդնանելի և յընդարձակագոյն շրջան կենաց, զի միանգամ դարձցի նորոգ երբեմն ետս միաւորս և ամենակատարեալ մարմնով։ Արեգակն մնանէ, զի միանգամ ծագեցի. աստեղք շիջանին յաւարտս, և յառնեն յերկնից. ժամանակք ապառին և անդրէն սկանին. հատեալ ձայնք վերստին կենդանանան յարձագանգս գետոց քարոզին 'ի ծովս և յարութիւն առնեն յապրելս. բազմազակ բուսական արարածք մահանան յաշնան, և աստարիազարդ զգենին 'ի գարնան. մեռանի երկրի սերմն, յարութիւն առնու խառն կամ ծառ. մեռանի որդն զեռուն, յառնէ թիւռաւոր թիթեռն. կեանք թռչնեակին թաղեալ կոյ յանշունչ 'ի հաւկիթին, և վերստին յառնէ անտի։ Իսկ արդ եթէ այլ ամենայն անարդ արարածոցն բակտին շինուածք մարմնոյ՝ զի անդրէն շինեսցին, եթէ մահանան՝ զի միանգամ յառնիցեն, մինչ մա՞ղն միայնակ՝ որ է սրտակ աշխարհս և հայելի երկնից, մնոյէ 'ի գամբարան յայն տակս և եթէ, զի լուծցի 'ի մոցի, արշամարհեալ առելի քան զշատն մանանեղոց, և սպասեալ 'ի յուսոյ առաջի քան զարդնուելն։

Զարտարին իրաց յայսմանէ՝ զորոյ խօսեցաք ցայս վայր, մարթի է դարձուցանել զշրեցուածս մարդոյն 'ի խորս անդ սրտի նորա, և անդ լսելի առնել նմա զկանոնս ապդարարութիւն նորոգ զկեան մահու կենաց։ Ամենայն՝ որ կրէ կեանս յաշխարհի, բայց 'ի մարդոյն՝ զատուցաց և եթէ հոգւոյ՝ քան թեքարդութեան բնութեան՝ 'ի բոց առեալ զդէպս ինչ, ուր ապդէ զդայուն հանգերձեալ կենաց՝ որպէս 'ի չերանն, որ պատրաստէ ինքեան զերեզման յուսայնէ կամ 'ի կերպասէ՝ յուսով յառնելոյ անտի թիթեռն։ Ընդէ՞ր է, զի մարդն և 'ի ժամանակին՝ յորժամ հանի 'ի մտոց զշանդերձեալ կեանս իւր, բայց և այնպէս զրարդամ ինչ առնէ առ 'ի անմահացուցանել զինքն 'ի ներուանդս իւր։ Այսպիսի ձգտումն զարդի մարդկան չիցէ՝ արդեաք իբրև շատաւիղ յարմատոց ձմերիկ անմահութեան. շատաւիղ՝ թէ և ոչ ոգեղէն, այլ յայտարար զօրութեան արմատոցն։ Սակայն նման սիրտ առն իրարանցիւր ճանաչէ և խառատման լինի, որ քան շատու ազնուութեանն առաւել լինի շատով ևս սիրէ զուղղութիւն և զարդու-

թիւն՝ զնոսա ածեալ ես, թէ յասոյ կիսանս բարուս անդամ եթէ՛ բարութիւն և եթէ՛ ուղղութիւն հաղորդին 'ի շարութենէ և յանիրաւութենէ. ասոյ՝ ապարդն ծնանի խորին ապատարութիւն և ճանաչումն յարդի բարոյ և ուղղութեան 'ի սրտի մարդկան, այսինքն խիղճն, եթէ ո՛չ 'ի խորին և 'ի գաղտնի շշուփմանէ այրարութեան բարոյն և իրաւին՝ անքարեկամ ընդ մէջ իր և ընդ ժանանակաւոր կիսանան զգերեզմանն և եթէ կայուցեալ։ —Բաւականացեալ այսչափ ինչ բնական խորհրդածութեամբք՝ մատիցուք ապ 'ի տեսութիւն բանից Յ. Գրոց։

'Ի համառանալ Բանին յերկինս՝ Աստուածն (թէ և կանխագէտք երթալոյ նորա առ Հայր իր) այն ինչ կայեալ էին ակնկալութեամբ ընդ շու նորա կամ 'ի զարմացմանէ ընդ հրաշալի երևումն կամ 'ի տխրութենէ, զի մեկնեալ հեռանայր Աստուածային Փրկիչն իւրեանց, առաքեցան առ նոսա հրեշտակք, որ առ 'ի փարատել զտագնապ սրտից նոցա, և առ 'ի վերուշադրութեամբ զյոյս նոցա ծանուցին զհանդերձեալ գալուստ Հաստատելոյն՝ ասելով. « Այս Յիսուս՝ որ վերացաւն 'ի ձէնջ յերկինս, այնպէս եկեսցէ՝ զրարձնակ տեսէք զնա երթալ յերկինս » (Գործ. Ա. 11). յոյս ասէր « Գալուստն (Աստուածոյն) յԷրուսաղէմ ուրախութեամբ մեծաւ » (Ղուկ. ԻԴ. 53)։

Աստուածոյն ընկալեալ 'ի հրեշտակաց զխոստումն այսպիսի՝ ո՛չ միայն ինքեանք ճաշակեցին խնդալոյ զզարութիւն հանդերձելոյ զարուն, այլ և բազմաց ես 'ի Հաստատելոց մատակարարեցին զնոսն իրրև հոգի ի մէջոց հաստատելոց նոցա 'ի Հաստատս, զարանալոյ 'ի յոյսն, բարբարելոյ 'ի սէրն, և արդարարելոյ յամենայն գործս բարեպաշտութեան։ Սուրբն Պօղոս առ 'ի միտիթարել զվշտացեալս, առ 'ի զարացուցանել զկիսացեալս, և առ 'ի բժշկել զսխտաժէտս՝ գրէ Եբրայեցւոց. « Քրիստոս միանգամ մատուցեալ սատարագ առ 'ի բառնալոյ զմեղս բազմաց, խակ յերկրորդումն առանց մեղաց յայտնեսցի այնոցիկ՝ որ ակն ունիցին նմա Հաստատոմբ 'ի փրկութիւն » (Թ. 28)։ Եւ ինքն 'ի զատարակելն զՏիրոջ՝ որպէս զի հանապազորդեսցէ 'ի քարոզութեան փրկարար շնորհացն, յառելոյ. ակնկալութիւն զայսոսեան Քրիստոսի « Թրատէ զմեզ, զի արդարարեալ զամբարշտութիւն և զաշխարհական ցանկութիւնս, զդատութեամբ և արդարութեամբ կեցցուք յաշխարհս, և ակնկալեցուք երանելի յուսոյն և յայտնութեան փառաց մեծին Աստուծոյ և Փրկչին մե-

յոյ Յիսուսի Քրիստոսի» (Տիտ. Բ. 11—13)։ Ի յորդորելն զՏիմոթէոս «Երիթալ զհետ արդարութեան, զԱստուածպաշտութեան, զհաւատոյ, զսիրոյ, զհամբերութեան, զհեզութեան», և մարտնչել զբարւոք մարտն հաւատոյ՝ «Պատուէր տայ նմա առաջի Աստուծոյ՝ պահել զպատուիրանն ամբիծ և անարատ՝ մինչեւ ի յայտնութիւն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի» (Ա. Տիմ. Զ. 11—14)։ Հանդոյն նմին և տուրն Պետրոս ի խրատելն զՀոգիս հաւատարմութեամբ դնել ի գործ պաշտամանն իւրեանց, և օրինակ լինել Հօտին՝ զարթուցանել ի նոսա զեռանդն հոգեւորութեան ոչ այլով իւիք, բայց եթէ ակնկալութեամբ յայտնութեան պատկառիր Հովուապետին. «Յերեւիլ Հովուապետին ընդունիջիք զանթառամ փառացն պսակ» (Ա. Պետր. Ե. 3—4)։ Յուսոյս տպաւիկ բարեխառնէ նաև զբաժակ դատնութեան շարշարելոյն՝ գրելով առ նոսա «Ուրախ լինիլ իբրեւ հաղորդեալք Քրիստոսի՝ զշարշարանացն. զի և ի յայտնութեան փառաց նորա ցնծացեալ բերկրեսցին» (Ա. Պետր. Դ. 13)։

Բատ այսմ ակնկալութիւն գաղատեան Քրիստոսի հարկ է գոլ վասն իրարանչիւր Քրիստոնէի՝ խորխոր իմն ընդհանրական և ամենակարծր, որ յանշարժութեան ունի զրոմանդակ հաստատութիւն Քրիստոնէական Կրօնի. հարկ է գոլ ամենաղօր զօրութիւն, որ կենդանի առնէ զրնտաւ մարմին մեր, և գործէ գործս մեծամեծս և սրբարարս. բատ որում «Յուսով ապրիմք» (Հռոմ. Ը. 24)։ Յայս տակս ուր չիք ակնկալութիւն՝ չիք անդ և յոյս. ուր ոչ է յոյս՝ ոչ է անդ և փրկութիւն. իսկ ուր ոչ է փրկութիւն՝ անդ ոչ է և Քրիստոնէութիւն։ Քրիստոնեայն շարշարի և շարշարի բազմայս առաւել քան զայլս ի մարդկանէ. բատ սրբում նմա բայ ի հաստատակայ՝ վասն ապականութեան մարդկային բնութեան անհրաժեշտ վշտացն առեալ է, իբրեւ բաժին յաստուկ նաև խաչ՝ նմանն ոմեմ, յորոյ վերայ շարշարեցաւ Քրիստոս, և յայս տակս մխիթարի ի տանջանս իւր՝ զմտաւ ածեալ, թէ «Զարշարանաց մնեալն ի փառս» (Ղուկ. ԻԴ. 26) մերձենայ օր բատ օրէ առ ինքն. զի պայծառագոյնագոյն փառաց դշարշարեալն։ Քրիստոնեայն տեսանէ և փարի, հանապազօր յանձին իւրում զանիրաւութիւն ամբարշտայ բատ նախագրութեան ճշմարտութեանն. «Բայց զի յաշխարհէ չէք... վասն այսորիկ ատեայ զձեզ աշխարհ» (Յովհ. ԺԵ. 19). և որչափ ճշմարտագոյնս ի միտ առնու զարդարութիւնն Աստուծոյ, այն-

չափ լնուն ի Ներմուծութեամբ, այնչափ ի Երամագոյնս եւայ 'ի նախանձուէ՝ « Տեսեալ զիսաղաղութիւն ամբարչաց » (Սաղմ. ՀԲ. 3) և զվիշտս արդարոց։ Մեկնանայր թերեւս Գրիգորոնեայն յեռանդնէ, որպէս ասացեալ անաւր 'ի խորշակի, եթէ ոչ էր հանապազորդ շնչեալ 'ի նմա զոգիարար յոյս արդարութեան. « Ահա զամ վարվարակի. և վարձք իմ ընդ իս հատուցանել իւրաքանչիւր ըստ գործս իւրեանց » (Յայտն. ԻԲ. 12)։

Վասնզան երկրորդ գալստեան Գրիգորայ է, զի լրումն ասէ անտեսութիւն Գրիգորենութեանն, զի հաստատեցին՝ որ ինչ գրեալք են յՕրէնս և 'ի Մարգարէս և յԱւետարանս, և զի յայտնի լինիցի վերջապէս ամենակատարեալ արդարութիւն և փառք Գրիգորայ Աստուծոյ վերայ 'ի քննելն զյայտնի և զծածուկ խորհուրդս և զգործս մարդկան, և 'ի հատուցանելն արժանապէս զիսաստուր վարձս արդարոց և զաստիկ պատժս մեղաւորաց 'ի յաւիտեան։ Վասն զի թէպէտ և արդար է Տէր, և զաչխարհս զատի միշտ արդարութեամբ, այլ զի երկայնամիտ է՝ ոչ ամենայն որ եթէ արդար և եթէ մեղաւոր՝ ընդունի յաշխարհի սոսա զկատարեալ հատուցումն. և յայս սակս սահմանեաց որ՝ յաւուրս հրապարակաւ յայտնի արարեալ զարդարութիւն արդարոցն՝ հատուցէ պատկս փոխանակ կենդանի Հաւատացեալ և բարի գործոց, և զաստեալ զանօրէնութիւնս մեղաւորաց՝ պատուհասեալք դնոսս իւրարաս և անչէջ հրոյ գեհենին (Մատթ. ԻԵ. 6։ Ղուկ. ԺԹ. 12. 15)։

Զերկրորդ գալստենէ Գրիգորայ զուշակեցին յառաջագոյն Մարգարէք (Դան. Է. 17), զոր կնքեալ ի ներքին Դանիելոյն կենդանեալոյ և մեռելոց Քրիստոս, և քարոզեցին Աւետարանքն (Մատթ. ԻԵ. 31։ Յովհ. ԺԴ. 1։ Գործ. Գ. 20), զորոց զժամանակն ոչ որ գիտէ, բայց Հայր միայն (Մարկ. ԺԳ. 22)։

Յառաջ քան զգալուստն երեւելոյ են յերկինս և յերկրի յաւելագոյն և 'ի լուսին և յաստեղս՝ նշանք ահաւորք (Մատթ. ԻԴ. 3—30), և 'ի հարկանել փողոց Հրեշտակապետին՝ յառնելոց են մեռեալք ամենայն՝ որ յԱդամայ (Ա. Թեսա. Դ. 15. 16). և յոժամ արարածք ամենայն՝ եթէ երկնաւորք և եթէ երկրաւորք, հրով բորբոքեալ լուծցին, երեւեսցի իրրեւ զիսպասն Աստուածամարդն զօրութեամբ և փառաւք Հօր իւրոյ՝

հանդերձ Սրբովք և հրեշտակօք իւրովք (Մատթ. ԺԶ. 27. ԻԴ. 30։ Յուդ. 14։ Պետր. Գ. 10. 12). և սիթուակցութեամբ Սրբոց իւրոց հրապարակաւ յայտնեալ զամենայն զդաղտնի և զյայտնի խորհուրդս և զգործս մարդկան՝ դատեսցէ անաչառութեամբ և առանց ողորմութեան՝ արդարոցն հաստատեալով կեանս յաւիտենական, մեղաւորացն տանջանս յաւիտենական (Մատթ. ԺԹ. 28։ Ղուկ. ԻԲ. 30։ Սաղմ. Ծ. 3—4։ Ա. Կորնթ. Դ. 5։ Եբր. Թ. 28) և յսկան թօթափել կնքեսցի ամենայն։

Ջրվիճակն երանութեան՝ զոր ժառանգելոց են 'ի հանդերձեալ աշխարհին արդարք, թէպէտ և Աստուծոյին խմաստութիւնն ոչ հանեցաւ մի առ մի յայտնել մարդկան, բայց և այնպէս գրուանին 'ի տուրբ Գիրս բաւական ցոյցք, որք գոնէ ընդ աղօտ թմբ նկարագրեն զամենայնկոյսի զմնան զայն՝ պատրաստեալ 'ի վայելս Սրբոց. զորօրինակ 1. Տեսանել արդարոց զէմ յանդիման զերեսս Աստուծոյ, լինել ընդ Քրիստոսի Աստուծոյ և թագաւորել ընդ նմա և 'ի նմա 'ի յաւիտեան (Յայտն. Ե. 10. ԻԲ. 4։ Յովհ. ԺԴ. 3. ԺԷ. 24). 2. Ներսել ընդ Քրիստոսի յաթոռս 'ի դատաստանս 'ի հրապարակին դատել զազգս ամենայն (Ղուկ. ԻԲ. 30։ Ա. Կորնթ. Զ. 2). 3. Ընդունիլ յԱստուծոյ զանթառամ զժառանգութիւն յերկինս, ժառանգակից լինել Քրիստոսի, պատկիլ անապական փառաց նորա, և բնակել մշտընջենաւորապէս 'ի լոյս անշէջանելի (Յակ. Ա. 12։ Հռոմ. Ը. 17։ Ա. Պետր. Ա. 4։ Գործ. Ի. 22). 4. Վայելել զանմահական լի անտրտում ուրախութեամբ դիմանս յերկնային Երուսաղէմ, և փայլիլ իբրեւ զաստեղս 'ի խորանս արքայութեան (Դան. ԺԲ. 3։ Եբր. ԺԱ. 10). եղիցին անմահ իբրեւ զհրեշտակս՝ զգեցեալ զփառաւորեալ, զանապական և զհոգեւոր մարմին բան նմանութեան մարմնոյն Քրիստոսի (Մատթ. ԻԲ. 30։ Ա. Կորնթ. ԺԵ. 42. 44։ Փիլիպպ. Գ. 21). 5. Ժառանգեալ լրիւ զմեծութիւն անճառ և անպատում փառացն՝ մշտանել յուրախութիւն Քրիստոսի Աստուծոյ, և հանգչիլ 'ի յաւիտեան (Մատթ. ԻԵ. 21։ Բ. Կորնթ. Դ. 17։ Սաղմ. ԺԶ. 11)։

Իսկ զգաւալի վիճակ մեղաւորաց յաշխարհին՝ որ դատոյն է, այսպէս համառօտեն Ս. Գիրք. 1. Մշտընջենաւոր դրկումն 'ի տեսութենէն Աստուծոյ, որ խստագոյն մահ է համեմատութեամբ

այլ ամենայն աղխոյ՝ զորս կրելոյ են ողորմելիքն, և անվախճան տանջանք հոգւով և մարմնով 'ի դժոխս (Մատթ. Ե. 29. Ժ. 28. ԻԵ. 46). 3. Կալ մնալ ընդ ահաւդին բարկութեամբն Աստուծոյ, և մեռանիլ զմահն երկրորդ և յաւիտենական (Հռոմ. Բ. 8—9. Զ. 16. 21. 23). 3. Բնակիլ 'ի խաւարն արտաքին, ուր լայցեն և ողբայցեն յաւիտեան, և տանջեսցին անմահ որդամբք (Մատթ. ԻԵ. 30։ Մարկ. Թ. 44). 4. Արկանիլ 'ի զեհենանն անշէջ հրոյ բորբոքելոյ ծծմբով և կայրով, և յաւիտեան յաւիտենից տանջիլ անդ (Մատթ. Գ. 12։ Յայտն. ԺԴ. 10). 5. Բնակակից լինել չար գազանին և դիւաց յաղջամղջին խաւարի անդ դժոխոց և տանջիլ յաւիտեան առանց երբէք զատանելոյ զհանդիսաս (Մատթ. ԻԵ. 41։ Յայտն. Ի. 10)։

'Ի մասին արդեան վիճակի՝ յորում զատանին հոգիք Արդոց և մեղաւորաց մինչեւ ցոր երկրորդ գալստեան Քրիստոսի, զատաստանի և հատուցման, որքազան Աւետարանիչք և Աստուածաբեալ Հարք Եկեղեցւոյ երկակի իմն խօսին եղանակաւ՝ ցուցանելով երբեմն, թէ հոգիք արդարոց և մեղաւորաց յետ անջատելոյ 'ի մարմնոյ՝ խակոյն յանդիման լինին երկնաւոր Դատաւորին, և ընկալանուն իւրաքանչիւրն վայելուչ զհատուցումն, իսկ կամ զվատս արքայութեան կամ զտանջանս դժոխոյ (Մատթ. ԺԷ. 3։ Ղուկ. ԺԶ. 22. 26. Թ. 30. ԻԳ. 43։ Բ. Կորնթ. Ե. 8։ Մարկ. Թ. 3)։ Քան զոր և Ղազարոս յետ մահուան իւրոյ դնոյց 'ի գոգն Աբրահամու, և մեծատունն մատնեցաւ 'ի տանջանս դժոխոյ։ Աւազակին ասէր կողման խաչելոյս Քրիստոս մնանել 'ի նմին իսկ աւուր 'ի վայելս արքայութեան. Մինչև և Յովհաննէս վասնոր երեւեցան յայրակերպութեանն Քրիստոսի, եւայլն (1). և երբեմն ցուցանելով, թէ ըստ որում մարդս՝ զոր ինչ գործեաց յաւուրս կեանս՝ եթէ բարի և եթէ չար, ոչ հոգւով և եթէ, այլ հոգւով և մարմնով միանգամայն գործեաց. ըստ որում ոչ է տակաւին լեալ լրումն տնտեսութեան Քրիստոսի, ոչ եղեալ յարութիւն հատարակաց մեռելոց 'ի սկզբանէ աշխարհի,

(1) "Ընկալան զգրաւոր անապականս յանտանելոյ լուսոյն, և մինչև ուրախանան բնդ հրեշտակս 'ի յերկինս . . . . Համբերութեամբ ձերով ընկալայք 'ի Քրիստոսէ զգրաւոր անապականս, և զատաւորեցայք 'ի յերկինս ընդ անմարմնոցն զատ . . . . Պատկեցան 'ի Քրիստոսէ ընդ վերին զատարիանան ,, . . . եւայլն։ Շարագրեան. յորում զատանին բազում այլ ևս ոչխարիսի ոչ բանից, որք զհատուցումն Աբրոյ արդէն եղեալ հատարին։

ոչ զատատան հրապարակական և ոչ հատուցումն վերջին, յայս ասեն ոչ են փառաւորեալ կատարելապէս հոգիք արդարոց, և ոչ մեղաւորացն մատնեալ 'ի յաւուս մարդասէր, մինչդեռ մարմին նոցա (գործիք և գործակիցք' եմք 'ի բարեգործութեան. և եմք 'ի չարագործութեան) դնին փոշիացեալ 'ի տապանի (Յովհ. Ե. 29։ Հռոմ. Բ. 5, 6։ Գաղ. Է. 10։ Բ. Տիմ. Գ. 8։ Յայտն. ԺԱ. 17։ Մատթ. Է. 22, 23. ԺԱ. 20. ԺԳ. 40—42. ԻԵ. 41—46։ Ղուկ. ԺԱ. 31, 32) (1)։

Սակայն իբրև առ 'ի լուծանել զայս խնդիր կարեւոր ողջմտութեամբ' հարկ 'ի վերոյ կոյ հաստատել զայլ և այլ հատուածս Ս. Գրոց յայսմ մասին գրեալս, եւ և գրեալս հոգեշնորհ Հայրց Եկեղեցւոյ ընդ իրեարս. և 'ի հաստատութենէ ասելոյ յայտնի լինի իրրեւ ուղղափառական և անսխալ իմն վարդապետութիւն, զոր ասեալ եմ, թէ որպէս են ոչ հոգիք Սրբոցն արդէն 'ի կատարեալ փառս, նոյնպէս և ոչ հոգիք մեղաւորաց մատնեալ վերջապէս 'ի տանջանս անչէջ հրոյ գեհենոյ. այլ գոլով բնութեամբ ստոյգ և խնայական, և յետ անջատմանն 'ի մարմնոյ ազատ 'ի կրից մարմնականաց' հոգիք արդարոց յաւուրս բնութեան խաղաղեալ փառաց արքայութեան ցնծայեալ փոխելոյն ամենայն յանդարտում կայանս իւրեանց (Ա. Տիմ. Գ. 8. Զ. 12. 19։ Բ. Տիմ. Ա. 1։ Տիտ. Ա. 2. Գ. 7։ Յովհ. Գ. 28. 29։ Յուդ. 21։ Գաղ. Զ. 8։ Ա. Յովհ. Բ. 25. Ե. 13։ Բ. Կորնթ. Ե. 1). իսկ մեղաւորացն դիտաւ ածեալ ըղ-

---

(2) " Արդ խնդրեմք 'ի քէն' Թագաւոր թագաւորաց և Տէր տերանց. յորժամ գան' Քրիստոս, և երեւիցի մեծութեամբ քով . . . զարթուցանեսն զնոցանս, յարուցանեսն զմեռեալսն . . . երեւիցի յերկրի, և հաստատեսցեսն խրատանելիս ուստի բան զործոց իւրոց։ Բանիցն զարդարեսցիս, կարելիցն ամենայն, լիցի սէնեկ դատաստան, զնին կշռեալք արդարութեան, և ընդունիցի իւրաքանչիւր ոք բան զործոց իւրոց։ Վասն զի զարդն պատանին բան հանդերձեանցն, և մեղաւորքն տանջին բան յանցանացն . . . պատուիցն յայտնին, և կուանիցն խնդան։ Անապատան զարդարի, և խնամատան կուանիցն պատրաստ մնանեն հրապուռնք վառեալք. իսկ քանզի կուանիցն զատարկաբանեալք, հրապուռք անշեալք, գլուխք խանարհեալք, սիրտք ալոտեալք, ոգիք լքեալք և տարակուսեալք' հարցանին 'ի մտանէ թագաւորին' որ ասէ, ոչ գիտեմ զձեզ . . . յայնմամ բարեբար և մարդասէր Աստուած' յորժամ այս ամենայն կարդի 'ի քուսանէ մեծութենէդ. զիրեա զՀոգի Ծառայիս քո սպասրիկ ,, ասէին։ Մեծ Մաշտոց. երես։ 56—57։

— " Աղաղատամ պատին ձեզ ասանցեալ մեզ' քան զանանս պատուական չեկաց. զոր հաւատիցեր ,, ։ Շարական։

տանջանաց հանգերձեալ գեհենին, և զանձեղ թշուառութիւնս՝ զոր-
ոչ ոք կրեցոյ են (¹), յի տրտմութեան եւ ցաւոց զանձն հարեալ
շարշարին որ ըստ օրէ (Գործ. ԻԳ. 25; Եբր. Ժ. 27;
Մատթ. Լ. 22—23; Յովհ. ԺԲ. 48; Ա. Յովհ. Գ.
14—15; Ա. Կորնթ. Գ. 15). յորմէ ազատեսցէ զամենեսեան
զմեզ զերկրպագուս և զՀաւատացեալս ամենասուրբ Երրորդութեան 'ի տիսուր զարտեան խրատ և յարքայութեան Քրիստոս Աստուած Փրկիչ մեր. Ամէն։

---

(1) «Ահել կայանք են նոցա, որք արշամարհեցին զՈրէնս նորա, և ծառայեցին զմեղսակ ցանկութեանց անխուսափ և սկսուցն չարեաց, որք մատանեալ են զարատութեան խաւարն։ Խաւար է ասու արտաքին չար (խոնարհութիւն ահեղ պատուհասի տանջանաց գժոխոց) որոյ խաւարեալ են մթոք և գոչոյթիւնք, և ատրաչեալ են 'ի հեռաց անտի' որպէս ասէ Աստուածն (Երեմ. Գ. 18)։» Ճանապարհաւորեալ Էջ. 171։

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Քառանց, Յոգուանց և այլ երանաւոր հիւրոց Քառնեիս։

## ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

Գլուխ Ա. Աստուած։ Յոգուած Ա. Ճշմարտութիւն գոյութեան Աստուծոյ։ Առ այս բնական ապացոյցք, այսինքն Հաստատ պատմական, փորձ կամ դիտողութիւն արտաքին, փորձ կամ դիտողութիւն ներքին. —Յոգուած Բ. Գերբնական ապացոյցք։ Աստուած է մի և ամենակատար հոգի. —Աստուած է հոգի անեղ, յաւիտենական և անմահութիւն. — Աստուած է հոգի ամենատես, անհունապէս իմաստուն և ամենազօր. — Աստուած է հոգի ամենասուրբ, ամենարարի և արդարադատ. —Աստուած է հոգի Հայրութիւն, հոգի սիրոյ և հաւատարիմ. —Յոգուած Գ. Վարդապետութիւն ամենասուրբ Երրորդութեան. —Յատկութիւն Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ։

Գլուխ Բ. Արարչութիւն։ Յոգուած Ա. Արարչութիւն Տիեզերաց, իսկ երկնից և երկրի. —Յոգուած Բ. Արարչութիւն առաջին մարդոյ—Դրախտն կամ Եդեմ. — Յոգուած Գ. Ստեղծագործութիւն Հրեշտակաց կամ հոգեղէն երկնաւոր էակաց. —Յոգուած Դ. Պատուիրանազանցութիւն մարդոյն, կամ որ նոյն է՝ առաջին մեղք. — Հետեւանք պատուիրանազանցութեանդ, այն է կրկնակի անիծագիր դատապարտութիւնք, որոց ենթարկեցաւ մեղուցեալն, այսինքն մեռանել բարոյական և մարմնոյ մահուամբ. — Խոստումն Աստուծոյ առ 'ի փրկել զմարդն 'ի դատապարտութենէ անիծից, կամ որ նոյն է՝ արքել զնորհօք դարձեալ մարդն, և փրկել զնա 'ի յաւիտենական մահուանէն յաշխարհին՝ որ գալոցն է. —Յոգուած Ե. Անմահութիւն մարդկային հոգւոյ։

Գլուխ Գ. Լութիւն Կրօնի։ Յոգուած Ա. Կրօն, կամ որ նոյն է՝ ուխտ ընդ մէջ Աստուծոյ և մարդոյ. —Յոգուած Բ. Հին և սկիզբն Կրօնի. — Յոգուած Գ. Թէութիւնք Կրօնի. — Յոգուած Դ. Նպատակ Կրօնի. — Յոգուած Ե. Շարկապ ընդ՞մէջ Կրօնի և Եկեղեցւոյ. — Յոգուած Զ. Թագաւոր և չինաւոր Եկեղեցւոյ. — Յոգուած Է. Նպատակ Եկեղեցւոյ. Զիա՞ր ոչ մարթի է հասանիլ այնմիկ. — Յոգուած Ը. Յաւանութիւն,

— Յօդուած Թ. Յայտնութիւնն անշուշտ կարեւոր էր. — Յօդուած Ժ. Մարդկային խնամութիւնն անհնարին է լուսաւորել զարդ մարդկան լուսաւորութեան հնարքս Հաւատոյ. — Յօդուած ԺԱ. Մարդկային խնամութիւնն անարատական է հաշտեցուցանել զԱստուած ընդ մարդոյ. — Յօդուած ԺԲ. Եւ միանգամայն անկարող առ 'ի արարել կամ վերադարձնել զմարդն 'ի բարոյական ապականութենէ։

Գլուխ Գ. Անկեղծութիւն գաւառական Բրիտանիոյ իրրեւ միմիայն Փրկչի։ Յօդուած Ա. Կրօն Դաշնակցականն և անհամաձայնութեանց այնորիկ. — Յօդուած Բ. Տեսութիւն բարոյական վարդապետութեանց Դաշնակցաց. — Յօդուած Գ. Տեսութիւն Դաշնակցական Աստուածաշնչութեան. — Յօդուած Դ. Խորհրդածութիւն 'ի վերայ վանականութեան Դաշնակցական Կրօնի. — Յօդուած Ե. Կրօն ընդարձակն և անհամեմատութիւն վարդապետութեանց Հաւատոյ և բարոյականի այնորիկ. — Յօդուած Զ. Տեսութիւն ծիսական արիւնաց. — Յօդուած Է. Խորհրդածութիւն 'ի վերայ վանականութեան Կրօնին՝ որ ընդ արիւնաբ. — Յօդուած Ը. Մարդարէք. — Յօդուած Թ. Մարգարէութիւնք՝ որք որոշեն զժամանակ յայտնութեան Մեսիայի. — Յօդուած Ժ. Մարգարէութիւն Դանիէլի յաղագս եօթանասուն եօթնեւորեանցն. — Յօդուած ԺԱ. Մարգարէութիւնք յաղագս տեղոյն՝ յորմէ երեւելոց էր Մեսիայն. — Յօդուած ԺԲ. Մարգարէութիւնք յաղագս տեղոյն՝ ուր ծնանելոց էր Մեսիայն. — Յօդուած ԺԳ. Մարգարէութիւնք յաղագս հրաշալի եղանակաց ծննդեան Բրիտանի. — Յօդուած ԺԴ. Մեսիայն է Լմնանուէլ կամ Աստուած և մարդ միանգամայն. — Յօդուած ԺԵ. Մեսիայն է Մարգարէ. — Յօդուած ԺԶ. Մեսիայն է Քահանայապետ. — Յօդուած ԺԷ. Մեսիայն է Թագաւոր. — Յօդուած ԺԸ. Մարգարէութիւնք յաղագս այլ և այլ անարիշնութեանց երկնաւոր կենաց Մեսիային. — Յօդուած ԺԹ. Ընդհանուր հետեւութիւն Վերոգրելոցն ամենայնի։ —

# ՄԱՍՆ ԵՐԻՐՈՐԴ.

## Յայտնութիւն Քրիստոսի.

Գլուխ Ա. Յօդուած Ա. Տեսութիւն վարդապետութեանց Հաւատոյ նորոյ ուխտի. — Յօդուած Բ. Տեսութիւն բարոյական վարդապետութեանց նորոյ ուխտի. — Յօդուած Գ. Տեսութիւն հրապարակական Աստուածպաշտութեան նորոյ ուխտի. — Յօդուած Դ. Զի՞նչ ուսուցանէ նոր ուխտն նկատմամբ ապաստանելոց կենաց մերոց։ — Գլուխ Բ. Յօդուած Ա. Քանանակ զարտեան Յիսուսի Քրիստոսի յաշխարհ հանդիսաւորական ակնկալութեամբ և սրանչելեաց ապացուցեալ. — Յօդուած Բ. Յատկութիւն Յիսուսի Քրիստոսի. — Յօդուած Գ. Սրանչելիք Յիսուսի Քրիստոսի. — Յօդուած Դ. Մարգարէութիւնք Յիսուսի Քրիստոսի. — Յօդուած Ե. Յարութիւն Յիսուսի Քրիստոսի 'ի մեռելոց. — Յօդուած Զ. Ի՞նչ ազգն Արդոյ յԱստուծոյն. — Յօդուած Է. Սրանչելի հզանակաւ տարածումն Քրիստոնէական Կրօնի, և սրանչելագոյն արդիւնք այնորիկ 'ի Հաւատացեալսն. — Յօդուած Ը. Հաւատք 'ի Քրիստոս Յիսուս և արդիւնք Հաւատոյն։ — Գլուխ Գ. Քրիստոնէական Եկեղեցի։ Յօդուած Ա. Ընդհանրական Եկեղեցի Քրիստոսի. — Յօդուած Բ. Ճարտարապետն Եկեղեցւոյն Քրիստոսի. — Յօդուած Գ. Հիմն Եկեղեցւոյն Քրիստոսի. — Յօդուած Դ. Գլուխ Եկեղեցւոյն Քրիստոսի. — Յօդուած Ե. Աղբիւր ողջամիտ հաւատարմութեան Եկեղեցւոյն Քրիստոսի է հին և նոր Կտակարան, ուսանելութիւնք Աստուծոյ իբրեւ ատար այնմ։ — Հատուած Ա. Ներշնչութիւն Աստուծոյ 'ի հին Կտակարանի — Ներշնչութիւն Աստուծոյ 'ի նոր Կտակարանի։ — Հատուած Բ. Յաղագս Կանոնական Գրոց Աստուածաշնչի ընդհանրապէս — Կանոնական Գիրք հին Կտակարանի — Կանոնական Գիրք նորոյ Կտակարանի։ — Հատուած Գ. Յաղագս ոչ Կանոնական Գրոց Աստուածաշնչի — Որբանութիւն նոցա և յայդ — Յաղագս Աւանդութեան։ — Հատուած Դ. Աւանդութիւնն է մեծ ատար և երկրորդ աղբիւր յուսումն Քրիստոնէական Կրօնի։ — Հատուած Բ. Աւանդութիւնն պահելոյ մինչև ցայժմ անեղծ։ — Հատուած Գ. Թէ զի՞նչ իցեն նշանակք ատոյգ Աստուածական աւանդութեանց։ — Յօդուած Զ. Պարտ

և արժանէ ժողովրդեան ընթեռնուլ դՍ. Գիրս. — Յօդուած Լ. Անխախտութիւն Եկեղեցւոյն Քրիստոսի — Չիսա՞րդ արժանէ իմանալ զանխախտութիւն Եկեղեցւոյ. — Յօդուած Ը. Խորհուրդք Եկեղեցւոյ իրրև միջոցք շնորհաց Աստուծոյ — 1. Աղաչխարութիւն. — 2. Մկրտութիւն. — 3. Դրոշմ — 4. Հաղորդութիւն — 5. Զեռնադրութիւն — 6. Մեռանութիւն — 7. Վերջին Օծումն կամ Այցելութիւն հիւանդաց. — Յօդուած Թ. Տնտութիւն վարդապետութեանց Հաւատոյ Եկեղեցւոյն Հայոց։ —Գլուխ Գ. Յօդուած Ա. Տասնպատնեայ Օրէնք համառօտ բացատրութեամբ հանդերձ. — Յօդուած Բ. Տէրունական աղօթք համառօտ բացատրութեամբ հանդերձ. — Յօդուած Գ. Երկրորդ գալուստ Յիսուսի Քրիստոսի, խորհրդածութիւն Ի վերայ անմահութեան մարդկային հոգւոյ, Այլապանութիւն հատարակաց, Յաւիտենական կեանք արդարոց և յաւիտենական տանջանք մեղաւորաց։

ՎԵՐՋ

ՀԱՅԿ ԳԻՇԵՐԻ ՄԱՍ. ՄԱՐԻ
ՇՈՒՆԴԱՍԵՆԱՅԻ
ԳՐԱԴԱՐԱՆ
ԱԿԱԴԵՄԻԱ.